ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ó×Å Í ÛÅ ÇÀ Ï ÈÑÊÈ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

ՊՐԱԿ 1 TOM 1 VOLUME 1
2023
ê ï »÷ ³ Ý ³ Ï»ñ ï

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ðñ³ï³ñ³Ï íáõÙ ¿ 1998Ã-þg.
ä³ñµ»ñ³Ï³ÝáõÃÛáõÝÁ` ï³ñ»Ï³Ý »ñÏáõ ³Ý·³Ù
Èçäàåòñÿ ñ 1998ã. *Периодичность – дважды в год*
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

ÊÙµ³·ñ³Ï³Ý ËáñÑñ¹Ç Ý³Ë³·³Ñ`Բ.·.Ã. Սարգսյան Ա.Յու.
Председатель редакционного совета: ê.ф.н. Саргсян А. Ю.
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.
¶ÉË³íáñ ËÙµ³·Çñª å.·.¹. ²í³Ý»ëÛ³Ý ì. Ø.
Главный редактор: д.и.н. Аванесян В. М.
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V. M.

ÊÙµ³·ñ³Ï³Ý ÏáÉ»·Ç³
Ðåäàêöèîííàÿ êîëëåãèÿ
Editorial board

Հասարակական գիտություններ

1. Ավանեսյան Հ.Մ., h.գ.դ., պրոֆեսոր – Аванесян Г.М., д.п.н., профессор
2. êáõí³ñÛ³Ý Úáõ. Ø., տ.·.¹., ÐÐ ¶²²³Ï³¹»ÙÇÏáë –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu. M., Doctor of Economics, Academician of NAS RA
3. Հայրապետյան Մ.U., տ.·.¹. (ՌԴ) – Айрапетян М.С., д.э.н. (РФ) – Hayrapetyan M.S., Doctor of Economics (RF)
4. Ղազինյան Գ. U., h.գ.դ., ÐÐ ¶²²³Ï³¹»ÙÇÏáë – Газинян Г. С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G. S., Doctor of Law, Academician of NAS RA
5. Մանասերյան Թ. Ն., տ.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т. Н., д.э.н., профессор – Manaseryan T. N., Doctor of Economics, Professor
6. Մարուքյան Ա.Ց., պ.գ.դ., պրոֆեսոր – Марукян А.Ц., д.и.н., профессор – Marouqyan A.Ts., Doctor of History, Professor.
7. Կուդրյավցեվ Վ.Տ., h.գ.դ., պրոֆեսոր (ՌԴ) – Кудрявцев В.Т., д.п.н., профессор (РФ) – Kudryavtsev V.T., Doctor of Psychology, Professor (RF)
8. Միսկին Ս.Վ., h.գ.թ., փ.գ.դ.,դոցենտ (ՌԴ) - Мыскин С.М., к.п.н., д.ф.н., (РФ)– Myskin S.V., Ph.D. in Psychology, Doctor of Philosophy (RF)
9. Բալայան Վ. Ռ., պ.գ.դ.- Балаян В. Р., д.и.н. – Balayan V. R., Doctor of History
10. Հարությունյան Վ.Ն., բ.·.¹., Арутюнян В. Н., д.ф.н. – Harutyunyan V. N., Doctor of Philology
11. Տեր-Մաթոսյան Պ., բ.գ.դ. (ԱՄՆ) –Тер-Матосян П., д.ф.н. (США) -Ter-Matosyan P., Doctor of Science (USA)
12. Տեր-Մկրտչյան Բ., բ.գ.դ. (ԱՄՆ) – Тер-Мкртчян Б., д.ф.н. (США) - Ter-Mkrtchyan B., Doctor of Science (USA)
13. Տանշինա Ն.Պ., պ.գ.դ. (ՌԴ) – Таньшина Н.П., д.и.н. (РФ) – Tanshina N.P., Doctor of History (RF)
14. Î³ñ³å»ïÛ³Ý Æ.Î., Ù.·.¹.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
15. ÐáíÑ³ÝÝÇëÛ³Ý È.Þ., µ.·.¹., ÐÐ ¶²² ÃÕÃ³ÏÇó³Ý¹³Ù – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences

16. Ø³Ý³ëû³Ý ².ê., ÷.·.¹., ÐÐ ¶²² ÃÕÃ³ÏÇó ³Ý¹³Ù – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences
17. Յարամիշյան Վ.Բ., h.գ.թ. – Ярамишян В.Б., к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology
18. Մուրադյան Դ.Է., պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ -Мурадян Д.Э., профессор, заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Professor, Honored Artist of Armenia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.ՄԻՆԱՍՅԱՆ , Ծ. ՀԱՄՐԱԹՅԱՆ
ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) 9
2. Ծ. ՀԱՄՐԱԹՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԱՅԱՀԻՄՔ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ. 18
3. Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ..... 26
4. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ, Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ..... 37
5. Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ
ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄՆԵՐԸ ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ԳՈՐԾԵՐՈՒՄ 46
6. Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՎԵԼՈՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ 60
7. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՂԲԵՐԳԱՀԵՐՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԳԾԵՐԸ ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ..... 69
8. Ա. ԵՐԿԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ..... 85
9. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՀԱՎԱՏՉՅԱ..... 96
10. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐԸ..... 109
11. Ե. ՄԻՐԶՈՅԱՆ
ՈՂԲԻ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՆԵՐՈՒՄ..... 117

12. Հ. ՂԱՋՈՅԱՆ
ԱԾԱՆՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔ..... 130
13. Հ.ՂԱՋԱՐՅԱՆ, Լ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՈՐՈՇՅԱԼ ՀՈԴԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ..... 139

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

14. Ի.ԱԴԱՄՅԱՆ
ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... 147
15. Ն.ՄԱՐԿԱՐՅԱՆ
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻՑ՝ ՈՐՊԵՍ ՈՉ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՐՈՇ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 157
16. Ա.ԿՆՅԱՋՅԱՆ , Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 169
17. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՊԱՏՈՒՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՄԻԴ ԱՄԻՐՈՎԻ «ԱՐՅՈՒՆՔՆԵՐ ԴՐԱԽՏՈՒՄ» ՎԵՊՈՒՄ..... 184

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

18. Վ.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ..... 194
19. Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, Ա. ՔԱՄԱԼՅԱՆ
ԷԿՈԼԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ..... 205

20. Կ. ՊԱՊԻԿՅԱՆ, Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 222
21. Վ. ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 231
22. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՓՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ..... 244
23. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԴԱՊՏԻՎ ՎԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ..... 256
24. Ա. ՖԻՐՅԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝
«ԵՐԲ ԱՐԵՎԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՇՈՂԱԼ» ԽՄԲԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՇԱՐՔԻՑ.. 267

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

25. Ա. ՇԱՀԻՆՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 276
26. Մ.ԳԱԼՍՏՅԱՆ
ԿՈՐՈՒՍՅԱ՞Լ, ԹԵ՞ ՈՒՍՅԱԼ ՍԵՐՈՒՆԴ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 290

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

27. Ի.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1995-2005թթ.)..... 309

28. Կ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1920-1921 ԹԹ..... 320
29. Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ, Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
«ՂԱՐԱԲԱՂ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՄԱՆ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԸՍՏ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՅՈՒՅԱՊԱՍՏԱՌՆԵՐԻ)..... 331
30. Մ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԽՄՀՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 384
31. Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920ԹԹ.).. 394
32. Տ. ՀԱԿՈԲՅԱՆ
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ Լ.ԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1993-1995 ԹԹ.)..... 406

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

33. Ա.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱԳՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ..... 424
34. Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ..... 437
35. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ, Ժ. ԶԱՔԱՐՅԱՆ
ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ..... 449
36. Մ.ԱՎԱԳՅԱՆ
ՕՊՏԻՄԱԼ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... 471
37. ՅԱ. Լ.ԱԼԱՅԱՆ
2020Թ. ԱՀ ԴԵՄ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 482

38. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԹՎԻ ԴԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 493

39. Գ.ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԹՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..... 505

40. Ա. Ջ. ԲԻԳԼԱՐԻ
ՆՇԱՆԱԿԵՔ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԿՇԻՌՆԵՐԸ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՏՐԻՑՈՎ (WCDM). ԹԵՀՐԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻ ԱՊԱՅՈՒՅՑ..... 518

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

41. Ա. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐԵՂԵՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՋՄԱԽՈՐՀՈՒՐԴ ԱԿՈՐԴՆԵՐԸ..... 534

42. Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀՈԳԵՇՏԿՈՂ ԵՎ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՈՎ ՍՀԹ-Ի ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԹՐԵՅՆԻՆԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ..... 544

ՀՏԴ 809.198.1

Լեզվաբանություն

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: minasyansilva06@asu.am

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար
E-mail: hasratyantsovinar06@asu.am

ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Հոդվածում անդրադարձ է կատարվում Սլավա Սարգսյանի «*Արցախի բնակավայրերը*» աշխատության մեջ քննված Արցախի բնակավայրերի (անկախության շրջան) կաղապարներին՝ բառակազմական տիպերի, եղանակների, բառակազմական հիմքերի քերականական արտահայտվածության և հարաբերության տեսակետից: Ձևութային կաղապարների միջոցով նաև վեր է հանվում Ս. Սարգսյանի կողմից ստուգաբանված տեղանունների հնագույն ձևերի կառուցվածքը: Հենց այս դիտարկման մեջ է հոդվածի նորույթը:

Մեր կողմից առանձնացվել են պարզ, բաղադրյալ՝ ածանցավոր, բարդ, բարդածանցավոր կազմությունները, բառակազմական հիմքերի միջև ստորադասական՝

որոշչային, հատկացական, քիչ՝ խնդրային, պարագայական հարաբերությունները :

Ածանցավոր կազմությունների մեջ կան հայերենի զարգացման վաղ և ուշ շրջանների ածանցներ: Հեղինակը հնարավորություն է ունեցել հիմնականում քննելու ուշ շրջանների ածանցները:

Բարդ անվանումները զգալի քանակ են կազմում, արտացոլում են ուշ շրջանում կատարված անվանափոխումներ:

Ստուգաբանությունը՝ որպես տեղանվանագիտական և լեզվաբանական միջգիտակարգային ոլորտ, նաև ներկայացնում է տեղանքի պատմությունը, տեղանքի անվանակոչման պատմությունը: Այս տեսակետից, ստուգաբանված միավորների կառուցվածքային-բառակազմական ուսումնասիրությունը կարող է հարաբերական լինել, քանի որ իմաստային պատճառաբանվածության հարցերը տվյալ պարագայում հարաբերվում են տեղանվանագիտական հայեցակարգերին: Աշխատության որոշ ստուգաբանություններ թվում են ոչ հավաստի, վիճելի: Սակայն պետք է հաշվի առնել աշխատանքի բարդությունը, իր տեսակի մեջ առայժմ եզակի լինելը:

Բանալի բառեր՝ ածանցավոր բառ, բաղադրյալ բառ, բառակազմական հիմք, բարդ բառ, խնդրային հարաբերություն, հատկացական հարաբերություն, ձևութային կաղապար, որոշչային հարաբերություն, պարագայական հարաբերություն, ստորադասական հարաբերություն, ստուգաբանություն :

С.Минасян, Ц.Асратян

МОРФОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ СТРУКТУР АРЦАХСКИХ ТОПОНИМОВ В РАБОТЕ СЛАВЫ САРКИСЯНА "ПОСЕЛЕНИЯ АРЦАХА"

В статье затрагиваются структуры наименований поселений, рассмотренные в работе Славы Саркисяна «Поселения Арцаха», в частности словообразовательные типы, модели, грамматическое выражение и соотношения словообразовательных основ. С помощью морфологических моделей также рассматривается структура древних форм топонимов, которая подверглась этимологическому анализу

С. Саркисяна. Именно в этом наблюдении и заключается новизна статьи.

Нами выделены простые, составные (производные, сложные, сложносочиненные) модели, а также синтаксические отношения между словообразовательными основами. В этой системе преобладает подчинительная связь, в частности : определительные, притяжательно определительные и в меньшей степени - дополнительные, обстоятельственные отношения.

В системе производных образований выделяются аффиксы раннего и позднего периодов развития армянского языка. Автор имел возможность исследовать в основном производные поздних периодов. Сложные топонимы значительны и отражают изменения в системе топонимов в позднем периоде.

Этимология, как топонимическая и лингвистическая междисциплинарная область, также представляет историю местности, топонимии. С этой точки зрения структурно-лексическое изучение этимологических единиц может быть относительным, поскольку вопросы семантической аргументации в данном случае связаны с вопросами топонимических концепций. Некоторые этимологические изыскания в рассмотренной работе кажутся недостоверными, спорными. Однако следует учитывать сложность и уникальный характер работы.

Ключевые слова: *производное слово, составное слово, словообразовательная основа, сложное слово, дополнительное отношение, притяжательно - определительное отношение, морфологическая структура, определяющее отношение, обстоятельственное отношение, подчинительная связь, этимология.*

S.Minasyan. Ts.Hasratyan

STUDY OF MORPHOLOGICAL STRUCTURES OF ARTSAKH TOPONYMS IN SLAVA SARKISYAN'S WORK "SETTLEMENTS OF ARTSAKH"

The article touches upon models of settlements considered in Slava Sargsyan's work "Settlements of Artsakh" in particular word-formation types, mood, grammatical expression and correlation between word-formation bases. The structure of ancient forms of toponyms is also considered and is also analysed by S. Sargsyan. This is the novelty of the article.

We have singled out simple, compound-derivative, complex and compound compositions. This is between word-forming bases:

subordinating-defining, possessive attributive relations, less: problematic, adverbial relations. Etymologies also represent the history of a place, they also represent the history of place naming. Compound nouns abound in the examples we have studied. They reflect recent name changes. Derivative formations include words formed in different periods. Early and late period derivatives are seen in the derivative formations. The author had the opportunity to mainly examine the derivatives of the late periods.
Some etymologies seem unreliable, controversial. However, the complexity of the work should be taken into account.
Key words: *derived word, compound word, derivational stem, compound word, problematic relation, possessive attributive relations, morphological structure, defining relation, adverbial relation, subordinating relation, etymology.*

Սլավա Սարգսյանը «*Արցախի բնակավայրերը* (ստուգաբանություն) » աշխատությամբ [1] բնապաշտական հայեցակետի հիմքի վրա է փորձել ներկայացնել Արցախի տեղանունների ստուգաբանությունը : Սույնով էլ առանձնանում է քննվող աշխատությունը ոչ միայն Արցախին առնչվող անունների ստուգաբանության, այլև հայկական ստուգաբանության պատմության մեջ :

Բնական աղետներից փրկվելու տեղանքները, ապրելու գրավական արևը պաշտվել են ժողովրդի կողմից: Հեղինակը շեշտել է. «Տեղանունները երբեք չեն ծնվում ինքնաբերաբար և սոսկ լեզվահնչյունային օրինաչափություններով: Բառ ու անուններից առաջ սաղմնավորվում են համապատասխան հասկացություններ: Հետևաբար՝ պատմական տեղանունները հարկ է ստուգաբանել ծագումնաբանորեն՝ պատմական հիմքի վրա»[2] : Հեղինակը քննվող աշխատության ներածականում փաստարկել է նաև ազգագրագետ Լ. Հովհաննիսյանի «Պատմական տեղանունները՝ գերակա խնդիր» հոդվածը[3]:

Ս. Սարգսյանը լեզվաբան[4] չէ, բայց ստուգաբանական հսկայածավալ աշխատանք է իրացրել լեզվաբանական համարձակ խիզախումներով: Հեղինակը հիմք է ընդունել հարյուրից ավելի հնչյունափոխված տարբերակներ ունեցող, հայ և միջազգային ճանաչում գտած ԿԱՍ արմատը,

---

[1] ***Սարգսյան Սլավա***, *Արցախի բնակավայրերը (ստուգաբանություն) , Ե., 2018 թ., 232 էջ (29 մամուլ). խմբ.՝ բ. գ. դ., պրոֆեսոր Է. Մկրտչյան, գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատողներ Ա. Մաղալյան (պատմ. գ/թ), Մ. Հարությունյան (պատմ. գ/թ):*
[2] ***Սարգսյան Ա.***, *նշվ. աշխ., էջ 8 :*
[3] *Տես՝* ***Հովհաննիսյան Լ.***, *Պատմական տեղանունները՝ գերակա խնդիր, էջ 6, «Կաճառ», N1, 2006 թ.:*
[4] *Ս. Սարգսյանն ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմաշխարհագրական ֆակուլտետը:*

որի տարբերակների ծագումնաբանական և իմաստային նախասկզբնական նշանակությունները բացահայտված չեն: Հեղինակը գտնում է, որ տեղանվանագիտական խոր ուսումնասիրությունները համոզում են, որ այդ բառերն ունեն **սուրբ, պաշտամունք, զոհ, երկնային-տիեզերական-աստվածային** նշանակությունը[1]: Այսպիսի մոտեցումները նորովի են: Պաշտամունքից ձևավորված հասկացությունների և բազմաթիվ տեղանունների՝ մեկ արմատից սերված լինելն է ցույց տալիս տքնաջան հեղինակը (այս աշխատությունը հինգ տարի առաջ արժևորել էր խմբագիրը՝ բ. գ. դ., պրոֆ. Է. Մկրտչյանը[2]): Ներկայացնենք Ս. Սարգսյանի կողմից ստուգաբանված միավորների ձևութային կաղապարները [3]:

1. **Պարզ անվանումներ:** Ս. Սարգսյանի ստուգաբանած պարզ անվանումները՝ *Ա*[4] խորհրդանիշով, սակավ են՝ *Հան* (Շուշիի հեթանոսածին անվանումը՝ *բլուր, բարձունք, կուրգան* իմաստով, էջ 63), *Քար* (այժմ՝ Շուշիի տարածք, էջ 64, ներքևը՝ Քարինտակ), *Թալա՝* (*թաղ* իմաստով, *ղ>լ* պատմական հնչյունափոխություն . 194.) // Աշմանա (Քարվաճառ-Շահումյանի շրջան. Թաղ՝ բնակավայր// Ծաղիկանց (Չիչակլու)// Ծափաթաղ (շինծու)// Հողի գլխի սար// Բաղրսաղ (Բարսեղի շեն)// Ամեռնափոր//Ասրմբինա>Ասմանբինա -Սոդքի բնակավայրերից. *Աշմանա՝* երկինք, բարձր, սուրբ, աստվածային. մեր բարբառում ասում ենք՝ *Սասը ասմանն ա յէրիլալ-* Ս. Մ.)), *Ռև* (36, Շալվան// Շողվագ. Ռևան՝ *Ռե* բնակավայր), *Բագ* (սուրբ, աստվածային. Պուլուր Պուտնը ամրոց// Վաքա>Վահկա, 37), *Տող* (Թուլ)>թաղ (լեռնային բարձունք< երկինք< երկնակամար, 92, 93), *Ցոր* (100-101, *սուր՝* նշված է XIX դարից, իմաստի ընդլայնում՝ քաղաքային ամրոցապատ, պարսպապատ, ամրոցակուռ աշտարակ. արաբական բառ. մեկ այլ տարբերակով՝ լեռան վրա, գագաթին), *Խուլթ՝* բնակատեղ (190, 191), *Լև* (գետանունից՝ լեվ< լավ< դավ< դաբ< բաղ< *բագ՝* սուրբ, աստվածային, 196), *Ծար// Զառ* (դեղին՝ ոսկեգույն)// Ծարասար (*սար*, 200):

2. **Ածանցավոր[5] անվանումներ:** Քննված միավորներում *Ա+ա* կաղապարով ածանցավորները քիչ են: *Ուտի/ք* (լեռնազանգվածի ստորոտում գտնվող հարթավայրային երկիր, *Քուռ* գետի աջակողմյա հարթավայրը. *քորունե՝* ստորոտ (քուրե՝ ոտք. այս սկզբունքով կդառնա

---

[1]*Տես՝* ***Սարգսյան Ս.****, նշվ. աշխատ., էջ 9 :*

[2] *Տես՝ նշվ. աշխատ., էջ 3-4, Խմբագրի կողմից յոթ կետի արժևորմամբ խոսք:*

[3]*Ս. Սարգսյանի կատարած բոլոր ստուգաբանությունները չենք ներկայացնում՝ պայմանավորված տեղի սղությամբ:*

[4]*Օգտագործել ենք Էդ. Աղայանի ընդունած՝ ձևույթների հայատառ խորհրդանիշերը (տես՝ Ժամանակակից հայերենի հոդվումն ու խոնարհումը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 146, Ե., 1967 թ., 404 էջ):*

[5] *Տես* ***Ջահուկյան Գ.****, էջ 227-344, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987թ., 748 էջ:*

բարդ՝ Ա+Ա), 19), *Շուշու/լու* (Շուշու+լու՝ ուղղաբերձ, 66, հավանական է *Շուշիի* անունից), *Կիր/ով* (ռուսական *Кир* անունից, 65), *Հիլ/իս* (հունական՝ հելիուս, արեգակ, 37. տեղանվան *Ղ/Կարագյադուկ* տարբերակի մասին՝ ստորև), *Խնձրի/ստան>* (խինձ՝ խնձի՝ *խորշ, ծալք, գոգ, ծոց,* Խազիր/Խզիր/ստան՝ *լեռնային սրբացված բարձունք,* 37), *Խոջա/լու*>Կասակ՝ *լուսնյակ, սուրբ ջուր, գետ*// Կասալայ (Կասալ> Խասալ> Խաշալ> Խաջալ> Խոջալ. *Լուսնյակ*)// Իվան/յան (38), Վան+ք (Մարտակերտ, 112-114), Վան/ք// Դաղի վանք (190-191), Սոդ/ք Թաղ/լ/ար, Գետ/լ/ար> Ղաթ>թաղ/լ/ար (204-205):

3. **Բարդ[1] անվանումներ:** Բարդ կաղապարներով օրինակները շատ են, որը ցույց է տալիս նրանց անվանակոչության՝ ուշ շրջանում լինելը՝ առավել գիտակցվող բառերի կիրառությամբ: Բարդության բաղադրիչները կարող են լինել արդի վիճակում գիտակցվող և չգիտակցվող: Դրանք մեծ մասամբ երկարմատ են (եռարմատը սակավ է, ավելին համարյա չկա): Իշխողն անհոդակապ երկարմատ կառույցներն են: Քննված օրինակներում կան և՛ *համադրական,* և՛ *վերլուծական* կազմություններ:

Համադրական բարդություններ: Ա+Ա՝ Աս+կե/արան՝ երկնային// աստվածային// սուրբ+ քար// քարանձավ (սուրբ քար՝ քարաժայռ, լեռնագագաթ, 24), Խեր/խան (քարից շինված գյուղ, մեծ, փոքր, (64-65)՝ Քարաշեն. *խեր*՝ քար, *խան*՝ պրսկ.՝ գյուղ, բնակավայր, Եղցահողի մոտ), Շր/լան (Սարի վրա, էջ 65), *Կաս/ակ* (11-13. լուսնյակ՝ *լուսնի ակ՝ օղակ*): Ս. Սարգսյանը մեծ ուշադրություն է դարձրել *Կասակ* տեղանվան ստուգաբանությանը: Արաբական մատենագիտությունում այդպես է կոչվել Ուտիքի *Ադուէ* գավառի գլխավոր բնակավայրը՝ ներկայիս *Ղազախ* քաղաքը: Հեղինակը մատնանշել է պատմական հայ և օտարազգի շատ գիտնականների ու նրանց աշխատանքների անուններ՝ հետաքրքրված այդ հարցերով (ամենահին գրավոր տեղեկությունը վերաբերում է մ. թ. ա. I դարում Պոմպեոսի արշավանքներին): *Ղազախը* ներկայացվել է որպես *Անահիտա՝ Անահտական* մարզ (Անահիտը նաև *կաս*՝ լուսնի աստվածություն է ներկայացվել), մեկ այլ դեպքում՝ *Ասպիդ* (Ասպիս) անվամբ (նշել է, որ այդ կապակցությամբ Յա. Մանանդյանը սրբագրել է՝ *Կասպիէ*): Այնուհետև *Կասակը* վերագրվել է ջրանուններին՝ *սուրբ ջուր, սուրբ աղբյուր* և այլն: Հեղինակը հավելել է Աղստևի սկզբնական անվանումը՝ *Կասակ* (*Աղաստեվ-Ակաստև*՝ հնչյունափոխություններ. Կասակ-Ակկաս, իսկ *տեվ-տավ*-ը *տեղանք* հիմնական ձևույթ է՝ Ա+Ա+Ա և այլն: Այդ տեղանքի բարձունքի Պարզ լիճը նախկինում կոչվել էր *Ղազախ գյոլ,* նաև *Ղազախ բեկ* գյուղ ու լեռան գագաթը: Արագածոտնի Քասախը (ըստ Պտղոմեոսի՝ Gasala) ևս առնչվում է դրան: Անահիտի մարզեր էին այդպես բնութագրվել

[1]. *Ն.տ., էջ 250:*

(Պարտավը, Աղդամը՝ Ակնան և այլն. մեզ հանրահայտ Անահիտի աղբյուրը Պարտավում. հնագույն ապացույց է): Ղ/Կարագյադուկ՝ *մեծ* կամ *քարեն լեռնանցք*, 37

Հոդակապով. Ա+հ+Ա՝ Ղար/ա/բաղ (*կար*>քար՝ ք>կ>ղ, լեռ, *բաղ*՝ աստվածություն, էջ 17-19, լեռնային սրբացված տարածք. պահլավերեն՝ *բագ*, ռուսերեն՝ բոգ): Մեծ գիտնականը *Ղարաբաղ* օտարահունչ թվացող բառի հայկական ստուգաբանությամբ հսկայածավալ աշխատանք է մատուցել (XIII դ. այլ պատմական աղբյուրում է նաև հիշատակված (Ֆազլալլախ Ռաշիդ ադ-Դին՝ կապված Ղազան խանի (1295-1304) ժամանակների հետ) : Ս. Սարգսյանը համամիտ է Մ. Ղուկասյանին, որը *Ղարաբաղը* դիտել է որպես ամենահին աստվածություններից մեկը՝ շումերա-աքքադական ծագմամբ: Այն, մտնելով դիցարան, շատ լեզուներում բառիմաստի ընդլայնում է ապրել: Հեղինակը հավելել է. «….բագը իրականում դիտվում է որպես հնդեվրոպական-հայկական անվանում, որից ծագել է ռուսական բոգ: Ըստ Ա. Վարպետյանի՝ ռուսական բոգը ծագում է հայարիական բակ-ից՝ արևից» (էջ 19):

Ա+հ+Ա՝ Ուշաջղ/ Չափար՝ ուշա> հուշա> հաշա> հասա> Կաս/ա (կաս՝ *սուրբ, աստվածային*)+ ջղ> ջիւղ> գիւղ>գյուղ (124), Դաշ/ու/շեն//Դաս/ու/շեն (քարի շենը՝ Քարաշեն, էջ 46, 88): *Վերլուծական* կազմություններ՝ Ա Ա՝ Կանաչ թալա (Կանաչ բացատ, 64), Տասը վերստ (64՝ Ենգիբարի քարավանատունը (*վերստ*՝ չափի միավոր, մոտավորապես 1 կմ, ռուսական փոխառություն, Լիսագորի մոտ)):

Եռարմատ կազմություններ՝ (Ա+Ա)+Ա: Քրտնաջան մտավորականը վաղնջահայերենում ստեղծված *Արցախ* բնակավայրի անունը ստուգաբանել է հնչյունափոխություններով առլեցուն կաղապարով: *Ար*-ը բաղադրյալ կառույց է (Կար>Ար (քարե ակ՝ *արեգակ*)՝ քար+արեգակ. *ք* հնչույթի պարզեցմամբ՝ ք>կ՝ վերջինիս անկմամբ)+կաս> հաս> հաց/ խաց> ցախ (սկզբից՝ ԿԱՍ[1]՝ Լուսին՝ *սուրբ* (էջ 15-16), *լեռնային սրբացված տարածք. Կաս* անվանումն անճանաչելիության աստիճան հնչյունափոխվել է (այն հնչյունափոխական հարյուր տարբերակ[2] ունի, նրանցից որևէ մեկը կամ մի քանիսն են՝ հատկապես բաղաձայնույթի տեսակներ. *կ>հ և հ>խ* հնչյունափոխական տարբերակները սովորական են, այս արմատի վերջին հնչյունափոխությունը շրջումն է՝ դրափոխություն՝ խաց> ցախ): Սար/դար/ա/շեն //Քեշիշ/քենդ (սուրբ, աստվածային գյուղ, որը *քեշի* արմատն է (քենդը հետո է կցվել)/ Նորագյուղ. Սար/դար/ա/շեն՝ Ա+ Ա+ հ+Ա՝ *լեռան գլխի շեն՝ գյուղ*, 34, 35, մոտը Սարեն խաչ սրբատեղին. Սիյ/դար՝ *սուրբ լեռ*) և այլն:

---

[1].*Տես՝* ***Ջահուկյան Գ.****, նշվ. աշխ., էջ 130:*
[2] *Տես՝* ***Սարգսյան Ս.****, նշվ. աշխ., էջ 8-15:*

4. **Բարդածանցավոր կազմությամբ անվանումներ:** *Համադրական կառույցներ՝* Ա+ա+Ա՝ Հան/ի/շեն (Հան+ի+շեն, 20), (Ա+ա+ա)+Ա՝ Խան/լ/իկ/փեյա [(Խան)+լ+իկ]+փեյա, 66՝ փոքր բնակատեղի, *խան՝* իշխան (պարսկերեն), *փեյա՝* գոմ (փայա՝ թուրքերեն)), (Ա+ա)+հ+(Ա+ա)՝ Լիս/ա/գոր/սկ (ռուսերեն՝ լերկ սարեր) //Թթուջուր (64, հին իջևանատուն), Ա+Ա// Ա+(Ա+Ա)՝ Կատ/ռուտ// Հա/դ/ռութ (պրսկ., երկու գետերի միջև՝ Միջագետք՝ Ա+(Ա+ա)), վաղնջահայերեն՝ *Կատ* (բնակավայր) և *ռուտ*-ը՝ *գետ՝* Գետաշեն՝ Ա+հ+Ա (89, ինչպես նաև՝ *ուտ/ոտ՝* լեռան ստորոտում գտնվող՝ Ա+(Ա+Ա)), Ա+[Ա+(ա+ա)]՝ , Մեծ/կողմ/ան/ք-Մաս/կողմ/ան/ք// Մաս/կու/էնք-Մեծ/կու/էնք (*լեռնային տարածք.* ինչյունափոխություն՝ ա>ե, ձայնդարձ, ծ>ս՝ հնչյունի պարզեցում, Մաս՝ սուրբ աստվածային, 106-107), Մեծ/առանք-Մաս/առան/ք //Մեծ/իրանք- Մաս/առան/ք (Առան երկրամասի լեռնային սուրբ հատվածը, 106-107):

Վերլուծական՝ (Ա+ա)+ա (Ա+հ+Ա)՝ Ներքին Փարաջան (160-162), Ա+ա Ա+ա+Ա+ա՝ Վերին Փարաջան (արևասար/ արեգունի, փար>*պար*, սան>շան>ջան՝ սրբավայրի բնակավայր, շեն, 160-162), Բուն Խալիֆալու// Խալփալու// Լաչինլար (երեքն են՝ Բուն, Վերին և Ներքին, 22, 66), Ա Ա+հ+ա և այլն:

Երբեմն այս աշխատանքներն արտաքուստ թվում են անհիմն, բայց հազարամյակներ առաջ՝ վաղնջահայերենում գործածվածը պատկերացնել ու ներկայացնել իր հիմնավորումներով, մեծարժեք, անհավատալի տքնանք է, ստուգաբանական սխրանք հեղինակի կողմից, որը գիտական խոր նվաճում է հայ և համաշխարհային տեղագրությունում[1]:

Հայկական ու միջազգային հսկայածավալ աշխատություններին քաջատեղյակ մտավորական Ս. Սարգսյանը ձգտել է վաղնջահայերենի հիմնավորումներով ցույց տալ դրանց հնչյունափոխություններն ու հայկական լինելը (այդ տեղանունները՝ XII դ. սակավ, իսկ XVIII դարից հաճախակի, մեծ չափերով աղավաղվել են մահմեդականների կողմից): Ներկա վիճակում՝ ադրբեջանցիները կեղծ ու նպատակային աշխատանքներ են իրացնում այդ կապակցությամբ: Հեղինակը ձգտել է շտկել ձևախեղումները, վերականգնել արցախյանը՝ հայկականը:

---

[1]. *Այս մեծարժեք աշխատության շնորհանդեսը կայացավ Արցախի պետական համալսարանում (քիչ ուշ, 29. 04, 21): Գնահատանքի խոսքերով ու երույթներով հանդես եկան գիտնական դասախոսներ, մագիստրանտ ուսանողներ (այդ թեման որպես առարկա է ուսումնասիրվում. վերջում՝ հեղինակի խոսքը եղավ ու բուռն հարցազրույց (տողերիս հեղինակը հանրամատչելի հոդվածով Լուսարար գիտակրթական թերթում տվել էր իր դրական վերաբերմունքը.14. 02. 20 թ.)):*

Գրականություն

1. Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Ե., 1967 թ.:
2.Հովհաննիսյան Լ., Պատմական տեղանունները՝ գերակա խնդիր, «Կաճառ», N1, 2006 թ.:
3.Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987թ.:
4.Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը (ստուգաբանություն) , Ե., 2018 թ.:

Նյութը ներկայացվել է 03.03.2023,
գրախոսման է ուղարկվել 10.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել *ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:*

ՀՏԴ 371.31: 809.198.1

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար
E-mail: tsovinar-asratyan@mail.ru

Վեհանուշ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար
E-mail: sargsyanvehanush06@asu.am

ԲԱՅԱՀԻՄՔ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Սույն հոդվածում նպատակադրվել ենք ներկայացնել **բայահիմք** ձևաբանական հասկացության հետ կապված հարցերը հանրակրթության մեջ՝ քննելով 7-րդ և 11-րդ դասարանների դասագրքերի տեսական և գործնական նյութը: Վեր ենք հանել դասագրքերում ուսումնական նյութերի ներկայացման մեթոդաբանությունը, առանձնանշել խնդրահարույց կետերը:*
Մեր կողմից սույն թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ոլորտի մասնագետների, բանասերների դիտարկումները փաստում են անցյալ կատարյալի հիմքից կազմվող բայաձևերի կառուցվածքային սխալների գոյությունը լեզվակիրների խոսքում: Սխալների շտկման հնարավորությունն ընձեռում է դպրոցը:
Բանալի բառեր՝ *անցյալ կատարյալ ժամանակաձև, բայ, բայահիմք, բայածանց, բայական վերջավորություն, գծային առանձնացման մեթոդ, ենթակայական դերբայ, հարակատար դերբայ,*

ուսուցում, մեթոդ, վարժություններ, քերականական գիտելիքներ:

Ц. Асратян,В.Саргсян

ПРОБЛЕМЫ В ОБЩЕМ ОБРАЗОВАНИИ ПО ФОРМИРОВАНИЮ И ЗАКРЕПЛЕНИЮ ПОНЯТИЙ ГЛАГОЛЬНОЙ ОСНОВЫ

В статье мы стремились представить вопросы, связанные с морфологическим понятием глагола в общеобразовательной системе, рассмотрели теоретический и практический материал учебников для 7 и 11 классов, а также методологию представления учебных материалов в учебниках, выделили проблемные моменты.
Выбор темы обусловлен тем, что специалисты и филологи в данной области свидетельствуют о наличии в речи носителей языка структурных ошибок глагольных форм, образованных на основе прошедшего совершенного времени. Возможность исправления ошибок предоставляется школой.

Ключевые слова: *прошедшее совершенное время, глагол, основа глагола, спряжение глаголов, окончание глагола, метод линейного разделения, подчиненный глагол, относительный глагол, обучение, метод, упражнения, знание грамматики.*

Ts. Hasratyan, V.Sargsyan

BASIS FOR CONCEPT FORMATION AND CONSOLIDATION PROBLEMS IN PUBLIC EDUCATION

In this article, we tried to present issues related to the morphological concept of the verb in the general education system, considering the theoretical and practical material of textbooks for grades 7 and 11. We considered the methodology for presenting educational materials in textbooks, identified problematic points. We have highlighted that the knowledge of verbs, verb bases, verb forms, expressed meanings, is necessary for the correct formation and use of verb forms in speech. The need for this is explained by the fact that the first prerequisite for the conscious assimilation of the material is to apply the knowledge in practice. Learning grammar definitions alone is not enough to apply them correctly in speech. The reason for the mistake can also be considered

insufficient knowledge of the basics of swimming. If the puple does not distinguish between the base of the indefinite past participle and the base of the past perfect, he will make mistakes in the verb forms formed from them.
Our choice of this topic is due to the fact that the observations of specialists and philologists in this field indicate the presence of structural errors in verb forms formed on the basis of the past perfect tense in the speech of native speakers.
The opportunity to correct errors is provided by the school.
Key words: *past perfect tense, verb, verb stem, verb conjugation, verb ending, linear separation method, subordinate verb, relative verb, learning, method, exercises, knowledge of grammar.*

Բայ-ը հայոց լեզվի դասընթացի ամենաածավալուն թեման է, ուսուցանվում է միջին դպրոցի 7-րդ և ավագ դպրոցի 11-րդ դասարաններում: Նյութը բաշխված է տեսական և գործնական մասերով, որով ապահովվում է հայոց լեզվի հանրակրթական դասընթացի չափանիշների մեջ ևս *գիտելիք, կարողություններ, հմտություններ*[1] բնութագրիչների հստակ տարանջատումը:

Սույն հոդվածում նպատակադրվել ենք ներկայացնել *բայահիմք* ձևաբանական հասկացության հետ կապված հարցերը հանրակրթության մեջ՝ քննելով 7-րդ և 11-րդ դասարանների դասագրքերի[2] տեսական և գործնական նյութը: Վեր ենք հանել դասագրքերում ուսումնական նյութերի ներկայացման մեթոդաբանությունը, առանձնանշել խնդրահարույց կետերը:

Մեր կողմից սույն թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ոլորտի մասնագետների, բանասերների դիտարկումները փաստում են անցյալ կատարյալի հիմքից կազմվող բայաձևերի կառուցվածքային սխալների գոյությունը լեզվակիրների խոսքում: Սխալների շտկման հնարավորությունն ընձեռում է դպրոցը:

Բայահիմք թեման բացակայում է վերը նշված դասագրքերում, սակայն հիմքի գաղափարը ընդհանուր առմամբ ներկայացվում է հարակից թեմաներում: Այսպես, 7-րդ դասարանի դասագրքում՝ «Բայի կազմությունը»

---

[1] *Տե՛ս «ՀՀ որակավորումների ազգային շրջանակը» հավելվածը (ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշում) :*
[2] ***Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.****, Հայոց լեզու-7, Եր., 2021թ.,* ***Եգեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.****, Հայոց լեզու-11, Եր., 2019 թ. :*

թեմայում, տրվում է, որ **ել, ալ**[1] վերջավորություններից առաջ ընկած մասը բայի հիմքն է[2] : Նաև հավելվում է, որ բայի հիմքը ածանցավոր է, եթե վերջավորություններից առաջ կա որևէ բայածանց: Օրինակ՝ **մոտենալ, բարձրացնել, գլորվել** բայերի **մոտ-են-, բարձր-ացն, գլոր-վ-** հիմքերն ածանցավոր են[3] :

Հայ լեզվաբանության մեջ ձևաբանական հիմքի տեսակներ են առանձնացվում *բացարձակ հիմքը* և *բայահիմքը*, վերջինիս համար՝ *ներկայի* կամ *անորոշի, անցյալի* կամ *կատարյալի* , մասնակի դեպքերում նաև *դերբայական* [4] տեսակները: Քննվող դասագրքերում, ինչպես նշել ենք, բայահիմք-ը որպես առանձին թեմա չկա: հետևաբար, ձևաբանական նշված գիտաբառերի գործածությունը չի կարող լինել : Մեր դիտարկումների համար մեջբերենք հետևյալը. «Հարակատար դերբայի բուն վերջավորությունն է **ած**, իսկ **աց, եց** մասնիկները հիմքի ածանցն են», «Անկատար դերբայն ունի **ում** վերջավորություն, որն ավելանում է անորոշ դերբայի հիմքին **ել** կամ **ալ** վերջավորության փոխարեն » : Ինչպես նկատում ենք, *հիմք* գիտաբառը ընդհանուր իմաստով է կիրառվել՝ և ներկայի, և անցյալի : Անհասկանալի է մնում *անորոշ դերբայի հիմք* կապակցության կիրառությունն այն առումով, որ դասագրքում չեն բացատրվում ձևաբանական հիմքի տեսակները, որոշման հիմունքները:

11-րդ դասարանի դասագրքում բայահիմքի մասին որևէ հիշատակում չկա : Բայական մասնիկների փոխարինումները պարզապես սահմանվում են , օրինակ՝ «Ենթակայական դերբայը ունենում է **–ող** վերջավորությունը, որը դրվում է անորոշի **–ել** վերջավորության փոխարեն, իսկ **ա** խոնարհման բայերի դեպքում ավելանում է **–ացող** վերջավորությունը՝ կարդացող, խաղացող : **-Ան, -են** սոսկածանցների փոխարեն ենթակայականում դրվում են **–աց, -եց**՝ հեռանալ-հեռացող, մոտենալ-մոտեցող »[5] : Կամ. «**-Ն** և **-չ** սոսկածանցներն անցյալ կատարյալում ընկնում են: Պատճառական **–ացն, -եցն, -ցն** ածանցների փոխարեն անցյալ կատարյալում դրվում են **–ացր, -եցր, -ցր**»[6] :

Այսպիսով, արձանագրում ենք, որ դասագրքերի հեղինակներն իրենց առջև խնդիր չեն դրել *բայահիմք* լեզվաբանական հասկացությունը կրթական առանձնացված բաղադրիչներով ներկայացնել: Հետևաբար, աշակերտների

---

[1] *Պահպանել ենք մասնիկների գրության դասագրքային ձևերը :*
[2] *Տե՛ս* ***Բարսեղյան Հ., Մելթիխանյան Փ.****, Հայոց լեզու-7, էջ 81 :*
[3] *Նույն տեղում :*
[4] ***Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.****, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2 , էջ 271 :*
[5] ***Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.****, Հայոց լեզու-11, էջ 109 :*
[66] *Նույն տեղում :*

գիտակցության մեջ ձևաբանական հիմքի ընկալումը կմնա բավականին թերի կամ էլ ընդհանրապես չի ձևավորվի :

Անդրադառնանք սովորողների կարողունակությունների զարգացման հարցին: Ինչպես նկատելի է, դպրոցական դասագրքում կիրառվել է բայական բաղադրիչները գծային առանձնացումով ներկայացնելու մեթոդը: Վերջինս նպաստում է դպրոցականների գիտակցության մեջ լեզվաբանական այդ հասկացության պատկերային ամրակայմանը: Մեր դիտարկումները ցույց են տվել հետևյալը : Դասագրքերում կիրառվել է և՛ *հիմք-վերջավորություն* տրոհման մեթոդաբանությունը, և՛ բառակազմական նվազագույն մասերի բաժանելու մեթոդաբանությունը : Ընդ որում, բայածանցների մասին նյութում տեսնում ենք երկրորդ մեթոդը՝ թռ-չ-ել, ընկ-ն-ել, քար-ան-ալ[1] և այլն, իսկ «Անցյալ կատարյալ» թեմայում՝ առաջինը՝ գրեց-ի, կարդաց-ի, կտրատեց-ի, գտ-ա, հեռացր-ի և այլն: Հիմքի և վերջավորության առանձնացման մեթոդաբանությունը հետևողականորեն չի կիրառվում : Օրինակ՝ գծային առանձնացմամբ տրվել են *անցյալ կատարյալի, ըղձականի ապառնի և անցյալ* ժամանակաձևերի օրինակները : Մնացած դեպքերում դասագրքերի հեղինակները հարացույցը կառուցել են չտրոհված բայաձևերով :

Հիմքակազմության վերաբերյալ գիտելիքների ամրակայմանը կնպաստեն ոչ միայն գծային վերլուծության հետևողական կիրառման դեպքերը, այլև պատկերային այլ ձևեր: *Ձևաբանություն* գիտակարգում ընդունված հետևյալ գործնական մեթոդաբանությունը ևս արդյունավետ միջոց է անցյալ կատարյալի հիմքը ճիշտ կազմելու համար. *ան,են, ն,չ* , պատճառական *ն* բաղադրիչները հակադրվում են *աց, եց, 0, ր* հիմքակազմիչներին[2] : Եթե դասավանդողը գրքի օրինակներին զուգահեռ սովորողներին կազմել տա աղյուսակներ, որոնցում հանդիպադրված կլինեն փոխարինվող վերոնշյալ մասնիկները, ապա, կարծում ենք,՝ դա էլ լրացուցիչ խթան կհանդիսանա հիմքակազմության գործնական յուրացման համար :

Այսպիսով, դասագրքաստեղծները հիմնականում առաջնորդվել են տեքստային եղանակով սովորողների լեզվական կարողությունները զարգացնելու մեթոդաբանությամբ : Օրինակ՝ ուշադրություն դարձնենք հարակատար դերբայի կազմությանը նվիրված հետևյալ հատվածին, որտեղ առանձնացվել են *ած, ացած, եցած* մասնիկները՝ համապատասխան օրինակներով՝ ***ած***՝ անորոշ դերբայ՝ մրսել, թռչել, գտնել, հարակատար դերբայ՝ մրսած, թռած, գտած, ***ացած***՝ անորոշ դերբայ՝ խաղալ, զգալ, հեռանալ, հարակատար դերբայ՝ խաղացած, զգացած, հեռացած, ***եցած***՝

[1] *Ն.տ. :*

[2] ***Աբրահամյան Ս. , Պառնասյան Ն., Օհանյան Հ.***, *նշվ. աշխ., էջ 272 :*

անորոշ դերբայ՝ մոտենալ, գիտենալ, հարակատար դերբայ՝ մոտեցած, գիտեցած: Սակայն հաջորդիվ նշվում է, որ հարակատարի բուն վերջավորությունն է **-ած,** իսկ **-աց** և **-եց** մասնիկները հիմքի ածանց են[1]: Նման մեթոդաբանությունը պարզապես կստիպի սովորողներին անգիր անել բայերի ձևերը՝ առանց նրանց միջև օրինաչափություններ գտնելու հմտությունների զարգացման : Ըստ էության, հարակատար դերբայի ուսուցման ժամանակ ուսուցիչը վերհիշել է տալիս մի քանի ժամ առաջ անցածը և հիմնավորում գործնականի մեջ, օր՝**թռչել-թռած, կպչել-կպած, փախչել-փախած,** ցանկալի է գրել տալ բոլոր նմանատիպ բայերը, խոնարհել, գործածել նախադասության մեջ, նշել, որ **–չ** -ով կիրառությունն ընդունելի չէ, դրանք սխալ ձևեր են:

Դասերին կցված վարժությունները ևս զարգացնում են յուրաքանչյուր բայի համար քերականական համապատասխան ձևը հիշելու և վերարտադրելու մեթոդաբանությունը: Օրինակ՝ Կազմի՛ր *գնալ, հնձել, մնալ, ծածկվել, եռալ, պառկել աղալ* բայերի հարակատար դերբայները [2] : Կամ՝ Կազմի՛ր հետևյալ բայերի վաղակատար դերբայները: Արթնանալ, գթալ, գտնել, թռչել, թվալ, թնդալ, ծորալ, մթնել,կանչել, դիպչել [3] :

Այսպիսով, բայահիմքերի մասին տեսական նյութի և գործնական տարատեսակ

վարժությունների բացակայության պայմաններում հավանականությունը մեծ է, որ սովորողները կունենան քերականական սխալներով հարուստ խոսք: Դասավանդողները

«Դերբայներ» թեման անցնելիս նույնպես կկանգնեն վերոնշյալ խնդրի առջև, ուրեմն, դրանց ուսուցման ժամանակ պարտադիր կլինի անորոշ դերբայի և անցյալի հիմքից կազմվող դերբայների առանձնացումը, որպեսզի սովորողները չդժվարանան հարակատար և վաղակատար դերբայները կազմելիս:

Բայի եղանակների ժամանակաձևերի կազմության դասերին սովորողները նույնպես առնչվելու են խնդրահարույց թեմային: Քերականական սահմանումը չիմանալու դեպքում խոսքում նորից կրկնվելու են սխալները: Սովորողները նախագիտելիքներ արդեն ունեն, մնում է համակարգել սովորածը:

Տեսական նյութի բացատրությունը պետք է տանել առավել կազմակերպված, աշակերտների ակտիվ մասնակցությամբ, այն

---

[1] ***Բարսեղյան Հ., Մելթիխանյան Փ.,*** *Հայոց լեզու – 7, էջ 91 :*
[2] *Ն. տ. :*
[3] *Ն.տ., էջ 93:*

նպատակադրումով, որ նրանք սովորեն բայի, բայահիմքերի, բայաձևերի կազմությունը, արտահայտած իմաստները, որոնց իմացությունն անհրաժեշտ է խոսքի մեջ բայի ձևերը ճիշտ կազմելուն և գործածելուն: Սրա անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ նյութի գիտակցական յուրացման առաջին նախապայմանը գիտելիքները գործնականում կիրառելն է: Միայն քերականական սահմանումների ուսուցումը դեռ բավարար չէ, որ դրանք ճիշտ կիրառվեն նաև խոսքում: Սխալի պատճառ կարելի է համարել նաև բայահիմքերի ոչ բավարար իմացությունը: Եթե աշակերտը չի տարբերակում անորոշ դերբայի հիմքն անցյալ կատարյալի հիմքից, ապա դրանցից կազմված բայաձևերում սխալներ թույլ կտա, ինչպիսիք են՝ **փախչել եմ, փախչեցի, թռչեցի, թռչած** և նույն օրինաչափությամբ կազմվող բառերում:

Աշակերտներին պետք է մղել ինքնուրույն որոնողական աշխատանքներ կատարելուն: Դրա համար պետք է պահանջել, որ նրանք վերհիշեն նախորդ դասերից յուրացրածը, առանձնացնեն անորոշ դերբայի և անցյալի հիմքից կազմվող ձևերը, այն դերբայները, որոնք մասնակցում են սահմանական եղանակի ժամանակաձևերի կազմությանը: Հատկապես պետք է առանձնացնել անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերը, քանի որ շեղումները տեղի են ունենում հենց այդ ձևերում, որոնք էլ սխալների տեղիք են տալիս: Իսկ որպեսզի ուսուցումն ինքնանպատակ չդառնա, չկրի սոսկ տեսական բնույթ, անհրաժեշտ է քերականական ձևերը սովորեցնել, ճանաչել տալ խոսքի մեջ, ապա օգնել, որ դրանք ճիշտ գործածեն խոսքում: Գործնական առաջադրանքներ կարող է կազմել ուսուցիչը՝ հաշվի առնելով աշակերտների թույլ կողմերը:

Բայաձևերի ճիշտ գործածման և ընդհանրապես գրագետ ու ճիշտ խոսելու մյուս կարևոր հանգամանքը գրականության դասերին քերականական նյութերի օգտագործումն է: Բազմիցս խոսվել է, որ գրական յուրաքանչյուր երկ անցնելիս ուսուցիչն անպայման պետք է ուշադրություն դարձնի քերականական այն հարցերին, որոնք սովորել են կամ սովորում են լեզվի դասերին՝ դրանով իսկ քերականական ձևերի կազմության օրինաչափությունները, արտահայտած իմաստները, կապակցական առանձնահատկությունները, շեղումներն ու բացառությունները ցույց տալով կապակցված խոսքի մեջ, դրանց նմանությամբ կատարելով մարզողական բնույթի վարժություններ:

Գրականություն

1. **Աբրահամյան Ա.,** Բայը ժամանակակից հայերենում, հ.1, Եր.,1962թ. :
2. **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.,** Ժամանակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974 թ.:
3. **Ասատրյան Մ.,** Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989 թ.:
4. **Ավետիսյան Յու**., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014թ.:
5. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.,** Հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 2008 թ.:
6. **Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.,** Հայոց լեզու, դասագիրք 7-րդ դասարանի համար, Եր., 2021թ.:
7. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.,** Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի համար, Եր., 2019 թ. :
8. **Եզեկյան Լ.,** Հայոց լեզու. Եր., 2005:
9. **Պետրոսյան Հ.,** Հայերենագիտական բառարան, Եր., 1987 :

Նյութը ներկայացվել է 04.05.2023,
գրախոսման է ուղարկվել 10.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ
ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

Նաիրա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ
E-mail: nairahambardzumyan@yahoo.com

ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքահայ գրականության ուսումնասիրության համապատկերում հատուկ ուշադրության են արժանի Վահե Օշականի հրապարակախոսական հոդվածները, որոնք հեղինակը տպագրել է Երևանի և աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայկական գաղթօջախների գործող պարբերականներում: Ուսումնասիրությունը սփյուռքահայ գրող Վահե Օշականի հրապարակախոսական ժառանգությունը վերլուծելու առաջին փորձն է, որը կնպաստի տվյալ ժանրի հաղորդակցական ներուժի բացահայտմանը:

Ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել հեղինակային անհատական ոճի առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Օշականի հրապարակախոսությանը: Ուսումնասիրության խնդիրն է՝ նորովի մեկնաբանել Վահե Օշականի հրապարակախոսական ժառանգությունը, որը կնպաստի հեղինակի օգտագործած լեզվառճային տարբեր միջոցների և շերտավորումների առաջնային բնույթների բացահայտմանը: Ուսումնասիրությունը միջգիտակարգային է: Այն վերլուծվել է գրականագիտության, փիլիսոփայության, լեզվաբանության միջև փոխադարձ կապերի և առնչությունների համատեքստում: Կիրառվել են գրականագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական մեթոդները՝ ուսումնասիրվող տեքստի շառավղում ամփոփելով Վահե Օշականի հրապարակախոսության մեջ գոյություն ունեցող լեզվառճային շերտավորումները:

Այսօրինակ ուսումնասիրություն կատարվում է առաջին անգամ: Այն կարևոր է և արդիական ոչ միայն միջգիտակարգայնության, այլև սփյուռքահայ գրականության մեջ Վահե Օշականի հրապարակախոսական ժառանգության վերլուծության տեսանկյունից:

Բանալի բառեր՝ *Վահե Օշական, հրապարակախոսություն,* ***Սփյուռք-Հայաստան*** *փոխհարաբերություններ, Արցախյան հիմնախնդիր, լեզվառճական շերտավորումներ, ժանրային առանձնահատկություններ:*

Н. Амбарцумян

ПУБЛИЦИСТИКА ВАГЕ ОШАКАНА

Публицистические статьи Ваге Ошакана, опубликованные автором в периодических изданиях армянских колоний в разных странах мира, заслуживают особого внимания в контексте изучения литературы армянской диаспоры. Данное исследование является первой попыткой анализа публицистического наследия зарубежного армянского писателя Ваге Ошакана, что поспособствует раскрытию коммуникативного потенциала этого жанра. Цель исследования – проанализировать особенности индивидуально-авторского стиля, характерного для публицистики Ваге Ошакана. Задача исследования – по-новому интерпретировать публицистическое наследие Ваге Ошакана : это поможет раскрыть ключевое значение различных стилистических средств и пластов, используемых автором.

Исследование является междисциплинарным. Оно проанализировано в контексте взаимосвязей между литературоведением, философией и языкознанием. Нами были применены литературоведческие, философские и лингвистические методы, которые обобщают языковые и стилистические пласты, представленные в публицистике Ваге Ошакана. Такое исследование проводится впервые, что является важным и актуальным не только с точки зрения междисциплинарных изысканий, но и с позиции

анализа публицистического наследия Ваге Ошакана в контексте армянской зарубежной литературы.

Ключевые слова: *Ваге Ошакан, публицистика, взаимоотношения Диаспора-Армения, арцахская проблема, языковые и стилистические пласты, жанровые особенности.*

N. Hambardzumyan

PUBLICISM OF VAHE OSHAKAN

Vahe Oshakan's op-ed articles published by the author in the periodicals of the Armenian diaspora in different countries of the world deserve special attention in the context of the study of Armenian Diaspora literature. The study is the first attempt to analyze the journalistic heritage of Armenian Diaspora writer Vahe Oshakan, which will also contribute to revealing the communicative potential of this genre.

The aim of the study is to analyze the characteristics of the author's personal style, which are typical of Oshakan's publicism. The problem of the study is to interpret Vahe Oshakan's publicism heritage in a new fashion, which will contribute to the discovery of the primary nature of the various stylistic means and stratifications used by the author.

The study is interdisciplinary. It was analyzed in the context of the reciprocal connections and relationships between linguistics, literary studies, and philosophy. Literary critical, philosophical, and linguistic methods were applied, summarizing the languo-stylistic stratifications existing in Vahe Oshakan's publicism in the radius of the studied text. This kind of study has been done for the first time. It is important and relevant not only from the point of view of interdisciplinarity, but also from the point of view of analyzing Vahe Oshakan's journalistic heritage in Armenian Diaspora literature.

Key words: *Vahe Oshakan, publicism, Diaspora-Armenia relations, Artsakh issue, linguo-stylistic stratifications, genre features.*

Ներածություն

Մարդկային կյանքն ու մտածողությունը Վահե Օշականը արտացոլել է գեղարվեստական տարբեր ժանրերի և մոտեցումների համատեքստում: Այս առումով, հատուկ ուշադրության են արժանի Վահե Օշականի հրապարակախոսական հոդվածները, որոնք հեղինակը տպագրել է «Երեկոյան Երևան», «Ազգ», «Նախիջեւան», «Ազատ օր», «Հասկ», «Յառաջ» պարբերականներում: Այս ուսումնասիրությունը Վահե Օշականի հրապարակախոսական ժառանգությունը վերլուծելու առաջին փորձն է, որը կնպաստի նաև տվյալ ժանրի հաղորդակցական ներուժի բացահայտմանը:

Սփյուռքահայ գրող Վահե Օշականի բազմաժանր երկերը հետաքրքրում են ժամանակակից ընթերցողներին և հետազոտողներին: Հրապարակախոսության ժանրն այս հեղինակի համար գլխավորը չէ, սակայն նրա ստեղծագործական ժառանգությունը չի կարելի պատկերացնել առանց հրապարակախոսական հոդվածների, որոնք արտացոլում են Օշականի աշխարհայացքը, նրա էությունը և անհատական պոետիկայի հիմնարար առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գրողի գրական ժառանգությունը մեկ հիպերտեքստ է, որը, որպես կանոն, ներառում է նրա գրած բոլոր գործերը՝ պատմվածքներ, պիեսներ, բանաստեղծություններ, հրապարակախոսական հոդվածներ են: Վահե Օշականը ներկայանում է իր նախընտրած հրապարակախոսական ժանրով:

Վահե Օշականի հրապարակախոսությունը ընդգրկում է «Ղարաբաղյան օրագիր», «Սփյուռքը ճակատ է», «Գրքերի և մարդոց մասին» ճանաչողա-քննադատական հոդվածաշարերը, որոնք մարմնավորում են նրա քաղաքացիական դիրքորոշումը, որի միջոցով հեղինակը մասամբ մասնակցում է թերթի, ամսագրի և այլ գործառական նշանակություն ունեցող տեքստերի կազմավորմանը՝ նվիրված հասարակական-քաղաքական, աշխարհաքաղաքական փաստերի և գործընթացների, պարունակում է տրամաբանական, հայեցակարգային համոզիչ միջոցներ, որոնք տարբերվում են ոճով և ունեն զգայական խորք:

Նրա տարբեր հոդվածներում հիմնականում քննվում են արցախյան առաջին պատերազմի, դրա հետևանքների, այդ հիմնախնդրում Հայաստանի դիրքորոշման, արցախահայության ճակատագրի թեմաները: Վահե Օշականը քննում է քաղաքական և գրական-մշակութային հիմնախնդիրները, սփյուռքահայ համայնքների կացութաձևերը, Սփյուռքի առջև ծառացած սպառնալիքները, Սփյուռքի ներուժը՝ «Մեր նորագոյն պատմութեան մէջ Արցախեան Պահանջատիրութիւնը պիտի յատկանշուի ոչ միայն իբրեւ քաղաքական եւ ազգային զարթօնք, այլեւ իբրեւ մշակութային

արթնացում եւ ստեղծագործ հայ մտքի ճառագայթում, որոնց լաւագոյն արտայայտութիւնները կարելի է նկատել վերջին տարիներուն ստեղծուած գեղարուեստական գրականութիւնը՝ Արցախ աշխարհի հերոսական մաքառման մասին, Արցախի, Հայաստանի, ներքին Սփիւռքի, Միջին Արեւելքի, Ամերիկայի, Աւստրալիայի, Եւրոպայի եւ հայկական այլ գաղութներու մէջ»[1]:

Բողոքարկումը որպես հրապարակախոսության միջոց

Օշականի հրապարակախոսության ժանրային սահմանումները վկայում են հեղինակի հստակ դիրքորոշման և մոտեցումների մասին: Նրա տեքստը միաժամանակ պատմություն է, հռչակագիր և էսսե: Հեղինակի ժառանգության այս հատվածը բնութագրելի է որպես *հրապարակախոսական մանիֆեստ*, մեկ բառով՝ *բողոքարկում* (appeal)՝ հրապարակախոսական հոդվածների տեսքով: Ըստ Հեգելի՝ հրապարակախոսական աշխատանքում խոսքի ողջ ձևն ու կառուցվածքը օգտագործվում են միայն որպես ամենաարդյունավետ միջոց՝ հասնելու մի այնպիսի վերջնանպատակի, որը դուրս է արվեստից[2]:

Ո՞րն է *բողոքարկում-հրապարակախոսության* ձևն ու կառուցվածքը: Ի սկզբանե այն սահմանվում և հետևողականորեն ընդգծվում է իր խիստ կառուցվածքով: Վահե Օշականի հոդված-բողոքարկումները բաղկացած են երկու մասերից, որոնք հստակորեն առանձնանում են. առաջինը արձանագրում է հեղինակի դիմում-վերաբերմունքը այս կամ այն երևույթին, երկրորդը՝ ինչ տեղի կունենա, եթե այդ դիմումները տեղ չհասնեն: Սակայն այդ հոդված-բողոքարկումների երկու մասերն էլ հստակորեն ներկառուցված են: Դրանք համապատասխանում են Օշականի էքսպրեսիոնիստական ոճին: Տեքստի այսօրինակ համակարգման շնորհիվ ուշագրավ է դառնում նաև տեքստի ներքին կառուցվածքը, քանի որ հստակորեն գծագրվում են գրողի մտքի ընթացքը և տրամաբանությունը, որոնց զարգացումները, պարզընթացությանը զուգահեռ, դյուրին են դարձնում տեքստի ընկալումը՝ էապես մեծացնելով խոսքի ուժը և ազդեցությունը՝ «Քսաներորդ դարը կը լմննայ եւ ամէն ազգ կը փորձէ չափել եւ կշռել իր վիճակը, կտրած ճամբան իր անցեալի ու նաեւ դրացի ազգերու բաղդատմամբ: Աւելի լայն կարկինով մը՝ կան մարդիկ որոնք արեւմտեան քաղաքակրթութեան հաշուեփակը կ'ընեն, փորձելով հաստատել

---

[1] ***Օշական Վահե***, *Գրականության ճամբով հայ ոգիի ամրագրում, «Ազատ օր», 15 մարտի, 1996, էջ 4:*

[2] ***Hegel, Georg Wilhelm Friedrich***, *Translated by* ***Osmaston, Francis Plumptre Beresford***, *The Philosophy of Fine Art, volume 3 (of 4), Fine Arts: Aesthetics: 2017.*

մարդկային մտքի ուղղութիւնն, ու մանաւանդ ներկայ սահմանագիծը համ հասնումի կէտը, հազարամեակի աւարտի այս օրերուն (կը գործածեմ «հասնումի կէտ» արտայայտութիւնը փոխանակ «յառաջադիմութիւն» բառին՝ որ հարիւր տարիէ ի վեր կորսնցուցած է իր հին իմաստը)։ …Սփիւռքի մասին խօսելով, մեր կրթական հաստատութիւններու ցանցը ինչպէս եւ կրօնական կառոյցները կը շարունակեն իրենց հին թափով գործել։ Մեր մամուլը գէշ աղէկ իր գործը կ'ընէ, թէեւ վերջին տասնամեակին Հայաստանի մէջ մեր ըրած յանձնառութիւնները մեծ վնաս հասցուցին մեզի»[1]։ Հրապարակախոսության միջոցով Վահե Օշականը *բողոքարկում* է պատմության անցյալ, ներկա և ապագա հնարավոր անարդարությունները, և այն բոլոր հնարավոր անբեկանելի իրադարձությունները, որոնցից անհնար է խուսափել։ Նա տեսնում է ապագան։

Օշականի հրապարակախոսության համեմատական վերլուծությունը թույլ է տալիս խոսելու նաև նրա տեքստերի ժանրային առանձնահատկությունների մասին։ Օշականի ոճը ինքնատիպ է և պատկերավոր։ Նրա հրապարակախոսությունը կանխատեսող գործառույթ ունի։ Գուշակելով ապագան և ըմբռնելով անցյալը՝ հեղինակը բացահայտում է ապագայի և անցյալի ներքին ու արտաքին փոխադարձ կապերը ներկայի կարևոր հիմնախնդիրներին զուգահեռ։

Օշականի հրապարակախոսական հոդվածներում անցյալը, ներկան և ապագան կապող շղթան անտեսանելիորեն անցնում է ողջ տեքստով՝ վերածելով այն հետպատերազմական տարածաժամանակային մի քրոնոտոպի, որում հեղինակը կոչում է մարդկանց բանականության և նոր սարսափելի պատերազմի սպառնալիքի դեմ պայքարի։ Սփյուռքահայ համայնքներն, ըստ Վահե Օշականի, օժտված են հսկայական ներուժով. նրանց ներկայացուցիչները՝ քաղաքականության, մշակույթի ու գիտության գործիչները, կենսունակ են գրեթե բոլոր ոլորտներում, թեպետ հաճախ տագնապի որոշակի առիթներ լինում են, որոնք, ըստ հեղինակի, միմյանց չճանաչելու խնդիր է՝ «Սփյուռք-Հայաստան տագնապը վստահութեան պակասի, իրար չճանաչելու եւ սխալ հասկացութեան հարց է։ Տագնապ, որ շատ շատ աւելի կը լրջանայ, եթէ մշակութային չափանիշներու բարդ խնդիրը սեղան դրուի։ Կը մնայ յանձնախումբի մէջ անկեղծօրէն բացատրել մէկզմէկու բուն դժուարութիւնները։ Երկքաղաքացիութեան հարցն ալ կարելի է տալ յանձնախումբի։ …Հայաստանը միջազգայնօրէն ճանչցուած քաղաքական ու պետական ամբողջութիւն մըն է, մինչ Սփիւռքը ցիր ու ցան համայնքներու խմբաւորում մըն է, եւ նաեւ մտքի որոշ վիճակ մը։ Բայց այս հանգամանքները

[1] ***Վահէ Օշական***, *Խորհրդածութիւններ 21-ի շուրջ, «Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Ա տարի, Արեգ (Օգոստոս), 1999, թիւ 7-8, էջ 5։*

չենք կրնար արտօնել որ ազդին մեր հաւասարէ հաւասար յարաբերութեանց վրայ»[1]:

Օշականի հրապարակախոսական հոդվածներում առկա է նաև հակադրությունը, ներառյալ՝ դիմում-բողոքարկումները, որոնք հիմնված են վերը նշված հնարավոր կարգերից յուրաքանչյուրի իմաստաբանական անհամատեղելիության վրա՝ ողջախոհության տրամաբանության և մարդկության ինքնապահպանման բնազդին փոխկապված: Թերևս Օշականի ոճի այս հատկանիշն է, որ հիմք է տալիս նրան անվանելու *հակասությունների և կանխատեսումների գրող*, քանի որ հոդվածների երկրորդ մասում ժամանակի հետևողական կիրառումը ապահովում է հրապարակախոսական տեքստի կանխատեսող գործառույթի իրագործումը:

Սփյուռք-Հայաստան փոխհարաբերությունները Վահե Օշականը առնչում է Արցախյան հիմնախնդրին և *Հայաստան-Սփյուռք-Արցախ* փոխգործակցության սկզբունքներին՝ «Սփիւռք-Հայաստան հանդիպում մը նախ համաձայնութեամբ կ'որոշէ ու կ'որդեգրէ քանի մը կարեւոր սկզբունքներ: Առաջինը եւ կարեւորագոյնը հաւատքն է Սփիւռքի վրայ, նոյն հաւատով, որ ամէն հայ ունի Հայաստանին ու Ղարաբաղին վրայ: Որ կը նշանակէ թէ Հայաստանէն ու Ղարաբաղէն դուրս ապրող որեւէ հայ, ազգային ինքնութեան դրոշմը կը կրէ: «Ո՞վ է հայը» հարցումը մէկ պատասխան ունի - «այն անհատը, որ ինքզինքը հայ կը հռչակէ, ինչ լեզուով որ ըլլայ, նաեւ տէր կը կանգնի իր ազգային դարաւոր ժառանգութեան»: Վերջապէս, թէ մեր մշակոյթը, Արեւմտահայ եւ Արեւելահայ, ազգային մեծ գանձ է, եւ անոր յարատեւ գոյութիւնն ու զարգացումը հիմնական նպատակներէն մին է հայութեան»[2]:

Թեմայի գրավչությունը և շարահյուսական ներդաշնակությունը

Ուշագրավ է նաև Օշականի հրապարակախոսության մեկ այլ հատկանիշ՝ թեմայի գրավչությունը, որի սկզբունքը տարաբևեռությունն է, սակայն հեղինակի ոճի բացահայտված հատկանիշները, որպես ամբողջություն, բնորոշ են նաև մնացած ենթաժանրերին:

Շարահյուսական ներդաշնակությունը Օշականի տեքստի կոմպոզիցիայում սոսկ հաղորդագրական բնույթ չի կրում, այլ ապահովվում է տեքստը հասցեատիրոջը ուղարկելու միջոցով: Տեքստը կազմավորվում է երևույթների, պատմական անշրջելի իրողությունների և դրանց հնարավոր

---

[1] ***Վահէ Օշական***, *«Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Քաղոց (Մայիս), 1999, թիւ 3-4, էջ 7:*

[2] *«Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Քաղոց (Մայիս), 1999, թիւ 3-4:*

լուծումների շուրջ հաղորդումներով (հաստատական-շեշտված բարդ նախադասություններ, կոչեր, կրկնություններ, մակդիրներ)՝ «Բայց Ղարաբաղցիին էութեան մէկ ուրիշ երեսը կը բացուի երբ մօտենանք անոր մշակոյթին: Անցնող տասնամեակներու թրքական սեղմումները, բայց մանաւանդ պատերազմը, Ղարաբաղցին ըստիպած են աւելի ուժգին կերպով իր մշակոյթը սեղմել իր կենքին ու սրտին, թէ՛ իբրեւ տեսակ մը վահան թշնամիին դէմ, եւ թէ՛ իբրեւ մնայուն աղբիւր բարոյական սնունդի եւ ինքնութեան ուժի: Այս երեւոյթը միայն Ղարաբաղի յատուկ չէ, որովհետեւ վերջին հարիւր տարուան ընթացքին մեր ժողովուրդին ստացած հարուածները մեզ ազգովին շատ պահպանողական, անցելապաշտ ու ծայրայեղական դարձուցած են: Այնպէս որ Ղարաբաղցիները բացառութիւն չեն այս իմաստով, բայց պատերազմական մնայուն վիճակին պատճառով իրենց ֆոլքլորը միշտ աւելի կենսունակ, ապրող իրականութիւն մը եղած է, քան «ֆոլքլոր» բառը սովորաբար կը թելադրէ: Թէ՛ հին, թէ՛ ալ նոր, այժմէական է»[1]:

Ուշագրավ է, որ հեղինակի օգտագործած լեզվառճային բոլոր լեզվական միջոցները և շերտավորումները առաջնային բնույթ են կրում: Տեքստի լեզվի արտահայտչականությունը կոչված է ապահովելու բողոքարկման ուժեղ և հիշվող լեգիտիմությունը՝ ընթերցողի վրա ներազդելու պայմանով: Հենց սա է Օշականի հրապարակախոսության լեզուն, որին բնորոշ է առօրյա-խոսակցական ոճը, ու նաև բառերի ու արտահայտությունների հեղինակային հորինվածքների առկայությունը: Նրա հրապարակախոսությունը պարունակում է պատճառահետևանքային տարբեր ենթակառուցվածքներ՝

ա. *բացահայտ պատճառահետևանքային կառույցներ*, որոնք միավորվում են շաղկապներով *(թե, բայց, ու, և)*,

բ. *բացահայտ-կանխատեսվող, բայց չարտահայտված պատճառահետևանքային կառույցներ*, որոնք բնութագրվում են իրադարձությունների հաջորդականությամբ և չունեն հատուկ կապեր,

գ. *անուղղակի պատճառահետևանքային կառույցներ*, որոնք հատկանշվում են գործնականության (պրագմատիզմի) նախադրյալներով:

Յուրաքանչյուր կանխատեսում միաժամանակ շոշափում է նաև առանձին ներկառուցված թեմաներ՝ Ղարաբաղ - Ստեփանակերտ քաղաքի փողոցները, դպրոցները, համալսարանը, որտեղ հրավիրված էր դասախոսելու, շուկայի՝ մթերքներ վաճառող կանայք, քար լռությունը կատարվածի շուրջ, երկրի մահը և այն ամենը, ինչ հանգեցնում է մտքին, թե հնարավոր է, մահացած Երկրի մահացած վերջին մարդն է ինքը՝ «Ստեփանակերտը դուրս ելած է գիւղական իր կաղապարէն ու տակաւ կը

[1] ***Օշական Վահէ***, *Ղարաբաղեան օրագրութիւն-ԺԸ, «Յառաջ», Յունուար 29, 1997, էջ 2:*

մտնէ քաղաքի իր տարազին մէջ եւ ո՞վ պիտի ըսէր թէ միայն երկու տարի առաջ պատերազմական ճակատ էր այս վայրը եւ մարդիկ նկուղներ ապաստանած, մութին ու ցուրտին կը սեղմէին ակռաները ու կը տոկային: Կռուող քաղաք՝ մահուան աչքերուն մէջ անթարթ նայած՝ եւ անցած յարձակումի: «Մահւամբ զմահ կոխեալ» ինչպէս կ'ըսէ եկեղեցին որովհետեւ այս քաղաքին ու ամբողջ Ղարաբաղին նահատակները անդիի աշխարհ չեն գացած այլ մնացած են ապրողներու սրտերուն եւ յիշողութեան մէջ, ու տիւ ու գիշեր հետերնին են, ըլլայ ճակատ կռուելու ողջ զինուորներու կողքին, ըլլայ քաղաքին մէջ ուր գիտես թէ չկայ ընտանիք մը որ մէկ կամ մէկէ աւելի զոհ տուած չըլլայ այս կռիւին»[1]: Այս դեպքում, *ժողովուրդ* հավաքական գոյականը երաշխավորում և միավորում է որպես հասցե օգտագործվող տարբեր անձանց անունները, քանի որ տեքստը ուղղված է, ինչպես նաև բացահայտ հասցեագրված է և անվանում է տարամակարդակ ընթերցողին (ազգին)՝ «Մեր ազգը դեռ հազար տարի ալ պիտի ապրի, այնքան մեծ է իր իմաստութիւնը, այնքան ազնիւ է իր հոգին, եւ այնքան արթուն է իր միտքը, սակայն ներկայ կոտորակուած, պառակտուած իր վիճակով՝ պատրաստ չէ ան 21-րդ դարը դիմակայելու: Անհրաժեշտ է որ ան գիտակցի այս կացութեան ու փորձէ դարմանել զայն, ինչ որ իր կարելիութեան սահմաններուն մեջն է: …Սակայն 21-րդ դարը դիմաւորելու համար հոգեբանական շատ աւելի մեծ զոհողութիւն ու ճիգ կը պահանջուի հայութենէն ու ղեկաւարութենէն: Օրինակ՝ ի՞նչ արժէ երեք նշանաւոր բանաստեղծները՝ Տէրեան, Թումանեան ու Չարենց կուռքերու վերածել ու պաշտել, երբ անոնց պատգամներուն կարեւորութիւն տուող չկայ – Տէրեանի պատգամը՝ ռուս ժողովրդին չկոթնիլ, Չարենցի պատգամը՝ ազգին ուժը միութեան մէջ տեսնէլ, եւ Թումանեանին պատգամը՝ Արագածի գագաթէն արձակուած մնալ ազնիւ ու մաքուր»[2]:

Ժողովուրդ հավաքական գոյական-հասցեի ձևը չի տարածվում քաղաքավարության բանաձևերի վրա, այլ օգտագործվում է բավականին կոշտ ձևով, քանի որ գրողի առաջարկած իմաստաբանական համատեքստում սենտիմենտի տեղ չկա, թեման, որը զարգացնում է հեղինակը, չափազանց լուրջ է, հետևաբար, դուրս է քաղաքավարությունից: Բառապաշարային մակարդակում Օշականի առաջատար սկզբունքը հասկացությունների հակադրությունն է՝ «Օրագրութիւնը գրական ամէնէն ենթակայական սեռն է, ի վերջոյ, ինքնակենսագրութենէն ետք: Եւ այս պարագային, կայ ինքնաճանաչումի փորձ մըն ալ, այսինքն՝ այն Սփիւռքահայը, որ Հայաստանն ու Ղարաբաղը չէ ճանչած՝ դժուար թէ

---

[1] ***Օշական Վահէ***, *Ղարաբաղեան օրագրութիւն-Ե, «Յառաջ», Հոկտեմբեր 8, 1996, էջ 2:*

[2] ***Օշական Վահէ***, *Խորհրդածութիւններ 21-ի շուրջ, «Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Ա տարի, Արեգ (Օգոստոս), 1999, թիւ 7-8, էջ 5:*

ամբողջութեամբ գիտնայ Սփիւռք եւ Հայ յղացքներուն իմաստը: Եւ փոխադարձաբար՝ հայաստանցի Հայուն պարագային»[1]: Օշականը հավաքում է իրական ապոկալիպտիկ պատկերներ, որպեսզի հասնի ստեփանակերտցի արևածաղիկ վաճառող կնոջ մտքին և սրտին, և հասկանա, թե ինչու՞ է նա իրեն դրսևորում այնպես, կարծես ոչինչ չի եղել: Նա փորձում է ընթերցողին տանել՝ կյանքը իր պատմվածքների և պիեսների կերպարների միջոցով հասկանալու ճանապարհով, իր քնարական բազմաթիվ կերպարների ողբերգությունը 21-րդ դարասկզբին կրկնելու վտանգից խուսափելու համար:

Վահե Օշականի հրապարակախոսական հոդվածները սոսկ քաղաքական հրովարտակներ չեն, այլ գեղագիտական հղումներով և իրական շեշտադրումներով տեքստեր: Իրենց նշանակությամբ համընկնում են հեղինակի արձակին, պոեզիային և դրամատուրգիային, քանի որ խտացված են և հստակորեն արտացոլում են հեղինակի աշխարհայացքը և պոետիկայի սուբյեկտիվ-հիմնարար առանձնահատկությունները: Օշականի հրապարակախոսությունը մեծ տեղ է զբաղեցնում նրա գրական ժառանգության մեջ: Այն գեղարվեստական, գեղագիտական և ժանրային առանձնահատկությունների խառնուրդ է:

Եզրակացություն

Օշական-բանաստեղծի, Օշական-արձակագրի, Օշական-հրապարակախոսի ստեղծագործական ժառանգությունը առանձնահատուկ է, նրա զգացողությունները բացառիկ աշխարհընկալման արդյունք են: Ստեղծագործության՝ միայն իրեն հատուկ ոճն է, որ հեղինակին փրկություն է խոստանում: Բանաստեղծն օժտված է անցյալը, ներկան ու ապագան միավորելու կարողությամբ և իր քերթվածներով մասնակցում է աշխարհի վերստեղծման գործընթացին: Նրա երկերը հավասարակշռում են ժամանակների ու տարածությունների քրոնոտոպերի միջև: Երբեմն՝ հակադրվելով Օշականը կարողանում է ընդլայնել իրականությունը աշխարհի մասին և աշխարհի շուրջ իր գիտելիքները՝ բարձրանալով սովորական պատկերացումներից և բացահայտելով գոյության նոր եզրեր: Դիտարկելով աշխարհը և ուսումնասիրելով այն ներսից՝ իր արվեստով հեղինակը ներթափանցում է կյանքի բոլոր ոլորտները:

Վահե Օշականի ստեղծագործությունը ընկալվում է որպես *հավերժական հիշողության գիտություն*, երբ հեղինակը սեփական ես-ը ձուլում է ողջ մարդկության պատմական հիշողությանը և հայտնվում է այնտեղ, որտեղ իր

[1] ***Օշական Վահէ***, *Ղարաբաղեան օրագրութիւն-ԺԸ, «Յառաջ», Յունուար 29, 1997, էջ 2:*

զգացմունքները նույնացվում են այն զգացողություններին, որոնք եղել են նաև հազարամյակներ առաջ: Օշականը նշում է ապագայի փոփոխությունների ճանապարհը:

Գրականություն

1. Hegel, G., Translated by Osmaston, Francis Plumptre Beresford, The Philosophy of Fine Art, volume 3 (of 4), Fine Arts: Aesthetics: 2017.
2. Օշական Վահե, Գրականութեան ճամբով հայ ոգիի ամրագրում, «Ազատ օր», 15 մարտի, 1996, էջ 4:
3. Օշական Վահէ, «Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Քաղոց (Մայիս), 1999, թիւ 3-4, էջ 7:
4. Օշական Վահէ, Խորհրդածութիւններ 21-ի շուրջ, «Նախիջեւան» («Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ), Ա տարի, Արեգ (Օգոստոս), 1999, թիւ 7-8, էջ 5:
5. Օշական Վահէ, Ղարաբաղեան օրագրութիւն-ԺԸ, «Յառաջ», Յունուար 29, 1997, էջ 2:
6. Օշական Վահէ, Ղարաբաղեան օրագրութիւն-Ե, «Յառաջ», Հոկտեմբեր 8, 1996, էջ 2:

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 26.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականունության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

UDC 81`06

Dialectology

Mariam MIRZOYAN
Nona BAGHDASARYAN
Lecturer, Shushi University of Technology
E-mail:mirzoyanmariame@yandex.ru
E-mail:nonabaghdasaryan85@gmail.com

COMMUNICATIVE MEANS OF EXPRESSING GRATITUDE IN MODERN ARMENIAN

Մ. Միրզոյան, Ն. Բաղդասարյան

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հաղորդակցությունը բազմաբնույթ և կենսական գործընթաց է, որն իրականացվում է տարբեր ձևերով և միջոցներով: Լայն իմաստով սա մարդկանց կամ կենդանիների միջև տեղեկատվության փոխանակումն է տարբեր նշանների և ազդանշանների միջոցով: Այս դեպքում կարևոր է դառնում համապատասխան ստորաբաժանումների տարբեր ասպեկտների էության բացահայտումը՝ հաշվի առնելով դրանց ձևավորման, արտահայտման և ընկալման տարբեր հանգամանքները:

Հաղորդակցական գործընթացում շնորհակալական խոսքի գործածումը ենթադրում է նաև հաճախ մեղմաստիներով զուգակցված, գնահատողական բանաձևերի հնչեցում: Ժողովրդախոսակցական լեզվում երախտագիտության արժեքով բարեբանական որևէ բանաձևի կիրառմանը կարող են հաջորդել կայուն կապակցություններով արտահայտված գնահատողական պատասխաններ: Հաղորդակցվողը պետք է մեծաքանակ շնորհակալական և պատասխան գնահատողական խոսքերից ընտրի նպատակահարմարը՝ հաշվի առնելով

հաղորդակցական գործընթացի առանձնահատկությունները:

Ժողովրդախոսակցական լեզվում լայնորեն կիրառվում են բուն իմաստով կամ իրադրայնորեն շնորհակալություն արտահայտող դարձվածային միավորներ, որոնց առատությունն ու իմաստային բազմազանությունը ոչ միայն թույլ է տալիս հաղորդակցական ցանկացած իրավիճակին ներդաշնակ ու դիպուկ պատասխան ընտրել, այլև արտահայտել հուզազգացմունքային ձևավորվածությամբ այնպիսի նրբիմաստներ, որոնք հասարակ կաղապարային խոսքով չեն կարող արտահայտվել:

Հաղորդակցման միջոցների ճիշտ օգտագործումը թույլ է տալիս հաղորդակցվողներին ճշգրիտ և ամբողջությամբ փոխանակել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ, այդ գործիքները բաժանվում են երկու խմբի՝ լեզվական և միջլեզվական:

Հաշվի առնելով միջմշակութային փոխգործակցության աճող մասշտաբները, քաղաքավարի խոսքի վարքագծի խնդիրը գրավում է շատ մասնագետների ուշադրությունը, որոնց ուսումնասիրության առարկան ինքնին հաղորդակցական գործընթացն է:

Մեր հետազոտության նպատակն է ժամանակակից հայերենում երախտագիտության արտահայտման հաղորդակցական միջոցները:

Բանալի բառեր՝ *Ժարգոն, գեղագիտություն, խոսքի մշակույթ, քաղաքավարություն, երախտագիտություն:*

М.Мирзоян, Н.Багдасарян

КОММУНИКАТИВНЫЕ СРЕДСТВА ВЫРАЖЕНИЯ БЛАГОДАРНОСТИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Общение – это многогранный и жизненно важный процесс, который осуществляется различными способами и средствами. В широком смысле это обмен информацией между людьми или животными посредством различных знаков и сигналов. В этом случае важным становится раскрытие сущности разных аспектов соответствующих делений с учетом разных обстоятельств их образования, выражения и восприятия.

Использование слов благодарности в процессе общения также предполагает звучание оценочных формул, часто сочетающихся с мягкостью. В разговорном языке использование любой благоприятной формулы со значением благодарности может сопровождаться оценочными ответами, выраженными в устойчивых ассоциациях. Коммуникатор должен выбрать подходящее из большого количества слов благодарности и ответа с учетом особенностей коммуникативного процесса.

В разговорном языке широко используются фразеологизмы, выражающие благодарность в прямом или фактическом значении, обилие и смысловое разнообразие которых позволяет не только подобрать стройный и точный ответ на любую коммуникативную ситуацию, но и выразить такие тонкости эмоциональным образованием. которые не могут быть выражены простыми стандартными словами.

Правильное использование средств связи позволяет коммуникаторам точно и полно обмениваться необходимой информацией. В целом эти средства делятся на две группы: лингвистические и интерлингвистические.

Учитывая растущие масштабы межкультурного взаимодействия, проблема вежливого речевого поведения привлекает внимание многих специалистов, объектом изучения которых является сам коммуникативный процесс.

Целью нашего исследования являются коммуникативные средства выражения благодарности в современном армянском языке..

Ключевые слова: *жаргон, эстетика, культура речи, вежливость, благодарность.*

Communication is a multifaceted and vital process, which is carried out in various ways and means. In a broad sense, it is the exchange of information between people or animals through various signs and signals. In this case, it becomes important to reveal the essence of different aspects of the respective units, considering the various circumstances of their formation, expression and perception.

Appropriate use of communication means allows communicators to accurately and fully exchange the necessary information. In general, these means are divided into two groups: linguistic and cross-linguistic.We consider the vocabulary, grammar, and syntax of the English and Armenian languages through the prism of categories of politeness.

Considering the growing scale of intercultural cooperation, the problem of polite speech behavior attracts the attention of many specialists, whose object of study is the communicative process as such. The purpose of our research is the communicative means of expressing gratitude in modern Armenian.
Key words: *slang, aesthetics, Culture of speech, politeness,gratitude*

Introduction:

Modern linguistics is characterized by the study of language in conjunction with person, his consciousness, thinking, spiritual and practical activities. In this sense, scientific interest is growing in the national-cultural aspect of language study, in the study of language and speech units, reflecting phenomena typical of the native language-cultural community.

Recently, in foreign works (P. Brown and S. Levinson, G. Casper, K. Christie, Gu Yu., Mao L., R. Lakoff, J. Leach, R. Watts, etc.), and Armenian scholars (Aghayan, G. Acharyan, A. Sukiasyan and others) the study of the linguistic aspect of the problem of politeness, polite behavior and etiquette is given quite a lot of attention. In them, the category of politeness is considered on the basis of different languages, cognitively, socio-culturally and gender-wise.

The feeling of gratitude since a long time ago has been studied by various sciences. It is the feeling of being grateful for a good deed, kindness, for example, attention or help, as well as various means of its expression, including official forms of encouragement. It is a complex feeling that arises on the basis of an emotional and rational evaluation of what happened, which happens in a special ritual.

Gratitude can be expressed by linguistic and multilingual means: In language means one can distinguish between word means and connections, which are different points: subjects, sayings, points, speech formulas.

Interlinguistic means of communication are mainly movements. Movements expressing gratitude can be divided into two groups.

The first group includes those movements that, depending on the situation, become means of expressing gratitude. In other situations, these can also be expressions of other attitudes.

The second group includes movements that express gratitude regardless of the situation. A significant part of these also has a linguistic definition, that is, there are stable connections that define and represent the movement.

Materials and research methods

The main tenets of category theory as a research object of cognitive linguistics and linguistics are presented to Aghayan, G. Acharyan, A. Sukiasyan and others. [1]

Research methods were determined according to the purpose, problems and had a complex nature. The following research methods were used in the work: the categorical

[1] ***Նազարյան Ա., Գրիգորյան Հ.,*** *Էթիկետի հիմունքներ, Եր., 2002, էջ 27:*

analysis method aimed at studying the content of the Armenian and English politeness category, the comparative method, which is based on the identification of similarities and differences of the studied phenomena, the component analysis method, the essence of which lies in the interpretation of the meanings of the studied units, their through a set of typical semantic components. method of pragmalinguistic analysis, descriptive method.[1]

The scientific novelty of the research lies in the identification of the national and cultural features of the category of politeness in the Armenian language in comparison with English, in comparison of speech situations, as well as in the determination of the main features of the understanding of the analyzed by representatives of different linguistic and cultural communities of the category. This paper reveals the operational features of the means used to convey the category of politeness, in addition, an attempt is made to classify the vocabulary of politeness.

The materials and methods of the research are: formulas of speech, etiquette, presentation of Armenian and English dialogues, materials from language learning websites and modern media sources of both cultures, as well as data from dictionaries. Examples of observed dialogues are presented below. It should also be noted that the study is current. Considered a category of politeness in English. For the purposes of scholarly research on globalization and the introduction of English, we will trivialize the difference between Armenian and British English compared to how different the culture and structure of the languages we are considering are. When we say Armenian language, we mean Putonhua, "common language", the main dialect, the language of modern Armenian socio-political, scientific and fiction literature.[2]

Due to the diversity of the structures of the compared languages, the metalanguage of the abstract work will be English.

Gratitude formulas can be accompanied by good wishes, blessings, which should be heard as a response (and often are not), valuing, appreciative formulas, often combined with soft words (please, it's not worth it, what's needed..., not enough is done..., You exaggerate... etc.). The general format is "thank you formula, response appreciation formula"

The use of communicative means expressing gratitude implies a logical sequence of certain actions.

For example, expressions of thanks, as important components of communication, are closely related to other communicative language pattern components. However, the factual nature of communication already makes it possible to disrupt the logical sequence, for example, a thank-you speech is interrupted by the vulgarity "I don't need your thanks".

"A deviation from the order of sequence should be considered the cases when the person who gives the assignment, the proposer, the consultant hears words of thanks

---

[1] *Глушкова С.Ю., Особенности лексических средств выражения категории вежливости / Глушкова С.Ю. Вестник университета российской академии образования.— Москва, 2011. —N21 (54). — с. 72-74.*

[2] *Տե՛ս* ***Ավետիսյան Յու. և այլք.,*** *Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 460:*

regarding what will be done in the future (I express thanks in advance/in advance...). The order of succession can also be broken by such a transfer:
"Before you say thank you, I will say please /it's not worth it/".
In order to completely reveal the means of communication, during the study, we turned to the help of the sciences related to the theory of communication: ethnography, psychology, different directions of linguistics: psycholinguistics, metalinguistics and general linguistics.
We used the following dictionaries to collect expressions of gratitude: A. Sukiasyan's "Dictionary of synonyms of the Armenian language", "Explanatory dictionary of synonyms of the Armenian language", Y. Gayayan's "Dictionary Treasury of the Armenian Language", E. Aghayan's "Explanatory Dictionary of Modern Armenian", "Explanatory Dictionary of the Modern Armenian Language" of Hrachya Acharyan Language Institute, A. Hayrapetyan's "Dictionary of Foreign Words", H. Acharyan's "European loanwords in Armenian" dictionary. We have selected stable connections expressing gratitude from the following sources: P. Bediryan's "Extensive Explanatory Dictionary of Armenian Phrases", A. Sukiasyan and S. Galstyan's "Phraseological Dictionary of the Armenian Language", S. Harutyunyan's "Genre of curse and blessing in Armenian folklore".[1]

Discussion

"The Category of Politeness in Intercultural Communication" looks at different theories of the category and the concept of "politeness" in English and Armenian. It follows from the analysis that the meaning of politeness in the Armenian language does not correspond slightly to the English meaning, although there are common features, for example, in both English and Armenian, politeness is the observance of the rules of decency in speech, and actions are the manifestation of good breeding. This is the basis of etiquette behavior, an integral feature of any communicative act.[2]
It is believed that the more an Armenian “denigrates” himself, the more politely he speaks. From the analysis presented in the work, it follows that the British and Americans are characterized by a rather direct, uncomplicated, clear speech, while the Armenians speak in a florid way. Often the Armenian “yes” means “no”. And in order to correctly understand an Armenian, it is necessary to follow the means of expressing a particular thought. The Armenian is afraid to offend the interlocutor, therefore he says “yes”, which indicates the peculiarities of culture.
In the Armenian language, the use of words of thanks in the communication process also implies the sounding of evaluative formulas, often combined with gentleness. The evaluative response following the interlocutor's thanks can be expressed both with the words: please, it's not worth it/it's not worth it, as well as with the expressions: What's

---

[1] ***Պողոսյան Պ.,*** *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ: Խոսքի տեսություն, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 200:*
[2] *Елина С.Ю., Различия национально-культурных особенностей категории вежливости в английском языке в диалоге продавца и покупателя [С.Ю. Елина \/ Психолингвистические аспекты языкового анализа текста: Материалы Всероссийской научной конференции СГГТУ (октябрь 2009 г.). Сборник научных трудов -- Саратов, 2009. — с. 49-51.*

needed..., Little has been done..., You're exaggerating..., Enjoy it..., I'm always ready to help, With great pleasure, You deserve more, It's not hard, It's not a problem, Take it easy, What for, It wasn't a big deal, etc. The most common response word is please. The words "shouldn't" and "shouldn't" are also common, they are widely spread, especially in everyday conversational language, but according to speech etiquette, their use is not desirable.

One's own behavior in intercultural communication should be adjusted taking into account the specifics of the culture, otherwise serious communication failures are possible. Mistakes related to the violation of cultural norms are perceived as extremely painful and can have serious consequences.

In individualistic cultures, face is primarily concerned with self-esteem, self-presentation, and self-worth and self-fulfillment, while in collectivistic cultures, face is more concerned with what others think of their personal worth. That is, the concept of the face of a collectivist culture, in our case, the culture of Armenia, emphasizes areas beyond individuality and pays more attention to the group or community, that is, society.[1]

They also emphasize that the languages considered in the work belong to two different cultures: English - individualistic, Armenian - collectivistic. Therefore, considering the category of politeness in these cultures, it is necessary to take into account the above-mentioned facts about the difference in understanding of politeness in cultures. In this study, politeness is considered as a verbal behavioral category that has its own cultural characteristics in a certain language, which is implemented in speech through certain lexical and grammatical means, the main goal of which is to achieve a positive communicative effect.[2]

Conclusion

Thus, for the further comparison of the languages we studied, it is necessary to separate the postulates to which this work adheres. The quality/truth postulate (the message must not be false or baseless) that Grace suggests does not appear strongly in Armenian culture (or manifest in a particular way), as Armenians often beat around the bush before getting to the main points. In the study, it is considered that it should be abandoned because the postulate is often used in the English-speaking culture. **The quantity/informativeness postulate** (comprehension of a message depends on its information saturation. The speaker must take into account the extralinguistic reality, all components of the communicative context, which include background knowledge and relationships between communicators) clearly expresses the relationship in formal speech.

The addressee postulate (warm and respectful treatment of others) identified by Gu and Grice's sympathy postulate (minimize contrast between yourself and others, seek maximum sympathy between yourself and others) are therefore combined and suggested; leave the address postulate. On the basis of the considered theories, we singled out the existing postulates, which, in our opinion, are most suitable for

---

[1] *Տե՛ս* ***Գևորգյան Ե.,*** *Շարժումների լեզուն. շարժաբանության ներածություն, Եր., 1988, էջ 125:*

[2] ***Բեդիրյան Պ.,*** *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 75:*

considering the category of English and Armenian politeness. Thus, seven postulates reveal the category of politeness in English and Armenian: postulate of quality, postulate of quantity, postulate of modality, postulate of self-deprecation, postulate of tact, postulate of modesty, postulate of addressee.

Both languages have the quality postulate, the quantity postulate, and the modality postulate. The peculiarities of Armenian culture are manifested only in the postulate of quality, which says that the conversation must be true, and this is not always characteristic of Armenian culture.

Modesty in the Armenian language is self-humiliation, or an expression of respect, therefore the postulate of self-humiliation is specific to Armenian culture. Modesty in English is not self-deprecation and self-confidence. In English, modesty is associated with gratitude and less so with shame. The postulate of modesty is most often observed in situations of compliments and gratitude, as in Armenian, the postulate of self-deprecation.

The postulate of quality, the postulate of quantity, and the postulate of modality function in both languages. The features of the Armenian culture are manifested only in the postulate of quality, which says that the conversation must be true, and this is not always characteristic of the culture of Armenians.

There are also examples of **the postulate of modesty** in English and Armenian. The postulate of modesty in English works both in situations when the interlocutors occupy the same social position, and in situations when the interlocutors occupy unequal social roles. In Armenian, when, for example, a compliment is given to an interlocutor with a higher position, his reaction may not always be to maintain the postulate of self-humiliation, but only to use the postulate of modesty, that is, simple gratitude, which Armenian culture considers modest.

In the Armenian language, modesty is self-denigration, or an expression of respect, therefore the postulate of self-denigration is peculiar to Armenian culture. In English, modesty is not self-abasement and self-denigration. In English, modesty is associated with gratitude, and to a lesser extent with embarrassment. The postulate of modesty is most often seen in situations of compliment and gratitude, as in the Armenian language, the postulate of self-denigration.

Bibliography

1.**Նազարյան Ա., Գրիգորյան Հ.,** Էթիկետի հիմունքներ, Եր., 2002:

2. **Ավետիսյան Յու. և այլք**., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2000:

3.**Պողոսյան Պ**., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները: Խոսքի տեսություն, գիրք երկրորդ, Եր., 1991:

4. **Բաղիկյան Խ**., Դարձվածային ոճաբանություն

5. **Բեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973:
6. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր.:
7. **Գևորգյան Ե.**, Շարժումների լեզուն. շարժաբանության ներածություն, Եր., 1988:
8. **Глушкова С.Ю.**, Особенности лексических средств выражения категории вежливости / С.Ю.Глушкова Н Вестник университета российской академии образования.— Москва, 2011. —N21 (54). — с. 72-74.
9. **Елина С.Ю.,** Различия национально-культурных особенностей категории вежливости в английском языке в диалоге продавца и покупателя [С.Ю. Елина l/ Психолингвистические аспекты языкового анализа текста: Материалы Всероссийской научной конференции СГГТУ (октябрь 2009 г.). Сборник научных трудов - Саратов, 2009. — с. 49-51.

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել, 10.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ակ.
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

ՀՏԴ 808.1

Հայոց լեզու

Արմինե ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ
E-mail: armine_mkrtumyan@mail.ru

Ռուզան ՍԱՀԱԿՅԱՆ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս,ասիստենտ բ.գ.թ.
E-mail: ruzansahakian@mail.ru

ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄՆԵՐԸ ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Թադևոս Տոնոյանի բանաստեղծական ժողովածուները («Սերմաստղ», «Երկրից հետո», «Երկնքից առաջ», «Սահմանումներ Հայաստանի համար») իրենց բառատաղձով և ինքնատիպ բառակերտումներով, լեզվական երևույթների բազմազանությամբ ամբողջովին բացահայտում են բանաստեղծ-գիտնականի լեզվամտածողական համակարգը: Նա սիրում է իր խոսքը համեմել խորհրդանիշ-պատկերներով, գրաբարաբանություններով:

Թ. Տոնոյանը հիացնում է ընթերցողին բառաստեղծման իր հնարամտություններով, նորակազմությունների դիպուկ և տեղին կիրառություններով, որը բնորոշ է հեղինակի պատկերային մտածողությանը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի բառակազմական հնարավորություններից:

Տոնոյանի բառակերտումների մի մասը իր տպավորիչ կազմություններով և ասելիքի հարստությամբ համագործածական դառնալու հավանականություն ունի և կարող է հարստացնել ու կատարելագործել հայոց լեզվի բառապաշարը:

Բանալի բառեր՝ *բառակերտում, բառատաղձ, լեզվամտածողություն, լեզվական ճաշակ, բայակերտում, նորակազմություն, բառակազմական առանձնահատկություններ:*

А. Мкртумян, Р. Саакян

СЛОВОТВОРЧЕСТВО В ПОЭТИЧЕСКИХ ПРОИЗВЕДЕНИЯХ ТАДЕВОСА ТОНОЯНА

Стихотворные сборники Тадевоса Тонояна («Сермастх», «После земли», «До неба», «Определения для Армении»), отличающиеся богатством словесного материала, уникальным словотворчеством, многообразием языковых явлений, в полной мере раскрывают систему языкового мышления поэта и ученого. Его речь богата символами-образами, заимствованиями из грабара, интересными словообразовательными решениями.

Т. Тоноян восхищает читателя своими словотворческими возможностями, точным и уместным употреблением неологизмов, свойственными образному мышлению автора.

Многие образцы словотворчества Т. Тонояна благодаря своему уникальному морфемному составу и содержательной емкости могут стать общеупотребительными, войти в литературный язык и обогатить лексику современного армянского языка.

Ключевые слова: *словотворчество, языковое мышление, языковой вкус, создание глагольных форм, неологизм, словообразовательные особенности.*

A. Mkrtumyan, R.Sahakyan

WORD FORMATIONS IN VERSE EXPRESSED WORKS OF TADEVOS TONOYAN

Tadevos Tonoyan's poetry collections ("Sermastgh", "Yerkric heto" (Beyond the Earth), "Yerknqic araj" (Before the Sky), "Sahmanumner Hayastani Hamar" (Definitions for Armenia) fully reveal the system of the poet-scientist's linguistic thinking with their main word material, original word formation and variety of linguistic phenomena. He likes to spice up his speech with symbols and images, old Armenian language forms and interesting word-formation denouement.

T. Tonoyan fascinates the reader with his creative inventiveness in word formation, precise and appropriate use of new formations, which is characteristic of the author's figurative thinking. He skillfully used the word formation possibilities of our language.

Some of Tonoyan's word formations, with their impressive formations and richness of meaning, have the possibility of becoming universally applicable and can enrich and improve the vocabulary of the Armenian language.
T. Tonoyan fascinates the reader with his ingenuity in word formation, precise and appropriate use of new formations, which is characteristic of the author's figurative thinking. He skillfully used the word formation possibilities of our language.
Some of Tonoyan's word formations, with their impressive formations and richness of meaning, have the possibility of becoming universally applicable and can enrich and improve the vocabulary of the Armenian language.
Key words: *word formation, main word material, linguistic thinking, linguistic choice, verb formation, new formation, word formation features.*

Գրողների բառաստեղծական ունակություններն ու հմտությունները մեծապես նպաստում են բառային կազմի ավելացմանը: Հայերենի բառակազմական հնարավորությունները թույլ են տալիս բանաստեղծին կազմել նոր բառեր, որի միջոցով էլ դրսևորվում է գրողի ինքնատիպությունը: «Նորաբանությունը պետք է միշտ ընդունվի որպես տվյալ գրողի ինչ-որ հայտնագործություն»[1]: Սակայն այդ բառերը պետք է արդարացված լինեն: «.... Նորակազմ բառերը պետք է համապատասխանեն մեր լեզվի բառակազմական նորմաներին, ունենան իմաստային որոշակիություն և մատչելի լինեն ընթերցողի ըմբռնողությանը: Հակառակ դեպքում դրանք կդիտվեն որպես արհեստական նորակազմություններ, կլինեն անհամոզիչ և ոճական արժեք չեն ունենա»[2]:

Հեղինակային նորակազմությունների քննությունը մշտապես արդիական է լեզվաբանության համար, քանի որ դրանով բացահայտվում են ոչ միայն գրողի լեզվական նախասիրությունները, այլև լեզվի տվյալ գոյավիճակում բառակազմական իրողությունների ակտիվությունը: Նորակազմ բառերը բանաստեղծին թույլ են տալիս խուսափել միօրինակությունից և կրկնությունից: Բայց դա չի նշանակում, որ հեղինակային բոլոր բառերը պետք է ստանան համընդհանուր գործածություն:

---

[1] *Տե՛ս* ***Томашевский Б.В.****, Стилистика и стихосложение. Л., 1959, с.181.*
[2] ***Մարության Ա.****, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 223:*

Թադևոս Տոնոյանի բանաստեղծական ժողովածուներն[1] իրենց բառատաղձով, ինքնատիպ բառակերտումներով, լեզվական երևույթների բազմազանությամբ ամբողջովին բացահայտում են բանաստեղծ-գիտնականի լեզվամտածողական համակարգը, և ինչպես իրավամբ նշում է հեղինակն իր հոդվածներից մեկում. «Խոսքը դառնում է խոսքի նպատակ ... գրական ստեղծագործության մեջ հենց խոսքն է դառնում գործող «անձ», երբ խոսքը կերպարայնացվում է, մի տեսակ անձնավորվում-հերոսացվում, ի վերջո՝ նաև խոհրդանշայնացվում»[2]:

Տոնոյանի լեզվամտածողությունն ու լեզվական ճաշակը դրսևորվում են բազմաթիվ նորակազմություններում: Իր մտածումներն արտահայտելու և ընթերցողին փոխանցելու նպատակով գրողը կերտում է նոր բառեր: Ըստ նրա՝ «...գրական ստեղծագործության մեջ արծարծվող մտքերը (բովանդակային կողմ) միշտ էլ որոնում են համապատասխան և հարմար լեզվական հենք (ձևային կողմ)»[3], որը գրողի համար դառնում է ինքնարտահայտման յուրահատուկ ձև:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Թ. Տոնոյանի բանաստեղծական հինգ ժողովածուներում տեղ գտած նորակազմություններին և իմաստային բառակերտումներին: Մենք պայմանականորեն գործածում ենք «բառակերտումներ» եզրույթը, քանի որ այդ բառերի ստույգ որոշման շրջանակը սահմանափակվում է միայն հրապարակում եղած բառարանային տվյալներով[4]: Մյուս կողմից էլ երբեմն դժվար կարող է լինել ճշգրտությամբ որոշել նորակազմ բառի հեղինակային պատկանելությունը: Այս առումով համակարծիք ենք Ս. Էլոյանի դիտարկմանը. «Հեղինակային նորակազմությունների ստույգ որոշման խնդիրը հղի է

---

[1] ***Տոնոյան Թ.***, *Սերմաստող, Ե., Նաիրի, 1994, Մոմի կաթիլներ, Ե., 1997, Երկրից հետո, Եր., «Զանգակ-97», 2002, Երկնքից առաջ, Ե., «Աղբյուր»2010, Սահմանումներ Հայաստանի համար, Եր., «Աղբյուր», 2015 (այստեղև՝ փակագծերում կնշենք հիշյալ ժողովածուների էջերը):*

[2] ***Տոնոյան Թ.***, *Հայերենի համատեքստի ձայն-կրանք, յոթություն-մահ լեզվամտածողական հոմանիշությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016 № 1 (19), էջ 55-67:*

[3] ***Տոնոյան Թ.***, *Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016 № 3 (21), էջ 60-69:*

[4] ***Մալխասեանց Ստ.***, *Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945,* ***Աղայան Էդ.***, *Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), Ե., 1976, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԲԲ), Եր., 1969- 1980,* ***Խղոթյան Ֆ.***, *Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Եր., 1982,* ***Սաքապետոյան Ռ.***, *Արևմտահայերէն-արևելահայերէն նոր բառարան (ԱԱՆԲ), Եր., 2011,* ***Էլոյան Ս.***, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան (ԱՀՆԲ), Եր., 2002, Նոր բառեր (ՆԲ), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ա-Զ պրակ, Եր., 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021,* ***Գևէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան****, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992,* ***Մելթիխանյան Փ.,*** *Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996:*

թյուրիմացություններով ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները»[1]:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հեղինակի բանաստեղծական խոսքում տեղ գտած նորակազմ բառերը, որոնք գրողի տվյալ պահի ապրումների, հույզերի ու զգացումների վերարտադրությունն են: Տոնոյան բանաստեղծը, լավ տիրապետելով հայերեն բառին, դրանք իմաստապես արժևորում է՝ կերտելով նոր բառեր: Բանը՝ խոսքը, նրա համար մեծ ուժ ունի, որի միջոցով նա կառուցում է իր բանաստեղծական պատկերները՝ բառ-խորհրդանիշ, բառ-կերպար, բառ-պատկեր, բառ-գաղափար, բառ-մտածողություն. ներխուժելով բովանդակություն՝ բառերը «կերպարայնանում», «խորհրդանշայնանում» են, մասնակցում սյուժեի ձևավորմանը[2]:

Հոդվածի նյութը առնչվում է նաև Տոնոյանի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և ըմբռնումների հետ: Յուրաքանչյուր նոր բառի ստեղծում ենթադրում է ոչ թե սոսկ բառի բաղադրիչների կցում, այլ վերլուծական և համադրական կարողություն, հուզական և զգացական բառակերտման նուրբ արվեստ, որը կապվում է հաղորդվող նյութի և հեղինակի ասելիքի նպատակադրումի հետ:

Մեր հաշվումներով՝ Թ. Տոնոյանի հիշյալ բանաստեղծական ժողովածուներում կան ավելի քան հարյուր նորակազմ բառեր, որոնք որևէ բառարանում վկայված չեն:

Բառաքննական դիտարկումներ:

Բանաստեղծի հոգին մշտական փնտրումների մեջ է: Այն իր արտահայտությունն ունի նաև բանաստեղծություններում՝ ստեղծելով խորհրդանիշ-պատկերներ:

Հոգևորի ընկալման ինքնատիպ դրսևորումներ են *հոգի, մարմին, աստղ, լույս* սկզբնաբաղադրիչներով բառակերտումները: Այսպես՝ *հոգեաշուն* (ԵՀ, 3), *հոգեմարմին* (ԵՀ, 10), *հոգեհաշմ* (ԵՀ, 74), *հոգեճաք* (ՍՀՀ, 55, ԵՀ, 19), *հոգեդարձում* (ՍՀՀ, 59, ԵԱ, 27), *հոգեհերձուն* (ՍՀՀ, 73), *հոգեդաշնություն* (Ս, 3), *հոգեգարուն* (Ս, 7), *հոգեմղվել* (Ս, 17), *հոգեերազ* (ԵԱ, 35), *հոգեբեռ* (ԵԱ, 39), *հոգեսափոր* (ԵԱ, 39), *մարմնամերձ* (ԵՀ, 9), *մարմնահաց* (ԵՀ, 11), *մարմնամաշկող* (ՍՀՀ, 18) *աստղակար* (ԵԱ, 10), *աստղանավակ* (ԵԱ, 14), *լուսընթացունակ* (ԵԱ, 19), *լուսատարիք* (ԵԱ, 67), *լուսահեղում* (Ս, 17):

Երբեմն էլ հայերենի հարուստ բառագանձը չի բավականացնում հեղինակին՝ իր աշխարհընկալումն ու գաղափարներն արտահայտելու

---

[1] ***Էլոյան Ս.***, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 224:*

[2] ***Տոնոյան Թ.***, *Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016, էջ 308:*

համար, և նա ստեղծում է իրենը: Այսպես՝ *շրջածիր, լուսածիր, աստղածիր* բառերի նմանությամբ բանաստեղծը կերտում է նոր բառ՝ *շղթածիր*՝ հավանաբար նկատի ունենալով «շղթաների շրջագիծը».

.... Ու իմ հոգում ուժ կա քանի, // Պիտի այսպես Գնամ ու Գամ՝ // Որպես արյան, հուշի պատգամ՝ // Աստղածիրում, // Շղթածիրում, // Շրջածիրում // Սեփականի: (ՍՀՀ, 82)

Ըստ Տոնոյանի՝ «գրել նշանակում է լինել Աստծու հետ», ուստի իր որոշ բանաստեղծություններում («Համաստեղման կարգ», «Տիրոջ լույսն անհող», «Զատիկ. հրաժեշտ մարմնին», «Հրաժեշտ երկրին» և այլն) գրողը, հավատարիմ այս ըմբռնումին, շոշափում է կյանքի ու մահվան, հոգևորի ու աշխարհիկի, մարդկային մեղքի և մեղսագործության հավերժ թեմաներ.

Այս կյանքից առաջ ու նաև հետո // Այս աշխարհն ենք մենք թաքուն երազում, // Տերն ուղարկում է մեզ այստեղ հերթով, // Որ մեղքերին էլ մենք լինենք հասու: («Տիրոջ լույսն անհող»)

Կյանքի և մահվան գաղափարները ամբողջովին հետապնդում են բանաստեղծին: Եվ ինչպես դիպուկ նկատում է Հ. Հովնաթանյանը. «Կյանքն ու մահը կողք կողքի են ու հարազատ: Հոգին ու մարմինն իրարամերժ են, բայցև՝ հարազատ»[1]: Դրանից էլ ծնունդ են առնում դիպվածային նորակազմությունները՝ *արարչադող* (ՍՀՀ, 17), *երկրակարոտ* (ԵԱ, 68), *հրեշտակաերթ* (ԵԱ, 23), *վերառաք* (ԵԱ, 16), *հոգեհեղձում* (ԵԱ, 27), *Հավերժատեղ*[2] (ԵԱ, 8), *մարմնամերձ* (ԵԱ, 9), *բառհոգեղարձող* (ԵՀ, 35) և այլն:

Բանաստեղծի խոսքը պատկերային է: Այդ պատկերները նա փորձում է արտահայտել ամենատարբեր ձևերով: Դրա արտահայտությունը կարելի է համարել առաջին հայացքից սովորական թվացող գոյականների մեծատառերով գրությունը՝ *Կամք* (ԵՀ, 41), *Արևակարգ* (ԵԱ, 67), *Անցյալ, Գալիք* (ՍՀՀ, 21), *Լեզու* (ՍՀՀ, 52), *Գիր, Երկիր, Երկինք* (ՍՀՀ, 13) և այլն:

Թ. Տոնոյանը հիացնում է ընթերցողին բառաստեղծման իր հնարամտություններով, նորակազմությունների դիպուկ և տեղին կիրառություններով, որը բնորոշ է հեղինակի պատկերային մտածողությանը: Լեզվազգացողության ինքնատիպ վարպետն ըստ անհրաժեշտության իր խոսքը համեմում է նաև գրաբարաբանու-թյուններով՝«*Եղիցի* մուշ երկինք՝ ոչ չարահույժ *հանուր*...» (ԵՀ, 28), *զգենանք* (ԵԱ, 19), *հոգվո* (ԵԱ, 17), *զգայք* (ՍՀՀ, 109), *պալատականք* (ԵՀ, 20),

---

[1] ***Հովնաթանյան Հ.***, *Երգեր, որ բացում են երկինքը. Թ. Տոնոյանի «Երիրից հետո» ժողովածուն, Ազգ, 2003, թ.63, ապրիլ, էջ 6:*

[2] *Հեղինակը գրում է մեծատառով:*

գրաբարյան հայտնի *փոքր ածու* բառակապակցությունը կազմում է կցական՝ *փոքրածու* ձևը (ՍՀՀ, 113)՝ նկատի ունենալով «*փոքրաթիվ ազգ*» իմաստը[1]:

Մարմնի և հոգու միջև միջնորդ է // Խոսքը, որ եղավ երկնքից ընծա… **(ԵԱ, 59)**

Բանը (խոսքը) ամենից ու ամեն ինչից վեր դասող, «խոսքի բանաձևը» սահմանող հեղինակը, խոսքը որպես «Ճանապարհ, Կամուրջ ու Թռիչքուղի» հյուսող (ԵԱ ժողովածուի «Խոսքի բանաձև» շարք) բանաստեղծը իր «Երկրից հետո» ժողովածուի «Լեզվաղանդական» շարքում թերևս գեղարվեստական խոսքի արժանիքներն ընդգծելու նպատակով ներկայացնում է ժամանակակից խոսակցական - ժարգոնախառն ոճով գրված մի քանի բանաստեղծություն: Անգամ վերնագրերն են արտահայտում հեղինակի ոչ սովորական նպատակադրումը՝ «Մանթո», «Ախպերական խորհուրդ», «Ժարգոն» և այլն:

Ի՞նչ ա պատահել, չենք կարա՞ գոնե // Մեր թուղթ ու գրի հետ ըլնենք արդար, // Էնձև գրենք, որ թաղի տղեքն էլ // Բանաստեղծություն սիրեն ու կարդան: (ԵՀ, 85)

Արդի բանաստեղծության անհաջողությամբ մտահոգ հեղինակը մեկ այլ ստեղծագործության մեջ քննադատի իր խոսքն է ուղղում հայ պոեզիայի ներկայացուցիչներին.

Էս պոեզիան, որ բստրում են հիմի // Ու ընենց անում, որ գրքից զզվես, // Իմ կոկորդին ա մնացել էլի, // Ոչ մուսա ունեմ ու ոչ էլ հավես: // … Ոչ մեկին պետք չի, որ իր գրածը // Իրենից բացի ոչ ոք չի կարդում, // Փոխանակ սրա մասին մտածեն, // Իրենց հանճար են երևակայում: (ԵՀ, 83)

Բառակազմական դիտարկումներ:

Գրողի բառակերտական և լեզվամտածողական ունակությունները երևում են նաև բառաբարդման կաղապարներում: Այսպես՝ հարադրավոր կազմություն ունեցող բարդություններում, որոնք գրված են գծիկով՝ *համբույր-հանդիպատեղի* (Ս, 24), *Նոյ-փրկված* (ԵԱ, 51), *կույս-տոմս* (ԵՀ, 20), *չվերթ-կյանք* (ՍՀՀ, 26), *երգ-լեզու* (ՍՀՀ, 27), *ճաք-ճակատագիր* (ՍՀՀ, 54) և այլն: Այդ կառույցներում հեղինակը ցուցաբերել է հետաքրքիր և յուրօրինակ մոտեցում՝ ընդգծելով բաղադրիչների պատճառահետևանքային կապը:

Միանշանակ կարող ենք ասել, որ Թ. Տոնոյանն իր ներդրումն ունի նոր բառերի կերտման գործում: Այդ կազմություններում հեղինակը ցուցաբերել է պատճառաբանված մոտեցում[2]: Բաղադրյալ կառույցների բաղադրիչների իմաստային հանրագումարը լիովին բացատրում է դրանց

---

[1] *Տե՛ս* ***Աւետիքեան Գ., Միւրմէկեան Խ., Աւգերեան Մ.****, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37, հ.1, էջ 21:*

[2] ***Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ.****, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Ե., 2017, էջ 270-275:*

նշանակությունները, նոր իմաստները ձևավորվում են ոչ թե բաղադրիչների առանձին, այլ բաղադրության ընդհանուր իմաստից:

.... Ու մինչ օդային բացուղի ելած // Երազանքներով երկրի ու տանու, // Տանում ենք դեպի աշխարհ ու երկինք // Արդար պատմության մեր Խոսքը հորդուն .... (ՍՀՀ, 26)

Օրինակում ***բացուղի*** բառը ***բաց*** ածականի կամ մակբայի և ***ուղի*** գոյականի կապակցությամբ ձեռք է բերել գոյականական կիրառություն՝ գործածվելով ***օդային ուղի*** կամ ***օդուղի*** նշանակությամբ: Ըստ երևույթին հեղինակը հիմք է ընդունել ***բաց*** բառի բազմաթիվ հատկանիշներից ամենաբնորոշը՝ ***բաց, ազատ, արձակ տարածություն***, և կարողացել ավելի պատկերավոր ներկայացնել իր մտքերը:

Հաջորդ օրինակում ***վայ*** ձայնարկության և ***գույժ*** գոյականի կապակցությամբ կազմել է ***վայագույժ*** գոյականը՝ ***վատ լուր, բոթ*** նշանակությամբ, և արտահայտել իր ուրույն լեզվամտածողությունը.

Ահա կանգնած ես դեռ սրտաբաց, ու նորից // Արևելքն ու պառավ արևմուտքը նեղլիկ // Քեզ քաշում են՝ պոկեն քո Գալիքի խռհից, // Վայագույժով ուժատ՝ մեռի՛ր, մեռի՛ր: (ՍՀՀ, 21)

Նմանատիպ կազմությունները Տոնոյանի չափածոյում հաճախ են հանդիպում: Դրանց միջոցով նա կարողանում է արտահայտել իրեն համակած հույզերը, ապրումները, աշխարհընկալումը և վերաբերմունքը իրեն շրջապատող իրականության նկատմամբ: Ներկայացնենք ևս մի քանի օրինակ. *ճամփակեռ* (ՍՀՀ,10), *կավամարդ* (ՍՀՀ,73), *հուշահույզ* (ՍՀՀ,139), *հոգեդաշնություն* (Ս,3), *հոգեգարուն* (Ս,7), *ուրախահույզ* (Ս,16), *թիթեղածաղիկ* (ԵՀ,3), *մարմնահաց* (ԵՀ,11), *գրչակենցաղ* (ԵՀ, 74), *աստղակար* (ԵԱ,10), *կարոտաձեռք* (ԵԱ,15), *հրեշտակաերթ* (ԵՀ,23), *լուսատարիք* (ԵՀ, 67) և այլն:

Բանաստեղծը հմտորեն օգտվել է մեր լեզվի բառակազմական հնարավորություններից, ստեղծել հիմնականում բարդ, ածանցավոր և բարդածանցավոր շատ բառեր: Պարզ բառեր առկա չեն: Գրեթե հավասարապես են հանդիպում և՛ անհնչյունափոխ (*ցեղարյուն, ախտաժառանգական, անաշուն, չարքուհի, հուշացավ, կարոտաձեռք, արձանավկա, աստղակար*), և՛ հնչյունափոխված (*երկրակարոտ* (երկր – երկիր, իՀ), *ծիսառկայծում* (ծիս – ծես, ե>ի), *արարչադող* (չ - իչ, իՀ), *արծվանալ* (արծվ – արծիվ, իՀ), *բուրարձակել* (բուր – բույր, ույ >ու), *պատժաբաժին* (պատժ – պատիժ, իՀ), *լուսատարիք* (լուս – լույս, ույ>ու), *շքաշուք* (շք – շուք, ու>ը)) բաղադրիչներով գործածությունները:

Տոնոյանի բառակերտումները հիմնականում համընկնում են լեզվի կենսունակ կաղապարների հետ: Նա կարողացել է ստեղծել և՛

միաբաղադրիչ, և՛ բազմաբաղադրիչ նոր բառեր: Հաճախադեպ են երկբաղադրիչ կազմությունները (*նոսրագիծ, երկրակապար, հոգեճաք, արևակարգ, հավերժատեղ*): Հանդիպում են նաև միաբաղադրիչ (*անաշուն, մահեղ*) և եռաբաղադրիչ (*լուսընթացունակ, վերջնականգառ, հողերկրպագու*) բառեր:

Ըստ բառակազմական օրենքների՝ լեզուն թույլ է տալիս բարդություններ կազմել և՛ հոդակապով, և՛ առանց դրա: Հոդակապը գործառական ձևույթ է, քանի որ զուրկ է իմաստից և իմաստային տարբերակում առաջ չի բերում՝ բացառությամբ առանձին դեպքերի[1]:

Տոնոյանի պոեզիան ևս զերծ չէ նման կազմություններից: Իր հույզերն ու զգացմունքները նա կարողացել է արտահայտել նաև բառակազմական այդպիսի լուծումներով՝ խոսքը դարձնելով ավելի արտահայտիչ ու տպավորիչ: Քննության ենք ենթարկել բազմաթիվ բառերից հատկապես երեքը, քանի որ դրանց զուգահեռ ձևերը արդեն կան լեզվում:

Աշխարհկործան և ***օրհաց*** անհոդակապ բարդություններն իմաստային որևէ տարբերություն չունեն բառարաններում վկայված ***աշխարհակործան*** (աշխարհը կործանող, աշխարհավեր, կործանարար) և ***օրահաց*** (ապրուստ, օրվա հաց) հոդակապով ձևերից: Սրանք տարբեր բառեր չեն, պարզապես գրողը, տաղաչափական առանձնահատկություններից ելնելով, ստեղծել է բառային տարբերակներ:

Լռությունն իմ կպսակե՞ք, // Թե՞ հեռավոր ոլորտներից // <u>Աշխարհկործան</u> աղմուկներն եք // Բերելու վար .... (Ս,10)

.... Ու այս սով ու պասի մեջ որ մի այլ մեղք բացառենք, // Ահա հանձնել ենք արդեն մեզ <u>օրհացի</u> բնազդին: (ԵՀ, 26)

Նույնը չենք կարող ասել ***վերնաոլորտ*** բառի մասին: Բառարաններում վկայված անհոդակապ ձևը աշխարհագրական տերմին է, որը մթնոլորտի վերին շերտն է: Տոնոյանի բանաստեղծության մեջ հոդակապով տարբերակը գործածվում է փոխաբերաբար և առաջ բերում նոր իմաստ:

Բայց նախանձն էլ է դառնում երբեմն ավիշ ստեղծուն, // Եղծում իրեն ու հաճախ <u>վերնաոլորտ</u> աշխարհներ ....(ԵՀ,73)

Բանաստեղծը նկատի ունի վերին՝ բարձր արժեքներ ունեցող աշխարհները, որոնք կարող են պղծվել նախանձի ու չարության պատճառով:

Գրողը բառաբարդման և ածանցման միջոցով, որոնք բառակազմական ամենակենսունակ ձևերն են, ստեղծել է իր ներաշխարհն արտահայտելու առանձնահատուկ կազմություններ: Բառաբարդմամբ կազմված նոր բառերում նա գործածել է առավելապես գոյականի և ածականի արժեքով

[1] *Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 262:*

կազմություններ, որոնք արտահայտված են զանազան մասնակաղապարներով.

Գոյականական կազմություններ		**Ածականական կազմություններ**	
գոյական+գոյական	*հուշացավ*	ածական+գոյական	*ուրախահույզ*
գոյական+ածական	*ճամփակեռ*	գոյական+գոյական	*երկրակարոտ*
ածական+գոյական	*գաղտնագեն*		
դերանուն+գոյական	*ինքնապիղատոս*		
ձայնարկություն+գոյական	*վայագույժ*		

Կան նաև բայակերտումներ՝ ***բուրարձակել*** (գոյական+ածական+ +բայածանց (ել)), ***արնաքամվել*** (գոյական+բայարմատ+*վ* կրավորական ածանց+բայածանց (ել)), ***հոգեմղվել*** (գոյական+բայարմատ+*վ* կրավորական ածանց+ բայածանց (ել)), ***արծվանալ*** (գոյական+*ան* սոսկածանց + բայածանց (ալ)։

Յուրօրինակ կազմություններ են տոնոյանական խոսքիմասային անցումները։ Նա հմտորեն կարողանում է *ածականից* կերտել *գոյական* (հոգեմարմնական[1]- հոգեմարմին (ԵՀ,10)), *բայից* կամ *գոյականից՝ ածական* (վերառաքել, վերառաքում[2] - վերառաք (ԵԱ,16)), *գոյականից՝ բայ* (արծիվ - արծվանալ), *բայից՝ գոյական* (վկայացուցանել[3]- վկայացույց (Ս,16))։

Ում վերջածանցի հաճախակի գործածությամբ բանաստեղծը մեծ վարպետությամբ կազմել է բայանուն գոյականներ՝ ստեղծելով պատկերավոր վերաիմաստավորումներ՝ *համերգում (Ս,13), կենսազօծում (Ս,14), լուսահեղում (Ս,17), ծիսառկայծում (Ս,27), աշխարհարարում (ԵՀ,40), բայում (ԵԱ,60), հուսավառում (ՍՀՀ,76), ներուժում (ՍՀՀ,139)։*

Հոգիների չուն այդպես ճախրում է դեպի Աստրծո // Երկինք, սակայն միշտ մնում է պտույտում երկրային զարնան, // Քանզի ամեն պահ հրամցնում է օձը մեզ խնձոր, // Ու դեռևս չի ավարտվում գործը աշխարհարարման։

Զույգ աշխարհների անջրպետումը // Ասել – լսելու բայումն է թաքուն ....

---

[1] ***Էլոյան Ս.,*** *Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 305։*
[2] ***Մալխասեանց Ստ.,*** *Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 326,* ***Աղայան Էդ.****, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1379,* ***Բարսեղյան Հ.****, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 870։*
[3] ***Մալխասեանց Ստ.****, նշվ. աշխ., էջ 347։*

.... Ինչ-որ մի հեռու՞, հեռու՞ մի տեղից // Մի զույգ հարազա՞տ աչքեր // Ակնթարթ նայում են, // Կենսազօծումով նայում դեպի ինձ // Ու կարոտում են ...

Յու՛յց տուր հայացքդ՝ փայլով սուր-բահի, // Ե՛տ առ նրանցից ոսկե թագ ու խույր // Եվ հուսավառման մի խրոխտ պահի, // Որքան էլ լինի արևդ տխուր, // Ա՛ռ արշալույսի թուրը ճակատիդ ....

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ըստ խոսքի մասերի՝ հեղինակը նախապատվությունը տալիս է առավելապես գոյական բառակերտումներին (61), ավելի քիչ՝ ածականներին (33), ապա՝ բայերին (11) և ընդամենը մեկ թվական՝ *եռավեց* (ԵՀ,11):

Ուշադրության են արժանի նաև ածանցմամբ ստեղծված բառակերտումները: Նոր բառեր ստեղծելիս Տոնոյանը մեծապես օգտվել է հայերենի և՛ կենսունակ, և՛ ոչ կենսունակ ածանցների մեծ պաշարից, որոնք բանաստեղծական խոսքը ինքնատիպորեն ներկայացնելու ուշագրավ միջոցներ են[1]: Բառակազմական ակտիվություն են ցուցաբերում հատկապես *-ություն (հոգեդաշնություն), -ող (բառհոգեդարձող), -ական (ախտաժառանգական), -ք (շրջացոլք), -իկ (բանաստեղծիկ), -իչ (արարչադող), -ակ (աստղանավակ), -անք (թուլամորթանք)* վերջածանցները և *ան- (անաշուն), ներ- (ներուժում)* նախածանցները: Հանդիպում են նաև *-եք (անուրեքություն), -յա (անդրյա), -եղ (մահեղ), -ուն (հոգեհերձուն), -այթ (ութճառագայթ), -ին (վերնաոլորտ), -ու (հողերկրպագու), -ոց (ողնաշարոց), -ույց (երգաթաքույց), -ուհի (չարքուհի)* վերջածանցներով և *գեր- (գերերազանք), վեր- (վերառաք), համ- (համերգում)* նախածանցներով կազմություններ[2]:

Տոնոյանի պոեզիայում հանդիպում ենք բառակազմական նորմայից ձևային մի քանի շեղումների: ***Ութճառագայք*** և ***տխուրսրտիկ*** բառերը գործածվել են որպես համադրական կցական բարդություններ, թեև կարող էին որպես սովորական բառակապակցություններ հանդես գալ:

Կատարելիս գերի մնաց անկատարին // Անտարակույս աշնան ծոցում սառնասոկոր, // Ութճառագայթ աստղով հասած հայկյան դարին՝ // Ես հասկացա, որ նա՛խ պիտի լինի Խոսքով: (ԵԱ, 57)

.... Ու գնում ենք // Ճամփան մեր թանկ, // Ամեն մեկս՝ մի որբ բոբիկ, // Քայլքը՝ զարկով տխուրսրտիկ, // Բախտի ճամփի փուշը՝ ոտին, // Ուխտի ճամփա-բախտի ճամփան՝ // Չբոլորած երբեք վախճան՝ // Դեպի Վերի՞ն, // Վերի՞ն Ատյան: (ՍՀՀ, 107)

---

[1] *Քանակական առումով մենածանց բառերը գերազանցում են բազմածանցներին:*

[2] *Որոշ վերջածանցներ բառակազմությանը մասնակցում են բաղադրության ներսում՝ ավելանալով նախորդող արմատի վերջից:*

Բանաստեղծություններից մեկում հեղինակը *երջանիկ* ածականի և-*ո* վերջածանցի հավելմամբ կազմել է ***երջո*** ձևը։

Երեսներեքն իմ անցավ, ուստի՝ երբեք օրն իմ մի, // Որ գալու է, չեմ փոխի սրանց նյութած անվերջով, // Նախածանցյալ են սրանք՝ ԴԺ, Տ, և ԱՊ-օրինի, // Դատարկածուծք այս երկրում կուշտ բիկացող ու երջո: (ԵՀ, 11)

Նորակազմ *երջո* բառն ունի խոսակցական երանգ և իմաստի սաստկացման նպատակով բանաստեղծը օգտվել է լեզվի ընձեռած բառակազմական հնարավորություններից[1]՝ կարողանալով դիպուկ արտահայտել աշխարհի ունայնության և այդ աշխարհում անհոգ ու երջանիկ, բայց միևնույն ժամանակ մեղսագործ մարդկանց հակադրությունը։

Բանաստեղծը գործածել է բառարաններում վկայված ***թռչնազգի, աստղանավ, ազնվազուն*** բառերի ***թռչնազգ, աստղանավակ, ազնվազն*** տարբերակները։ Իհարկե, այդ բառերը ծանոթ եղել են գրողին, բայց արտասանության, հանգավորման, ինքնատիպության համար թերևս նպատակահարմար է եղել գործածել վերոնշյալ տարբերակները։

Վերլուծելով Թ. Տոնոյանի բանաստեղծության ինքնատիպությունը՝ կարող ենք փաստել, որ հեղինակի ստեղծած բառակերտումները գրողի լեզվամտածողության ու լեզվական ճաշակի դրսևորումներ են, արտահայտում են իրեն շրջապատող իրականության բանաստեղծական ընկալումները։ Հեղինակային նորակազմությունների կերտումը խոսում է նաև գրողի վերլուծելու և համադրելու կարողությունների մասին։

Մեր կարծիքով՝ դրանց մի մասը իր տպավորիչ կազմություններով և ասելիքի հարստությամբ համագործածական դառնալու հավանականություն ունի և կարող է հարստացնել ու կատարելագործել հայոց լեզվի բառապաշարը։

Թ. Տոնոյանի բառակերտումներից առանձնացրել ենք մի քանիսը, որոնք առաջարկում ենք կիրառել մեր գործուն բառապաշարում։ Օրինակ՝ *վերառաք, լուսատարիք, երկրակարոտ, հոգեգարուն, հոգեաշուն, աշխարհարարում, կենսադեղ* և այլն։

Գրականություն

ա) հայերեն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976։
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984։

[1] *Տե՛ս* ***Գալստյան Ս.****, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 151։*

3. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37, հ.1:
4. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:
5. Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992:
6. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989:
7. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969- 1980:
9. Խլղաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Եր., 1982:
10.Հովնաթանյան Հ., Երգեր, որ բացում են երկինքը. Թ. Տոնոյանի «Երկրից հետո» ժողովածուն, «Ազգ», 2003, թ.63, ապրիլ:
11.Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1944-1945:
12.Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000
13.Մեյթիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996:
14.Նոր բառեր, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ա-Զ պրակ, Եր., 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021:
15.Սաքապետոյան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Եր., 2011:
16.Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Եր., 2017:
17.Տոնոյան Թ., Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016, № 3 (21):
18.Տոնոյան Թ., Հայերենի համատեքստի ձայն-կյանք, լռություն-մահ լեզվամտածողական հոմանիշությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016, № 1 (19):

19.Տոնոյան Թ., Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016:

բ) ռուսերեն

Томашевский, Б.В., Стилистика и стихосложение. Л., 1959.

Համառոտագրություններ

ԵԱ – Երկնքից առաջ

ԵՀ – Երկրից հետո

Ս – Սերմաստղ

ՍՀՀ – Սահմանումներ Հայաստանի համար

Աղբյուրներ

1. Տոնոյան Թ., Երկնքից առաջ, Եր., 2010:
2. Տոնոյան Թ., Երկրից հետո, Եր., 2002:
3. Տոնոյան Թ., Մոմի կաթիլներ, Եր., 1997:
4. Տոնոյան Թ., Սահմանումներ Հայաստանի համար, Եր., 2015:
5. Տոնոյան Թ., Սերմաստղ, Եր., 1994:

Նյութը ներկայացվել է 12.01.2023,
գրախոսման է ուղարկվել, 10.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ակ.
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

ՀՏԴ 809.198.1.

Լրագրություն

Նունե ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ ակ.Ս.Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: khachatryannune06@asu.am

Վեհանուշ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ակ.Ս.Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար
E-mail: sargsyanvehanush06@asu.am

ԱՎԵԼՈՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

Մեր հոդվածում քննում ենք մերօրյա զանգվածային լրատվամիջոցներում գործածվող ավելորդաբանությունները:

*Ձևավորվել է ավելորդությունների մի շարք, որը հարիր չէ արդի հայերենի կանոններին, հայ մարդու լեզվամտածողությանը: Ավելորդաբանությունը նույն նախադասության մեջ նույնիմաստ կամ իմաստով համընկնող բառերի կից գործածությունն է, որը սխալ է: Կողք կողքի գործածվում են **գաղափարակից** և **համախոհ**, **լիիրավ** և **իրավունք**, **միայն** և **միակ**, **ոմն** և **մեկը**, **առանցքային հիմնախնդիրներ**, **ստանձնած հանձնառություններ**, **դասալքել շարքերը**, **հանգանակություն հավաքել**, **հազվադեպ պատահել**,**ետ ընկրկել**, **ետ նահանջել** և այլ կապակցություններ:*

*Նույն նախադասության մեջ որևէ հասկացություն տարբեր ձևավորումով հաճախ անտեղի կրկնվում է: Շատ դեպքերում ավելորդ են այն միավորները, որոնց իմաստն արտահայտում են արդեն իրենց հետ գործածված բառերի մասնիկները, բաղադրիչները: Ինչպես՝**առաջինը նախահարձակ** լինել (նախահարձակ բաղադրիչի նախ- մասնիկը բառին տալիս է առաջին, նախապես իմաստը,ուստի սխալ է այս բառերի՝*

առաջինը նախահարձակ *լինել, միաժամանակյա գործածությունը),* ***նախօրոք կանխազգալ, վաղօրոք կանխորոշել, փոխպայմանավորված միմյանցով, փոխադարձաբար միմյանց*** *օգնել,* ***շատ համապարփակ, ամենից ավելի քաջատեղյակ, գործընթացը ընթացքի մեջ, հետ համատեղ , բազմազան ձևեր,_հրատապ կերպով, խստիվ ձևով*** *և այլն:*

Հաճախ սխալմամբ համատեղ գործածվում են համանիշ բառեր: Մերժելի է ***հենց*** *և* ***թե չէ, նույնիսկ*** *և* ***անգամ, էլ, նաև*** *և* ***նույնպես ,ոնց որ*** *և* ***պես*** *բառերի միաժամանակյա կիրառությունը ,որովհետև դրանք նույն իմաստն են արտահայտում:*

Խոսքում գործածվող ավելորդ բառերը ,իմաստային ու ոճական որևէ դեր չունենալով, ծանրաբեռնում են խոսքը,առիթ տալիս իմաստային անճշտությունների :

Բանալի բառեր՝ *ավելորդաբանություն, բառաձև, նախադասություն, կապակցություն, համանիշ, նույնիմաստ, համատեղ գործածություն, համարժեք բառեր,իմաստային անճշտություններ, քերականական ձևեր:*

Н.Хачатрян, В.Саргсян

ПЛЕОНАЗМ В СРЕДСТВАХ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ (СМИ)

В статье рассматриваются излишества (лишние слова), используемые в современных средствах массовой информации (СМИ). Образовался ряд лишних слов, не укладывающихся в правила современного армянского языка и языкового мышления армянина. Плеоназм — это использование слов, имеющих одинаковое значение в одном и том же предложении, что является изначально неправильным. Параллельно используются такие слова как: единомышленник и единомышленный, полноправный и право, только и единственный, некоторые и один, ключевые проблемы, взятые на себя обязательства, покинуть ряды, сбор средств, редко случается, отступить и другие словосочетания.

В одном и том же предложении какое-то понятие необоснованно повторяется в разной формулировке. Часто это становится излишним употреблением разных суффиксов и префиксов.

Таких, как быть первым в преднападении (предпричастие преднаступательного компонента придает слову значение первый, заблаговременно, поэтому неправильно употреблять эти слова - быть первым в преднападении, одновременно), заранее предвидеть, заранее предопределить, взаимообусловленные друг другом, взаимопомощь друг другу, очень всесторонние, наиболее информированные, происходящие процессы, все вместе, в различных формах, в срочном порядке, в строгой форме и т. д.

Часто ошибочно вместе используются синонимичные слова. Недопустимо одновременное употребление именно и или нет, также и даже, так как и также, как бы и так, потому что они выражают одно и то же значение.

Лишние слова, используемые в речи, не имея какой-либо смысловой и стилистической роли, обременяют речь, дают повод для семантических неточностей.

Ключевые слова: *плеоназм, слово форма, предложение, сочетание, синоним, совместное употребление, эквивалентные слова, семантические неточности, грамматические формы.*

N.Khachatryan, V.Sargsyan

PLEONASM IN THE MASS MEDIA

Our article examines the excesses (extra words) used in modern mass media. A number of excesses have been formed that do not fit into the rules of the modern Armenian language and the linguistic thinking of the Armenian. Pleonasm is the use of words that have the same meaning in the same sentence, what is initially considered wrong. Such words are used in parallel, as: like-minded and like-minded, full-fledged and right, only and the only one, some and one, key problems, commitments, leave the ranks, fundraising, rarely happens, retreat and other phrases.

In the same sentence, some concept is unreasonably repeated in different formulations. This often becomes an unnecessary use of different suffixes and prefixes. Such as being the first in a pre-match (the part of the pre-offensive component gives the word the meaning of the first, in advance, therefore it is wrong to use these words - to be the first in a pre-match, at the same time), to anticipate in advance, to predetermine in advance, mutually conditioned by each other, mutual assistance to each other, very comprehensive, most informed, ongoing processes, all together, in various forms, in urgent form, in strict form, etc. Synonymous words are often mistakenly used together. It is unacceptable to

use and or not at the same time, also and even, since and also, as if and so, because they express the same meaning.
Superfluous words used in speech, without having any semantic and stylistic role, overload speech and give rise to semantic inaccuracies.
Key words: *pleonasm,word form, sentence, connection synonym, common usage, equivaient words, semantic inaccuracies, grammatical forms.*

Զանգվածային լրատվամիջոցներում և հատկապես մամուլում արտացոլվում են լեզվի արդի վիճակը, նրա փոփոխությունների ընթացքը, զարգացումը: Մերօրյա մամուլի էջերում հաճախադեպ են ավելորդաբանությունները:

Ավելորդաբանությունը նույն նախադասության մեջ նույնիմաստ կամ իմաստով համընկնող բառերի կից գործածությունն է, որը սխալ է:

Գրավոր և բանավոր խոսքի մեջ հաճախ են կողք կողքի գործածվում համարժեք բառեր: Նույն նախադասության մեջ համարժեք բառերի համատեղ գործածությունը տրամաբանորեն ավելորդ է և, հետևաբար, մերժելի: Ձևավորվել է ավելորդությունների մի շարք, որը հարիր չէ արդի հայերենի կանոններին, հայ մարդու լեզվամտածողությանը:

Կողք կողքի գործածվում են **գաղափարակից** և **համախոհ**, **լիիրավ** և **իրավունք**, **միայն** և **միակ**, **ոմն** և **մեկը**, **առանցքային հիմնախնդիրներ**, **ստանձնած հանձնառություններ**, **դասալքել շարքերը**, **հանգանակություն հավաքել**, **հազվադեպ պատահել**, **ետ ընկրկել**, **ետ նահանջել** և այլ կապակցություններ:

Նույն նախադասության մեջ որևէ հասկացություն տարբեր ձևավորումով հաճախ անտեղի կրկնվում է: Օրինակ. *Հանդիպել է* ***գաղափարակից համախոհների*** *հետ*: Այստեղ *գաղափարակից* և *համախոհներ* բառերից մեկնումեկը պետք է գործածել. **գաղափարակիցների հետ** հանդիպել, **համախոհների հետ** հանդիպել:

Մերժելի է **լիիրավ** և **իրավունք** բառերի գործածությունը կողք կողքի: Ինչպես. *Արցախի իշխանությունները* ***լիիրավ իրավունք*** *ունեն պահանջելու, որ իրենց ճանաչեն*: Պետք է գրել՝ *Արցախի իշխանությունները* ***լիիրավ են պահանջելու*** *կամ* ***լիակատար իրավունք ունեն պահանջելու***:

Հաճախ ենք լսում այսպիսի արտահայտություն. ***Միայն*** *2 կողմերի բանակցություններն են հարցի խաղաղ կարգավորման* ***միակ*** *ուղին*: *Միայն* բառի հետ գործածվել է *միակ* բառը, որն ավելորդ է: Սխալն ուղղելու համար դրանցից մեկնումեկը պարզապես պետք է ջնջել:

Սխալ է **ոմն** և **մեկը** բառերի համատեղ գործածությունը. ***Ոմն մեկը*** *ներս մտավ*: Ճիշտ է՝ ***Մեկը*** *ներս մտավ*: **Ոմն** բառն ավելորդ է: Հիշեցնենք, որ **ոմն** բառը մեծամասամբ գործածվում է հատուկ անուններից առաջ:
Առանցքային հիմնախնդիրներ: *Հիմնախնդիր*, այսինքն՝ հիմքային՝ գլխավոր, առանցքային խնդիր, ուստի հանձնարարելի չէ *առանցքային* և *հիմնախնդիր* բառերի միաժամանակյա գործածությունը: Դրա փոխարեն պետք է լինի՝ **առանցքային խնդիրներ** կամ **հիմնախնդիրներ**:
Ստանձնած հանձնառություններ: Նույն ձևով էլ ավելորդ է *ստանձնած* բառը՝ *ստանձնած հանձնառություններ* բառակապակցության մեջ: *Հանձնառություն*-ը ունի *ստանձնելու* իմաստը, ուստի ոչ թե *անել ստանձնած հանձնառությունները*, այլ **անել հանձնառությունները**:
Ավելորդ է *շարքերը* բառի գործածությունը **դասալքել շարքերը** կապակցությունում: Ինչպես՝ *Պատերազմի օրերին շատ զինծառայողներ* ***դասալքում էին շարքերը***:*Դասալքել-ը* նշանակում է *շարքերը լքել:* Հետևաբար դրանցից մեկը պետք է գործածել . **շարքերը լքել** կամ **դասալքել**:
Հանգանակություն հավաքել: **Հանգանակությունը** հանգանակելն է, **հանգանակ**՝ գումար, նվիրատվություն **հավաքելը**: Ուստի սխալ է, երբ *հանգանակություն* բառի կողքին *հավաքել* բառն են դնում: Հանձնարարելի են՝ **հանգանակություն էին անում՝ անցկացնում** կամ **միջոցներ էին հավաքում**:
Տարածված սխալ է **հազվադեպ** բառի կողքին **պատահել** բառի գործածությունը: Օրինակ՝ *Նման սխալներ* ***հազվադեպ են պատահում:*** *Հազվադեպ*-ի մեջ արդեն կա *պատահել*-ի իմաստը: Հանձնարարելի են՝ *Նման սխալներ* ***հազվադեպ են*** կամ ***հազվադեպ են լինում, ոչ հաճախ*** կամ ***սակավ, քիչ են պատահում*** տարբերակները:
Ետ ընկրկել :*Վախեցած* ***ետ է ընկրկել***.այս նախադասության մեջ ավելորդ է **ետ** բառը, քանի որ **ընկրկել** -ի մեջ կա **ետ**-ի իմաստը: Հետևաբար նույն նախադասության մեջ այս բառերի համատեղ գործածությունը սխալ է:Պետք է լինի՝ *Վախեցած* ***ընկրկել է*** կամ *Վախեցած* ***ետ-ետ է գնացել***:
Համանման սխալ է **ետ** բառի գործածությունը **ետ նահանջել** կապակցությունում: Օրինակ՝ *Թշնամին մեծ կորուստներով* ***ետ նահանջեց:*** Հանձնարարելի են՝ *Թշնամին մեծ կորուստներով* ***նահանջեց*** (առանց ետ -ի) կամ *Թշնամին մեծ կորուստներով* ***ետ քաշվեց*** :
Բերենք նմանատիպ այլ օրինակներ. ոչ թե *հեղինակի ստեղծագործությունների գլուխգործոցը* , այլ **հեղինակի գլուխգործոցը**, ոչ թե *հարցի հիմնական էությունը,* այլ **հարցի էությունը,** ոչ թե **կյանքի մասին կենսագրական** *տեղեկություններ տալ*, այլ ***կյանքի մասին*** *տեղեկություններ տալ*, ոչ թե *երբեմնի ունեցած հաջողություններ,* այլ

երբեմնի հաջողություններ կամ **մի ժամանակ ունեցած հաջողություններ**, ոչ թե *կատարվել իրադրության պայմաններում*, այլ **կատարվել իրադրության մեջ** կամ **կատարվել պայմաններում**:

Իրար կողքի անպատշաճ են հնչում **անհետաձգելի** և **հրամայականը** , **այլևայլ** և **բնույթի**, **ապագա** և **կատարելիք** բառերը. ոչ թե *քննարկել անհետաձգելի հրամայականը*, այլ **քննարկել հրամայականը** կամ **անհետաձգելիության հարցը,** ոչ թե *այլևայլ բնույթի հարցեր*,այլ **այլևայլ հարցեր** կամ **տարբեր բնույթի հարցեր**, ոչ թե *ապագա կատարելիք գործեր*,այլ **կատարելիք գործեր** կամ **ապագա գործեր** .*ելիք-ը* բառին տալիս է *ինչ որ ապագայում լինելու է* իմաստը :

Խոսքում գործածվող ավելորդ բառերը, իմաստային ու ոճական որևէ դեր չունենալով,ծանրաբեռնում են խոսքը, առիթ տալիս իմաստային անճշտությունների :

Շատ դեպքերում ավելորդ են այն միավորները, որոնց իմաստն արտահայտում են արդեն իրենց հետ գործածված բառերի մասնիկները, բաղադրիչները:

Այսպես՝ **նորից վերանորոգել, նորից վերհիշել** կապակցություններում ավելորդ է **նորից** բառը, քանի որ **վերանորոգել** և **վերհիշել** բառերում արդեն կա այդ իմաստը: **Վեր-** ածանցը արտահայտում է այդ նշանակությունը: Հանձնարարելի են՝ **նորից հիշել** կամ **վերհիշել**. **նորից նորոգել** կամ **վերանորոգել**: **Կրկին վերաբացել** արտահայտության մեջ սխալ է **կրկին** բառի գործածությունը: Պետք է լինի՝ **վերաբացել** կամ **կրկին բացել:**

Հետ վերադառնալ կառույցում մերժելի է **հետ** կապի գործածությունը. **վերադառնալ** բայի մեջ արդեն կա **հետ**-ի իմաստը (**վեր-** ածանցը արտահայտում է դա):

Համանման սխալ է **մեջ** բառի գործածությունը **իր մեջ ներառել** կապակցությունում . **ներառել** բառը արդեն իր մեջ ունի **ներս-**ի իմաստը:

Նույն ձևով ավելորդ է **մեջ** բառի գործածությունը **պարունակել, ընդգրկել, բովանդակել, պարփակել** բայերի հետ, որոնք **ներս-**ի գաղափարն արդեն իսկ իրենց մեջ ունեն:

Դիմումի վրա մակագրել :Այս կապակցության մեջ ավելորդ է **վրա** բառը, քանի որ արդեն **մակագրել**-ի **մակ-** մասնիկը այդ նշանակությունն ունի: Հանձնարարելի է՝ **դիմումը մակագրեց**: Նույն ձևով ավելորդ է **տակ** բառի գործածությունը **փաստաթղթի տակ ստորագրել** կապակցությունում. **ստորագրել** բառի **ստոր-**ը արդեն իսկ արտահայտում է **տակ** բառի իմաստը:Ճիշտ է՝ **փաստաթուղթը ստորագրել**:

Համատեղ գործածվում են հետևյալ բառերը. **առաջինը նախահարձակ լինել**, **նախօրոք կանխազգալ**, **վաղօրոք կանխորոշվել**, ինչպես նաև **փոխպայմանավորված միմյանցով**, **փոխադարձաբար միմյանց** օգնել,**շատ համապարփակ**, **ամենից ավելի քաջատեղյակ**, **գործընթացը ընթացքի մեջ**, **հետ համատեղ** , **բազմազան ձևեր**_**հրատապ կերպով**, **խստիվ ձևով** և այլ բառեր:

Առաջինը նախահարձակ լինել կապակցությունում սխալ է *առաջինը* բառի գործածությունը. *նախահարձակ* բաղադրիչի *նախ-* մասնիկը բառին տալիս է *առաջին, նախապես* իմաստները: *Առաջին* և *նախահարձակ լինել* բառերի՝ կից գործածելը սխալ է: Ճիշտ տարբերակներն են՝ **առաջինը հարձակվել** կամ **նախահարձակ լինել**:

Հաճախ ասում են՝ **մասնագետ լինելուց առաջ նախ** .այս կազմությունում սխալ է **առաջ** և **նախ** բառերի կողք կողքի գործածությունը: Ոչ թե *մասնագետ լինելուց առաջ նախ* , այլ **մասնագետ լինելուց առաջ** կամ **նախ և առաջ, ամենից առաջ:**

Նույնատիպ սխալ են **նախօրոք կանխազգալ, վաղօրոք կանխորոշել** կառույցները: *Նախօրոք* բառի մեջ *նախ-* մասնիկը, *կանխազգալ* բառում՝ **կանուխ**, *վաղօրոք* բառում՝ *վաղ* բաղադրիչները բառերին տալիս են **նախապես** իմաստը: Ուստի պետք է գործածել **նախօրոք զգալ** կամ **կանխազգալ, վաղօրոք որոշել** կամ **կանխորոշել**:

Ավելորդ է **ավելի** բառը **ավելի գերադասել** կապակցությունում: **Գերադասել** բառի մեջ կա **ավելի** իմաստը. որը հստականում է **գեր-** ածանցի միջոցով: Ուստի պետք է լինի՝ **գերադասել**:

Շատ համապարփակ բառակապակցության մեջ մերժելի է **շատ**-ի գործածությունը, **համա-** մասնիկի մեջ կա *ամբողջ-ի, շատ-ի* իմաստը, ուստի ոչ թե **շատ համապարփակ**,այլ **համապարփակ**:

Նույն ձևով էլ ավելորդ են **ավելի** բառը՝ **ավելի նախընտրելի**, **բարձրը՝ բարձր գերադասել** բառակապակցությունների մեջ: Սխալ կա նաև **ամենից ավելի քաջատեղյակ** (*ամենից ավելի*-ն ավելորդ է) բառակապակցությունում: *Քաջ*-ը այս բառում *լավ* իմաստն ունի, ուստի ավելորդ է նրա կողքին *ամենից ավելի* գործածել:

Բազմազան ձևեր: *Բազմազան* բառի **-զան** մասը ունի *ձև* իմաստը, հետևաբար *ձև* բառի գործածությունը այս կապակցության մեջ մերժելի է:

Հաճախ ենք լսում այսպիսի արտահայտություն . **փոխպայմանավորված են միմյանցով**: *Փոխպայմանավորված* -ի մեջ *փոխ-* մասնիկը ունի *միմյանց* իմաստը: Եվ այս կառույցի մեջ *միմյանցով* բառի գործածությունը ավելորդ է և մերժելի:Համանման սխալ է **փոխադարձաբար միմյանց լրացնել**

կառույցում *փոխադարձաբար* և *միմյանց* բառերի կից գործածությունը. *միմյանց*-ը ավելորդ է:

Մերժելի է **խստիվ ձևով, խստիվ կերպով** բառակապակցություններում *ձևով, կերպով* միավորների գործածությունը, քանի որ *խստիվ* բառը (լինելով ձևի մակբայ) գործողության ձև է ցույց տալիս և ձևի իմաստ է արտահայտում:-*Իվ* ածանցը ունի *կերպով* նշանակությունը:Ճիշտ են՝ **խստիվ** կամ **խստորեն**: Նմանատիպ սխալ է *ձևով* բառի կիրառությունը **գաղտագողի ձևով** կառույցում :

Հաճախ սխալմամբ համատեղ գործածում են համանիշ բառեր: Մերժելի է **հենց** և **թե չէ** բառերի միաժամանակյա կիրառությունը, որովհետև դրանք նույն իմաստն են արտահայտում: Ասում են՝ ***Հենց** եկավ **թե չէ***:Պետք է գործածել . **Հենց եկավ** կամ **Եկավ թե չէ**:

Հենց բառը, ինչպես գիտենք, ունի նաև ընդգծող, սաստկացնող իմաստ և դրա գործածությունը նույն դերը կատարող այլ բառերի հետ սխալ է: Հաճախ ենք հանդիպում այսպիսի կառույցների. **հենց իր իսկ պահանջով** կամ **հենց իր իսկ խոստովանությամբ**:Ճիշտ տարբերակներն են՝ **հենց իր պահանջով** կամ **իր իսկ պահանջով, հենց իր խոստովանությամբ** կամ **իր իսկ խոստովանությամբ**:

Հանձնարարելի չէ **նույնիսկ** և **անգամ** բառերի համատեղելը նույն նախադասության մեջ,քանի որ սրանցից յուրաքանչյուրը սաստկացնող դեր ունի:Օրինակ. ***Նույնիսկ** մի բառ **անգամ** չասաց:*Ճիշտ են՝***Նույնիսկ** մի բառ չասաց* կամ *Մի բառ **անգամ** չասաց:*

Սխալ ձևեր են առաջանում **էլ**, **նաև** ,**նույնպես** բառերը նույն նախադասության մեջ գործածելիս: Հանդիպել ենք հետևյալ սխալ կառույցներին. *Ես **էլ** եմ **նաև** գալու, Մյուսներն **էլ** են **նույնպես** գալու*: **Նաև**, **էլ, նույնպես** բառերը համանիշներ են, ուստի հանձնարարելի չէ դրանց համատեղ կիրառությունը: Նույն նախադասության մեջ այդ բառերից մեկը պետք է գործածել . *Մյուսներն **էլ** են գալու, Մյուսները **նույնպես** գալու են* կամ *Նաև **մյուսներն** են գալու:*

Մերժելի է **ոնց որ** և **պես** բառերի միաժամանակյա կիրառությունը, որովհետև դրանք նույն իմաստն են արտահայտում: Ասում են՝ *Նրան վերաբերվիր **ոնց որ** առաջվա **պես***, պետք է ասել՝ *Նրան վերաբերվիր **առաջվա պես*** :

Խոսքը պետք է լեզվական ու ոճական առումներով ճիշտ կառուցվի:

Գրականություն

1. Ավետիսյան Յու. և այլք ,Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
2. Բադիկյան Խ.,Ճիշտ խոսենք հայերեն,Եր.,2012:
3. Բեդիրյան Պ., Բառերի խորհրդավոր աշխարհից, Ե, 1989::
4. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Ե., 2007:
5. Գևորգյան Գ.,Լեզվագործածության սխալներ,Եր.,2015:
6. Միրզոյան Վ.Ա.,Հայերենը՝անաղարտ,Եր.,2017:
7. Միրզոյան Վ.Ա.,Ճարտասանություն,Եր.,2012:
8. ԱՀ ԶԼՄ՝ Արցախի հանրային հեռուստատեսություն, «Ազատ Արցախ»,Ստեփանակերտ:
9. ՀՀ ԶԼՄ՝ Arm.news, Erevan.am, Yerkir.am, ՀՀ, «Ազգ», «Իրավունք», «Ազատություն» ռադիոկայան:

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել, 26.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

ՀՏԴ 82.09

Գրականություն

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Արցախի պետական համալսարանի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ. գ. թ.
E-mail: nare-luys @mail.ru

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՂԲԵՐԳԱՀԵՐՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԳԾԵՐԸ ԽԱՉԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել է ժամանակակից բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի պոեզիան՝ երկու հիմնական ուղղություններով՝ ժամանակակից հայ մարդու ազգային ողբերգությունը Խաչիկ Մանուկյանի պոեզիայում և դարի պոետը կամ դարակազմիկ պոեզիան: Խաչիկ Մանուկյանի պոեզիան ժամանակակից հայ անհատի ազգային ողբերգության համապարփակ խտացումն է: Հայրենիքի ու ժամանակի, պատերազմի ու քաղաքականության պատկերները նրա պոեզիայում միախառնվում, դառնում են մեկ դիմապատկեր, ուր ցայտուն կերպով արտացոլվում են իրար հաջորդող դարակազմիկ ապրումներ, որոնց շրջապտույտների առանցքում մշտապես ինքն է՝ բանաստեղծը՝ որպես այդ ամենի գլխավոր վկա: Մանուկյանը վավերական պահի բացառիկ ճշգրտությամբ է վերակերտում գեղարվեստական պատկերը: Նրա կերտած բանաստեղծական պատկերները նկարագրական արվեստով, անմիջական շնչով, հոգեբանական խորքերով ասես կենդանի շարժանկար են՝ պահի մեջ տեսագրված, որքան իրական, նույնքան էլ ոգեղեն: Բանաստեղծական պատկերներին առանձին գրավչություն են հաղորդում ոչ միայն պատկերակերտման շուքը, խոսքի տեմպը, այլև

բաղաձայնույթներով տարահնչող ներքին երաժշտականությունը:

Խաչիկ Մանուկյանի պոեզիայում կենտրոնական երևույթներ են դառնում պատմաքաղաքական ու պատմահոգեբանական մթնոլորտ ձևավորող մի քանի իրողություններ՝ հայրենիքի կործանման տագնապը, դավն ու դավաճանությունը, ազգային սերուցքի զոհաբերման ողբերգությունը: Մանուկյանի պոեզիայում գերիշխում են հոգեբանական մակընթացությունները, ինքնակեղեք ցավի ու ողջակիզող ցասումի հոգեվիճակները: Մտքի շիկացումը, խոսքի հրեղեն տարերքը, պատկերների հիպերբոլիկ ընդգրկումներն ու ոգեղեն հզոր շունչը Մանուկյանի պոետական դիմագծի ամենաբնորոշ հատկանիշներն են, նրա պատմաքաղաքական ու պատմահոգեբանական պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *գոյամարտի պոեզիա, արտակարգ ուժ, հրեղեն ոգի, ցավ ու ցասում, զգացմունքային շիկացում, պատկերակերտման շուք:*

Н. Оганесян

ТРАГИЧЕСКИЕ И ГЕРОИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ВОЙНЫ В ПОЭЗИИ ХАЧИКА МАНУКЯНА

В статье рассматривается поэзия современного поэта Хачика Манукяна в двух основных направлениях: национальная трагедия современного армянского человека в поэзии Хачика Манукяна и поэт века или эпохальная поэзия. Поэзия Хачика Манукяна–это комплексное сгущение национальной трагедии современного армянского человека. В его творчестве образы родины и времени, войны и политики смешиваются и становятся единым портретом, ярко отражающим сменяющие друг друга эпохальные чувства, в круговороте которых неизменно он сам, поэт, как главный свидетель всего происходящего. Манукян воспроизводит художественный образ с исключительной точностью момента. Поэтические образы, созданные им с помощью изобразительного искусства, своей сутью и психологической глубиной подобны живому кинофильму, снятому в одно

мгновение, столь же реальному, сколь и духовному. Особую привлекательность поэтическим образам придает не только красота образности, темп речи, но и внутренняя мелодичность, создающаяся согласными.

Центральное местов поэзии Хачика Манукяна занимают несколько явлений, формирующих историко-политическую и историко-психологическую атмосферу: тревогапотери Родины, измена и предательство, трагедия принесения в жертву лучших сынов нации. В поэзии Манукяна преобладают душевные перебивы от боли самобичевания и пылающего гнева. Накал эмоций, огненная стихия речи, включение в поэтический сюжет гиперболических образов и могучее веяние духа — наиболее характерные поэтические черты Манукяна, художественные особенности его историко-политической и историко-психологической поэзии.

Ключевые слова: *военная поэзия, чрезвычайная сила, огненный дух, боль и гнев утраты, эмоциональный накал, красотавизуализации.*

N. Hovhannisyan

TRAGIC-HEROIC TRAJECTORIES OF WAR IN KHACHIK MANUKYAN'S POETRY

The article discusses the poetry of the modern poet Khachik Manukyan in two main directions: the national tragedy of the modern Armenian individual, and the poet of the century or epochal poetry. Khachik Manukyan's poetry is an exhaustive condensation of the national tragedy of the modern Armenian individual. The portrayal of homeland and time, war and politics are mixed in his poetry, they become a single image, where consecutive epoch-making feelings are vividly reflected. in the center of whose cycles is always himself, the poet, as the main witness of it all. Manukyan recreates the artistic image of the authentic momentwith exceptional accuracy. His poetic images, with their descriptive art, direct spirit and psychological depths are like a living motion picture, recorded in the moment, as real as it is spiritual. The beauty of imagery, the pace of speech, as well as the inner musicality of the consonants give the poetic images a special charm.

In Khachik Manukyan' s poetry the central phenomena become several situations that shape the historical-political and historical-psychological atmosphere: the fear of destroying the homeland, betrayal and betrayal, the tragedy of the sacrifice of the national elite. Manukyan's poetry is dominated by psychological currents such as mental states of self-inflicted pain

and burning rage.The incandescence of mind, the fiery element of speech, the hyperbolic inclusion of images and the powerful breath of spirit are the most characteristic features of Manukyan's poetic face, the artistic features of his historical-political and historical-psychological poetry.

Key words: *Poetry of the struggle, extraordinary power, fiery spirit, pain and grief of loss, emotional burnout, the luxury of creating images.*

Ներածություն

Խաչիկ Մանուկյանը ժամանակակից հայ պոեզիայի առաջատար դեմքն է, ով իր ստեղծագործությամբ կամրջում է 20-րդ դարը 21-րդ դարին՝ դառնալով արդի պոետական մտածողության մայրուղի, որտեղ հատվում են *Չարենց-Սևակ-Շիրազ* գրական ճանապարհները, դառնում գեղարվեստական միանգամայն նոր որակ ու նոր մտածողություն: Մանուկյանի պոեզիան ժամանակակից հայ ինքնության պոետական վկայագիրն է համաշխարհային գրական հարթակում, Հայաստանի պատմահոգեբանական ինքնապատկերը աշխարհաքաղաքական շարժընթացների արձանագրումների համապատկերում:

Խաչիկ Մանուկյանը գալիս է մեր ազգային արմատներից և համաշխարհային որոնումների՝ մեր օրերի խելահեղ մրցավազքում աշխարհաքաղաքացիության միտումներ դրսևորող պոեզիայի տեղ՝ բերում ինքնություն ունեցող պոեզիա, համանման-համընդհանրական մտածողության ու ոճի փոխարեն՝ անհատական մտածողություն ու ոճ: Ժամանակակից պոեզիայի որոնումների վայրիվերումների մեջ Մանուկյանի պոեզիան բարձրանում է որպես ընթացք նշանավորող առաջնորդ պոեզիա՝ իր առանձնահատուկ դիմագծով, պատմամշակութային արժեքով ու կշռով:

Հայ հավաքական Բանի պոետական բացառիկ ժայթքումներով Խաչիկ Մանուկյանը նշանավորվում է որպես գրական երևույթ, դառնում մեր ազգային հոգևոր հարստություններից մեկը՝ թե՛ իր գրական հունձքով, թե՛ Վաչագան սերունդով: Նա գալիս է ապացուցելու հայ հանճարի հունդի անսպառ շարունակականությունը, հայ հոգևոր միջնաբերդի ճանապարհի կենսունակությունը, Ոգու և Գոյի մեկտեղության լինելությունը:

1.Ժամանակակից հայ մարդու ազգային ողբերգությունը Խաչիկ Մանուկյանի պոեզիայում

Այո՛, Խաչիկ Մանուկյանի պոեզիան անհատական-ազգային դեմք ու դիմագիծ ունեցող պոեզիա է, Ուժի և Ոգու համակշիռ պոեզիա: Այն գոյամարտի ու հերոսացումի, ցավի ու ցասումի, վճռականության ու կամքի բանաստեղծական բարձրագույն ինքնարտահայտում է, հայ ազգային

պոեզիայի արիականությունն ու առնականությունը հաստատագրող ու վերահռչակող պոեզիա:

Մանուկյանի պոետական խոսքի զորությունը սերում է հայրենի հողից և թափ առնում ճակատագրի հարվածներից, խոսքի ոգեղեն և հողեղեն տարերքները ներդաշնակված են իրար, որպես անտրոհելի ու անբաժանելի միագոյություն:

Պարտվողական-զինաթափության հոգեվիճակների տեղ՝ Խաչիկ Մանուկյանի պոեզիան բերում է դիմադրողականության և արժանապատվության հոգեբանություն, անգլուխ-անողեկության փոխարեն՝ խոհեմ սթափություն, չնչին մորթապաշտության դեմ՝ մեծահոգի ինքնայրում.

Իմ հայրենիքը կոտած եզ չէ,
Որ ճիպտեն, բեռնած սայլը քաշի,
Հիպնոսացրել ու թոզ են փչել,
Որ իրեն կարծի պրծած հաշիվ:
Որ մոլորակի աջ պռնկից
Հրեշտակաբար թևի գնա,
Որ տաք հուշերով չհիշեն ինձ,
Որ պապերիցս բան չմնա:
Որ ավերակեն, սարքեն մոխիր
Աստծո արարմունքն այս կատարյալ,
Եվ անասնացած մի մեծ նախիր
Արածի ծաղկած դաշտի վրա….[1]

Աշխարհաքաղաքական ու ներքաղաքական դավադիր գործընթացներին դեմ - հանդիման ծառացող անհատական-հավաքական ցասումի ու դառնության հոգեբանական այս պահին հաջորդում է բանաստեղծի երդումի խոսքը՝ որպես անդրժելի ուխտ՝ տրված գոյության մաքառումների ճանապարհին ուժասպառվող հայրենի երկրին.

Քեզ չեմ շրջանցի, քեզ ապրելու եմ,
Իմ հրաշք երկիր, իմ խինդ ու ցավ,
Քեզանից հեռու ինձ ատելու եմ
Բոլոր պահերի մեջ ուրացյալ….

Սա փորձությունների մատնված հայրենի երկրին ուղղված սիրո ու կարեկցանքի ներքին խոսք է, ուր համատեղվում են խինդն ու ցավը, հավատարմության գիտակցական մի աստիճան, երբ լքումը դառնալու է ուրացում, իսկ հեռացումը՝ հոգևոր-ֆիզիկական մահ, քանի որ հայրենիքն ու բանաստեղծը նաև մեկ միասնական գոյություն են, հոգևոր-օրգանական երկվորյակներ.

---

[1] Բոլոր բանաստեղծական մեջբերումների սկզբնաղբյուրները տե՛ս գրականության ցանկում նշված էլեկտրոնային կայքէջերում:

Քեզանից հեռու ես մեռնելու եմ՝
Ինքս իմ էության մեջ բացակա…

Հայրենիքի ու ժամանակի, պատերազմի ու քաղաքականության պատկերները Խաչիկ Մանուկյանի պոեզիայում միախառնվում, դառնում են մեկ դիմապատկեր, ուր ցայտուն կերպով արտացոլվում են իրար հաջորդող դարակազմիկ ապրումներ, որոնց շրջապտույտների առանցքում մշտապես ինքն է՝ բանաստեղծը՝ որպես այդ ամենի գլխավոր վկա.

Մերը վերջացավ, ատելություն է,
Խորշանքի թույնն է բյուր սրտերում,
Թանձրանում է մահվան սև գույնը,
Եվ քառսն է այս ափին տիրում:
Անդունդներն ի վար հոգու անկում է,
Շուրջս ցփնում են ողբ ու հառաչ,
Եվ կործանում են աստծո այս տունը,
Ցնդող մարդկության աչքի առաջ…

Աշխարհաքաղաքական վայրագ ընթացքի, ներքաղաքական ուրացումների ու դավադրությունների հոգեբանական պատկերները, աներևույթ կամ երևութացող գլխավոր մեղավորների կերպարանքները Մանուկյանի պոեզիայում փոխկապակցվում ու փոխլրացնում են իրար՝ ամբողջացնելով դարի ու հայրենիքի ողբերգությունը: Հետզհետե ուժգնացող ապրումներին համաչափ՝ սաստկանում են բանաստեղծական ռիթմն ու պատկերավորման ներքին եղանակները, նշմարվում են նաև ահագնացման միտում ունեցող մ-երի և կ-երի բաղաձայնույթները՝ որպես մահվան ու արյան ուրվապատկերներ.

Դժոխքի կաթսան ջրով եռում է,
Շուրջը պարում է չարքի արքան…
Ինքնահրկիզված սերը մեռնում է,
Թվում է՝ արդեն վերջին անգամ,
Եվ իմաստազուրկ արարում է
Դառնում հրաշքը տերունական:
Ցավագարների գալարում է
Կորուստների մեջ անմխիթար,
Կաթկթում է մեր թանկ արյունը
Կյանքի աչքերին մահով մթար…

Այսպես իմաստազրկվում է աստվածային արարչագործումը, և կյանքի հրաշքը «անմխիթար կորուստներից» դառնում է «ցավագար գալարում» ու արնաքամ հոգեվարք:

Խաչիկ Մանուկյանի պոեզիան ժամանակակից հայ անհատի ազգային ողբերգության համապարփակ խտացումն է, որ մերթ պոռթկում է որպես ոգեղեն անզիջում դիմադրություն, մերթ հնչում իբրև զորության խոսք՝

խավարի տիրակալության դեմ՝ հանուն լույսի, մերթ ինքնարտահայտվում գոյամարտում ունեցած անձնական-ազգային կուրուստների անկշռելի ցավով.

Անհեթեթ, փնթի ժամանակներ են,
Հոգին արյունող նյութի ճանկերում,
Խավարը լույսին չի կարող ներել,
Անթափանց մութն է խավարին գերում:
Կարող ես չքվել, թե չես համբերում
Չարի դեմ ձգվող բարիկադներին,
Նայիր՝ ինչպես են արևներ բերում
Հրեշտակների լուսե թևերին….

Մանուկյանի բանաստեղծությունների մեջ գրեթե մշտապես առկա է արժանապատվորեն զսպված կորուստի տեսանելի կամ զգալի ցավը, որ մերթընդմերթ արտաժայթքում ու անմիջապես ներմղվում է՝ փոխակերպվելով հոգեբանական հարակից ապրումների: Այդպե՛ս, որ կորուստի վիշտը հանկարծ ինքնության ամրոցի թուլություն չդառնա, որ ինքնազատագրում տեղի չունենա, ու ցավի կշիռը չթեթևանա: Իսկ արդյունքը ինքնազսպումից ու ինքնախտացումից ի հայտ եկած այս պայթունավտանգ գոյավիճակն է.

Թե մնամ, այս գունդը կպայթի,
Տեղ չկա իմ հոգս ու ցավերին,
Բայց դեռ չեմ պատրաստվում դառնալ դի,
Պտտվիր, կարուսել, պտտվիր…

Կարուսելի տերյանական պատկերը ի մի է բերում անցյալը, ներկան ու ապագան՝ *անհատ-ժողովուրդ-ճանապարհ* ներքին խոհաքննությամբ: Անհատական ճակատագիրն ընկալվում է որպես ժողովրդի պատմության մշտանորոգ մի մաս.

Բախտիս հանգույցը հեռվում էին կապել,
Ձեռքերս չեն հասնում, որ քանդեմ,
Սրտամաշ վշտեր ու հոգսերի բեռ շալակիս՝
Հոգնել եմ ես արդեն:
Ի՜նչ հեշտ էր սկիզբը,
Հաղթեցի ես քեզ, Բե՛լ,
Արևոտ մի երկիր շահեցի….

Մանուկյանի բանաստեղծական պատկերներում գերիշխում են հոգեբանական մակընթացությունները, ինքնակեղեք ցավի ու ողջակիզող ցասումի հոգեվիճակները: Թվում է՝ դրանք ներքին բնածին տարերային ժայթքումներ են պոեզիայի աշխարհում: Մտքի շիկացումը, խոսքի հրեղեն տարերքը, պատկերների հիպերբոլիկ ընդգրկումներն ու ոգեղեն հզոր շունչը Մանուկյանի պոետական դիմագծի ամենաբնորոշ հատկանիշներն են, նրա

պատմաքաղաքական ու պատմահոգեբանական պոեզիայի գեղարվեստական առանձնահատկությունները:

2.Դարի պոետը կամ դարակազմիկ պոեզիան

Խաչիկ Մանուկյանի պոեզիայում կենտրոնական երևույթներ են դառնում պատմաքաղաքական ու պատմահոգեբանական մթնոլորտ ձևավորող մի քանի իրողություններ՝ հայրենիքի կործանման տագնապը, դավն ու դավաճանությունը, ազգային սերուցքի զոհաբերման ողբերգությունը:

Կործանվող երկրի ողբերգությունը՝ ցավի ու ցասումի բռնկումներով, անմնացորդ փոխանցվում է նրա բանաստեղծ որդուն: Գրիչը դառնում է զենք, խոսքը՝ հրեղեն պայքարի ու վրիժառության անզիջում տարերք: Բանաստեղծը կանգնած է պատմական օրվա կենտրոնում՝ պայքարի միջից հայացքը հառած դեպի ապագա: Խոսքի ոգեղեն պայքարի երկու բևեռներ են դառնում ներքին խոր դրամատիզմն ու արտակարգ ուժը, իսկ ավարտը՝ դիմագրավելու տոկունությունն ու հաղթանակի սպասումը.

Ինձ ռազմանվագ երգ է հարկավոր
Ու հողմաշառաչ հայոց այրուձի:
Պատի՛ժ է՝ կորած երկիր ունենալ,
Ոճի՛ր է՝ լինել հեգ հուղարկավոր....

Հոգեբանական ապրումների տեղապտույտը դառնում է մշտնջենական շրջապտույտ, հույզերի մրրկահույզ ընթացքին ժամանակ առ ժամանակ հաջորդում են նաև կարճատև տեղատվություններ, երբ առաջին գիծ է մղվում ոչ թե զգացմունքային շիկացումը, այլ հետադարձ հայացքով իմաստնացած խոհը.

Լույսով ողողված տոն էի կարծել՝
Միրո՛, կարոտի՛, ընծայումների....
Տե՛ր, նայի՛ր՝ ինչ է Երկիրդ դարձել,
Դու իմ փոխարեն այստեղ կապրեի՞ր...

Հաջորդում է ցավի գերագույն բևեռացումին հաջորդող ողջակիզման կամքը՝ որպես միակ ինքնափրկություն: Դա այն պահն է, երբ ամենաթանկ կորուստները կյանքի տոնը վերածում են իրական դժոխքի, «ուր ո՛չ մահ կա, ո՛չ կյանքի շող».

Կյանքը վերջացավ,
Իսկ մահը չկա,
Չգիտեմ՝ հիմա ինչ եմ անելու-
Թևերս բացեմ
Ու դառնամ խաչքար-
Երկնքի վրա....

Հոգեբանական մակընթացությունները միանգամայն ներդաշնակվում են պատկերային բռնկումներին, որոնց առանցքում հայտնվում են գերակա դիրք ունեցող և տրամադրություն որոշակիացնող առանձին բառեր.

Ես վաղուց խնդասիրտ չեմ երգել
Իմ սրտի շրխկան բառերով,
Հետևում՝ ցավեր են ու վերքեր,
Առջևում՝ հայացքներ են խռով….

Մահվան ու անկումի մթնոլորտում բանաստեղծի գերագույն կամքը ազգային դավաճանների հեռացումն է: Ուրեմն՝ ազգային դավաճանությունից է սկսվում կործանման աղետը, և փրկության դուռը դավաճանության մահն է: Բանաստեղծի կամքը հնչում է որպես ժամանակակից աղոթք, որպես նորօրյա շարական.

Դիվապետին տար քամիների հետ,
Ազգուրացների ընթացքը բեկիր….
Ամոքում բեր մեր արնածոր վերքին,
Մահաբերներին հեռացրու հավետ:
Մնա՛, մի՛ ցնդիր, դրախտի երկիր….

Ազգային ողբերգության գլխավոր դերակատարները Խաչիկ Մանուկյանի պոեզիայում «ստախոս արքան» ու ծաղրածուների պալատն են՝ «անտուն, անհայրենիք, անսեր»: Բանաստեղծը՝ որպես բոլոր ժամանակների արքա, խոսքի ճակատամարտ է մղում երկրի գահակալ արքայի ու նրա մանկլավիկների դեմ, որոնք կործանման են տանում ազգային գոյաբանության ընթացքը՝ մինչև վերջ մերկացնելով նրանց չնչին և ուրացյալ կերպարները.

Մահը մտել է երկիր՝
Ազգադավ գոյերի ձեռքով,
Դրմփ-դրմբ-հու կանչերով, կրքով՝
Մահը մտել է երկիր….

Բանաստեղծությունը, պատկերային արվեստով բոլորովին տարբեր լինելով Ե. Չարենցի «Մայրամուտի երգ»-ից, միաժամանակ բերում է նույն տրամադրությունը, մահվան համատարած ոգին, մահվան արշավանքն ու իշխանությունը: Ահավասիկ Չարենցի բանաստեղծությունը՝ տրամադրության հարազատությունը և պատկերային արվեստի տարբերությունը կողք կողքի դնելու համար.

Մառ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,-
Մեռնում է մութը մթնշաղում,-
Մառ մորմոքում է մայրամուտը:-
Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,-

Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում...

Նույնն է նաև Խաչիկ Մանուկյանի և Եղիշե Չարենցի՝ երկրի ղեկավարի դեմ մղած պայքարի ոգին, տարբեր են, սակայն, արքաների կերպարները: Այնտեղ օտար գահակալն է, այստեղ՝ հայրենի, այնտեղ բռնակալ առաջնորդն է, այստեղ՝ ստախոս ու ազգուրաց արքան: Բանաստեղծությունից բանաստեղծություն արքայի կերպարը մանրամասնվում է նոր հատկանիշներով՝ իր հետ բացելով ազգային ողբերգության ենթաշերտերը: Խեղկատակ արքա, որ անընդհատ մոլորեցնում-հիպնոսացնում է ժողովրդին, ու ծափ զարկող պալատականներ, որոնց ընդհանուր բնորոշիչը «էժան պոռնիկի պես» ծախվելն է, որոնք հայրենիքն ու ազգը մատաղում են իրենց օտարաշահ վարքին՝ հայրենական վիշտը վերածելով խմբակային տոնի: Համաբնույթ բանաստեղծական պատկերներ շատ կան Մանուկյանի պոեզիայում, որոնք ներքին կապով ամբողջացնում են ողբերգության համապարփակ պատկերը: Ահա բնորոշ մի բանաստեղծություն՝ «Խարանը»՝ գրված ատելության և անհանդուրժողականության թանձր մուժով: Որպես նորօրյա Աստծո քարտուղար՝ բանաստեղծը խարանում է իշխանավորների գործած մեղքերը, որոնք չունեն թողություն տալու և զղջմամբ ու ապաշխարությամբ ներում հայցելու վերջին հնարավորություն.

Ծարավ վամպիրի պես ժանիքներդ խրած
Չքնաղ պարանոցին ծաղկուն հայրենիքիս,
Ժողովրդի կյանքը կայքին գրավ դրած,
Փայլուն փաթաթաններ՝ ցավոտ վերքիս,
Իմ արցունքն ու վիշտն եք պարզում ինձ տոն որպես-
Ես՝ հայ բանաստեղծս, չե՛մ ներում ձեզ:
Անասնական բոլոր բնազդներին գերի,
Պալատական կապով տրված լափի՛ն,
Քոչվորի պես անտու՛ն, անսե՛ր, անհայրենի՛ք,
Դրախտավայրն Հայոց սարքած արնոտ բագի՛ն,
Ողջ ազգին եք տանում՝ մատաղացո՛ւ որպես-
Ես՝ հայ բանաստեղծս, չե՛մ ներում ձեզ....

Մարդկային գերագույն մեղքը Մանուկյանի պոեզիայում ազգային դավաճանությունն է, գերագույն հանցագործը՝ նորին մեծություն ձեռնադրված հայրենիքի դավաճանը և նրան սպասարկող արբանյակները: Բանաստեղծի խոսքը հրահանգվում է որպես ահեղ դատավճիռ՝ հիմնավորված ազգային ողբերգություններով ու անվերադարձ կորուստներով.

Փուչ կրքերին տրված ձեր թուլամորթ վարքի՛ն,
Ձեր ոսկեթույն կայքի՛ն, սին փառքի՛ն ձեր,
Պալատներին՝ գամված անարգանքի պատին,

Եվ անհագուրդ ոգուն ձեր խառնացեղ՝
Սև խարանն եմ գամում՝ դավաճանի՛ն որպես….

Իսկ դավաճանների՝ ներում չունեցող դատավճիռն ու արդար հատուցումը միայն ու միայն սա պետք է լինի՝ «Տրիոլետ-փամփուշտներ՝ դավաճանների ճակատին».

Այս փամփուշտները, որ մնացին,
Ես ո՞ւմ ճակատին պիտի գամեմ,
Ո՞ւմ պիտի հետս դժոխք տանեմ
Այս փամփուշտներով, որ մնացին:
Կյանքի այս դաժան հավելվածին,
Իմ բաժին սևը ո՞նց պատանեմ,
Այս փամփուշտները որ մնացին,
Տղա՛ս, ո՞ւմ գանգին պիտի գամեմ….

Կորցրած հայրենիքն ու դավին զոհ դարձած հազարավոր նվիրյալների շիրիմներն աչքի առաջ՝ բանաստեղծը դառնությամբ արձանագրում է. *«Այս լրտեսները պոռնկածին // Իմ Հայրենիքն ու զորքը կերան….»*, որին հաջորդում է պատմական ահեղ դատավճիռը. *«Եռաբլուրում վիզդ կկտրեն, // Որպես քաջերին դավաճանած շան….»:* Հատուցման նման վճիռ արձակողն այն բանաստեղծն է, ում որդին զոհվել է դավաճանված գոյամարտում, ում հայրենիքը մաս առ մաս ծախվել է թշնամուն, ում ժողովուրդը անանց սգի է մատնված: Համազգային մահվան ու կործանման դավադիր ու նենգ արշավանքում, հստակ գիտակցելով՝ ով է գլխավոր մեղավորը, բանաստեղծը խոսքի մահացու կրակահերթեր է ուղղում նրա դեմ, պատռում նրա ու բոլոր ծախու իշխանավորների դիմակները.

Ճեմասրահում՝ օսլայված բառեր
Եվ փողկապավոր դեմքեր սիրասուն-
Հայրենիքներ են գնել-վաճառել
Ճարտասանները խոսքահանդեսում-
Թփուտների տակ՝ փսլինքի հեղեղ,
Լեռների վրա՝ զարմեր դյուցազուն,
Արանքում մահվան սերմեր են հեղել
Եվ դիակների հունձք են սպասում….

Այս ստեղծագործությունը «Երկիրդ ի՞նչ արժե….» կրկնատողով բանաստեղծության տրամաբանական շարունակությունն է, ազգային ողբերգության նախավերջին արարը, որ միաժամանակ երևան է բերում երեկվա ու ներկա պահի պատմաքաղաքական կապը: Հայրենիքի՝ այսօրվա ու երեկվա ճակատագրի ողբերգականությունը՝ բաղդատական ու գերադրական հատկանիշներով, տեսանելի է դառնում Մանուկյանի պոեզիայի ամբողջ ճանապարհին: Ահա մոտ անցյալում գրված «Նաիրյան էլեգիաներ»-ից հատկանշական մի քանի պատկեր, որ առարկայական են

դարձնում պատմաքաղաքական ընթացքի շարունակականությունն ու ներքին կապը.

Էլ չունեմ հայրենիք անմեռ,
Ինքնիշխան, զորավոր, կարգին,
Ողջ կյանքս պանդոկին նվեր,
Եվ հոգիս՝ արյունոտ բագին:

Ահավասիկ նաիրյան մի այլ էլեգիա. *«Տղամարդու չեղած դառը արցունքներով…. // Անթիվ կորուստներից իմ պաշարված սիրով // Ուզում եմ քեզ հիմա ամուր գրկել ու լալ…»:*

Կորստի հոգեբանական պատկերները Խաչիկ Մանուկյանի պոեզիայում, առանձնահատկություններով հանդերձ, միավորվում են ներքին կապով, ինչը հայրենիքի՝ ոչ միայն այսօրվա, այլև երեկվա ու վաղվա ողբերգությունն է.

Իմ հայրենիքն է ինձնից հեռանում,
Ես չեմ հեռանում իմ հայրենիքից,
Ոտքիս տակ հողն է դառնում անանուն,
Մարդիկ՝ անհաղորդ ու անկարեկից:
Օտարոտել ենք, էլ չենք հասկանում
Ստով բեռնված քայքայող լեզուն,
Եվ ատելությամբ իրար են նայում
Լքված մշակ ու բտված անասուն…
Հույս, հավատ ու սեր տանուլ տվեցի
Խեղկատակների տոնահանդեսում,
Էլ չեն սպասում իմ վերադարձին
Եվ հրաժեշտի խոսքեր են ասում:
Բայց ես ամուր եմ կանգնել իմ տեղում
Խորշակների դեմ անպարտ ու անբիծ,
Իմ հայրենիքն է ինձնից հեռանում,
Ես չեմ հեռանում իմ հայրենիքից…

Գերագույն մեղքին ու մեղավորներին դեմ-հանդիման՝ Մանուկյանի պոեզիայում բարձրանում են գերագույն առաքինությունն ու առաքինիները՝ սրբազնագույն ցավի ու հպարտության իդեալակիր հերոսները, որոնցից մեկն էլ բանաստեղծի որդին է, ում կերպարը՝ որպես քնարական հերոս, երբեմն բարձրանում է տողերի խորքից՝ երևան բերելով բանաստեղծի խոր ողբերգությունը.

Կրակահերթ է,
Հրո շքերթ է,
Գայլը ոռնում է,
Փախչում է չուն,
Արյունն է ծորում,

Ցա՛վում է վերքը,
Բայց նա բարձունքից
Չի՛ նահանջում:
Ետևում գյուղն է,
Իր սուրբ մատուռն է,
Ինքը սահմա՛նն է
Հայրենիքի,
Հսկում է՝ որպես
Իր մեծ տան դուռը,
Ուր ամեն ոսոխ պիտի ծնկի՛….

Պատերազմի ողբերգահերոսական պատկերի մեջ՝ կենդանի ու չմիջնորդավորված, կերպավորվում է վեհության մարմնացում Հերոսը՝ վիրավոր, արնաքամվող, բայց անսասան ու աննահանջ՝ դիրքը պահելիս մինչը վերջին շունչը.

Շունչն է ծանրանում,
Բայց դեռ կարող է
Վերջին լարումով
Հարվածը տա՛լ,
Նա պիտի
Պահի՛ հայրենի հողը,
Մինչև ետնից ջոկատը գա….

Խաչիկ Մանուկյանը վավերական պահի բացառիկ ճշգրտությամբ է վերակերտում գեղարվեստական պատկերը: Նրա կերտած բանաստեղծական պատկերները նկարագրական արվեստով, անմիջական շնչով, հոգեբանական խորքերով ասես կենդանի շարժանկար են՝ պահի մեջ տեսագրված, որքան իրական, նույնքան էլ ոգեղեն: Պատկերն այնքան առարկայական է ու տեսանելի, ասես աչքիդ առաջ է, ու զգում ես այն բոլոր նյարդերով: Ահավասիկ պատերազմական մի ուրիշ պատկեր.

Սուրու՛մ են,
Շաչու՛մ են,
Պայթու՛մ են արկերը,
Պարելով բերում են
Կրա՛կ ու մա՛հ.
Երկնքից կանչում է
Հրազարդ լապտերը,
Կարմրածոր պատկերներ
Կշաղի հիմա….

Սա ճակատամարտի գեղարվեստական անընստգյուտ մի պատկեր է, գոյամարտի հոգեբանական վերապրման կուլմինացիոն պահ: Ասես լսում ես պատերազմի շառաչը, հակառակ ճակատից սուրացող արկերի պայթյունը,

որոնք, երկնքում ծիր կապելով, տեղում են իբրև մահաբեր անձրև, ու շուրջբոլորը չարակամորեն վառվում է կարմիր գույներով ու պատկերներով.

Կանգնե՛լ են քաջերը,
Մահաբեր անձրև է,
Շրխկան մտրակը
Իջնում է վա՛ր,
Բայց քաջի՛ ոգու դեմ
Մահը պապանձվե՛լ է,
Մահվանը հաղթե՛լ է
Զինվո՛րը հայ:

Պատկերակերտման արվեստը, բանաստեղծական ռիթմը, խոսքի հրեղեն տարերքը, ամեն ինչ այնքան ճշգրտորեն փոխլրացնում են իրար, ասես անմիջականորեն տեսնում ես հրաձուփ պատկերը, ներկա ես գործողությանը, հիանում ես մարտնչող քաջերով, որոնց դեմ մահն էլ է անզոր: Պատերազմի ահեղաշունչ պատկերները, հերոսացող քաջերը, ողբերգականն ու վեհը Մանուկյանի պոեզիայում հառնում են ամբողջ հասակով, պատկերանում ողջ տարողությամբ: Բանաստեղծական պատկերներին առանձին գրավչություն են հաղորդում ոչ միայն պատկերակերտման շուքը, խոսքի տեմպը, այլև բաղաձայնույթներով տարահնչող ներքին երաժշտականությունը: Մեկ՝ պ-երի բաղաձայնույթը՝ որպես պայթյունի ձայնապատկեր, մեկ՝ կ-երի բաղաձայնույթը՝ որպես կարմիրի կամ կրակի գունապատկեր, մեկ՝ մ-երի բաղաձայնույթը՝ որպես մահվան տեսլապատկեր, ուժգնացնում են բանաստեղծության թողած ազդեցությունը, ստեղծում զինվորական խրոխտ համանվագի տպավորություն:

Պատերազմի հոգեբանական հետագծերը տարբեր են Մանուկյանի պոեզիայում. կողք կողքի են հերոսականն ու ողբերգականը, վիշտն ու հպարտությունը, հիացմունքն ու ցավը: Տարբեր է նաև գեղարվեստական ոճը: Պատկերը և ոգին, տրամադրությունն ու եղանակը, հոգեվիճակն ու ինքնարտահայտման ձևը միշտ ներդաշնակ են իրար.

Խոցված թռիչքներ, հայացքներ հատու,
Պատանեկության բյուր թվականներ,
Կյանքը թողեցին հաղթական մարտում,
Որպես Հիսուսի անմահ վկաներ....
Աշխուժացել է մահն այս կողմերում,
Բայց շուտով լույսը պիտի վարարի,
Լքված դիերը չեն թաղվում հողում
Անսուրբ մարդակեր վայրի ցեղերի....

Բանաստեղծը կանգնած է ահեղ պայքարի կենտրոնում, որովհետև հայրենիքի գոյամարտից հեռու մնալը համահավասար է ինքնաոչնչացման,

նաև որովհետև այդ գոյամարտին նա տվել է իր կյանքից առավելագույնը, ու հիմա այլևս հետ պահող չկա.

Հիմա, երբ որդիդ սահմանին է,
Հիմա, երբ ռումբեր են պայթում,
Երբ ամեն զինվորի վերքից
Նաև քո արյունն է կաթում-
Չե՛ս կարող երազին կուլ գնալ,
Չե՛ս կարող չմնալ արթուն-
Նրա հետ կռվե՛լ աննահանջ,
Նրա հետ հաղթե՛լ մարտում:

Մանուկյանի գոյամաքառումի պոեզիայում գլուխգործոցային բանաստեղծություններ շատ կան, բայց առանձնանում է նաև մեկը՝ որպես իր տեսակի մեջ երգ երգոց: «Գոյամարտ» բանաստեղծությունն է դա, երեկվա, այսօրվա ու վաղվա բոլոր գոյամարտերի մշտնջենական երգ երգոցը.

Բարձունքը մերն է, տողերքը՝ չկան,
Տողերքն ավելի բարձրում մնացին,
Դիպան աստղերին, աստղերը հանգան,
Ու մրմուռ քսվեց մեր ցամաք հացին:
Շահեցի՞ր, երկիր, թե՞ կորցրեցիր-
Բարձունքը մերն է, տողերքը… չկան:

Հոգեբանական ինքնաքննության մտասևեռումին՝ *«Ձեր կյանքի հաշվին ո՞նց եմ ապրելու….»*, հաջորդում են հայրենիքին ուղղված այսպիսի խոհեր. *«Հողդ չեմ տեսել, ցավդ չեմ կիսել, // Չեմ դարձել զոհ քո հաղթության համար….»:* Սա այն է, ինչ կոչվում է հայրենիքի ու նրա բանաստեղծ որդու միագոյություն կամ ես-ի և դու-ի համամիություն. *«Ու որ իմն ես դու, ու որ քոնն եմ ես….»:* Սա այն է, ինչ կոչվում է պոեզիայի մարգարեություն. *«Ու իմ արյունը՝ քեզ սպեղանի….»*: Պտտվում է կյանքի կարուսելը. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց….»[1]: Այո՛, ոչ միայն իր արյունը՝ իբրև սպեղանի, այլև՝ իր արյան արյունը, ոչ միայն իր կյանքը, այլև՝ իր կյանքի կյանքը.

Քեզ հիմա նայում եմ՝
Իմ Որդին ես,
Արցա՛խ,
Հաղթական իր պատկերն է
Դեմքիդ….

Խաչիկ Մանուկյանի պոեզիան մեր ազգային վերջին կորուստների ու ողբերգությունների հոգևոր պատմությունն է, ազգային կործանված երազանքների ու խորտակված հույսերի բանաստեղծական մատյանը, որը,

[1] Նոր կտակարան, Հովհաննես 3:16:

սակայն, երբեք ողբագիրք չի դառնում: Այն պայքարի ու հարության, հաղթանակի ու գոյատևության բանարվեստ է՝ ստեղծված հզոր տաղանդով և հրեղեն ոգով.

Մորմոք չէ այլևս, ոչ էլ՝ ցավ,
Իմ երկիր, ծխացող վերքը քո.
Արցունքիս ղողանջը խլացավ,
Շիկացավ արևիդ կրակով:
Դու հիմա պայծառ ես առավել
Եվ հոգով զորավոր ավելի,
Քեզ լույսի կավից են արարել
Ու փռել աշխարհի խավարին:
Ու թեև բյուր հազար վերքեր են
Տրոփում հոգուդ մեջ արնաքամ,
Բայց էլի հնչո՛ւմ են երգերդ,
Շաչում են սրերդ հաղթական….

«Ինձ չմոտենաք, ես ներսից թաց եմ….» տրամադրություններով մորմոքվող բանաստեղծը բերում է արևի կրակով շիկացած ոգի, «արնոտ բագին» Հայաստանը դառնում է լույսի կավից արարված մի նոր պայծառակերպություն՝ փռված խավար աշխարհի վրա, իշխող են դառնում հնչեղ երգերն ու շաչող հաղթական սրերը: Տրամադրությունների այս անցումը ազդարարում է ոգու հարություն ու գոյության նոր սկիզբ:

Գրականություն

1. «Գրական թերթ», 17. 10. 2020:
2. «Գրանիշ», 24. 01. 2014:
3. Facebook. com.
4. Youtoobe. com.
5. Hayeli. am.

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 26.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

ՀՏԴ 82.09

Գրականություն

Աննա ԵՐԿԱՆՅԱՆ
ՀՊՏՀ-ի լեզուների ամբիոնի դասախոս, բ. գ.թ.
E-mail: annajanyerkanyan@mail.ru

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունները նվիրված են հայոց պատմությանն ու հայ մշակույթի նշանավոր գործիչներին, հայ բանահյուսությանն ու միջնադարյան գրականությանը և արծարծում են արդիական հնչեղություն ունեցող խնդիրներ և տարբեր հարցեր: Հայրենասիրությամբ է ներծծված նրա ստեղծագործության ամեն դրվագ, իսկ թեմատիկան արդիականությունն է՝ անցյալի պատմության ներկայի հետ տարված զուգահեռով և մերօրյա կյանքի մտահոգություններով:

«Գևորգ Դևրիկյանի փոքր արձակը» հոդվածում քննվել են Գ. Դևրիկյանի փոքր կտավի գործերը՝ պատմվածքները: Վերլուծվել են միջնադարյան վկայությունների հիման վրա գրված մի շարք պատմվածքներ, ինչպես նաև արդի խնդիրներ արծարծող և վկայաբանությունների, միջնադարյան հին ու նոր շրջանների սուրբգրային պատմությունների հիման վրա գրված պատմվածքները: Առանձնահատուկ տեղ է հատկացված արդիական թեմայով գրված պատմվածքներին, որոնք ներկայացնում են ժամանակակից կյանքի խնդիրները: Պատմական թեմաներով գրված պատմվածքների հերոսները հայրենի մշակույթի նվիրյալներն են: Այս կերպարները տքնում են հանուն հայկական մշակույթի, հոգևոր արժեքների և կառուցողական արվեստի հարատևության: Ցույց է տրվում այն ընդհանրությունը, որը կա Դ.Դեմիրճյանի, Վ. Խեչումյանի և Գ. Դևրիկյանի պատմական թեմաներով

գրված պատմվածքներում: «Միջնադարյան գրիչ-ծաղկողները Գևորգ Դևրիկյանի ստեղծագործություններում» ենթագլխում փորձել ենք ներկայացնել գրիչ-ծաղկողների գեղարվեստական կերպավորումը ինչպես պատմվածքներում, այնպես էլ պատմավեպերում և հրապարակախոսական երկերում: Ժամանակակից պատմվածքներում պատկերված է 1930-1980 թթ. երևանյան իրականությանը բնորոշ լեզուն՝ մերօրյա իրականությանը բնորոշ շարադրանքով:

Բանալի բառեր՝ միջնադար, պատմվածք, գրիչ-ծաղկող, մշակույթ, տպագրիչ, կառուցող, ինքնություն, ուսուցողական, հոգևոր արժեք:

А.Ерканян

МАЛАЯ ПРОЗА ГЕВОРГА ДЕВРИКЯНА

Произведения Г. Деврикяна посвящены армянской истории и известным деятелям армянской культуры, армянскому фольклору и средневековой литературе. В них поднимаются актуальные проблемы. Каждый фрагмент его произведений пронизан патриотизмом, любовью к отечеству, а тематика произведений отличается актуальностью, проведением параллелей между прошлым и настоящим и обеспокоенностью современными реалиями.

В статье «Малая проза Геворга Деврикяна» нами проведено исследование прозаических произведений малой формы Г. Деврикяна – рассказов. Проанализирован ряд рассказов, написанных на основе средневековой мартирологии, а также рассказы, созданные на основе историй Священного Писания, относящихся к периоду раннего средневековья и нового времени. В статье проведен анализ ряда рассказов, написанных по средневековым мотивам, а также рассказов, поднимающих актуальные проблемы. Жития святых, библейские истории раннего и позднего средневековья также послужили основой для сюжетов рассказов Г. Деврикяна.Особое место отведено рассказам на современную тематику, раскрывающим проблемы современной жизни. Героями исторических рассказов являются лица, внесшие свою лепту в развитие армянской культуры. Это персонажи, ратующие за сохранение армянской культуры, духовных ценностей и конструктивного искусства. В современных рассказах отражен язык ереванской действительности 1930-1980 гг.

с характерным нарративом реального мира указанного периода времени.

Ключевые слова: *средневековый, рассказ, культура, печатник, строитель, личность, писцы-иллюстраторы, познавательный, духовная ценность.*

A.Yerkanyan

"GEVORG DEVRIKYAN'S LITTLE PROSE"

G. Devrikyan's works are dedicated to the Armenian history and the prominent figures of the Armenian culture, the Armenian folklore and medieval literature, they also raise the current issues and various problems. Every episode of his work is imbued with patriotism, and the theme is modernity, in parallel with the presence of the history of the past and with the concerns of nowaday's life. In the article "Gevorg Devrikyan's short prose" were examined Devrikyan's small canvas works - short stories. A number of stories written on the basis of medieval evidence were analyzed, as well as stories that discuss current issues and are written based on mentions, scriptural stories of the old and new medieval periods. In the article we have analyzed a number of stories based on the medieval testimonies, as well as the stories related to the current issues.The biblical stories of the martyrological, medieval, ancient and new periods have also become the subject of Gevorg Devrikian's stories. A special place is given to stories written on a current topic, which present the problems of modern life. The heroes of the stories written on historical themes are the devotees of the native culture. These characters work hard for the duration of Armenian culture, spiritual values and constructive art. Modern stories describe the language typical of the Yerevan reality of the 1930-1980s, with the narration typical of today's reality.

Key words: *medieval, story, Writers-Flourishers, culture, publisher, builder, identity, educational, spiritual value.*

Գևորգ Դևրիկյանի արգասաբեր և բազմաբովանդակ ստեղծագործության մեջ աչքի են ընկնում փոքր կտավի գործերը՝ էսսեները, պատմվածքները և մանկության վերհուշի պատառիկները:

Փոքր արձակի զարգացման գործում անժխտելի էր Դ. Դեմիրճյանի, Ս. Խանզադյանի, Վ. Խեչումյանի, Խ. Գյուլնազարյանի, Մ. Սարգսյանի, Ս. Այվազյանի, Ռաֆայել և Վալտեր Արամյան եղբայրների դերը: 1970-1980-ականների պատմվածքների ժողովածուներն աչքի են ընկնում թեմատիկ

բազմազանությամբ, ժանրի հնարավորությունների ընդլայնմամբ, ազգային մտածողության և հոգեբանության պատկերմամբ:

«Պատմվածքի ճակատագիրը դասավորվեց այնպես, որ այն ժամանակի ու տարածության համեմատաբար փոքր հատվածում պետք է խոսեր կյանքի ու աշխարհի համեմատաբար մեծ երևույթների մասին, դառնալով մարդկության գեղարվեստական հնարավորությունների ամենագեղեցիկ դրսևորումներից մեկը»[1],- նշում է Ն. Ադալյանը:Գևորգ Դևրիկյանի փոքր կտավի գործերը կարող ենք բաժանել 3 խմբի՝ պատմական թեմաներով գրված, արդիական խնդիրներ արծարծող և մանկության պատառիկներ: Պատմական թեմաներով գրված պատմվածքների հերոսները հայրենի մշակույթի նվիրյալներն են՝ գրիչները, ծաղկողներն ու կառուցողները, տպագրիչներն ու քարգործները: Այս կերպարները ջանասիրաբար տքնում են հանուն հայկական մշակույթի, հոգևոր արժեքների և կառուցողական արվեստի հարատևության, նրանք գրի հավերժությունն ու հարատևությունը կարևորող ու պահպանող մարդիկ են:

«Մաքառում» ժողովածուի (1980)՝ «Գիրը մնաց հիշատակող» խորագրի ներքո զետեղված պատմվածքները Գ. Դևրիկյանը գրում է միջնադարյան վկայությունների հիման վրա, որոնք պատկերում են հայ մշակույթի հարատևությունը և դարեր շարունակ ապրելու և արարելու արդար ցանկությունը: Պատմական թեմաներով գրված պատմվածքների համար Գ.Դևրիկյանը բնաբան է ընտրել միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում տարածված «Ձեռս մաշի, դառնա ի Հող, Գիրս մնա հիշատակող» արտահայտությունը: Այն նաև Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» պատմական վիպակի բնաբանն է:

Գ. Դևրիկյանը պատմվածքների նյութ է դարձրել հիշատակությունները, միջնադարյան հին ձեռագրերը, եկեղեցիների ու տապանաքարերի արձանագրությունները: Այս առումով աղերսակցական կապերն ակնառու են Վիգեն Խեչումյանի «Զվարթնոց» պատմվածքների ժողովածուի հետ: Վերջինս իր պատմվածքների համար ևս նյութ է քաղում միջնադարյան վկայություններից, ձեռագիր հիշատակարաններում պահպանված հակիրճ տվյալների հիման վրա Վ. Խեչումյանը կառուցում է ողջ պատումը: Նրա պատմվածքների հերոսներն էլ քարգործներ են, գրիչներ, տպագրիչներ, կառուցող վարպետներ, ոսկերիչներ, մագաղաթ ողորկողներ և մշակույթի նշանավոր գործիչներ:

«Թամղութ պատանին» ստեղծագործության մեջ պատմվում է Վայոց ձորի Գնդեվանքի գրիչ-ծաղկող Հովասափի կրած չարչարանքների և անձնազոհության մասին, ինչպես նաև պատկերվում է, որ նման դժվարին

[1] ***Ադալյան Ն.,*** *Սովետահայ պատմվածքը, Եր., 1968, էջ 230:*

պայմաններում, բազում ձեռագրեր են ընդօրինակվում. «Թող բարի ընթերցողները հիշող լինեն ու գիտենան, թե ինչ դառն օրով ու արյուն-արցունքով են գրվել այս մատյանները, և որքան աղետալի են եղել ժամանակները: Իսկ երկա՞ր են տևելու: Եվ չե՞ն ունենալու վերջ»[1]:

Մի կարևոր հիշատակություն է պահպանված նաև վերոնշյալ պատմվածքում. «Երանի գրիս, որ մնայ կենդանի և աւա՜ղ ձեռինս, որ հողանայ ի գերազմանի»[2] և «Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք գրիս յիշեսջիք յաղօթս ձեր ուսուցիչն իմ ծաղկօղ Յովասափ և Թամղութ պատանին ի գեղջէն Կեչուտ, զնահատակեալսն ի ձեռաց անօրինաց»[3]:

Գ. Դևրիկյանի պատմական թեմաներով գրված պատմվածքների հերոսները պատմության վկաներն են, որոնք իրենց ներկայությամբ ուղեկցում են ներկա սերնդին՝ սովորեցնելով ապրել, չսայթաքել, չսխալվել:

«Մաքառում» ժողովածուի մեջ զետեղված պատմվածքները հավաստում են հայոց մշակույթի հարատևությունը և դարեր շարունակ գիր ու գրականությամբ ապրելու և արարելու հարաշարժությունը: Այստեղ գրողն ակնհայտ խաչաձևում է *արվեստ-մարդ* փոխհարաբերությունը և պատկերում նրա ապրեցնող և վեհացնող ուժը: Գ. Դևրիկյանը լեզվական և պատկերային ոճավորմամբ մոտենում է չափածոյի ստեղծագործական լեզվին, ինչպես Վ. Խեչումյանն է հիշատակարանների տողերի հիման վրա գրում, այնպես էլ այստեղ ասես երգն է պատմվածքայնանում:

Գևորգ Դևրիկյանի պատմվածքների գրեթե բոլոր հերոսները հայ ժողովրդի ոգու, հայրենի մշակույթի, ինչպես նաև մայրենի լեզվի հարատևությունն ընդգծող կերպարներ են. «Բանում ու գծում էր այդպես ինքնամոռաց, ու արդեն թվում էր, թե չէր էլ եղել այդ երկամյա դադարը: Աչազրկության տառապանքն ավարտվել էր, և կրկին ծագել էր Արարչական լույսը»[4]: Պատմական թեմաներով գրված պատմվածքների լեզուն Դևրիկյանը համապատասխանեցրել է պատմվածքի ժամանակաշրջանին՝ օգտագործելով հնաբանություններ, գրաբարյան բառեր և այլն: Քաջատեղյակ լինելով տվյալ շրջանի հանդերձներին՝ դեսպակ, պեպլոս, ստոլա, տունիկա, տոգա, ինչպես նաև զինվորական աստիճաններին՝ նա գործածել է տվյալ իմաստային խմբին վերաբերող տերմինային բառեր: Այս պատմվածքներում Գևորգ Դևրիկյանը ևս մեկ անգամ վերհանում և նորովի իմաստավորում է հայոց պատմության հիշարժան էջերը և գեղարվեստորեն մարմնավորում ժողովրդի անցած ուղին:

---

[1] ***Դևրիկյան Գ.,*** *Մաքառում, Եր., 1980, էջ 27:*
[2] *Նույն տեղում, էջ 25:*
[3] *Նույն տեղում, էջ 32:*
[4] *Նույն տեղում, էջ 56:*

Պատմական թեմաներով գրված պատմվածքները՝ ստեղծված նախօրինակ կերպարներով, նվիրված լինելով հայ ժողովրդի հոգևոր ինքնությանն ու լինելության դարավոր մաքառմանը, ճանաչողական և ուսուցողական բնույթ ունեն: Այս պատմվածքների միջոցով Գ. Դևրիկյանը վեր է հանում ազգային արժեքներն ու հոգևոր մշակույթի կարևորությունը, նպաստում երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակությանը:

Գ. Դևրիկյանի Անիին նվիրված երկու պատմավեպերը համեմատելով միջնադարյան թեմաներով պատմվածքների և միջնադարից դեպի նոր շրջան անցում կատարող «Վիրավոր կռունկ» վեպի, ինչպես նաև խորհրդային տասնամյակներին վերաբերող պատմվածքների հետ՝ տեսնում ենք գրական բարձր վարպետության արտահայտություն եղող հետևյալ իրողությունը: Ոչ միայն յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ բառերն են կիրառված, այլև այսօրվա գրական հայերենի շրջանակում Անիին նվիրված գործերում զգում ենք գրաբարյան շունչը՝ համապատասխան դարձվածքներով ու բառաձևերով: Նույն կերպ ուշ միջնադարին վերաբերող ստեղծագործություններում այդ շրջանի ուրույն հայ բանաստեղծության շունչն է, ուր միջնադարյան չափածոյին գումարվում է պատումին բառաձևերի և վերջածանցների միջոցով 17-18-րդ դարերի լեզվին բնորոշ արտահայտչաձևերով շարադրանքը: Ժամանակակից պատմվածքներում գտնում ենք 1930-1980 թթ. երևանյան իրականությանը բնորոշ լեզուն՝ մերօրյա իրականությանը բնորոշ շարադրանքով:

Գրողի հակումը դեպի պատմությունը գալիս էր փոքր արձակից՝ պատմվածքներից: Միանշանակ ակնհայտ է, որ պատմական թեմաներով գրված պատմվածքներում հեղինակը ներկայացնում է սերունդների փոխկապվածությունը:

Պատմական թեմաներով պատմվածքներից բացի Գ. Դևրիկյանը գրել է նաև ժամանակի իրականությանը վերաբերող այլ բնույթի պատմվածքներ, որոնք հիմնականում արծարծում են հասարակական հնչեղությամբ սոցիալական խնդիրներ: Գևորգ Դևրիկյանի 60-ամյա հոբելյանի շեմին՝ 1997 թվականին, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ լույս է տեսնում «Պատմվածքներ» ժողովածուն: Գրքում զետեղված 14 խորիմաստ պատմվածքները նվիրված են հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններին՝ ներքին մի ուժով կապված լինելով իրար: Գիրքն ունի «Խոսք շնորհակալության»՝ գրված որդու՝ Վարդան Դևրիկյանի կողմից, որտեղ կարդում ենք. «Գրքում զետեղված պատ-մըվածքները թեև նվիրված են մեր ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներին և իրադարձություններին, ունենալով թեմատիկ լայն ընդգրկում Աբգար թագավորից մինչև մերօրյա հայոց նոր

ազատամարտը, սակայն ներքին մի ընդհանրությամբ իրար են կապվում, որովհետև բոլորն էլ նվիրված են հանուն հոգևոր ինքնության և ազգային ազատ ու հպարտ լինելության մեր ժողովրդի մղած դարավոր մաքառմանը»[1]:

«Հավատի զորությունը» պատմվածքը[2] այս ժողովածուի առաջին պատմվածքն է՝ նվիրված հայոց Աբգար թագավորին: Գ.Դևրիկյանը պատմվածքը գրել է՝ սկզբնաղբյուր ունենալով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որտեղ ներկայացված է ոչ միայն Անձեռակերտ պատկերի պատմությունը, այլև բերված է որպես թե Աբգարի և Քրիստոսի միջև եղած թղթակցությունը: Վերջինս առավել մարդկայնությամբ և հուզականությամբ է պատկերված Գ.Դևրիկյանի ստեղծագործության մեջ, որտեղ Աբգարը ուժեղ թագավորի և հոգնատանջ մարդու հոգեբանական ներքին հակա-սականությամբ է դիմում Փրկչին. «Երբ այս ամենը քո մասին լսեցի, մտքումս դրի այս երկուսից մեկը՝ կա՛մ որ դու Աստված կլինես, որ երկնքից իջել ես և այս բաներն անում ես, կամ Աստծու որդի կլինես, որ այդ անում ես: Այս պատճառով քեզ գրեցի, աղաչելով, որ նեղություն կրես, գաս ինձ մոտ և բժշկես իմ ունեցած հիվանդությունները»[3],- Մովսես Խորենացու հետևողությամբ գրում է Գ.Դևրիկյանը: Աբգարի և Քրիստոսի նամակագրությունը կարելի է անվանել միջնադարյան թղթի ժանրի նորօրյա վերարտադրություն:

Եդեսիա քաղաքի ու Հայոց Միջագետք երկրի տերը՝ Հայոց Աբգար արքան, բորոտությամբ անբուժելի հիվանդ է, որը նա ձեռք է բերել պարսից դեմ պատերազմներում՝ երկրի ինքնիշխանության համար. «Այժմ իրեն ոչ թե Աբգար Հայոց թագավոր են անվանում, այլ սև Աբգար թագավոր»[4]:

Այս հիվանդությամբ տառապող մարդիկ պետք է ապրեն քաղաքից հեռու մի վայրում: Պատկերելով Աբգար թագավորի բորոտությամբ հիվանդ լինելը՝ Գ. Դևրիկյանն այդ ախտը զուգադրում է մարդկության հոգու հիվանդության հետ, որը կբուժվի միայն Աստծուն ապավինելու դեպքում: Հեղինակը հավաստիացնում է, որ հավատի զորությամբ և Աստծո նկատմամբ մեծ սիրով կմաքրագործվի մարդը. «Հույսն ու հավատը մեծ ուժ են: Հավատն իր ուժով միայն հավատի հետ կարող է համեմատվել, և այս լույս աշխարհում ավելին չկա: Մարդկային այդ մեծ հավատը»[5]:

Անբուժելի արքան հիշում է փառահեղ անցյալը, մտաբերում պատիվն ու փառքը Հռոմում՝ Ցիրկուս Մաքսիմուս կրկեսում, վայրի գազանների հետ

---

[1] ***Դևրիկյան Գ.,*** *Պատմվածքներ, Ս. Էջմիածին, 1997, էջ 3:*
[2] *Վերոնշյալ պատմվածքի մասին առավել ամբողջական վերլուծություն տե՛ս «Հայրենասիրության պատգամաբերը», էջ 72-85:*
[3] ***Մովսես Խորենացի,*** *Հայոց պատմություն, Եր., 1990, էջ 20:*
[4] ***Դևրիկյան Գ.,*** *Պատմվածքներ, Էջ 4:*
[5] *Նույն տեղում, էջ 21:*

մենամարտը, իմաստությամբ և քաջությամբ տարած հաղթանակը: Հայրենասեր և մարդասեր թագավորը սերունդներին ավանդում է սիրել հայրենի հողն ու ջուրը, կարեկից լինել մարդկանց:

«Հոգու վերածնությունը» պատմվածքում Մոմիկ վարպետն արդեն ծերացել է, սակայն շարունակում է Ավետարան օրինակել: Գեղարվեստական նմանօրինակ կերպարային համակարգի ստեղծումը Գ. Դևրիկյանի փոքր արձակի յուրահատուկ առանձնահատկությունն է: Մոմիկ վարպետը մյուս կերպարների նման ապրում է, զգում և երազում հոգու վերածնության մասին:

Հոգեբանական կերտված դևրիկյանական կերպարները նկարագրվում են անձնական ապրումների ողջ զգացական դաշտով: Պատմվածքում կույր վարպետի ապրումներն են, կյանքի անցողիկության, հոգու անմահության և վերածնության մասին: «Լավ է կույր աչոք, քան կույր մտոք»,- մտորում է վարպետը,- «Աչքերս ժողովրդիս էին հարկավոր, Տե՛ր, որ նոր կառույցներ արարեի՝ տաճար ու եկեղեցի, մատուռ ու քարե խաչ»[1]: Աչքերի լույսը կորցրած վարպետը հոգու աչքերով էր լույսը տեսնում և հավատում հոգու վերածնությանը:

««Մատյանը փրկության» ասքում Գ. Դևրիկյանը շարունակում է համառ մի նվիրումով լույս, հավատ ու ոգի որոնել ազգի հարատևման դժվար ճանապարհին: Եվ ամենից ավելի՝ հին ու միջին դարերի որոգայթներում, որոնել, գտնել և արվեստի ուժով վերստին հաստատել այն ճշմարտությունը, որ լույսն անմարելի, ուժը հավատավոր, ոգին անթեղ և գիրը մայրենի ազգի դարավոր մաքառումների արմատն ու էությունն են եղել, ու դրանցով է նա ապրել և հարատևել»[2],- գրում է Լյուդվիգ Կարապետյանը:

Հեղինակն արտահայտում է այն գաղափարը, որ հայ ժողովուրդն իր կենսունակությունը պահպանել է ոչ միայն հերոսամարտերով, այլև կյանքի սիրով, աշխատանքի և գեղեցիկ արվեստի պաշտամունքով:

«Անկախություն՝ տենչանք-նպատակը մեր» պատմվածքում հայ ժողովրդի պատմության գիտակ Գ. Դևրիկյանը ևս մեկ անգամ պատկերում է Գլաձորի համալսարանը, Եսայի Նչեցու ազգապահպան գործունեությունը, գիրք ծաղկողների տքնաջան աշխատանքը: Փոքրիկ այս պատումն արդեն ավետում է գրողի տարիների երազանքը՝ անկախություն, որն առանց մայրենի լեզվի լավ իմացության գրողը չի պատկերացնում. «Ուրեմն մեր մայր լեզուն է հիմքը մեր անկախ մտածողության, որ ունեցել ենք Հայկ մեր Նահապետից սկսած, և մայր լեզուն է հիմքը հանուն անկախության մեր

---

[1] *Նույն տեղում, էջ 53:*

[2] ***Կարապետյան Լ.,*** *Հայացք արմատներին, «Հայաստան», հոկտեմբերի 4, 2002, էջ 3:*

պայքարի: Ու գիտցե՛ք ընդմիշտ. թե մեկը օտար լեզվին է ստրկանում և մոռանում է պայքարը հանուն անկախության»[1]:

Արդեն 1990-ականների սկզբներին գրված պատմվածքներում Գ. Դևրիկյանը պատկերում է մերօրյա իրական կյանքն իր բոլոր լուսավոր և մռայլ կողմերով: Պատերազմի ցուրտ ու մութ օրերի անկյունից Գ. Դևրիկյանը «Իմ հոգու լույսը» պատմվածքում մի նուրբ շեշտադրումով ընդգծում է հոգու լույսի վերհառնումն ու անէացումը: Մթին խավար է շուրջը, բայց սարսափելին հոգու լույսի անդառնալի կորուստն է: Շուտով գրողը հաղթում է խավարին. «Հաղթել էի խավարին և հոգուս մեջ ճառագած իմ իսկ հոգու լույսով վերագտել էի հույսս»[2]:

«Կարոտի երգը» պատմվածքում դարձյալ ականատես ենք լինում հոգեբանական ներսուզումների: Սուր դիտողականությամբ Գ. Դևրիկյանը նշմարում է կարոտի տարրալուծումը և հայի վրեժի դարավոր կանչով պատկերում պապի՝ հոգու մեջ ամրացած տխուր երգերը: «Կարոտ»՝ հային բաժին ընկած այս զգացումը դեռ երկար կպատկերվի հայ գրականության մեջ, քանի դեռ կա և մնում է տարագիր հայը, հայրենի եզերքն օտարին թողած հայը. «Կարոտը միշտ էլ ծննդավայրի ճամփան կգտնի, քանի տարի էլ անցնի: Կգտնի քանզի կարոտն ամենաերկարակյացն է և տարիք չունի»[3]:

Այս պատմվածքում էլ Գ. Դևրիկյանին հաջողվել է հայրենի եզերքի կարոտը երգող պապի կերպարը դարձնել տպավորիչ ու անկեղծ: Կորցրած հայրենի եզերքը, վիրավորանքն ու անարգանքը սրտում պահած պապը չի ցանկանում նույն ապրումները փոխանցել սերունդներին:

«Մռավի որդիները» պատմվածքում ուսուցչուհի Մկրտչյանը չի լքում հարազատ գյուղը՝ չցանկանալով գաղթական դառնալ: Վերջինս միանում է հայրենիքի համար պաշտպան կանգնած Մռավի տղաներին, որոնց համար հայրենիքի պաշտպանությունը սրբազան ուխտ էր. «Մեր ուխտն էր Հայրենիքը և հավատը՝ Հաղթանակը: Մենք Հավատի համար զոհվեցինք, որ չմեռնի ու փոխանցվի մյուսներին»[4]:

«Մարեն» պատմվածքի հերոսները գաղթը վերապրած մարդիկ են, որոնք ամեն կերպ փորձում են վերահաստատվել, ապրել և արարել հայրենիքի մյուս հատվածում՝ կարոտի վերքը վառ պահելով սրտում: Պետք է հավաստիացնել, որ, իսկապես, Գ. Դևրիկյանի հերոսների հոգեբանական հատկանիշները պատմվածքներում փայլուն են նկարագրված: Այստեղ վերհանված են այդ կերպարների հոգեկան ողջ գեղեցկությունը, ապրումները, զգացումներն ու հույզերը:

---

[1] ***Դևրիկյան Գ.,*** *Պատմվածքներ, էջ 46:*
[2] *Նույն տեղում, էջ 127:*
[3] *Նույն տեղում, էջ 135:*
[4] *Նույն տեղում, էջ 123:*

«Մանկության տունը» պատմվածքի հերոսը հիշողությամբ ամուր կառչած է մանկությանը: Տարիներ են անցել, սակայն վերջինս հիշում է իրենց հին տան ամեն անկյունն ամենայն մանրամասնությամբ: Հայրենի տան կարոտը, Ակն քաղաքի հիշողություններն անընդմեջ ուղեկցում են ծերունուն: Վերջինս ամենաթանկ բանը, որ թողնելու է թոռներին, հենց իր մանկության տան կարոտն է լինելու: Ժամանակի և տարածության գրողի պատկերացումները իմաստավորվում են ամենատարբեր կտրվածքներով: Մերթ հայրենի տան հիշողություններ, մանկության տան կարոտ, մերթ իրական կյանքի պատկերների համադրությամբ գրողին հաջողվում է ստեղծել անզուգական պատկերներ:

«Իմ կնքամայրը» պատմվածքում էլ հերոսները հաճելի հիշողությամբ կապված են մնում հայրենի եզերքին ու մանկության հիշողություններին: Պատումում ակնհայտ է մարդկանց միջև անկեղծությունն ու հոգատարությունը, միմյանց կարեկցելու պատրաստակամությունն ու ջերմ վերաբերմունքը:

Այս պատմվածքների հերոսների կենսատարածքը նույնն է, տարբեր են ապրումներով ու ծանր կյանքը յուրովի ապրելու և հոգսերն ավելի թեթևացնելու մեծ համառությամբ: Նրանք անցել են պատերազմի բովով, անցել են հիվանդության, հուսահատության, հիասթափության ճանապարհներով, սակայն երբեք չեն ընկճվել ու հույսը կորցրել՝ միշտ ունենալով պայծառ գալիքի սպասում: Այս բոլոր հերոսներն էլ կյանքի հարուստ փորձ ունեն, ծանրակշիռ ու հոգսաշատ մարդիկ են: Նրանք շարունակում են ապրել անցյալի ծանրության տակ՝ չխեղաթյուրելով ներկան: «Անցման շրջան» պատմվածքի հերոսներն ապրում են նույն իրականության մեջ՝ պատերազմ, հացի հերթ, մութ ու ցուրտ տարիներ: Ուսուցիչն անտրտունջ մենակ կրում է ընտանեկան կյանքի բեռը, մինչդեռ առևտրականն ապրում է անտրտունջ: Գրետխենի և ուսուցչի կերպարները երկու ծայրահեռ կողմ են ներկայացնում. մեկի համար կարևոր է հայրենիքը, հոգևոր վեհ արժեքները, մյուսի համար էլ սեփական կուշտ ստամոքսը: Երկխոսություններից բացահայտվում է հերոսների էությունը, մտածելակերպը, պատերազմի մասին պատկերացումները.

-Իսկ Ձեր թոռն ինչ-որ չի երևում, բիզնեսո՞վ է զբաղվում:

-Արդեն մի տարի է, Արցախում է:

-Գնացել է թալանի՞-քմծիծաղ տվեց դիմացինը:

-Ոչ, կռվելու,-մի կերպ արտաբերեց ուսուցիչը:

-Բոլորն էլ այդպես են ասում, բայց իրականում թալանի են գնում: Թե չէ ո՞ւմ դարդն է կտրվել, որ դարաբաղցիների համար կռվի:

- Հայ ժողովրդի,-մի կերպ ուղղեց ուսուցիչը [1]:

Հեղինակը, ապրելով նույն ժամանակահատվածում, այս պատմվածքում ավելի ակնառու է դարձնում փոխված բարքերն ու սովորությունները, պատկերում արդեն արմատավորված օտարամոլությունը, հասարակության կողմից հայրենիքի ու հայրենասիրության, ուսուցչի ու գիտնականի մասին արժեզրկված պատկերացումները:

Գ. Դևրիկյանն իր ուժերը փորձեց նաև մանկական գրականության ասպարեզում: «Մանկության տունը» ժողովածուում զետեղված պատմվածքները քաղցր վերհուշ են մանկությունից: «Ահա հասավ Նոր տարի», «Մերոնք», «Որդիների լուսանկարը», «Դեղերը», «Ամենազորը», «Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ թարմ էին վարդերը…», «Նավերը», «Ամենաքաղցր տարիները», «Կյանքի ճշմարտությունը», «Ընկեր Անիկը», «Իմ բախտի Աստղը», «Իսկական տերերը», «Ամենաքաղցր տարիները», «Մեր հույսի պարտեզը» պատմվածքներում Գ. Դևրիկյանի մանկության անմոռանալի տարիներն են, մի փոքրիկ պատառիկ գրողի մանկությունից ու պատանեկությունից: Վերոնշյալ պատմվածքների միջոցով գրողը մշտապես կենդանի է պահում իր հարազատներին, ազգականներին, ուսուցիչներին, դասընկերներին և խաղընկերներին:

Նյութը ներկայացվել է 12.05.2023,
գրախոսման է ուղարկվել, 26.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ
գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

[1] *Նույն տեղում, էջ 113:*

ՀՏԴ 82.09

Գրականություն

Լուսյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ
E-mail: harutyunyanlusya@gmail.com

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՀԱՎԱՏՉՅԱ

Հոդվածում հեղինակը ներկայացնում է 1876 թվականին Կ. Պոլսում՝ Հակոբ Պարոնյանի խմբագրած «Թատրոն. Բարեկամ մանկանց»-ի ստեղծման դրդապատճառների հանգամանալից քննությանն ու պարբերականի թողած ազդեցությանը արևմտահայ մանկապատանեկան գրականության համապատկերում:

Հոդվածագիրը շեշտադրում ու երևան է հանում պատմական հանգամանքների բերումով Կ. Պոլսում ապրող արևմտահայ երեխաների հայրենասիրական դաստիարակության համար ստեղծված անբարենպաստ պայմաններն ու խոչընդոտները, որոնք անմիջական հետևանքն էին հայերի հանդեպ Թուրքիայի վարած անմարդկային քաղաքականությանը: Զուգահեռաբար քննվում է Պարոնյանի՝ մանկագրությամբ ասպարեզ գալու ամենահիմնական դրդապատճառները և թե ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված երգիծաբանությունից՝ մանկագրություն անցումը:

Պատճառահետևանքային մանրամասնությունների բացահայտման կողքին հոդվածում մատնանշվում է նաև այն դրույթները, որոնց շնորհիվ «Թատրոն. Բարեկամ մանկանց» պարբերականի ստեղծումն ու գոյությունը իրենց նպաստը բերեցին ոչ միայն օտարության մեջ

ապրող հայ երեխաների հայեցի կրթությանն ու դաստիարակությանը, այլև մանկագրության զարգացման ուղղությամբ ունեցած դրական ազդեցությանը:

XIX դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում բնակվող հայության ծանր կացությունը, ժամանակի քաղաքական խրթին իրադրության հանգամանքները, ազգի դաստիարակության ու մայրենիի պահպանության հիմնահարցերը, ինչպես նաև սպառնացող ձուլման մտահոգիչ վտանգը կանխազգալով՝ Հ. Պարոնյանը հանձն առավ ու ջանք չխնայեց հայկական մանկական գրականություն ստեղծելու համար:

Վերոգրյալ նկատառումները անհրաժեշտաբար հիմնավորում ու երևան են հանում մի կարևոր մտահանգում, որ «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ստեղծման շարժառիթը եղել է միմիայն ազգային շահը հետապնդելը, ինչը լիովին արդարացնում է պարբերականի գոյության նպատակները:

Բանալի բառեր՝ *«Թատրոն. բարեկամ մանկանց», Կոստանդնուպոլիս, ազգասիրություն, հայրենիք, հայ ժողովուրդ, քրիստոնյա, մանկական գրականություն, ազգային գաղափարախոսություն:*

Լ. Արտյոնյան

НЕОБХОДИМОСТЬ СОЗДАНИЯ «ТЕАТР, ДРУГ ДЕТЕЙ» АКОПА ПАРОНЯНА КАК ОРИЕНТИРА РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНЫЙ ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ

В статье автор представляет тщательное изучение мотивов создания журнала «Театр, друг детей» под редакцией Акопа Пароняна в Константинополе в 1876 году и влияния журнала на обзор западноармянской детской литературы.

Автор статьи подчеркивает и выделяет неблагоприятные условия и препятствия, созданные для патриотического воспитания западноармянских детей, проживающих в Константинополе, в силу исторических обстоятельств, явившихся прямым следствием бесчеловечной политики Турции по отношению к армянам. Параллельно рассматриваются самые основные мотивы появления Пароняна в области детской литературы и какие

обстоятельства послужили причиной перехода от сатиры к детской литературе.

Помимо раскрытия причинно-следственных деталей, в статье также указываются положения, благодаря которым создание и существование периодического журнала «Театр, друг детей» способствовало не только армянскому образованию и воспитанию армянских детей, проживающих в чужой среде, но и положительному влияние на развитие детской литературы.

Тяжелое положение армян проживающих в Константинополе во второй половине 19 века, обстоятельства сложной политической ситуации того времени, проблемы образования нации и сохранения родного языка, а также предчувствие тревожной опасности надвигающейся ассимиляции, навели Акопа Пароняна на мысль о создании армянской детской литературы, над которой он работал не жалея сил, со всей ответственностью.

Вышеприведенные соображения обосновывают и раскрывают истинные цели создания периодического издания <<Театр, друг детей>>: мотивом создания были национальные интересы, что полностью оправдывает цели существования журнала.

Ключевые слова: *«Театр, друг детей», Константинополь, патриотизм, родина, армянский народ, христианин, детская литература, национальная идеология.*

L. Harutyunyan

“THEATRE: FRIENDS TO CHILDREN” BY HAKOB PARONYAN AS AN ESSENTIAL FACTOR OF NATIONAL JUVENILE LITERATURE DEVELOPMENT

In the article, the author presents a thorough examination of the motivations for the creation of the periodical «Theatre: Friend to Children» by Hakob Paronyan in Constantinople in one thousand eight hundred seventy-six, and the impact of the periodical on Western Armenian juvenile literature.

The author of the article emphasizes and highlights the unfavorable conditions and obstacles created for the patriotic education of Western Armenian children living in Constantinople due to historical circumstances, which were the direct consequence of Turkey's inhuman policy towards Armenians. In parallel, Paronyan's main motivations for entering the field of juvenile literature and the circumstances leading to the transition from satire to juvenile literature are examined.

In addition to revealing the cause and effect details, the article also points out the provisions due to which the creation and existence of the «Theathe. Friend to children» periodical contributed not only to the Armenian education and upbringing of Armenian children living abroad, but also to the positive impact it had on the development of juvenile literature.

At the second half of the 19th century, anticipating the difficult situation of the Armenians living in Constantinople, the circumstances of the difficult political situation of the time, the obstacles of educating the nation and preserving the mother tongue as well as the worrisome threat of assimilation, H. Paronyan took responsibility and spared no effort in starting Armenian juvenile literature.

The above-mentioned considerations reveal an important inference that the motive of starting "Theatre: Friend to Children" pursued only national interest, that fully justifies the goals of the periodical's existence.

Key words: *"Theatre: Friend to Children", Constantinople, patriotism, homeland, armenian people, christian, children's literature, national ideology.*

Հ. Պարոնյանի գրական գործերի ամբողջությունը հայ ժողովրդին անցյալից կտակված ազգային ինքնատիպությունը բնորոշող ժառանգություններից է: Երգիծաբանի անունն իր մահվանից շուրջ հարյուր երեսուներկու տարի հետո էլ բնավ չի սպառել իրեն և նույնիսկ ավելին՝ չի կորցրել իր անձի ու ստեղծագործության նկատմամբ ուշագրավությունը, ազգապահպան գաղափարախոսության արդիականությունն ու հնչեղությունը: Առհասարակ, ստեղծագործողը որքան էլ հանրահռչակ ու գրական արժեքով նշանակալի համարվի, միևնույնն է, նրա վսեմության ու հեղինակության գրավականը իր հարազատ ժողովրդի համար ստեղծվող ազգային գրականությունը սեփական ազգի շահերին ծառայեցնելն է, ի նպաստ դրա բարգավաճմանն ու առաջադիմությանը:

Գրական տարբեր շրջանակներ ցայսօր վերստին նոր վերաբերմունքով և չափանիշներով են փորձում բազմակողմանիորեն քննել Պարոնյանի ստեղծագործության «ստվերում թաքնված», բայց անհարժեշտաբար գոյության կոչված բաժինը՝ մանկագրությունը: «Ինչպես հայ գրականությունն ընդհանրապես, այնպես էլ նրա մանկական «զավակը» այդ տասնամյակներում,- նկատում է գրականագետ Լ. Կարապետյանը,- հասունության այս շրջանն ապրեց հասարակական-քաղաքական-տնտեսական նոր հարաբերությունների, մեր ժողովրդի կյանքում տեղի

ունեցող մեծ իրադարձությունների պայմաններում, որոնք, հասկանալի է, իրենց հիմնավոր կնիքը դրեցին նրա զարգացման ընթացքի վրա, և որոնց նա յուրովի արձագանքեց իր վերելքի ճանապարհին»[1]:

Ազգասիրության բացառիկ դրսևորում է սքողված «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի լույս ընծայման նպատակադրման հիմքում: Տակավին մեր ժողովուրդը չի դադարում Պարոնյանին սոսկ որպես երգիծաբանության ասպարեզի վրա «փայլող» կարկառուն ներկայացուցչի ընկալել և գուցե վերջինիս խմբագրած առաջին հայերեն մանկական պարբերականը մանկական հանրագիտարանի տպավորություն է ստանում, սակայն այն իր հարկադիր ստեղծման հարկավորությամբ մի նոր արդեն բացված էջ է պարոնյանագիտության ուսումնասիրության պատմության մեջ: «Թուրքական իշխանություններն արևմտահայ մամուլին վերաբերվել են իբրև ազգային ինքնագիտակցության գործոնի, այդ իսկ պատճառով իրենց բոլոր կարելիություններով խոչընդոտել ու խափանել են նրա բնականոն գործունեությունը: Այսուհանդերձ, հայ մամուլը օգտագործել է իր սահմանափակ հնարավորությունները՝ քննադատական ու ճանաչողական բնույթի հրապարակումներով հասարակական միտքն առաջ մղելու համար»[2]:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ի հրատարակման շարունակականությամբ պայմանավորված ի հայտ եկած խոչընդոտները շրջանցելով՝ Պարոնյանը, այնուամենայնիվ, երգիծաբանությունից դեպի մանկագրություն սահուն շրջադարձ կատարեց: Այս կտրուկ բեկումը բնավ ո՛չ պատահականություն էր և ո՛չ էլ հպանցիկ բնույթ էր կրում, այլ արտահայտում էր մի ամբողջ ժամանակաշրջանի հայության ապագայի հարցերով մտահոգ մտավորականի դիրքորոշում: Իրարամերժ այս երկու հասկացությունների՝ մեկից մյուսին կտրուկ անցումը բացահայտում է Պարոնյան հրապարակախոսի ճշմարիտ ազգասիրությունը: «Ռուս-թուրքական պատերազմի հետ կապվող անցքերը,- համոզված է պատմաբան Ա. Խառատյանը,- ակտիվացրեցին խորհրդարանի օպոզիցիայի, այդ թվում և քրիստոնյա երեսփոխանների ընդդիմադիր տրամադրությունները: Պատերազմի ժամանակ սկսեց կիրառվել արևտահայերին տնտեսապես ծայր աստիճան կեղեքելու և ապա կանոնավոր զորքերի ու բաշիբոզուկների միջոցով նրանց բնաջնջելու օսմանյան պետական քաղաքականությունը: Օսմանյան խորհրդարանում առաջ քաշվեց հայերի հանդեպ քրդական վերնախավի վարքագծի հարցը.

---

[1] ***Կարապետոյան Լ.,*** *Հայ մանկապատանեկան գրականությունը XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին, Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, թիվ 2, էջ 178:*

[2] ***Զատիկյան Գ. Ե****, Արևմտահայ պարբերական մամուլի իրավական կացության պատմությունից (1860-1870-ական թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2006, թիվ 3, էջ 207:*

առաջին անգամ հրապարակավ հայտնվեց, որ թուրքական կառավարությունը որդեգրել է հատուկ քաղաքականություն՝ այդ ուժը հանել հայերի դեմ և սրա ձեռքով իրականացնել Հայաստանը հայերից դատարկելու ծրագիրը»[1]:

Ի՞նչ հիմնավորմամբ ենք իրավացի համարում մեր այն պնդումը, թե «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի հրատարակման ձեռնարկումն ու տնօրինումը իրարահաջորդ երևույթների օրինաչափ ու անհետաձգելի կապակցվածություն էր ժամանակի արևմտահայ իրողության հանգամանքներում: Քանզի հենց ժամանակի հրամայականն էր, որ Պարոնյանը երեխաների հետ հայրաբար խոսելու ներհատուկ տաղանդի շնորհիվ հնարավորություն ունեցավ իր ստեղծագործության սլաքներն ուղղել դեպի մանկագրությունը: «Հիմնովին փոխուած են հիմա կեանքի պայմանները մեզի համար: Հիմա մենք չենք ապրիր մեր հայրենի հողերուն վրայ: Ցրուած ենք ի սփիւռս աշխարհի:

Ունինք լեզուի պայքար:

Ունինք ոգիի պայքար:

Ունինք հայրենիքի պայքար»[2]:

Աչքի առջև ունենալով երգիծաբանի խոր գիտակցությունը, ժամանակի մտահույզ իրատեսական նկատառումներն ու Կ. Պոլսի հայ երեխաների շրջանում ազգային դիմագծի պահպանման օժանդակմանն ուղղված անխուսափելի քայլերը՝ պատեհ առիթ է կրկին բանալ Պարոնյանի ջերմ հայրենասիրության արգասիքը հանդիսացող մանկական հանդեսի 1876 թվականի տարեվերջից փակված էջերը:

Ազգային շահերից ելնելով՝ գրողը ձեռնամուխ եղավ խմբագրելու «Թատրոն. բարեկամ մանկանց»-ն ու այն որպես մանկավարժական ուղղվածությամբ պարբերական՝ բանեցրեց իբրև փրկօղակ՝ հօգուտ հայկական ընտանիքների՝ օտար հողում ծնված երեխաների ազգային-հայրենասիրական դաստիարակության: *«Դաստիարակենք մեր մանկունքն եւ ջանանք, որ մեր ազգային հին համբաւն անաղարտ մնայ, բարձրացնեն ազգային բարոյականութիւնը, որով միայն կարող կը՛ըլլանք Տէրութեան եւ օտարաց համարումն գրաւել: Կրթենք մեր զաւակները Աստուածպաշտութեան ու ուսմանց մէջ, թող զրկուի ամէն իրաւունքներէ այն մարդը՝ որ զաւակներ ունի եւ զանոնք դպրոց չի ղրկեր, դպրոց ունի եւ հոգ չի տանիր անոր, եկեղեցի ունի եւ անհաւատարիմ է անոր:* Մենք եկեղեցիներ,

---

[1] ***Խառատյան Ա.,*** *1876 թ. Օսմանյան սահմանադրությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ, (1870-ական թթ.), Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 4, էջ 116-117:*

[2]***Hairenik,*** *The Oldest and Largest Armenian Dally in U.S.A., Boston, Vol. LV, No.12,682, Wednesday, January 6, 1954.*

դպրոցներ ունիմք, սակայն մեր այս ազգային հաստատութիւնք՝ մեծամեծ բարեկարգութեանց եւ անոնց ապահովութիւնքն՝ մեծ ջանից կարօտ են»[1]:

Պարոնյանը հարազատ ծնունդն է մի ազգի, որի կենսագրությունը վկայող վավերագրերում քիչ չեն արյունոտ էջերը: Պարոնյանական ժամանակաշրջանի քաղաքական որոշ իրողություններ իրենց հանգուցալուծումներով ժամանակի թելով գալիս հյուսվում են մեր օրերին ու ինչպես երկու դար առաջ, այնպես էլ հիմա, ցավոք, մենք կանգնած ենք ազգային ինքնությունը կորցնելու արհավիրքի առջև: Բնականաբար, այդօրինակ պայմաններում «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ստեղծումը, նախասահմանված դերը, կշիռը արևմտահայության և ընդհանրապես հայ մանկագրության պատմության մեջ, կարելի է ասել, նույնն է, ինչպես որ հոգևորականի առաքելությունը Աստծուն, ազգին ու եկեղեցուն ծառայելը:

«Մասիս»-ի բերած բազմաթիվ փաստեր վկայում են, որ բացարձակ կամայականությունն էր թուրքական իրականության օրենքը, իսկ թանզիմաթի հրապարակած «ազատությունները»՝ դատարկ տառ միայն: Խոսք չէր կարող լինել ազգային հավասարության մասին, եթե քաղաքում օրը ցերեկով մի թուրք գավազանի հարվածով սպանում է հայ խանութպանի հղի կնոջը, որովհետև վերջինս, խառնվելով թուրքի չվճարած ղուռուշների պատճառով առաջացած վեճին, փորձում է հաշտեցնել ամուսնուն և գնորդին: Իսկ հարցաքննության ժամանակ թուրքը սառնասրտությամբ պատասխանում է. «Այո, սպանեցի, ի՞նչ կըլլա եղեր. կեավուռ չէ՞ մի» (1853, N 235, 307)»[2]: Արևմտահայության առօրեական իսկական եղելությունների այսպիսի առանձին գրավոր փաստերի վերլուծությունների շարքը կարելի է թվել անվերջ: Սրանք զուտ նկարագրություններ չեն, այլ արտահայտում են թուրքական իշխանության վարած «հայասպան» գործելաոճը ներպետական կառավարման և արտաքին հարաբերությունների բնագավառներում: «XIX դարակեսն ու հետագա մի քանի տասնամյակները, հիրավի, բախտորոշ ժամանակաշրջան էին,- նկատում է գրականագետ Պ. Դեմիրճյանը,- Օսմանյան կայսրության լծի տակ տառապող հայ ժողովրդի համար: Ազգի ու հասարակության վերափոխման, առաջադիմության իրագործման ճանապարհին գլխավոր ուժը, իհարկե, երիտասարդությունն էր: Առաջ են գալիս եռանդուն ու կարող անհատներ՝ Ներսես Վարժապետյանը, Մինաս Չերազը, Ռեթեոս Պերպերյանը, Եղիա Տեմիրճիպաշյանը, Մատթեոս Մամուրյանը, Հակոբ Պարոնյանը և ուրիշներ, որոնք մեծ ջանքեր էին գործադրում հոգևոր ոլորտում, մանկավարժության, մամուլի, լեզվի,

---

[1] ***Տամատեան Յ. արդ.,*** *Տարբեր փորձառութեամբ յիշատակել Ներսէս Պատրիարքը, «Արեւմտահայութեան հարցերու ուսումնասիրութեան կեդրոն» գիտահետազօտական հիմնադրամ, 2021/11/30:*

[2] *The History of the Armenian pereodical press (XVIII- XIX centuries), I Volume, Cairo, 2006, p. 239.*

գրականության, արվեստի բնագավառներում բարեփոխումների իրագործման համար»[1]:

Ստորև առանձնացրել ենք Պարոնյանի՝ մանկագրությամբ հրապարակ գալու և «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ստեղծման անհրաժեշտության ըստ էության ամենահիմնական դրդապատճառների քննության իրարահաջորդ բացահայտումների հերթականությունը.

· Մանկագրության ասպարեզ մուտք գործելն արդեն իսկ վկայում է, որ Պարոնյանը գալիս էր նոր ասելիքով և ծրագրով: Գալիս էր լրացնելու ժամանակի գործող կրթական հաստատություններում գոյություն ունեցող կրթական համակարգի վրիպումները:

· Քննարկվող ժամանակաշրջանում ծայր առած աշխարհաքաղաքական իրադարձություններն ու բռնակալ Թուրքիայի՝ արևմտահայության հանդեպ իրականացվող բիրտ քաղաքականությունը ենթադրում էին, որ հայ ժողովուրդը կանգնած է լեզվի, դավանանքի, ազգային ավանդույթների կորստյան և ձուլման սպառնալիքի առջև: Կշեռքի նժարին դրված էր ազգային հարցը:

· Կ. Պոլսում բնակվող արևմտահայ ընտանիքներում բավարար չափով գոյություն չունեցող քաղաքակրթվածության մակարդակն ու երեխաների հայեցի դաստիարակության համար ստեղծված անբարենպաստ միջավայրը ևս իր ազդեցությամբ չի վրիպել հեղինակի սուր՝ թափանցող հայացքից:

«Աճող սերնդի համակողմանի դաստիարակության գործում հասարակական դաստիարակչական մի շարք գործոնների շարքում վճռական դերը պատկանում է ընտանիքին: Ընտանիքը նախադպրոցական երեխաների դաստիարակության հիմնական օջախն է, որտեղ մշակվում են դրական կամ բացասական հատկանիշները, ցանվում այնպիսի սերմեր, որոնցից աճած ծաղիկները կարող են լինել կա՛մ բուրումնավետ, կա՛մ դառնահոտ»[2]:

Ազգային հարցը «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ստեղծման գործում ունի միանգամայն տրամաբանական մեկնություն: Հայապահպանությունը առաքելություն է և հայ ժողովուրդը՝ ապրելով հայրենիքի սահմաններում կամ դրանից դուրս, առաջին հերթին իր մեսրոպատառ հայերենով է մնում իր կոչմանը հավատարիմ:

---

[1] ***Դեմիրճյան Պ.,*** *Գարեգին Սրվանձտյանցի բանահավաքչական ու ազգագրական գործունեությունը, Պատմա-բանասիրական հանդես, 2022, թիվ 1, էջ 123:*

[2] ***Айрапетян Г. Г.,*** *Вопросы самовоспитания детей в семье, Вестник общественных наук, н. 3, Ереван, 2016, с. 284.*

Պարոնյանը հարկ եղածի պես ճշգրիտ էր գնահատում արևմտահայ[1] երեխաների աննախանձելի դրությունը հատկապես այն դեպքում, երբ հարցը վերաբերում էր նրանց ազգային դաստիարակությանը: Բնավ հեշտ գործ չէ մանկական գրականությունը ծառայեցնել ազգային-կրթական խնդիրներ լուծելու համար: «Եվ հայրենասիրության այս դասը,- նկատում է գրականագետ Լ. Կարապետյանը,- Պարոնյանը հիմնականում ավանդում էր թերթում զետեղված պատմական բնույթի նյութերով, զրույցներով, պատմվածքներով, բանաստեղծություններով («Մեծ Ներսես Կաթողիկոս և Պապ Թագավոր», «Արամ Հայկազյան», «Առ հայրենիս», «Կեռասը», «Մասիս լեռը», «Ազգիս պաշտպան Վարդան Մամիկոնյան» և այլն): «Առ հայրենիս» բանաստեղծության մեջ հայ պանդուխտի կարոտի հորդացող զգացումները միահյուսված են մայր ժողովրդին արմատներից կտրող թշնամիների հանդեպ ատելության և վրիժառության զգացումներին: «Կեռասը» պատմվածքի փոքրիկ հերոսներն ապրելու և պայքարելու օրինակ են համարում հայրենիքի ազատության համար մարտնչող հերոսներին[2]:

Պարոնյանի ուսերին դրված պատասխանատվության ահռելի կշիռը գնահատել փորձելու համար բավական է միայն մատնացույց անել այն հարակից մանրամասնությունը, որ նա ստեղծագործում էր հայրենիքից հեռու ապրող երեխաների համար, որոնք, օտարության մեջ ծնված լինելով, հայրենասիրության շատ դասեր հենց պարբերականի շնորհիվ պիտի ստանային: «Արամ Հայկազեան» պատմական ակնարկի նկարագրության տեսարանում Պարոնյանը ոչ միայն ի ցույց է դնում Արմենիայի տիրակալ Հայկյան Արամ նահապետի (մ.թ.ա.1827 - մ.թ.ա.1769թթ. Հայկազունիների արքայատոհմի վեցերորդ փոխանորդ) քաջությունն ու կատարած սխրագործությունը, այլև որպես պատմական անձնավորության օրինակ է ներկայացնում երեխաներին, ով չդրժեց սեփական երդումը և իրագործեց մեր երկիրը օտար նվաճողներից ազատագրելու ծրագիրը: «Եւ իրաւցընէ այս ըրած ուխտն իրօք կատարեց, ինչպէս որ կը կարդանք Հայոց պատմութեան մեջ. Արամ յաղթեց Մարաց և գերի բռնեց զՆիւքար:

Հայկազանց թագաւորութեան ժամանակ Արամ Հայ իշխաններէն ամենէն երևելին եղաւ, ինքն էր, որ Հայ ազգն օտար ազգաց առջև պատկառելի ըրաւ

---

[1] *Պատմական հանգամանքների բերումով արևմտահայ հատվածի հրապարակախոսական միտքն ու լրագրական արվեստը ձևավորվել են սկսել Թուրքիայի հայաշատ կենտրոններից մեկում՝ Կոստանդնուպոլսում: 1832 թ. այնտեղ լույս է տեսել արևմտահայ անդրանիկ թերթը՝ «Լրտ գիր»-ը: Մանրամասն տե՛ս* ***Гукасян В. Г.,*** *Формирование Константинопольской армянской печати и публицистики (1832-1853), Ереван, 1975, с.5.*

[2] ***Կարապետյան Լ.,*** *Արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմության ուրվագիծ, Պատմա-բանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008, թիվ 2, էջ 108:*

մեծամեծ քաջութիւններով, այնպէս որ օտարազգիք մեր ազգն Արամայ անունովն սկսան կանչել Արամեան, Արմէնի, կամ Էրմէնի»[1]:

Բավականաչափ զգալի է հայրենասիրական ոգի առաջացնող ու հանուն հայրենիքի ազատության՝ անձնազոհության պատրաստ սերունդ աճեցնելու Պարոնյանի ցանկությունը, ինչի լիիրավ ապացույցներն են հայ երեխաների համար խմբագրված պատմական անցյալի նկարագրությունների արդյունքում ազգային արժանապատվություն առաջացնող պատմությունները: «Ժամանակի հայ գրողների մեծ մասը ևս սերտորեն կապված է եղել դպրոցի հետ, քանի որ հասարակական գործունեության այլ ասպարեզներ գրեթե չկային, և նրանք իրենց հայրենասիրական պարտքն էին համարում ծառայել ժողովրդի կրթության գործին: Այսպիսով, մինչև 1870-ական թվականները և՛ արևելահայ, և՛ արևմտահայ իրականության մեջ կրթության ու լուսավորության գործը առաջընթաց էր կատարել»[2]:

Պարոնյանը ոչ միայն անմասն չմնաց, այլև այնքան խորագիտություն ու կամային հատկանիշներ հանդես բերեց, որ ունենալով չգոհացնող օրինաչափ նախադրյալներ՝ դարձավ նախադպրոցական ու դպրոցական ցածր դասարանի երեխաների աջակիցը, չէ՞ որ հենց նրանք են հայ ժողովրդի ապագայի առհավատչյան, հայոց լեզվի և ազգային ավանդույթների կրողն ու շարունակողը: «Երգիծաբանն առանձին խոսակցության նյութ է համարում հայ հասարակության կենցաղը, բարքերը, կրթությունը, դաստիարակությունը, գործունեությունը, գաղափարներն ու նպատակները «ուղիղ ճանապարհի» վրա դնելու, «ազգի վերականգնման» խնդիրները հասարակության բոլոր շերտերի, բոլոր ուժերի գլխավոր նպատակը դարձնելու հարցերը: Էական է համարում, որ ազգի ուժերը նպատակադիր, ծրագրված աշխատանքի լծվեն. անհրաժեշտ է ժողովրդի նոր սերնդին նախապատրաստել մեծ գործեր կատարելու»[3]:

Պատկառանք է ներշնչում Պարոնյան հայ մտածողի բերած ավանդը մանկագրության զարգացման ուղղությամբ գործնական քայլեր կատարելու տեսանկյունից: Երգիծաբանը լավ էր հասկանում, որ երեսփոխանների ու ջոջերի հետ խոսելու արդեն սովորական դարձած «ծաղրի» լեզուն երեխաների համար ոչ միայն անհասկանալի ու խորթ կլինի, այլև անընդունելի: «Մանկան տարիքը պահանջում է առանձնահատուկ

---

[1] *«Թատրոն. բարեկամ մանկանց», կիսամսյա պատկերազարդ հանդես, Կ. Պոլիս, 1876, թիվ 21, էջ 165:*

[2] ***Ерканян В. С.,*** *Армянская школа в 1800-1870 гг., Вестник общественных наук, н. 4, Ереван, 1971, с. 50.*

[3] ***Գլջյան Ա.,*** *Հակոբ Պարոնյանը Հայկական հարցի մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2006, թիվ 1, էջ 118:*

մոտեցում երեխայի նկատմամբ ոչ միայն մանկավարժից,- համոզված է գրականագետ Ա. Գլջյանը,- այլև գրողից: Մանկագիրը գործ ունի, ինչպես հեղինակն է պատկերավոր ձևով ասում՝ «նոր միայն աշխարհ մտնող անփորձ ճանապարհորդի» հետ, աշխարհ, որն իր անբավ «ինչու»-ներն է առաջադրում դեռևս կենսափորձ չունեցող մանկանը: Մանկական գրողը գործ ունի կոնկրետ տարիքի երեխաների հետ, պարտավոր է հաշվի առնել այդ տարիքի առանձնահատկությունները»[1]: Այդ իսկ պատճառով, «Թատրոն. բարեկամ մանկանց»-ը խմբագրելիս, գրողը հաշվի է առել այն բոլոր յուրահատկությունները, որոնք վերաբերում են երեխաներին ու մանկագրությանը:

Գուցե հենց սա է ամենաճշմարտացի պատճառաբանությունը, որի շնորհիվ Պարոնյանի պարբերականը կարողացավ կենսական կարևոր իր նշանակությամբ մնայուն տեղ զբաղեցնել և ճանապարհ հարթել հետագայում լույս տեսած մյուս հայկական մանկական պարբերականների շարքում: «Պարոնյանը արդարամիտ մարդ էր և ոգեշնչված էր մեծագույն բարոյական քաջությամբ: Նա ատում էր կեղծավորությունը և կարեկցում էր խեղճերին: Նա իր երգիծանքները հավասարապես ուղղում էր թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ առաջնորդներին՝ մեղադրելով պատրիարքներին և Ազգային ժողովի անդամներին՝ իրենց անգործունակության, դպրոցների աշխատակիցներին՝ իրենց տգիտության և ֆավորիտիզմի համար, հարուստներին՝ իրենց այլասերվածության համար»[2]:

Գալիքի սպասումով լիահույս ենք, որ պարոնյանական մանկական ստեղծագործությունների ուսումնասիրությունների շղթան ոչ միայն կընդլայնվի, այլև ժամանակի ընթացքում կձեռնարկվեն գործնական քայլեր՝ հանդիսատեսին հնարավորություն կընձեռնվի Պարոնյանի կատակերգությունների կողքին բեմադրված տեսնել մանկական ստեղծագործությունները նույնպես: Հայոց վարքաբանին վերաբերող նրա մի շարք դիտարկումներ ազգային ինքնաճանաչման և հանրային-պետական կյանքի կարգավորման համար այժմ, թերևս, ավելի գործադրելի են,- գրում է պրոֆեսոր Վ. Միրզոյանը,- քան իր ժամանակին են եղել: Եվ միգուցե հենց այսօր է պահը՝ նորովի ըմբռնելու հայոց խորամուխ վարքաբանի, հայ ազգայնականության կարկառուն ներկայացուցչի տեսական ժառանգությունը: Վստահությամբ կարող ենք ասել, որ Հակոբ Պարոնյանի

---

[1] ***Դանիելյան Գ.,*** *Խ. Մ. Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, գրախոսություն, Պատմա-բանասիրական հանդես, 1962, համար 3, էջ 234:*

[2] ***Agop Jack Hacikyan, Gabriel Basmajian, Edward S. Franchuk, Nourhan Ouzounian,*** *The Heritage of Armenian Literature: From the eighteenth century to modern times, Volume III, Wayne State University Press, 2000, p. 407.*

դարը նոր է սկսվում»[1]: «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականը իր առջև սահմանած առաջադրանքը վեր է հանել ազգային օգտակարությունից և այն հասցրել ամբողջ մարդկությանը վերաբերող՝ համամարդկային սահմանագծի:

Գրականություն

1. **Կարապետյան Լ.,** Հայ մանկապատանեկան գրականությունը XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին, Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, թիվ 2, էջ 178:
2. **Չատինյան Գ. Ե**, Արևմտահայ պարբերական մամուլի իրավական կացության պատմությունից (1860-1870-ական թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2006, թիվ 3, էջ 207:
3. **Խառատյան Ա.,** 1876 թ. Օսմանյան սահմանադրությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ, (1870-ական թթ.), Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 4, էջ 116-117:
4. **Hairenik,** The Oldest and Largest Armenian Dally in U.S.A., Boston, Vol. LV, No.12,682, Wednesday, January 6, 1954.
5. **Տամատեան Յ. աբդ.,** Տարբեր փորձառութեամբ յիշատակել Ներսէս Պատրիարքը, «Արեւմտա-հայութեան հարցերու ուսումնասիրութեան կեդրոն» գիտահետազօտական հիմնադրամ, 2021/11/30:
6. The History of the Armenian pereodical press (XVIII- XIX centuries), I Volume, Cairo, 2006, p. 239.
7. **Դեմիրճյան Պ.,** Գարեգին Սրվանձտյանցի բանահավաքչական ու ազգագրական գործունեությունը, Պատմա-բանասիրական հանդես, 2022, թիվ 1, էջ 123:
8. **Айрапетян Г. Г.,** Вопросы самовоспитания детей в семье, Вестник общественных наук, н. 3, Ер., 2016, с. 284.
9. **Гукасян В. Г.,** Формирование Константинопольской армянской печати и публицистики (1832-1853), Ереван, 1975, с.5.
10. **Կարապետյան Լ.,** Արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմության ուրվագիծ, Պատմա-

[1] ***Միրզոյան Վ.,*** *Հակոբ Պարոնյանը՝ հայոց վարքաբան, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսա-գիտական համալսարանի», թիվ 2, Երևան 2015, էջ 73:*

բանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2008, թիվ 2, էջ 108:
11. «Թատրոն. բարեկամ մանկանց», կիսամյա պատկերազարդ հանդես, Կ. Պոլիս, 1876, թիվ 21, էջ 165:
12. **Ерканян В. С.,** Армянская школа в 1800-1870 гг., Вестник общественных наук, н. 4, Ер., 1971, с. 50.
13. **Գլջյան Ա.,** Հակոբ Պարոնյանը Հայկական հարցի մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Եր., 2006, թիվ 1, էջ 118:
14. **Դանիելյան Գ.,** Խ. Մ. Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, գրախոսություն, Պատմա-բանասիրական հանդես, 1962, համար 3, էջ 234:
15. **Agop Jack Hacikyan, Gabriel Basmajian, Edward S. Franchuk, Nourhan Ouzounian,** The Heritage of Armenian Literature: From the eighteenth century to modern times, Volume III, Wayne State University Press, 2000, p. 407.
16. **Միրզոյան Վ.,** Հակոբ Պարոնյանը՝ հայոց վարքաբան, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, թիվ 2, Եր. 2015, էջ 73:

Նյութը ներկայացվել է 04.05.2023,
գրախոսման է ուղարկվել, 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

UDC 81՝06

Linguistics

Nrane SARGSYAN
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կրտսեր գիտաշխատող/ National Academy of Sciences of the Republic of Armenia, Language Instiute named after H. Acharyan, department of lexicography, junior researcher
E-mail: nranesargsyan@gmail.com

NOUN-FORMING AFFIXES OF MODERN ARMENIAN

Ն. Սարգսյան
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐԸ

Հոդվածում քննվել է նորակազմ ածանցավոր գոյականների համակարգը, որոնք կերտվել են ժամանակակից գրական հայերենի արդի շրջանում : Սույնով նպատակ ենք ունեցել բացահայտելու բառածանցման ժամանակակից միտումները՝ առանձնացնելով հիմնակաղապարները և մասնակաղապարները, համասեռ, տարասեռ կաղապարները, ածանցման գործընթացում հաճախակի և սահմանափակ գործառող ածանցները:

Որպես փաստացի նյութ ենք գործածել «Նոր բառեր» ժողովածուի 6-րդ և 7-րդ պրակներում ամփոփված համապատասխան բառերը:

Քննված փաստացի նյութի հիմքի վրա առանձնացրել ենք առավել հաճախ հանդիպող ածանցները: Նախածանցների համակարգում ընդգծվում են ***գեր-, հակա-, համա-, նախա-, վերա-*** *ձևույթները, վերջածանցների համակարգում՝* ***-անոց, -ություն, -ուհի, -ում:*** *Հայերենի բառակազմական օրինաչափության համապատասխան՝ այս պարագայում ևս գերակայում է վերջածանցման եղանակը: Նախածանցման քայլն իրականացվում է անփոփոխ սերող հիմքերով՝ գերերազանք, հակաթուրմ, վերջածանցման քայլը՝ շեշտով պայմանավորված փոփոխությամբ հիմքերով՝ առևտրայնացում, հասակակցուհի :*

Տարասեռ կաղապարներում գերակշռում են ածական սերող հիմքով կազմությունները :

Քանի որ ածանցները բառիմաստի տարորոշման համար էական արժեք ունեն, ուստի հոդվածում քննել ենք նորակազմ գոյականների իմաստային պատճառաբանվածության հարցը: Կենսունակ ածանցների ածանցային իմաստն ընկալելի է արդի լեզվակիրներին, հետևաբար քննված օրինակներում իմաստային պատճառաբանվածության խնդիր չենք արձանագրել :

Բանալի բառեր՝ *ածանց, ածանցում, բառակազմություն, գոյական, լեզու, կաղապար, հիմք:*

Н.Саргсян

ИМЕНООБРАЗУЮЩИЕ АФФИКСЫ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

В статье рассмотрена система производных существительных, которые образовались на современном этапе армянского литературного языка.

Цель данного исследования - выявить модели аффиксации, выделяя макромодели, микромодели, гомогенные и гетерогенные модели, активные и пассивные именообразующие аффиксы. Тем самым дается возможность предопределить тенденции аффиксации в современном армянском языке в сфере образования существительных.

Фактическим материалом послужили слова из 6-ых и 7-ых выпусков словаря "Новые слова".

Изучение материала показало, что в системе новообразовавщихся существительных есть функционально активные морфемы. В частности, в системе префиксов мы выделили морфемы զեր-, հակա-, համա-, նախա-, վերա- . Префиксы закономерно сопоставляются к неизменяемым основам: զերերազանք, հակաթուրմ и т.д. Суффиксы сопоставляются к меняющимся основам: առևտրայնացում, հասակակցուհի. В системе суффиксов преобладают морфемы -անց, -ություն, -ուհի, -ում . В соответствии с закономерностями аффиксации армянского языка, преобладают слова с суффиксами.

В системе гетерогенных моделей активно функционируют слова с основой прилагательного.

Поскольку производное значение имеет существенное влияние на лексическое значение слова, в статье рассмотрен вопрос обоснованности структуры моделей.
Ключевые слова: *аффикс, аффиксация, словообразование, существительное, язык, шаблон, основа.*

NOUN-FORMING AFFIXES OF MODERN ARMENIAN

The article examines the newly created nouns formed by derivation, the study of which gives an opportunity to present the most active noun-forming affixes and derivation models in the modern stage of the language. The material for the examination was the nouns included in "New Words" dictionary issues 6 and 7.

In this article, the composition of nouns was considered based on the component that is added in the last step. Accordingly, the words, considering new formations with the derivation of nouns, were formed by adding a noun-forming affix in the last step. Affixes are added both to changing bases: գերերազանք, հակաթուրմ etc., and to unchanging bases: առևտրայնացում, հասակակցուհի etc. The examination of the nouns included in the mentioned issues showed that the prefixes գեր-, հակա-, համա-, նախա-, վերա and the suffixes -անոց, -ություն, -ուհի,- ում are active in the modern period of the language, the words with suffixes are dominated.

According to the part-of-speech affiliation of the base, congeneric and non congeneric models of nouns formed by derivation are distinguished. The congeneric models with an adjectival base have functional activity.

Affixes give a certain lexical meaning to the word, as the suffix – ուհի has a person belonging to the female sex meaning, -արան has place to perform the operation meaning etc. Based on this feature, the article also refers to the internal reasoning of the word, observing the reasoned connection between the word's sound and meaning.
Key words: *affix, derivation, word formation, noun, language, model, base.*

The vocabulary of a language is a rapidly changing system. These changes are continuous and permanent due to various changes in social, political, economic and cultural life. Therefore, vocabulary becomes the bearer and expresser of all that. When considering the words included in the vocabulary, it is possible not only to get an idea of extra-linguistic changes, but also to identify and show intra-linguistic processes and phenomena.

The vocabulary is enriched both by borrowings and by words formed with the help of its own word-forming means. The composition of new nouns in the modern Armenian language is also actively continued by word-formation means and methods of the language. Primary and secondary morphemes act as means of word composition. The main morpheme expresses the "objective-logical meaning of the word"[1]. In the case of secondary morphemes, formative and word-forming morphemes are distinguished. New words are formed from the morphemes by the method of derivation and word compounding. In this work dedicated to newly created nouns, we are interested in words formed by derivation, and those secondary word-forming morphemes, that is, affixes, through which newly created nouns are most often formed.

In linguistics, the derivational composition of nouns has been examined many times. Noun-forming affixes have been noted, and the model of word formation has been observed. However, it should be noted that such references, apparently, are mostly morphological in nature and represent all the morphemes included in the composition of the given word. In this regard, there are few such works examining the composition of words, which show what kind of component was added in the last step to form the word. This article is such an attempt to present the word-forming models of newly created nouns formed by derivation and the most effective affixes. The nouns included in issues 6 and 7 of “New words” dictionary served as the subject of the examination.

Derivation. Active affixes.

Derivation is a method of word formation in which new words with a new meaning are formed by adding an affix. In this case, it should be noted that when determining whether a word is formed by derivation or compounding, we take into account the component added in the last step and not the morphological composition of the given word. The addition of a component in the last step in the process of forming a new word is called the word-forming step. Thus, the noun “*արձանաշինություն*” has the morphemes “*արձան*”, “*շեն*”, “*ա*”, “*-ություն*”, of which “*-ություն*” is an affix, but this word is formed by word compounding method, because in the last step, not the affix was added, but the main morpheme “արձան”. For derivational words, an affix must be added in the last step. When determining the composition of a word by the method of derivation or compounding, the word should be subjected to lexical analysis. Here are some examples of lexical analysis of the newest nouns formed by derivatives from the issues 6 and 7 of dictionary “New word”.

ապաթունավորում- ապ/ա{[(թույն)ա/վոր]ում}
բանախոհականություն - {[(բան/ա)(խոհ)]ական}ություն
գերերազանք - գեր[(երազ)անք]
հակաառողջապահություն - հակ/ա{[(առողջ/ա)(պահ)]ություն}
ստվերայնություն - [(ստվեր)ային]ություն
հաղարջուտ - (հաղարջ)ուտ

[1] **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու**, (Suqiasyan A., Suqiasyan Q., Feleqyan M., The modern Armenian language), Yerevan., 2017, p. 234.

There are words that have a double causality, depending on which one we consider as the component added in the last step. There can be both word compounding and derivational formations, as *դժվարաթափանցություն* word by forming the way of *դժվար/ա{[(թափ)(անց)]ություն}* is formed by the method of compounding, and by forming the way of *{դժվար/ա [(թափ)(անց)]}ություն* is formed by the method of derivation.

Derived words that have both a prefix and a suffix can also have a double reasoning, for example: *ապաառասպելականացում* can be formed as *ապ/ա{[(առասպել)ական]ացում}* or *{ապ/ա[(առասպել)ական]}ացում,* and *գերառատություն* can be formed as *գեր[(առատ)ություն]* or *[գեր(առատ)]ություն.*

Morphemes that connect to each other in the lexical step are considered direct constituents. The component to which an affix is added and forms a new word is called a word-forming base. Different forms of bases are distinguished in linguistics. The component that is added at the last stage is called the derived base, and the component to which it is added is called the compound. It is usually indicated that the derived base is the left, and the compound base is the right component[1]. It is important to note that if the word is formed by derivation, there will be “1+base” model for words formed by a prefix, and “base+1” model for words formed by a suffix. So, the derived base of words formed by prefixes is on the right[2].

In linguistics, changing and unchanging lexical bases are also distinguished. Present them by giving relevant examples from the sources under our examination. Unchanging bases do not undergo any change in the process of word formation, for example: *գերերազանք, հակաթուրմ, ավազանիական, ենթաոլորտ* etc. The changing bases in their turn are:

· phonetic. In this case, due to the change in the position of the accent, there is a phonetic change in the base, such as *առնտրայնացում, հասակակցուհի, մրգանոց, պաշտոնակցուհի* etc.

· phrasal: these bases are derived from syntactically free or stable phrases, for example *համակրթաթոշակառու, կատարելապաշտություն* etc.

· lexematic base is any relative form of the word, for example *ռազմականացվածություն* etc.

· bases with an extra unit. In such bases, in the process of word formation, additional units are added, such as *ա* bond and *յ* sound, for example *շաուրմայանոց, զրոյություն* etc.

· bases in which some units fall, such as *իա, իս, ոս* components of some foreign words, for example *Բրազիլիա-բրազիլուհի* etc.

---

[1] See **Աղայան Է.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն (Aghayan E., General and Armenian lexicology), Y., 1984, p. 247-248.

[2] See **Գալստյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ (Galstyan S., Manual of practical works of the modern Armenian language), Yerevan, 2007, p. 111.

Bases can be simple and complex. A complex base, unlike a simple base, can have more than one root and affix. According to the composition of complex base, E. Aghayan distinguishes derivations with a derivational base and derivations with a complex base[1]. In general, it is stated that "the newly added component is "indifferent" to whether the base is simple or complex. The determining factor in word formation is the partial belonging of the basic structure of speech, and due to it the possibility of connection between the base and the newly added root or word, as well as affixes"[2]. Looking at the derivational nouns formed in the last step of word formation in Issues 6 and 7 of "New Words" dictionary, we noticed that in the process of word formation, the following prefixes and suffixes are added to the mentioned bases and form new words:

Prefixes

ապ/ա- - ապամարմնացում, ապանձնավորում

գեր- - գերթքարտադրություն, գերսոսնձում

ենթ/ա- - ենթագիր, ենթաոլորտ

հակ/ա- - հակախոսք, հակամասնատում

համ/ա- - համաճանաչում, համատենապետ

նախ/ա- - նախաազդակ, նախաառաջաբան

վեր/ա- -վերաշերտավորում, վերաքննարկում

Suffixes

-ական – դաիշական, օմոնական

-անոց – կառքանոց, կեգլիանոց, մրգանոց,

-արան – անկողնարան, խոշտանգարան

-ություն – աղամություն, արջորսություն, բարեկամականություն

-ուհի – բարապանուհի, ծառայողուհի

-ում - ամբոխացում, ամպում, գորշակապտում, վիզուալացում

-ուտ –հաղարջուտ, մայրուտ

The most active prefixes are *գեր-, հակա-, համա-, նախա-, վերա-* and suffixes are *-անոց, -ություն, -ուհի, -ում*, moreover, the number of nouns with a suffix exceeds the number of nouns with a prefix. Present the number of nouns formed by these affixes according to statistics in the base of issues 6 and 7:

Prefix					Suffix			
գեր	հակա	համա	նախա	վերա	անոց	ություն	ուհի	ում
15	10	6	15	31	9	20	25	15

Depending on which part of speech the lexical basis belonged to and to which affix we added, and to which part of speech we received the word, congeneric and non-

[1] See **Աղայան Է.,** the same, p. 280-281.
[2] **Գալստյան Ս.**, the same, p. 109.

congeneric models are distinguished[1]. When considering the formation of nouns, compositions with a noun base and a noun-forming affix will be considered congeneric, and compositions with a noun base belonging to another part of speech and affix will be considered non-congeneric. In the first case, word formation is within the same part of speech, in the second case, part-of-speech transitions are made. Thus:

Congeneric model with noun base *– նախափիլիսոփայություն՝* ***sS****, անկողնարան՝* ***Ss****, համահաղորդակցում՝* ***sS****:*

Non-congeneric model with adjective base *– առևտրայնացում՝****As****, ժիտողականություն՝* ***As****, արկածախնդրուհի՝* ***As****, բազմաբղետություն՝****As****:*

Non-congeneric model with verb base *– պահուստավորում՝* ***Vs****, խոշտանգարան՝* ***Vs****:*

The examined examples showed that non-congeneric models with adjective base have greater word formation activity.

It is also interesting that affixes give a certain meaning to a word, which is commonly called a lexical meaning: in addition to specific part of speech and lexical meanings, derived words also express a meaning "that is specific not only to the given word, but also to other words of a similar structure. …. Those meanings are formed when the meaning expressed by the derivation is added to the word meaning, as a result of derivation, derivational word formation"[2]. In this regard, it is also interesting to consider the reasoning of the word, that is, the reasoned connection between the word's sound and meaning[3]. There are external and internal reasoning. The internal reasoning has morphological and semantic types. In the case of morphological reasoning, the word meaning depends on the meanings of individual morphemes of the word, thus: the prefix *հակա-*'s lexical meaning is opposite, the suffix *–ուհի* means *a person belonging to the female sex*, *-արան* means *place to perform the operation*, and *–անց* means *the place indicated by the initial form*, etc. The Armenian language has differences from the Romance languages, where prefixes "primarily convey intensification, reversal, negation, iteration and – unlike suffixes – lack evaluative force"[4]. The semantic reasoning appears in the word-formation chain when the previous one conditions the next one, and "the reasoner is the word for which the meaning of this order has priority"[5].

In conclusion, derivation continues to be an active word-formation method in modern Armenian. Even today, new nouns are formed with noun-forming affixes,

---

[1] See **Ջահուկյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն (Jahukyan G., Semantics and word formation of the modern Armenian language), Yerevan, 1989, p. 168.

[2] **Գալստյան Ս.,** Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, (Galstyan S., Derivation and affixes in modern Armenian), Yerevan, 1978, p. 40-41.

[3] **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ**., the same, p. 207.

[4] The Cambridge History of the Romance Languages, https://www.cambridge.org/core/books/the-cambridge-history-of-the-romance-languages/4A4F61B5F78D0960A04E21D3E873C472.

[5] **Տիոյան Ս.,** Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում (Tioyan S., Lexical multiple causality in modern Armenian), Yerevan, 2013, p. 14.

which are used in oral and written speech, and are included in dictionaries of neologisms.

References

1. **Աղայան Է.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, (Aghayan E., General and Armenian lexicology), Yerevan, 1984, 372 p.
2. **Գալստյան Ս.,** Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում (Galstyan S., Derivation and affixes in modern Armenian), Yerevan, 1978, 326 p.
3. **Գալստյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, **(**Galstyan S., Manual of practical works of the modern Armenian language), Yerevan, 2007, 196 p.
4. **Ջահուկյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, (Jahukyan G., Semantics and word formation of the modern Armenian language), Yerevan, 1989, 319 p.
5. **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ.,** Ժամանակակից հայոց լեզու (Suqiasyan A., Suqiasyan Q., Feleqyan M., The modern Armenian language), Yerevan, 2017, 462 p.
6. **Տիոյան Ս.,** Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում (Tioyan S., Lexical multiple causality in modern Armenian), Yerevan, 2013, 288 p.
7. **The Cambridge History of the Romance Languages,** https://www.cambridge.org/core/books/the-cambridge-history-of-the-romance-languages/4A4F61B5F78D0960A04E21D3E873C472.

Sources

New words, issue 6, Yerevan, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021.

New words, issue 7, Yerevan, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022.

Նյութը ներկայացվել է 15.05.2023,
գրախոսման է ուղարկվել 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ակ.
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

ՀՏԴ 398

Գրականագիտություն

Ելիզավետա ՄԻՐԶՈՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարան, դասախոս, բ.գ.թ.
E-mail: liza.mirzoyan@mail.ru

ՈՂԲԻ ԹԵՄԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՆԵՐՈՒՄ

«Ողբի թեման հայ գրականության հոլովույթներում» հոդվածում խոսվում է հայ գրականության մեջ ողբի՝ որպես գրական ժանրի արտահայտության մասին: Զարգացման շատ երկար ու հետաքրքիր ուղի է անցել այս ժանրը: Գրականության մեջ հայկական ողբերը լինում են պատմական, դամբանական (գերեզմանական), անձնական-քնարական և այլն: Պատմական թեմայով ողբի առաջին օրինակը տվել է V դարի պատմիչ Մովսես Խորենացին՝ իր «Հայոց պատմությունը» եզրափակող «Ողբ» հատվածով: Անձնական քնարերգության ողբի լավագույն օրինակ է Գրիգոր Նարեկացու հանճարեղ երկը՝ «Մատյան ողբերգության» պոեմը, որը հակասություններից տառապող անձի ներքին մենախոսություն է: Հայ գրականությանը հայտնի դամբանական ողբի աշխարհիկ բովանդակությամբ ամենահին գրական հուշարձանը Դավթակ Քերթողի (VII դար) «Ողբ մեծ իշխան Ջեվանշիրի մահվան մասին» նշանավոր ստեղծագործությունն է: XX դարասկզբին ողբի ժանրը նորոգվեց՝ կապված երկրին պատուհասած քաղաքական նոր փորձությունների հետ: Ցավոք, պատմության շրջադարձերը հայ ժողովրդի համար այնպիսի ողբերգական ընթացք ստացան, որ XXI դարում (ինչպես ասում են, այս լույսի և հույսի դարում) ևս հայ ժողովուրդը կրեց անդառնալի կորուստներ՝ ինչպես տարածքային, այնպես էլ մարդկային: Հոդվածի նպատակն է՝ ուշադրություն հրավիրել XX դարասկզբում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած

ամենամեծ ոճրագործության՝ ցեղասպանության ազդեցությամբ գրված մի շարք ստեղծագործությունների վրա՝ ներկայացնելով դրանք հայկական «ողբերի» շարքում:

Բանալի բառեր՝ *ողբի ժանր, պատմական,անձնական, դամբանական ողբեր, Խորենացի, Նարեկացի, Դավթակ Քերթող, ցեղասպանություն, V, VII, X, XX, XXI դարեր:*

Е.Мирзоян

ЖАНР СКОРБИ В ХОДЕ ЭВОЛЮЦИИ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

В статье говорится о жанре скорби в армянской литературе. Скорбь отмечает трагические события и случаи жизни. Литературная форма скорби носит исторический, лично-лирический и мемориальный характер. Первое историческое упоминание скорби было дано в заключительном отрывке «Скорбь» «Армянской истории» Мовсеса Хоренаци в V в. Вершиной лично-лирической поэзии является гениальная поэма Григора Нарекаци «Книги скорбных песнопений». Древнейшим литературным памятником является мемориальное произведение Давтака Кертога (VII в.) «Скорбь по случаю смерти великого князя Джеваншира», известное мирским содержанием. В начале XX в. жанр скорби был изменен в связи с новыми политическими испытаниями, охватившими страну. К сожалению, повороты истории приняли столь трагический оборот для армянского народа, что в XXI в., как говорится, в веке света и надежды, армянский народ также понес необратимые потери, как территориальные, так и человеческие. Таким образом, статья акцентирует внимание на ряд произведений, которые были написаны под влиянием совершенного злодеяния - геноцида в начале XX в. в жизни армянского народа, представив их в ряду армянских «скорбий».

Ключевые слова: *жанр скорби, исторические, личные, мемориальные скорби, Хоренаци, ДавтакКертог, Нарекаци, геноцид V, VII, X, XX, XXI вв.*

E.Mirzoyan

THE GENRE OF LAMENTATION IN THE EVOLUTION OF ARMENIAN LITERATURE

In this article we speak about lamentation in the Armenian literature as the expression of literary genre. Lamentation reflects such phenomena and cases which have tragic nature. So in literature Armenian lamentations can be historical, private-lyrical, memorial and etc. The first sample on historical theme was given by historian of the 5th century M.Khorenatsi, in the final excerpt of "Sorrow" in his work "History of Armenia". The best sample of private tragic lyrics is the genius work of Narekatsi, the poem "Book of sorrow". The most ancient literary monument of the Armenian literature with the famous worldly content is the memorial work "Lamentation about the death of the Great Prince, Jevanshir" of Davtak Qertogh coming from the 7th century. Unfortunately, the turns of history have taken such a tragic turn for the Armenian people that in the 21st century, as they say, in the century of light and hope, the Armenian people also suffered irreversible losses, both territorial and human. The aim of the article is to focus attention on the line of literary works which were written under the influence of the made genocide toward the Armenians at the beginning of the 20th century having represented them in the line of the Armenian "lamentations"
Key words: *historical, private, memorial, the 5th century, the 7th century, the 10th century, the 20th, 21 century.*

Հայ ժողովրդի պատմական ուղու «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց…» բանաձևը գործում է հայ գրականության՝ ողբի թեմայով գրված բոլոր երկերում: Զարգացման շատ երկար ու հետաքրքիր ուղի է անցել այս ժանրը, որի ծագման խնդրին անդրադառնալով, Պ. Խաչատրյանն, իբրև աղբյուր, մատնանշում է հեթանոսական շրջանի բանահյուսությունը[1]: Հայ իրականության մեջ իր հիմնադրման և գոյության վաղ շրջանից սկսած քրիստոնեական եկեղեցին պայքար է մղել հեթանոսական ժամանակներից եկող սգո և ողբի սովորույթի դեմ: Բայց սգո ծեսը և նրա ժամանակ կատարվող ողբը շարունակ գոյություն են ունեցել և պատահական չէ, որ ազգային-ժողովրդական լալյաց բանաստեղծությունը հայկական ողբի ժանրային ձևավորման բանահյուսական-գրական ակունքներից է:Ողբը՝ որպես գրական ժանր, ծագել է հնագույն ժամանակներում և բարձր զարգացման հասել անտիկ աշխարհի և միջնադարի գրականության մեջ: «Ողբ» բառը ենթադրում է առավելապես քնարական ստեղծագործություն,

[1] ***Մաղոյան Ա.***, *Պ.Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԸ դդ.)», Եր., 1969թ., էջ 271:*

որտեղ իրադարձությանը այնքան տեղ չէր տրվում, որքան դրա հարուցած զգացմանը, մտածումներին, որոնք անպայման վերջանում էին լավատեսությամբ. ողբի նպատակը մխիթարելն էր»[1]: Միջնադարյան հայ գրականության ամենահետաքրքիր, բայց քիչ ուսումնասիրված բնագավառներից է հայրենասիրական բանաստեղծությունը, որի մեջ զգալի բաժին ունի ողբի ժանրը: Հայ ողբասացները թողել են հարուստ ու բազմաբովանդակ մի ժառանգություն, հետաքրքիր ոչ միայն բանասիրության, այլև պատմության համար: «Հատկապես քաղաքական-հայրենասիրական ողբերի առատությունը պայմանավորված է պատմաշրջանի հասարակական կյանքի փոթորկահույզ անցուդարձերով»[2]: Ողբը թեմատիկ առումով լայն ընդգրկում ունի, արտացոլում է կյանքի այնպիսի իրողություններ ու դեպքեր, որոնք եղերական բնույթ ունեն: Ինչպես դիտարկում է գրականագետ Պ. Խաչատրյանը, հայկական ողբերը լինում են պատմական, դամբանական (գերեզմանական), անձնական-քնարական, ողբ-հիշատակարաններ և այլն[3]: Ողբին բնորոշ են պատկերման հակադրության եղանակը, չափազանցությունը, խոսքի հռետորական երանգը, սուր և չափազանցված համեմատությունները, թեմայի քնարական մեկնաբանությունը, հուզական լարվածությունը: Թեմայի բովանդակության մեջ իրար են հակադրվում «երանելի» անցյալը և դառնաղետ ներկան:

Ի հակակշիռ ողբերգական իրականության՝ հեղինակի միտումը դառնում է գալիքի երազանքը, ժամանակակիցներին հորդորելն ու մխիթարելը:

Ողբի առաջատար և սկզբնական տեսակը պատմական թեմայով ողբն է, որը պատկերում է ազգային պատմության այս կամ այն փուլը: Առաջին օրինակը դեռևս 5-րդ դարում տվել է քերթողահայր Մովսես Խորենացին: Նա իր մատյանն ավարտել է մի սրտահույզ ողբով՝ կապված հայոց թագավորության ու կաթողիկոսության անկման հետ:

Ողբի հենց առաջին տողը հայ ազգի սեղմ ու փայլուն գովերգ է. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ՝ բոլոր հյուսիսային ազգերիդ մեջ վեհագույնդ, որովհետև վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, տգիտությամբ հիմնավորվեց չարափառությունը»[4]:

Խորենացին գագաթնակետին է հասցրել ազգային ողբը՝ խտացնելով և միահյուսելով անձնական ողբին բնորոշ բոլոր հույզերն ու ապրումները:

---

[1] *Նույն տեղում:*
[2] *Նույնը, էջ 5:*
[3] *Նույնը, էջ 270:*
[4] ***Խորենացի Մ.**, Պատմություն Հայոց, Երևան, 1961թ., էջ 350:*

Մովսես Խորենացու մատյանն ամփոփող ողբը սնուցիչ ակունք է միջնադարյան պատմական հաջորդ ողբերի համար. դա այն ամուր հիմքն է, որի վրա դարեր հետո շատ պատմագիրներ ու բանաստեղծներ կառուցել ու հորինել են իրենց ողբերը, զարգացրել ու հարստացրել գրական այս ժանրը: Խորենացու «Ողբին» հետևել են Արիստակես Լաստիվերտցու «Պատմությունը» սկսող Ողբը, Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոն», Ս. Օրբելյանի, Խ. Կեչառեցու, Գրիգոր Տղայի, Հովհ. Դրասխանակերտցու «Հայոց պատմության» մեջ ներառված ողբերը: Հուզիչ ու քնարական է Լաստիվերցու «Ողբը»: «Խորենացու «Ողբում» հասարակական ու քնարական մոտիվների կողքին աչքի է ընկնում նաև ճարտասանական տարրը, բայց Լաստիվերցու մոտ զգացմունքներն ավելի խորն են ու հորդաբուխ, առանց ճարտասանական ձևերի» [1]:

Գրական այս տեսակի կատարյալ արտահայտություններից է Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, որն իր ողբերգական տարերքով Մ. Աբեղյանը համարել է առաջին «Վերք Հայաստանին», հայրենասերի ողբը [2]:

Անձնական-քնարական ողբերը կապվում են անհատական ապրումների, մարդու ճակատագրի կամ հոգեվիճակի հետ: Անձնական ողբի լավագույն օրինակը միջնադարյան հայ գրականության մեջ Գրիգոր Նարեկացու քնարական-խոհափիլիսոփայական հանճարեղ երկն է՝ «Մատյան ողբերգության» պոեմը:

Դամբանական ողբեր գրել են Դավթակ Քերթողը, Բարսեղ Վարդապետը, Մկրտիչ Նաղաշը և ուրիշներ: Դամբանական բանաստեղծությունը նվիրվել է որևէ անձնավորության և մեծ մասամբ կատարվել թաղման արարողության ժամանակ:

Հայ գրականությանը հայտնի աշխարհիկ բովանդակությամբ ստեղծված ամենահին գրական հուշարձանը Դավթակ Քերթողի (VII դար) «Ողբ մեծ իշխան Ջեվանշիրի մահվան մասին» նշանավոր ստեղծագործությունն է: «Ողբը» պահպանվել է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» շնորհիվ, որի մեջ գրել է Ջեվանշիր իշխանի մասին և բերել նրա մահվան առիթով հորինված բանաստեղծությունը [3]:

---

[1] ***Մառոյան Ա.***, *Պ. Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբերը (ԺԴ-ԺԸ դդ.)», Երևան, 1969 թ., էջ 5:*

[2] ***Աբեղյան Մ.***, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944 թ.,էջ 470:*

[3] ***Մկրտչյան Լևոն***, *Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին, Երևան, 1976 թ., էջ 45:*

«Ողբի…» հերոսը՝ իշխան Ջեվանշիրը, դավաճանաբար սպանվել է 670 թվականին: Դավթակը իշխանի մահը պատկերում է իբրև երկրին հասած մեծագույն դժբախտություն.

Գլորվեց վեմը՝ կենդանի ու հզոր,
Եվ պարիսպն ամրության խորտակվեց… [1]

Դավթակ Քերթողի բանաստեղծությունը ողբ է և՛ իշխանի, և՛ նրա հպատակների մասին: Քերթվածքն ունի մի կարևոր առանձնահատկություն. բաղկացած է 36 տողից և կազմված է հայկական այբուբենը կազմող ծայրակապերով (ակրոստիքոս): «Այս յուրօրինակ ակրոստիքոսը, ըստ երևույթին, ծագել է մայրենի լեզվի գրերի նկատմամբ տածած խոր ակնածանքից. այն հանդիպում է նաև միջնադարյան մյուս բանաստեղծների գործերում»[2] :

Միջնադարյան բանաստեղծության հաջորդ նշանավոր ողբը Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմն է (1002թ.). այն ժողովրդին հայտնի է նաև «Նարեկ» անունով: Պոեմը հակասություններից տառապող անձի ներքին մենախոսություն է:

Մի՛ լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,
Ողբալ, եւ ոչ արտասուել,
Խորհել, եւ ոչ հառաչել,

Ամպել, եւ ոչ անձրեւել,
Ընթանալ եւ ոչ հասանել … [3]

Մատյանի բովանդակության գլխավոր գիծը մարդու կատարելության խնդիրն է, որը սերտորեն առնչվում է մեղքի ու մեղավորության քրիստոնեական ըմբռնմանը: Նարեկացու երկը հյուսված է մարդու՝ որպես Աստծու արարչագործության բարձրագույն դրսևորում, անհատական «եսի» անունից, որ ինքը՝ բանաստեղծն է: Նարեկացին դիմում է Աստծուն՝ սկսելով այսպես.

Զա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց… [4]

Ինչո՞ւ է Նարեկացին իր երկն անվանել **ողբերգություն**: Աստված կատարյալ է, իսկ մարդն՝ անկատար: Աստվածային էությանը հասնելու համար մարդը պիտի անդադար մաքրի իր հոգին: Բայց հնարավո՞ր է արդյոք

---

[1] ***Կաղանկատվացի Մովսես***, *Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 175:*
[2] ***Մկրտչյան Լևոն***, *Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին, Եր., 1976 թ., էջ 44:*
[3] ***Նարեկացի Գրիգոր***, *«Մատյան ողբերգության» պոեմ, Եր., «Մուղնի» հրատ., 2003 թիվ, էջ 12:*
[4] *Նույնը, էջ 4:*

դա. անհնարինությունից ալեկոծվում է մարդու ներաշխարհը. այն մեծագույն տառապանք է ապրում, որն էլ վերածվում է ողբերգության: Նարեկացին ողբում և աղոթում է ոչ թե իբրև առանձին անձ, մեկ անհատ, այլ խտացնում է իր մեջ ողջ մեղսագործ մարդկությունը՝ առանց տարիքային ու դասային խտրության: «Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ»,- հայտարարում է նա: Այս է պատճառը, որ նրա ողբն ունի համամարդկային հնչեղություն :

Նարեկացու ողբերգությունը մարդուն կատարյալ տեսնելու երազանքի և դրան հասնելու անհնարինության խոր գիտակցումից է ծնվում: Պոեմն ավարտվում է Նարեկացու լավատեսությամբ. նա հավատում է մարդու փրկությանը, կյանքի հաղթանակին:

Ոսկեդարից և հատկապես պատմահայր Մովսես Խորենացուց սկզբնավորված պատմահայրենասիրական ողբը, անցնելով հետագա պատմիչներին, առաջին անգամ Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի միջոցով մուտք է գործում հայ քնարերգություն: «Ողբ Եդեսիոյ» պոեմի արժեքը խոր հայրենասիրական բովանդակության մեջ է: Որբևայրի Եդեսիան իրեն ձայնակցելու համար կանչում է նաև Հայաստանի երբեմնի շեն ու շքեղ քաղաքներին: Բանաստեղծը մորմոքում է ոչ միայն Եդեսիա հայաքաղաքի, այլև բուն հայկական քաղաքների տխուր վիճակի համար: Շնորհալու ողբն էլ հուսահատ չէ: Նա լավատեսորեն է նայել իր հայրենիքի ապագային՝ հույս ունենալով, որ չարագործները կպատժվեն, և քրիստոնյա աշխարհի օգնությամբ կթոթափվի մահմեդականների ծանր լուծը:

Այս առաջին և լավագույն պատմական-հայրենասիրական ողբի բարերար ազդեցությունը արտահայտվում է հետագա շրջանի գրեթե բոլոր պատմաողբերի վրա:

Ն. Շնորհալու աշակերտ Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի» պոեմի նյութը Երուսաղեմի ավերումն է (1187թ.): Ստեղծագործության ամբողջ ոգին արտահայտվել է հենց քրիստոնյա աշխարհին ուղղված կոչի մեջ. անհրաժեշտ է հաղթահարել հակասությունները և օգնության ձեռք մեկնել միմյանց՝ համախմբվելով ստեղծել անկախ պետություն:

Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Կաթուղիկեին» երկում Վաղարշապատի Կաթուղիկեն՝Էջմիածինը ևս, իբրև լքված ու հալածված Թագուհի, ողբում է իր տխուր վիճակը: Հեղինակը Թագուհու անունից կանչում է աշխարհացրիվ հայությանը՝վերադառնալ հայրենիք, համախմբվել, թոթափել մահմեդականների ծանր լուծը և վերականգնել հայոց թագավորական գահը: «Պատմաքաղաքական ողբերը արտացոլել են ինչպես Հայաստանի, այնպես էլ գաղթաշխարհի հայության վիճակը: Ողբասացների համար հայրենասիրությունը նեղ ազգային պատյան չուներ.

նրանք սեփական ժողովրդի ապագայի հարցը կապում էին ընդհանուր քրիստոնեության ճակատագրին»[1] :

19-րդ դարում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» կամ «Ողբ հայրենասերի» վեպը ողբի նոր տարատեսակ բերեց հայ գրականություն: Վեպի տխուր վերջաբանը ցույց է տալիս, որ պարսկական տիրապետության վերացմամբ չի վերջանում ողբը, այլ սկսվում է փորձության մի նոր շրջան, որի ընթացքում հայ ազգը կամ անցյալում մեծ փառք ունեցած շատ ազգերի նման կոչնչանա ֆիզիկապես ու կդատապարտվի մոռացության, կամ պիտի դիմանա պատմության դաժան քննությանը և ապացուցի իր ինքնուրույն գոյության իրավունքը մարդկության պատմության մեջ:

Հետևաբար՝ շարունակվում է հայրենասերի ողբը… շարունակվում է 20-րդ դարասկզբի արշալույսին մորթազերծ արված Սիամանթոյի շուրթերով: Հայոց պատմության մեջ սա այն արյունոտ էջն է, որ կոչվում է ցեղասպանություն: **Հայոց ցեղասպանության մասին հայ ժողովուրդը շարունակում է բարձրաձայնել մինչ օրս: Այդ ձայնում կա հուսահատության ճիչ, ոճիրի դեմ պատիժ տեսնելու ցանկություն, անմեղ զոհերի արյան դիմաց վճարվելիք հատուցում:** Հայ բանաստեղծները չէին ծնվել ողբասության համար. սակայն ժողովրդի պատմական ճակատագիրը մշտապես կենդանի է պահում ողբը:

20-րդ դարասկզբին հայ բանաստեղծները դանթեական զուգորդություններին էին դիմում՝ հայոց արյունոտ ճակատագրի մեծ ծավալն ու ժողովրդի աներևակայելի ողբերգությունը պատմելու համար: Ողբի ժանրը նորոգվեց՝ կապված երկրին պատուհասած քաղաքական նոր փորձությունների հետ: Հայոց ցեղասպանության իրական պատկերն այնքան զարհուրելի էր, որ վերածվել էր տեսիլքի, մղձավանջային զառանցանքի: Այս զարհուրանքը իր ընդգրկումով և դաժանությամբ գերազանցում է միջնադարյան ողբերի թեմատիկան: Ամենուրեք՝ **«Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ…»**[2]

Համատարած կոտորածի մեջ, սարսափից չխենթանալու համար, բանաստեղծն անկարելին է պահանջում մնացածներից. «**Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ…»**[3]**:** Եվ որպես ապտակ քաղաքակիրթ աշխարհին՝ հնչում է բանաստեղծի աղաղակը. «**Ո՜վ մարդկային արդարություն, Թող ես թքնեմ քու ճակատիդ»**[4]**:** Ցավից հոգին

---

[1] ***Ա.Մարոյան***, *Պ. Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբերը (ԺԴ-ԺԸ դդ.)», Եր., 1969 թ., էջ 269:*

[2] ***Սիամանթո,*** *Երկեր, Եր., 1979 թ.,էջ 83:*

[3] *Նույնը, էջ 84:*

[4] *Նույնը, էջ 135:*

կարող է քարանալ, ողբալ, բայց և հույսի ճանապարհը չկորցնել. **…Հույսը մեզի կը նայի… Իմ մարմինս ձեզի պատնեշ…**[1]: Եղեռնի ու ջարդի, ողբի ու ողբասության ժանրի գործածությունը շարունակվում է Դանիել Վարուժանի քերթվածքներում: Կյանքի ու սիրո երգը երգելու համար ծնված բանաստեղծն ակամա դառնում է հոգեհանգստի մասնակից և թաղման հուղարկավոր. «**Պետք է կերտեմ շիրիմներ, հուշարձանները կանգնեմ…**»[2]:

Այստեղ ավելի զորեղ է հնչում պայքարի, վրեժի կոչը: « **…Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի…**»[3]: Ողբերգական տրամադրությունը շարունակվում է Հ. Թումանյանի **«Հոգեհանգիստ»** բանաստեղծության մեջ: Հայոց մեծ եղեռնի զոհերի բանաստեղծական ոգեկոչումը Թումանյանը ներկայացրել է որպես հավաքական մի հոգեհանգիստ, որով այս ստեղծագործությունը մեծապես վերածվել է եկեղեցական ծեսի բանաստեղծական յուրահատուկ արտահայտության:

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
-Հանգե՛ք, իմ որբե՛ր… իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ…
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էապես կըմնա…[4]:

Հայոց մեկ այլ բանաստեղծը քայլում է Մեռյալ Քաղաքի՝Վանի փողոցներով ու լուսանկարչական ճշգրտությամբ վերարտադրում հայոց համազգային ողբերգությունը: Ազգային կեցության ուղիների որոնման ճանապարհին Չարենցի զգացմունքների բռնկումն ու շիկացած ապրումները ստեղծում են մահվան տեսիլներ: Բայց անգամ դժոխքի այդ պարունակներում բանաստեղծը ազգին հոգեպես փրկելու ուղիներ է որոնում.

Ու պետք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ
Ապրելու հսկա տենչը բեռ արած… [5]:

Նարեկացու փիլիսոփայությունը չէ՞ արդյոք 20-րդ դարի բանաստեղծին ստիպում դառնալ երկրի փրկության վերջին զոհը, ողբերի ու եղերերգությունների ամենավերջին ճիչը.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի
Իմ բո՛ըբ երկիր, լուսապսակ քո ապագան…[6]:

---

[1] *Նույնը, էջ 158:*
[2] ***Վարուժան Դանիել**, Երկեր, Եր., 1979 թ.,էջ331:*
[3] *Նույնը, էջ 238:*
[4] ***Թումանյան Հ.**, Ընտիր երկեր, հ.1, 1985 թ., էջ 103:*
[5] ***Չարենց Ե.**, «Էդիտ Պրինտ» հրատ., Եր., 2011թ.,էջ 53:*
[6] *Նույնը, էջ 68:*

Եվ հետո՝ այր մի Պարույր Սևակ անունով բանաստեղծն իր «Եռաձայն պատարագում» պիտի ոգեկոչի հափշտակված պատմական հայրենիքի ու բյուրավոր նահատակների հիշատակը.

Մեր…հայրենիքը մեզնից դատարկվեց:
Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՛ց…[1]:

Իսկ «Անլռելին» ազգային ցավի ողբը կաղաղակի առ երկինք.

Հինավուրց տոհմիկ մի ազգ
Չմեռա՛վ, այլ…մահացավ.
-Գարուն ա, ձուն ա արե՛լ…[2]:

Ժողովրդի պատմության ճակատագրական պահերը բեկվում են նաև Մեծ քնարերգակի «Հայոց դանթեականում», որտեղ Շիրազը նկարագրում է ժողովրդի ողբերգությունը, գաղթը, աքսորը, մահվան ճանապարհը.

Ուր պիտի Դանթեն յոթնահեղ զոջա, Որ յուր դժոխքի դժոխքն է իր դեմ [3]:

8000 տողանոց այս քերթվածքի ամեն հատված ողբ է եղեռնի անմեղ նահատակներին: Սակայն այդ ողբն ունի նաև ընդգծված բողոքի շեշտ՝ հզոր պետությունների, մարդկության անտարբերության դեմ, որոնց աչքի առաջ կատարվեց մարդկության պատմության մեջ ամենավայրագ ցեղասպանությունը: 1962թ.-ին գրված «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծությունը ևս որքան ողբ, նույնքան էլ ազատության, պայքարի կոչ է.

Դու՛ չես ջոկվել, քեզ խլել են, որ մոռանաս երգերն հայոց,
Զորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց,
Ա՛խ, ե՞րբ պիտի լեռներիդ պես վե՛ր բռունցքվեն ձեռներն հայոց.
Որ չթողնեն հայոց արծիվն օտար ծովին ճա՛յ, Ղարաբաղ[4]:

Եվ բռունցքվեցին «ձեռներն հայոց»: Եկավ Զարթոնքը: Փետրվարը եղավ արթնացած հայոց ոգու վառ արտահայտությունը: Հաղթանակը ձեռք բերվեց հայ ժողովրդի ազատատենչ ոգու և հայ ազատամարտիկների արյան գնով: Ինչպես գիտենք, պատմությունն անդրադառնում է գեղարվեստական գրականության մեջ և միջոցով: Հետպատերազմյան տարիներին ստեղծվել են բազմաթիվ գործեր՝ նվիրված պատերազմի բովով անցած ազատամարտիկների հերոսության, կորուստների, պարտությունների, նահատակության դրվագներին: Հիրավի, երիցս ճշմարիտ է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը, երբ դիտարկում է, որ հայ գրողը հաղթանակից

---

[1] ***Սևակ Պ.***, *Երկերի ժող., հ.2, Եր., 1973թ.էջ 310:*
[2] *Նույնը, էջ184:*
[3] ***Շիրազ Հ.***, *Հայոց դանթեականը,Եր.,«Նաիրի» հրատ., 1991 թ., էջ 178:*
[4] . ***Շիրազ Հ.***, *«Բագին» ամսագիր, Բեյրութ, հ.9-12, 1990թ.,էջ26:*

հետո պատկերեց ոչ թե բերկրանքը, այլ ցավը, ոչ թե նվաճումը տարածքների, այլ կորուստը հազարավոր հրաշալի հայորդիների [1] :

Ստեղծված գրականությունը մշտապես հիշեցնում է այն մասին, որ արյան գնով է ձեռք բերվել հաղթանակը, ու որ պատերազմը դեռ չի ավարտվել:

Բարձունքը մերն է, տղերքը չկան,
Տղերքն ավելի բարձրում մնացին:
Դիպան աստղերին՝ աստղերը հանգան
Ու լեղի քսվեց մեր ցամաք հացին…
Շահեցի՞ր երկիր, թե՞ կորցրեցիր.
Բարձունքը մերն է, տղերքը չկան…[2]:

20-րդ դարավերջն ու 21-րդ դարի սկիզբը հայ ժողովրդի համար պատմական նոր զարգացումների ու փոփոխությունների տարիներ էին: Համաշխարհային զարգացումներին զուգահեռ՝ ժողովրդի կյանքում կատարվող բարդ իրադարձությունները պայմանավորված էին հարյուրամյակներ առաջ պետականությունը կորցրած ժողովրդի՝ անկախությունը վերագտնելու իրավունքի համար տարվող պայքարով, **որ սկիզբ առավ 88-ի փետրվարին՝ Ղարաբաղյան շարժումով**: Հաղթություններն ու պարտությունները դեռ շարունակվում են, բայց հայ ժողովուրդը այդպես էլ չյուրացրեց Խրիմյան Հայրիկի երկաթե շերեփի պատգամը: Հայ ժողովուրդը ակամա ներքաշված է մեծ պատերազմի մեջ: Այն սկսվել է 1000 տարի առաջ, երբ առաջին անգամ թուրքը մտավ Հայկական լեռնաշխարհ: Պատերազմը չի ավարտվել, չի էլ ավարտվելու, քանի որ ճակատագրով դատապարտված ենք արյունախում հարևան ունենալու: Աշխարհը փոխվում է: Փոխվում են հարաբերությունները, փոխվում են պատերազմի զենքերը, բայց չի փոխվում թշնամին, և պիտի հարվածի, քանի դեռ պարտված չէ: 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի պատմական իրադարձությունները հայ գրականության մեջ դեռևս չունեն լայնածավալ արձագանք, քանի որ իսկական գրականությունը, գեղարվեստը հասունանում է տարածության ու ժամանակի մեջ: Երկրաշարժից հետո ստեղծված գրականությանը վերաբերող հարցին բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանը պատասխանեց. «Ցավն այնքան մոտիկ է, որ դժվար թե մտածես գեղարվեստական արժեք ստեղծելու մասին… Ես իմ գրածներն էլ համարում եմ ողբի, լացի պես մի բան, որը չես համարի բանաստեղծություն: Ժամանակ պետք է անցնի. նյութը

---

[1] ***Նիկողոսյան Ա.***, *«Բարձունքը մերն է, տղերքը չկան…», imyerevan.com, հոդված, 09 մայիս, 2013թ.:*

[2] ***Մանուկյան Խ.***, *«Գոյամարտ», 2014թ.:*

այնքան տաք է, վառող է, որ թույլ չի տալիս մոտենալ»[1]: Եվ այսօր ինչ ունենք, ավելի ողբ է ու ցավ, քանի որ հայրենիքի զոհասեղանին դրվեց հազարավոր հայորդիների կյանքը. մի ամբողջ լուսե սերունդ մարտիրոսվեց: Համոզված եմ՝ դեռ կստեղծվեն գրական այնպիսի կոթողներ, որոնք ողբին ու ոգեկոչումին զուգահեռ կունենան ապրեցնող ու հերոսացման գաղափարներ:

Այսպիսով՝ հարափոփոխ ժամանակների հոլովույթներում հայ գրականության մեջ մշտապես գերակայում է ողբի, կենդանի մարդու իրական տառապանքի, ճշմարիտ զգացումների արտահայտությունը: Ու քանի ապրում է մարդ արարածը այս երկրագնդի վրա, ինչ ժամանակներում էլ լինի, ողբի և նրա արտահայտության միտքը հավերժ ուղեկցելու է նրա կենսական գոյին: Այդ մասին քերթել են բանաստեղծները, երգում են այսօր և դեռ կգրեն …ինչքան ապրում է այս երկրագունդը:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Եր., 1944 թ.:
2.Գրիգորյան Հ., «Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույց, 2000թ.:
3.Թումանյան Հ., Ընտիր երկեր, հ.1, 1985 թ.:
4.Խորենացի Մ., Պատմություն Հայոց, Եր., 1968թ.:
5. Կաղանկատվացի Մովսես, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969:
6. Մադոյան Ա., Խաչատրյան Պ., «Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԸ դդ.)», Եր., 1969 թ.:
7.Մանուկյան Խ., «Գոյամարտ», 2014թ.:
8. Մկրտչյան Լ., Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին, Եր., 1976 թ.:
9.Նարեկացի Գ., «Մատյան ողբերգության» պոեմ,Եր., «Մուղնի» հրատարակչություն, 2003 թ.:
10. Նիկողոսյան Ա., «Բարձունքը մերն է, տղերքը չկան…», imyerevan.com, հոդված, 09 մայիս, 2013թ.:
11. Շիրազ Հ., «Բազին» ամսագիր, Բեյրութ, հ.9-12, 1990թ.:
12. Շիրազ Հ., Հայոց դանթեականը, Եր., «Նաիրի» հրատարակչություն, 1991 թ.:
13.Չարենց Ե., «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2011թ.:

[1] *Հ. Գրիգորյան, «Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույց, 2000թվ:*

14.Սիամանթո, Երկեր, Եր., 1979թ.:
15.Սևակ Պ., Երկերի ժողովածու, հ.2, Եր., 1973թ.:
16.Վարուժան Դ., Երկեր, Եր., 1979 թ.:

Նյութը ներկայացվել է 22.03.2023,
գրախոսման է ուղարկվել 26.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

ՀՏԴ 81`32

Լեզվաբանություն

Հասմիկ ՂԱՋՈՅԱՆ
ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոն, բ.գ.թ.
E-mail: hasmikghajoyan@mail.ru

ԱԾԱՆՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔ

Սույն հոդվածում քննության է ենթարկվում ածանցումը՝ որպես փոխաբերականացման արդյունքում ձևավորված հաշվողական տեխնիկայի տերմինների ստեղծման հիմք: Լեզուն՝ որպես համակարգ, իր փոփոխելիության արդյունքում անընդհատ զարգանում է և կատարելագործվում՝ համալրվելով նոր բառային կազմով: Լեզվական նորաբանությունները հանդես են գալիս որպես նոր առարկաների, երևույթների ու հասկացությունների բառային անվանումներ և բառապաշարում առանձին շերտ են կազմում: Ճիշտ է, լեզվի բառապաշարն անընդհատ փոփոխվում է՝ անմիջականորեն արտացոլելով հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերը, սակայն դա չի նշանակում, որ այդ փոփոխությունները տարածվում են նաև ***բառակազմական*** *օրինաչափությունների վրա, և նույն ձևով փոխվում են նաև բառակազմության ձևերն ու եղանակները: Լեզվի՝ որպես համակարգի, նման հատկության վառ արտահայտությունն էլ նոր միավորներով նրա բառային կազմի համալրումն է:*

Բառային կազմի համալրումն ու հարստացումը տեղի է ունենում լեզվում առկա ***բառակազմական ձևույթների՝***

արմատների կամ արմատների ու ածանցների միջոցով նորանոր բառեր կազմելով:

Բառակազմական վերլուծությունը *կարելի է կատարել թե՛ տարժամանակյա, թե համաժամանակյա տեսանկյունից:* ***Համաժամանակյա բառակազմությունը*** *բնորոշ է լեզվի որոշակի վիճակի և ունի իր դրսևորումները, այն է՝* ***ածանցում****,* ***բառաբարդում*** *և* ***հապավում****:* ***Տարժամանակյա բառակազմությունը*** *դրսևորվում է նոր բառերի իմաստի և դրանց քերականական ձևերի պատմական զարգացման արդյունքում:*

Տերմինակազմության վերլուծության ժամանակ նախապատվությունը տրվում է համաժամանակյա մոտեցմանը, քանի որ տեխնիկայի զարգացմանը զուգահեռ ստեղծվում են նոր բառեր, որոնք էլ հետագայում ներթափանցում են լեզվի համակարգ: Հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները հիմնականում կազմվում են ***ածանցման*** *միջոցով:*

Սույն հոդվածում մեթոդական հիմք են ծառայել հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները, որոնք կազմվում են նախածանցների և վերջածանցների միջոցով:

Բանալի բառեր՝ *տերմինակազմություն, բառակազմություն, ածանցում, նախածանցներ, վերջածանցներ, փոխաբերականացում, տերմինաբանություն, հաշվողական տեխնիկա, բառիմաստ, համանմանություն:*

А. Каджоян

АФФИКСАЦИЯ-ОСНОВА ОБРАЗОВАНИЯ ТЕРМИНОВ ВЫЧИСЛИТЕЛЬНОЙ ТЕХНИКИ ПУТЕМ МЕТАФОРИЗАЦИИ

В статье рассматривается аффиксация как основа для создания терминов вычислительной техники путем метафоризации. В результате своей изменчивости язык как система постоянно развивается и совершенствуется, пополняется новой лексикой. Лингвистические неологизмы выступают в качестве словесных названий новых предметов, явлений и понятий и образуют отдельный пласт

в лексике. Верно, что словарный состав языка постоянно меняется, непосредственно отражая изменения в общественной жизни, но это не значит, что эти изменения распространяются и на правила словообразования. Пополнение и обогащение словарного запаса происходит путем образования новых слов с использованием существующих в языке словообразовательных форм, корней или корней и суффиксов.

Лексический анализ может проводиться как с диахронической, так и с синхронической точки зрения. Синхроническое словообразование характерно для определенного состояния языка и имеет свои проявления, как аффиксация, сложения и аббревиатура. Современное словообразование проявляется в результате исторического развития значения новых слов и их грамматических форм. В области вычислительной техники термины, созданные в результате метафоризации, в основном образуются путем аффиксации.

Ключевые слова: *терминообразования, словообразования, аффиксация, префиксы, суффиксы, метафоризация, терминология, вычислительная техника, слово значение, аналогия.*

H.Ghajoyan

AFFIXATION AS A BASIS FOR CREATING COMPUTATIONAL TERMS FORMED BY MEANS OF METAPHORIZATION

The following article discusses affixation as a basis for creating computational terms formed with the help of metaphorization. The language as a system is constantly developing and improving its word stock in the result of changeability. Linguistic neologisms are used as verbal names of new objects, phenomena and concepts and form a separate layer in the word stock. It is true that the vocabulary of the language is constantly changing, directly reflecting the changes in social life, but this does not mean that these changes also refer to the rules of word formation. The enrichment of the vocabulary takes place by forming new words with the help of roots, or roots and suffixes.

The lexical analysis can be done diachronically and synchronically. Synchronic approach aims at describing language at a specific point of time. It is applied in the form of affixation, compounding and abbreviations. Modern word formation is a process of forming new words as a result of historical development of their meanings and grammatical forms.

Computational terms created with the help of metaphorization are mainly formed on the basis of affixation.
Key words: *term formation, word formation, affixation, prefixes, suffixes, metaphorization, terminology, computer engineering, word meaning, analogy.*

Տեխնիկական տերմիններն անընդհատ նորացվում են. մուտք են գործում նորակազմ բառեր, և դուրս են մղվում հնացած տերմինները: Այս գործընթացն ուղեկցվում է լեզվի զարգացման ողջ ընթացքում: Դրա շնորհիվ տեխնիկական տերմինաբանությունը համալրվում է բառային նոր միավորներով, որոնք որոշակի փոփոխություններ են առաջացնում տվյալ տերմինաբանական համակարգում: Այս երևույթը կարևոր դեր է խաղում հաշվողական տեխնիկայի տերմինների բառային կազմի կատարելագործման մեջ, որի զարգացումը դրսևորվում է մի կողմից նրա համալրմամբ, մյուս կողմից՝ կատարվող զանազան իմաստաբանական, ձևաբանական և **բառակազմական** փոփոխություններով:

Բառակազմական եղանակներից մեկն ածանցումն է: Հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների մեծ մասը կազմվում է ***ածանցման միջոցով*** : Ածանցումն ամենատարբեր հիմքերին բառակազմական ածանցների ավելացմամբ նոր բառեր ստանալու միջոց է[1]: Հաշվողական տեխնիկայի ոլորտում ստեղծվող բառային միավորները մասնավորապես ստեղծվում են **նախածանցում** և **վերջածանցում** բառակազմական եղանակներով:

Հաշվողական տեխնիկայի ոլորտներում հիմնականում գործածվում են de-, dis-, sub-, un-, re-, inter-, multi-, mini-, micro-, macro-, cyber-, e- նախածանցները: Նախածանցն, ավելանալով բառին, փոխում է վերջինիս իմաստը և կազմում նոր բառ: **Նախածանցումը** հիմնականում բառային, ոչ թե խոսքիմասային իմաստը փոխող միջոց է: Նախածանցն առանձնակի ձևույթ է, որն ավելանում է բառային հիմքին[2]:

Ըստ կազմության՝ տերմինները բաղկացած են մեկ արմատից և ունեն մեկ կամ մի քանի ածանց: Փոխաբերականացման արդյունքում ձևավորված նախածանցավոր նոր կազմությունները սակավաթիվ են: Առավել հաճախ կիրառվում են ***de-, re-, dis-*** նախածանցներով կազմված տերմինները:

De- նախածանցը ծագել է լատիներենից և օգտագործվում է հակադիր գործընթացներ նշանակելու համար: Այսպես օրինակ՝ ***debug*** բայը կազմված

---

[1] *Տե՛ս* ***Гинзбург Р. З., Хидекель С. С., Князева Г. Ю.*** *и* ***Санкин А. А.,*** *Лексикология английского языка. 2-е изд., испр. и доп. М.: Высшая школа, 1979, с.114-115.*
[2] *Տե՛ս նույն տեղում, с.115-118.*

է ***de-*** նախածանցից և ***bug*** արմատից: Վերջինս բառ է, որն ունի ***վրիպում*** իմաստը և տասնամյակներ շարունակ օգտագործվել է ծրագրավորման սխալները նկարագրելու համար: ***Bug*** տերմինով բնորոշում էին ցանկացած անսարքություն: 1947 թվականին գիտնականների մի խումբ հայտնում է աշխարհում առաջին համակարգչային սխալի մասին, այն է՝ Հարվարդի համալսարանում՝ իրենց համակարգչում ի հայտ եկած փայտոջիլը: Նրանք անմիջապես ***վրիպազերծում են*** մեքենան:[1] Այսպես ձևավորվում է ***debug*** տերմինը, որն արտահայտում է ***վրիպազերծել*** իմաստը, այսինքն՝ ստուգել ծրագիրը, հայտնաբերել և վերացնել սխալները:

Բառիմաստի ընդլայնման արդյունքում հաշվողական տեխնիկայի ոլորտում է կիրառվում ***default*** ածականը: Վերջինս արտահայտում է ***կանխորոշված, սեփական, ստանդարտ*** իմաստները: ***Default*** տերմինը կազմված է ***de-*** նախածանցից և ***fault*** արմատից: Վերջինս օգտագործվում է ***default drive***, ***default location*** բառակապակցություններում:

De- նախածանցով է կազմված նաև ***deselect*** տերմինը: Վերջինիս փոխաբերական տեղաշարժի հիմքում ***չեղարկել*** բառային իմաստն է: Հաշվողական տեխնիկայի ոլորտներում ***deselect*** տերմինը արտահայտում է ***հեռացնել*** իմաստը:

Լատիներենից փոխառված ***re-*** նախածանցն ունի ևս մեկ անգամ նշված գործողությանը վերադառնալու դրսևորում: Այսպես օրինակ՝ ***to reboot*** բայը համագործածական լեզվում ունի ***խթանել, օգնել, զարկ տալ*** իմաստները: Ուստի փոխաբերական անցումը տեղի է ունենում՝ հիմք ընդունելով վերջինիս՝ համագործածական լեզվում արտահայտած իմաստները: ***To reboot*** բայը՝ որպես տերմինային միավոր, ունի ***վերագործարկել*** իմաստը: ***Reboot*** տերմինը կազմված է ***re-*** նախածանցից և ***boot*** արմատից: Այն համակարգչի աշխատանքի ընթացքում վերաբեռնում է գործավարական համակարգը: Վաղ ստեղծված էլեկտրոնային համակարգիչները չունեին գործավարական համակարգ: Քիչ էր նաև նրանց ներքին հիշողության ծավալը: Համակարգիչը գործարկվում էր՝ մեկնարկի ստեղնը սեղմելով: Այսպիսով, մեկնարկը համարվում էր համակարգչի գործարկումը[2]:

Recall տերմինը գործածվում է հաշվողական տեխնիկայի ոլորտում: Վերջինս համագործածական լեզվում արտահայտում է ***ետ կանչել***, ***ետ վերցնել, ետ առնել, վերհիշել*** իմաստները: Ուստի փոխաբերական անցումը բխում է վերջինիս՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստներից: Որպես տերմինային միավոր՝ հաշվողական տեխնիկայի ոլորտում ունի ***ետ բերել***

[1] *https://www.nationalgeographic.org/thisday/sep9/worlds-first-computer-bug/*
[2] *https://en.wikipedia.org/wiki/Reboot*

իմաստը, այսինքն՝ խմբագրման համար հիշողությունից ետ բերել տեքստը կամ նշոցները:

Հաշվողական տեխնիկայի ոլորտում կան տերմիններ, որոնք կազմված են լատինական ծագում ունեցող ***dis-*** նախածանցով: Վերջինս ունի հակառակ կամ հակապատկերային իմաստ հաղորդելու դրսևորումներ:

Գործառութային համանմանության սկզբունքով են ձևավորվել ***dispatch*** և ***disclose*** տերմինային միավորները: Վերջիններս կազմված են ***dis-*** նախածանցից ու ***patch*** և ***close*** արմատներից: ***Disclose*** տերմինն ունի ***բացահայտել*** իմաստը, իսկ ***dispatch*** տերմինն արտահայտում է ***ուղարկել*** իմաստը:

Այսպիսով, ***de-, re-, dis-*** նախածանցներով կազմված բառային միավորները ստանում են տերմինային արժեք՝ պահպանելով իրենց՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստներն ու գործառութային նշանակությունը:

Հաշվողական տեխնիկայի ոլորտում կիրառվում է նաև **վերջածանցում** երևույթը: Վերջածանցն ավելանում է բառակազմական հիմքին վերջից: Ի տարբերություն նախածանցների՝ վերջինս փոխում է բառի խոսքիմասային իմաստը: Գոյություն ունեն գոյականակերտ, ածականակերտ, բայակերտ վերջածանցներ: Հաշվողական տեխնիկայի ոլորտում նոր կազմություններ են ստեղծվում **-er**, **-ing**, **-or**, **-tion**, **-able**, **-ed**, **-ate**, **-ize, -ware** վերջածանցների միջոցով: Վերջածանցները, որոնք ցույց են տալիս առարկա, առարկայի հատկանիշ, գործողության անվանում, արդյունք, միանալով գոյականի, ածականի կամ բայի հիմքին, կազմում են տերմիններ: Առավել հաճախ փոխաբերականացման արդյունքում տերմիններ են կազմվում գոյականակերտ վերջածանցների միջոցով: Պատճառն այն է, որ այստեղ առնչվում ենք գործողության անվանումների, նույն գործողություններ կատարող գործիքների հետ: Հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմիններ կազմելու գործընթացին մասնակցում են ***-er***, ***-ing***, ***-ion*** կամ ***-tion*** վերջածանցները:

Հաշվողական տեխնիկայի տերմինաբանության մեջ մեծ մաս են կազմում ***-er*** վերջածանցով կազմված միավորները: Այս վերջածանցի առավել հաճախ կիրառությունը բնական է, քանի որ կյանքի բազմաթիվ ոլորտների ավտոմատացումը հանգեցնում է համակարգչի կողմից այն գործողությունների յուրացմանը, որոնք նախկինում բնորոշ էին միայն մարդկանց: Բայը, ստանալով ***-er*** վերջածանցը, վերածվում է հասարակ գոյականի և հանդես գալիս հաշվողական տեխնիկայի ոլորտում: Լատիներեն ***-arius*** վերջածանցից փոխառված՝ ***-er*** վերջածանցի միջոցով կազմվում են տերմինային միավորներ, որոնք ցույց են տալիս համապատասխան

գործողություններ կատարող սարքեր կամ մասնագիտություններ: Այսպես օրինակ՝ ***assemble*** բայը, ստանալով ***-er*** վերջածանցը, վերածվում է գոյականի ***(assembler)***: Վերջինս համագործածական լեզվում արտահայտում է ***հավաքող*** իմաստը: Բառիմաստի ընդլայնման արդյունքում հաշվողական տեխնիկայի ոլորտում կիրառվում է ***փոխադրածրագիր*** իմաստով, այն է՝ փոխադրման ծրագիր, որը փոխադրման լեզվով գրված ծրագիրը վերածում է մեքենայական կոդի:

Hacker տերմինը կազմված է ***hack*** արմատից և ***-er*** վերջածանցից: ***Hack*** բառային միավորը համագործածական լեզվում արտահայտում է հետևյալ իմաստները. ա) վերք, կտրվածք, բ) նշան, խազ, գ) բրիչ, քլունգ, դ) վարձու ձի, ե) ծանր աշխատանքից հյուծված մարդ:[1] Ուստի ***hacker*** տերմինային միավորի փոխաբերական տեղաշարժի հիմքում ***hack*** բառային միավորն է իր՝ աղբյուր տիրույթում արտահայտած ***ծանր աշխատանքից հյուծված մարդ*** իմաստով, քանի որ սկզբնական շրջանում ***hacker*** տերմինով էին բնորոշում այն մարդկանց, ովքեր ամբողջ օրը փակված էին սենյակում և անդադար աշխատում էին համակարգիչներով՝ փորձելով «համակարգերը դուրս մղել սահմանված նորմերից»: Հիշյալ տերմինը սկիզբ է առել Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի երկաթուղային մոդելավորման ակումբում, երբ ակումբի անդամները կոտրել են իրենց՝ լայն տեխնոլոգիական հնարավորություն ունեցող գնացքների հավաքածուները՝ վերջիններիս գործառույթները փոփոխելու նպատակով: Հաքերները խելացի, տաղանդավոր և զարգացած մարդիկ էին: Նրանք մշակել են տարբեր համակարգերի անվտանգության գոտիները շահագործելու մեթոդները: Հենց այս մարդկանց խմբից էլ ի հայտ են եկել առաջին ծրագրավորողները:[2] Այսօր ***hacker (նենգորդ)*** տերմինով բնորոշում են «համակարգչային հանցագործներին»: Վերջիններս տեսախաղերում օգտագործում են կեղծ ծածկագրեր կամ գաղտնաբառեր են գողանում՝ հաշիվներ մուտք գործելու նպատակով:[3]

Լատինական ծագում ունեցող ***-ion*** կամ ***-tion*** վերջածանցները նույնպես ցույց են տալիս բայի և գոյականի իմաստային հարաբերությունը: Մի շարք բայեր, ստանալով ***-ion*** կամ ***-tion*** վերջածանցները, վերածվել են գոյականի և կիրառվում են հաշվողական տեխնիկայի ոլորտում: Այսպես օրինակ՝ ***application*** տերմինը սկզբնական շրջանում ուներ ***հավելված*** իմաստը և գրեթե միշտ օգտագործվում էր ծրագրային ապահովման գործիքի հետ

---

[1] *Տե՛ս* ***Գամանգույան Հ. Ա., Հովհաննիսյան Մ. Ի.,*** *Անգլերեն-հայերեն բառարան. «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, 1143 էջ:*

[2] *https://www.tripwire.com/state-of-security/security-data-protection/cyber-security/the-evolution-of-hacking/*

[3] *https://en.wikipedia.org/wiki/Hacke)*

միասին: Տերմինն առավել արագ տարածվում է վաճառողների կողմից, ովքեր շուկա են հանում ծրագրավորողների մշակած ծրագրակազմը: Այնուհետև վերջինս սկսում է զարգանալ, և մշակողները ***ծրագրերի (program)*** փոխարեն սկսում են խոսել ***աշխատածրագրերի (application)*** մասին[1]: Այսպիսով, բառիմաստի ընդլայնման արդյունքում ի հայտ է գալիս ***աշխատածրագիր (application)*** տերմինային միավորը:

Հին անգլերենի ***-ung*** վերջածանցը, վերածվելով ***–ing*** վերջածանցի, մեծապես ընդլայնել է իր կիրառությունը ժամանակակից անգլերենում: Վերջինս հոմանիշ է ***-ion*** կամ ***-tion*** վերջածանցներին: Այն ավելանում է բայերին և կազմում գոյականներ: Վերը նշված վերջածանցով կազմված տերմինները սահմանում են տվյալ գործողության արդյունքը և իմաստը:

Հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում տերմիններ են կազմվում ***-ed*** ածականակերտ վերջածանցի միջոցով: Շատ քիչ թիվ են կազմում այս վերջածանցով կազմված տերմինային միավորները: Վերոնշյալ վերջածանցով կազմված տերմինները հիմնականում գործածվում են բառակապակցություններում: Այսպես օրինակ՝ ***dedicated*** տերմինը կիրառվում է ***dedicated channel***, ***dedicated logic*** բառակապակցություններում:

Հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում որոշ տերմիններ կազմվում են ***-ate*** բայակերտ վերջածանցով: Վերջինս նման է լատիներենի ***-are*** բայակերտ վերջածանցին: Երբ անգլիացիները սկսեցին ընդլայնել լատինական հիմքերով բառերը, լատիներենի անցյալ դերբայով կազմված ածականներից ստեղծվեցին բայեր: Այսպիսով, լատիներենի անցյալ դերբայի հիմքից կազմվեցին բայեր: Վերը նշված վերջածանցով են կազմված պատճառական բայերը[2]: Բայակերտ ***-ate*** վերջածանցով են կազմված ***populate***, ***simulate***, ***emulate*** բայերը: Այսպես, համագործածական լեզվում ***populate*** բայն ունի ***բնակեցնել*** իմաստը: Փոխաբերական տեղաշարժի հիմքում գործառութային նմանությունն է, որի արդյունքում ձևավորվել է ***populate*** տերմինային միավորը: Վերջինս հաշվողական տեխնիկայի ոլորտում արտահայտում է ***զբաղեցնել*** իմաստը, այն է՝ լրացնել տպահարթակի վրա գտնվող բնիկները:

Բառիմաստի ընդլայնման արդյունքում են ձևավորվել հաշվողական տեխնիկայի ոլորտում կիրառվող ***simulate*** և ***emulate*** տերմինները: ***Simulate*** տերմինը նշանակում է ***մոդելավորել***, այսինքն՝ համակարգի կամ սարքի վարքը նմանեցնել մեկ ուրիշի վարքի: Մինչդեռ համագործածական լեզվում վերջինս արտահայտում է ***կեղծել, նմանակել*** իմաստները:

---

[1] https://english.stackexchange.com/questions/251653/why-is-an-application-called-an-application
[2] https://www.etymonline.com/word/-ate

Emulate տերմինն ունի ***նմանակել*** իմաստը, այսինքն՝ մի համակարգչի կամ տպիչի վարքը, որը նման է մյուսի վարքին, թույլ է տալիս, որ աշխատեն նույն ծրագրերը և ստացվեն նույն արդյունքները: Իսկ համագործածական լեզվում ***emulate*** բառային միավորն արտահայտում է ***մրցել*** իմաստը:

Ուսումնասիրելով նախածանցներով և վերջածանցներով կազմված տերմինները՝ կարող ենք փաստել, որ վերջինիս դեպքում փոփոխության է ենթարկվում տերմինի խոսքիմասային պատկանելությունը: Մինչդեռ նախածանցների ավելացման դեպքում տերմինների խոսքիմասային պատկանելությունը պահպանվում է, պարզապես վերջիններս ստանում են նոր իմաստային երանգավորում:

Այսպիսով, ածանցումը կարևոր դեր ունի տերմինաստեղծման գործընթացում: Վերջինիս միջոցով կազմվում են նոր տերմիններ, որոնք համալրում և հարստացնում են համապատասխան ոլորտի տերմինաբանական բառապաշարը: Իսկ տերմինաբանությունը, արտացոլելով հասարակության ու նրա լեզվի զարգացման էությունը, ծառայում է թե՛ գիտության ու տեխնիկայի, թե՛ տվյալ հանրության լեզվի կատարելագործմանն ու հետագա առաջընթացին:

Նյութը ներկայացվել է 25.04.2023,
գրախոսման է ուղարկվել 10.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ
ԱրՊՀ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: ghazarian.hasmik @gmail.com

Լիանա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱրՊՀ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնակատար
E-mail: Liana.1968@list.ru

ՈՐՈՇՅԱԼ ՀՈԴԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գոյականի որոշյալությունն ու անորոշությունը արտահայտող քերականական կարգը հայ լեզվաբանական գրականության մեջ համարվում է առկայացման քերականական կարգ, որի գիտական հիմնավորումն առաջին անգամ տվել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը: Առկայացման քերականական կարգը հայերենում անվանվում է նաև տարորոշման կարգ և արտահայտվում է հոդերով:

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից հայերենի որոշյալ հոդերն ու դրանց գործածության առանձնահատկությունները, ընդգծվում է, որ բառի՝ որոշյալ կամ անորոշ առումով գործածությունը շատ դեպքերում պայմանավորված է հոդառու բառի վերադրի բնույթով, քերականական իմաստով, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում ունեցած որոշակի սահմանափակումներով: Որպես այդպիսի դեր կատարող վերադիրներ նշվում են որոշակի հարաբերությամբ առարկա ցույց տվող ցուցականության իմաստ ունեցող մի շարք բառեր, որոշ դերանուններ, ածականի

գերադրական աստիճանը, դասական թվականները, գոյականները, որոնք դրվում են որպես հանգույց գործածվող վերացական բայերի կողքին: Ներկայացվում են այն բառերը, որոնք ընդհանրապես հոդ չեն ստանում, այն կապերը, որոնք պահանջում են ուղղականաձև և տրականաձև որոշյալ կամ անորոշ առումով կապվող բառ, այն հոլովաձևերը (բացառական, գործիական, ներգոյական), որոնք միշտ գործածվում են առանց հոդի և այն հոլովաձևերը (ուղղական, տրական), որոնց հոդով կամ առանց հոդի գործածությունը բխում է տվյալ նախադասության մեջ արտահայտած նրանց քերականական իմաստից և պայմանավորում շարահյուսական պաշտոնը:

Բանալի բառեր՝ *քերականական կարգ, որոշյալություն, անորոշություն, հոդ, վերադիր, ձևաբանական մակարդակ, շարահյուսական մակարդակ, հոլով, դերանուն, կապ,նախադասության անդամներ:*

А. Газарян, Л.Айрапетян

ОПРЕДЕЛЕННЫЕ АРТИКЛИ И ОСОБЕННОСТИ ИХ УПОТРЕБЛЕНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Грамматическая категория, выражающая определенность и неопределенность имени существительного, в армянском языкознании считается грамматической категорией конкретности, научное обоснование которой впервые было дано академиком Г. Джаукяном. Определенный артикль указывает на то, что существительное конкретизировано ситуацией или контекстом.

В статье представлены определенные артикли современного армянского языка и особенности их употребления, подчеркивается, что употребление слова в определенном или неопределенном значении во многих случаях определяется характером артикля, его грамматическим значением, определенными ограничениями на морфологическом и синтаксическом уровнях.

В качестве слов, предшествующих существительному, упоминаются ряд слов со значением указательности, некоторые местоимения, прилагательные в превосходной степени, порядковые числительные, существительные, которые ставятся рядом с используемыми в качестве

связки абстрактными глаголами. Представлены слова, не получающие артикля вообще, те предлоги, которые требуют определенного или неопределенного соединительного слова в прямом и косвенном падежах, а также падежи, которые употребляются всегда без артикля и падежи, употребление которых с артиклем или без него обусловлено их грамматическим значением в данном предложении и выполняемой синтаксической ролью.

Ключевые слова: *грамматическая категория, определенность, неопределенность, артикль, суперпозиция, морфологический уровень, синтаксический уровень, склонение, местоимение, союз, члены предложения.*

H.Ghazaryan, L. Hayrapetyan

DEFINITE ARTICLES AND FEATURES OF THEIR USE IN MODERN ARMENIAN

Key words: grammatical category, definiteness, indefiniteness, article, superposition, morphological level, syntactic level, declension, pronoun, conjunction, sentence members.

The grammatical category expressing the definiteness and indefiniteness of a noun is considered in Armenian linguistics to be the grammatical category of concreteness, the scientific substantiation of which was first given by Academician G. Jahukyan. The definite article indicates that the noun is specified by the situation or context.

The article presents the definite articles of the modern Armenian language and the features of their use, it is emphasized that the use of a word in a definite or indefinite meaning in many cases is determined by the nature of the article, its grammatical meaning, certain restrictions on the morphological and syntactic levels.

As words preceding a noun, a number of words with the meaning of demonstrative, some pronouns, superlative adjectives, ordinal numbers, nouns are mentioned, which are placed next to abstract verbs used as a link. Presented are words that do not receive an article at all, those prepositions that require a definite or indefinite connecting word in direct and indirect cases, as well as cases that are always used without an article and cases whose use with or without an article is due to their grammatical meaning in this sentence and performed syntactic role.

Key words: *grammatical category, definiteness, indefiniteness, article, superposition, morphological level, syntactic level, declension, pronoun, conjunction, sentence members.*

Գոյականի որոշյալությունն ու անորոշությունը արտահայտող քերականական կարգը հայ լեզվաբանական գրականության մեջ համարվում է առկայացման քերականական կարգ, որի գիտական հիմնավորումն առաջին անգամ տվել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը[1]: Առկայացման քերականական կարգը հայերենում անվանվում է նաև տարորոշման կարգ[2]: Այդ քերականական կարգի ցուցիչները որոշյալ հոդերն են, որոնք «անմիջականացնող, իրադրությունը որոշող արժեք ունեն (առարկայացուցիչներ, ակտուալիզատորներ). դրվելով անուների վրա՝ այդ վերջամասնիկները որոշում են անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը, ցույց տալիս, որ խոսողը որոշում է այդ անունների նշանակած առարկաները (կամ հենց իրենք անունները)՝ ըստ հաղորդակցողներին ծանոթ լինելու աստիճանի կամ հաղորդակցողների հետ ունեցած առնչության»:[3]

Գոյականի առկայացման մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ գոյականը հանդես է գալիս ոչ թե անկախ՝ որևէ ասույթից և համատեքստից դուրս, այլ միայն դրանց մեջ ընդգրկվելու դեպքում: «Գոյականի առկայացումը քննելիս բավարար չէ միայն լեզվական իրողությունների հաշվառումը. խոսքային իրողությունները պետք է հաշվի առնվեն նույնքան, որքան ասույթի առկայացման ժամանակ»[4]: Առկայացման կարգի քերականական իմաստն ունի հետևյալ դրսևորումները՝ որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն: Թեև հոդերն ունեն իմաստային տարբերություններ, սակայն բոլոր հոդերի համար ընդհանուր է բառերի առարկայական վերաբերության տարորոշումը. հոդով տարբերակում, որոշակիացնում ենք գոյականի ցույց տված առարկան՝ ի տարբերություն բառի անհոդ գործածության: Որոշյալության ենթակարգը արտահայտության դիտվածքում բնորոշվում է **ը, ն** հոդերով, որոնց հակադրվում են **0** և **ՄԻ** ձևերը: Սրանք արտահայտում են անորոշի ենթակարգը: Ստացականությունը և դիմորոշությունն արտահայտվում են **ս** և **դ** հոդերով, ցուցականությունը՝ **ս** հոդով:

Հնդեվրոպական լեզուների զարգացման նախնական շրջանում հոդեր չեն եղել, այլ եղել են տարբերակված կիրառություններով ցուցական դերանուններ: Վերջիններս գործառվում էին նաև հոդերի իմաստային կիրառությամբ: Ժամանակի ընթացքում ցուցական դերանունների վերջադաս անշեշտ կիրառությունը թուլացրել է բառային-

---

[1] Տե՛ս **Ջահուկյան Գ.,** Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 184-188:

[2] *Տե՛ս **Աբրահամյան Ս.**, ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 159:*

[3] ***Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 139:*

[4] ***Арутюнова Н. Д.**, Лингвистические проблемы референции, Новое в зарубежной лингвистике, М., 1982, вып. 13,с.6.*

իմաստաբանական նշանակությունը՝ հասցնելով մասնիկների աստիճանի, ապա առաջ են եկել դերանվանական մասնիկների և ցուցական դերանունների տարբերակված, առանձնահատուկ իմաստային կիրառություններ[1]: Որոշյալությունը հայերենում հստակ դրսևորում է ստացել ետգրաբարյան շրջանում: Հայերենի եռաշարք **ս, դ, ն** հոդերը առաջացել են հայերենի ցուցական դերանունների հիմքի վրա: Մեյեն հայերենի **ս, դ, ն** արմատական բաղաձայնները համարում է առաջին, երկրորդ, երրորդ դեմքերի նկատմամբ տարածական հարաբերություններ արտահայտող մասնիկներից առաջացած, ըստ որում, **ս**-ն՝ խոսող մարդուն մոտ առարկայի համար, **դ**-ն՝ խոսակցին մոտ առարկայի, **ն**-ն՝ հեռու գտնվող առարկայի համար[2]: Հր. Աճառյանը ևս պաշտպանել է Մեյեի տեսակետը: Ինչպես գրաբարում, այնպես էլ լեզվի զարգացման հաջորդ շրջաններում **ս, դ, ն** հոդերը հանդես են գալիս որոշակի տարբերակված նշանակությամբ:

Որոշյալ հոդերի բառային, քերականական, ինչպես և ոճական-արտահայտչական արժեքները բազմապիսի են: Իրենց հիմնական գործառույթներին (մասնավորեցնող, ընդհանրացնող, ծավալային ամբողջություն ցույց տվող, առարկայական նշանակություն հաղորդող) զուգահեռ՝ որոշյալ հոդերը, թեև սահմանափակ, կատարում են նաև իմաստային այլ գործառույթներ: Դրանք մասնակցում են բայական հարադրությունների՝ շարահյուսական սովորական կապակցությունների վերածմանը, դարձվածքների իմաստների փոփոխությանը, խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերի կիրառությունների սահմանագծմանը, նույնաբաղադրիչ նախադասություններում ներխոսքիմասային և միջխոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերի տարբերակմանը, նախադասության անդամների, կապակցման եղանակների, նախադասությունների կառուցվածքների տարբերակմանը, բառերի կազմությանը և այլն:

Որոշյալ հոդերը ունեն նաև գործածության առանձնահատկություններ՝ կապված հոդառու բառի վերադրի բնույթով, քերականական իմաստով, ինչպես նաև ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում ունեցած որոշ սահմանափակումներով: Ստորև կներկայացնենք դրանք առանձին-առանձին:

Բառի՝ որոշյալ առումով գործածությունը շատ դեպքերում, ինչպես նշվեց, պայմանավորված է հոդառու բառի վերադրի բնույթով: Որպես այդպիսի դեր կատարող վերադիրներ կարող են հանդես գալ՝

---

[1] *Տե՛ս* ***Հ. Պետրոսյան****,Գոյականի առումները հայերենում, Եր., 1960, էջ 32:*

[2] *Տե՛ս* ***Мейе,*** *Введение в сравнительное* изучение индоевропейских языков, М.,1938, էջ 332:

1.**այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, ո՞ր, ո՞րերորդ, քանի՞երորդ, բոլոր, ողջ, ամբողջ, համայն, այսինչ, այնինչ** դերանունները : Օրինակ՝ **Ողջ մարդկությանը** խաղաղություն է անհրաժեշտ: **Ողջ, ամբողջ** դերանունները, սակայն, զուգակցվելով **մի** անորոշ դերանվան հետ, պահանջում են անորոշ առումով լրացյալ՝ **մի ամբողջ աշխարհ, մի ողջ երկիր:**

2.ածականի գերադրական աստիճանը : Օրինակ՝ Նա իրեն **ամենաերջանիկ հայն** է համարում:

3.դասական թվականները: Օրինակ՝ **Վեցերորդ գիշերը** մոլորված մի պտտահողմ անցավ մեր ժայռերի վրայով:

4.որոշակի հարաբերությամբ առարկա ցույց տվող ցուցականության իմաստ ունեցող մի շարք բառեր՝ **միջին, վերջին, հաջորդ, հետևյալ, նշված, վերոնշյալ** և այլն: Օրինակ՝ **Վերջին գիրքը** նվիրեցի **հաջորդ** երեխային :

Կան մի շարք կապեր ու կապական բառեր, որոնք պահանջում են որոշյալ առումով ուղղականաձև կամ տրականաձև կապվող բառ: Դրանք են՝ **առ, ի վար, ի վեր, նախքան, չհաշված, առընթեր, զուգընթաց, ընդառաջ, կից, համապատասխան, հավասար, նայած, չնայած, չնայելով (նախքան հաշվելը, համապատասխան իրականությանը, չհաշված դեպքերը)** : Կան կապեր և կապական բառեր էլ, որոնք պահանջում են անորոշ առումով կապվող բառ, ինչպես՝ **զերդ, ի, չանցած, առանց, առթիվ, առջև, դեմ, դիմաց, երեսից, ընդդեմ, ընթացքում, ըստ, ժամանակ, ի դեմս, ի թիվս, ի հեճուկս, ի տարբերություն, ի փառս, հանձին, հանուն, կողմից, համար, հասցեին, հետ, հետևանքով, հիման վրա, հօգուտ, համեմատ, հանդեպ, ձեռքից, մասին, մեջ, միջև, միջոցով, մոտ, ներքո, նկատմամբ, նպատակով, շնորհիվ, շուրջ, չափ, պատճառով, պես, վերաբերմամբ, վերաբերյալ, տեղ, փոխարեն, փոխանակ (հարցի շուրջ, կյանքի մասին, ի փառս հայրենիքի)** :

Որքան, ինչքան, քանի, ինչպիսի, որպիսի, ամեն մի, ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մի, ուրիշ, այլ, որոշ, որևէ, որևիցե, մի քանի, մի երկու, ոչ մի դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ: Օրինակ՝**ամեն մի մարդ, ինչ-ինչ հարցեր, որևէ դեպք, մի երկու նկար** և այլն :

Որպես հանգույց գործածվող **դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, երևալ, կոչվել, հռչակվել, ճանաչվել, ձևանալ, մնալ, անվանվել, նշանակվել, առաջադրվել** և այլ վերացական բայերի կողքին վերադիրը, մանավանդ երբ այն վերացական բայից հետո է, դրվում է անորոշ առումով: Օրինակ՝ Նա **դարձավ** հայրենիքի **պաշտպան:** Երիտասարդը **համարվեց հերոս:** Աղջիկը **ձևացավ դերասան:**

Որոշյալ հոդի գործածությունը որոշակիորեն սահմանափակված է ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Կան բառեր, որոնք ընդհանրապես հոդ չեն ստանում: Օրինակ՝ **աստված** (միայն ուղղականում),

կանայք, պարոնայք, մարդիկ, անձինք, -անք, -ենք, -ունք, -ունք ածանցներով անեզական գոյականները՝ **Գրիգորենք, Վեղունք, Վարդանանք:** Կան հոլովաձևեր (բացառական, գործիական, ներգոյական), որոնք միշտ գործածվում են առանց հոդի: Քանի որ հոդը ուղղակիորեն կապված է հոլովի գործառության հետ, բնականաբար նախադասության այն անդամները, որոնք արտահայտվում են բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, գործածվում են առանց հոդի:

Կան և հոլովաձևեր (ուղղական, տրական), որոնց հոդով կամ առանց հոդի գործածությունը բխում է տվյալ նախադասության մեջ արտահայտած նրանց քերականական իմաստից: Այսպես՝ հոդառու չեն՝

1.գոյականի ուղղական հոլովով արտահայտված որոշիչը՝ **Ծով աչքերը** լցված էին արցունքի մանրիկ կաթիլներով:

2.տեղի, ժամանակի, նյութի և այլ իմաստ արտահայտող գոյականների տրական հոլովաձևով արտահայտված որոշիչը՝ Ես հավաքել եմ **սարի և դաշտի ծաղիկներ:**

3.հատկացուցիչը՝ Այդ օրը **երկնքի աստղերն** այնքան շատ էին, որ թվում էր, թե երկինքը հյուսված էր աստղերից:

4.բուն բացահայտիչը, եթե բացահայտյալը արտահայտված է հատկացական տրականով՝ Արամի՝ **լավագույն մարզիչի** աշխատանքն անգնահատելի է:

5. մասնական բացահայտիչը՝Նա՝ **որպես հայրենասեր զինվոր**, կմնա մեր հիշողության մեջ:

6.նպատակի տրականը՝ Եկել եմ՝ քեզ **հանգստացնելու**:

7. անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը, որի կողքին դրված չէ **ահա** վերաբերականը՝ **Երևան: Աստաֆյան փողոց:**

Սրանց հակառակ՝ ժամանակի տրականը գործածվում է հոդով՝ **լուսաբացին, ծեգին, մայրամուտին, հունվարին, ամռանը, գարնանը** և այլն: Ժամանակի տրականի հոդառությունը պայմանավորված է գերազանցապես նրանով, որ նրանց արտահայտած հասկացությունները գործողությունը առնում են որոշակի ժամանակային հաջորդականությամբ, ներկայացնում են որոշյալ ժամանակակետ՝ **Մայրամուտին** արևը բորբ է լինում:

Մաս և **կես** բառերը ենթակայի կամ խնդրի պաշտոնում գերազանցապես հոդառու են, հաճախ այդպիսին են նաև հոդ չպահանջող վերադրի առկայությամբ:

Օրինակ՝ Ժառանգության **մի որոշ մասը** պիտի ստանա կինը: **Մեծ մասը** բաժին կհասնի երեխաներին:

Նախադասության՝ վերը նշված հոլովներով արտահայտվող մյուս անդամները կարող են գործածվել թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումներով:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում բառի որոշյալ կամ անորոշ առումով գործածությունը պայմանավորված է ինչպես հոդառու բառի վերադրի բնույթով, քերականական իմաստով, այնպես էլ ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններով :

Գրականություն

1. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.,Ժամանակակից հ. 2, Եր., 1974:
2. Աբրահամյան Ս., ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 159:
3. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2004:
4. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2007:
5. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Ձևաբանություն, Եր., 2008:
6. Ղազարյան Հ., Որոշյալ հոդերի իմաստագործառական առանձնահատկությունները, Հայրենագիտական միջազգային 10-րդ գիտաժողով՝ 7-9 հոկտեմբերի, «Զեկուցումների ժողովածու»,Եր., 2015, էջ198-208 :
7. Պետրոսյան Հ.,Գոյականի առումները հայերենում, Եր., 1960 :
8. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969:
9. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М. ,1938.
10. Арутюнова Н. Д., Лингвистические проблемы референции, Новое в зарубежной лингвистике, М., 1982.

Նյութը ներկայացվել է 22.05.2023,
գրախոսման է ուղարկվել 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ակ.
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը:

УДК 811.161.1

Методика преподавания русскоо языка

Инна АДАМЯН
ст. преподаватель каф. русского языка и литературы АрГУ
E-mail: adamyaninna09@asu.am

ЦЕЛИ ПРОВЕДЕНИЯ ШКОЛЬНОЙ ОЛИМПИАДЫ И ОБЩИЕ ТРЕБОВАНИЯ К РАЗРАБОТКЕ ОЛИМПИАДНЫХ ЗАДАНИЙ

Ի.Ադամյան

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածում անդրադարձ է կատարվում դպրոցական օլիմպիադաներին. մասնավորապես ուսումնասիրվել են դրանց անցկացման նպատակների ու առաջադրանքների մշակման ընդհանուր պահանջները: Պարզաբանվում ու հիմնավորվում է, որ հաճախ թեստային առաջադրանքները չեն համապատասխանում դպրոցական ծրագրին, մասնավորապես՝ դասագրքերին: Հոդվածում մեր կողմից վեր են հանվում որոշ սխալներ ու թերություններ, որոնք անթույլատրելի են՝ ***ռուսաց լեզու*** *առարկայից օլիմպիադայի առաջադրանքներ մշակելու և կազմելու պարագայում:*

Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում առարկայական օլիմպիադաներին, որտեղ մասնակիցները ցուցադրում են իրենց հմտություններն ու գիտելիքները կոնկրետ առարկաներում: Օլիմպիադաների հիմնական գործառույթներն են բոլոր մասնակիցների ինտելեկտուալ կարողությունների զարգացումը և կրթական մակարդակի պահպանումը: Օլիմպիական խաղերը նպաստում են նաև անհատի ինքնազարգացմանը և ամենաուժեղ մասնակիցների բացահայտմանը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռուսաց լեզվի օլիմպիադաներին և նրանց դերին սովորողներին լեզուն սովորելու մոտիվացման գործում:

Հոդվածում նշվում է, որ օլիմպիադաներն անցկացվում են մի քանի փուլով՝ դպրոցական, քաղաքային և հանրապետական: Հոդվածի հեղինակը, ունենալով ռուսաց լեզվի ուսուցման և

օլիմպիադաներին մասնակցելու փորձ, որոշակի անհամապատասխանություն է նկատում օլիմպիադաների թեստային առաջադրանքների և դպրոցական դասագրքերի ծրագրերի միջև:

Բանալի բառեր՝ *օլիմպիադա, թեստեր, թեստային առաջադրանքներ, դասագիրք, ունակություններ, հայկական դպրոց, անհամապատասխանություն, գիտելիք:*

В статье автор раскрывает тему школьных олимпиад, останавливаясь конкретно на целях их проведения и общих требованиях к разработке олимпиадных заданий. Автор обосновывает и выясняет, что тестовые задания олимпиад часто не соответствуют школьной программе, в частности, школьным учебникам. В статье автором выявлены и представлены некоторые ошибки и недочеты, недопустимые при разработке и подготовке олимпиадных заданий по русскому языку.

Статья особо обращает внимание на предметные олимпиады, где участники демонстрируют свои навыки и знания по конкретным дисциплинам. Главными функциями олимпиад являются развитие интеллектуальных способностей всех участников и поддержание уровня образования. Олимпиады также способствуют саморазвитию личности и выявлению сильнейших участников.

Особое внимание уделено олимпиадам по русскому языку и их роли в мотивации учащихся изучать язык.

Статья отмечает, что олимпиады проводятся в несколько этапов: школьный, городской и республиканский. Автор статьи, имея опыт преподавания русского языка и участия в олимпиадах, замечает некоторое несоответствие тестовых заданий олимпиад программам школьных учебников.

Ключевые слова:*. олимпиада, тесты, тестовые задания, учебник, способности, армянская школа, несоответствие, знание.*

I.Adamyan

OBJECTIVES OF THE SCHOOL OLYMPIAD AND GENERAL REQUIREMENTS FOR THE DEVELOPMENT OF OLYMPIAD TASKS

In this article, the author reveals the topic of school Olympiads, focusing specifically on the goals of their conduct and the general requirements for the development of Olympiad tasks. The author

substantiates and finds out that the test tasks of the Olympiads often do not correspond to the school program, in particular, school textbooks. In the article, the author identifies and presents some errors and shortcomings that are unacceptable in the development and preparation of Olympiad tasks for the Russian language.

The article pays special attention to subject Olympiads, where participants demonstrate their skills and knowledge in specific disciplines. The main functions of the Olympiads are the development of the intellectual abilities of all participants and the maintenance of the level of education. The Olympics also contribute to the self-development of the individual and the identification of the strongest participants.

Particular attention is paid to Russian language olympiads and their role in motivating students to learn the language.

The article notes that the Olympiads are held in several stages: school, city and republican. The author of the article, having experience in teaching the Russian language and participating in Olympiads, notices some discrepancy between the test tasks of the Olympiads and the programs of school textbooks.

Key words: *Olympiad, tests, test tasks, textbook, abilities, Armenian school, inconsistency, knowledge.*

Олимпиада как вид состязания известна очень давно, с незапамятных времен, что не является секретом. Причем не только ее спортивное направление, но и «умственные состязания».

Необходимо отметить, что в настоящее время олимпиадное движение по многим предметам активно развивается и пользуется большой популярностью. Участники олимпиады проверяют свои силы, развивают способности и интересы, преподаватели же показывают результаты своей работы, выявляют сильных учащихся.

Предметные олимпиады, о которых идет речь, - это состязание учащихся, в которых участники демонстрируют свои навыки и знания по определенным дисциплинам. Помимо этого олимпиады выполняют разные функции, среди которых основными являются :

1. Интеллектуальное развитие всех участников олимпиады.

2. Поддержание и развитие уровня образования (1).

Как отмечал академик В.В. Лунин, в олимпиадах заложен сильный стимул саморазвития личности, который подавляется выявлением сильнейших (2).

Конкретно затрону тестовые задания олимпиад по русскому языку. Олимпиада по русскому языку может стать одной из форм мотивации учащихся к изучению языка. Общие тенденции развития образования требуют такой организации учебной деятельности, при которой у учащихся формировалась бы потребность в реализации интеллектуально - творческого потенциала(3). Цели проведения школьной олимпиады, безусловно, ясны. И в первую очередь – это развитие интеллектуальных способностей, улучшение мышления, совершенствование творческих способностей и, в конце концов, проверка школьных знаний учащихся, способность правильно их применить. Как известно, олимпиада состоит из нескольких этапов. Первый этап проводится в школе. Второй этап –городская олимпиада (соревнуются между собой школьники всего города). На третий тур уже собираются лучшие школьники республики.

Хочу отметить, что во время своей преподавательской деятельности неоднократно участвовала в процессах проведения олимпиад по русскому языку и хорошо знакома с тестовыми заданиями.

Часто удивлялась несоответствию тестовых заданий школьных и районных олимпиад с программными школьными учебниками. Несомненно, целью олимпиады прежде всего является проверка всестороннего развития ученика, поэтому на олимпиаде участвуют особые ученики с более глубокими знаниями. И все же считаю, что исходя из нашей сегодняшней ситуации и условий, в которых живут и учатся наши дети, а также имея в виду учебники по русскому языку в армянских школах, которые дают самый минимальный багаж знаний (основная нагрузка и роль остаются за учителем, причем смотря какой класс и какой учитель), необходимо пересмотреть подход к тестовым заданиям по русскому языку именно для учеников армянских школ.

Это один из основных вопросов, требующих внимания и верного решения, ибо в дальнейшем подобное приводит к разочарованию среди учеников и к потере желания участвовать в подобных олимпиадах, а также к полному отсутствию интереса и внимания к русскому языку в целом.

Отмечу, что среди моих учеников также были участники олимпиад по русскому языку. Одна из них, ученица IX класса основной школы N 10 набрала самый высокий балл в городской олимпиаде (по школе) 33 балла.

Девочка с воодушевлением приняла участие в олимпиаде и перешла в следующий, республиканский тур.

Ознакомилась с тестами школьной олимпиады и считаю, что на их примере должны быть составлены тестовые задания конкурсов в целом.

Тестовые задания школьной олимпиады не противоречили школьной программе как по русскому языку, так и по русской литературе (имею в виду армянские школы). Не было ни одного неверно или неуместно сформулированного вопроса. Так, приведу некоторые примеры : (7)

1.Укажите ряд, в котором во всех словах ударение стоит на первом слоге.

1) карандаш, портфель, рюкзак, пенал

2)улыбка, радость, доброта, счастье
3)груша, слива, яблоко, персик
4) огурец, перец, помидор, капуста
Оценка за задание - 1 балл.

2. Найдите те словосочетания, в которых в выделенных словах ударение стоит на втором слоге. Отметьте правильный вариант ответа.

1) стояли у **ворот**
2)расстёгнутый **ворот** сорочки
3)**сбегать** в магазин
4)**сбегать** с лестницы
5)долгая **дорога**
6)книга мне **дорога**
7)от обиды **плачу**
8)**плачу** за покупку
9)красивые **руки**
10)не подать **руки**

Варианты ответов:
1) «1, 4, 6, 8, 9»
2) «4, 5, 1, 3, 2»
3) «1, 4, 5, 8,10»
4) «2, 8, 5, 3, 9»

3. Укажите ряд, в котором во всех словах вместо точек пишется -з-.

1) ра…ширить, ра…бить, ра…веселить, ра…думать
2) бе…конечный, бе…вредный, бе…работный, бе…людный
3) …доровье, ра…бег, ра…мах, …дание
4) бе…шумный, бе…ропотный, бе…сердечный, бе…умный

4. Укажите, в каком предложении в слове вместо точек пишется -а-.

1) Лёгкий ветерок к…снулся его непокрытой головы.
2) Море раскинулось безграничной равниной, которая к…салась края неба.
3) К…снувшись горизонта, туча замерла на нём.
4) Первые лучи утренней зари чуть к…снулись вершин сосен.
Оценка за задание - 1 балл.

5. Укажите ряд, в котором во всех словах вместо точек пишется -ё-

1) ш…пот, пч…лы, ш…лк, щ…тка
2) ш…колад, ш…ссе, сч…т, крыж…вник
3) уч…ный, ш…рох, зач…т, реш…тка
4) ш…в, ж…лудь, ш…рты, ч…лка
Оценка за задание - 1 балл.

6. Укажите, в каком предложении в слове вместо точек пишется -а-.

1) В одно мгновение комната сделалась ещё светлее, все маленькие свечки ещё ярче разг…релись.

2) Костёр г…рел в ночной темноте.

3) У него был чудесный морской заг…р.

4) Мы заг…рали всё лето в Крыму.

Подобного рода задания проводились и проводятся на уроках русского языка армянских школ, правила объясняются учителями, что, конечно же, очень похвально. На этих примерах мы видим, что тесты вполне доступны ученикам,и, с другой стороны, дают информацию для размышления, усиливают мыслительный процесс и развивают логику.

Единственное, считаю, что тестовые задания олимпиады для армянских школ все-таки должны немного отличаться от заданий русских школ.

Современные школьные учителя должны создавать такую образовательную среду, которая способствовала бы развитию способностей и возможностей каждого ребенка, а преподаватели вузов – продолжать начатую в школе работу по формированию интеллектуального потенциала студента(3) .

Так, в 2022 году кафедрой русского языка также была организована олимпиада по русскому языку для учеников старших классов города. И нужно отметить, что тестовые задания олимпиады для учеников армянских школ отличались от заданий русской школы. Это облегчило работу, как учеников, так и проверяющих.

Позже та же ученица приняла участие и в районной олимпиаде по русскому языку. Девочка пришла в замешательство, хотя неплохо справилась с работой. Ознакомившись с тестовыми заданиями по русскому языку районной олимпиады, крайне удивилась. Тут важно отметить (поскольку в основном речь идет об учениках армянских школ), что тесты были для них сложны и содержали в себе некие ошибки и несоответствия, тем более, что наши школьные учебники, как отмечалось выше (выделено мною И.Адамян), не дают детям ТУ НЕОБХОДИМУЮ ИНФОРМАЦИЮ, после которой ученика можно считать не только грамотным, но и всесторонне развитым.

Помимо этого, в тестовых заданиях и в ключах было допущено много ошибок, что, естественно, затруднило работу учеников. Приведу некоторые примеры. Так в тестах 9-10 классов (6) :

Задание 5: Назовите в одном слове конечности жука и вид кавычек:

а) усики; б) лапки; в) крылышки, г) ноготочки:

Вопрос исключает возможность нескольких правильных ответов, и в ключах тоже указан только один правильный ответ- (г) вместо (б) и (г)

Задание 23: В каком ряду (рядах) все существительные стоят в дательном падеже?

а) брату, водителям, тенью, пьесе;

б) игроку, кузнецу, с вопросом, ключом;

в) коню, к гнезду, архитектору, однокласснице;

г) щекам, в газете, игрушкам, к вопросу;

д) лебедем, друзьями, водой, шлему

Ошибка в ключах. Правильный ответ (в), а в ключах (в) и (г)

26. Какие из приведенных ниже слов имеют одинаковую приставку?

а) подоконник, б) подорожник, в) подруга, г) подлец, д) подарок, е) подагра

Ошибка в ключах. Правильный ответ (б), (в), (д), а в ключах только (б)

Подобного рода недочеты наблюдаются и в тестовых заданиях 11-12 классов.

Задание 8. Во фразе «Есть в три горла» слова три означает «много», а во фразе «У него все образование – три класса и коридор – «мало». В каких из данных пяти примеров слово «три» означает «много»?

1) В трех соснах, 2) в три ручья, 3) в три шеи, 4) в три погибели, 5) втридорога

а) во всех; б) во всех, кроме 1; в) в 2, г) в 3 и 4, д) в 2 и 5.

В задании 8 варианты 3 и 4 считаются ошибочными, так как « в три шеи» имеет значение «выгнать», а выражение « в три погибели» употребляется в значении «очень сильно», но не в значении «много»

Задание 10. Какие из этих слов происходят из того же корня, что и слово «стол»: 1) столовая, 2) столица, 3) столяр, 4) столько, 5) столешница, 6) столетник, 7) престол, 8) застолье?

а) все; б) все, кроме 4, 7; в) все, кроме 4, 5, г) все, кроме 4, 6, д) все, кроме 4, 6.

А в задании 10 ответы (г) и (д) одинаковы.



8. Во фразе «*Есть в три горла*» слово *три* означает «*много*», а во фразе «*У него всё образование — три класса и коридор*» — «*мало*». В каких из данных пяти примеров слово «три» означает «много»?

1) в трёх соснах, 2) в три ручья, 3) в три шеи, 4) в три погибели, 5) втридорога.

а) во всех; б) во всех, кроме 1; в) в 2; г) в 3 и 4; д) в 2 и 5.

9. Какие предложения содержат ошибки? *1) В соревновании участвовали ученики обоих школ. 2) Скоро зажгётся фонарь и осветит улицу. 3) Внимательно слушав учителя, он всё усваивал. 4) Знания арифметики у Арсена более слабее, чем у Мартына.*

а) 1; б) 2; в) 2, 3; г) 1, 2; д) 1, 2, 3; е) 1,2,3,4.

10. Какие из этих слов происходят от того же корня, что и слово «стол»: *1) столовая, 2) столица, 3) столяр, 4) столько, 5) столешница, 6) столетник, 7) престол, 8) застолье?*

а) все; б) все, кроме 4, 7; в) все, кроме 4, 5; г) все, кроме 4, 6; д) все, кроме 4, 6.



20. Из какого произведения взято словосочетание «Фамусовское общество», ставшее устойчивым? *а) Война и мир; б) Преступление и наказание; в) Евгений Онегин; г) Горе от ума; д) Герой нашего времени*

21. Какой фразеологизм соответствует лексическому значению «сознательно не обращать внимания на что-либо, не замечать»: *а) глядеть в одну точку; б) глядеть в оба; в) глядеть сквозь пальцы; г) глядеть со своей колокольни; д) нет вариантов.*

22. Определите название корзинок из теста, которые наполняют различными начинками: *а) галетки, тарталетки; б) пинетки, в) таблетки, г) жилетки*

23. В каком ряду не во всех словах пишется одна и та же буква?

а) пр...зумпция, пр...йскурант, пр...рогатива. пр...тензия;
б) пр...тендент, пр...цедент, пр...ватизация, пр...позиция;
в) пр...словутый, пр...емственный, пр...людия, пр...рекаться;
г) пр...говор, пр...даток, пр...земистый, пр...нудительный.

24. В финском языке вареными ушками называют:
а) пряники; б) пельмени; в) сухари; г) макароны; д) хинкали; е) спагетти; ж) блинчики.

25. Какие из перечисленных слов могут быть названиями головных уборов?
а) котелок; б) берет; в) шапокляк; г) ушанка; д) ермолка; е) кибитка

3

Задание 22. Определите название корзинок из теста, которые наполняют различными начинками:

а) галетки, тарталетки; б) пинетки, в) таблетки, г) жилетки

В задании 22 ответ (а) галетки и тарталетки. Слова написаны вместе в том случае, когда «галетки» не соответствуют требованиям условия и не имеют формы корзины

Таким образом, исходя из опыта работы, прихожу в очередной раз к выводу, что необходимо тщательно разработать все олимпиадные задания. Общими рекомендациями, конечно же, являются:

1.Соответствие тестовых заданий школьной программе и школьным учебникам

2.Тщательный подбор вопросов

3.Внимательный подход к ключевым ответам и точная формулировка вопросов (если два верных ответа, то и вопрос должен быть поставлен соответствующе)

4.Грамотно и верно построенные задания

Хочу добавить, что столкнулась с подобной проблемой и во время проведения письменной работы по русскому языку со стороны Центра тестирования и оценки (в VI классе). Эти тесты содержали многочисленные ошибки, например:

3. Буква –е- пропущена в слове

1.Изв...ржение вулкана

2.Ид...альный вариант

3.Явный д...летант

4.Злобный ж...водер

4. Буква –т- пропущена в слове

1.Небес...ный объект
2.Радос...ное лицо
3.Вкус...ный пирог
4.Чес...ное слово

5. Буква –ь- пишется в слове

1.Красный кирпич...
2.Русская реч...
3.Черная туш...
4.Футбольный мяч...

6. Все слова имеют общий корень в ряду

1.Писать, писательница
2.Рыба, рыболов
3.Смешной, смешить
4.Мирить, мерить

К моей радости, большинство из учеников догадались и справились с заданиями, получив высшую оценку, так как класс был сильным.

Думаю, недочеты вполне устранимы в случае активной и непрерывной работы.Обсуждения этой темы проводились неоднократно во время разных мероприятий (круглых столов, семинаров, конференций). Проблемных, и нерешенных задач и вопросов немало , однако при последовательной и верной работе результаты в скором времени, несомненно, будут налицо.

Литература

1. Гетманская Е.В. Олимпиада как форма взаимосвязи среднего и высшего образования. Вестник
2. Леонидова Г.В. Региональный научно-образовательный центр. 2007. стр. 97 МГУ. 2010. стр. 82-88.
3. Проблемы развития территории. Июль-сентябрь 2011. стр. 55
4. Рафаелан Н.Г., Грдзелян Р. Р., Тер-Аракелян Р.А. Русский язык (9 класс).2015
5. https: //olymp.am> problems
6. www.atc.am
7. edu.nk.am

Նյութը ներկայացվել է 02.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ., Վ.Ն. Հարությունյանը:

УДК 811.161.1(373)

Методика преподавания русского языка

Маркарян Н.Ю.
старший преподаватель кафедры
русского языка и литературы АрГУ
E-mail: margaryannaira09@asu.am

НЕКОТОРЫЕ ТРУДНОСТИ ПОДГОТОВКИ К ЕГЭ ПО РУССКОМУ ЯЗЫКУ КАК НЕРОДНОМУ

Ն. Մարկարյան

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻՑ ՈՐՊԵՍ ՈՉ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՐՈՇ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդվածում տրվում է ռուսաց լեզվի շտեմարանների (2016-2018 թթ.) և միասնական քննությունների նախապատրաստման ու դիմորդների կողմից դրանք հանձնելու ժամանակ ի հայտ եկած խնդիրների համալիր վերլուծությունը:

Նախ՝ ընդգծվում է, որ թեստային առաջադրանքներում կան վիրակներ, տարարժեք առաջադրանքներ, դիմորդին ապակողմնորոշող ու խրթին լեզվով ձևակերպված պահանջներ: Թվում է՝ գիտակցորեն խճողված են ձևակերպումները, որոնք դիմորդին շփոթեցնում են և նրա համար «ծուղակներ» ստեղծում:

Երկրորդ՝ առաջադրանքները անհարկի ծանրաբեռնված են աշակերտին անծանոթ, անհասկանալի և ծրագրով չուսուցվող բառերով, եզրույթներով:

Երրորդ՝ որոշ առաջադրանքների ծավալն ու բովանդակությունը չեն համապատասխանում դպրոցական ուսումնական ծրագրին:

Բոլոր մեկնաբանությունները ապահովված են Test Bank-ի օրինակներով:

Հոդվածում անդրադառնում է նաև ավագ դպրոցի (10-12-րդ դասարաններ) խնդրին, որը, ցավոք, ուսման այս 3 տարիների ընթացքում չի կարողանում շրջանավարտներին նախապատրաստել շտեմարանում քննություններ հանձնելու (ուսումնական պլանը թույլ չի տալիս, շատ առաջադրանքների անհամապատասխանություն ծրագրով և ժամերի անբավարար քանակով), չնայած Շտեմարանի առաջաբանում ասվում է, որ «Այս աշխատանքում ներկայացված են հանրակրթական դպրոցի

«Ռուսաց լեզու» առարկայի ուսումնական նյութերին համապատասխան թեստային առաջադրանքներ: Դրանք ուղղված են ավագ դպրոցի աշակերտներին, շրջանավարտներին, ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներին»:

Բանալի բառեր՝ *շտեմարան, միասնական քննություններ, խնդիրներ, բարդ առաջադրանքներ, բացատրման սկզբունք, օրինաչափությունից շեղումներ, ամրապնդող վարժություններ:*

В статье дан анализ Банка тестов (Штемаран) по русскому языку для подготовки к ЕГЭ (с 2016 по 2018 годы) и выявлено несколько причин, по которым выпускникам сложно выполнять тесты.

Во-первых, тесты содержат ошибки, неточности, некоторые условия заданий двусмысленны, непонятны абитуриенту, сложны. Сознательное, запутанное оформление условий тестов приводит к путанице и невнимательности экзаменующихся.

Во-вторых, задания изобилуют незнакомыми и непонятными школьнику словами.

В-третьих, некоторые задания и их объем не всегда соответствуют школьной программе.

Все замечания подтверждены примерами из Банка тестов.

В статье затрагивается проблема и старшей школы (10-12 кл.), которая, к сожалению, за эти 3 года обучения не в состоянии подготовить выпускников к сдаче экзаменов по штемаранам (не позволяет учебная программа, несоответствие многих заданий программе и недостаточное количество часов), хотя в предисловии штемаранов записано, что “В данной работе представлены тестовые задания, соответствующие учебным материалам по предмету 'Русский язык' общеобразовательной школы. Они адресованы учащимся старшей школы, выпускникам и учителям русского языка и литературы.”

Ключевые слова:*. банк тестов, единые экзамены (ЕГЭ), задачи, трудные задания, метод исключения, исключения из правил, тренировочные упражнения.*

N.Margaryan

SOME DIFFICULTIES IN PREPARING FOR THE UNIFORM STATE EXAMINATION IN RUSSIAN AS A NON-NATIVE LANGUAGE

This article analyzes Test Bank (Shtemaran) of the Russian language for preparing for the Uniform State Examination and identifies several reasons why it is difficult for school graduates to pass the tests.

Firstly, the tests contain errors, inaccuracies, some of the assignments of the tasks are ambiguous, incomprehensible and complex for the applicant. Consciously confusing design of test conditions leads to confusion and inattention of the examinees.
Secondly, the tasks are replete with words unfamiliar and incomprehensible to the pupil.Thirdly, some tasks and their volume do not always correspond to the school curriculum..
All comments are supported by examples from the Test Bank.
The article also touches upon the problem of high school (grades 10-12), which, unfortunately, during these 3 years of study is not able to prepare graduates for passing exams in shtemarans (the curriculum does not allow, the inconsistency of many tasks with the program and the insufficient number of hours) , although Shtemaran's foreword says that "This paper presents test tasks corresponding to the teaching materials on the subject 'Russian language' of a general education school. They are addressed to high school students, graduates and teachers of the Russian language and literature."
Key words: *test bank, Uniform State Examination, tasks, complex tasks, method of exclusion, exceptions to the rules, training exercises.*

ЕГЭ — сложное испытание, с которым, к сожалению, справляется далеко не каждый выпускник. Мысль о неудаче может созреть в голове любого абитуриента, даже очень «сильного».

Однако ЕГЭ имеет определенные преимущества, на которые следует обратить внимание:

· Один экзаменационный период вместо двух (выпускного и вступительного).

· Подача документов в несколько вузов (в том числе в других регионах страны) увеличивает шансы на поступление.

· Возможность пересдачи ЕГЭ в последующие 4 года для желающих улучшить текущие показатели.

До появления Банка тестов по русскому языку желающие поступать на экономический, юридический факультеты университетов Арцаха и Армении в основном выбирали в качестве иностранного языка не английский, а русский, так как русским они реально владели лучше, чем английским. Что еще важнее, у них есть опыт сдачи экзамена по русскому языку (далее РЯ) в 9 классе, с чем справляются достаточно хорошо.

Но с появлением Банка тестов по русскому языку в 2013 г. картина резко изменилась не в пользу РЯ, так как стало достаточно сложно готовиться к ЕГЭ по этим тестам.

К недостаткам сдачи ЕГЭ относятся следующие:

· Подготовка к такому экзамену подразумевает не получение знаний по предмету, а обучение оптимальному прохождению тестов.

· Сложная стрессовая ситуация при проведении экзамена — личный досмотр, наблюдение с помощью видеокамер и др.

· Необратимость сделанных ошибок. На обычном (устном) экзамене учащийся имеет возможность уточнить непонятный вопрос и оперативно скорректировать ответ. Сдавая единый госэкзамен, особенно выбирая один ответ из нескольких вариантов, у него такой возможности нет.[1]

Банки тестов (условно назовем их Штемаранами) по РЯ переиздавались всего один раз в 2016 г. и то для того, чтобы исправить ошибки, неточности, хотя они остались (например, в первой части Штемарана за 2018 год отсутствуют страницы с 240 по 245, то есть отсутствуют 20 тестов с 5.4.50 по 5.4.75); но объем и содержание остались прежними, а вот Штемараны по армянскому языку постоянно обновляются, сложные задания облегчаются! К сожалению, старшая школа (10-12 кл.) за эти 3 года обучения не в состоянии подготовить выпускников к сдаче экзаменов по штемаранам (не позволяет учебная программа, несоответствие многих заданий программе и недостаточное количество часов), хотя в их предисловии записано:[2]

«Սույն ձեռնարկում ընդգրկված են հանրակրթական դպրոցի «Ռուսաց լեզու» առարկայի ծրագրային նյութերին **համապատասխանող** թեստային առաջադրանքներ: Այն հասցեագրված է ավագ դպրոցի աշակերտներին, շրջանավարտներին և ուսուցիչներին:»[3]

Тесты для сдачи ЕГЭ по РЯ содержат ошибки, неточности, некоторые условия заданий двусмысленны, непонятны абитуриенту, сложны, во многих заданиях два правильных ответа (например, задания из части первой, 9.42 , 9.48, 9.7) и задания с неправильными ответами, данными как правильные (часть первая 9.130, 9.179, 9.189, 9.191, 9.196, 214); есть условия, в которых требуется найти грамматико-стилистическую ошибку (например, часть первая 5.3.54) – знают ли школьники, что это такое и где ему это прочитать?

Но мы не ставим цели останавливаться на них.

И, как мы выяснили, штемараны составлены так, что почти никто из выпускников без репетиторства не сдает ЕГЭ по русскому языку.

Почему? Причин несколько.

Во-первых, если тесты первой и второй частей штемаранов имеют по одному верному ответу, то тесты третьего штемарана требуют нескольких ответов (иногда по два верных, может быть до четырех), что, думается, не только возможность выбора двух-четырех ответов приводит к путанице и невнимательности экзаменующихся, а и сознательное запутанное оформление

---

[1] *Интернет-ресурс*

[2] *Ռուսաց լեզու. Թեստային առաջադրանքների շտեմարան. Մաս 1,2, 3. «Երևան. Ֆիլին», 2013:*

[3] *Там же*

условий тестов: то указать, где пишется, потом где не пишется, где «не» слитно, где не слитно,например:

5.6.21 Укажите предложение, в котором выделенное слово пишется раздельно:

1. (В)низу было тихо, пахло смолой
2. А (в)верху бесз конца и перерыва раздавался лесной шум
3. (В)начале раздался скрип открываемой двери, потом вошел гость
4. (В)начале романа автор описывает исторические события

5.6.22 Укажите предложение, в котором выделенное слово пишется слитно:

1. Вглядываешься (в)глубь озера и на дне видишь каждый камушек.
2. Не ходите (по)этому шаткому деревянному мосту.
3. Заболел, (по)этому не пришел на занятия.
4. (За)тем лесом находится деревня.

5.9.21. В каком причастии (причастиях) пропущен суффикс –ущ—(-ющ-)?

1. Колыш...иеся на ветру знамена
2. Маш...ая крыльями мельница
3. Не завис...ие от нас обстоятельства
4. Недорого сто...ие книги
5. Дыш...ие силой слова

Бросается в глаза, что из пяти примеров два слова являются исключениями, что также усложняет решение теста.

Во-вторых, задания изобилуют незнакомыми и непонятными школьнику словами (порой и сами учителя отдаленных районов обращаются к толковому словарю). Правда, сегодня мы реально встречаемся с явной экспансией иноязычной лексики во всех сферах общественной жизни. Но также известно, что многие иноязычные слова в зависимости от степени освоения (так называемой ассимиляции) стали общеупотребительными. Вот хотя бы эти слова были бы из области образования и особенно – компьютера, известные подавляющему большинству школьников. Почему не взяты из этих слов примеры? И сбрасывать со счетов факт отсутствия русской речевой среды в сельских местностях тоже вряд ли стоит. Где, если не в школе, абитуриент их услышит? Чтобы не быть голословными, приведем примеры:

вексель, пасквиль, дактиль, вензель, фланель, канитель, визави, амплуа, каноэ, зебу, рандеву, балаган, хохлома, гриф, граб, кашне, рантье, контральто, толь, бандероль, ретушь.

И к тому же требуется определить род этих слов…

Во второй части Штемарана в тесте 5.1.22 следующее задание:

Какое существительное относится к Ж.р.?

1)толь 2) бандероль 3) бра 4) лебедь

Кроме «лебедя» все остальные три слова школьнику незнакомы.

Думается, слова подобраны с особой «тщательностью». Поэтому абитуриенты составляют подобные таблицы со словами и вызубривают род неупотребляемых ими слов.

Мужской род	Женский род	Средний род
трюфель, пудель,	глазурь, лазурь,	жюри, какао,
картофель, паксиль,	салями, сушь,	интервью, безе,
вензель, дактиль,	вермишель, чушь,	кашне, домино,
вексель, пасквиль,	глушь, мишень,	каноэ, бра,
какаду, ратье,	картечь, фланель,	каре, визави,
портье, конференсье,	авеню, вуаль,	алиби, ассорти,
шампунь, ноль,	мозоль, моль,	амплуа, ателье,
клич, гель,	туфля, спазма,	варьете, бюро,
пони, водевиль,	карусель, фасоль,	карате, кимано,
каракуль, грош,	метель, кольраби,	конфети, резюме,
трельяж, шимпанзе,	бандероль, гармонь,	рандеву, фойе,
лебедь, тюль,	соль, хворь,	тире, кресло,
душ, гуашь,	капель, канитель	рагу, монпансье
аэрозоль, толь,		

Или же тест 5.1.24

Укажите ряд, в котором представлены равноправные варианты:

1)рельс- рельса 2) ставень-ставня 3) фильм- фильма 4) туфель – туфля

Хочется спросить, какие знания и языковые навыки можно проверить данным тестом?

Создается впечатление, что составители тестов специально подыскивали слова, чтобы провалить экзаменующихся, тем самым нарушая права старшеклассников…. Либо перепутали тесты ЕГ с тестами для олимпиад.

Вот задание, где нужно **указать ряд, в котором НЕ все слова являются синонимами**:

1.Воин, боец, ратник, привратник

2.Напрасно, зря, бесполезно, понапрасну

3.Блестеть, сверкать, сиять, искриться

4.Смелый, храбрый, отважный, бесстрашный

Так и хочется из условия убрать частицу НЕ и изменить тест так, чтобы выбрать 4-й ряд, в котором известные и актуальные во все времена для армянского ученика слова. Но правильный ответ – это 1-й ряд, на котором экзаменующийся не заостряет внимание, так как слова ратник и привратник ему неизвестны. То есть 14 слов ему известны, но из-за двух устаревших слов, которые не входят даже в его пассивный словарный запас, он не набирает балла.

Смысл многих предложений с синтаксическими заданиями или с заданиями определить последовательность предложений в тексте желает быть понятнее, поэтому в каждом тексте приходится вначале объяснять значения слов и предложений, и уже потом переходить к выполнению заданий, например:

В какой последовательности нужно расположить предложения, чтобы получился текст?

A. При этом часто пользовались **славянизмами** высокого стиля.

B. Тут, правда, встретилось препятствие: любители старины пытались переводить иноземные понятия на родной язык.

C. Много новых заимствованных слов принесло начало XIX века.

D. Между тем эти «высокие» слова порой воспринимались как чуждые русскому языку не меньше, чем отвергаемые **галлицизмы**.

E. Язык (1) по мнению **лингвистов** (2) сложная система, которая включает более простые системы: **фонетическую, морфологическую, лексическую**. Было бы неправильно (3) однако (4) полагать, что каждая из этих систем независима от других: они взаимосвязаны и **взаимообусловлены**.

Изобилие терминов усложняет понимание текста. Вынуждены повториться, что за все годы обучения русскому языку ни в одном школьном учебнике нет заданий подобного типа, но когда и где школьник этому учится?

Что касается тестов из раздела «Фразеологизмы» – здесь то же самое: в школьных учебниках нет упоминания таких фразеологических оборотов как **провести на мякине** (хотя правильный вариант – **на мякине не проведешь)**, **прокатить на вороных, турусы на колесах, притча во языцех, гол как сокол, лыка не вяжет**, **перековать мечи на орала**, **пиррова победа, прокрустово ложе и др.**

Но не вина школьного учителя, едва успевающего пройти минимум программного материала опять же в силу скудости часов по русскому языку.

Хочется отметить задания на правильную постановку ударений, например, в словах:

1. баловАть, облЕгчить, уведомИть, сливОвый
2. донЕльзя, недУг, придАное, позвОнит
3. зАвидно, сЫто , прИнят, хвОя
4. звОнит, трубопрОвод, щАвель, Эксперт

Мы обратились к Учебному пособию по русскому языку под редакцией Барановой, Костяева, Прудникова, которое есть почти во всех школьных

библиотеках:

«Общего правила сохранения и передвижки ударения в РЯ нет: при овладении русским языком мы запоминаем ударение в каждом отдельном слове. При затруднении обращаемся к словарю!»[1]

Напрашивается вопрос: с какой целью даны задания на ударения? И если необходимо для правильного определения ударения обратиться к словарям, то почему экзаменующимся не позволено пользоваться ими.

Ведь если тесты предназначены для проверки и подытоживания изученного и пройденного материала, то, думается, что такого рода тесты не приемлемы для определения и выявления уровня знаний по русскому языку.

В-третьих, некоторые задания и их объем не всегда соответствуют школьной программе по русскому языку.

Например, в учебниках 10-го класса по теме **-н-** и **-нн-** в причастиях записано:

Страдательные причастия обозначают признак лица или предмета, над которым производится действие: *выпускаемая продукция – продукция, которую выпускают*.

Страдательные причастия настоящего времени образуются от основы глагола настоящего времени при помощи суффиксов **-ем-**: *изуча-ем – изуча-ем-ый*, **-им-**: *перевод-им – перевод-им-ый*. (решенная – решена), но на эти правила есть задания.

Страдательные причастия прошедшего времени образуются от основы глагола прошедшего времени совершенного вида при помощи суффиксов **-нн-**, **-енн-** или **-т-**: *прочита-л – прочита-нн-ый, изучи-л – изуч-енн-ый, взя-л – взя-т-ый*.

В **кратких причастиях** пишется одно **-н-**[2].

А для выполнения заданий по правописанию причастий и прилагательных, где нужно определить **-н-** и **-нн-** в словах: балован…ый ребенок, белён…ый потолок, ношен…ый жакет, варён…ый картофель, кован…ый сундук, скован…ые движения, скошен…ая трава, путан…ые следы, зван…ый ужин, краден…ые часы, вязан…ый на спицах шарф, много раз игран…ый этюд, назван…ый (брат), посажён…ый (отец), придан…ое (невесты), - необходимы следующие правила, которых нет в школьных учебниках:

-н- и **–нн-** в прилагательных и причастиях

1) От бесприставочных глаголов несовершенного вида – жареный, копченый, писаный, бешеный, кошеный, ломаный, правленый (текст), мощёный (тротуар);

2) в прилагательных, образованных от **приставочных глаголов** – поношенный, растерянный, отчаянный, окаянный, доверенное, НО! Смышлёный, названый, посажёный, приданое;

3) –ованый/ёванный – балованный, НО! Кованый, жёваный;

---

[1] *Русский язык. Справочные материалы. Учебное пособие для учащихся.* ***Баранов М.Т., Костяева Т.А., Прудникова А.В..*** *Издательство «Просвещение», 1987.*

[2] *Учебник Русский язык 10 класс, Ереван 2010г.* ***Байбуртян Н.А., Грдзелян Р.Р., Манучарян И.К., Мелик-Оганджанян И.М., Читчян А.А.***

4) есть зависимые слова – раненный (в бою), правленный (мною), писанные (людьми)

То есть в тестах есть задания, а правил и тренировочных упражнений в учебниках нет. Как нам кажется, было бы правильнее убрать данные тесты.

Многие задания сложны, непосильны для выпускника, например:

3.47. **В какой словообразовательной цепочке нарушена последовательность образования слов?**



Наречие

Наречия — это слова, которые обозначают признак действия или признак признака:

хорошо понять, очень хорошо.

Наречие — неизменяемая часть речи. Они не склоняются и не спрягаются. В предложении наречия являются обстоятельствами. Они присоединяются к глаголам, прилагательным или другим наречиям. Наречия на **-о**, **-е**, образованные от качественных прилагательных, могут иметь степени сравнения.

Наречия образуются:

1. от качественных прилагательных с помощью суффиксов **-о, -е:**	*хороший — хорошо, искренний — искренне, высокий — высоко, могучий — могуче;*
2. от относительных и некоторых качественных прилагательных с помощью приставки **по-:**	*новый — по-новому; зимний — по-зимнему, настоящий — по-настоящему; товарищеский — по-товарищески, русский — по-русски;*
от относительных (притяжательных) прилагательных на **-ий:**	*лисий — по-лисьи, волчий — по-волчьи;*

95

1)Равный – равнять – уравнять- уравнение

2)Желтый – желтеть – пожелтеть – пожелтелый

3)Отец – отчество – отечественный – соотечественник

4)Соль – солить – засолить – засолка

Ни в одном школьном учебнике по русскому языку не нашли аналогичного задания.

Далее:

1.Найти слово, образованное приставочно-суффиксальным способом:

Ребята погуляли вволю: покупались, позагорали, поиграли в волейбол.

1) погуляли 2) покупались 3) позагорали 4) вволю.

Если кто-то и выбрал правильный четвертый вариант, то в большинстве случаев только методом исключения остальных вариантов. В учебниках не разбираются наречия по морфемам и нигде не указывается, что -ю- – это суффикс.

2.**Укажите ряд, в котором наречия пишутся раздельно:**

(в)открытую, (в)одиночку, (ни)откуда, (до)нельзя, (на)двое, (до)отказа, (из)вне, (на)гора и т.д.

Однако в школьном учебнике нет ни одного правила для выполнения данного задания.[1]

И приходится давать абитуриентам все правила и даже примечания, исключения по наречию и другим разделам РЯ:

пишутся слитно:

1.наречия, образованные соединением предлогов с наречиями, например: доныне, извне, навсегда, напротив, насквозь, послезавтра**, донельзя**, навряд ли, задаром;

2.наречия, образованные соединением предлогов **в** и **на** с собирательными числительными, например: вдвое, втрое, вчетверо и т.д., **надвое**, натрое, но: по двое; по трое.

Примечание. Пишутся раздельно наречия, составленные из предлога **в** и прилагательного, начинающегося с гласной, например: **в открытую.**

Примечание. Пишется через дефис наречие **на-гора** (технический термин).

Понятно, что без помощи учителя, репетитора обучающийся не в состоянии самостоятельно найти, выучить и запомнить все примечания по всем разделам русского языка, тем более что и в учебниках даже русских школ отмечается: «в случае затруднения следует обращаться к орфографическому словарю».

Для синтаксического разбора подобраны такие предложения, которые составляют особую сложность, например:

1)знаки препинания в СП на стыке двух союзов:

Вода в круглых окнах-колодцах казалась неподвижной(1) но(2) если приглядеться(3) то можно было увидеть(4) как из глубины оконца всё время подымается тихая струя(5) и в ней вертятся сухие листики брусники.

Командир решил вести отряд в обход(1) потому что(2) если(3) как утверждал пленный(4) по курсу их движения была засада(5) то следовало избежать столкновения.

2)Тире в ССП

Один прыжок – и я уже был в крепких руках отца. 7.7.22 (III часть)

Во второй части задание теста 7.7.23 таково:

В каком ССП перед второй частью нужно поставить тире?

1)Мысль легка и сердце ждет ответа. 2) Мать кричит им вслед но они её не слушают. 3) Ветер сильно раскачивал березу и дождь поливал её до ночи. 4) Ещё несколько шагов и я во Франции.

Если бы в школьных учебниках было правило: “Если вторая часть

[1] *Учебник Русский язык 10 класс указ.соч.*

предложения содержит подчеркнутое противопоставление или резкое присоединение, то перед союзами **и, а, но** вместо запятой ставится тире”, то уместность таких заданий в банке тестов была бы мотивирована.

3)Отсутствие запятой перед союзом И между двумя назывными, вопросительными и безличными предложениями в ССП, а также общее вводное слово для двух предложений.

А) Вот солнечный блеск и Сена. (два назывных предложения)

Б) Какое у вас образование и где вы его получили? (оба предложения вопросительные) Ч.1, N9, 199

Кто из нас не был молод и кто не увлекался? Ч1, N9, 129

В) *Необходимо закутать горло шарфом и надо попытаться прополоскать его содой.* (оба безличных, но синонимия сказуемых) Ч.1, N9, 95

Г) *Может быть, она хочет отдохнуть и ей нужно ехать на юг.* Ч.1, N9, 96

Казалось, ливни никогда не прекратятся и отдых будет окончательно испорчен. (общее вводное слово).

Или задание Ч1. 9.85: **Как объяснить отсутствие запятой?**

1)*Весной и летом и в морозы взлетал фонтаном фейерверк.*

2)*Да здравствует мыло душистое (?) и полотенце пушистое, и зубной порошок, и густой гребешок.*

Задание 7.5.48 (первая часть), где нужно определить, **сколько частей в сложном предложении,** уже своим объемом пугает тестируемого:

На мой взгляд промысел можно называть художественным если произведение отличается индивидуальностью и самобытностью если оно несет миру красоту и добро если оно воспитывает лучшие чувства у человека чьё стремление к совершенству как известно безгранично и неиссякаемо.

Есть ли эти правила в учебниках? В учебнике 9 класса “Ռուսաց լեզու. Մաս 1”.

Рафаелян Н., Грдзелян Р., Тер-Аракелян Р. даны лишь три сочинительных союза: ***и, а, но.***[1] И в учебниках 11 класса тоже нет сложных случаев синтаксиса.[2]

---

[1] ***Рафаелян Н., Грдзелян Р., Тер-Аракелян Р.***. *Учебник 9 класса общеобразовательных школ Армении и Арцаха, «Ռուսաց լեզու», Մաս 1, «Մանմար», 2015.*

[2] ***Рафаелян Н., Грдзелян Р., Тер-Аракелян Р., Мхитарян К.*** *(литература) Учебник для 11 класса старшей школы (հումանիտար հոսք) «МАНМАР», 2011, Ер., 208 с.*



Сложносочинённое предложение

В **сложносочинённом предложении** части (грамматические основы) синтаксически равноправны, соединены **сочинительными союзами**: *и, а, да, или, либо, ни ... ни, но, также, тоже, то ... то, не то ... не то, зато, однако, же* и отделяются друг от друга **запятыми**. Запятая не ставится, если соединяемые союзом **и** предложения имеют общий второстепенный член или общее придаточное предложение:

Вечером сверкнула молния и грянул гром. Когда мы вошли в лес, сверкнула молния и грянул гром.

На наш взгляд, предназначенный для сдачи ЕГЭ банк тестов рассчитан на экзамены студентов-филологов, и поэтому считаем, что если выпускник школы без труда выполняет их, то ему уже и на факультете филологии делать нечего.

Литература

1. Ռուսաց լեզու. Թեստային առաջադրանքների շտեմարան. Մաս 1,2, 3. «Երևան. Ֆիլին», 2013.
2. М.Т. Баранов, Т.А. Костяева, А.В. Прудникова. Русский язык. Справочные материалы. Учебное пособие для учащихся. Издательство «Просвещение», 1987.
3. Н.А. Байбуртян, Р.Р. Грдзелян, И.К. Манучарян, И.М. Мелик-Оганджанян, А.А. Читчян . Учебник Русский язык 10 класс, Ер., 2010г.
4. Н. Рафаелян, Р. Грдзелян, Р. Тер-Аракелян. Учебник 9 класса общеобразовательных школ Армении и Арцаха “Ռուսաց լեզու. Մաս 1”, Մանմար, 2015, Ер.
5. Интернет-ресурсы

Նյութը ներկայացվել է 02.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023:
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.գ., Վ. Ն. Հարությունյանը:

ՀՏԴ 81`37

Լեզվաբանություն

Աննա ԿՆՅԱԶՅԱՆ
ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն, բ.գ.դ., պրոֆեսոր
E-mail: annaknyazyan@ysu.am

Վարդուհի ՂՈՒԿԱՍՅԱՆ
ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
E-mail: varduhi.ghukasyan@gmail.com

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածի առարկան դիվանագիտական տերմինաբանությունն է, որն առանձնահատուկ տեղ է գրավում լեզվաբանության մեջ: Դիվանագիտությունը՝ որպես միջպետական հաղորդակցությանը ծառայող և համաշխարհային ընդգրկում ունեցող ոլորտ, հատկանշվում է տերմինաբանության ամբողջությամբ: Դիվանագիտական տերմինաբանությունը լեզվական առանձնահատկությունների շատ լայն շրջանակ ունի: Դիվանագիտական տերմինաբանությունը բարդ դինամիկ համակարգ է, որը ներառում է դիվանագիտության այնպիսի ոլորտների տերմիններ, ինչպիսիք են դիվանագիտական ծառայությունը, դիվանագիտական իրավունքը, դիվանագիտական արարողակարգը, դիվանագիտական վարվելակարգը և այլն:

Բանալի բառեր՝ *տերմին, դիվանագիտություն, դիվանագիտական տերմինաբանություն, դիվանագիտական դիսկուրս, դիվանագիտական իրավունքներ, դիվանագիտական ընթացակարգ:*

А. Князян, В. Гукасян

ОСОБЕННОСТИ ДИПЛОМАТИЧЕСКИХ ТЕРМИНОВ

Объектом исследования статьи является дипломатическая терминология, которая занимает особое место в

лингвистике. Дипломатия как область, обслуживающая межгосударственное общение и имеющая глобальный масштаб, характеризуется целым набором терминологии. Дипломатическая терминология имеет очень широкий спектр лингвистических особенностей. Дипломатическая терминология представляет собой сложную динамическую систему, которая включает термины таких сфер дипломатии, как дипломатическая служба, дипломатическое право, дипломатический протокол, дипломатический этикет и др.

***Ключевые слова**: термин, дипломатия, дипломатический дискурс, дипломатическая терминология, дипломатическое право, дипломатический протокол.*

A. Knyazyan V. Ghukasyan

FEATURES OF DIPLOMATIC TERMS

The paper deals with the problem of diplomatic terminology which occupies an important place in linguistics. Diplomacy serves interstate communication and has a global scope. Diplomacy is an important tool in the foreign policy of any state. In connection with the growth of the information space and the increasing pace of globalization in the world, it became necessary to improve the diplomatic vocabulary of the language. Diplomacy is characterized by a whole set of terminology. The diplomatic language contains many professional terms that mean the same thing for diplomats of different countries, but are not always understood by people who speak the same language. Diplomatic terminology has a number of common features inherent in all terminological systems. Like any term system, it consists of a number of terminological groups and subgroups. An important distinguishing feature of diplomatic terminology is the presence of numerous names of Latin and French origin. Diplomatic terminology is a complex dynamic system that includes the terms of such areas of diplomacy as diplomatic service, diplomatic law, diplomatic protocol, diplomatic etiquette.

***Key words:** term, diplomacy, diplomatic terminology, diplomatic discourse, diplomatic law, diplomatic protocol..*

Ժամանակակից աշխարհում հաղորդակցման գործընթացում տերմինաբանությունը նշանակալի դեր է խաղում, որպես տեղեկատվության աղբյուր, մասնագիտության յուրացման գործիք և գիտատեխնիկական առաջընթացն արագացնելու միջոց: Առանձնապես ուշագրավ են

տերմինների ծագումը, տերմինների ձևավորման ուղիները, մասնավորապես՝ այլ լեզուներից և այլ տերմինաբանություններից փոխառման գործընթացը: Նման խնդիրները ապացուցում են LSP (*Language Server Protocol*)-ի շրջանակներում տերմինների կանոնակարգման և համապարփակ միասնականացման անհրաժեշտությունը: Հուսալի տերմինային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է պարզել տերմինաբանության՝ բնական ճանապարհով ձևավորման և զարգացման օրինաչափությունները, առանձնացնել դրա բնութագրիչ առանձնահատկությունները անվանաբանական, իմաստաբանական, ինչպես նաև համեմատական-համադրական տեսանկյուններից: Վերջին ժամանակներս միտում է նկատվում որպես տերմինագիտության հիմնական օբյեկտ դիտարկելու առաջին հերթին ոչ թե ինքնին տերմինը, այլ տերմինային համակարգը՝ գիտելիքի որոշակի բնագավառում գործածվող տերմինների համախումբը:

Տերմինաբանությունը՝ որպես գիտելիքի հատուկ բնագավառ, ավելի ու ավելի է գրավում հետազոտողների ուշադրությունը: Դա բացատրվում է ժամանակակից գիտական գիտելիքի միջազգային բնույթով՝ պայմանավորված ինտեգրման գործընթացներով: Այդ պատճառով սոցիալական և տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում նկատվում է տերմինների միասնականացման ձգտում[1]: Տերմինները կրում են այս ոլորտին բնորոշ երևույթների, առարկաների, դրանց հատկությունների և հարաբերությունների մասնագիտական, սահմանանշիչ իմաստներ: Ի տարբերություն ընդհանուր բառապաշարի բառերի, որոնք հաճախ կրում են հուզական երանգավորում և բազմիմաստ են, տերմիններն իրենց կիրառման ոլորտում զուրկ են հուզազգայականությունից: Ժամանակակից լեզվաբաններից շատերը կարծում են, որ տերմինաբանությունը արհեստականորեն ձևավորված բառապաշարային շերտ է, ընդ որում՝ դրա յուրաքանչյուր միավորն ունի գոյության օպտիմալ պայմաններ և գործածման որոշակի սահմանափակումներ: Մասնագիտական հաղորդակցման համար հատուկ տերմինաբանությանը տիրապետելը սկզբունքորեն կարևոր է:

Դիվանագիտական լեզվաբանության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը լեզվական նշանի տերմինայնության ուսումնասիրումն է: Լեզվի համակարգում տերմինայնության դրսևորման հիմնախնդիրը

[1] ***Алексеева Л.М.***, *Термин и метафора, Пермь, 1998.*

ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների ամենատարածված և կարևոր թեմաներից է[1]:

Չնայած տերմիններին և տերմինաբանությանը նվիրված զգալի թվով գիտական աշխատանքներին՝ հետազոտության նշյալ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը չի մարում: Այս փաստը բացատրվում է մարդու կենսագործունեության տարբեր բնագավառների մշտական զարգացմամբ, նոր տեխնոլոգիաների, հայտնագործությունների և գիտական գիտելիքների ի հայտ գալով: Վերջին մի քանի դարերի ընթացքում աշխարհում գլոբալիզացման տեմպերի աճի պատճառով շատ երկրներում անհրաժեշտություն է առաջացել մշակելու կամ կատարելագործելու իրենց լեզվի դիվանագիտական տերմինաբանությունը՝ բանակցությունների ընթացքում իրենց դիրքորոշումն ավելի հստակ արտահայտելու համար: Տերմինները այս ոլորտին բնորոշ առարկաների, երևույթների, դրանց հատկությունների և հարաբերությունների մասնագիտական, սահմանանշող բնութագրումներ են: Ի տարբերություն ընդհանուր բառապաշարի բառերի, որոնք հաճախ բազմիմաստ են և կրում են հուզական երանգավորում, տերմիններն իրենց կիրառման շրջանակներում զուրկ են զգայական արտահայտչականությունից:

Մարդկային գործունեության շատ ոլորտներ ունեն իրենց լեզվական յուրահատկությունները, որոնք սերտորեն կապված են առարկայի բովանդակության հետ: Դիվանագիտությանը, ինչպես և ցանկացած այլ գործունեության, հատուկ է իր տերմինաբանությունը: Դիվանագիտական լեզուն պարունակում է բազմաթիվ մասնագիտական տերմիններ, որոնք միևնույն նշանակությունն ունեն տարբեր երկրների դիվանագետների համար, բայց միշտ չէ, որ հասկանալի են նույն լեզվով խոսող մարդկանց:

Դիվանագիտական տերմինաբանությունը լեզվական շատ ուշագրավ ոլորտ է և մեծ ուշադրության է արժանացել: Տեղեկատվական տարածքի

---

[1]Տե՛ս ***Зарипова*** *А.Н., Экономическая терминология в немецком, русском и татарском языках: Дисс. канд. фил. наук. Казань, 2004;* ***Кобрин Р. Ю****. Опыт лингвистического анализа терминологии// Автореф. дис. на соиск. учен. степени канд. филол. наук. Горький, 1969;* ***Лотте Д. С.,*** *Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики. М.: Изд-во АН СССР, 1961;* ***Манерко Л. А.,*** *Истоки и основания когнитивно-коммуникативного терминоведения / Лексикология. Терминоведение. Стилистика. Сб. науч. трудов. М., Рязань, 2003. с. 120-126.* ***Пронина Р.Ф.,*** *Перевод английской научно-технической литературы // Учеб. пособие для вузов. 3е изд., испр. и доп. М.: Высш. шк.,1986;* ***Lang F. H.,*** *«Eugen Wüster-zum 100. Geburtstag: Ein Elektrotechniker als Ter-minologe». e & i Elektrotechnik und Informationstechnik, November 1998. pp. 625-628;* ***Rondeau G.,*** *Introduction a la terminologie. Montreal, 1981;* ***Wüster E.,*** *Einfurung in die Allgemeine Terminologielehre und terminologishe Lexicographie. Bd 1–2. Vien : N.Y., 1979.*

ընդլայնմանը և գլոբալիզացման տեմպերի աճին զուգընթաց՝ աշխարհում անհրաժեշտություն է ծագել կատարելագործելու լեզուներում դիվանագիտական բառապաշարը՝ բանակցությունների ընթացքում դիրքորոշումը կամ հայեցակարգը առավել հստակ արտահայտելու համար: Ժամանակի ընթացքում դիվանագիտական բառապաշարում հայտնվել են ստանդարտներ, որոնք ավելի են մոտեցել միասնականին: Դրա հիմքը «Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիան» էր[1]:

Ինչպես լեզվի ամբողջ բառապաշարային կազմը, դիվանագիտական գործունեության տերմինաբանությունը ևս ծագել է, գոյություն ունի և զարգանում է արտաքին աշխարհի երևույթների հետ սերտ փոխազդեցության մեջ: Այս ոլորտի շատ տերմիններ առաջացել են հասարակության, դիվանագիտական հարաբերությունների զարգացման վառ շրջանում և մինչ օրս գործառում են լեզվում:

Դիվանագիտական տերմինաբանությունը ամենահին տերմինային համակարգերից է, որի արմատները հասնում են XI դար: Այն զարգացել և հարստացել է միջազգային և միջպետական կապերի ընդլայնմանը համընթաց: Դիվանագիտական տերմինաբանությունը, որը զարգացման զգալի ճանապարհ է անցել XI-ից մինչև XVIII դար, կայունացել է XIX դարում, ձեռք բերել կոդիֆիկացված նորմ, վերջնականորեն ձևավորվել է որպես համակարգ, որտեղ պահպանվել են հնացած բառեր և դարձվածքներ:

Տերմինաբանությունը բաժանվում է երեք մասի. 1) ընդհանուր գործածական, որը հասկանալի է կիրառողների մեծ մասին ***(diplomat, diplomacy, consulate, embassy),*** 2) նեղ մասնագիտական, քիչ գործածական և անհամեմատ քիչ տարածված, որը հասկանալի և գործածական է միայն մասնագետների շրջանում ***(credentials, brinkmanship, annexation)*** և 3) անցումային խումբ ***(demarche):*** Սակայն, պետք է նշել, որ այս շերտերի միջև չկա հստակ սահման, և դրանք մշտական փոխազդեցության մեջ են: Դիվանագիտական լեզուն՝ որպես գործառական ոճ, ունի իր տերմինաբանական համակարգը, որում առկա է միջազգային բառապաշարի լայն ցանկ: Դրանք հիմնականում փոխառություններ են լատիներենից և ֆրանսերենից: Որոշ դեպքերում՝ նաև հունարենից:

Դիվանագիտական տեքստերի բառապաշարի հիմնական առանցքը տերմինաբանությունն է՝ որպես դիվանագիտական դիսկուրսի անքակտելի մաս: Դիվանագիտական տերմինաբանությունը լեզվի բառապաշարային-

[1] *Vienna Convention on Diplomatic Relations (Vienna, 18th of April 1961), 500 U.N.T.S. 95, p. 164*.

իմաստաբանական համակարգի բաղադրիչներից է: Դիվանագիտական ծառայության ոլորտում տերմինները բանակցություններ վարելու և դիվանագիտական փաստաթղթերում արձանագրելու ոճի հիմնական տարրն են: Պետք է նշել, որ բառային միավորների գործածման սահմանները հստակ չեն: Ավելի մեծ է բառույթի օգտագործման համատեքստի նշանակությունը:

Դիվանագիտությունը ցանկացած պետության արտաքին քաղաքական գործունեության կարևոր գործիք է:

Դիվանագիտական ծառայության բարձրակարգ մասնագետների պատրաստումը ենթադրում է միջազգային շփումներում գործող արարողակարգի և վարվելակարգի հիմնական տերմինների իմացություն: Դիվանագիտական տերմինաբանությունը պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն և բնութագրություն: Դիվանագիտական տերմինաբանությունը բարդ դինամիկ համակարգ է, որը ներառում է դիվանագիտության այնպիսի ոլորտների տերմիններ, ինչպիսիք են դիվանագիտական ծառայությունը, դիվանագիտական իրավունքը, դիվանագիտական արարողակարգը, դիվանագիտական վարվելակարգը և այլն:

Փաստական նյութի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտելու, որ հետազոտվող ոլորտի տերմինների զգալի մասը հետևյալ տերմինաբանական խմբերին դասվող անվանումներն են՝ *դիվանագիտական ներկայացուցչություններ, դիվանագիտական աստիճաններ, դիվանագիտական փաստաթղթեր, դիվանագիտական ընթացակարգեր, դիվանագիտական իրավունքներ և արտոնություններ, դիվանագիտական ընդունելություններ* և այլն:

Դիվանագիտական ներկայացուցչությունների անվանումները միավորվում են *diplomatic bodies* խմբում՝ **embassy** - դեսպանատուն; **exequatur-** էկզեկվատուրա (նստավայր երկրի կողմից տրված հյուպատոսական պարտականությունների կատարման թույլտվություն, որն իրավունք է տալիս հյուպատոսական հիմնարկի ղեկավարին' իրականացնելու հյուպատոսական ֆունկցիաներ հյուպատոսական կոնկրետ շրջանում, **residence of ambassador** - դեսպանի նստավայրը (բնակության վայրը); **cancilleria** (ֆր.) արտաքին գործերի նախարարություն Լատինական Ամերիկայում; **chancellery** n - գրասենյակ /դեսպանատան, հյուպատոսական հաստատության) և այլն[1]:

---

[1] *Հոդվածում բոլոր տերմինները բերված են **Ն. Տ. Չալչմյանի** «Դիվանագիտական և հյուպատոսական ծառայության տերմինների անգլերեն-հայերեն բացատրական բառարան»-ից Եր.; ԵՊՀ հրատ., 2011; **Լ. Թութխալյանի** «Դիվանագիտական տերմինների և հապավումների բառարան»-ից Եր.: Տիգրան Մեծ, 2004:*

Դիվանագիտական աստիճաններ և պաշտոններ խումբը ներառում է, օրինակ, այնպիսի տերմիններ, ինչպիսիք են **ambassador extraordinary and plenipotentiary** - արտակարգ և լիազոր դեսպան; **diplomat** - դիվանագետ; **dean of the diplomat corps** -դիվանագիտական կորպուսի ավագ, ով ամենից շատ է հանձնել իր հավատարմագրերը նստավայր երկրի նախագահին; **consul** - հյուպատոս/պաշտոնատար անձ, որը նշանակվում է տվյալ երկրի կողմից որպես իր մշտական ներկայացուցիչը մեկ այլ երկրում՝ իրականացնելու համար հյուպատոսական խնդիրներ և պարտականություններ՝ նստավայր երկրում սահմանված կանոնների համաձայն; **general consul** -գլխավոր հյուպատոս; **nuncio** - նունցիա (նվիրակ) Հռոմի պապի դիվանագիտական ներկայացուցիչը օտարերկրյա պետությունում (դեսպանի կարգավիճակ); **honourary consul** - պատվո հյուպատոս; **minister counsellor** -խորհրդական դեսպանորդ; **envoy extraordinary and minister plenipotentiary**- արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար; attache -կցորդ/առաջին դիվանագիտական աստիճան; **charge d'affaires ad pied-** գործերի մշտական հավատարմատար (համարվում է Երրորդ կարգի դիվանագիտական գործակալ), **charge d'affaires ad interim**- գործերի ժամանակավոր հավատարմատար) ղեկավարում է դիվանագիտական ներկայացուցչությունը դեսպանի բացակայության դեպքում); **official delegate** – պաշտոնական պատվիրակ; **deputy chief of mission** -ներկայացուցչության ղեկավարի տեղակալ; **doyen** -դուայ են/ դիվանագիտական անձնակազմի ավագը' ըստ հավատարմագրերի հանձնման ժամանակի Դուայենի պարտականությունները կրում են արարողակարգային բնույթ և այլն:

Դիվանագիտական փաստաթղթեր տերմինաբանական խումբը ներառում է, օրինակ, այնպիսի դիվանագիտական փաստաթղթերի անվանումներ, ինչպիսին է **accord** - ձևական կամ ոչ պաշտոնական պայմանագիր կամ համաձայնագիր; **agreement** - համաձայնություն, պայմանագիր; **bilateral agreement** երկկողմ համաձայնություն; **three-power (tripartite)** - եռակողմ համաձայնագիր; **application** - դիմում, հայտ; **circular note**- շրջաբերական հայտագիր; **diplomatic memorandum**- դիվանագիտական հուշագիր; **communique** - կոմյունիկե, պաշտոնական հայտարարություն; **joint communique-** համատեղ հայտարարություն; **concordad** - Հռոմի պապի (Վատիկանի) և ինքնիշխան պետության կամ կառավարության միջև կնքված պայմանագիր; **convention** - կոնվենցիա. Համաձայնագիր; **contract** - պայմանագիր, համաձայնագիր; **diplomatic correspondence** - դիվանագիտական նամակագրություն; **credentials** – հավատարմագրեր; **dispatch** - դիվանագիտական թղթակցություն; **declaration** - հռչակագիր

(դիվանագիտության մեջ քաղաքական հայտարարություն, որտեղ շարադրված են հիմնարար սկզբունքներ) և այլն:

Դիվանագիտական ընթացակարգեր խումբը միավորում է դիվանագիտական տարբեր ընթացակարգերի անվանումներ՝ **a diplomatic demarche** - դիվանագիտական ելույթ, դիվանագիտական քայլ, որը ձեռնարկում է տվյալ երկրի արտաքին գործերի նախարարությունը մեկ այլ պետության հանդեպ; **cease-fire agreement** - համաձայնագիր հրադադարի մասին; **accession declaration of** - միանալու հայտարարություն, հռչակագիր և այլն:

Դիվանագիտական իրավունքներ և արտոնություններ տերմինաբանական խմբին դասվում են, օրինակ, այնպիսի անվանումներ, ինչպիսիք են՝ **diplomatic immunity** - դիվանագիտական անձեռնմխելիություն; **exterritoriality** -տարածքից դուրս գտնվող, դիվանագիտության մեջ' հատուկ արտոնություններ, որոնք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչություններին և դիվանագիտական անձնակազմին; **inviolability of person** - անձի անձեռնմխելիություն և այլն:

Դիվանագիտական ընդունելություններ խմբում ընդգրկված են տարբեր տեսակի դիվանագիտական ընդունելությունների անվանումներ (պաշտոնական / ոչ պաշտոնական, ցերեկային / երեկոյան, նստած / հոտնկայս)՝ **fourchette** - ֆուրշետ. դիվանագիտական պրակտիկայում ֆուրշետը ընդունված է որպես երեկոյան ընդունելություններից ամենատարածվածը, որը սովորաբար կազմակերպվում է ազգային տոների կամ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, հոբելյանական տարեդարձների կապակցությամբ և այլն:

Դիվանագիտական տերմինաբանության կարևոր առանձնահատկությունն է միջազգային իրավական ակտերում և դիվանագիտական փաստաթղթերում **լատինական և ֆրանսիական** ծագման բազմաթիվ անվանումների առկայությունը: Դա պայմանավորված է այն բանով, որ ի սկզբանե լատիներենն էր համարվում դիվանագիտական լեզուն, իսկ միջին դարերում այս առաքելությունը ստանձնեց ավելի առաջադեմ ֆրանսերենը: Մեր օրերում էլ ավանդաբար դիվանագիտական գրագրության մեջ լատինական և ֆրանսիական ծագման շատ տերմիններ օգտագործվում են իրենց սկզբնական տեսքով: Դիվանագիտական տեքստերի առանձնահատկություններից է այն, որ տերմինները փոխառվում են աղբյուր-լեզվից իրենց նույն իմաստով: XX դարում դիվանագիտական լեզվի տերմինաբանական համակարգի վրա սկսեց ազդել անգլերենը, որն այդ ժամանակահատվածում ձեռք էր բերել միջազգային լեզվի կարգավիճակ:

Լատիներեն տերմիններից կարելի է նշել, օրինակ **alternare լատ. - ալտերնատ** (կանոն, համաձայն որի՝ միջազգային պայմանագրի բնօրինակում, որը նախատեսված է պայմանավորվող տվյալ կողմի համար, կողմի անվանումը, լիազորված անձանց ստորագրությունները, ինչպես նաև պայմանագրի բուն տեքստը տվյալ պայմանավորվող կողմի մայրենի լեզվով դրվում է առաջին տեղում); **de facto լատ.- դե ֆակտո** (փաստորեն, իրականում); **de jure լատ. – դե յուրե** (իրավաբանորեն, ֆորմալ ձև); **expancio լատ.**-էքսպանսիա (քաղաքական, տնտեսական կամ ռազմական ազդեցության տարածում); **denatura լատ.- դենատուրալիզացիա** (որևէ պետության քաղաքացիությունից դուրս գալը) և այլն: Լատինական ծագման նման տերմինները միջազգային պրակտիկայում օգտագործվում են բնօրինակով, թեպետ ունեն հավաստի թարգմանություն՝ համապատասխան իմաստաբանությամբ: Նման տերմիններից են՝ **pacta sunt servand** համաձայնությունները պետք է կատարվեն; **pro et contra** կողմ և դեմ; **sine qua non** անհրաժեշտ, պարտադիր պայման; **status quo** ստատուս քվո, գոյություն ունեցող առկա վիճակ; **status quo ante bellum** նախապատերազմական վիճակ; **post factum** այն բանից հետո, երբ դեպքն արդեն տեղի է ունեցել; **ad referendum** մինչև վերջնական որոշումը և այլն:

Ֆրանսերեն տերմինների շարքում կարելի է նշել, օրինակ՝ **agrement ֆր.- ագրեման** (կառավարության համաձայնությունը որոշակի անձի դիվանագիտական ներկայացուցչի կարգավիճակով նշանակելու համար); **depeche ֆր. -դեպեշ** (շտապ հաղորդագրություն); **denonciation ֆր.- դենոնսացիա** (պետության կողմից արվող հայտարարություն առ այն, որ մեկ այլ պետության հետ գործող պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ); **demarcation ֆր. - դեմարկացիա** (պետական սահմանի նշում հատուկ սահմանային ազդանշանների կիրառմամբ) և այլն:

Դիվանագիտական արարողակարգում ֆրանսերեն անվանումների օգտագործման օրինակներից մեկը հապավումների համընդունելի միջազգային պրակտիկան է, **p. r. (pour remercier)** երախտագիտություն է հայտնում, **p. f. (pour féliciter)** շնորհավորում է, **p. c. (pour condoléance)** ցավակցում է, **p.p.c. (pour prendre congé)** ի նշան հրաժեշտի և այլն:

Դիվանագիտական տերմինաբանության մեջ հիմնականում հանդիպում են **միաբառ տերմիններ. accredit** v – հավատարմագրել (դիվանագիտական ներկայացուցչի պարտականություններին անցնելը դեսպանը նկալ երկրում); **ambassadorial** a. – դեսպանական; **apostille** լատ.- հյուպատոսական հատուկ կնիք, որը համապատասխան իրավասու մարմնի կողմից դրվում է նոտարական վավերացում ունեցող փաստաթղթերի վրա՝ համաձայն 1961 թ. Հաագայի կոնվենցիայի պահանջներին, դրանք ինքնաբերաբար, առանց

լրացուցիչ հյուպատոսական փաստաթղթերի վավերական դարձնելով կոնվենցիան ստորագրած բոլոր երկրներում; **cancilleria ֆր.** արտաքին գործերի նախարարություն Լատինական Ամերիկայում; **chancellery** n – գրասենյակ /դեսպանատան, հյուպատոսական հաստատության; **consensus** n -փոխհամաձայնություն, ընդհանուր համաձայնություն վիճելի հարցերի շուրջ, և այլն; և **երկբառ և բազմաբառ տերմիններ. diplomatic correspondence -** դիվանագիտական նամակագրություն; **plenipotentiary ambassador** - լիազոր դեսպան; **diplomatic courier** - դիվանագիտական սուրհանդակ (դիվանագիտական փոստն առաքողը**); to denounce a treaty** - պայմանագիրը չեղյալ հայտարարել; **bilateral diplomacy** - երկկողմ դիվանագիտություն; **coercive diplomacy** - ուժային դիվանագիտություն; **megaphone diplomacy** - բանակցությունների փոխարեն զանգվածային լրատվամիջոցների օգտագործման դիվանագիտություն, և այլն: Դիվանագիտական տերմինաբանության ամենաստվարաթիվ բառիմաստաբանական խումբը միջազգային հարաբերությունների, միջազգային իրավունքի ոլորտի բառապաշարն է: Այս խումբը ներառում է միջգիտակարգային տերմիններ, սակայն դիվանագիտական ներկայացուցիչների և փաստաթղթերի անվանումներին առնչվող բառապաշարը հիմնականում բաղկացած է ընդհանուր դիվանագիտական տերմիններից:

Դիվանագիտությունը բավականին սերտորեն հարաբերվում է իրավագիտության (հատկապես միջազգային իրավունքի), ռազմական ոլորտի, տնտեսության հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դիվանագիտությունը քաղաքական գիտություն է: Դիվանագիտական տերմինաբանությունը բաժանվում է երկու տեսակի՝ 1) տերմիններ, որոնց տրվում է քաղաքական, համընդհանուր իրավական և դիվանագիտական բնույթի հատուկ մեկնաբանություն, 2) միջազգային-իրավական տերմիններ:

Առաջին խմբին դասվում են, օրինակ, հետևյալ դիվանագիտական տերմինները՝ **audiencia իսպ.- աուդիենսիա** (դիվանագիտության մեջ՝ երկրի ղեկավարի, վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի հանդիպումը դիվանագիտական ներկայացուցչի հետ); **authentic լատ. - աութենտիկ տեքստ** (լիազորված անձերի ստորագրություններով և կնիքներով ամրագրված դիվանագիտական փաստաթղթի բնօրինակը); **desavouer ֆր.** - հրաժարվել հետ կանգնել**; charge d'affaires cd interim ֆր. - գործերի ժամանակավոր հավատարմատար** (այն անձը, որը ղեկավարում է դիվանագիտական ներկայացուցչությունն առաջին դեմքի բացակայության դեպքում), **diplomatic inviolability** դիվանագիտական անձեռնմխելիություն և այլն:

Կիրառվում են նաև քաղաքական տերմիններ՝ **buffer անգլ. բուֆերային պետություն** (ռազմական և քաղաքական առումով թույլ պետություն, որը գտնվում է երկու թշնամական պետությունների միջև); **escalation անգլ. էսկալացիա** – (ծավալում, ընդլայնում, օրինակ՝ ռազմական գործողությունների կամ լարվածության); **impeachment անգլ. իմփիչմենտ** - (մի շարք երկրներում օրենսդիր մարմնի կողմից երկրի բարձրագույն ղեկավարությունը դատի ենթարկելու գործընթացը); **souverainete ֆր. ինքնիշխանություն** - երկրի ներսում բարձրագույն իշխանության գերակայությունը և միջազգային հարաբերություններում՝ այլ իշխանություններից բացարձակ անկախություն; **coup d'etat ֆր.- պետական հեղաշրջում** և այլն:

Երկրորդ խումբը ներառում է իրավական և ընդհանուր իրավական տերմիններ– **arrendare լատ.- արենդա** (միջազգային-իրավաբանական վարձակալություն, պետության տարածքի մի մասի տրամադրումը մեկ այլ պետությանը՝ պայմանագրային հիմունքներով ժամանակավոր օգտագործման համար, օրինակ՝ ռազմական հենակայանների ստեղծման պարագայում); **arbitrari** լատ. **արբիտրաժ** (պետությունների միջև ծագած վեճերի կարգավորումն իրենց կողմից ընտրած արբիտրի (դատավորի) կամ արբիտրների կողմից); **extradition** - օտարերկրյա պետության օրենքը խախտած քաղաքացու հանձնումը տվյալ պետության իշխանություններին; **force majeure ֆր.** անհաղթահարելի ուժի ազդեցություն (արտակարգ հանգամանքներ. որոնց հետևանքով պայմանագրի պայմանները չեն կատարվում), **geopolitical** - աշխարհաքաղաքական, և այլն: Նրանց միջազգային իրավական մեկնաբանության շնորհիվ ձևավորվել են հետևյալ արտահայտությունները՝ **consular jurisdiction** - հյուպատոսական իրավասություն; **extraterritorial jurisdiction** - արտատարածքային իրավասություն; **diplomatic law** - դիվանագիտական իրավունք; **international law** միջազգային իրավունք; **consular law** - հյուպատոսական իրավունք; **intra vires** -իրավասության շրջանակներում և այլն:

Դիվանագիտության լեզվում գործառում են տերմիններ նաև հասարակական կյանքի այլ ոլորտներից, այսինքն՝ դիվանագիտական տերմինները փոխկապված են ընդհանուր բառապաշարի հետ: Դիվանագիտական տերմինաբանության համակարգին բնորոշ է բազմիմաստությունը. տերմինը դիվանագիտության լեզվում որոշակի իմաստ է ստանում միայն որոշակի համատեքստում գործածվելիս:

Հայտնի են նաև տարբեր երևույթներ բնութագրելու համար նույն տերմինի գործածման դեպքեր: Օրինակ՝ ***treaty*** տերմինը ներկայումս գործածվում է ոչ միայն նեղ իմաստով, այլև ընդհանուր հասկացություն է, որն ընդգրկում է

համաձայնագրերի բոլոր անվանումներն ու տեսակները *(bilateral* ***treaty*** *երկկողմ համաձայնագիր, body of the* ***treaty*** *պայմանագրի հիմնական մասը, close* ***treaty*** *փակ պայմանագիր,* ***treaty*** *of friendship, alliance and mutual assistance բարեկամության, միության և փոխօգնության մասին պայմանագիր, multilateral* ***treaty*** *բազմակողմ պայմանագիր, an open* ***treaty*** *բաց պայմանագիր, provision of a* ***treaty*** *պայմանագրի դրույթը, a secret* ***treaty*** *գաղտնի պայմանագիր)*: ***Treaty*** տերմինը *նշանակում է միջազգային պայմանագիր, պետությունների միջև համաձայնագիր*, սերում է ֆր. traité – պայմանագիր բառից: ***Treaty*** դիվանագիտական տերմինը կապ չունի տրակտատի՝ որպես գրական ձևի հետ:

Protocol տերմինի (հունարեն protokollon - ից (protos - առաջին, kolla - սոսնձել) (արարողակարգ, արձանագրություն, ***diplomatic protocol*** դիվանագիտական արարողակարգ) ներքո հասկանում ենք միջազգային հաղորդակցման ժամանակ կառավարությունների, արտաքին գործերի գերատեսչությունների. դիվանագիտական ներկայացուցչությունների և պաշտոնատար անձանց կողմից պահպանվող համընդհանուր կանոնների և ավանդույթների միագումարը: ***Protocol*** կարող են կոչվել՝ ա) պայմանագրի կամ կոնվենցիայի հավելվածը, բ) որոշակի պաշտոնական գործողությունների կարգը, ընթացակարգը (դիվանագիտական արարողակարգը), գ) առանձին պայմանագիրը: Միջնադարում ***protocol*** ասելով հասկանում էին փաստաթղթերի ձևակերպման և արխիվների պահպանման կանոնները: Ավելի ուշ ***protocol*** բառը սկսեց օգտագործվել դիվանագիտության և դիվանագիտական ծառայության առնչությամբ: Ընդլայնվեց նաև դրա բովանդակությունը. բացի դիվանագիտական փաստաթղթերը մշակելու կանոններից, դիվանագիտական պրոտոկոլին սկսեցին դասվել վարվելակարգի և արարողակարգի հարցերը: Եվ հիմա դիվանագիտական պրոտոկոլը տարեցտարի փոփոխությունների է ենթարկվում քաղաքական պատճառների, գիտության, տեխնիկայի նվաճումների և միջազգային կյանքի գործոնների ազդեցությամբ:

Convention տերմինը (լատ. conventio - պայմանագիր, համաձայնագիր) նշանակում է միջազգային պայմանագիր կամ համաձայնություն հատուկ հարցի շուրջ, օրինակ' կենսաբանական զենքի արգելման, հեղինակային իրավունքի պաշտպանության և այլն: Կոնվենցիայի բովանդակությունը սովորաբար վերաբերում է մեկ առարկայի (օրինակ՝ *consular convention- հյուպատոսական կոնվենցիա, patent convention- արտոնագրային կոնվենցիա, customs convention- մաքսային կոնվենցիա)*: Կոնվենցիաները կարգավորում են ինչպես քաղաքական հարաբերությունները (պետության կազմակերպում, տարածքի զիջում, փոխադարձ ռազմական օգնություն,

զորքերի թույլատրում և այլն), այնպես էլ իրավական և սոցիալ-տնտեսական: Մեծ նշանակություն ունեն իրավական և սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ գործող կոնվենցիաները: Իսկ առօրյա խոսքում ***convention*** բառը նշանակում է *սովորական կամ ընդունված վարքագիծ*, հատկապես սոցիալական իրավիճակներում, որը հաճախ հետևում է հին մտածելակերպին կամ սովորույթին որոշակի հասարակության մեջ.

Declaration *(declaration of Independence անկախության մասին հռչակագիր, final declaration եզրափակիչ հայտարարություն, to Issue a formal declaration պաշտոնական հայտարարություն անել)* տերմինը դիվանագիտության մեջ նշանակում է *միակողմ, երկկողմ կամ բազմակողմ քաղաքական հայտարարություն*, որտեղ շարադրված են հիմնարար արտաքին և ներքին քաղաքականության սկզբունքներ: Իսկ առօրյա խոսքում ***declaration*** բառը նշանակում է *գրավոր հայտարարություն հարկային մարմիններին*, որը պարունակում է տեղեկատվություն անձի վաստակած գումարի մասին:

Credentials-ը *(to deposit the credentials- հանձնել հավատարմագրերը, to present the credentials- ներկայացնել հավատարմագրերը)* դիվանագիտական փաստաթուղթ է, որը տրվում է դեսպաններին, հավատարմատարներին, ինչպես նաև հատուկ պատվիրակություններին՝ իրենց ներկայացուցչական բնույթը հաստատելու և օտար պետությունում հավատարմագրվելու համար: Հավատարմագիրը ստորագրվում է ուղարկող երկրի ղեկավարի կողմից, հասցեագրված է ընդունող երկրի ղեկավարին և կնքվում է արտաքին գործերի նախարարի ստորագրությամբ: **Credentials** բառը նաև նշանակում է *անձի կարողություններն ու փորձը*, որոնք ինչ-որ մեկին հարմար են դարձնում որոշակի աշխատանքի կամ գործունեության համար:

Communique *(joint communique- համատեղ հայտարարություն. to release /to issue a communique - պաշտոնական հայտարարություն հրապարակել)* (ֆր. communique՝ լատ. communicatio - հաղորդագրություն, հաղորդում) - պետական իշխանության բարձրագույն մարմինների, արտաքին հարաբերությունների մարմինների, տարբեր պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների պաշտոնական հայտարարությունն է միջպետական հարաբերությունների որևէ ոլորտում իրավիճակի, բանակցությունների ընթացքի կամ արդյունքների, ծավալվող ռազմական գործողությունների ընթացքի և այլնի մասին: Բացի զուտ տեղեկատվական խնդիրներից՝ կոմյունիկեն հաճախ ավելի էական իմաստային բեռ է կրում, երբ լուսաբանում է այն հրապարակողի դիրքորոշումը իրավաքաղաքական խնդիրների վերաբերյալ, տալիս է դրանց գնահատականը, հրապարակում է շահագրգիռ սուբյեկտների պարտավորություններն ու նպատակները, նրանց մտադրություններն ու

մտահոգությունները: Որոշ դեպքերում կոմյունիկեները կարող են ներառել տեղի ունեցած միջպետական շփումների փաստաթղթավորված արդյունքները պարունակող նյութեր:

Resolution (լատ. resolution - որոշում, թույլտվություն) - պաշտոնատար անձի կամ խորհրդակցական մարմնի, միջազգային կազմակերպության (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովի) կողմից ընդունված որոշում/բանաձև: ***Resolution*** տերմինը միջգիտակարգային է, օրինակ՝ բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավունքի բնագավառում ***resolution*** բառը նշանակում է «ընկերության բաժնետերերի՝ պարտադիր ուժով օժտված որոշում»:

Այսպես՝ տերմինները այն բառերը կամ բառակապակցություններն են, որոնցում արտացոլված են առարկայի յուրահատուկ, էական հատկանիշները, և որոնք ունեն հատուկ, խիստ սահմանված նշանակություն այս կամ այն բնագավառում: Դրանք հստակ արտահայտում են որևէ ոլորտին բնորոշ հասկացություններ, գործընթացներ և անվանումներ[1]

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ դիվանագիտական տերմինաբանությունը ունի տերմինաբանական բոլոր համակարգերին բնորոշ մի շարք ընդհանուր գծեր և մի շարք առանձնահատկություններ: Ինչպես ցանկացած տերմինային համակարգ, այն բաղկացած է մի շարք տերմինաբանական խմբերից ու ենթախմբերից, որոնց տարրերը սերտորեն փոխկապված են իմաստային ընդհանրությամբ:

Գրականություն

1. ***Алексеева Л.М.,*** *Термин и метафора. Пермь, 1998.*
2. ***Зарипова А. Н.****, Экономическая терминология в немецком, русском и татарском языках: Дисс. канд. фил. наук. Казань, 2004. 208 с.*
3. ***Кобрин Р. Ю.,*** *Опыт лингвистического анализа терминологии// Автореф. дис. на соиск. учен. степени канд. филол. наук. Горький, 1969.*

[1] ***Кобрин Р. Ю.*** *Опыт лингвистического анализа терминологии// Автореф. дис. на соиск. учен. степени канд. филол. наук. Горький, 1969, стр. 7;* ***Пронина Р.Ф.*** *Перевод английской научно-технической литературы // Учеб. пособие для вузов. 3е изд., испр. и доп. М.: Высш. шк.,1986, стр. 8.*

4. ***Лотте Д. С.,*** *Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики. М.: Изд-во АН СССР, 1961.*

5. ***Манерко Л. А.,*** *Истоки и основания когнитивно-коммуникативного термино-ведения / Лексикология. Терминоведение. Стилистика. Сб. науч. трудов. М., Рязань, 2003. с. 120-126*

6. ***Пронина Р.Ф.,*** *Перевод английской научно-технической литературы // Учеб. пособие для вузов. 3е изд., испр. и доп. М.: Высш. шк.,1986.*

7. ***Lang F. H.,*** *«Eugen Wüster-zum 100. Geburtstag: Ein Elektrotechniker als Ter-minologe». e & i Elektrotechnik und Informationstechnik, November 1998. pp. 625-628.*

8. ***Rondeau G.,*** *Introduction a la terminologie. Montreal, 1981.*

9. *Vienna Convention on Diplomatic Relations (Vienna, 18th of April 1961), 500 U.N.T.S. 95.*

10. ***Wüster E.****, Einfurung in die Allgemeine Terminologielehre und terminologishe Lexicographie. Bd 1–2. Vien : N.Y., 1979.*

11. ***Չալբման Ն. S.,*** *Դիվանագիտական և հյուպատոսական ծառայության տերմինների անգլերեն-հայերեն բացատրական բառարան, Եր.; ԵՊՀ հրատ., 2011:*

12. ***Թութխայանի Լ.****, Դիվանագիտական տերմինների և հապավումների բառարան Եր., Տիգրան Մեծ, 2004:*

Նյութը ներկայացվել է 25.04.2023,
գրախոսման է ուղարկվել 20.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Ù.·.¹ Æ.Î.Î ³ñ³å»ï³Ýը :

ՀՏԴ 82.09

Արտասահմանյան գրականություն

Միրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԱրՊՀ ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: sirasuhi@rambler.ru

ՊԱՏՈՒՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՄԻԴ ԱՄԻՐՈՎԻ «ԱՐՑՈՒՆՔՆԵՐ ԴՐԱԽՏՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է դաղստանցի հրեա գրող Գամիդ Ամիրովի «Արցունքներ դրախտում» վեպի արդիական նշանակությանը: Ամբողջ պատումի ընթացքում բացահայտ է գրողի կողմնորոշումը դեպի ընթերցողը, նրա սուբյեկտիվ նպատակադրումը: Նա ուղղորդում է դեպի կոնկրետ իրավիճակ, որից կործանվում են բազմաթիվ ճակատագրեր: Ըստ այդմ, հեղինակի նպատակը վերածվում է կոչի. պատմության ու ճշմարտության հանդեպ խնամքով վերաբերմունքի, սերունդներին ճշմարիտ պատմության փոխանցման: Առանձնապես երբ այդ պատմությունը հնագույն է ու հարուստ:

Վեպի հիմքում 2020թ. արցախյան պատերազմն է, որի պատճառների ու գործողությունների ընթացքի մասին աշխարհին ոչ ճիշտ ներկայացնելու խնդիրը ստիպել է հեղինակին ձեռք բերել իրական պատմություններ և դրանց հիման վրա ստեղծել մտացածին կերպարներ: Վեպի նարրատիվը ընկալվում է որպես հայապատում, որի առանցքը հանգամանքների բերումով պատերազմում հայտնված հայ երիտասարդի՝ Մարատի պատմությունն է: Մարատը որպես հավաքական կերպար տիպական, խտացված գծերով ներկայացնում է

այն հերոսական ոգին, որ փոխանցվել է նախնիներից՝ հնագույն շրջաններից:

Քաղաքացիական պարզ գիտակցման ու ազգային էթնիկ ինքնագիտակցման հակադրությունը՝ որպես հիմնարար գաղափար, ներգործման խորքայնությամբ փոփոխության է ենթարկում մոտիվների՝ առանձնապես սիրո ու ընկերության ընկալման պատկերը: Դեպքերի տարածաժամանակային զարգացման ընթացքում խարխլվում է նաև Մարատի և ադրբեջանցի ընկերոջ՝ Էլչինի ընկերությունը: Սա տրամաբանական ավարտ է: Չենթարկվելով հրամանին ու Զաքիրին սպանելով՝ Մարատի կերպարային ինքնուրույնությունը՝ որպես ֆաբուլային առանձնահատկություն, ձևավորում է իր տարբերակը :

Բանալի բառեր՝ Գամիդ Ամիրով, կեղծիքի և ճշմարտության հարաբերություն, արցունքներ դրախտում, հայ ժողովուրդ, Արցախյան պատերազմ, էթնիկ հիշողություն, կերպարի զարգացում, հերոսապատում, հայապատում, ընկերության մոտիվ, սիրո մոտիվ:

С.Степанян

АКТУАЛЬНОСТЬ ТЕМАТИЧЕСКИХ И КОНЦЕПТУАЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ В РОМАНЕ ГАМИДА АМИРОВА "СЛЕЗЫ В РАЮ"

Статья посвящена актуальности романа дагестанского писателя еврейского происхождения Гамида Амирова "Слезы в Раю".

На протяжении всего рассказа прослеживается субъективная устремленность писателя на читателя, которая ведет к конкретной ситуации, в результате которой рушатся судьбы людей. В результате целью автора становится призыв и бережное отношение к истории и истине, умение передачи от поколения к поколению реальные события, особенно когда эти события имеют древнюю и богатую историю.

В основе романа лежит арцахская война 2020 года, где автором была поставлена задача, с помощью реальных историй и вымышленных героев представить миру эту войну и изменить их отношение к этой проблеме.

Главным героем романа по стечению обстоятельств становится молодой армянин по имени Марат, который является собирательным образом героя и представляет героический дух своих предков.

Противопоставление простого гражданского сознания и национального этнического самосознания, как фундаментальной идеи, глубоко воздействует на картину восприятия мотивов, особенно любви и дружбы. В ходе пространственно-временного развития событий расшатывается дружба Марата и азербайджанского друга Эльчина. Это логичный конец. Не подчиняясь приказу и убивая Закира, образная самостоятельность Марата, как и его сюжетная особенность формирует его тип.

Ключевые слова:*. Гамид Амиров, отношения лжи и правды, "Слезы в раю", армянский народ, Арцахская война, этническая память, развитие образа, героизация, мотив дружбы, мотив любви.*

S.Stepanyan

THE RELEVANCE OF THEATRICAL AND CONCEPTUAL ASPECTS IN HAMID AMIROV'S NOVEL "TEARS IN PARADISE"

The article article deals with the topicality of the novel “Tears in Paradise” by the Dagestan Jewish writer Hamid Amirov. The writer’s orientation towards the reader and his subjectivity is obvious throughout the whole story. He creates a situation, where many lives were lost and the author’s goal turns into an appeal as a careful attitude to history and truth, the ability to convey a true history from generation to generation, especially when the history is ancient and rich.

The novel is based on the events of Artsakh War of 2020, misrepresentation of which forced the author to find real stories and create fictional characters based of them. The narrative of the novel is perceived as the history of the Armenians, where the story of a young Armenian Marat who happened to be in the war. Marat takes the central place as a complex character represents the heroic spirit of the ancestors.

The juxtaposition of simple civic consciousness and national ethnic self-consciousness, as a fundamental idea, deeply affects the picture of the perception of motives, especially love and friendship. In the course of the spatio-temporal development of events, the friendship of Marat and his Azerbaijani friend Elchin is also shaken. This is the logical end. Disobeying the orders and

killing Zakir, Marat's independence as a character forms his type as a fabulous feature.

Key words: *Hamid Amirov, the relationship of lies and truth, "Tears in Paradise", the Armenian people, the Artsakh war, ethnic memory, image development, heroization, Armenian language, the motive of friendship, the motive of love.*

Կան ստեղծագործություններ, որոնք լույս են տեսնում հեղինակ-ընթերցող սուբյեկտների միջև նպատակային կապի ստեղծման, դրա ընկալման արդիականությամբ, թերևս նաև այն դեպքում, երբ հեղինակը մնում է արտատեքստային մակարդակում: Դաղստանցի հրեա գրող Գամիդ Ամիրովի «Արցունքներ դրախտում» վեպը (2022թ.), որը ներկայացնում է 2020թ. արցախյան պատերազմը, պատկանում է վերոնշյալ ստեղծագործություններին: Նշենք, որ հեղինակի սույն և դրան նախորդող երկերը («Կիսվող սիրտ», «Սանդուղքների թռիչքը», «Առյուծը և արևը», «Եղբոր ստվերը» և այլն) կերտվել են իրական պատմությունների ու ապրումների հենքով, ինչը գեղարվեստականության տեսանկյունից գրականագիտության մեջ բնորոշվում է որպես. «*ստեղծագործության մեջ կյանքի արտացոլման ճշմարտացիություն, մարդկային հոգեբանության և ապրումների բացահայտման խորություն*»[1]: Ստեղծագործական մտահղացումից մինչև գեղարվեստականացում հեղինակն ունեցել է հոգեբանական հաղթահարումներ նախ Թուրքիայում, երբ սեղանի շուրջ անվայել արտահայտություններ են հնչեցրել հայերի մասին, ապա Ռուսաստանում, նաև բաց հարթակում: Joernalist.am-ին տված հարցազրույցում այս մասին Գ.Ամիրովն ասել է.«*Գիրքը գրելու գաղափարն առաջացավ այն ժամանակ, երբ Instagram-ում գրառումներ էի անում հայերի և պատերազմի մասին: Գրում էի, որովհետև ցանկանում էի մարդկանց ցույց տալ իրականությունը: Շատերը դրա մասին չգիտեն, և շատերը սխալ պատկերացում ունեն: Նրանք կարծում են, թե Արցախը պատկանում է Ադրբեջանին: Ես նպատակ ունեի փոխելու այս կարծիքը, որն ամրացված է այդ մարդկանց մտածողության մեջ*»[2] «Հայ տեսակի» հետ կապված մանկական հիշողություններով, հայ ժողովրդի պատմության խոր իմացությամբ, զարմանքով ու զայրույթով է հեղինակը նկատում, թե ինչպես է վարպետորեն աղավաղվում պատմական ճշմարտությունը: Սա որպես պաշտոնական քաղաքական ուղի ձևավորվել է Թուրքիայում հայոց

---

[1] *Ջրբաշյան Է., Գրականագիտության ներածություն, Բանարվեստի հիմունքներ, Եր.,ԵՊՀ հրատ., 2011. էջ 108;*

[2] *Արցախը դրախտային երկիր է՝ ողողված արցունքով և արյունով. դաղստանցի գրող Գամիդ Ամիրով: Տես՝ Joernalist.am 26.05.2022:*

ցեղասպանության մերժողականությունը գաղափարայնացնելու նպատակով ու գրականության մեջ փաստացի նորություն չէ, մինչ դրա փուլային զարգացումը տեսանելի է դառնում գրական նոր մոտիվներով: Արդի եվրոպական գրականությունը առանցքային է դարձնում գեղարվեստականության քրեաիրավական նշանակությունը (Վ.Էգգերս, «Հայոց դարպասը»):

Ամբողջ պատումի ընթացքում բացահայտ է գրողի կողմնորոշումը դեպի ընթերցողը, նրա սուբյեկտիվ նպատակադրումը: Նա ուղղորդում է դեպի կոնկրետ իրավիճակ, որից կործանվում են բազմաթիվ ճակատագրեր: Ըստ այդմ հեղինակի նպատակը վերածվում է կոչի. պատմության ու ճշմարտության հանդեպ խնամքով վերաբերմունքի, սերունդներին ճշմարիտ պատմության փոխանցման: Առանձնապես երբ այդ պատմությունը հնագույն է ու հարուստ. «*Ուղղակի կարդացեք և փորձեք հասկանալ մարդկանց վիշտը, մխրճվել նրանց հոգու մեջ և հասկանալ հայկական ինքնագիտակցության ողջ խորությունը*»[1]: Սա դառնում է վեպի գաղափարական հիմքը, որին լրացվող թեմատիկ կենցաղային, պատմական, պատմաավանդական, քաղաքական և այլ շեղումները, այուժետային հավելյալ գծերը ընթերցողին հանգեցնում են պատերազմի դառը փիլիսոփայության ընկալման շրջանակում Արցախյան պատերազմի թեմայի խոր ըմբռնմանը: 2020թ. արցախյան պատերազմի պատճառների ու գործողությունների ընթացքի մասին աշխարհին ոչ ճիշտ ներկայացնելու խնդիրը ստիպել է հեղինակին ձեռք բերել իրական պատմություններ և դրանց հիման վրա ստեղծել մտացածին կերպարներ: Այսինքն՝ այստեղ պատումն իր ուժը ստանում է հորինվածքի արժեքային գլխավոր համադրական բևեռների՝ ճշմարտության ու կեղծիքի հարաբերությունից: Հաշվի առնելով, որ վեպի գլխավոր կերպարի զարգացմանը խթանող հերոսական իրավիճակները հայ ժողովրդի պատմության համապատկերում բխում են էթնիկ գոյի տեսակից, վեպի նարրատիվը ընկալվում է որպես հայապատում կամ հերոսապատում, որի առանցքը հանգամանքների բերումով պատերազմում հայտնված հայ երիտասարդի՝ Մարատի պատմությունն է: Կերպարային ձևավորումն այս պատմության մեջ իրականացվում է խորհրդածությունների, մտորումների դրվագներով, արտաքին փոխներգործման ու ներուժի միահյուսմամբ, և Մարատը՝ որպես հավաքական կերպար, տիպական, խտացված գծերով ներկայացնում է այն հերոսական ոգին, որ փոխանցվել է նախնիներից՝ հնագույն շրջաններից: Հայոց ցեղասպանությունը, հայերի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին, Ադրբեջանի հետ 90-ականների

[1] ***Ամիրով Գ.***, *Արցունքներ դրախտում, վեպ, Բուկինիստ, Եր., 2022, էջ 6:*

հակամարտությունը դիտարկվում են Արցախյան պատերազմի նախապատմության կառույցում: Դրանից է, որ վեպում խախտված են ժամանակային սահմանները, անցյալի հետքերով ներկան կորցնում է ժամանակագրական չափերը և դառնում մարդկային քաղաքակրթության գոյատևման ուղենիշ: «*Այն ներքին էությունը, որ ապրում է մեր մեջ հազարամյակներով, զսպել չի լինի:……Դու երբեք չպետք է մոռանաս, թե ով ենք մենք: Դու միշտ պետք է պատվով կրես քո խաչը և հպարտանաս նրանով, որ հայ ես: Բայց քո բանականությունը միշտ պիտի առաջ լինի նրանցից, ովքեր քո կողքին են*»[1]: Ըստ այդմ, վեպը ճշմարտապատում է ու նաև հուշագիր՝ նվիրված 2020թ. արցախյան պատերազմի անմեղ զոհերի հիշատակին: Այս առումով այն կարևոր է ու խիստ այժմեական:

Ժամանակի ու տարածության փոփոխական ընկալմամբ զարգացող գլխավոր կերպարը ստեղծում է էթնիկ ամբողջության գոյության փիլիսոփայությունը, և այստեղ հեղինակի նպատակը ներհայեցողական է ու դիդակտիկ: Այս նպատակին են ծառայում Շահան Նաթալու, Անդրանիկի, Սողոմոն Թեհլերյանի, Մոնթե Մելքոնյանի հերոսական բնութագրերը վեպում, Ազատի մահը (էջ 204-205), Էլչինի ու Մարատի հոր՝ Աշոտի երկխոսությունը, (էջ 280-285), Զաքիրի սպանության նախաձեռնումը (էջ 264-265): Չենթարկվելով հրամանին ու Զաքիրին սպանելով՝ Մարատի կերպարային ինքնուրույնությունը՝ որպես ֆաբուլային առանձնահատկություն, ձևավորում է իր տարբերակը: Ուրեմն այն վեպ-էպոպեա է, որն ունենալով տարածաժամանակային ընկալման տարրեր, գլխավոր կերպարին՝ Մարատին պահում է Արցախյան պատերազմի կիզակետում և ցույց է տալիս ոչ միայն հերոսի կերպարանափոխությունը որոշակի հանգամանքներում, այլև կերտում է արցախցիների ճակատագրի շրջադարձային կետի պատկերը՝ շարադրանքում ներառելով մեծ թվով կերպարներ՝ հիմնական և երկրորդական:

Պատումի էպիկական բնութագիրը ծավալի, հերոսների քանակի ու տարբեր ճակատագրերի նկարագրությամբ կերտում է բազմամոտիվ մի իրադրություն, որը ցույց է տալիս հասարակական ու անհատական ներքին խնդիրների առաջացման քաղաքականությունը, ինչը ներտեքստային է ու հեռանկարային, առանձնապես բնաբաններում .

Արևն ավելի է ջերմացնում սիրելի հողում,
Մենք մոտենում ենք հայրենի աղբուրից ջուր խմելու՝
Մոռանալով, որ ինչ-որ մեկը խավարում
Չարություն է ուզում անել մեր դրախտում:[2]

---

[1] *Նույն տեղում, էջ 85:*
[2] *Նույն տեղում, էջ 11:*

……..

Ծով արցունք է թափվում,
Դիերի սարերը ինչ-որ մեկի համար ընդհանրապես լուրջ չեն,
Մարդիկ նորից թակարդի մեջ են դաժան,
Իսկ աղոթքները տաք քշել է քամին[1]:

«*Միշտ պետք է հիշես այն մասին, որ կա մեկը, որ ղեկավարում է ետնաբեմից: Եվ նրանք արյուն են ուզում: Մեր արյունը, ինչպիսինն էլ լինի էլչինը, ինչքան էլ մոտիկ ընկերություն անի քեզ հետ, մեկ է, վաղ թե ուշ նրա հորեղբայրը տանը կասի, որ դու նրա առաջին թշնամին ես: Եվ էլչինը, եթե անգամ չուզենա էլ, ստիպված է լինելու անել այնպես, ինչպես կասեն ավագները*»:[2]

«*ես չեմ հասկանում՝ ինչ է կատարվում: Մենք նստում ենք դիրքում, մեր դիմաց թշնամին է:*

Ինքներս հարձակվել չենք կարող, նրանք մեզնից քսան անգամ ավելի են ու շատ ավելի լավ են զինված, բայց թե ինչի են սպասում նրանք, չեմ հասկանում…Ինձ թվում է, ինչ-որ պայմանավորվածություն կա…Մի խոսքով՝ չգիտեմ…»:[3]

Ռուսաստանյան քաղաքացիական պարզ գիտակցման ու Արցախյան ազգային էթնիկ ինքնագիտակցման հակադրությունը որպես հիմնարար գաղափար ներգործման խորքայնությամբ փոփոխության է ենթարկում նաև մոտիվների՝ առանձնապես սիրո ու ընկերության ընկալման պատկերը: Տարածական երկու հիմնական միավորների՝ Ռուսաստանի ու Արցախի միջավայրային հակադրությանը զուգահեռվում են Մարատի և աղրբեջանցի ընկերոջ՝ Էլչինի ընտանիքների նկարագրությունները: Մարատի ու Սոնյայի պատահական հանդիպումներով սկիզբ առած ընկերությունը վերածվում է մտերմության, և Մարատը ամուսնության առաջարկություն է անում ազգությամբ ռուս Սոնյային: Հոր՝ Աշոտի խորհրդով Մարատը մեկնում է Արցախ: Արցախահայերի հետ շփումը ընտանիքներում ու դրսում, մարդկային հարաբերության ջերմությունը և ապա պատերազմական օրերը միանգամայն փոխում են սիրո ճանաչելիության սահմանները: Այստեղ սերը դառնում է զենք, և հոգուդ խորքից այն քեզ ուժ է տալիս մահը հաղթահարելու, հույս ու երազանք է տալիս, ու դու պատրաստ ես հանուն սիրո կյանքդ զոհել: Այդպես էլ եղավ, Մարատի ռուս ընկերուհին չլքեց ընկերոջը և պատերազմի

---

[1] *Նույն տեղում, էջ 206:*
[2] *Նույն տեղում, էջ 80-81:*
[3] *Նույն տեղում, էջ 262:*

վերջին օրերին զոհվեց: Դեպքերի տարածաժամանակային զարգացման ընթացքում խարխլվում է նաև Մարատի և աղրբեջանցի ընկերոջ՝ Էլչինի ընկերությունը: Սա տրամաբանական ավարտ է: Մահվան աչքերի մեջ նայելով՝ Մարատը փոխվում էր ժամ առ ժամ: Բայց այս զարգացումը սկիզբ էր առել Մոսկվայում՝ Էլչինի տանը, նրա հորեղբոր՝ բաքվաբնակ գեներալ Զաքիրի հետ ունեցած տհաճ զրույցից .«*Սակայն Մարատը զգաց, որ Զաքիրը մի երկու անգամ խեթ նայեց իրեն: Երրորդ անգամ նա բռնեց այդ հայացքը: Դա իր կյանքի ամենասարսափելի պահերից մեկն էր: Զաքիրի աչքերը մխրճվել էին իր մեջ ինչպես երկու սառը մետաղե դաշույններ, որոնք ցանկանում էին նրա սիրտը կտոր-կտոր անել: Դա մարդասպանի, մանյակի, չարագործի հայացք չէր…Ոչ, դա ուրիշ բան էր… անբացատրելի, բայց այն զգացվում էր գենետիկ մակարդակով…Մարսափի ու մահվան հետ ինչ-որ հեռավոր կապ: ……..Մարատը դա հասկանում էր: Եվ դա առաջին անգամն էր, որ նա իրեն հայ զգաց, և ինքը սկսեց լսել կանանց ու երեխաների ճիչերն ու լացերը»*.[1] Էլչինը՝ շիկահեր, կանաչ աչքերով, հարուստ ընտանիքից, կուլտուրական, Մարատի լավագույն ընկերն էր: Հարուստ էր, բայց ոչ պարծենկոտ, ուսման մեջ թերացող՝ ի տարբերություն հայ ընկերոջ՝ Մարատի: Խրամատում պառկած Մարատին բազմիցս արթնացրել են անցյալի հիշողությունները և դրանց մեջ ամենաշատը՝ Էլչինի պատկերը: Բայց նա նաև զգում է, որ Էլչինի հետ կապված ամեն ինչ արդեն դուրս է մղվել գիտակցությունից, ու բացի այդ, գենետիկ հիշողությունը նրան մղում է թշնամիներին՝ արաբին ու Զաքիրին սպանելու: Ընկերության մեջ թե' Մարատը և թե' Էլչինը ներքին դրամա են ապրում, որովհետև նրանք անտեսել էին դարավոր այն վիհը՝ ընկած հայ և թուրք ժողովուրդների միջև: Մարատին ներքին հակասության մեջ օգնության է գալիս ծերունի Մասիսը. «*Որդի՛ս, տեսնում եմ, որ քեզ համար շատ դժվար է: ……Հավատա ինձ… Ես գիտեմ այս կյանքը…Դու երբեք քեզ չես ների, որ չկանգնեցիր բոլորի կողքին: Դու արդեն տանջում ես քեզ և ավելի շատ ես տանջելու*»:[2] Նրան ընդառաջում է նաև Սոնյան.«*Եթե ես լինեի քո տեղը…տղամարդ և հայ…հավանաբար նույն բանը կզգայի:…..Դու քեզ մի կեր, գնա…*»:[3] Այս պահից Մարատի հոգին խաղաղվում է, նա վստահ է, որ պիտի գնա, միաժամանակ այն նախազգացումով, որ գնում է մահվան ընդառաջ: Այս պահից հաղթահարումը ավարտվում է, և գործում է էթնիկական գենի դարամյա կերպը.«*Հիմա կարծես ինչ-որ պայթյուն եղավ: Մարատի գլխում: Նա*

[1] *Նույն տեղում, էջ 81-82:*
[2] *Նույն տեղում, էջ 129:*
[3] *Նույն տեղում, էջ 133:*

հայտնվեց իրադարձությունների էպիկենտրոնում և իրեն հայ զգաց»:[1] Վեպի վերջին տողերում, երբ Մոսկվայում Մարատը երկխոսության մեջ է մտնում տաքսիստի հետ, նա սրտխառնուք է զգում, ինչը հիշեցնում է Սարտրի Ռոկանտեին: Տաքսիստը ադրբեջանցի էր: Մարատը կանգնեցնում է մեքենան ու իջնում: «*Նա վատ էր զգում, թեքվեց ու սիրտը ետ տվեց»*:[2] Սա էպիֆանիայի երկրորդ շրջանն էր. Մարատը Մոսկվայում անելիք չունի ու անմիջապես զանգեց հրամանատարին՝ Ստեփանակերտ: Ինչ վերաբերում է Էլչինի հոգեվիճակին, այն մնում է չլուծված հեղինակի կողմից, մինչ ըստ պատմողի, Էլչինն իր հակասական տեսակետներով դուրս է գալիս սխալ դաստիարակության դեմ: Ինչով են պայմանավորված ինքնաճանաչման ազդակները, արդյո՞ք բոլորին է բնորոշ գենետիկ հիշողության պայծառացումն ու ինքնաճանաչման պայքարը: Հեղինակն այստեղ չի համաձայնում, ու նրա ու պատմողի դիրքորոշումը նույնանում է: Սա հիմնավորվում է հայեցակարգային մի քանի տեսանկյունից: Նախ՝ առասպելական, որի համար կարևորվում է ծառի խորհրդանիշը, որը ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը ու դրա համապատկերում հայ ընտանիքի դերը: Հաշվի առնելով, որ վեպում դրախտը Արցախն է, բնականաբար խոսքը կենաց ծառի մասին է, որն ունի իր բնորոշումները Աստվածաշնչում: Ամենադառը արցունքներ փնտրող ծառան տեսնում է մի հայ ծերունու՝ փայտե ավերված տան առաջ նստած ու արտասվելիս: Բլրից այն կողմ շարունակվող սարսափելի մարտում հսկայական հրոսակախումբը դաժանորեն սպանում էր բոլորին, այրում էր տները: Լացի ու հեկեկոցների ձայներից բարձրանում է ծերունու ողբի ձայնը: Ծերունու արցունքները ծառան բերում է սատանային, իսկ նա իսկույն ճանաչում է. «*Ես գիտեմ , թե որտեղ ես դրանք գտել»*,«*Դրախտն էր, -պատասխանեց սատանան,-իսկ այդ արցունքները թափում էր այն մարդը, որից ուզում էին խլել իր հայրենիքը»*, …….. «*Դա այն տեղն է, որ Աստված պարգևել է նրանց այն բանի համար, որ իրեն ընդունել են որպես Աստծու* », ……«*Աստված մարդկանց ստեղծեց արատներով, եթե այդ մարդկանց նա դրախտը նվիրեց, որում իր հոգին է դրել, ապա այդտեղից նրանք գնալու տեղ չունեն»*:[3] Եվ երկրորդ՝ հայ ժողովրդի պատմամշակութային հայեցակարգային պատկերը կերտվում է հայ ազգային բնավորության (հյուրասիրություն, նվիրվածություն, մաքրություն, ազնվություն), բարքերի ու ավանդույթների (ժինգյալով հացի պատրաստումը, հայկական հարսանիքի

---

[1] *Նույն տեղում,էջ 281:*

[2] *Նույն տեղում, էջ 325:*

[3] ***Ամիրով Գ.**, Արցունքներ դրախտում, վեպ, Բուկինիստ, Եր., 2022, էջ 330-331:*

արարողությունը) առանձնահատկություններով, որոնց կարելի է անդրադառնալ առանձին:

Նյութը ներկայացվել է 28.04.2023,
գրախոսման է ուղարկվել 20.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Ù.·.¹. Æ.Î.Î³ñ³å»ïÛ³Ýը:

УДК 159.9

Педагогика

Ваган МЕЛИКСЕТЯН
доцент кафедры педагогики Международного научно-образовательного центра НАН РА, к.п.н.
E-mail: **vmeliqsetyan0077@mail.ru**

ВЛИЯНИЕ ВЗАИМООТНОШЕНИЙ РОДИТЕЛЕЙ НА ПРОЦЕССЫ ГАРМОНИЧНОГО РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ РЕБЕНКА

Վ. Մելիքսեթյան

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Երեխայի առաջին սոցիումը ընտանիքն է, որտեղից էլ սկսվում է երեխայի անձի զարգացումը: Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ ձևավորվում է նրա անձը, ինչպես նաև ընտանիքի հանդեպ վերաբերմունքը և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ***ծնող-երեխա, ծնող-ծնող*** *փոխհարաբերություններին: Ծնողների փոխհարաբերություններից է կախված, թե որքանով է ընտանիքն առողջ, և երեխայի զարգացումը որքանով է ներդաշնակ իր ընտանիքի հետ:*

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել, թե ինչպես են ծնողների փոխհարաբերություններն ազդում երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա:

Արդի ժամանակներում ***ծնող-երեխա*** *փոխհարաբեր-ությունները գտնվում են ավելի բարձր մակարդակի վրա, և ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք փաստել, որ երբ ընտանիքում տիրում է սեր, հանդուրժողականություն, հարգանք, փոխըմբռնում, ապա երեխայի անձը զարգանում է ներդաշնակ:*

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝ ***ա.*** *իրականացնել տեսամեթոդական վերլուծություն, որի*

*ընթացքում անհրաժեշտ է ընդհանրացնել հոգեբանական գործոնների հետազոտության խնդիրները, ինչպես նաև՝ երեխայի անձի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման առանձնահատկությունները, **բ.** պարզել ընտանիքում տիրող փոխհարաբերությունների մշակույթը, կառավարման ոճը, **գ.** համակարգել և ներկայացնել այն ներընտանեկան խնդիրները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ երեխայի անձի ներդաշնակ զարգացման գործում:*

Եզրակացություն: Ամուսինների միջև ամուսնական կյանքի անբավարարվածությունը, ամուսնական հարաբերություններում կոնֆլիկտների հաղթահարման ուղիների ոչ ճիշտ ընտրությունը, ընտանեկան դաստիարակության վերաբերյալ ոչ ճիշտ վերաբերմունքը բացասական ազդեցություն են ունենում երեխայի անձի ներդաշնակ զարգացման գործում:

Բանալի բառեր՝ *ընտանիք, կոնֆլիկտ, անձի ձևավորում, ներդաշնակ զարգացում, վարքային նորմ:*

Первый социум ребенка – семья, именно оттуда начинается развитие личности ребенка. Семья – среда, в которой формируется его личность, а также отношение к семье и т.д. В связи с этим необходимо уделять большое внимание взаимоотношениям «родитель-ребенок», «родитель-родитель». От взаимоотношений между родителями зависит здоровье семьи и гармоничное развитие ребенка в семье.

Основная цель работы – исследовать как взаимоотношения между родителями влияют на гармоничное развитие личности ребенка. В современном мире взаимоотношения «родитель-ребенок» находятся на более высоком уровне: в результате исследования мы можем констатировать, что когда в семье царят любовь, толерантность, уважение, взаимопонимание, то личность ребенка развивается гармонично.

Основные задачи исследования: а) осуществить теоретико-методический анализ, в процессе которого необходимо обобщить психологические факторы исследовательских проблем, а также особенности формирования благоприятных условий для развития личности ребенка; б) выявить культуру взаимоотношений и стиль управления в

семье; в) систематизировать и представить те внутрисемейные проблемы, которые могут стать препятствием для гармоничного развития личности ребенка.
Выводы. Неудовлетворенность браком, неправильный выбор путей устранения конфликтов в супружеских отношениях, ошибочное отношение к семейному воспитанию негативно влияют на гармоничное развитие личности ребенка.
***Ключевые слова:**. семья, конфликт, формирование личности, гармоничное развитие, поведенческая норма.*

V. Meliksetyan

THE INFLUENCE OF PARENTS' RELATIONSHIP ON THE HARMONIOUS DEVELOPMENT PROCESSES OF THE CHILD'S PERSONALITY

The first society for a child is the family, from where the development of the child's personality begins. The family is the environment in which his personality, as well as his attitude towards the family, etc. are formed. Therefore, we need to pay close attention to parent-child, parent-parent relationships. It depends on the parents' relationship how healthy the family is, and how harmonious the child's development is with his family. The main purpose of the work is to study how the parent-child relationship affects the harmonious development of the child's personality. In modern times, the parent-child relationship is at a higher level and, as a result of research, we can state that when there is love, tolerance, respect, mutual understanding in the family, the child's personality develops harmoniously. The main objectives of the study are: ***a****. to carry out visual-methodological analysis, during which it is necessary to generalize the problems of research of psychological factors, as well as the peculiarities of creating favorable conditions for the development of the child's personality,* ***b****. to find out the culture of relations and management style within family, and* ***c****. to coordinate and present those problems in the family that may be an obstacle to the harmonious development of the child's personality. Conclusion: The spouses' dissatisfaction with the marital life, incorrect choice of ways to overcome conflicts in the marital relationship, incorrect attitude towards family upbringing have a negative impact on the harmonious development of the child's personality.*
***Key words:** family, conflict, personality formation, harmonious development, norm of behavior.*

Исходя из актуальности темы, можно констатировать, что взаимоотношения между родителями влияют на развитие личности ребенка. Каждое решение, которое принимают родители, влияет на личность ребенка в зависимости от того, как родители готовят ребенка к этому. Разумеется, большое значение в отношениях между родителями имеет также состояние страны, социума и т.д. Эта тема еще недостаточно изучена и необходимо провести множество исследований, чтобы можно было сформулировать четкий ответ на вопрос: как взаимоотношения между родителями могут влиять на гармоничное развитие личности ребенка.

Семья – это среда, в которой формируется его личность, а также отношение к семье и т. д. Именно поэтому необходимо уделять большое внимание взаимоотношениям «родитель-ребенок», «родитель-родитель». В процессе развития и воспитания ребенка большое значение приобретают условия семейного воспитания и характер взаимодействия родителей с ребенком. В психолого-педагогических исследованиях современной семьи особое внимание уделяется характеру взаимоотношений «родитель-ребенок» в семье.

Проблемы семейного воспитания получат эффективное решение, а влияние семьи на развитие и формирование личности ребенка в современных условиях станет продуктивным, если в семье будут созданы педагогические условия, способствующие формированию и развитию личности.

МЕТОДЫ

Основными методами работы являются подробный анализ работ армянских и зарубежных специалистов, посвященных исследованию атмосферы в семье и ее влияния на психику ребенка с учетом мельчайших подробностей, а также обработка и обобщение знаний, полученных в результате изучения. Практическая значимость работы обусловлена использованием актуальных и точных методик, которые позволят правильно организовать семейное воспитание, улучшить отношения «родитель-ребенок» и сделать семью более здоровой.

Важно знать позицию общества, чтобы иметь более ясное представление о роли и значении структуры семьи, а также о воспитании личности ребенка. С этой целью было проведено *исследование-анкетирование*, чтобы выяснить, какие представления и взгляды имеют разные семьи по отношению к семейному воспитанию, современному состоянию семьи, семейному быту и структуре семьи в целом.

РЕЗУЛЬТАТЫ

Целевой группой исследования были выбраны граждане РА в возрасте 25-50 лет. Исследование было проведено в 90 семьях. Полученные результаты показывают, что сегодня большинство семей обеспокоены судьбой своего ребенка, что, безусловно, похвально, поскольку в последнее время участились негативные явления, влияющие на структуру семьи.

Одной из важнейших проблем является разрыв между родителем и ребенком, который сказывается на искренности их отношений. Несмотря на то, что ребенка любили во всех семьях, он был в центре внимания членов семьи, но, так как большинство родителей не знали культуры общения с ребенком, методов и форм воспитания, отношения становились стихийными. Нас обеспокоил этот факт, поэтому во всех анкетированных семьях мы провели интересные беседы-дискуссии на разные темы: «Как проявить уважение к детям?», «Какие факторы могут повлиять на гармоничное развитие личности ребенка?», «Как привить ребенку представления о «правильном и неправильном», «хорошем и плохом»?» и т.д.

АНКЕТА СОЦИАЛЬНОГО ОПРОСА

- Часто ли возникают конфликты в вашей семье и каковы причины их возникновения?
- Кто в семье занимается воспитанием ребенка?
- Возможно ли иметь дисциплинированного ребенка, если между взрослыми, проживающими в семье, есть разногласия?
- Как часто вы посещаете школу?
- К кому бы вы обратились за воспитанием детей?
- Какие факторы могут повлиять на гармоничное развитие личности ребенка?
- Обманывает ли ваш ребенок и каковы причины этого?
- Как вы прививаете ребенку представления о «правильном и неправильном», «хорошем и плохом»?
- Обучаете ли вы ребенка принятым нормам поведения?
- Вы злитесь или наказываете его за ложь или ошибку?

ОБСУЖДЕНИЕ

Основная цель работы – проанализировать как взаимоотношения родителей влияют на гармоничное развитие личности ребенка. Основные задачи – проведение видеометодического анализа, где необходимо обобщить исследования психологических факторов, выяснить культуру взаимоотношений в семье, стиль управления, согласовать и представить внутрисемейные проблемы, которые могут стать препятствием в процессе гармоничного развития личности ребенка.

ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ ОТНОШЕНИЙ РОДИТЕЛЯ И РЕБЕНКА

Основным институтом воспитания является семья. Все, что ребенок приобретает в семье, влияет на всю его дальнейшую жизнь. Именно здесь закладываются основы личности ребенка. В семь лет он уже почти сформировавшаяся личность. Взаимоотношения «родитель-ребенок» представляют собой общую систему межличностных отношений, ориентаций и ожиданий на протяжении всего периода возрастного развития, что определяется совместной деятельностью и коммуникацией между членами семьи.

Специалисты различают благополучные и неблагополучные взаимоотношения между детьми и родителями. Взаимоотношения «родитель-ребенок» считаются благополучными, если ребенок хорошо себя чувствует в семье, его любят и уважают. Неблагополучные взаимоотношения «родитель-ребенок» складываются в семьях с тревожными, равнодушными и жестокими родителями.

Отношения в семье зависят от многих причин: например, родители с разным уровнем эмоциональности, у которых нет опыта общения с детьми, так как он приобретается вместе с развитием ребенка и т.д.

Существуют различные типы взаимоотношений:

а) *сотрудничество* – когда удовлетворяются основные потребности всех членов семьи;

б) *союзнические отношения* основаны на получении общей выгоды, удовлетворяющей все стороны;

в) *конкуренция* – когда каждый в семье стремится быть во всем первым, добиваться собственных целей любой ценой;

г) *противостояние* – когда в семейных отношениях преобладает стремление доминировать над другими, показать свое преимущество;

д) *антагонизм* – когда стороны в семейных отношениях не идут на компромисс.

Существуют различные классификации отношений «ребенок-родитель».

Гиперзабота – когда ребенку остается полагаться только на себя.

Гиперопека – когда ребенка оберегают сверх меры, лишают самостоятельности, все запрещают.

Воспитание Золушки – когда ребенок эмоционально отвергнут, его не любят.

Жестокое воспитание – когда ребенка наказывают за малейшую провинность.

Из исследования Е.В. Крутых мы узнаем, что в полных и неполных семьях воспитанием в основном занимаются матери. По этой причине воспитание также является односторонним. Эмоциональная связь с отцами слабая или отсутствует. В семьях доминирует авторитарный стиль общения с детьми. В неполных семьях этот стиль сочетается с эмоциональным неприятием ребенка. Родитель воспринимает его как неудачника, не приспособленного к жизни. Мать проявляет гнев, раздражение, недоверие, неуважение к ребенку.

В полных семьях отношения имеют *авторитарно-симбиотический* характер. Они сопереживают ребенку, осуществляют сверхконтроль, лишают его самостоятельности, оберегают от трудностей, проявляют строгую дисциплину. Таким образом, в полных семьях родители более терпимы к недостаткам своих детей. В неполных семьях для детей характерны повышенный контроль, непоследовательность в общении, неприятие родителями некоторых черт личности, очень высокая тревожность.

Воспитание – это тяжелая работа. В ней, как и в любом другом процессе, возможны ошибки, неудачи и поражения. Семейное воспитание – это жизнь, которая должна быть гармоничной и счастливой.

ВИДЫ СЕМЕЙНЫХ КОНФЛИКТОВ И ИХ ВЛИЯНИЕ НА ФОРМИРОВАНИЕ ЛИЧНОСТИ РЕБЕНКА

В результате семейных конфликтов в первую очередь страдают дети, у них возникает деформация личностного развития и нарушение поведения. В семьях с конфликтными отношениями материальная и образовательная необходимость, знание норм не способны предотвратить регулярно возникающие неприятности. Частые конфликты влияют на психологическую атмосферу семьи, разрушают отношения, вызывают напряженность, мучительные психические состояния, стресс у членов семьи [5].

Попробуем представить виды семейных конфликтов, выявленные в результате исследования, и их основные причины.

1. Конфликт между супружеской парой

Психологическая несовместимость, тяжелый характер одного из супругов, сексуальная неудовлетворенность, неверность, несоответствие мировоззрения и системы ценностей, неспособность женщины решать бытовые вопросы, финансовые проблемы и т.д. Конфликт может быть вызван и кризисом в семейных отношениях.

Особенно это заметно, когда ребенок становится свидетелем ссор родителей или сцен насилия. Такие дети живут с чувством вины, страха, замкнуты и беспокойны, а также могут иметь нервные, психосоматические и другие заболевания.

Следует отметить, что у некоторых детей конфликтность становится обычным явлением, а в дальнейшем, во взрослом состоянии, они проявляют такое же равнодушие к окружающим людям и явлениям, становятся черствыми, обладают низким уровнем эмпатии. Родители этих детей, будучи зацикленными на выяснении отношений, не замечают, что их ребенок приобретает отрицательные черты характера, совершает недопустимые поступки, демонстрирует асоциальное поведение.

2. Конфликт в отношениях «родитель-ребенок».

В семье у родителя могут быть конфликты с детьми разного возраста. Причина в том, что родитель не понимает возрастных и психологических особенностей ребенка, не владеет способами воспитания, не понимает намерений ребенка и всегда считает его маленьким и неспособным человеком. Переход от одного возрастного этапа к другому сопровождается кризисом, который не всегда проходит гладко. Кризис может вызвать напряжение в отношениях, особенно в трехлетнем и подростковом возрасте.

Причиной кризиса в трехлетнем возрасте является конфликт между потребностями ребенка и их удовлетворением. В этот период дети становятся упрямыми, непослушными, делают все вопреки тому, что требуется, проявляют негативное отношение к взрослым, хотя следует отметить, что негативизм у ребенка проявляется не ко всем: он имеет весьма избирательный характер и направлен именно против тех, кто стремится подавить его свободу. Взрослым

следует знать, что кризис трехлетнего возраста является временным явлением и свидетельствует о скором прохождении ребенком следующего возрастного этапа [1].

Информированность родителей и их толерантность не позволят, чтобы в отношениях «родитель-ребенок» уменьшился градус теплоты и наметился разрыв. Большое количество конфликтов возникает в подростковом возрасте, что связано с изменениями, происходящими в психологической, физической и сексуальной жизни подростков.

Сам подростковый возраст считается кризисным возрастом, и на этом возрастном этапе наиболее важны теплые семейные отношения, взаимное доверие, уважение, взаимопонимание [4]. В этом возрасте часто возникает проблема «отцов и детей». В одном случае, подросток начинает сравнивать свои представления об идеальном родителе с реальными родителями и видит огромную разницу между идеальными и реальными родителями. В другом случае, подросток, у которого начался процесс бурного физического развития и полового созревания, начинает считать себя взрослым и требует, чтобы все относились к нему как к взрослому. Это желание есть у всех без исключения подростков. Родители, которые продолжают относиться к своему подростку как к ребенку, могут столкнуться с серьезными проблемами.

3. Конфликт в отношениях «ребенок-ребенок».

Причин конфликтов в отношениях «ребенок-ребенок» несколько. Первая причина – недостаток внимания к ребенку. Как правило, рождение второго ребенка в семье вызывает у первого ребенка чувство отторжения и пренебрежения, которое может перерасти в ненависть как к родителю, так и к сиблингу. После рождения второго ребенка родители должны более внимательно относиться к первому ребенку, сформировать у него положительное отношение к новорожденному. Характер отношений «ребенок-ребенок» зависит только от родителя.

Второй причиной конфликта в отношениях «ребенок-ребенок» является гендерная дискриминация детей со стороны родителя. В армянских семьях принято «делить» мальчиков и девочек между родителями. Матери обычно отдают предпочтение детям мужского пола, предоставляя им привилегии, в то время как отцы проявляют аналогичное отношение к девочкам. С раннего возраста ребенок понимает и чувствует отношение родителя и начинает испытывать неприязнь к брату или сестре.

4. Конфликт с другими членами семьи.

Если мы сравним расширенные и нуклеарные семьи, то увидим, что в расширенных семьях возникают конфликты, которые просто не могут возникнуть в нуклеарных семьях. В армянской действительности является принятой традицией, когда молодой человек женится и живет с женой в семье отца, где, кроме родителей, живут также братья, сестры и другие родственники. Чем больше семья, тем сложнее обеспечить атмосферу добрососедства.

Исследования нескольких семей показали, что конфликты в расширенных семьях возникают в основном между невестками и свекровями. Конфликты

могут быть вызваны условиями жизни, финансовыми проблемами, разницей в уровне образования, материнской ревностью, стремлением невестки самоутвердиться, разными подходами к воспитанию ребенка, несовместимостью характеров и темпераментов и др. Конфликты возникают и между другими членами семьи, когда встает вопрос о материальном благополучии и наследстве [3].

На первый взгляд кажется, что эти виды конфликтов никак не влияют на психическое развитие ребенка, но когда ребенок становится свидетелем того, как родители спорят, оскорбляют, дискредитируют друг друга, меняется и его психическое состояние. Конфликтная ситуация делает ребенка хладнокровным, малообщительным, жестоким, невнимательным, агрессивным, грубым или неуверенным в себе, замкнутым в себе, подавленным и равнодушным.

Подводя итог проделанной работе, мы пришли к выводу, что нездоровая атмосфера в семье, конфликтные отношения супругов однозначно негативно сказываются на ребенке. Ребенок, который постоянно находится в напряженном, стрессовом состоянии, имеет сложный характер, не способен наладить отношения со сверстниками и взрослыми, имеет неадекватную, заниженную самооценку. Споры и конфликты неизбежны в любой семье. Поэтому каждая взрослая супружеская пара должна трезво осознавать, что на них лежит ответственность за формирование и воспитание здорового ребенка. Вот почему в семье необходимо:

а) свести количество конфликтов к минимуму, а если они возникнут, то быстро решить их;

б) создать в семье мирную, спокойную атмосферу для физического и психического развития ребенка, установить хорошие социальные отношения, основанные на любви и уважении, как с ребенком, так и со всеми членами семьи.

ВЫВОДЫ.

Изучая семьи и их проблемы, ознакомившись с нюансами семейного воспитания, значением роли педагогических условий в семейном воспитании детей, мы пришли к следующим выводам и рекомендациям.

Роль семьи и семейного воспитания в формировании и становлении ребенка очень важна, но надо с сожалением отметить, что в результате наших исследований мы еще раз убедились в неосведомленности родителей по поводу незначительных на первый взгляд, но на самом деле крайне важных вопросов: как воспитывать, к кому обращаться, почему так, а не иначе? Ответы на эти и другие вопросы можем дать мы, педагоги, подкрепив их соответствующими действиями и поступками.

Помимо неинформированности, большинство родителей еще и не владеют культурой «родитель-ребенок», выступают лишь в своеобразной роли «истца», не уважая ребенка, его прав, не принимая во внимание то, что требования проистекают из уважения. Об этом говорил еще А.С. Макаренко, слова которого заслуживают особого упоминания: «Если не уважаешь ребенка, то не имеешь права ничего от него требовать».

Проблемы семейного воспитания будут иметь эффективное решение, если:

а) разработать стабильную социальную политику в стране;

б) решить вопросы занятости и безработицы населения;

в) разработать четкие планы, связанные с миграционной политикой, которые помогут контролировать эмиграцию населения;

г) следует укрепить связь семьи со школой, информировать родителей о нюансах семейного воспитания.

Задача, связанная с реализацией перечисленных рекомендаций, стоит перед всеми нами: во всем этом процессе должны участвовать политические, медицинские, медийные, педагогические и другие структуры, имеющие прямое или косвенное отношение к социальной структуре семьи [2]. Прежде чем приступить к воспитанию детей, родители должны помнить, что вся проделанная ими работа если не сегодня, то завтра будет полностью работать либо за них, либо против них. Чтобы впоследствии не осуждать негативный результат, мы предлагаем подойти к вопросу с большой ответственностью.

В результате исследования мы пришли к следующим выводам:

1. Задачей исследования было проведение видеометодического анализа, где необходимо было выяснить особенности благоприятных условий для развития личности ребенка. Мы пришли к выводу, что для гармоничного развития личности ребенка необходимо создать благоприятные условия в семье, выбрать правильные методы воспитания ребенка, любить и заботиться о ребенке. При этом в семье должно царить тепло, члены семьи обязаны уважать друг друга и принимать ребенка как человека, который может высказать свое мнение.

2. Большое значение имеет стиль управления и воспитания в семье. В зависимости от того, какой стиль является доминирующим для семьи, у ребенка будут развиваться соответствующие личностные качества.

3. Следующей задачей работы было согласование и представление внутрисемейных проблем, препятствующих развитию личности ребенка.

Можно констатировать, что неудовлетворенность матримониальной жизнью супругов, ошибочный выбор способов преодоления конфликтов в личных отношениях, неправильное отношение к семейному воспитанию отрицательно сказываются на гармоничном развитии личности ребенка.

Литература

1. Бежанян С., Причины негативных детско-родительских отношений и средства их преодоления в работе социального педагога, ВГУ: 2018. Том: А: С. 283-290. (на Армянском языке)
2. «Родительская школа» Центр родительской, образовательной и психологической поддержки» НПО, «Дисциплинированный ребенок: миф или реальность?» ЮНИСЕФ Армения, Ереван, 2020, 115 страниц. (на Армянском языке)

3. Арутюнян Н.К., Казарян А.П., Гукасян Л. Х., Н 422 «Социальная педагогика» (пособие для вузов), Ереван, изд-во ЕГУ, 2017, 338 стр. (на Армянском языке)
4. Мирзоян В.Х., Типы семейных конфликтов и их влияние на формирование личности ребенка, Гюмри, Государственный педагогический институт имени М. Налбандяна, Научный вестник, 2014, Практика Б, стр. 223-231. (на Армянском языке)
5. Налчаджян А.А., «Семейная психология», Учебник для 10 класса общеобразовательной школы. Ереван, «Зангак», 2001, 128 стр. (на Армянском языке).

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 504

Ռազմագիտություն

Առլեն ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս, գնդապետ
E-mail: shahverdyan.arlen@gmail.com

Արթուր ՔԱՄԱԼՅԱՆ
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմահումանիտար գիտությունների հետազոտությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության անքակտելի մաս հանդիսացող էկոլոգիական անվտանգության խնդիրը տվյալ պետությունից պահանջում է քաղաքական որոշումներ և լուծումներ, ինչպես նաև խնդիրների կանխարգելման քաղաքական ու ռազմավարական ուրույն մոտեցումներ՝ այդպիսով էկոլոգիական անվտանգության հրատապ խնդիրներին մշտապես հաղորդելով քաղաքական և ռազմավարական տրամաչափեր ու նշանակություն: Էկոլոգիական խնդիրներն արդի աշխարհում խիստ կարևոր են շատ պետությունների անվտանգային քաղաքական և ռազմավարական օրակարգերում: Այս խնդիրները սրանում են հատկապես հակամարտության գոտիներում:

Սույն հոդվածում փորձ է արվել վերլուծել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության՝ բնապահպանության ոլորտը կարգավարող ռազմա-վարական հայեցակարգերը, որոնցից էլ բխեցվում են ոլորտային օրենքներն ու ենթաօրենդրական իրավական ակտերը: Հոդվածը նպատակ ունի վեր հանել հայեցակարգերում և ռազմավարություններում տեղ գտած այն հարցերն ու խնդիրները, որոնց վերաիմաստավորման և կարգավորման դեպքում առավել բարենպաստ կդառնա էկոլոգիական վիճակը և առավել արդյունավետ կլինեն շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված պետական և մասնավոր ջանքերը: Հայաստանն ու Արցախն այս ոլորտի օրենդրական կարգավորման հարցում ունեն որոշակի անելիքներ, հատկապես՝ հաշվի առնելով այն իրողությունները, որոնք ծառացել են Հայաստանի և Արցախի առջև 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, և Ադրբեջանի կողմից շարունակաբար իրականացվող հակահայկական քաղաքականության հետևանքով:

Բանալի բառեր՝ *բնապահպանության անվտանգություն, ռազմավարություն, քաղաքական և ռազմավարական հարթություն, օրենսգիրք:*

А.Шахвердян, А. Камалян

ВАЖНОСТЬ ПРОБЛЕМЫ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В ДОКУМЕНТАХ СТРАТЕГИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКИ АРЦАХ

Проблема экологической безопасности, являющаяся неотъемлемой частью национальной безопасности каждого государства, требует политических решений, а также политико-стратегических подходов, тем самым постоянно придавая политико-стратегическое измерение проблемы экологической безопасности. Экологические проблемы занимают важное место в политической и стратегической повестке дня безопасности многих государств современного мира. Современное состояние природной среды вынуждает

рассматривать обострение экологических проблем в первую очередь как важные вопросы национальной безопасности. Эти проблемы особенно остры особенно в зонах конфликтов.

В статье предпринята попытка анализа стратегических концепций Республики Армения и Республики Арцах, регулирующих сферу охраны окружающей среды, из которых вытекают отраслевые законы и подзаконные правовые акты. В статье ставится задача осветить проблемы в концепциях и стратегиях, которые, если их переосмыслить и урегулировать, сделают экологическую ситуацию более благоприятной, а усилия государства, направленные на охрану окружающей среды, более эффективными. Делается вывод, что Армении и Арцаху предстоит проделать определенную работу по законодательному регулированию данной сферы, особенно с учетом тех реалий, с которыми они столкнулись после 44-дневной войны 2020 года и в результате продолжающейся антиармянской политики Азербайджана.

Ключевые слова:. *экологическая безопасность, стратегия, политико-стратегическое измерение, кодекс.*

A.Shahverdyan, A. Kamalyan

THE IMPORTANCE OF THE PROBLEM OF ECOLOGICAL SECURITY IN THE STRATEGIC SIGNIFICANCE DOCUMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE REPUBLIC OF ARTSAKH

The problem of ecological security, which is an inseparable part of the national security of every state, requires political decisions and solutions, as well as political and strategic approaches to the prevention of problems from the given state, thus constantly giving political and strategic dimensions to the problems of ecological security. Environmental problems are very important in the security political and strategic agendas of many states in the modern world. The current state of the natural environment forces the exacerbation of ecological problems to be considered primarily as important issues of

national security. In the article, an attempt was made to analyze the strategic concepts of the Republic of Armenia and the Republic of Artsakh, regulating the field of environmental protection, from which the field laws and sub-legislative legal acts are derived. The article aims to highlight the issues in the concepts and strategies, which, if reinterpreted and regulated, will make the ecological situation more favorable and the state efforts aimed at protecting the environment will be more effective. It is concluded that Armenia and Artsakh have some work to do regarding the legislative regulation of this sphere, especially considering the realities that faced them after the 44-day war in 2020 and as a result of Azerbaijan's continuous anti-Armenian policy.

Key words: *environmental security, strategy, political and strategic dimension, code*

Յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության անքակտելի մաս հանդիսացող էկոլոգիական անվտանգության խնդիրը տվյալ պետությունից պահանջում է քաղաքական որոշումների և լուծումների, ինչպես նաև խնդիրների կանխարգելման քաղաքական ու ռազմավարական մոտեցումներ՝ այդպիսով էկոլոգիական անվտանգության խնդիրներին մշտապես հաղորդելով քաղաքական և ռազմավարական տրամաչափեր: Էկոլոգիական խնդիրներն արդի աշխարհում խիստ կարևոր են շատ պետությունների անվտանգային քաղաքական և ռազմավարական օրակարգերում[1]:

Վերջին տասնամյակների ընթացքում մարդու կենսագործունեության գործունեության և պետությունների արդյունաբերական ու տնտեսական զարգացման հետևանքով բնությանը հասցված ահռելի վնասը ստիպված է առավել հաճախ անդրադառնալ այս խնդիրներին: Ավելին, շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը հաճախ պատճառ է դառնում նաև տարածաշրջանային լարվածության, բռնության և ագրեսիայի դրսևորումների, ընդհուպ մինչև պատերազմների՝ բնական ռեսուրսներին

[1] *Տես Allenby B., Environmental Security: Concept and Implementation. International Political Science Review, Vol. 21, 2000, № 1, 5–21:*

տիրանալու նպատակով[1]: Էկոլոգիական բարենպաստ միջավայրի և դրանում մարդու կենսագործունեության ապահովումն իրավական առումով արդի աշխարհում դիտարկվում է նաև միջազգային իրավունքի տիրույթում[2]:

Հետևաբար, յուրաքանչյուր պետության համար, ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, էկոլոգիական խնդիրները այսօր հրամայական են, և շատ անգամ դրանք միավորում են մի քանի պետությունների, նրանք ստիպված են լինում վերանայել ու կատարելագործել իրենց արտաքին քաղաքականությունը, միջպետական հարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերը, որոնք միտված են հաղթահարելու շատ ավելի համընդհանուր խնդիրներ և, ի վերջո, նաև իրենց ներքին օրենսդրությունը[3]:

Բնական միջավայրի ներկա վիճակը ստիպում է էկոլոգիական խնդիրների սրացումները հաճախ դիտարկել առաջնային կերպով՝ որպես ազգային անվտանգության կարևոր խնդիրներ, ինչը էական է դարձնում էկոլոգիական անվտանգության՝ որպես ազգային անվտանգության խիստ կարևոր բաղադրիչի դիտարկումը[4]: Հետևաբար խնդիրը ձեռք է բերում ռազմավարական առավել մեծ ընդգրկում, քանի որ ցանկացած պետության ազգային անվտանգության ապահովման համար մշակվող ու պարբերաբար թարմացվող ազգային անվտանգության ռազմավարությունը չի կարող չանդրադառնալ էկոլոգիական խնդիրներին՝ փորձելով արտացոլել դրանց լուծմանն ուղղված միջոցառումները, ուղենիշային մոտեցումները, քաղաքական մտադրություններն ու առաջնահերթությունները:

Այդ պատճառով էկոլոգիական անվտանգությունը իր անխախտ ու կայուն արտացոլումն է գտել գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններում, ազգային անվտանգությանը վերաբերող պետական փաստաթղթերում, օրենքներում, պետության զարգացման ծրագրերում և այլն՝ վերանայելով էկոլոգիական հարցերին, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող՝ բաժինները և

---

[1] *Տես Շահվերդյան Ա. Մ., Մոլորակի բնական պաշարների նվազման հետևանքները միջպետական հարաբերություններում, Եր., «Регион и мир» научно-аналитический журнал, том XI, № 5, 2020, էջեր 30-34 (http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2020_5.pdf):*

[2] *Տես Lytton Ch., Environmental human rights: Emerging trends in international law and ecocide, "Environmental Claims Journal", Volume 13, 2000, № 1, pp. 73-91:*

[3] *Տես Շահվերդյան Ա. Մ., Արտաքին քաղաքականության ձևավորման որոշ հարցեր՝ 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում կատարված բնաջնջման դատապարտման օրինակով»: Եր., ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ, ռազմագիտական հանդես, 2022 թ., հմ. 1, էջեր 104-115 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2022/09/hb-2022-n1.pdf):*

[4] *Տես Terriff T., Croft S., James L., Morgan P., Security Studies Today, York House Typographic Ltd, London, 2002, pp. 115-134, նաև՝ What are today's security challenges?, (https://www.nato.int/wearenato/security-challenges.html):*

համապատասխանեցնելով դրանք արդի պահանջներին ու մարտահրավերներին, փորձ անելով առավել արդյունավետորեն ապահովել էկոլոգիական անվտանգությունը: Ընդ որում, անհրաժեշտ վերանայումներ են արվում կապված ինչպես տարածաշրջանի, այնպես էլ, ընդհանուր առմամբ, Երկիր մոլորակի էկոլոգիական խնդիրների հետ: Ըստ էության, էկոլոգիական անվտանգությանն ուղղված իրավական բազան մշտապես կարիք ունի վերանայման, քանի որ էկոլոգիական խնդիրներն էլ արագ տեմպերով ավելանում են ու ձեռք բերում մեծ ծավալներ:

Այս իմաստով իրենց ռազմավարական հայեցակարգերն են վերանայում ու կատարելագործում ոչ միայն առանձին պետությունները, այլև պետությունների դաշինքները, միջազգային կազմակերպությունները, քանի որ միջազգային հանրությունում վաղուց արմատացած է այն մոտեցումը, որ էկոլոգիական խնդիրներն իրենց բնույթով համամարդկային, համամոլորակային են և չեն ճանաչում սահմաններ կամ արհեստական խոչընդոտներ դրանց լուծման ուղղությամբ: Արևմուտքում այս գաղափարն այնքան է արմատացած, որ նույնիսկ իրենց առաքելությամբ ամենևին էլ ոչ բնապահպանական կառույցներն են այսօր հաճախ զբաղվում այդօրինակ խնդիրներով[1]:

Օրինակ՝ ՆԱՏՕ-ն, լինելով ռազմաքաղաքական դաշինք, իրականացնում է նաև շրջակա միջավայրի ուսումնասիրման ու պահպանության բազմազան ծրագրեր[2], որոնց կազմակերպումն ու իրականացումն ունի ոչ միայն բնապահպանական ուղղվածություն և ընդգրկում, այլև քաղաքական նշանակություն, և ընդգրկում են ինչպես դաշինքի անդամ, այնպես էլ գործընկերներ պետություններին ու նրանց համապատասխան կառույցներին:

Ըստ ՆԱՏՕ-ի 1999 թ. Ռազմավարական հայեցակարգի՝ ՆԱՏՕ-ն առանցքային դերակատարում ունի անվտանգությանն ուղղված հին ու նոր սպառնալիքների ի հայտ բերման ու հաղթահարման գործում՝ մշտապես ջանալով գտնել շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցման հնարավոր արդյունավետ կապակցումը անվտանգության ապահովման հետ, այդ թվում՝

---

[1] *Տես Кулагин В. М., Традиционные угрозы и мировой военный баланс. Новые угрозы. Новая повестка дня международной военно-политической безопасности, Современная международная безопасность, М., 2012, стр 80-82, նաև՝ Ph. Kelly, Classical Geopolitics. Stanford University Press, California, US, 2016, p. 210.*

[2] *Տես "Science for Peace and Security" (http://www.nato.int/cps/en/natolive/topics_58253.htm), նաև՝ "Региональная безопасность окружающей среды: вызовы для Центральной и Восточной Европы". "Окна в НАТО" (http://nato.w-europe.org/show.php?art=88&rubr=37); "Объединение ученых во имя мира и прогресса", "Партнерство в действии" (http://www.nato.int/cps/ru/SID-1431FDA4193FF23F/natolive/topics_49216.htm):*

նաև այնպիսի ռիսկերի, որոնք ուղղակիորեն առաջ են բերում ռազմական քայլերի անհրաժեշտություն[1]: ՆԱՏՕ-ն այս մոտեցումը կյանքի է կոչում իր «The Euro-Atlantic Disaster Response Coordination Centre (EADRCC)»[2] և «Partnership for Peace Trust Fund»[3] գիտական նախագծերի, «Science for Peace and Security (SPS)» և այլ ծրագրերի միջոցով, որոնք առնչվում են դաշինքի անդամ-պետությունների էկոլոգիական, շրջակա միջավայրի խնդիրներին, հատկապես՝ այնպիսիք, որոնք կապ ունեն պաշտպանության հետ[4]:

Բնականաբար, վերոնշյալ բոլոր ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է ռազմավարական հայեցակարգերի մշտական վերանայում և կատարելագործում, իրավական հենքի ամրապնդում: Այդ նպատակով շրջակա միջավայրի և դրա վնասումը կանխարգելելու կարևորությունը ամրագրվեց նաև 2022 թ. հունիսի 28–30-ը կայացած ՆԱՏՕ-ի Մադրիդյան գագաթնաժողովում ընդունված որոշումներում[5], հատկապես այդ որոշումների՝ ռազմական-ռազմավարական և ժամանակակից պատերազմավարության չափումներով իմաստավորման տեսանկյունից: Գագաթնաժողովի ընթացքում հաստատված ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունը («Մադրիդյան հայեցակարգը») կրկին ամրագրեց, որ աշխարհում լայնորեն տարածված անկայուն իրավիճակը բերում է բռնության և մի շարք բացասական հետևանքների, այդ թվում՝ շրջակա միջավայրի վնասի հասցմանը[6]:

Այսպիսով, ՆԱՏՕ-ի ամփոփ օրինակով ակնհայտ է դառնում, որ էկոլոգիական անվտանգության՝ մաքուր շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների պահպանությանը և օպտիմալ օգտագործմանը նպատակաուղղված մոտեցումն ամրագրված է ոչ միայն աշխարհի գրեթե բոլոր պետությունների, այլև միջազգային կառույցների ու դաշինքների ռազմավարական նշանակության փաստաթղթերում:

Սույն հոդվածում փորձ է արվել վերլուծել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության՝ բնապահպանության

---

[1] *“Экологическая безопасность” (http://www.nato.int/cps/en/natolive/topics_49216.htm):*

[2] *“Euro-Atlantic Disaster Response Coordination Centre (EADRCC)” (https://www.nato.int/cps/en/natohq/topics_117757.htm):*

[3] *“NATO Partnership for Peace Trust Fund” (https://www.nato.int/docu/trust/trust-eng.pdf):*

[4] *“Science for Peace and Security” (http://www.nato.int/cps/en/SID-E8F041CF-338DE2D5/natolive/topics_58253.htm):*

[5] *“2022 NATO Summit” (https://www.nato.int/cps/en/natohq/news_196144.htm):*

[6] *“NATO 2022 Strategic Concept”, Adopted by Heads of State and Government at the NATO Summit in Madrid 29 June 2022 (https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept.pdf):*

ոլորտը կարգավարող ռազմավարական հայեցակարգերին, որոնցից էլ բխեցվում են ոլորտային օրենքներն ու ենթաօրենսդրական իրավական ակտերը: Հոդվածը նպատակ ունի վեր հանել հայեցակարգերում և ռազմավարություններում տեղ գտած այն խնդիրները, որոնց վերահիմաստավորման և կարգավորման դեպքում առավել բարենպաստ կդառնա էկոլոգիական վիճակը և, առավել արդյունավետ կլինեն շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված պետական ջանքերը:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ, ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրով, բնապահպանությանը վերաբերող ՀՀ օրենքներով[1], միջազգային պայմանագրերով, որոնց միացել է ՀՀ-ն: Բնապահպանությանն ուղղված ՀՀ օրենքները վերաբերում են բնապահպանության տարբեր խնդիրների լուծմանը, այդ թվում՝ ինչպես կենդանական, բուսական աշխարհին ու շրջակա միջավայրին, այնպես էլ բնության հատուկ պահպանվող տարածքներին, բնապահպանական վերահսկողությանը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, որսին և որսորդական տնտեսության վարմանը և այլն:

Երկար տարիներ ՀՀ-ն ջանքեր է գործադրում էկոլոգիական խնդիրների իմաստավորման և լուծման ուղղությամբ, սակայն անելիքները դեռ շատ են և վերաբերում են ոչ միայն բուն էկոլոգիական խնդիրներին, շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանությանը, այլև էկոլոգիական գիտակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Հաշվի առնելով Երկիր մոլորակի վերջին տասնամյակների էկոլոգիական խորացող խնդիրները, մեր տարածաշրջանում իրողություններն ու հատկապես 2020 թվականից ի վեր նոր իրողություններն ու զարգացումները, մեր գնահատմամբ՝ ՀՀ հայեցակարգային նշանակության փաստաթղթերում էկոլոգիական անվտանգությանը հատկացված չէ անհրաժեշտ ծավալով և խորությամբ մոտեցում:

Վերոնշյալը հիմնավորենք քաղաքական և ռազմավարական ընդգրկում ու նշանակություն ունեցող ներքոնշյալ փաստաթղթերի՝ էկոլոգիական խնդիրների վերաբերող հատվածների վերլուծությամբ:

Մասնավորապես. ՀՀ Սահմանադրության մեջ, 2015 թ. վերանայումից հետո միայն 12-րդ հոդվածն է, որը վերնագրված է «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը», և դրանում շատ հակիրճ կերպով նշված է ընդամենը երկու կետ՝ «1. Պետությունը խթանում է շրջակա

---

[1] *Տես՝ Բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենքների ցանկ, ՀՀ Բնապահպանության նախարարության պաշտոնական կայք (http://mnp.am/am/pages/40):*

միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև» և «2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»[1]:

Ըստ էության, ՀՀ Սահմանադրության մեջ բնապահպանական (էկոլոգիական) անվտանգության դրույթը ոչ ուղղակի կերպով է արտացոլված, և, բացի այդ, հաշվի առնված չեն հետագա տասնամյակների ընթացքում հնարավոր զարգացումները, որոնք իրենց արտացոլումը պետք է գտնեին, հատկապես, բնական պաշարների օգտագործման միտքն ավելի բացված շարադրելու մեջ:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության՝ 2007 թվականի առաջին հրատարակության մեջ ազգային անվտանգության ապահովման գործոնների ու գործողությունների շարքում նշված են բնական պաշարների պահպանումը և արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը[2]: Ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիքների շարքում էլ ՀՀ ԱԱՌ-ի մեջ նշված են բնապահպանական խնդիրներն ու բնական պաշարների անարդյունավետ կառավարումը և կարևորվում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության մեծացումը[3]:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման[4] ամբողջ ընթացքում էկոլոգիական անվտանգության խնդիրներն ու զգայունությունը հաշվի են առնվել: Սակայն, 2007 թվականից մինչև 2020 թվականը այս ուղղությամբ ոչինչ չէր փոխվել, քանի որ ռազմավարությունը չէր վերանայվել կամ, չէր ընդունվել նորը:

---

[1] Տես ՀՀ Սահմանադրություն (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ: Ընդունումը՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով), հոդված 12 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510):

[2] Տես՝ ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (http://www.mil.am/arm/index.php?page=49) կամ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 15:

[3] Տես՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 22:

[4] ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման խորքայնության և բազմակողմանիության վերաբերյալ տես Հ. Ս. Քոթանջյան, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման մեթոդաբանության մասին, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Երևան, 2008, էջեր 29-42:

2020 թ. հուլիսի 20-ին ՀՀ Անվտանգության խորհրդի կողմից հրապարակվեց ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը, որն ըստ էության առաջին ռազմավարության վերանայված, վերամշակված տարբերակը չէր, այլ որակապես նոր փաստաթուղթ է՝ «Դիմակայուն Հայաստան՝ փոփոխվող աշխարհում» տիտղոսագրով և ՀՀ վարչապետի ուղերձով[1]:

Նշված ռազմավարության 7-րդ՝ «ՀՀ քաղաքացիների անվտանգության և բարեկեցության, երկրի կայուն զարգացման ապահովումը» գլխի «Շրջակա միջավայրի վերականգնում, պահպանություն և բարելավում» ենթագլուխը, որը, ընդգծում ենք, վերջինն է փաստաթղթի բովանդակության կառուցվածքում (էջ 38):

Այնտեղ, մասնավորապես, ասված է.

«7.49. Շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարումը Հայաստանի բնականոն կենսագործունեության և ազգային անվտանգության ապահովման կարևորագույն օղակներից են: Հայաստանը շրջակա միջավայրի կառավարման իր քաղաքականությունը հավասարակշռում է սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

7.50. Մենք հանձնառու ենք Սևանա լճի՝ որպես Հայաստանի ջրային ռեսուրսների ռազմավարական պաշարի էկոհամակարգի վերականգնմանը և պահպանմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսների՝ այդ թվում Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի արդյունավետ կառավարմանը, կենսական նշանակության ջրհավաք ավազանների ու գերխոնավ տարածքների պահպանմանը:

7.51. Մենք գործուն քայլեր ենք իրականացնելու բուսական և կենդանական աշխարհի, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարման և ընդլայնման, ինչպես նաև երկրի հողային ծածկույթի դեգրադացման ծավալների կրճատման ու անապատացման դեմ պայքարի ուղղություններով: Մեր առաջնահերթությունների թվում են բնական պաշարների ողջամիտ օգտագործումը, ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումը և պոչամբարների անվտանգությունը, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ու կենսանվտանգության ապահովումը:

7.52. Շրջակա միջավայրի անվտանգության ապահովման նպատակով մենք կատարելագործելու ենք ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական

---

[1] *Տես ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն: 2020 թ., հուլիս (https://www.seco.am/about/legislation?lang=hy):*

վտանգավոր թափոնների կառավարման համակարգը, ստեղծելու ենք քիմիական նյութերի անվտանգ կառավարման համակարգ։

7.53. Հայաստանը մտադիր է մշակել և իրականացնել կանաչ տնտեսության ներդրմանն ուղղված քաղաքականություն, զարգացնել լավագույն հասանելի տեխնոլոգիաներ և էկոլոգիապես մաքուր արտադրություններ, ներդնել և կիրարկել գիտահենք և ռիսկերի գնահատման վրա հիմնված մշտադիտարկման համակարգ։

7.54. Ոլորտում մեր առաջնահերթություններից են հասարակության իրազեկվածության բարձրացումը և էկոլոգիական գիտակցության արմատավորումը, ինչպես նաև էկոլոգիական կրթության համակարգի ներդրման ապահովումը։

7.55. Մենք կարևորում ենք միջազգային համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման ոլորտում՝ հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները մեղմելու և հարմարվողականության, դիմակայունության բարձրացման գործընթացների ապահովման՝ այդ թվում ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների նվազեցման, կենսաբազմազանության կորստի, բնական միջավայրերի դեգրադացման կանխարգելման, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի նվազեցման ուղղություններով»[1]։

Մեր կարծիքով՝ նշված ենթագլխի որոշ ձևակերպումներ մասնագիտական առումով խոցելի են և կարիք ունեն լրջագույն վերախմբագրման։ Մասնավորապես՝ «7.50» կետում Սևանա լիճը դիտարկված է միայն որպես Հայաստանի ջրային ռեսուրսների ռազմավարական պաշար։ Բաց է թողնված քաղցրահամ ջրի ռեսուրսների նվազման հետևանքով Սևանի՝ որպես քաղցրահամ ջրի հսկա պաշարի համար հնարավոր պայքարը՝ ժամանակակից պատերազմների համատեքստում։ Թյուրըմբռնում է առաջացնում նաև թե՛ այս կետում, թե՛ ամբողջ փաստաթղթում նշված «Մենք» դերանունը, քանի որ ակամայից հարց է ծագում, թե Սևանի ճակատագրով այդ ովքե՞ր, ո՞ր «Մենք»-ն է զբաղվելու ու ինչքա՞ն ժամանակ։

Ռազմավարության «7.51» կետում, մասնավորապես, նշված է. «Մենք գործուն քայլեր ենք իրականացնելու բուսական և կենդանական աշխարհի, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարման և ընդլայնման, ինչպես նաև երկրի հողային ծածկույթի դեգրադացման ծավալների կրճատման ու անապատացման դեմ պայքարի ուղղություններով»։

---

[1] *Տես նույն տեղում։*

Կարծում ենք, որ նպատակահարմար կլինի տվյալ հատվածը վերաձևակերպել, քանի որ բուսական և կենդանական աշխարհի կայուն կառավարում չի լինում՝ անհնար է կառավարել բուսական և կենդանական աշխարհը: Մեր կարծիքով՝ պետք է ստեղծել պայմաններ և գործիքակազմ՝ բուսական և կենդանական աշխարհի ռեսուրսները խելամտորեն օգտագործելու նպատակով:

Փաստաթղթում նշված չէ հակառակորդի կողմից էկոլոգիական խնդիրների հնարավոր ստեղծման կամ շահարկման հավանականության մասին: Նշված չէ նաև հակառակորդի կողմից մեր բնության նկատմամբ հնարավոր նոր սպառնալիքների հակազդման քաղաքական, սոցիալական, էկոլոգիական, անգամ՝ ռազմական բովանդակությամբ միջոցառումների անհրաժեշտությունը:

Կարծում ենք, որ ռազմավարության հետագա վերամշակումն անհրաժեշտ է մասնավորապես՝ նաև ելնելով էկոլոգիական խնդիրների դինամիկությունից ու ծավալներից:

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 4.10 կետում մասնավորպես նշված է.

«Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը կարևոր նախապայման են մարդու և բնության ներդաշնակ գոյակցության համար և երկրի կայուն զարգացման երաշխիք են:

Երկրում շրջակա միջավայրի պահպանության իրավիճակի արմատական փոփոխությունները հնարավոր են միայն բնապահպանական ակտիվ քաղաքականության իրականացման միջոցով՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների և բնական ռեսուրսների գերշահագործման կանխարգելման և նվազագույնին հասցնելու միջոցառումների իրագործմամբ, որը հնարավոր է բնօգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման տարբեր մակարդակներում, նպատակների հասանելիությունն ապահովող, միջոցառումների ամբողջական համակարգի առկայության դեպքում:

Ոլորտի քաղաքականությունը հիմնավորապես ուղղված է լինելու կլիմայի փոփոխության նկատմամբ երկրի դիմակայունության մակարդակի բարձրացմանը՝ հարմարվողականության լավագույն գործելակերպերի ներդրմանը նպաստելու, ցածր ածխածնային զարգացման ուղղությամբ գլոբալ ջանքերին ակտիվ մասնակցության, կլիմայի փոփոխության մեղմման

մասով ստանձնած միջազգային հանձնառությունների պատշաճ կատարման միջոցով»[1]:

Այնուհետև նշված են շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղությունները, որոնց շարքում են՝ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը, անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումն անտառապատման ու անտառավերականգնման միջոցով ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը, կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը, մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը, բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հրահանգներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը, շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցությունը, նոր նախաձեռնություններին մասնակցությունը, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակության իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ:

Հարկ ենք համարում նշել, որ Կառավարության ծրագրի բովանդակության մեջ շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հատվածը նշված է ոչ

---

[1] Տես ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, «Շրջակա միջավայրի պահպանություն», էջեր 76-78: 2022 թ. հուլիսի 27 (https://www.gov.am/files/docs/4586.pdf):

թե, օրինակ, անվտանգային խնդիրների և քաղաքականության գլխում, ինչը ինքնի կմեծացներ այս ոլորտի դերն ու կարևորությունը ինչպես կառավարության առաջնահերթություններում, այնպես էլ հասարակական ընկալումներում: Առավել ևս, որ էկոլոգիական խնդիրներն ուրույն նշանակություն են ձեռք բերել հատկապես հետպատերազմյան նոր իրողությունների համատեքստում:

Հավանաբար պատերազմի հետևանքների հաղթահարման բազմազան խնդիրների մեջ էկոլոգիական խնդիրները թվացել են երրորդական, չորրորդական կարևորության, սակայն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների և ՀՀ սահմանի շփման գծում այդ խնդիրները ամենօրյա են (գետերի հոսքը Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ): Բացի այդ, հատկապես 2022 թ. ամռանը խիստ սրացավ նաև Սևանի կանաչով պատման՝ «ծաղկման» խնդիրը: Մասնագետների ահազանգմամբ՝ 2022 թ. այն հասավ աննախադեպ ծավալների[1]:

Կառավարության ծրագրում հաջորդ իմաստնային խնդիրն այն է, որ շրջակա միջավայրի պահպանության հատվածը նշված է 4-րդ գլխում՝ «Մարդկային կապիտալի զարգացում» վերնագրով: Ըստ էության, էկոլոգիական հիմնախնդիրները տեղափոխված են մարդկային կապիտալի զարգացման տիրույթ, ինչը ստվերում է էկոլոգիական բուն հիմնախնդիրները, բնության պահպանության հարցերը՝ դրանք դիտարկելով մարդկային զարգացման համատեքստում:

Հաջորդ սկզբունքային խնդիրը Կառավարության ծրագրի նշված հատվածում այն է, որ այստեղ կրկին բացակայում են հակառակորդի կողմից էկոլոգիական խնդիրների առաջացման, հակառակորդի հետ առկա էկոլոգիական խնդիրների լուծման հարցերը, մինչդեռ դրանք սրացել են ոչ թե 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո, այլ շատ ավելի վաղ: Այսինքն, ըստ էության, դարձյալ շրջանցվել է այս հարցը, մինչդեռ կհաղորդեր էկոլոգիական հիմնախնդրին հենց այն անհրաժեշտ քաղաքական երանգն ու քաղաքագիտական չափումը:

Էկոլոգիական անվտանգության խնդիրների լուծման փոքր ծավալ է հատկացված նաև Արցախի Հանրապետության օրենսդրության մեջ: Թե՛ «Բնության պահպանության մասին ԼՂՀ օրենսդրության հիմունքներում», որն ընդունվել է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության Ազգային ժողովի կողմից դեռևս 20 տարի առաջ՝ 2000 թ. դեկտեմբերի 22-ին[2],

---

[1] *Տես, օրինակ, «Սևանը ծաղկում է, գիտնականները՝ ահազանգում, կառավարությունը՝ հետաձգում»: «Hetq.am», 19.07.2022 (https://hetq.am/hy/article/146637):*

[2] *Տես Բնության պահպանության մասին ԼՂՀ օրենսդրության հիմունքները, (http://www.nankr.am/hy/466):*

թե՛ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքում» (Ընդունված է 2002 թվականի ապրիլի 30-ին)[1], թե՛ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքում» (Ընդունված է 2006 թ. սեպտեմբերի 27-ին)[2] էկոլոգիական խնդիրների ամբողջ սպեկտրը արտացոլված չէ, անգամ մինչև 2011 թվականը ներառյալ դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումներն հաշվի առնելով հանդերձ: Փաստաթղթերի ընդունման և հաստատման տարեթվերն արդեն իսկ խոսում են դրանց վերանայման անհրաժեշտության մասին:

Մասնավորապես, Արցախի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածում՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են» վերնագրով 12-րդ կետը նշված է. «իրականացնել ներկա և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»[3]:

Արցախի Հանրապետության Նախագահի 2020-2025 թթ. ծրագրի «3.3» կետը վերնագրված է «Բնական պաշարների կառավարում և բնապահ-պանություն»:

Դրանում մասնավորապես ասված է.

«Բնական պաշարների կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը միտված է լինելու՝ 1) բնօգտագործման նկատմամբ պետական և հանրային խիստ վերահսկողության ապահովմանը, 2) անտառների ապօրինի հատումների կանխմանը, նոր անտառների, կանաչապատ տարածքների հիմնմանը, կենսաբազմազանության պահպանմանը, 3) մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մշտադիտարկմանը, պահպանմանը և արդյունավետ կառավարմանը, 4) անտառների գնահատման իրականացմանը, անտառակառավարման արդյունավետ մեթոդների կիրառմանը, անտառային ֆոնդի որակական ու պաշտպանական հատկանիշների բարելավմանը:

Բնապահպանական ոլորտի զարգացման գերակայությունները հիմնվելու են հետևյալ առանցքային հիմնադրույթների վրա՝ 1) բնապահպանական քաղաքականության օրենսդրական դաշտի կատարելագործում և արդիականացում, 2) բնապահպանական և բնօգտագործման վճարների, ինչպես նաև բնապահպանության ոլորտում

---

[1] *Տես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգիրք, (http://nkrcadastre.am/?p=254):*

[2] *Տես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգիրք, (http://nkrcadastre.am/?p=262):*

[3] *Տես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն: Ընդունվել է 2006 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով (http://www.president.nkr.am/media/documents/constitution/constitution_am.pdf):*

պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգերի կատարելագործում, 3) բնապահպանական կառավարման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնում, վարչարարության կատարելագործմանը զուգընթաց բնապահպանական գործունեության, էներգախնայողության և ռեսուրսախնայողության խրախուսման մեխանիզմների զարգացում, 4) աղբահանության համակարգի ծրագրի ներդրման համար տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցության ցուցաբերում, 5) լքված, կոնսերվացված հանքավայրերի, ոչ մետաղական և մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված (տիրազուրկ) արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում, 6) լեռնահանքային արդյունաբերության հետ կապված հողերի աղտոտման բացառման ուղղությամբ վերահսկողության իրականացում, 7) ջրային ռեսուրսների մշտադիտարկում, ջրային կադաստրի ստեղծում, 8) փոքր ՀԷԿ-երի մշտադիտարկում՝ ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունը և հավասարակշռությունն ապահովելու նպատակով, 9) մթնոլորտային օդի վիճակի մշտադիտարկման ցանցի ստեղծում՝ մթնոլորտային օդի որակի հսկողություն իրականացնելու համար:

Բնօգտագործման ոլորտում առանձնահատուկ կարևորություն է տրվելու ընդերքօգտագործման բնագավառին, որը ռազմավարական նշանակություն ունի աշխատատեղերի և տնտեսական ակտիվության ապահովման տեսանկյունից: Ընդերքօգտագործման բնագավառի հետագա զարգացման, ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվելու են ծրագրեր ու միջոցառումներ ուղղված՝ 1) Արցախի Հանրապետության տարածքում ընդերքի ռեսուրսային և տնտեսական ներուժի գնահատմանը, 2) օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանն ու գնահատմանը, 3) երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հավաստիության ապահովման նպատակով լաբորատոր փորձա-քննությունների իրականացման համար ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաների ստեղծմանը»[1]:

Այս ենթակետերը թեև շատ կարևոր են, սակայն առանձնացնենք բնապահպանական ոլորտի զարգացման գերակայություններից 2-րդ կետը՝ «բնապահպանական և բնօգտագործման վճարների, ինչպես նաև բնապահ-

[1] *Տես՝ Արցախի Հանրապետության Նախագահի 2020-2025 թվականների ծրագիրը» (http://president.nkr.am/media/documents/ԱՀ-Նախագահի-2020-2025-ծրագիրը.pdf):*

պանության ոլորտում պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգերի կատարելագործում»: Այն շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցման նոր մեխանիզմների ներդրման վերաբերյալ արդյունավետ օրենսդրական հիմք կարող է հանդիսանալ՝ Արցախի բնությանը հասցված վնասի համար ոչ միայն տեղական, այլև հակառակորդի կողմից սանձազերծված հարձակումների համար փոխհատուցում պահանջելու տեսանկյունից: Կարծում ենք, որ ԱՀ-ն պետք է որոշակի լրացումներ անի օրենքներում, որպեսզի հստակորեն սահմանվի, թե Արցախի բնությանը հասցված վնասի դեպքում ինչ պատիժ է սպասվում, եթե այն գործել է ոչ ԱՀ-ի քաղաքացի: Օրինակ ԱդրՀ-ի որևէ քաղաքացու կողմից Արցախի բնությանը հասցված վնասի դեպքում (դաշտերի այրում, գետի աղտոտում, անօրինական որս և այլն), կարծում ենք, որ պետք է սահմանել ավելի խիստ պատիժ, իսկ եթե բնությանը հասցված վնասը տեղի է ունեցել ԱդրՀ-ի տարածքում, սակայն այն ներթափանցել է նաև Արցախի սահմաններից ներս (օրինակ՝ դաշտի այրում, երբ կրակը տարածվում է հեռու), ապա ԱՀ-ն պետք է հարցը բարձրաձայնի միջազգային ատյաններում՝ պահանջելով փոխհատուցում պատճառված վնասի համար: Ավելին, բնահամակարգի միտումնավոր վնասը ԱՀ-ի կողմից պետք է որակվի որպես էկոցիդի գործողություն[1]:

Ակնհայտ է, որ Հայաստանն ու Արցախն այս ոլորտի օրենսդրական կարգավորման հարցում ունեն որոշակի անելիքներ, հատկապես՝ հաշվի առնելով այն իրողությունները, որոնք ծառացել են Հայաստանի և Արցախի առջև, 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո և Ադրբեջանի կողմից շարունակաբար իրականացվող հակահայկական քաղաքականության հետևանքով:

Նյութը ներկայացվել է 10.05..2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը

[1] Տես Ա. Մ. Շահվերդյան, Արտաքին քաղաքականության ձևավորման որոշ հարցեր՝ 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում կատարված բնաոչնչացման դատապարտման օրինակով, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2022 թ., հմ. 1, էջեր 104-115 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2022/09/hb-2022-n1.pdf):

ՀՏԴ 373

Մանկավարժություն

Կարինե ՊԱՊԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մանկավարժության ամբիոն, դոցենտ, մ.գ.թ.
E-mail: karinepapikyan61@mail.ru

Գևորգ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ ՎՊՀ բնական գիտությունների ֆակուլտետ, «Մասնագիտական մանկավարժություն. ինֆորմատիկա մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող
E-mail: g-a-petrosyan@mail.ru:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

*Հոդվածում հիմնավորվում է ձեռնարկատիրության հիմունքների ուսուցման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում: Այն կարևոր նախապայման է կրթության արդիականացման և ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար: 2017 թվականին ԿԳՄՍ նախարարության և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության միջև կնքվեց հուշագիր, ըստ որի՝ ՀՀ հանրակրթական դպրոցների 2-7-րդ դասարաններում՝ **Տեխնոլոգիա** առարկայի տիրույթում, որպես ինտեգրվող բաղադրիչ ներդրվեց ձեռնարկատիրական կրթությունը: Վերապատրաստվեցին բոլոր ուսուցիչները, ստեղծվեցին ուսուցչի ձեռնարկներ բոլոր դասարանների համար: 2021 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հաստատեց «Հանրակրթության պետական չափորոշիչ» նորմատիվ փաստաթուղթը, որն այժմ փորձարկվում է Տավուշի մարզի բոլոր դպրոցներում: Փաստաթղթով ոչ միայն*

արժևորվում և կարևորվում է բիզնես կրթությունը, այլև հանրակրթության երեք աստիճաններում էլ այն ներկայացվում է չափորոշչային պահանջ-վերջնարդյունքների տեսքով, և այն ինտեգրվող բաղադրիչի մակարդակից բարձրացվեց ու դարձավ առարկայի բովանդակային բաժիններից մեկը: Ավելին, խրախուսվում են նաև համապատասխան բովանդակությամբ խմբակները, որոնց համար ուսուցիչներին առաջարկվում է կազմել համապատասխան ծրագրեր, որոնք կհամապա-տասխանեն սովորողների հետաքրքրություններին, պահանջներին, ինչպես նաև հաշվի կառնվեն ուսուցչի, դպրոցի, համայնքի հնարավորությունները: Այս ամենի նպատակը սովորողներին ավելի մրցունակ, նախաձեռնող, ստեղծարար, ճկուն դարձնելն է: Սա ժամանակի հրամայականն ու պահանջն է:

Բանալի բառեր՝ ձեռնարկատիրական կրթություն, ինտեգրվող բաղադրիչ, չափորոշիչ, պահանջ-վերջնարդյունք, մրցունակ, խմբակ, բարեփոխումներ:

К. Папикян, Г. Петросян

НЕОБХОДИМОСТЬ ОБУЧЕНЯ ОСНОВАМ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ РА

В статье обосновывается необходимость обучения основам предпринимательства в общеобразовательных школах. Это важная предпосылка модернизации образования и его адаптации к современным требованиям. В 2017 году по сообщению Министерства образования и культуры и общественной организации «Молодежные достижения Армении» был подписан меморандум, в соответствии с которым предпринимательское образование внедрялось как интегрированный компонент в области технологий в государственных школах РА во 2-7 классах. Все учителя прошли обучение, для всех классов созданы методические пособия. В 2021 году Министерство образования и культуры РА утвердило нормативный документ «Государственный стандарт народного образования», который сейчас проходит апробацию во всех школах Тавушской области. Документ не только ценит и делает акцент на бизнес-образовании, но и на всех трех уровнях общего образования,

представлен в виде типовых требований-результатов, поднят с уровня интегрированного компонента и стал одним из содержательных разделов предмета. Кроме того, поощряются группы с соответствующим содержанием, для которых учителям предлагается подготовить соответствующие программы, которые будут отвечать интересам и требованиям учащихся, а также учитывать возможности учителя, школы и сообщества. Цель всего этого – сделать учащихся более конкурентоспособными, инициативными, творческими, гибкими. Это веление и требование времени.

Ключевые слова:. *предпринимательское образование, интегративный компонент, стандарт, спрос-результат, конкурентоспособность, группа, реформы.*

K.Papikyan, G. Petrosyan

TEACHING FUNDAMENTALS OF ENTREPRENEURSHIP THE NECESSITY IN RA PUBLIC SCHOOLS

The article justifies the necessity of teaching the basics of entrepreneurship in public schools.

It is an important prerequisite for modernizing education and adapting it to modern requirements. In 2017, according to the Ministry of Education and Culture, and the Youth Achievements of Armenia NGO, a memorandum was signed, according to which entrepreneurial education was introduced as an integrated component in the field of Technology in RA public schools in grades 2-7.

All teachers were trained, teacher manuals were created for all classes. In 2021, the RA Ministry of Education and Culture approved the normative document "State standard of public education", which is now being tested in all schools of Tavush region. The document not only values and emphasizes business education, but also in all three levels of general education, it is presented in the form of standard requirements-outcomes, and it was raised from the level of an integrated component and became one of the content sections of the subject. Moreover, groups with appropriate content are also encouraged, for which teachers are suggested to prepare appropriate programs that will meet the interests and requirements of students, as well as taking into account the capabilities of the teacher, school, and community. The purpose of all this is to make learners more competitive, proactive, creative, flexible. This is the imperative and demand of the time.

Key words: *entrepreneurial education, integrative component, standard, demand-result, competitive, group, reforms.*

21-րդ դարի տնտեսության ձևավորման համար կարևոր նախապայման է կրթության համակարգի արդիականացումը և դրա համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Հայաստանի Հանրապետությունում կրթության համակարգի մրցունակության ապահովումը պետական կարևորագույն խնդիր է, և դրան են նպատակաուղղված վերջին տարիներին մեր կառավարության բոլոր բարեփոխումներն ու ներդրումները:

Հանրակրթական դպրոցը սոցիալական ինստիտուտ է, որտեղ ձևավորվում է ազգի ապագան, և որտեղ դրվում են ազգային տնտեսության հիմքերը: Աշխարհում հանրակրթության արդիականացումը տեղի է ունենում գիտական, տեխնոլոգիական հեղափոխությունների, համաշխարհայնացման ազդեցությամբ: Կրթության որակի, մրցունակ և ակտիվ քաղաքացու պատրաստումը կարևորվում է բոլոր երկրներում: Կրթությունն այսօր պետք է ոչ միայն արտացոլի տնտեսության, սոցիալական հարաբերությունների զարգացման ներկա փուլը, այլև համապատասխանի 21-րդ դարի գիտատեխնիկական զարգացման հեռանկարներին:

Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում մրցունակ սովորողների ձևավորման համար կարևոր է դառնում ձեռնարկատիրական գործունեության մասին գիտելիքների ձևավորումը: Այսօր մեր երկրին ու աշխարհին միայն սպառողներ պետք չեն, այսօր մեզ պետք են այնպիսի անհատներ, ովքեր ստեղծարար են, նախաձեռնող, մրցունակ, ովքեր ժամանակին համահունչ մտածողություն կունենան .... Իսկ նրանց մտածողությունն անհրաժեշտ է զարգացնել դեռևս տարրական դպրոցից: Սա ժամանակի պահանջն ու հրամայականն է և պատասխան է 21-րդ դարի մարտահրավերներին: Եթե մենք ուզում ենք որակյալ հանրակրթության համակարգ ունենալ, ապա այնպիսի կրթություն ենք ապահովելու սովորողների համար, որ նրանք կարողանան հաջողությամբ հաղթահարել բազմաթիվ մարտահրավերներ:

Ներկայիս հանրակրթական դպրոցի առջև ծառացած խնդիրները պետք է ներառեն ոչ միայն կրթության գործող բովանդակության բարելավումը, այլև մրցունակ անձի ձևավորումը, նրանց նախապատրաստումը կյանքին, բարդ և անորոշ պայմաններում արագ փոփոխվող հասարակությանը: Դպրոցական վերջնարդյունքները, ծրագրերը իրական կյանքին պետք է առնչվեն: Արտասահմանյան դպրոցների փորձի ուսումնասիրությունը ցույց

է տվել, որ այնտեղ դեռևս 1950-ական թվականներից մշակվել են ձեռներեցության մոտեցումներ, և ուշադրության կենտրոնում է գործարարության, ձեռնարկատիրական մտածողություն ունեցող անձի ձևավորումը (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, ԱՄՆ…)/: Այդ երկրներում դեռևս տարրական դպրոցից է կարևորվում ձեռնարկատիրական կրթության տարրերի ուսուցումը, որի հիմքի վրա էլ արդեն միջին և ավագ և դպրոցներում սովորողները ծանոթանում են տնտեսագիտության հիմունքներին, աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտություններին:

Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացման անհրաժեշտությունը հիմնավորված է ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշման հավելվածի ՀՀ ֆինանսական կրթության ազգային ռազմավարությամբ:

ՀՀ կրթության համակարգում այդ գործընթացը փուլային էր, և հանրակրթության համակարգում ձեռնարկատիրական կրթություն ներդնելու մեկնարկը տրվեց 2017 թվականի ապրիլի 18-ն, երբ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը պարտավորվեց աջակցել ձեռնարկատիրական կրթության հայեցակարգի մշակմանը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը համագործակցության հուշագիր ստորագրեցին ՀՀ հանրակրթական դպրոցներում ձեռնարկատիրական կրթության ներդրման և զարգացման վերաբերյալ: Անկախ Հայաստանի կրթական համակարգի ձևավորման առաջին իսկ օրերից վերոնշյալ կազմակերպությունը կրթության համակարգի կայացման գործում երկար տարիների արդյունավետ համագործակցության փորձ ու գործուն դերակատարում արդեն ուներ: «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունն առաջիններից մեկն էր, որ սկսեց տնտեսագիտության նոր համակարգի աստիճանական ներմուծումը կրթության ոլորտ և ինքնուրույն ձևավորեց սեփական համակարգը, որը ներկայումս ներառում է հարյուրավոր դպրոցներ և ընդգրկում հազարից ավելի ուսուցիչներ [1]:

ՀՀ վարչապետի հանձնարարականով ձևավորվեց թիմ, մշակվեց ֆինանսական կրթության ընդհանուր հայեցակարգ, մշակվեց նաև ձեռնարկատիրական կրթության ամբողջական փաթեթ: Ակնկալվում էր, որ արդյունքում բիզնես մտածողություն և սոցիալական պատասխանատվություն կրող սովորողներ կունենանք:

Համաձայն հուշագրի՝ կողմերը համաձայնել են հետևյալի շուրջ՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդնել

Ձեռնարկատիրական կրթություն՝ 4 տարի տևողությամբ. (ներդրման սկիզբը՝ սեպտեմբեր, 2017, ավարտը՝ սեպտեմբեր, 2020)՝ «տարրական դպրոցի 2-4 դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» կամ այլ առարկայի մեջ, հիմնական դպրոցի 5-7 դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» կամ այլ առարկայի մեջ, ավագ դպրոցի 10-րդ դասարանում՝ որպես տեսական, 11-րդ դասարանում՝ որպես գործնական բաղադրիչներ: Ինտեգրվող և հիմնական նյութը փոխլրացնում են միմյանց՝ կազմելով ամբողջական միավոր, առանց ձախողելու դասի նպատակը [2, էջ 9]:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իր իրավասությունների սահմաններում պարտավորվեց մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ձեռնարկատիրական կրթության հայեցակարգը, մշակել և հաստատել ձեռնարկատիրական կրթության առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը, երաշխավորել Ձեռնարկատիրական կրթության ներդմանն աջակցող ուսումնական նյութերը և ձեռնարկները, օժանդակել «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությանը՝ ուսուցիչների հավաքագրման և վերապատրաստման կենտրոնների ընտրելու հարցում: «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունն էլ իր հերթին պարտավորվեց աջակցել ձեռնարկատիրական կրթության հայեցակարգի մշակմանը, մշակել ձեռնարկատիրական կրթության ներդմանն աջակցող ուսումնական նյութեր, ձեռնարկներ, աջակցել «Ձեռնարկատիրական կրթությունը տեխնոլոգիայում» ինտեգրվող բաղադրիչի լրամշակված չափորոշիչների ու ծրագրերի մշակմանը [2, էջ 10]:

Ծրագիրը հաջողությամբ իրականացվեց, 2017-2020 թվականների ընթացքում վերապատրաստվեցին ՀՀ-ի հանրակրթական բոլոր դպրոցների 2-7-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկա դասավանդող ուսուցիչները: Ստեղծվեցին վերոնշյալ բոլոր անհրաժեշտ ռեսուրսները՝ ուսուցչի ձեռնարկներ, էլեկտրոնային ռեսուրսներ, որոնց օգնությամբ նաև ուսուցիչների վստահության ու ջանքերի շնորհիվ ծրագիրը հաջողվեց:

Հայաստանի Հանրապետությունում այս հիմնախնդրի լուծման համար հանրակրթության ներուժն օգտագործելու արդյունավետությունը հաստատվեց «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթում (ՀՀ կառավարության որոշում, 4.02.2021թ. N136Ն): Այդ ամփոփ փաստաթղթում կրթությունը դիտարկվում է որպես կրթության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման և տեսլականի ձգտման միջոց, վերլուծական և համակարգային մտածողության, նախաձեռնողականության և պատասխանատվության, որոշումներ կայացնելու հմտությունների

ձևավորման միջոց, որոնք անհրաժեշտ են ժամանակակից աշխարհում, և որոնք հարկ է ձևավորել դեռևս հանրակրթական դպրոցից: Եթե 2017-2020 թվականներին «Ձեռնարկատիրական կրթություն» բաղադրիչը ներդրվեց **Տեխնոլոգիա** առարկայի տիրույթում որպես ինտեգրված բաղադրիչ, այժմ արդեն նոր չափորոշչով և լրամշակված առարկայական ծրագրերով «Ձեռնարկատիրություն» բաղադրիչն այլևս ինտեգրված բաղադրիչ չէ, այն իր հաստատուն տեղն է գրավել «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակային տիրույթում արդեն որպես պարտադիր կառուցատարր, որպես հինգ հիմնական գաղափարներից մեկը [3]:

Նոր ՀՊՉ-ն որդեգրել է վերջնարդյունքների ավելի համակարգված մոտեցում՝ ութ կոմպետենցիաների տեսքով: Վերջիններս նույնական են Եվրոպական հանձնաժողովի ցկյանս ուսումնառության կոմպետենցիաների հետ, ինչը հեշտացնում է կրթական բարեփոխումներով սկսված համապատասխանեցումները եվրոպական կրթական միջավայրին: ՀՊՉ-ում ներկայացված են այդ ութ կոմպետենցիաները, որոնցից մեկը տնտեսական կոմպետենցիան է, և որի արդյունքում «աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները» [4]:

ՀՊՉ-ում հստակ սահմանված են տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, և երեք ծրագիրն էլ միտված է ներկայացված վերջնարդյունքների ապահովմանը: Այսպես, օրինակ, տարրական դպրոցում սովորողը, ի թիվս մյուս վերջնարդյունքների (դրանք 35-ն են), սովորողը պետք է՝

«19) կատարի պարզ ֆինանսական գործողություններ՝ վերլուծելով իրավիճակը և հաշվի առնելով գումարը, ժամանակը և այլ ռեսուրսներն ու դրանք խնայելու, անվտանգ օգտագործելու կարևորությունը.

20) ճանաչի և բերի ձեռնարկատիրական գործունեության օրինակներ.

35) կարևորի աշխատանքը, ճանաչի տարբեր մասնագիտություններ և զբաղմունքներ, ըստ մասնագիտության աշխատանքային գործիքները և գործառույթները»:

Հիմնական դպրոցում 51 պահանջ-վերջնարդյունքներից է՝

«20) վերլուծելով ֆինանսական տեղեկությունը՝ կարողանա համեմատել ֆինանսական ծառայություններ և կազմակերպություններ։ Ճանաչի ֆինանսական ոլորտում քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները.

21) տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.

51) կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա» [4]:

Միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության 46 վերջնարդյունքների թվում կարևորվում են հետևյալ վերջնարդյունքները՝

«19) ներկայացնի՝ ինչպես է գործում ֆինանսական համակարգը, գնահատի տարբեր ֆինանսական ծառայությունների հնարավորությունները և ռիսկերը, կայացնի կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունավետ, պատասխանատու և անվտանգ ֆինանսական որոշումներ.

20) թվարկի բիզնես և աշխատանքային էթիկայի հիմնական նորմերը, բացատրի դրանց պահպանման անհրաժեշտությունը հաջողված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար.

22) վերլուծի տնտեսության կառուցվածքի և զարգացման վրա ազդող հիմնական գործոնները.

33) կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն կատարի.

46) ունենա մասնագիտական կողմնորոշում՝ հիմնված աշխատաշուկայի պահանջարկի և ինքնաճանաչման վրա, և ներկայացնի իր նախընտրած մասնագիտությունը» [4]:

Սրանք պահանջներ են՝ վերջնարդյունքների տեսքով, որոնք վերաբերում են բոլոր առարկաներին:

Նոր փաստաթղթի հիմքում այդ կարևոր պահանջն է՝ յուրաքանչյուր սովորող հիմնարար պատկերացում ունենա ազատ ձեռնարկատիրության համակարգի, ինչպես նաև գործնական ձեռնարկատիրական հմտությունների մասին, սովորի բիզնեսի և անձնական ֆինանսական հաշվառման կանոնները: Հենց հանրակրթական դպրոցում սովորողներին պետք է նախապատրաստենք նրան, որ հետագայում նրանք դառնան ոչ

միայն ձեռնարկությունների աշխատակիցներ, այլև կարողանան մրցակցել աշխատաշուկայում, հաջողակ ներդրողներ և ձեռներեցներ դառնալու կարողունակություններ ունենան և ձեռնարկատիրական մտածողություն ունեցող անհատականություններ դառնան: Իսկ այն ձեռնարկատիրական որակները, որ ձևավորում ենք՝ ճկունություն, վճռականություն, վերլուծելու և ռիսկի դիմելու կարողություն, հնարավորություն կտան սովորողներին ավելի դիմացկուն ու մրցունակ լինել, դիմակայել ժամանակի մարտահրավերներին:

Գրականություն

1. https://www.armenpress.am/arm/news/887164/hayastanyan-dprocnerum-kmtcvi-dzernarkatirakan-krtutyun.htm 01.03.2023թ., ժ. 23:10
2. Ձեռնարկատիրական կրթություն դասընթացի արդյունավետության գնահատում և սոցիալական ձեռնարկատիրություն առարկայի ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն, Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն, Երևան, 2019թ.:
3. 26974fa49b53599082edfb486f62af22.pdf, 21.02.2023թ., ժ. 22:20
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, 06.03.2023թ., ժ. 13:49

Նյութը ներկայացվել է 12.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը

ՀՏԴ 364.6

Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ մանկ. և հոգեբանության ամբիոն, հ.գ.թ, դոցենտ
E-mail: vityayaramishyan@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

44-օրյա պատերազմի, Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության և մշտական սադրանքների հետևանքով Արցախի ուսումնական հաստատություններում առաջ են եկել բազում սոցիալ-հոգեբանական խնդիրներ՝ բացասական հույզեր և զգացմունքներ, սթրեսներ, անորոշության, հուսահատության, անվստահության զգացումներ, անվտանգության կորուստ, վարքային շեղումներ: Հետպատերազմյան ամենալուրջ մարտահրավերը եղել է Արցախի ամբողջական շրջափակումը և ապօրինի հսկիչ անցագրային կետի տեղադրումը Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի վրա, ինչն ավելի վատթարացրեց համակարգում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը՝ մարդկանց մոտ առկա հուսահատության և անորոշության զգացումներին ավելացնելով դատապարտվածության, անհեռանկարայնության, ունայնության, անտարբերության տրամադրությունները: Պատերազմի հետևանքները կարող էին այդքան մեծ չլինել, եթե իրականացվեին նապատակային աշխատանքներ՝ սովորողների շրջանում հոգեբանական դիմադրողական որակների ձևավորման

ուղղությամբ, արդյունավետ չեզոքացվեին թշնամու կիրառած հոգեբանական ներազդեցության մեխանիզմները:

Հոդվածի հեղինակը գտնում է, որ ճիշտ կազմակերպված հոգեբանական աշխատանքի շնորհիվ հնարավոր է լուծել դժվար խնդիրները: Խոսքը ոչ միայն ուսուցանողների և ուսուցանվողների հետ անհատական հոգեբանական աշխատանքի մասին է, ինչը հոգեբանական աշխատանքի հիմնական բաղադրիչն է, այլև լուսավորչական, խորհրդատվական և ռեաբիլիտացիոն աշխատանքների, հոգեբանական ուղեկցման, սովորողների ուսումնական գործունեության խթանման, մասնագետների պատրաստման որակի բարելավման, գիտահետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության, դրանցում սովորողների ներգրավման մասին:

Բանալի բառեր՝ հետպատերազմյան սինդրոմներ, մարտահրավերներ, կրթության շարունակականություն, սոցիալ-հոգեբանական խնդիրներ, հոգեբանական աշխատանք

В.Ярамишян

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ, ВОЗНИКШИЕ В РЕЗУЛЬТАТЕ АЗЕРБАЙДЖАНСКОЙ АГРЕССИИ В УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРЦАХ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

В результате 44-дневной войны, агрессивной политики Азербайджана и постоянных провокаций в учебных заведениях Арцаха возникло множество социально-психологических проблем: негативные эмоции и переживания, стресс, чувство неуверенности, безнадежности, недоверия, потеря безопасности, поведенческие отклонения. Самым серьезным послевоенным вызовом стала полная блокада Арцаха и установка незаконного КПП на единственной дороге, соединяющей Арцах с Арменией, что ухудшило социально-психологическую атмосферу в системе, усилило чувство безысходности и неуверенности среди людей, чувство осуждения, отсутствие перспективы, тщеславие и безразличие. Последствия войны могли быть не столь велики, если бы велась целенаправленная работа в направлении формирования у обучающихся качеств

психологической устойчивости, а используемые противником механизмы психологического воздействия эффективно нейтрализовались.

Автор статьи считает, что решить сложные проблемы можно благодаря правильно организованной психологической работе. Речь идет не только об индивидуально-психологической работе с преподавателями и студентами, которая является основным компонентом психологической работы, но и о просветительской, консультативно-реабилитационной работе, психологическом сопровождении, стимулировании воспитательной деятельности студентов, повышении качества подготовки специалистов, прикладная направленность научно-исследовательских работ, привлечение к ним студентов.

Ключевые слова: *послевоенные синдромы, вызовы, непрерывность образования, социально-психологические проблемы, психологическая работа.*

V.Yaramishyan

THE SOCIO-PSYLOGICAL PROBLEMS THAT AROSE I THE EDUCATIONAL INSTITUTIONS OF THE REPUBLIC OF ARTSAKH AS A RESULT OF THE ARERBAYJANI AGRESSION AND THE WAYS TO SOLWE THEM

As a result of the 44-day war, the aggressive policy of Azerbaijan and constant provocations in the schools of Artsakh, many social and psychological problems arose. negative emotions and feelings, stress, feeling of uncertainty, hopelessness, mistrust, loss of safety, behavioral deviations. The most serious post-war challenge was the complete blockade of Artsakh and the installation of an illegal checkpoint on the only road connecting Artsakh with Armenia, which worsened the social-psychological atmosphere in the system, strengthened the feeling of hopelessness and insecurity among people, the feeling of condemnation, lack of perspective, vanity and indifference. The consequences of the war could not be so great, if targeted work was carried out in the direction of the formation of the qualities of psychological stability in the students, and the mechanisms of psychological influence used by the enemy were effectively neutralized.

The author of the article believes that it is possible to solve complex problems thanks to properly organized psychological work. It is not only about individual-psychological work with teachers and students, which is the main component of psychological work, but also about educational, consultative and rehabilitation work, psychological support, stimulation of

educational activities of students, improvement of the quality of training of specialists, applied orientation of research works. , attracting students to them.
Key words: *post-war syndromes, challenges, continuity of education, social-psychological problems, psychological work.*

2020թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան, խախտելով նախապես ստանձնած բոլոր միջազգային պարտավորությունները՝ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման, ուժի և դրա սպառնալիքի չկիրառման վերաբերյալ, օգտվելով ստեղծված աշխարհաքաղաքական նպաստավոր իրավիճակից, անտեսելով Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման լիազորություն ունեցող միակ կառույցի՝ Մինսկի խմբի համանախագահների զգուշացումներն ու կոչերը, տարածաշրջան բերելով և կոնֆլիկտի մեջ ներգրավելով մեծ թվով մերձավորարևելյան ահաբեկիչների և իսլամիստ ծայրահեղականների, թուրք-ադրբեջանական ռազմական խմբավորումը լայնածավալ հարձակում ձեռնարկեց Արցախի Հանրապետության դեմ՝ սանձազերծելով վերջին երեսուն տարիների ընթացքում արդեն երրորդ ղարաբաղա-ադրբեջանական պատերազմը: Այն տևեց մոտ մեկուկես ամիս և հետագայում ստացավ «44-օրյա պատերազմ» կամ «Ղարաբաղյան երկրորդ պատերազմ» անվանումը, որին հաճախ անվանում են նաև Ղարաբաղյան երրորդ պատերազմ՝ հաշվի առնելով նաև 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը [7]:

44-օրյա պատերազմը ամենադաժան փորձությունն էր Արցախի համար: Այն բոլոր առումներով անհավասար էր, քանի որ հակառակորդը մարտադաշտ էր նետել ավելի քան 150 հազար մարդկային ուժ, հարյուրավոր տանկեր և այլ զրահատեխնիկա, գերժամանակակից օդուժ և խոշոր տրամաչափի հեռահար հրետանի, թուրքական, իսրայելական արտադրության անօդաչու թռչող սարքեր և այլ գերճշգրիտ խոցման միջոցներ, արդիական զինատեսակներ [8]: Հայկական կողմի ուժերը, միջոցներն ու հնարավորություններն անհամեմատ համեստ ու սահմանափակ էին: Պատերազմի ընթացքն իր ամբողջ տևողության ժամանակ ուներ մեծ ինտենսիվություն, կրակի աննախադեպ խտություն, անընդհատ տեղի էին ունենում լայնամասշտաբ հարձակողական գործողություններ: Պատերազմի առանձին դրվագներ աչքի էին ընկնում անասելի դաժանությամբ[1]:

[1] Ադրբեջանի կողմից համացանցում շրջանառության մեջ էին դրվել հայ ռազմագերիների ու քաղաքացիական անձանց նկատմամբ հաշվեհարդարի բազմաթիվ տեսարաններ, որոնք ակնհայտորեն ունեին հայկական կողմին ահաբեկելու, անելանելիության ու հուսահատության զգացումներ առաջացնելու նպատակ

Պատերազմի հասցրած վնասներն ու կորուստները առայսօր լիարժեք հաշվարկված չեն՝ մարդկային, տարածքային, նյութական կամ որևէ այլ առումով: Տարբեր աղբյուրներում շրջանառվում են 3500-ից մինչև 5000 մարդկային զոհերի, մոտ 10.000 վիրավորների, մի քանի հարյուր անհայտ կորածների ու Ադրբեջանում պահվող մի քանի տասնյակ ռազմագերիների մասին տվյալները: Ադրբեջանի հսկողության տակ անցավ Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը՝ 75 տոկոսը (ինչպես նախկին ԼՂԻՄ-ի տարածքի մեջ չմտնող բոլոր շրջանները՝ բացառությամբ Լաչինի միջանցքը, այնպես էլ նախկին ԼՂԻՄ-ին պատկանող, պատմականորեն միշտ հայկական Շուշի քաղաքը, Հադրութի շրջանը, Ասկերանի և Մարտակերտի շրջանների որոշ գյուղեր): Նոր ձևավորված շփման գծի պահպանությունը 2020թ. նոյեմբերի 9-ի Ադրբեջան-Հայաստան-Ռուսաստան եռակողմ հայտարարությամբ հանձնվեց ռուսական խաղաղապահ զորախմբին [8]: Ինչպես պարզ դարձավ հետագայում, Ադրբեջանը այդ ձեռքբերումներով չսահմանավափակվեց, այլ սկսեց նորանոր տարածքային պահանջներ ներկայացնել թե Արցախի, թե Հայաստանի Հանրապետություններին՝ որպես իբր ադրբեջանական պատմական հողեր հայտարարելով Սյունիքի մարզը, Գեղարքունիքի մարզը, անգամ մայրաքաղաք Երևանը: Հետագայում Ադրբեջանը կարողացավ փաստացի ամբողջական հսկողություն սահմանել Լաչինի միջանցքի վրա, տիրեց Բերձոր քաղաքին ու հարակից հայաբնակ գյուղերին, սահմանային հսկիչ անցակետ տեղադրեց Լաչինի միջանցքը շրջանցող նորակառույց ճանապարհի այն հատվածի վրա, որով փաստացի Արցախը միակ կապով կարող էր կապվել Հայաստանի հետ: Պատերազմից հետո մոտ չորս անգամ փոքրացած Արցախը շրջապատվեց և հայտնվեց լիակատար օղակի մեջ:

Պատերազմը ոչ միայն ավերածություններ, տարածքային ու մարդկային կորուստներ է բերում, այլ նաև խեղված մարդկային ճակատագրեր, կորստի վիշտ ապրած անմեղ մարդկանց՝ երեխաների, կանանց, ծերերի տառապանքներ, հոգեկան խեղումներ, տևական սթրեսներ ու ծանր այլ ապրումներ:

Փորձենք մի քանի փաստերով ու դատողություններով ցույց տալ պատերազմի ծանր հետևանքները՝ Արցախի կրթական համակարգում: «Պատերազմի հետևանքով ԱՀ հսկողությունից դուրս է մնացել 118 համայնք, 2 համայնք էլ՝ մասնակի (Թաղավարդ և Ճարտար): Բռնազավթված տարածքներում մնացել է 4 խոշոր և 118 փոքր բժշկական հաստատություն, 107 դպրոց, 17 մանկապարտեզ: 1656 ուսուցիչ տեղահանվել է: Թշնամու վերահսկողության տակ են մնացել 10 պետական, 2 մասնավոր թանգարաններ, որտեղ պահպանվում էր 20345 ցուցանմուշ, 4 արվեստի

դպրոց, մոտ 4000 պատմամշակութային հուշարձան, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, Հումանիտար քոլեջի, «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի, «Եզնիկ Մոզյան» ուսումնարանի ողջ ունեցվածքը» [1, էջ 153]: Թշնամին հարձակումը սկսվեց կիրակի օրը ժամը 7.10-ին՝ միաժամանակ թիրախավորելով Արցախի ողջ տարածքը: Չնայած ուսումնական հաստատություններում պարապմունքներ չկային, սակայն առաջին իսկ օրը Ստեփանակերտում, Արցախի Մարտունի և Մարտակերտ քաղաքներում խաղաղ բնակիչների շրջանում եղան զոհեր և վիրավորներ: Դպրոցահասակ երեխաների և բուհերի ուսանողների շրջանում մեծ թվով զոհերից և վիրավորներից հնարավոր եղավ խուսափել միայն այն պատճառով, որ հարձակումը սկսել էր հանգստյան օրը: Եթե այն լիներ աշխատանքային օր և ավելի ուշ ժամի, ապա կորուստներն անհամեմատ մեծ կլինեին: Օրինակ, Ստեփանակերտի վրա արձակված առաջին ռումբերից մեկն ընկել էր հմ 10 հ իմնական դպրոցի շենքի վրա և հայտնի չէ, թե քանի երեխա կարող էր վիրավորվել կամ զոհվել, եթե դպրոցում լինեին պարապմունքներ: Առաջին օրը հարվածներ են հասցվել նաև քաղաքի կենտրոնական հատվածում տեղակայված կարևոր օբյեկտներից մեկին, որի հարևանությամբ գտնվում են Արցախի պետական համալսարանի հանրակացարանը և ուսումնական մասնաշենքը: Զոհերի ու վիրավորների մեծ քանակից հնարավոր եղավ խուսափել, որովհետև հանրակացարանում բնակվող ուսանողներն այդ ժամանակ գտնվում էին շրջաններում, իսկ ուսումնական մասնաշենքում պարապմունքներ չկային:

Չնայած Ստեփանակերտի անակնկալ հրետակոծումը հանկարծակիի բերեց բնակիչներին, սակայն սկզբնական շրջանում խուճապ չկար: Արական սեռի ուսանողների և դասախոսների մեծ մասը, ովքեր զինապարտ էին, տագնապի ազդանշանով կամ կամավորագրվելով համալրեցին զինված ուժերի շարքերը, իսկ կանայք ու աղջիկները, 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ ձևավորված ավանդույթի ուժով, կազմավորեցին կամավորական խմբեր՝ ապահովման աշխատանքներ կատարելու նպատակով:

Պատերազմի ժամանակ և դրանից անմիջապես հետո ուսումնական գործընթացի շարունակականության ապահովման խնդիրը հնարավոր չէր լուծել: Բացառված էր որևէ առկա պարապմունք տեղում իրականացնելու հնարավորությունը, քանի որ չկար գոնե մեկ բնակավայր, որը, ընդհուպ մինչև պատերազմի վերջին օրը, չենթարկվեր դաժան հրետակոծության: Այդ պատճառով իմաստ ունի քննարկել խնդիրը՝ միայն հետպատերազմյան հարաբերականորեն կայուն ժամանակահատվածի համար:

Առհասարակ, ***«կրթության շարունակականություն»*** ասելով պետք է նկատի ունենալ երկու համարժեք իմաստ, բաղադրիչ: Առաջին բաղադրիչը

կրթության անընդհատությունն է, առանց խափանումների ընթացքը և երկրորդ բաղադրիչը առաջընթաց շարժումն է, կրթական աստիճանների շարունակական բարձրացումը: Մենք քննարկելու ենք «շարունակականությունը» առաջին՝ ժամանակային իմաստով, այսինքն՝ հարատևությունը, անընդհատությունը, անխափան իրականացումը, կրթական ծառայության մատուցման մշտականությունը: Միանգամից նկատենք, որ այս իմաստով «շարունակականության» ապահովումը խաղաղ պայմաններում որևէ դժվարություն չի ներկայացնում, եթե ուսումնական հաստատություններն ապահովված են անհրաժեշտ միջոցներով, եթե առկա են համապատասխան ինստիտուցիոնալ-կազմակերպական ենթակառուցվածքները և այլ անհրաժեշտ նյութական և ոչ նյութական պայմանները: Խնդիրը միանգամից դառնում է դժվար լուծելի, եթե առաջին պլան են մղվում անվտանգային խնդիրները, սպառնալիքի տակ են հայտնվում մարդկանց կյանքն ու առողջությունը: Հատկանշական է, որ 2016թ. ապրիլյան մարտական գործողությունների ժամանակ Ստեփանակերտում կրթության «շարունակականությունը» էականորեն չի տուժել, արձանագրվել են պարապմունքների աննշան դադարներ: Օրինակ, արդեն ապրիլի 5-ին և 6-ին, այսինքն՝ պատերազմի սկզբից մի քանի օր անց, Արցախի պետական համալսարանը վերսկսել էր պարապմունքները՝ ուսանողների հաճախումների անընդհատ աճով և շուտով մինչև 80 տոկոսի հասնող հաճախելիությամբ: Հետագա օրերին պարապմունքների շարունակականությունը լիարժեք ապահովվել է: Նույնը, ցավոք, հնարավոր չեղավ իրականացնել 44-օրյա պատերազմի ժամանակ: Պատճառն այն է, որ ապրիլյան պատերազմի օրերին, չնայած Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության հնչեցրած բազմաթիվ սպառնալիքներին, Ստեփանակերտը չի հրետակոծվել: Երկրորդ դեպքում թիրախավորվել էին ոչ միայն զորամասերը, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման համակարգերը, կապի հանգույցները, այլև բնակելի թաղամասերը, այդ թվում՝ համալսարանի անմիջական հարևանությամբ գտնվող որոշ շինություններ: Ոչ ռազմական օբյեկտներին հակառակորդը հարվածներ է հասցրել՝ առավելագույն տնտեսական և բարոյահոգեբանական վնաս հասցնելու և խուճապ առաջացնելու նպատակով: Կիրառված միջոցները եղել են վերջին սերնդի գերճշգրիտ զինատեսակներ՝ հեռակառավարվող հրթիռներ, իսրայելական ու թուրքական արտադրության անօդաչու թռչող սարքեր, մահապարտ դրոններ, որոնց մահացու ներուժը ծայրաստիճան բարձր է: Նման իրավիճակում ուսումնական պարապմունքների մասին խոսելն անիմաստ է:

2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ստորագրումից և պատերազմական ակտիվ գործողությունների դադարից հետո ուսումնական հաստատություններն իրենց առջև խնդիր դրեցին վերսկսելու պարապմունքները, սակայն դեռևս պարզ չէր, թե այդ խնդրի իրագործման համար ինչ պայմաններ կան: Առկա էր առնվազն մեկ խնդիր. ՀՀ-ում ապաստանած զգալի թվով սովորողներ ներգրավվել էին հայաստանյան դպրոցների և բուհերի պարապմունքներին: Այս ընդհանուր առմամբ դրական երևույթն ուներ թաքնված սպառնալիքներ, այն, որ երեխաները կարող էին մշտական ներառվել ցուցակներում և այլևս չվերադառնալ հարազատ կրթօջախ: Արտահոսքի սպառնալիքը դպրոցների տնօրեններին, բուհերի ռեկտորներին և այլ ուսումնական հաստատությունների ղեկավարներին դրդեց շտապ միջոցներ ձեռնարկելու՝ առցանց եղանակով պարապմունքները վերսկսելու մասին: Պատերազմին նախորդած Քովիդ-19 համավարակը նախադրյալներ էր ստեղծել, որպեսզի Արցախի ուսումնական հաստատություններում ներդրվի հեռավար ուսուցման համակարգը: Ամենուր բավականաչափ մանրամասն ընթացակարգեր էին մշակել հեռավար ուսուցման ներդրման վերաբերյալ, սակայն հաճախ ստիպված էին լինում փոփոխություններ մտցնել նույն այդ ընթացակարգերի մեջ: Ուսումնական հաստատությունների զգալի մասը ջանքերը կենտրոնացրեց պարապմունքների անընդհատության և սովորողների ֆիզիկական վերադարձն ապահովելու հարցերի վրա: Չնայած հետպատերազմյան Արցախում համացանցի և էլեկտրական հոսանքի մատակարարման անմխիթար վիճակին, այնուամենայնիվ, 2020թ. նոյեմբերի 15-ի դրությամբ հաջողվեց ուսումնական հաստատությունների մեծ մասում առցանց դասընթացներ կազմակերպել: Ուսուցանողների և սովորողների պատասխանատվության աստիճանի բարձրացման նպատակով հանձնարարվել էր տեսաձայնագրել պարապմունքները և լուսանկարներն (screenshot) ուղարկել համապատասխան վերահսկողություն իրականացնող կառույցներին: Գործադրված ջանքերը տվեցին իրենց արդյունքները, թեև հընթացս ի հայտ էին գալիս նորանոր խնդիրներ: Օրինակ, Արցախի պետական համալսարանի ուսանողների շրջանում անցկացված հարցումները պարզեցին, որ հեռավար պարապմունքների արդյունավետությունն այնքան բարձր չէ, որքան ենթադրվում էր ի սկզբանե: Աշակերտներից և ուսանողներից շատերը առերես միանում էին պարապմունքին, սակայն լիարժեք չէին հետևում ընթացքին՝ անջատելով ընդունող սարքերի բարձրախոսներն ու տեսախցիկները և հղում կատարելով կապի վատ որակին: Արցախում, հատկապես նրա շրջաններում, կապի որակն, իրոք, անմխիթար էր, իսկ էլեկտրական հոսանքի անջատումները՝

սովորական երևույթ: Գրեթե անլուծելի էր թվում գիտելիքների գնահատման ու հաշվառման խնդիրը և դրա համապատասխանեցումը գործող կարգերին:

Այժմ, երբ համառոտ նկարագրված է իրավիճակը, համառոտ անդրադառնանք կրթության շարունակականությունը ապահովող հոգեբանական գործոնների վերլուծությանը: Ակնհայտ է, որ սկզբում անհրաժեշտ էր չեզոքացնել այն գործոնների ազդեցությունը, որոնք առաջ էին եկել անմիջականորեն մարտական գործողությունների արդյունքում: Հայտնի է, որ մարտական իրավիճակի հոգեբանական գործոնները բազմաթիվ են և համատեղ ազդեցությամբ ի վիճակի են էականորեն փոխել մարդու վարքը և հոգեվիճակները: Մարտական իրավիճակի տարրերն ընդունված է անվանել մարտի հոգեծին գործոններ, կամ մարտական սթրեսորներ [2, էջ 106]: Մասնագետները սովորաբար այդ գործոնները բաժանում են երկու խմբի՝ արտաքին կամ օբյեկտիվ և ներքին կամ սուբյեկտիվ [3, էջ 42]: Արտաքին գործոնները պայմանավորված են հակառակորդի այնպիսի ներգործությամբ, ինչպիսիք են գործողությունների տեմպը, սպառազինության և ռազմական տեխնիկայի նորույթները, հոգեբանական դիվերսիաները, ինչպես նաև շրջապատի գործոններով, ինչպիսիք են բնակչության և զինծառայողների շրջանում առկա կորուստները, վնասվածքները, տիրապետող տրամադրությունները, խուճապը, ասեկոսեները, առասպալները և այլն: Այս ամենը մանրամասն ուսումնասիրված է, ուստի այստեղ չենք քննարկի [2, 3, 4, 5, 6]: Միայն ավելացնենք, որ օրինաչափությունները, որոնք բացահայտված են զինծառայողների համար, միանգամայն կիրառելի են խաղաղ բնակիչների համար, եթե վերջիններս ռազմական հարձակումների օբյեկտի են վերածվել և ակամայից ձեռք են բերել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: Առավել տիպական են այսպես կոչվող ***ներքին գործոնները***, որոնք պայմանավորված են մարտական գործունեության արտացոլման սուբյեկտիվ կողմերով: Այդ գործոնների թվում են վտանգի գիտակցումը և որպես դրա հետևանք՝ խուճապը, անակնկալ բնույթը, անորոշությունը, տեղեկույթի պակասը կամ դրա ավելցուկը, երբ այն գերազանցում է վերլուծություն և ընդհանրացում կատարելու հնարավորություններին, սոցիալ-կենցաղային բնույթի դժվարությունները՝ երկարատև զրկանքները, կյանքի սովորական պայմանների բացակայությունը, ժամանակի սղությունը, լարված ու երկարատև սպասման իրավիճակը, վիրավորների, խեղվածների անհայտ կորածների ճակատագրերը, գոյաբանական և կյանքի իմաստային խնդիրները, արժեհամակարգային փլուզումները, գաղափարական հիմնասյուների խարխլումը և այլ հուզական գերլարում պահանջող գործոնները (3, էջ 43):

44-օրյա պատերազմը հայ իրականության մեջ բացառիկ և յուրահատուկ երևույթ էր, որի հոգեբանական հետևանքները դեռևս պետք է ուսումնասիրվեն: Օրինակ, պատերազմի ամբողջ ընթացքը զանգվածային քարոզչամիջոցներով ներկայացվում էր որպես հաղթական և ուղեկցվում էր լավատեսական «Հաղթելու ենք» կարգախոսով՝ ոգեշնչելով մարդկանց: Ահա թե ինչու մեծ էր ***հիասթափությունը***, երբ միանգամայն անսպասելի հրապարակվեց Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների եռակողմ հայտարարությունը [10]: Մեր դիտարկումների հիման վրա կարող ենք պնդել, որ հետպատերազմական զանգվածային ֆրուստրացիոն իրավիճակը կախված էր երկու հիմնական գործոնից. ***պատերազմի ինտենսիվ ընթացքից և նրա անսպասելի ելքից***: Եթե ղարաբաղյան առաջին պատերազմի դրական արդյունքը, այսինքն՝ հաղթական ելքը, հիմք էր տվել դրական հուզական ապրումների համար, ինչի շնորհիվ մարդիկ անհամեմատ հեշտ էին տանում, օրինակ՝ կորստի վիշտը, զրկանքներն ու դժվարությունները (դրանք փոխհատուցվում էին հիմնական ձեռքբերումով՝ հաղթանակով), ապա 44-օրյա պատերազմի անսպասելի բացասական ելքի պարագայում շատերը հայտնվեցին հուզական անկման պայմաններում: Միակ հուսադրող գործոնը նշված հայտարարության 3-րդ կետն էր՝ ռուսական խաղաղապահ զորակազմի մասին [10]: Խաղաղապահ ուժերի ներկայությունը միայն մասնակիորեն բավարարեց մարդկանց ***անվտանգության պահանջմունքը,*** որովհետև այդ ուժերի տեղակայումից հետո կրակոցները չէին դադարում, հակառակորդն ամենուր ցուցադրաբար ցցում էր իր և թուրքական դրոշները, սահմանային բախումներ հրահրում և կատարում գործողություններ, որոնք չէին նպաստում մարդկանց անվտանգության ու ապահովության զգացման վերականգնմանը: Զգալի ժամանակ ու ջանքեր պահանջվեցին, մինչև մարդիկ փոքր-ինչ հանդարտվեն ու մասամբ հաղթահարեն ***հետպատերազմյան սինդրոմները*** ու դադարեն վերապրել սարսափի տեսարանները:

Երկրորդ բաղադրիչը, որը կարելի է առանձնացնել որպես բնականոն գործունեության, մեր դեպքում՝ կրթության շարունակականության ապահովման հոգեբանական գործոն, ***կանխատեսելիության և անորոշության*** հարաբերակցությունն է: Հետպատերազմյան Արցախը վերադարձող մարդկանց համար դեռևս չէր ընկալվում որպես ապահով, քանի որ հասկանալի չէր, թե ինչպիսի՞ իրավիճակ է ձևավորվել, ի՞նչ է լինելու հետո և այլ հարցեր:

Սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը, թերևս, ամենահեշտ լուծվող խնդիրը պետք է լիներ՝ հաշվի առնելով հումանիտար կառույցների վերականգնողական աշխատանքի մեծ ծավալը, սակայն այստեղ ևս առկա էին «ստորերկրյա խութեր»: Տեղահանված մարդկանց բնակավորման և

ունեցվածքի փոխհատուցման խնդիրները, սոցիալական աջակցության ոչ հասցեականությունը, մարդկանց մոտ ձևավորված դժգոհության ու ագրեսիվության դրսևորումները և այլ հանկարծահաս խնդիրներ կուտակվում էին ավելի մեծ արագությամբ, քան դրանց համար լուծումներ էին գտնվում:

Արժեհամակարգային փլուզվածության ու էքզիստենցիալ-գոյաբանական դատարկության զգացումը: Ինչպես նկատել են մասնագետները [11] պատերազմից հետո առաջ են եկել հետևյալ հոգեբանական փոփոխությունները.

1. նվազել է ***ապագայի հանդեպ վստահությունը***, մարդիկ իրենց կյանքն այլևս երկարաժամկետ կտրվածքով չեն պլանավորում, այլ ապրում են այսօրվա իրականությամբ, ասելով. «Ի՞նչ իմանաս, թե վաղն ինչ կլինի»:
2. ***Սոցիալական անանարդարության սուր զգացումը***: Ամենածանրը, թերևս, «խաբված լինելու զգացումն է»: Ոմանք գտնում են, որ այդքան ժամանակ լռել են, անարդարությունների ու զրկանքների մասին չեն խոսել, մտածելով. «Ոչինչ, թող վատ ապրենք, բայց չզիջենք ձեռքբերումները», իսկ պատերազմը «քշեց-տարավ» այդ ամենը, փոխարենը բերեց խորը հիասթափություն և ֆրուստրացիա:

Զգալի ջանքեր պահանջվեցին՝ չեզոքացնելու այն ***բացասական հոգեվիճակները,*** որոնք առաջ էին եկել պատերազմի արդյունքում, ընդ որում, ոչ միայն նրանց մոտ, ովքեր մասնակից էին մարտական գործողություններին, այլ ամբողջ ազգաբնակչությանը, որովհետև թիկունք հասկացություն չկար, ռմբակոծվում էին քաղաքներն ու գյուղերը, մայրաքաղաք Ստեփանակերտը:

Հաջորդ լուրջ գործոնը, որին առնչվեց Արցախի ազգաբնակչությունը և որը մարդկանց հոգեկանի վրա կործանարար ազդեցություն ունեցավ, թշնամու իրականացրած ***տեղեկատվա-հոգեբանական գրոհներն*** էին, որոնք ներառում էին ստահոդ լուրեր, ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներ, ճշմարտությունը աղավաղելու բազմաթիվ դեպքեր: Արդյունքում առաջ եկան ***անորոշության ու անպաշտպանվածության զգացումներ,*** մարդիկ հավատացին դավաճանության, դասալքության մասին կեղծ լուրերին, ունեցան խորը հիասթափություններ: Անխնա քննադատության արժանացան ոչ միայն պետական կառավարման համակարգը, բանակը, կամավորականները, նաև կրթության համակարգը: Կրթությանը տրված գնահատականներն արդարացի չէին, քանի որ ակնառու գնահատվում է միայն երեկվա կրթությունը, իսկ այսօրվա կրթությունը հնարավոր կլինի գնահատել ապագայում, երբ արդյունքները երևացող կլինեն:

Մենք կարծում ենք, որ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի քանի գործոնների վրա, որոնք պահանջում են կրեատիվ մոտեցումներ:

Նախ, վերականգնել վստահությունը պետական ու ռազմական անվտանգային համակարգի նկատմամբ:

Երկրորդ, կատարելագործել բուհական ***ուսուցման և դաստիարակության խնդիրները***, կրթական բարեփոխումների ընթացքը դարձնելով ավելի ճկուն, ադապտիվ:

Երրորդ, հստակեցնել հանրային մակարդակում քարոզվող արժեհամակարգային խնդիրները: Արժեհամակարգը բարձրահարկ շենքի նման է. կառուցումը տարիներ է տևում, իսկ փլուզումը՝ ակնթարթ: Մասնագետները ջանք չպետք է խնայեն՝ գտնելու և հանրությանը մատուցելու նոր արժեհամակարգային կողմորոշիչներ:

Չորրորդ՝ նախորդ գործոնների ներդրման համար արդյունավետ մեխանիզմների մշակումը: Ասված է՝ դեռևս չի նշանակում՝ կատարված է, քանի որ կյանքը համոզում է, որ լինում է սովորույթների, կարծրատիպերի, մտածողության իներտության դիմադրություն:

Այս և հոգեբանական պատճառականություն եւնոցող այլ խնդիրների համատեքստում, կարևոր ենք համարում շահագրգիռ քննարկումները ակադեմիական միջավայրում՝ գտնելու համար հասարակության շրջանում առաջ եկած սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ հակազդումների կարգավորման հնարավորություններն ու ուղիները:

Մեր պատկերացմամբ, ***դպրոցի և բուհի շրջանավարտին*** ներկայացվող արդիական պահանջ է նրա սոցիալ-հոգեբանական ***բարձր ադապտիվությունը***, այսինքն՝ արագ փոփոխվող պայմաններում ուսումնական, ծառայողական, աշխատանքային գործառույթներն ըստ բովանդակության, ձևի ու տեղադրության ինքնուրույն և ճիշտ կառավարելու ընդունակությունը: Բուհերը պետք է շահագրգռված լինեն նոր մասնագիտությունների ներդրմամբ, քանի որ կստեղծվեն նորագույն պայմաններ, իսկ սովորողների մոտ վստահություն կլինի, որ աշխատանքի տեղավորման հարցում խնդիրներ չեն ունենա: Հասարակությունն ու պետությունը նույնպես շահում են, քանի որ թուլանում է սոցիալական լարվածությունը, իջնում է երիտասարդության գործազրկության մակարդակը, նվազում է մասնագետների արտահոսքը:

Գրականություն

1. Բալայան Վ., Պանթյուրքիզմը և արցախահայ պետականության պատմական ճակատագիրը (1991-

2021թթ.), ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, Հասարակական գիտություններ, պրակ 2, Ստեփանակերտ, 2021թ.,
2. Մարգարյան Վ.Հ., Մարտական գործունեության հոգեբանություն, Եր. 2009, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 436 էջ
3. Մարգարյան Վ.Հ.,Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, Եր. 2009, 284 էջ
4. Յարամիշյան Վ.Բ. Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, 2009թ., Երևան, ՀՊՄՀ գրադարան
5. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողով (զեկուցումներ և հոդվածներ), Երևան, 2013թ., 275 էջ
6. Караяни И.Г., Сыромятников И.В, Прикладная военная психология-СПб.: Питер, 2006., 480 стр.
7. https://www.primeminister.am /hy/interviews-and-press-conferences/ item /2021/01/04// դիտված է 01.04.2021թ.
8. https://hy.wikipedia.org/wiki/44-օրյա պատերազմ, դիտված է 14.06.2023թ.
9. https://www.facebook.com /gegham.stepanian դիտված է 07.07.2021թ.
10. https://armeniasputnik.am/russia/25261787/rusastany-hraparakec-erakoxm-haytararutyan-pashtonakan-pastatuxty.html) դիտված է 10.11.2020թ.
11. https://www.civilnet.am/news/625903/արցախ.հետպատերազմյան-տրամադրություններ ու հեռանկարներ/ դիտված՝ 12.07.2021թ.

Նյութը ներկայացվել է 16.06. 2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.դ., պրոֆեսոր Հ.Մ. Ավանեսյանը :

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Նաիրա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ
E-mail: harutyunyannaira@gmail.com

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Հոդվածի նպատակն է ներկայացնել հայ երիտասարդների ինքնագնահատականի առանձնահատկությունները, տալ վերջինիս քանակական և որակական բնութագրերը, երիտասարդության սկզբում և ավարտին ինքնագնահատականի բնութագրական տարբերությունները: Հոդվածում ամփոփված են գիտական հետազոտության արդյունքները, որոնք որոշակի պատկերացում են տալիս 18-35 տարեկանների ինքնագնահատման առանձնահատուկությունների, երիտասարդ կանանց և տղամարդկանց ինքնագնահատման նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ: Հոդվածում արտացոլվում են ինքնագնահատականի մեկնաբանման տարբեր կոնցեպցիաներ, որոնք տարբեր տեսանկյուններից են մեկնաբանում ինքնագնահատականի տեղն ու դերը անձի Ես-ի համակարգում: Հեղինակը փորձ է կատարել մեկտեղել ինքնագնահատականի վերաբերյալ անհամար տեսակետները մեկ ակնարկի մեջ:

Բանալի բառեր՝ *երիտասարդ, ինքնագնահատական, համաչափություն, բարձրություն, ադեկվատություն:*

Н.Арутюнян

ОСОБЕННОСТИ УРОВНЯ И ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ САМООЦЕНКИ В МОЛОДОСТИ

Цель статьи - представить особенности самооценки молодых людей, дать количественную и качественную характеристику их самооценки, выявить сходства и различия в начале и в конце молодости. В статье обобщены результаты исследования, которые могут дать некоторое представление о самоуважении, самооценке и возможных психологических объяснениях тенденций и развития молодых людей. В статье отражены разные концепции трактовки самооценки, которые трактуют место и роль самооценки в системе Я человека с разных позиций. Автор попытался объединить бесчисленные точки зрения на самооценку в одном обзоре.

Ключевые слова: *молодость, самооценка, самооценка, самоуважение, стабильность.*

N.Harutyunyan

FEATURES OF GROWTH AND PROPORTIONALITY OF SELF-ESTEEM IN YOUNG AGE

The purpose of the article is to present the features of young people`s self-esteem, to give quantitative and qualitative characteristics of their self-evaluation, identify similarities and differences at the beginning and at the end of the young-adulthood age. The paper summarizes the results of research which can give some insight into the self – respect, self – worth and the possible psychological explanations of trends and development of young people. The article reflects different concepts of the interpretation of self-esteem, which interpret the place and role of self-esteem in the system of a person's self from different positions. The author has attempted to combine countless views on self-esteem in one review.

Key words: *youth, self-esteem, self-worth, self-evaluation, stability.*

Ինքնագնահատականն ինքնագիտակցության բաղադրիչ է, որն իր մեջ ներառում է ոչ միայն իր մասին գիտելիքներ, այլև ֆիզիկական բնութագրերի, ընդունակությունների, բարոյական որակների և արարքների գնահատականը [8, 332]:

Ինքնագնահատականը (անգլ. Self – esteem) արժեք է, որն անձը տալիս է իրեն ամբողջությամբ և իր անձի տարբեր կողմերին, գործունեությանը, վարքին: Այն հանդես է գալիս որպես կայուն նորագոյացություն, ինքնագիտակցության բաղադրիչ և որպես ինքնագնահատման պրոցես: Դրա հիմքն են կազմում մարդու անձնային իմաստների համակարգը [8]:

Ավանդաբար հոգեբանության մեջ ինքնագնահատականի ուսումնասիրման հիմնադիր է համարվում Ու. Ջեյմսը: Ըստ հեղինակի՝ ինքնագնահատականը հուզական գոյացություն է, որը ցույց է տալիս անձի՝ իրենով բավարարվածության կամ անբավարարվածության մակարդակը:

Ավելի ուշ աշխատություններում ինքնագնահատականը, դիտարկվում էր ինքնագիտակցության կոնտեքստում՝ որպես վերջինիս ասպեկտներից մեկը այնպիսի հասկացությունների հետ միասին, ինչպիսիք են «Ես – հայեցակարգ», «ինքնընդունում», «անձի արժանապատվության զգացում», «ինքնահարգանք», «ինքնաարդյունավետություն». «ինքնավստահություն», «ինքնաճանաչում», «ինքնաբավարարվածություն» և այլն:

Ռուսական հոգեբանության մեջ ինքնագիտակցության և ինքնագնահատականի խնդրի ուսումնասիրության մեջ անհրաժեշտ է նշել Վ.Վ. Ստոլինի կոնցեպցիան: Այդ կոնցեպցիայի հիմքում ընկած է ինքնագիտակցության եռամակարդակ կառուցվածքի մասին գաղափարը, ըստ որի՝ ինքնագիտակցությունը իր մեջ ներառում է կոգնիտիվ, աֆեկտիվ և ռեգուլյատիվ բաղադրիչներ: Ուսումնասիրողները նշում են ինքնագնահատականի բարձր անձնային նշանակությունը՝ ընդգծելով, որ սուբյեկտի՝ իր մասին բովանդակային պատկերացումների կազմում չեն ներառվում չեզոք – արժեքային որակները, որոնք զրկված են անձնային իմաստից. բոլոր որակները դրականորեն կամ բացասականորեն արժեքավոր են: Այստեղ ինքնագնահատականը, փաստորեն, նույնականացվում է անձի՝ իր նկատմամբ վերաբերմունքի հետ, որը անգլալեզու գրականության մեջ հիշատակվում է self – esteem (արժանապատվության զգացում, ինքնահարգանք) տերմինով: Ստոլինը ինքնագնահատականի սահմանումը չի տալիս՝ չսահմանազատելով ինքնագնահատական, ինքնահարգանք և «Ես» տերմինները [15]:

Ի.Ս.Կոնը ինքնագնահատականը սահմանում է որպես «ինքնագիտակցության բաղադրիչ, որը ներառում է ոչ միայն սեփական անձի մասին գիտելիքները, այլև սեփական անձի, կարողությունների, բարոյական որակների և արարքների գնահատականները» [7, 35]:

Առավել լավ է մշակված այս հարցը Ռոբերտ Բերնսի «Ես – կոնցեպցիայի» սխեմայում: Հեղինակը շեշտում է անձի կառուցվածքում կոգնիտիվ և հուզական բաղադրիչների միաձուլումը, այսինքն՝ գիտելիքը իր մասին և

վերաբերմունքը այդ գիտելիքի նկատմամբ: Ըստ Բերնսի «Ես – կոնցեպցիան» սեփական անձի մասին անհատի ամբողջ պատկերացումների ամբողջությունն է, որը ուղեկցվում է դրանց գնահատականներով» [1, 30 էջ]:

Ինքնագնահատականը ներկայացվում է երկու բաղադրիչների տեսքով՝ իմացական և հուզական: Առաջինն արտացոլում է մարդու գիտելիքներն իր մասին, իսկ երկրորդը՝ վերաբերմունքն իր նկատմամբ: Ինքնագնահատման պրոցեսում այս երկու բաղադրիչները հանդես են գալիս միասնության մեջ և չեն կարող գործել առանձին: Իր մասին գիտելիքներն անձը ձեռք է բերում այլոց հետ համեմատվելու միջոցով: Հեղինակը ինքնագնահատականին տալիս է հուզական – արժեքային կառույցի դեր՝ հավասարեցնելով այն ինքն իր մասին վերաբերմունքի հետ: Ինքնագնահատականը համարում է միջոց և պայման «Ես – կոնցեպցիայի» ձևավորման համար, քանի որ ապահովում է մարդու՝ իր մասին գիտելիքների աստիճանակարգումը: Նա նշում է, որ «Ես–կոնցեպցիան» նեղ իմաստով հենց ինքնագնահատականն է:

Ս. Քուփերսմիթը նշում է, որ ինքնագնահատականը որպես անհատի վերաբերմունքն իր նկատմամբ, ձևավորվում է աստիճանաբար և ձեռք է բերում իր սովորական բնույթը, արտահայտվում է հավանության կամ մերժման միջոցով, որի աստիճանը որոշում է անհատի համոզվածությունը իր նշանակալիության և ինքնուրույնության վերաբերյալ [16]:

Ե. Վելսը և Գ. Մարվելը, վերլուծելով անգլալեզու գրականության մեջ հանդիպող բազմաթիվ ասպեկտները, բերում են ինքնագնահատականի մի քանի նկարագրություն (self – esteem) [3].

Վերաբերմունքի հստակ տիպ (խրախուսանք կամ քննադատություն) կամ ինքն իր մասին վերաբերմունքի մասնավոր ասպեկտ: Սակայն այս նկարագրությունը չի բացահայտում այս երևույթի ողջ էությունը:

Ա.Զ. Զախարովան առանձնացնում է ընդհանուր և պարցիալ (մասնակի) ինքնագնահատականներ: Վերջինս արտացոլում է սուբյեկտի կողմից սեփական կոնկրետ դրսևորումների և որակների գնահատականը: Ընդհանուր ինքնագնահատականը մասնավոր ինքնագնահատականների աստիճանակարգված համակարգն է, որոնցից յուրաքանչյուրը մյուսների հետ դինամիկ փոխհարաբերությունների մեջ է գտնվում: Դրանում առանձնացվում են երկու բաղադրիչ՝ հուզական – արժեքային վերաբերմունք և կոգնիտիվ, որին, իմիջիայլոց, տրվում է առաջատարի դերը [4]:

Այս հարցի հետ կապված գրականության վերլուծությունը բավականին դժվար է: Հեղինակները նույն երևույթի համար օգտագործում են տարբեր տերմիններ (self – love, self – respect, self – worth, self – acceptance, self –

appraisal, sense of competence, self – evaluation և այլն) կամ ընդհակառակը, նույն տերմինի տակ ի նկատի էին ունենում տարբեր հոգեբանական երևույթներ:

Տարբերությունները այն պատկերացումների միջև, թե ինչպիսին է անձը իրականում և ինչպիսին կցանկանար լինել կամ անհրաժեշտ է, որ լինի: Այսինքն՝ այստեղ ինքնագնահատականը Ես – իրականի և Ես – իդեալականի միջև տարբերությունն է:

Շատ հոգեբաններ գտնում են, որ անհատականության կառուցվածքը և ինքնագնահատականի հիմքերը ձևավորվում են մարդու կյանքի առաջին հինգ տարիներին: Սովորաբար, կարծիքը սեփական անձի մասին հիմնվում է իր մասին այլոց վերաբերմունքի վրա: Կարելի է առանձնացնել ինքնագնահատականի ձևավորման մի քանի ակունքներ, որոնք փոխում են կարևորության կշիռը անհատականության ձևավորման տարբեր փուլերով. այլոց գնահատականը, նրանց հետ համեմատումը՝ իրական և իդեալական «Ես»-ի համեմատություն:

Ինքնագնահատականը ձևավորվում է սեփական գործունեության արդյունքների բազայի գնահատման, ինչպես նաև՝ սեփական անձի մասին ռեալ և իդեալական փոխհարաբերակցության հիման վրա:

Ցածր ինքնագնահատականը կարող է պայմանավորված լինել բազմաթիվ պատճառներով. այն կարելի է ընդօրինակել մանուկ հասակում ծնողներից, ովքեր չեն կարողանում լուծել իրենց անձնական խնդիրները, այն կարող է զարգանալ երեխայի մոտ դպրոցում, դասերը սովորել չկարողանալուց, հասակակիցների ծաղրից կամ մեծահասակների կողմից չափից ավելի քննադատությունից. անձնական պատճառներն ու սահմանային իրավիճակներում իրեն դրսևորել չկարողանալը նույնպես մարդու մեջ ձևավորում են սեփական անձի մասին ոչ դրական կարծիք:

Ինքնագնահատականը սեփական անձի հանդեպ ընդհանուր և անձնային առաձին որակների հանդեպ վերաբերմունքն է: Ինքնագնահատակնի աղբյուրներն են այլ անձանց համեմատությունը, այլ անձանց գնահատականները, Ես-պատկերի տարբեր տարբերակների համադրությունը, ինչպես նաև Ես-պատկերի տարբեր ասպեկտների սուբյեկտիվ նշանակալիությունը: Ինքնագնահատականը մարդու կողմից ինքն իրեն, սեփական առավելությունների ու թերությունների, հնարավորությունների, որակների, այլ մարդկանց միջավայրում իր տեղի գնահատատումն է [13, 169-170]:

Ինքնագնահատականը և այլ անձանց գնահատականները անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Մարդիկ ինքնագնահատում են նաև իրենց առանձին որակները՝ արտաքինը, կարողությունները,

հաջողությունները ուսման մեջ կամ աշխատավայրում: Մարդը սկսում է իրեն գնահատել դեռևս մանկությունից: Մեր ինքնագնահատականը կազմվում է ձեռքբերված արդյունքի (հաջողության մակարդակ) և մեր ցանկալի արդյունքի (հավակնություններ) համադրությունից: Ինքնագնահատականը լինում է իրատեսական և ոչ իրատեսական, կայուն և ոչ հաստատուն, դրական և բացասական, բարձր և ցածր, ադեկվատ և ոչ ադեկվատ [13, 174]:

Նույն իրավիճակում տարբեր ինքնագնահատականներով անձինք տարբեր վարք կդրսևորեն, տարբեր գործողությունների կդիմեն, դրանով իսկ կազդեն իրավիճակի ընթացքի վրա:

Ինքնագնահատականի գլխավոր ֆունկցիան կարգավորիչն է, որի հիման վրա կատարվում են ցանկացած ընտրության խնդիրների լուծումները, և պաշտպանական, որն ապահովում է անձի համեմատական կայունությունն ու անկախությունը: Ինքնագնահատականը նշանակալի ազդեցություն է ունենում գործունեության արդյունավետության և զարգացման բոլոր փուլերում անձի ձևավորման վրա [14, 70-71]:

Երիտասարդ տարիքում անձն ընտրում է նպատակներ և դրանց հասնելու միջոցները, որոնք այս կամ այն կերպ կապված են նրա «Ես»-ի հետ, և գնահատում է իր գործողությունների հաջող ընթացքը՝ համապատասխան Ես-կոնցեպցիայի: Այս փուլում ինքնագնահատականի վրա ազդում են մարդու նվաճումների մակարդակը. այն բարձրանում է, եթե անձի հավակնությունները իրականացվում են և համապատասխանաբար նվազում են, եթե նպատակներին անձը չի կարողանում հասնել: Ես-կոնցեպցիան անհատականացնում է ինքնագնահատականը, քանի որ մեկի համար հանդիսանում է հաջողություն, իսկ մյուսն այն ընկալում է որպես անհաջողություն [13, 206]:

Ի.Ս. Կոնը կարծում է, որ արական Ես-պատկերը պարունակում է բացառապես աշխատանքային, սպորտային և սեռական ոլորտներում Ես-ի նշանակալիության վերաբերյալ ինֆորմացիա: Կանայք Ես-պատկերում արտացոլում են այն, թե որքան են նրանք արտաքնապես գրավիչ: Տղամարդիկ հակված են գերագնահատել իրենց որակները լինեն դրանք խմբային կամ անձնային ընդունակություններ [9, 524-525]:

Սեփական մարմնական Ես-ի բավարարման աստիճանը անպայման արտացոլվում է երիտասարդների ինքնագնահատականի վրա: Դրանից է հաճախ կախված նրանց ինքնազգացողությունը, բարօրությունն ու երջանկությունը:

Չափազանց բարձր կամ ցածր ինքնագնահատականը հանդիսանում է կոնֆլիկտի աղբյուր, որոնք դրսևորվում են տարբեր կերպ:

Բարձր ինքնագնահատականով երիտասարդները ունենում են իդեալականացված պատկերացումներ սեփական անձի և հասարակության համար իրենց կարևորության վերաբերյալ: Նրանք չեն ցանկանում ընդունել սեփական սխալները, իրենց մոտ այս կամ այն բանի պակասը (աշխատասիրություն, տաղանդ, գիտելիք, ընդունակություններ), վարքի սխալականությունը: Ցածր ինքնագնահատականը պատճառ է դառնում անինքնավստահության, վախի, սեփական ընդունակությունների իրականացման անհնարինության համար: Նրանք իրենց առջև դնում են ավելի ցածր նպատակներ, քան կարող են հասնել, անհաջողությունները գերագնահատում են, ունեն աջակցության սուր կարիք, բավական քննադատական են իրենց նկատմամբ: Նա շատ խոցելի է, ինչն էլ բերում է թերարժեքության բարդույթի, որն էլ հաճախ դրսևորվում է արտաքին կեցվածքում՝ հայացքը փախցնում է, մռայլ է և չի ժպտում: Ցածր ինքնագնահատականը հաճախ դժգոհություններ են և մեղավորի որոնումներ, ուշադրության և հավանության արժանանալու պահանջմունք, ինչը, կարծեք, փոխհատուցում է սեփական անձի մերժումը [14, 69]:

Ցածր ինքնագնահատականով երիտասարդները հաճախ դժվարություններ են ունենում շփման մեջ և ձգտում են փակվել շրջապատողներից՝ արտաքուստ ստեղծելով կեղծ դեմք, դիմակ: Սեփական անձի անընդունումը, անբավարարությունը, ատելությունը սեփական անձի հանդեպ, բացասական ինքնագնահատականը և այլն, որպես կանոն, ինքնուրույն չեն, ներշնչվող են, առավել բացասաբար են վերաբերվում շրջապատողներին, առավել հարմարվող են (կոմֆորմիստ), խոցելի են, զգայուն՝ քննադատության և ծաղրի հանդեպ: Հաճախ անհանգստանում են նրա համար, թե ինչ են մտածում և ասում իրենց մասին ուրիշները: Հիվանդագին են ընդունում անհաջողությունները, մանավանդ, երբ դա կատարվում է այլոց ներկայացությամբ: Հակված են ռեֆլեքսիայի, և մյուսներից հաճախ են իրենց մեջ թերություններ գտնում: Այս պատճառով նրանց բնորոշ է հոգեբանական մեկուսացման ձգտումը [5, 134-136]:

Որքան ցածր է ինքնագնահատականը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա տառապում է միայնությունից, ցածր ինքնահարգանքը նվազ են դարձնում սոցիալական հավակնությունները, մղում են նրան խուսափել ցանկացած գործունեությունից, որում կա համեմատության կամ մրցակցության տարր: Այս անձինք հաճախ հրաժարվում են նպատակներին հասնելուց, քանի որ չեն հավատում սեփական ուժերին: Իսկ դա իր հերթին սնում է նրանց ցածր ինքնագնահատականը:

Բարձր ինքնագնահատակով երիտասարդները ձգտում են միշտ լինել առաջինը, դա հաճախ բերում է նրան, որ անձը միշտ չէ, որ շրջապատողների հետ լավ հարաբերություններում է լինում: Նրանք, գերագնահատելով իրենց, կարծում են, որ հասարակությունն իրենց ըստ արժանվույն չի գնահատում, թերագնահատում է, ինչի պատճառով շրջապատողներին ներկայացնում են չհիմնավորված պահանջներ, ըստ նրանց՝ մարդիկ հաճախ իրենց չեն հասկանում [13, 189-193]:

Նորմատիվ ինքնագնահատականով երիտասարդները իրատեսորեն են ընդունում իրենց առավելություններն ու հնարավորությունները, սթափ են գնահատում իրենց թերություններն ու բացթողումները: Նրանք ավելի առույգ են, ակտիվ և լավատես: Առողջ ինքնագնահատականի դեպքում մարդիկ սովորաբար հանգիստ են, նպատակասլաց, բավական քննադատորեն են վերաբերվում իրենց, ձգտում են իրատեսորեն նայել անհաջողություններին և հաջողություններին, ձգտում են դնել հասանելի նպատակներ, որոնք կարելի է իրականացնել գործնականում: Իրենց գործունեության արդյունքներին նրանք մոտենում են ոչ միայն իրենց չափանիշներով, այլև փորձում են կանխատեսել, թե ինչ արձագանք դրանք կունենան այլ անձանց մոտ: Ադեկվատ ինքնագնահատականը չափանիշների և չափի մշտական որոնման արդյունքում են ձևավորվում, այսինքն՝ առանց չափազանց գերագնահատման և առանց անտեղի քննադատության [5, 272]:

Նորմալ ինքնագնահատականով երիտասարդը ընդունում է իր անձը, հարգում է իրեն և իր արարքները, ունի դրական ինքնագնահատական, առավել ինքնուրույն է, շփվող, բաց, հեշտ է ընդունում շրջապատողներին և նրանց կարծիքը, չի թաքցնում իր թերությունները, թուլությունները, հեշտ է տանում անհաջողությունները, ունի լավ զարգացած նվաճման մոտիվացիա, հակված է մրցակցության:

Մեր ուսումնասիրության արդյունքում մենք նպատակ ենք հետապնդել ուսումնասիրել հայ երիտասարդների ինքնագնահատականի առանձնահատկությունները, ինքնագնահատականի դրսևորման տարբերությունները սեռերի միջև, ինքնագնահատականի բաղադրիչների արտահայտման դինամիկան երիտասարդության տարիքի սկզբում և ավարտին: Ինչպես նշում է Օ. Ն. Մալչանովան, ինքնագնահատականը տարիքին զուգընթաց փոփոխվում է որակապես՝ դառնալով բարձր կամ ցածր, կայուն կամ փոփոխական, ադեկվատ կամ ոչ ադեկվատ: Նա մեծ կարևորություն էր տալիս այնպիսի փոփոխականին, ինչպիսին ինքնագնահատականի կայունությունն է [10]: Դա ինքնագնահատման մակարդակի պահպանման համեմատական հաստատունությունն է՝

անկախ իրավիճակից, հանգամանքներից, հաջողություններից կամ անհաջողություններից:

Մեր հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ տարիքին զուգընթաց բարձրանում է երիտասարդների ինքնագնահատականը: Այսպես, եթե տարիքի սկզբում ինքնագնահատականի միջին ցուցանիշը կազմում է 62%, ապա տարիքի ավարտին այն կազմում է 74%: Այս միտումը հնարավոր է մեկնաբանել մի քանի փաստերով: Ն. Էմլերը 2001թ. իր աշխատության մեջ անդրադառնում է մի երևույթի, համաձայն որի՝ մարդիկ սկսել են ձգտել բարձր ինքնագնահատականի և համապատասխանաբար ինքնաարգանքի: Սրա գագաթնակետը դարձավ այն, որ 1986թ. ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում հայտարարեցին դրամաշնորհ, որը հատկացված էր նահանգի բնակիչների ինքնագնահատականի բարձրացմանն ուղղված միջոցառումներին (Baumeister et.al., 2003): Շատ հետազոտողներ պնդում են, որ հենց երիտասարդության տարիքում է բնորոշ ամենաբարձր ինքնագնահատականն ու առավել բարենպաստ ինքնավերաբերմունքը, քանի որ հենց այս տարիքում է անձը մաքսիմալ իրացնում իր ռեսուրսները, ներուժը, դնում նպատակներ և հասնում դրանց, ձեռք բերում կապիտալ, նշանակալի հարաբերություններ, մասնագիտական կայունություն, ընտանեկան կարգավիճակ [11]:

Ինքնագնահատականն ունի տարիքին զուգընթաց բարձրանալու միտում: Մեր ուսումնասիրության արդյունքների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ինքնագնահատականի ցուցանիշների միջև տարբերությունը երիտասարդության տարիքի սկզբում և ավարտին կազմում է ≈23%:

Երբ մասնատում ենք ինքնագնահատականի մաս կազմող բաղադրիչները՝ այն է՝ արտաքին տեսքի ինքնագնահատականը, կոգնիտիվ կարողությունների ինքնագնահատականը, մասնագիտական կարողությունների ինքնագնահատականը, հեղինակությունն ու ինքնավստահությունը, ապա պատկերը գրեթե նույնն է, սակայն արտաքին տեսքի ինքնագնահատականը նվազում է տարիքի վերջում 25%-ով, գագաթնակետին է հասնում տարիքի միջին հատվածում, ի տարբերություն սրան, նկատելիորեն և կտրուկ բարձրանում է մասնագիտական ինքնագնահատականը ու ինքնավստահությունը, ինչը հնարավոր չէ ասել տարիքի սկզբի մասին: Սրանք օրինաչափ տվյալներ են, քանի որ անձի ծաղկման շրջանում անձը գտնվում է ֆիզիկական զարգացման գագաթնակետին, նա բավարարված է իր դիմագծերով, արտաքին տեսքով, օրգանիզմի ֆիզիկական հնարավորություններով, ուժեղ է և դիմացկուն, իսկ տարիքի ավարտին օրգանիզմի ֆիզիկական հնարավորություններն արդեն գագաթնակետին չեն, ինչ նախկինում էր, դիմագծերը և կեցվածքը

փոփոխված են, կանայք ամենայն հավանականությամբ արդեն գոնե մեկ անգամ ծննդաբերել են, որի արդյունքում օրգանիզմն անվերապահորեն փոփոխվում է, տղամարդիկ դադարում են հետևել իրենց արտաքին տեսքին, և մեծմասամբ գիրանում են, շատերը սկսում են շուտ հոգնել, արդեն հայտնվում են առաջին ճերմակ մազերը, դեմքին՝ կնճիռները, ինչը բնականաբար, ազդում է ինքնագնահատականի վրա: Սակայն ի տարբերություն այս ցուցանիշների՝ աճում է մասնագիտական ինքնագնահատականը և ինքնավստահությունը տարիքի ավարտին. անձը հաջողություններ է ունենում այլ ոլորտներում՝ մասնագիտության մեջ, ընտանիքում, իր հարազատների և ընկերների շրջանում, սիրելի զբաղմունքում կամ այլ ոլորտներում:

Չակ Տ. Ֆոլկենն ասում է, որ եթե մարդն զբաղվում է սիրելի գործով, ժամանակի ընթացքում ձեռք է բերում փորձ ու վարպետություն, որոնցով իրավունք ունի հպարտանալու: Սա նորմալ ինքնագնահատական կազմելու պայմաններից մեկն է: Յուրաքանչյուր մարդ իր համար ստեղծում է իդեալական «Ես»-ի տարբերակը: Այն ունենում է որակներ, որոնք արժեք ունեն ծնողների, հասակակիցների, հեղինակություն ունեցող ուսուցիչների ու մարդկանց աչքերում: Այն կարող է փոփոխվել՝ կախված շրջապատից: Եթե իրական որակները համապատասխանում են իդեալին կամ մոտ են դրան, ապա մարդը կունենա բարձր ինքնագնահատական: Սեփական անձի նկատմամբ սթափ և օբյեկտիվ վերաբերմունքը կազմում է նորմալ ինքնագնահատականի հիմքը: Հասուն անձի մոտ ուժեղանում է ինքնագնահատականի կոգնիտիվ բաղադրիչը, քանի որ այս փուլում մարդն ունի բավարար գիտելիքներ՝ իրեն օբյեկտիվ գնահատելու համար:

Ինչ վերաբերում է ինքնագնահատականի համաչափությանը, ապա պատկերը լրիվ հակառակն է: Այսպես՝ տարիքի սկզբում ինքնագահատականը համաչափ է, ապա ընթացքում նվազում է, որը համապատասխանում է մոտավորապես 23-28 տարեկան միջակայքին, 29-32-ում այն բարձրանում է և սկսում է աստիճանաբար նվազել: Ինքնագնահատականի համաչափություն ասելով՝ նկատի է առնվում ինքնագնահատականի համեմատաբար միանման ցուցանիշները ինքնագնահատման բոլոր բաղադրիչներում, այսինքն՝ անձը միանման է գնահատում և արտաքին տեսքը, և մասնագիտական կարողությունները, և ինքնավստահությունը, և հեղինակությունը շրջապատում: Սակայն տարիքի աճին զուգընթաց՝ անձը սկսում է ավելի իրատեսորեն գնահատել վերոնշյալ բաղադրիչները՝ ելնելով այդ ոլորտների հետ կապված հաջողություններից: Տարիքի ընթացքում մեծանում է գնահատվող որակների ծավալը և աղեկվատությունը, ընդլայնվում է օգտագործվող կատեգորիաների և

հասկացությունների քանակը, նվազում է ենթադրությունների քննադատականությունը, աճում է ռեֆլեքսիվությունը: Ինչ վերաբերում է տարբեր սեռերի ինքնագնահատականի առանձնահատկություններին, ապա նախորդ միտումը շարունակվում է, այն է՝ ինքնագնահատականը տարիքին զուգընթաց բարձրանում է երկու սեռերի մոտ, սակայն միաժամանակ նկատում ենք, որ երիտասարդության տարիքի ավարտին կանանց ինքնագնահատականն ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Այդ տարբերությունը կազմում է ≈35%: Դա նշանակում է, որ երիտասարդ կանայք հակված են առավել բարձր գնահատել իրենց արտաքինը, մասնագիտական կարողությունները, հեղինակությունը շրջապատում: Ինչպես տեսնում ենք, նույն հետազոտության արդյունքներից, ինքնահարգանքը արական սեռի մոտ առավել շեշտված է, քան իգական սեռի մոտ: Կրայգը նշում է այս կապակցությամբ, որ շատ երիտասարդ աղջիկներ թևակոխում են պատանեկության տարիքը սեփական Ես-ի վնասով, ինչը նշանակում է, որ երիտասարդության տարիքի սկզբում աղջիկները ավելի ցածր են գնահատում իրենց արտաքինն ու ինքնագնահատականի այլ բաղադրիչները, քան տղաները, նրանք ավելի քիչ սպասումներ ունեն, ավելի թերահավատ են իրենց ուժերին և կարողություններին, քան նույն տարիքի տղաները [6, 12]:

Սրանով հանդերձ, երիտասարդության տարիքի աղջիկների արտաքին տեսքի ինքնագնահատականը նշանակալիորեն ավելի ցածր է, քան տղաներինը: Տղաները, ըստ մեր հետազոտության, ավելի գոհ են իրենց արտաքին տեսքով, և հարցման ժամանակ դա անընդհատ նշում էին, մինչդեռ աղջիկները ավելի ցածր էին գնահատում իրենց արտաքին տեսքը՝ համեմատելով մյուս հասակակից աղջիկների արտաքին տեսքի հետ:

Ինչ վերաբերում է ինքնագնահատականի համաչափությանը, ապա այս հարցում նույնպես նկատելի տարբերություններ կան: Այսպես՝ երիտասարդության սկզբում գրեթե հավասարաչափ են գնահատված ինքնագնահատականի բաղադրատարրերը երկու սեռերի մոտ, սակայն տարիքի ավարտին այս ցուցանիշները փոփոխվում են. իգական սեռի ինքնագնահատականը դառնում է առավել անհամաչափ, քան արական սեռի ինքնագնահատականի համաչափությունը: Սա կարելի է մեկնաբանել այն փաստով, որ կանայք երիտասարդության տարիքի վերջում առավել հստակ և դիֆերենցված են վերաբերվում սեփական Ես-ի տարբեր ասպեկտներին՝ արտաքին տեսքին, մասնագիտական նվաճումներին, կոգնիտիվ կարողություններին: Հարցման արդունքում պարզ դարձավ, որ այս տարիքում հիմնականում նրանցից շատերը ձեռք են բերում ընտանեկան նոր կարգավիճակ՝ նոր սպասումների և պարտականությունների հետ միասին,

ունենում են երեխաներ, ինչը հաճախ ուղեկցվում է մասնագիտության մեջ ընդմիջում վերցնելով, մինչդեռ տղամարդկանց կյանքում նմանատիպ փոփոխությունները մասնագիտական և անձնային ոլորտում էական տեղաշարժերի չեն բերում:

Այսպիսով՝ կարող ենք ամփոփել, որ սոցիալ-հոգեբանական իրադարձությունները, մասնագիտական և անձնային ոլորտում տեղի ունեցող նշանակալի փոփոխություններն իրենց կարևոր ազդեցությունն են թողնում երիտասարդի ինքնագնահատական քանակական և որակական դրսևորումների վրա:

Գրականություն

1. Бернс Р., Развитие Я-концепции и воспитание, М., 1986.
2. Большой психологический словарь /Ред. Б. Мещеряков. – СПб.: ЕВРОЗНАК, 2004. – 672 с.
3. Бороздина Л.В., Сущность самооценки и ее соотношение с Я-концепцией. Вестн. Моск. ун-та. Сер. 14. Психология. 2011. № 1 с. 54-64
4. Бороздина Л.В., Самооценка в структуре самосознания. //Факторы риска пси- хосоматических заболеваний: Учеб. пособие. М.: 2008.
5. Ермолаева М.В., Основы возрастной психологии и акмеологии: Учебное пособие.-М.: Издательство «Ось-89». 2011. – 416 с.
6. Ильин Е.П., Дифференциальная психофизиология мужчины и женщины, Спб Питер, 2006. – 544 с.
7. Кон И.С., В поисках себя. Личность и ее самосознание. М.: 1984.
8. Корсини Р., Ауэрбах А., Психологическая энциклопедия. СПб.: Питер, 2006. – 1096 с.

Նյութը ներկայացվել է 10.05..2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9 (378)

Հոգեբանություն

Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ
E-mail: sargsyanlevon23@aspu.am

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԴԱՊՏԻՎ ՎԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ

Կրթության հոգեբանության ուսումնասիրության խնդիրներից են ուսանողների հարմարման գործընթացի ուսումնասիրությունը բուհական կրթության համակարգում: Բուհական հոգեբանության մեջ առանձնացնում ենք ինչպես մասնագիտական կրթության խնդիրները, այնպես էլ սոցիալ-հոգեբանական, որտեղ էական նշանակություն են ստանում ուսանողների շփման և փոխազդեցության հարցերը, հարմարումը սոցիալական նոր կարգավիճակին, սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացում առկա դժվարությունները: Հոդվածում ներկայացված են բուհական միջավայրում ուսանողների հարմարման խնդիրները, ուսումնասիրվում են հարմարման գործընթացի հիմնական խնդիրները՝ կոնֆլիկտային իրադրությունների ձևավորման և դրանում վարքի ռազմավարությունների բնույթը: Քննարկվում են հարմարման սոցիալական, սոցիալ-հոգեբանական հիմքերը: Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ սոցիալական նոր պայմաններում ուսանողների համար որոշիչ նշանակություն ունի արդյունավետ հարմարումը սոցիալական փոփոխվող պայմաններին: Կոնֆլիկտային իրադրություններում ուսանողների ադապտիվ վարքը դիտարկվում է որպես կոնֆլիկտային իրադրություններին ակտիվ հարմարում: Կոնֆլիկտային իրադրություններում վարքի որոշ ռազմավարություններ

(համագործակցություն, մրցակցություն) նպաստում են ուսանողների հարմարման բարձրացմանը, իսկ վարքի այլ ռազմավարություններ (խուսափում)՝ իջեցնում դրա մակարդակը:

Բանալի բառեր՝ հարմարում, կոնֆլիկտ, սոցիալական միջավայր, ուսանող, հարմարում, վարք:

Л. Саргсян

ОСОБЕННОСТИ АДАПТИВНОГО ПОВЕДЕНИЯ СТУДЕНТОВ В ВУЗЕ

Изучение процесса адаптации студентов в новой социальной среде связано с психологическими проблемами высшей школы. Для анализа были представлены основные проблемы, возникающие при адаптации, в частности особенности формирования конфликтных ситуаций и стратегий поведения в ней. Отдельно рассматриваются социальные, социально-психологические основы адаптации. Результаты, полученные в результате исследования, позволяют сделать вывод о том, что решающее значение для студентов в новых социальных условиях имеет активное приспособление человека к изменяющимся условиям внешней среды. Адаптивное поведение студентов в конфликтных ситуациях рассматривается как активная адаптация к конфликтным ситуациям. В конфликтных ситуациях одни стратегии поведения (сотрудничество, соревнование) способствуют повышению уровня адаптации учащихся, а другие стратегии поведения (избегание) снижают уровень адаптации.

Ключевые слова:. адаптация, студент, конфликт, социальная группа, адаптация, поведение.

L.Sargsyan

THE CHARACTERISTICS OF STUDENTS' ADAPTIVE BEHAVIOUR IN UNIVERSITY

The study of the process of adaptation of students in a new social environment deals with the psychological problems of higher education. The article represents the problems of adaptation of students in a new social environment. The main

problems encountered during adaptation, in particular the characteristics of the formation of conflict situations and behavior strategies in it, were presented for analysis. The social, socio-psychological foundations of adaptation are discussed separately. The results obtained from the research allow us to conclude that the active adaptation of the person to the changing conditions of the environment is of decisive importance for students in new social conditions. Adaptive behavior of students in conflict situations is considered as active adaptation to conflict situations. In conflict situations, some strategies of behavior (cooperation, competition) contribute to increasing the level of adaptation of students, and other strategies of behavior (avoidance) decrease the level of adaptation..

Key words: *adjustment, student, conflict, social group, adaptation, behavior.*

Հարմարման հիմնախնդրի ուսումնասիրությունը ժամանակակից հոգեբանության մեջ շարունակական հետազոտությունների և դրանց արդյունքում նոր ձեռքբերումների կարիք ունի: Բուհական հոգեբանության բնագավառում արդի խնդիրներից մեկը վերաբերում է ուսանողների հարմարմանը բուհում: Անձի հարմարման պրոբլեմը վարքաբանական հոգեբանության մեջ ներկայացվում է որպես այս կամ այն իրավիճակում օրգազնիզմի ռեակցիաների և դրանց համախմբի միջոցով իրականացվող գործընթաց, որը նպաստում է շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարվելուն: Այս ուղղության մեջ դիտարկվում է վարքագծային ադապտացիայի երկու եղանակ. Դրանցից մեկը ներառում է պարզ վարքային ռեակցիաներ (կենսաբանական) կամ արձագանքներ շրջակա միջավայրի տարբեր գործոններին, որոնք իրականացվում են կարճաժամկետ իրավիճակներում: Վարքագծային ադապտացիայի երկրորդ եղանակը վարքային արձագանքների նոր, ավելի բարդ ձևերի անկախ ձևավորումն է [3]: Այս տեսանկյունից անձի հարմարումն իրականացվում է անհատի հարմարվողական վարքի մեխանիզմների շնորհիվ:

Հումանիստական հոգեբանության մեջ շեշտը դրվում է անձի վրա՝ որպես եզակի ամբողջական համակարգի, որն ունի ինքնաիրացման հնարավորություն: Այս ուղղության մեջ ադապտացիան հասկացվում է որպես անձի և միջավայրի օպտիմալ փոխազդեցություն, որի նպատակն է ձեռք բերել հասարակության արժեքներին համապատասխանող արժեքների

զարգացման ամենաբարձր որակներ: Փոխազդեցության օպտիմալ բնույթը նրա դինամիկ հատկությունն է, այսինքն՝ այն կարող է խախտվել, ինչը ակտիվացնում է անձի ցանկությունը՝ կրկին հասնելու դրան, սակայն օպտիմալ փոխազդեցության նոր ձեռքբերված վիճակը կարող է տարբերվել նախորդից: Ադապտացիայի գործընթացը կարող է նկարագրվել հետևյալ բանաձևով՝ կոնֆլիկտ – ֆրուստրացիա – հարմարվողականության գործողություններ:

Է. Ֆրոմն [1, 18] առաջարկում է առանձնացնել *ստատիկ և դինամիկ ադապտացիա* եզրույթները: Ստատիկ ադապտացիան համարվում է այնպիսի հարմարվողականություն, որի՝ դեպքում անձի բնավորությունը չի փոխվում, մնում է հաստատուն՝ հնարավոր բացառությամբ որոշ նոր սովորությունների ի հայտ գալուն: Դինամիկ ադապտացիան բնութագրվում է անձի բնավորության մեջ նորագոյացություններով (նոր ձգտումներ, անհանգստություններ և այլն):

Խոսելով ադապտացիայի ֆիզիոլոգիական և հոգեբանական ասպեկտների մասին՝ կարևորում ենք առանձնացնել Ֆ.Բ. Բերեզինի տեսակետը, ըստ որի ադապտացիան իրականացվում է ամեն անգամ, երբ «մարդ-միջավայր» հարաբերություններում փոփոխություններ են տեղի ունենում [4, 2]: Այս փոխակերպումներին ի պատասխան՝ ադապտիվ գործընթացը օպտիմալացնում է մարմնի հոմեոստատիկ վիճակը (կամ ստեղծում է նորը, որը տարբերվում է նախորդից), որի շնորհիվ ձեռք է բերվում ֆիզիոլոգիական գործընթացների և վարքային ռեակցիաների առավելագույն արդյունավետություն:

Ա.Ա. Նալչաջյանը, վարքագծի բացատրություններում մոտենալով ադապտացիայի տեսանկյունից, դիտարկում է մարդու գործունեությունը, որը չի հանգեցնում որոշակի խնդրահարույց իրավիճակի հանգուցալուծմանը, այլ ընդհակառակը, խորացնում է այն, բարդացնում և սաստկացնում տհաճ ապրումները որպես ոչ ադապտիվ վարք [3, 32]: Նման պահվածքը, օրինակ, կոնֆլիկտային իրավիճակներում չի հանգեցնում կոնֆլիկտի լուծման, այլ սրում է այն՝ դժվարացնելով շահերի ու նպատակների իրագործումը:

Համաձայն Ն.Ն. Մելնիկովայի. «Վարքագիծը կարելի է անվանել ադապտիվ, եթե նրա հիմնական նպատակն անհատի և շրջակա միջավայրի միջև արդյունավետ փոխազդեցություն հաստատելն է» [2, 17]: Ադապտիվ վարքի հատուկ ձևերը դասակարգելիս հեղինակն ընդգծում է արտաքին միջավայրի հետ փոխգործակցության գործընթացում մարդու վարքագծի ադապտիվ երեք չափանիշ՝ շփում, հարմարվողական գործընթացի հաջող լինելու համար՝ փոփոխություններ, ակտիվություն: Թվարկված

չափանիշները որոշում են տվյալ անձի ադապտիվ վարքի առանձնահատկությունները: Մտնելով ի սկզբանե հակասական արտաքին միջավայր՝ մարդը կապ է հաստատում դրա հետ և ակտիվ գործողությունների միջոցով փորձում է լուծել ստեղծված իրավիճակը՝ փոխելով իրեն և/կամ միջավայրը՝ հասնելով նոր փոխազդեցության [2, 20]:

Կախված անձի հոգեկան հասունությունից՝ յուրաքանչյուր մարդ ձգտում է իր և շրջակա աշխարհի միջև ներդաշնակության [5, 118]: Մարդկային ցանկացած գործունեություն միտված է որոշակի կարիքի բարելավմանը:

Սոցիալական միջավայրի հետ հարաբերությունները դինամիկ են, ներդաշնակ վիճակը չի կարող երկարաժամկետ լինել: Մարդկային գործունեության մեջ առաջանում են մեծ թվով կոնֆլիկտային իրավիճակներ, որոնք պահանջում են անհապաղ գործողություններ, խնդիրների լուծում՝ տեղեկատվության պակասի, ժամանակի սղության, երբեմն առողջության կամ կյանքին սպառնացող վտանգի պայմաններում: Նման իրողությունը, ընդհակառակը, ստեղծում է լարվածության, անհանգստության, սթրեսի զգացում: Կյանքի դժվարին պայմաններին և կոնֆլիկտային իրավիճակներին ադապտիվ վարքագիծն իրականացվում է փոխազդեցության մեջ միավորված անձի անհատական առանձնահատկությունների շնորհիվ, ինչը հանգեցնում է յուրաքանչյուր մարդու համար նոր, անհատական, վարքագծի ձևերի, որոնց շնորհիվ նա հասնում է առաջադրված խնդիրներին և նախատեսված նպատակների իրականացմանը:

Մարդու անհատական վարքագծի ձևավորումը հնարավոր է նրա տարբեր հատկությունների փոխազդեցության շնորհիվ, որոնք հանդիսանում են անձի կառուցվածքի բաղադրիչները: Հիմնվելով այդ ժամանակ առկա հարաբերակցության ուսումնասիրությունների վրա՝ Բ. Գ. Անանևը բացահայտեց անձի զարգացման հետևյալ մակարդակները, որոնց համաձայն բաշխվում են վարքի բաղադրիչները՝ անձի հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և սոցիալական բնութագրերը: Բաղադրիչների առաջին խումբը ներառում է ադապտիվ վարքի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են, նեյրոդինամիկ բնութագրերը, մարմնի սիմետրիայի առանձնահատկությունները, նյարդային համակարգի տեսակը, խառնվածքը, ֆիզիկական արատները, հիվանդագին շեղումները և դրանց հակումները: Երկրորդ խմբին Բ.Գ. Անանևը վերաբերում է ադապտիվ վարքի այնպիսի որոշիչներին, ինչպիսիք են բնավորության գծերը և հաղորդակցական առանձնահատկությունները, որոնք ձևավորվում են սոցիալական խմբի կյանքի համատեքստում այլ մարդկանց հետ միջանձնային հարաբերությունների գործընթացում: Ադապտիվ վարքի սոցիալական առանձնահատկությունները ձևավորում են վարքի

ռազմավարություն, որոնց օգնությամբ ձեռք են բերվում նպատակներ, գաղափարներ: Այս խմբում առանձնանում է մարդու ինտելեկտուալ, կամային և հուզական-մոտիվացիոն բնութագրերի նշանակալի դերը [6, 268]:

Դիտարկելով կոնֆլիկտային իրադրությունը որպես ադապտացիայի գործընթացի տարր, որը արտացոլում է մարդու և շրջակա միջավայրի պահանջների անհամապատասխանությունը, Կ.Ա. Նիկիտինան [9,192] առաջարկում է ադապտիվ կոնֆլիկտների դասակարգում, որոնք ի հայտ են գալիս ուսանողի կյանքում: Դասակարգումը հիմնված է ադապտիվ գործընթացի հակասությունների վրա: Կոնֆլիկտներ բարձրագույն ուսումնական հաստատությունում, որոնց հիմքում ուսումնական գործընթացին հարմարվելու, ուսուցման առանձնահատկություններին, կրթական և մասնագիտական, սոցիալական և կենցաղային ադապտացիայում առկա հակասություններն են: Կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են ապրելակերպի փոփոխություններով, որոնք ազդում են օրգանիզմի ֆիզիկական և հոգեկան վիճակի վրա: Կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են ուսանողների արժեքային-մոտիվացիոն կողմնորոշումների հակասություններով և ազդում են միմյանց հարաբերությունների վրա: Ներանձնային հակասությունները հիմնված են ներանձնային դժվարությունների վրա, որոնք կարող են դրսևորվել կասկածամտությամբ, անվճռականությամբ, իրավիճակում լուծում գտնելու կամ այն իրականացնելու անկարողությամբ, գործունեության ինտենսիվության նվազմամբ և այլն:

Ուսանողական միջավայրում տարբերակում են կոնֆլիկտների երեք տեսակ՝ *ուսանող-դասախոս* հարաբերություններում, ուսանող-ուսանող հարաբերություններում, *ուսանողական – ուսումնական – վարչական - տնտեսական անձնակազմ* հարաբերություններում: Ուսանողների մոտ կոնֆլիկտային իրավիճակների թվարկված տեսակները դրսևորվում են տարբեր ձևերով՝ պայմանավորված կրթական տարբեր մակարդակներով, տարբեր սոցիալական կարգավիճակով, նպատակներով, հետաքրքրություններով, ինչպես նաև անհատական հոգեբանական բնութագրերի և վարքագծի բազմազանությամբ: Ուսանողների ադապտացիան կյանքի փոփոխություններին տեղի է ունենում որոշակի վարքագծային ռազմավարությունների ընտրության և իրականացման շնորհիվ: Շրջակա միջավայրի հետ փոխգործակցության ընթացքում ուսանողը հարմարվում է առկա պայմաններին և բնութագրերին, ինչը բաղկացած է շրջակա միջավայրին համապատասխան տարբեր ներքին հոգեբանական կարգավորիչների ձևավորմամբ: Ուսանողական խմբում որոշակի գործողությունների ձևավորման և իրականացման վրա ազդում են

ինչպես անձի անհատական հատկությունները և բնութագրերը, այնպես էլ հասարակության զարգացման պայմանները, տեխնոլոգիական առաջընթացը և այն միջավայրը, որի շրջանակներում հարմարվում է անձը:

Կոնֆլիկտայինի իրավիճակում վարքագծային ռեակցիաները բաժանվում են կառուցողական և ոչ կառուցողականի: Կառուցողական ռեակցիաները որոշվում են՝ իրավիճակի լուծման վրա կենտրոնանալով, հստակ նպատակ դնելով, միջանձնային փոխգործակցության բնույթը փոխելու ներքին փոփոխությունների պատրաստակամությամբ և այլն: Որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ և պաշտպանական ռեակցիաների անալոգներ՝ ոչ կառուցողական են համարվում ագրեսիան, ռեագրեսիան, ֆիքսացիան և այլն: Այս տեսանկյունից կարևորում ենք անդրադառնալ սանձի հարմարման պրոբլեմին կոնֆլիկտային իրադրությունում: Ա. Անցուպովը կոնֆլիկտը սահմանում է որպես «մարդկանց միջև փոխազդեցության գործընթացում առաջացած էական հակասությունների լուծման ամենասուր միջոցը, որը բաղկացած է կոնֆլիկտի սուբյեկտների հակազդեցությունից և սովորաբար ուղեկցվում է բացասական հույզերով» [7, 81]:

Ուսանողների ադապտացիայի խնդիրներն ավելի սուր ընթացք են ունենում, երբ ի հայտ են գալիս կյանքի նոր հանգամանքները, գործունեության պայմանները, արտաքին միջավայրից կոնֆլիկտային պայմանները: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ կարելի է խոսել ուսանողների ադապտացիայի մասին որպես բարձրագույն ուսումնական հաստատությունում սոցիալական նոր դերերի և գործունեության ձևերի յուրացման գործընթացի: Միևնույն ժամանակ, խոսքը ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատության՝ որպես ժամանակավոր միջավայրի պայմաններին, դասավանդման նոր մեթոդներին և ուսանողական խմբի նորմերին հարմարվելու, այլև սովորական կյանքի փոփոխված պայմաններին հարմարվելու մասին է:

Ուսանողները հաճախ ստիպված են լինում փոխել իրենց ապրելակերպը՝ հրաժարվելով հին սովորություններից, փոխելով իրենց համոզմունքներն ու վերաբերմունքը, նոր հարաբերություններ կառուցել: Սկսելով սովորել և ներգրավվել սոցիալական նոր հարաբերությունների մեջ՝ անձը շատ բան է շահում և, միևնույն ժամանակ, զրկվում ազատությունից, ինչ-որ կերպ սահմանափակվում: Կյանքի այս փուլի յուրահատկությունն անհատի՝ թե՛ մասնագիտական, թե՛ անձնական ակտիվ զարգացման մեջ է և կապված է արժեքների մշտական վերակառուցման հետ: Ուսանողական տարիքը որոշվում է նաև անձի ինտենսիվ սոցիալականացմամբ, նրա բարձր մտավոր գործառույթների զարգացմամբ, ինտելեկտուալ համակարգի և որպես

անհատականություն ձևավորմամբ: Սոցիալական այս խմբին, հատկապես առաջին կուրսեցիներին բնորոշ են կոնֆլիկտային հարաբերությունները: Ուսումնասիրությունների հիման վրա կարելի է թվարկել ուսանողների միջև միջանձնային կոնֆլիկտների մի շարք պատճառներ:

Սոցիալ-հոգեբանական պատճառները ներառում են «միջանձնային հաղորդակցության գործընթացում տեղեկատվության կորուստը և աղավաղումները, երկու հոգու միջև անհավասարակշիռ դերային փոխազդեցությունը, միմյանց գործունեության և անհատականության գնահատման ձևերի տարբերությունները, լարված միջանձնային հարաբերությունները, իշխանության ձգտումը» [8, 105]: Ինչպես նաև բարոյական նորմերի տարբերություններ, մոտիվների, արժեքների, նպատակների հակասություն, գաղափարական դիրքորոշումների և աշխարհայացքի անհամապատասխանություն, նախանձ, մրցակցություն՝ դասախոսների կամ հակառակ սեռի ուշադրության համար, ֆինանսական կարգավիճակ, խմբում հարմարվելու անկարողություն, հոգեբանական անհամատեղելիություն:

Լ. Ա. Պետրովսկայան սահմանում է կոնֆլիկտում վարքագծի ռազմավարությունը որպես կոնֆլիկտի մասնակցի կողմից ձեռնարկված հնարավոր գործողությունների շարք: Ընդ որում, կոնֆլիկտի մասնակիցների այս գործողություններն ունեն փոխազդեցության բնույթ, որոնք ազդում են միմյանց վրա և փոխկապակցված են: Նպատակին հասնելու համար կոնֆլիկտային իրադրություններում ուսանողների ադապտիվ վարքի անհատական-հոգեբանական որոշիչը վարքի ռազմավարությունն է, որն ընտրվում է իրավիճակի, հակառակորդի, հնարավորությունների, անցյալի փորձի, վերլուծության և գնահատման հիման վրա [7, 127]:

Հետազոտության միջոցով նպատակ ենք ունեցել բացահայտելու կոնֆլիկտային իրադրությունում ուսանողների ադապտիվ վարքի առանձնահատկությունները, փորձարարական հետազոտության շրջանակներում բացահայտել ուսանողների ադապտացիայի և վարքի ռազմավարությունների միջև փոխկապակցվածությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեբանական թեստավորման մեթոդը՝ Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկան և Ք. Թոմասի՝ անձի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորաշման հարցարանը՝ առաջին կուրսի 40 ուսանողների հետ, 2021թ-ին, իսկ ստացված արդյունքները ենթարկել կոռելացիոն վերլուծության:

Կոնֆլիկտային վարքի հակվածության և ադապտացիայի փոխհարաբերությունների կոռելացիոն վերլուծության արդյունքում պարզ է

դառնում, որ ադապտացիան և կոնֆլիկտից խուսափումն ունեն հակադարձ հարաբերակցություն (r = -0.46), այսինքն՝ կոնֆլիկտային իրադրությունում վարքի այս ռազմավարության օգտագործումը հավանական է, որ վատթարացնում է ադապտացիոն գործընթացը, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ ուսանողների այս խմբում բացակայում է համագործակցության և սեփական նպատակներին հասնելու ցանկությունը: Ստացել ենք ադապտացիայի և մրցակցության միջև դրական կապ (r = 0,47), որը կարելի է բացատրել առաջին հերթին ուսանողների սեփական նպատակներին հասնելու ցանկությամբ: Եվ դրական հարաբերակցություն է նկատվում ադապտացիայի և կոնֆլիկտային իրավիճակներում համագործակցության ռազմավարության միջև (r = 0,48), երբ կոնֆլիկտային իրավիճակի մասնակիցները գալիս են մի ընդհանուր որոշման, որը լիովին բավարարում է երկու կողմերի շահերը, ինչի շնորհիվ խմբի պահանջները բավարարված են համարվում, և անձնական կարիքներն ու շահերը նույնպես բավարարված են, հետևաբար, կարելի է պնդել, որ կոնֆլիկտային իրադրություններում վարքի ռազմավարություններից խուսափումը հանգեցնում է ադապտացիայի ընթացքի դժվարությունների, քանի որ անձի կարիքներն ու շահերը չեն բավարարվում, մինչդեռ համագործակցությունն ու մրցակցությունը մեծացնում են ուսանողի անձի ադապտացիան, քանի որ հնարավորություն է ստեղծվում իրագործվելու նրանց նպատակներն ու կարիքները: Ելնելով վերոգրյալից՝ ադապտացիայի տեսանկյունից վարքի ռազմավարություններից համագործակցությունն ու մրցակցությունը կարելի է համարել առավել արդյունավետ, իսկ խուսափման վարքագծի ռազմավարությունը՝ ոչ արդյունավետ: Ստացվում է, որ ադապտացիան ուսանողի անձի ակտիվ հարմարման գործընթացն է փոփոխվող միջավայրի պայմաններին՝ նպատակ ունենալով բավարարել սեփական պահանջմունքները և դրական հարաբերություններ հաստատել ուսանողների հետ: Կոնֆլիկտային իրադրություններում ուսանողների ադապտիվ վարքը դիտարկվում է որպես կոնֆլիկտային իրադրություններին ակտիվ հարմարում:

Այսպիսով՝ ուսանողների ադապտիվ վարքը որոշվում է անհատական-հոգեբանական առանձնահատկություններով: Կոնֆլիկտային իրադրություններում վարքի որոշ ռազմավարություններ (համագործակցություն, մրցակցություն) նպաստում են ուսանողների ադապտացիայի մակարդակի բարձրացմանը, իսկ վարքի այլ ռազմավարություններ (խուսափում) իջեցնում են ադապտացիայի մակարդակը: Ուսանողները, ովքեր բնութագրվում են ադապտացիայի միջին մակարդակով, հակված են կոնֆլիկտում վարքագծի բոլոր

ռազմավարությունները տարբեր չափով օգտագործել: Ուսանողները, ովքեր բնութագրվում են ադապտացիայի բարձր մակարդակով, հակված չեն օգտագործել փոխզիջման, խուսափման, վարքային ռազմավարությունները: Հարկ է նշել, որ համագործակցության և մրցակցության վարքային ռազմավարությունները բնորոշ են ադապտացիայի միջին և բարձր մակարդակ ունեցող ուսանողներին: Հաշվի առնելով, որ կոնֆլիկտային իրադրություններում վարքի ռազմավարությունը՝ փոխզիջումը, խուսափելը և զիջումը բնորոշ են հարմարվողականության միջին մակարդակ ունեցող ուսանողներին և բնորոշ չեն հարմարվողականության բարձր մակարդակով բնութագրվող ուսանողներին, կարելի է եզրակացնել, որ այդ վարքագծերը, ռազմավարությունները նպաստում են ուսանողների հարմարվողականության սոցիալական նոր միջավայրում:

Գրականություն

1. Лейбин В.М., Словарь-справочник по психоанализу. Серия «Psychology» /В.М. Лейбин. – АСТ, АСТ МОСКВА. – М., 2010. – 1500 с.
2. Мельникова Н.Н., Классификация стратегий адаптивного поведения /Н.Н. Мельникова //Теоретическая, экспериментальная и практическая психология: сборник научных трудов под ред. Н.А. Батурина. – Челябинск: ЮУрГУ, 2001 – Т.3. –16-29 с.
3. Налчаджян А.А., Психологическая адаптация: механизмы и стратегии. 2-е изд. /А.А. Налчаджян. – М.: Эксмо, 2010. – 368 с.
4. Березин Ф.Б., Психическая и психофизиологическая адаптация человека. – Л.: Наука, 1988. – 270 с.
5. Секач М.Ф., Проблемы психологии в обеспечении личной безопасности человека / М.Ф. Секач //Человеческий капитал I.No 3 (39). – 2012. –117 – 121 с.
6. Ананьев Б.Г. Интеллектуальное развитие взрослых людей как характеристика обучаемости (к постановке вопроса) /Б.Г. Ананьев //Советская педагогика. – 1969.
7. Анцупов А.Я., Шипилов А.И., Конфликтология. – СПб.: Питер, 2013. – 591 с.
8. Голованова А.А., Фадеева Т.Ю., Субъектно-личностные предикторы социально-психологической адаптации студентов. /А.А. Голованова, Т.Ю. Фадеева //Вестник

московского городского педагогического университета. Серия: педагогика и психология. – М.: МПГУ. 2016.
9. Никитина К.А., Типология адаптационных конфликтов студентов первого курса /К.А. Никитина //Психология и педагогика: методика и проблемы практического применения. – 2010.

Նյութը ներկայացվել է 08.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ ավագ դասախոս, հ.գ.թ., դոցենտ
E-mail: ara.firyan@mail.ru

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝ «ԵՐԲ ԱՐԵՎԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՇՈՂԱԼ» ԽՄԲԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՇԱՐՔԻՑ

Սույն աշխատանքում ներկայացված են պատումներ և վերլուծություններ՝ «Երբ արևը դադարում է շողալ» խմբային աջակցող հեղինակային հոգեթերապիայի շարքից: Հեղինակային թերապևտիկ աշխատանքներն իրականացվել են Հադրութից տեղահանված դեռահասների շրջանում: Հոգեթերապևտիկ խմբի ձևավորման համար կիրառվել են ախտորոշման և մոնիթորինգի գործիքներ, որոնք ընդունված են Առողջապահության համաշխարհային կազմակեր-պության արձանագրություններով: Խմբի հետ աշխատանքում կիրառվել են տարատեսակ տեխնիկաներ, պրոյեկտիվ մեթոդներ, վարժություններ և խթանող առաջադրանքներ:

Ձևավորել ենք 46 դեռահասներից կազմված ռիսկի խումբ, որը բաժանվել է 3 թերապևտիկ խմբերի:

Հիմնական ախտանշաններն են կենտրոնանալու, հիշողության և ուսումնառության հետ կապված խնդիրները: Կապված նեյրոկոգնիտիվ ոլորտի հետ՝ տրամադրության անկումը, հուսահատությունը, մեղքի զգացումը: Անձի դեպրեսիվության ոլորտից դիտարկվել են սնվելու և քնի հետ կապված խնդիրները: Եվ առհասարակ՝ շարունակական սթրեսը, անհանգստությունը, վախերը, օբսեսիվ-կոմպուլսիվ

խանգարումները, սոցիալական օտարումը, դեվիանտ վարքագիծը, ալկոհոլի և ծխախոտի չարաշահումը, էդդետիկ վերապրումը, տրավմատիկ ազդակներից խուսափումը և այլն:

Խմբի հետ աշխատանքում կիրառվել են տարբեր տեխնիկաներ՝ «ապահով վայր», «հույզեր և զգացողություններ», «ինքնադիտարկման վարժություններ գեշտալտ թերապիայից», «բազային տեխնիկաներ CBT-ից»:

Խմբային աջակցող թերապևտիկ աշխատանքների շրջանակներում մեր կողմից իրազեկվել է նաև Մորիտա-թերապիայից հետաքրքիր վարժության վերաբերյալ:

Մոնիտորինգի CGI գործիքով, որը ընդհանուր կլինիկական տպավորության սանդղակ է, գնահատել ենք խմբի անդամների վիճակի ծանրությունը:

Բանալի բառեր՝ *խմբային աջակցող հոգեթերապիա, կարոտ, մեղքի զգացում, պատերազմ, տեղահանված դպրոցականներ*

А.Фирян

МЕТОДИЧЕСКИЕ УКАЗАНИЯ ИЗ РЯДА ГРУППОВОЙ ПОДДЕРЖИВАЮЩЕЙ АВТОРСКОЙ ПСИХОТЕРАПИИ «КОГДА СОЛНЦЕ ПЕРЕСТАЕТ СИЯТЬ»

В статье представлены нарративы и анализы из ряда групповой поддерживающей авторской психотерапии «Когда солнце перестает сиять». Авторские терапевтические работы проведены в кругу подростков, переселенных из Гадрута. Для формирования психотерапевтической группы использовались инструменты диагностики и мониторинга, принятые протоколами Всемирной организации здравоохранения. В работе с группой использовались различные техники, проективные методы, упражнения и стимулирующие задания.

Нами была сформирована группа риска из 46 подростков, которая была разделена на 3 терапевтические группы.

Основными симптомами являются проблемы с концентрацией внимания, памятью и обучением. Относящиеся к нейрокогнитивной сфере: депрессия, безысходность, чувство вины. Проблемы с едой и сном

рассматривались из депрессивной зоны человека. И вообще, постоянный стресс, тревога, страхи, обсессивно-компульсивные расстройства, социальная отчужденность, девиантное поведение, злоупотребление алкоголем и табаком, эйдетическое переживание, избегание травматических импульсов и т.д.

В работе с группой использовались различные техники: «безопасное место», «эмоции и чувства», «упражнения по самонаблюдению из Гештальт-терапии», «базовые техники из CBT».

В рамках групповых поддерживающих лечебных мероприятий мы также рассказали об интересном упражнении из Морита-терапии.

Оценивали тяжесть состояния участников группы с помощью инструмента мониторинга CGI, представляющего собой шкалу общего клинического впечатления.

Ключевые слова: *групповая поддерживающая психотерапия, тоска, чувство вины, война, перемещенные школьники*

A.Firyan

METHODOLOGICAL INSTRUCTIONS FROM COLLECTIVE SUPPORTIVE AUTHOR'S PSYCHOTHERAPY “WHEN THE SUN STOPS SHINING”

This article presents narratives and analyzes from the collective supportive author's psychotherapy "When the Sun Stops Shining". Psychotherapeutic work was carried out with teenagers resettled from Hadrut. To form a psychotherapeutic group, diagnostic and monitoring tools adopted by the protocols of the World Health Organization were used. In working with the group, various techniques, exercises and stimulating tasks were used.

We formed a risk group of 46 teenagers, which was divided into 3 therapeutic groups.

The main symptoms are problems with concentration, memory and learning. Related to the neurocognitive sphere: depression, hopelessness, guilt. Eating disorders and sleeping problems were considered from the person's depressive area. And in general, continuous stress, anxiety, fears, obsessive-compulsive disorders, social alienation, deviant behavior, alcohol and tobacco abuse, eidetic reliving, avoidance of traumatic impulses, etc.

Various techniques were used in the work with the group: "safe place", "emotions and feelings", "self-observation exercises from Gestalt therapy", "basic techniques from CBT".
During supportive therapeutic activities, we also talked about an interesting exercise from Morita therapy.
The severity of the condition of the group members was assessed using the CGI monitoring tool, which is a scale of the overall clinical impression.
We compared the obtained results with the data related to the mental health of non-resettled schoolchildren of the same age group, which we collected from the schools of Stepanakert.
Key words: *group supportive psychotherapy, longing, guilt, war, displaced schoolchildren*

Հոգեբանական աջակցության ծրագրի շրջանակում իրականացրել ենք գիտահետազոտական և հոգեթերապևտիկ աշխատանք, որը միտված է 44-օրյա պատերազմի հետևանքով Հադրութից տեղահանված 98 դեռահասների հոգեկան առողջության նախնական գնահատմանը և հարմարվողական մեխանիզմների ակտիվացմանը: Օգտագործել ենք ախտորոշման, սկրինինգի և մոնիտորինգի գործիքներ, կատարել ենք համեմատական և մաթեմատիկական վերլուծություն: Արդյունքում ձևավորել ենք 46 դեռահասներից կազմված ռիսկի խումբ, որը բաժանվել է 3 թերապևտիկ խմբերի:Հիմնական ախտանշաններն են կենտրոնանալու, հիշողության և ուսումնառության հետ կապված խնդիրները: Կապված նեյրոկոգնիտիվ ոլորտի հետ՝ տրամադրության անկումը, հուսահատությունը, մեղքի զգացումը: Անձի դեպրեսիվության ոլորտից դիտարկվել են սնվելու և քնի հետ կապված խնդիրները: Եվ առհասարակ՝ շարունակական սթրեսը, անհանգստությունը, վախերը, օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարումները, սոցիալական օտարումը, դեվիանտ վարքագիծը, ալկոհոլի և ծխախոտի չարաշահումը, էյդետիկ վերապրումը, տրավմատիկ ազդակներից խուսափումը և այլն:

Բերենք օրինակ մեր գործնական հոգեբանական աշխատանքից, որը նաև կարող է ծառայել իբրև մեթոդական ցուցում գործնական հոգեբանական աշխատանքները իրականացնելու գործընթացում:

Եվ այսպես. դեռահասներից Ա. Մ-ն ունեցել է տրավմայի հետ կապված լսողական հալյուցինացիաներ: Աշխատանքը իրականացրել ենք հետևյալ ձևաչափով.հաջորդաբար որոշել ենք առաջնային ախտանիշների տևողությունը: Մոնիտորինգի CGI գործիքով, որը ընդհանուր կլինիկական

տպավորության սանդղակ է, գնահատել ենք խմբի անդամների վիճակի ծանրությունը[1]: Նախ փաստենք, որ CGI սանդղակն ունի երկու բաղադրիչ .

-CGI-ծանրություն (վիճակի ծանրության գնահատում),

-CGI-բարելավում (վիճակի դինամիկայի գնահատում)։

Ստացած արդյունքները համեմատել ենք ստուգիչ, միևնույն տարիքային խմբի չտեղահանված, դպրոցականների հոգեկան առողջությանը վերաբերող տվյալների հետ, որոնք հավաքագրել ենք Ստեփանակերտի դպրոցներից: Տեղահանված դեռահասների մոտ տրավմատիկ սթրեսային խանգարման ախտանշաններից բացի հոգեկան առողջության մյուս ցուցանիշները գրեթե նույնական են՝ մշտական բնակության վայրում գտնվող իրենց հասակակիցների ցուցանիշների հետ: Սա բնավ չի նշանակում, որ տեղահանված դեռահասների և մշտական բնակավայրերում ապրող իրենց հասակակիցների մտահոգությունները նույնն են: Իհարկե, դա այդպես չէ: Բայց դրանք ախտաբանական էլ չեն կարող համարվել:

Խմբային թերապիայի ընթացքն ու բովանդակությունը

Բնակության մշտական վայրը կորցրած երեխաների գրեթե բոլոր հույզերը որոշակի առնչություն ունեն պատերազմական գործողությունների և/կամ դրանց հետևանքների հետ: Օրինակ՝ տխրության ամենաշեշտադրված պատճառը կապված է հարազատ գյուղի կորստի, այնտեղ անցկացրած օրերի և անցյալի տպավորությունների հետ: Ուրախության ամենաշեշտադրված հույզը ապրել են, երբ գրկել են պատերազմից վերադարձած իրենց հարազատներին:

Խմբի աղջիկներից մեկը՝ Գ. Ա.-ն, ում հայրը անհետ կորել է պատերազմի ընթացքում, ասաց, որ երազում հաճախ է հոր հետ զրուցում վերջինս ասում է. «Բալա՛ս, քեզ լավ կպահես»: Մինչև պատերազմն էլ միշտ նույն բանն էր ասում: Ինչպես նշում է Գ.Ա.-ն, երբ ինչ-որ մեկնիրեն ասում է «Բալա՛ս» կամ «Քեզ լավ կպահես», երկակի զգացումներ է ունենում. մի պահ ետ է դառնում անցյալ, և իրեն թվում է, թե հայրն է խոսում. հրճվում է, աչքերը փայլում են, բայց հետո այդ փայլը փոխարինվում է արցունքներով, իսկ հոգին պատվում է տխրությամբ, որովհետև իրականությունն այլ է:

Խմբային աշխատանքի համատեքստում իրականացված պրոյեկտիվ մեթոդիկաների վերծանումը մեր առջև բացում է հետևյալ պատկերը. խմբի անդամներից շատերը, թղթի վրա պատկերելով մի վայր, որտեղ իրենց երջանիկ և ապահով են զգում, հայրենի տնից բացի նկարում են նաև ծառ՝ հաստ բնով և ընդգծված արմատներով: Կարծում ենք, որ ենթագիտակցության այս արտացոլումը խոսում է այն մասին, որ պատկերած ծառերի պես, նրանք ևս շարունակում են կառչած մնալ իրենց

[1] *Всемирная организация здравоохранения, Руководство mhGAP-IG, Версия 2.0*.

բնակավայրին: Իսկ հոգեբանական դիտանկյունից՝ կառչած են մնում անցյալից: Լսելով այս աղջնակին և խմբի մյուս անդամներին, ընկալելով նրանց հուզական աշխարհի նրբությունները՝ հավաստում ենք, որ նրանց հարազատների հետ անհետ կորել է նաև իրենց կյանքի զգալի մասը:

Խմբի տղաներից Վ.Հ.-ն էլ կիսվեց իր հետևյալ հուշերով.

«Հիշում եմ մեր փողոցով անցնող նեղ ու քարքարոտ ճանապարհը, որտեղ տղաներով օրուգիշեր կռիվ-կռիվ էինք խաղում: Հիշում եմ բակային քեֆերը, որոնց ժամանակ մեզանից յուրաքանչյուրն առաջինն ուտում էր ուրիշի բերածը: Հիշում եմ նաև մոտակայքում գտնվող անտառը, որտեղ ընկերներով կորչում էինք մինչև մութն ընկնելը, իսկ տուն դառնալիս էլ, մայրիկների, մեր տնական բացակայությամբ պայմանավորված զայրույթը մեղմելու համար, հավաքում էինք այդ ձորերի ամենաչքնաղ մանուշակները և կեղտոտ ու մի քիչ պատառոտված, բայց մեջքի հետևում կախարդական ծաղկեփունջը բռնած՝ մոտենում էինք տան շեմին»:

Առաջին հայացքից այս պատումներում արտասովոր ոչինչ չկա: Նմանօրինակ հուշեր շատերս ունենք: Տարօրինակն այն է, որ այդ հիշողությունները պատկանում են մի տղայի, որն ընդամենը 13 տարեկան է: Հետաքրքրական իրողություն է. մանուկ լինելով՝ մանկական հուշեր ունենալը, ինչը ի զորու է հոգեկան աշխարհումդ ամեն բան քարուքանդ անել և փոխել քեզ:

Խմբի հետ աշխատանքում կիրառվել են տարբեր տեխնիկաներ՝ «ապահով վայր», «հույզեր և զգացողություններ», «ինքնադիտարկման վարժություններ գեշտալտ թերապիայից», «բազային տեխնիկաներ CBT-ից»[1]:

Խմբային աջակցող թերապևտիկ աշխատանքների շրջանակներում մեր կողմից իրազեկվել է նաև Մորիտա-թերապիայից հետաքրքիր վարժության վերաբերյալ [2]:

Վարժության իրականացման համատեքստում հրահանգավորվում է խմբի անդամներին՝ պատկերացնել, որ զրկվել են այն ամենից, ինչ ներկայում իրենց է պատկանում: Ենթադրյալ պատկերացմամբ՝ սեփական մարմնից, զգացմունքներից, հիշողությունից, ընտանիքից, ունեցվածքից, ընդունակություններից և այլն: Այնուհետև առաջարկվում էր ըստ առաջնահերթության նշել այն ամենը, ինչ կցանկանային վերադարձնել՝ անպայմանորեն փորձելով հիմնավորել դրանցից յուրաքանչյուրի

---

[1] *Лихи Р., Техники когнитивной психотерапии, 2020г., 656 стр.*

4 Hakobyan N., Khachatryan A., Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models, - 2022, 6(2), pp. 94-102.

կենսական կարևորությունն ու նշանակալիությունը իրենց համար: Խմբի անդամները, որոնք Հադրութից էին, համաձայնության եկան առաջինը վերադարձնել հիշողությունը՝ հիմնավորելով դա, տվյալ դեպքում, Հադրութը հիշելու անհրաժեշտությամբ: Երկրորդը՝ համաձայնեցին վերադարձնել մարմինը և շարժվելու ընդունակությունը, որպեսզի ընձեռնված հնարավորության դեպքում կարողանան գնալ Հադրութ: Երրորդ հերթին, իրենց հայրենի բնակավայրը ևս մեկ անգամ տեսնելու ակնկալիքներով՝ որոշեցին վերստանալ տեսողությունը:

Այս երեխաների արծարծած գրեթե բոլոր թեմաները կապված են Հադրութի հետ: Առաջին հանդիպումների ընթացքում մենք կասկածամտությամբ էինք մոտենում այս երևույթին՝ մտածելով, որ ամենայն հավանականությամբ խումբը տվյալ հարցում հետևում է խմբի նշանավորների և կամ առաջինը արտահայտվողների օրինակին: Այս ենթադրությունները և դրանց հետ կապված խմբային տրամադրություններն ու խմբի կառուցվածքը պարզելու համար՝ հանդիպումների ներածական մասում ներառեցինք սոցիոմետրիկ վարժություններ և մի քանի անգամ զրույցը վերսկսելու առաջարկով դիմեցինք խմբային տրամադրության վրա քիչ ներգործություն ունեցող, համեմատաբար անհաղորդ երեխաներին: Հարկ է նշել, որ այս մոտեցումը փոփոխությունների չի հանգեցրել, և խոսույթի բովանդակությունը մնացել է նույնը:

Երրորդ հանդիպմանը, երեխաների առաջարկությամբ խմբին միացավ իրենց ուսուցչուհիներից մեկը: Այդ կինը, որն արտաքուստ 40-45 տարեկան էր, հուսահատ և թախծոտ տեսք ուներ. նա էլ իր հարազատի կորստի ցավն էր ապրում: Թղթի վրա պատկերելով և այնուհետև խմբին ներկայացնելով իր ապահով վայրը՝ վերջինս առանձնապես նշեց հետևյալը.

- «Այստեղ պատկերել եմ մեր գյուղի տունը, տեսարանը, որը բացվում էր մեր պատշգամբից, դպրոցը՝ որտեղ դասավանդել եմ նախքան պատերազմը, կանաչով պատված արահետները, կապույտ երկինքը»:

Վերջում աչքերը լցվեցին, և հոգու ցավը կոկորդում խեղդելով՝ հավելեց.

-«Այստեղ էլ, արև եմ նկարել: Հադրութում միշտ արև կար»:

Լսելով այդ կնոջը՝ հասկացա, որ այս մարդիկ Հադրութում ավելին են թողել, քան իրենց տունը, աշխատանքը և ունեցվածքը: Նրանք Հադրութում իրենց «արևներն» են թողել:

Հանդիպումների ընթացքում կարոտի թեման հաճախ էր շոշափվում: Երեխաներից մեկը՝ Ն.Հ.-ն, այդ կապակցությամբ մեկնաբանեց.

-«Երբ Հադրութում էինք, երեկոյան տան մերձակայքի անտառից լսվող կկվի կանչը խանգարում էր քուն մտնել: Հիմա էլ գիշերները լավ չեմ քնում, բայց արդեն՝ այդ թռչունների երգի կարոտից»:

Խմբին միացած ուսուցչուհին, լսելով հուսահատված երեխաների թախծոտ պատմությունները, կարծես մոռանալով սեփական դժբախտությունները, իր հոգացող ձեռքն էր մեկնում երեխաներին՝ քաջալերելով և լավատեսությամբ համակելով վերջիններիս: Երբ նա առաջին անգամ, բռնեց երեխաների պարզած ձեռքը և միացավ խմբին, հավանաբար ոչինչ չգիտեր իր դերակատարության մասին, բայց հետագայում, հիանալի կերպով իրագործեց իր «փրկարար» առաքելությունը:

Վերջին հանդիպման ժամանակ նա հետևյալ մտքերն արտաբերեց.

- «Մինչև խմբային հանդիպումները ես ինձ թույլ չէի տալիս ծիծաղել կամ ուրախ լինել: Ատում էի բնությունը, որը շարունակում էր ծաղկել ու բողբոջել, ատում էի թռչունների ուրախալից ծլվլոցը, ատում էի արևը, որը դավադրաբար շարունակում էր շողալ, և հասկանալ չէի կարող մարդկանց, որոնք կարող էին ուրախ լինել ու տարբեր առիթներով իրենց բակերում կրակ վառել»:

Ավարտելով խմբի հետ աշխատանքը՝ մենք չէինք դադարում մտածել նրանց շոշափած թեմաների շուրջ: Որոշ հարցերի վերաբերյալ խոկումները մեզ հանգիստ չէին տալիս: Խմբի բոլոր անդամների մոտ նկատվում էր մեղքի ուժեղ զգացում: Չէինք հասկանում, թե կոնկրետ ինչում են խմբի անդամներն իրենց մեղավոր զգում: Նրանք էլ պատրաստի ոչ մի պատասխան չունեին:

Միայն հետո հասկացանք, որ նրանք իրենց մեղավոր են համարում՝ բաբախող սրտերի, կյանքը զգալու և առիթից առիթ ժպտալու համար:

Ուսուցչուհու պատումներից.

-«Այսօր, դուրս գալով տնից՝ ես ինձ որսացի այն մտքի վրա, որ կրկին հիանում եմ բնության գեղեցկությամբ, իսկ դեմքիս վրա էլ զգում եմ արևի ջերմությունը: Գիտեք, մեկ ամսից փոքր տղայիս ծննդյան տարեդարձն է, և ես որոշեցի, որ այս անգամ այն կտոնենք այնպես, ինչպես առաջներում էինք տոնում՝ մինչև պատերազմը»:

-«Հիմա ես գիտակցում եմ, որ փախչելով կենդանի ամեն ինչից՝ ես անհաջող փորձեր էի անում մոտ լինել նրանց, ովքեր արդեն չկան»:

Հ.Գ.

Ապրելն ու մեռնելը այնքան անհամատեղելի են, որ ոչ մեկին դեռ չի հաջողվել մեռած ապրել: Հավատացեք, այստեղ շատերն են փորձել:

Գրականություն

1. Hakobyan N., Khachatryan A., Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models, - Նաիրի ք. Երևան ,2022, 6(2), 94-102.
2. Всемирная организация здравоохранения, Руководство mhGAP-IG, Версия 2.0, Европейское региональное бюру. Женева, 2016г.
3. Лихи Р., Техники когнитивной психотирапии, 2020г., изд. «Бомбора», 656 стр.

Նյութը ներկայացվել է 19.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 314 /316/

Միգրացիայի սոցիոլոգիա

Անդրանիկ ՇԱՀԻՆՅԱՆ
ՇՊՀ հիմնադրամի «հոգեբանության և սոցիոլոգիայի» ամբիոնի դասախոս, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի անդամ, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի անդամ
e-mail. shahinyan_90@mail.ru

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներկայացվող հոդվածում քննվել են ***աշխատուժի միջազգային միգրացիայի*** *պատճառներն ու տեսանեթոդական չափանիշները, արդի տեսություններն ու հայեցակարգերը, լուսաբանվել կարգավորման և վերահսկողության ժամանակակից մեխանիզմներն ու դրանց ազդեցությունը երկրի զարգացման գործընթացում: Ուսումնասիրվել են միգրացիոն քաղաքականության դորտում աշխատանքային միգրացիայի կատարելագործման միտումները, մասնավորապես՝ պետական մակարդակով դրա կանոնակարգման գերակայություններն ու հիմնական ուղղությունները: Դիտարկվել են աշխատանքային միգրացիայի կարգավորման հիմնական սկզբունքները, համապատասխան գործընթացների պետական կարգավորմանը բնորոշ հատկություններն համակարգող մարմինները ՀՀ-ում:*

Հոդվածի իրականացման հիմնական նպատակներից է եղել միգրացիոն տեսությունների և դրանցում առկա փաստերի համեմատական վերլուծությունն ու գնահատումը: Հոդվածում առանցքային ձևով կարևորել ենք միգրացիոն շարժընթացների արդյունքում ստեղծված սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական անբարենպաստ իրավիճակի վերաբերյալ փաստարկները: Վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել պատասխանել մի շարք հարցերի: Մասնավորապես պարզվել է, թե ինչպես են միգրացիոն տեղաշարժերի պատճառով բնակչության վերարտադրության օրինաչափությունները

ամբողջությամբ և դեմոգրաֆիական գործընթացներից յուրաքանչյուրը մասնակիորեն ազդում սոցիումի զարգացման վրա:

Միջազգային աշխատանքային միգրացիոն գործընթացների զարգացման հեռանկարների ներուժը չափազանց մեծ է և բովանդակում է աճի առաջանցիկ տեմպերի ապահովում, գործազրկության հիմնախնդրի կարգավորում, սոցիալական կառուցվածքի, կյանքի որակի փոփոխություններ, ինչը, առաջին հերթին, կանդրադառնա եկամուտների աճի, կրթության որակի բարելավման, պարենային ապահովության, առողջապահության, աղքատության ծավալների կրճատման, շրջակա միջավայրի պահպանման, հավասար հնարավորությունների երաշխավորման, անձնական ազատությունների ընդլայնման վրա: Արտաքին աշխատանքային միգրացիայի պետական և միջազգային կարգավորումներն այսօր հանդիսանում են միգրացիայի սոցիոլոգիայի ժամանակակից հիմնախնդիրներից, որի բազմակողմանի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն վերլուծական հոդվածը:

Հոդվածը կարող է օգտակար լինել միգրացիայի հարցերով զբաղվող մասնագետներին, ասպիրանտներին, ուսանողներին, ընթերցողների լայն շրջանակներին:

Բանալի բառեր՝ *աշխատանքային միգրացիա, միգրացիոն քաղաքականություն, միջազգային միգրացիա, ռեէմիգրացիա, սոցիալական քաղաքականություն:*

А. Шагинян

РОЛЬ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ СТРАНЫ В КОНТЕКСТЕ АНАЛИЗА МИГРАЦИОННЫХ ТЕОРИЙ

В представленной статье рассматривались причины и теоретическо-методические критерии международной трудовой миграции, современные теории и концепции, освещались современные механизмы регулирования и контроля и их влияние на процесс развития страны. Изучены тенденции совершенствования трудовой миграции в сфере миграционной политики, в частности, приоритеты и основные направления ее регулирования на государственном уровне. Наблюдались основные принципы регулирования трудовой миграции, особенности государственного регулирования соответствующих процессов и координирующих органов в РА. Статья может быть полезна специалистам, занимающимся вопросами миграции, аспирантам, студентам и широкому кругу читателей.

Одной из основных целей статьи был сравнительный анализ и оценка миграционных теорий и содержащихся в них фактов. В статье ключевым образом выделили аргументы относительно неблагоприятной социально-экономической и демографической ситуации, созданной в результате миграционных тенденций. Изучение вышеуказанных проблем дало возможность ответить на ряд вопросов. В частности, было выяснено, как закономерности воспроизводства населения в целом и каждый из демографических процессов частично влияют на развитие общества за счет миграционных движений.

Потенциал перспективы развития процессов международной трудовой миграции чрезвычайно велик и включает в себя обеспечение поступательных темпов роста, решение проблемы безработицы, изменения социальной структуры, качества жизни, что, в первую очередь, повлияет на повышение в доходах, повышении качества образования, продовольственной безопасности, здравоохранении и сокращении бедности, на сохранении окружающей среды, обеспечении равных возможностей, расширении личных свобод. Государственное и международное регулирование иностранной трудовой миграции является на сегодняшний день одной из современных проблем социологии миграции, многогранному изучению которого посвящена данная аналитическая статья.

Ключевые слова: *трудовая миграция, миграционная политика, международная миграция, реэмиграция, социальная политика.*

A. Shahinyan

THE ROLE OF LABOR MIGRATION IN THE PROCESS OF DEVELOPMENT OF THE COUNTRY IN THE CONTEXT OF THE ANALYSIS OF MIGRATION THEORIES

The presented article examined the reasons for the theoretical criteria for international labor migration, modern theories and concepts, highlighted modern mechanisms for regulation and control and their impact on the country's development process. The trends in the improvement of labor migration in the field of migration policy, in particular, priorities and the main directions of its regulation at the state level, have been studied. The basic principles of regulation of labor migration, features of state regulation of the relevant processes and coordinating bodies in the RA were observed.

One of the main objectives of the article was a comparative analysis and evaluation of migration theories and the facts available

in them. In the article, we noted the importance of arguments regarding the socio-economic and demographic unfavorable situation which was created as a result of migration processes.

The study of these issues made it possible to answer several questions. In particular, it was found out how the patterns of reproduction of the population due to migration shifts in general and each of the demographic processes partially affect the development of society.

The potential of the prospects for the development of international labor migration processes is extremely large and contains ensuring progressive growth rates, resolving the problem of unemployment, changing the social structure, quality of life, which, first of all, will affect income growth, improving the quality of education, food security, healthcare, reducing poverty, preserving the environment, guaranteeing equal opportunities, expanding personal freedoms.

State and international regulation of external labor migration today is one of the modern problems of the sociology of migration, the comprehensive study of which is devoted to this analytical article.

The article may be useful to specialists involved in migration issues, graduate students, students and a wide range of readers.

Key words: *work migration, migration policy, international migration, re-emigration, social politics.*

21-րդ դարում զարգացման առանձնահատկություն է համարվում բնակչության լայնածավալ միգրացիան, և, առաջին հերթին, աշխատանքային միգրացիան՝ մարդկանց շարժը՝ կապված բնակության վայրի և աշխատանքի փոփոխության հետ: Այն ձևավորում է նոր աշխատանքի շուկաներ և նոր ֆինանսական ու սոցիալ-տնտեսական հարաբերություններ: Հայաստանն ունի միգրացիայի երկար պատմություն: Կանոնավորն և՛ հիմնականում անկանոն արտագաղթը այն կարևոր երևույթներից է, որը ազդում է երկրի բոլոր կողմերի վրա: Տնտեսության զարգացումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, կայուն տնտեսական աճը Հայաստանի Հանրապետությունում խիստ կապված են նրա միգրացիոն հոսքերի և աշխատուժի վերարտադրության, զբաղվածության զարգացման միտումների հետ: Ներկայացվող հոդվածի ***հիմնական նպատակն է.*** տեսամեթոդական ուսումնասիրությունների սոցիոլոգիական վերլուծության հիման վրա ներկայացնել արդի աշխատանքային միգրացիոն շարժընթացը, որը դիտարկվում է որպես երկրի զարգացման գործոն:

Խնդրո առարկա՝ ***«Աշխատանքային միգրացիայի դերը երկրի զարգացման գործընթացում միգրացիոն տեսությունների վերլուծության համատեքստում»*** հոդվածի մեթոդաբանությունը բովանդակում է ***միգրացիոն տեսությունների և դրանցում առկա փաստերի համեմատական վերլուծություն, տեսությունների գնահատում, հետևություններ ու եզրակացություններ:*** Հոդվածը գրված է սոցիոլոգիայում ընդունելի ***ընտրանքի շրջանակներում***՝ հաշվի առնելով հոդվածի սղության աստիճանը և տեսությունների բովանդակային համապատասխանությունը: Աշխատանքում բերված որոշ տեսակետներ ներկայացվել են անձնական ուսումնասիրությունների հիման վրա և բնավ նպատակ չունեն նսեմացնելու տեսաբանների ուսումնասիրությունները, պարզապես շեշտում ենք որոշ աշխատությունների՝ աշխատուժի միգրացիային ուղղված միակողմանի լինելը (հաշվի են առնվել միայն տնտեսական ուղղվածությունները և դիտակետերը):

Հաշվի առնելով հոդվածի մեթոդական առանձնահատկությունները, տեսական վերլուծության ձևաչափը՝ առաջ են քաշվել հետևյալ ***գիտական վարկածները.***

1.Տեսական աշխատություններում արտաքին աշխատանքային միգրացան ներկայացվում է որպես տնտեսական հիմնախնդիր և արտացոլում տնտեսագիտական և վիճակագրական մեթոդաբանության առանձնահատկությունները:

2.Ուսումնասիրվում են հիմնականում միջազգային աշխատանքային միգրացիոն քաղաքականության կատարելագործման միտումները, մասնավորապես՝ պետական մակարդակով դրա կանոնակարգման գերակայություններն ու հիմնական ուղղությունները:

3.Ըստ մեր կողմից առաջադրվող երրորդ վարկածի՝ համընդհանրացման ժամանակաշրջանում արտաքին աշխատանքային միգրացիան սերտաճել է որակապես նոր, բարդ գործընթացների հետ այնչափ, որ զգալիորեն պայմանավորում է համաշխարհային տնտեսության հետագա զարգացման հնարավորությունները: Շուկայական հարաբերությունների անցման փուլում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը նույնպես բախվեց բնակչության միգրացիայի հիմնախնդրին, հիմնականում արտագաղթի և փախստականների ներգաղթի ձևով, որի հետևանքով երկրում ստեղծվեց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակ: Մասնավորապես, խախտվեցին աշխատանքի շուկայի ձևավորման և զարգացման բնականոն գործընթացները, աշխատուժի առաջարկի և պահանջարկի հաշվեկշիռը, որոնք հանգեցրին առաջին հերթին, զբաղվածության կրճատման և գործազրկության մակարդակի աճին [5]:

Սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական երևույթների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատասխանել այն հարցերին, թե ինչպես են միգրացիոն տեղաշարժերի պատճառով բնակչության վերարտադրության օրինաչափությունները ամբողջությամբ և ժողովրդագրական գործընթացներից յուրաքանչյուրը մասնակիորեն ազդում հասարակության զարգացման վրա, բացահայտել այն գործոնները, որոնք որոշում են տարբեր երկրներում և տարածաշրջաններում բնակչության վերարտադրության որակական հատկանիշների ձևավորումը, որոնք ազդում են, օրինակ, ծնելիության և մահացության դինամիկայի, ընտանեկան կառույցների ձևավորման վրա: Սոցիոլոգիայի բնագավառում, առանց ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների, անհնար է պլանավորել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումը [3]: Բնակչության վերարտադրության ***որակական*** և ***քանակական*** փոփոխությունների գործընթացը սոցիալական, տնտեսական և մշակութային գործոնների համակցության ազդեցության ներքո կարելի է բնութագրել որպես հասարակության ժողովրդագրական զարգացում: Անցյալում տեղի ունեցած միգրացիոն գործընթացներով պայմանավորված բնակչության վերարտադրության հիմնական փոփոխությունների մասին իմացությունը, տարածաշրջանային առանձնահատկությունների բացահայտումը և ապագայում դրանց ուղղվածության որոշումը թույլ են տալիս հասարակությանը իր համար օպտիմալ ուղղությամբ ազդել ժողովրդագրական գործընթացների վրա և իրականացնել ժողովրդագրական քաղաքականություն [2]: Դրա համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ ժողովրդագրական զարգացման հիմնական միտումների և հնարավոր բացասական գործընթացների մասին, որոնք բացասաբար են անդրադառնում հասարակության կենսագործունեության վրա: Նման բացասական երևույթների վերացմանը օգնում է պետության կողմից հատուկ քաղաքականության իրականացումը [7]:

Հայաստանում միգրացիայի վարչական տեղեկատվության աղբյուրը ***ՀՀ բնակչության պետական ռեգիստրն է***, որում, սակայն, ընդգրկված չէ բնակչության տեղաշարժերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մարդիկ իրենց տեղաշարժերի մասին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը հիմնականում չեն տեղեկացնում և, հետևաբար, դուրս են մնում միգրացիայի վարչական վիճակագրության տեսադաշտից [1]:

21-րդ դարում տեղի ունեցավ միգրացիոն քաղաքականության գերակայությունների էական վերափոխում, զգալիորեն փոփոխվեցին միգրացիոն խնդիրների լուծման սկզբունքները և մեթոդները:

Համաշխարհայնացման փուլում արտաքին աշխատանքային միգրացիան սերտաճել է որակապես նոր, բարդ գործընթացների հետ այնչափ, որ զգալիորեն պայմանավորում է համաշխարհային տնտեսության հետագա զարգացման հնարավորությունները: ***Միջազգային աշխատանքային միգրացիոն*** գործընթացների զարգացման հեռանկարների ներուժը չափազանց մեծ է և բովանդակում է աճի առաջանցիկ տեմպերի ապահովում, գործազրկության հիմնախնդրի կարգավորում, սոցիալական կառուցվածքի, կյանքի որակի փոփոխություններ, ինչը, առաջին հերթին, կանդրադառնա եկամուտների աճի, կրթության որակի բարելավման, պարենային ապահովության, առողջապահության, աղքատության ծավալների կրճատման, շրջակա միջավայրի պահպանման, հավասար հնարավորությունների երաշխավորման, անձնական ազատությունների ընդլայնման վրա [9]:

Միգրացիոն քաղաքականության հարցերն արդիական են նաև Հայաստանի Հանրապետությունում, ինչը պայմանավորված է ներքոնշյալ երկու հանգամանքներով. ***նախ՝ Հայաստանը համաշխարհային տնտեսության մաս է կազմում, և միջազգայնացման ու համաշխարհայնացման գործընթացներն անմիջականորեն վերաբերում են մեր երկրին: Բացի այդ, ՀՀ-ն ընդգրկված է միգրացիոն հոսքերում,*** և այն խնդիրները, որոնք ներհատուկ են այլ երկրների՝ միգրացիայի կարգավորման գործում, զգալի չափով բնորոշ են նաև մեր երկրին[6]:

Արտաքին աշխատանքային միգրացիայի պետական կարգավորումն այսօր համարվում է միգրացիայի սոցիոլոգիայի առավել արդիական հիմնախնդիրներից, որի բազմակողմանի ուսումնասիրությունն էլ նվիրված է սույն վերլուծությունը [4]:

Բնակության վայրի փոփոխության ձգտումը մշտապես եղել է մարդու հիմնական բնութագրիչներից մեկը: Ավելի քան կես դար առաջ ***«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի»*** ընդունմամբ մարդու տեղաշարժի ազատության իրավունքը ստացել է միջազգային ճանաչում: Հռչակագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ ***«Ամեն ոք ունի տեղաշարժվելու իրավունք յուրաքանչյուր պետության սահմաններում», «Ամեն ոք ունի ցանկացած երկրից, այդ թվում իր երկրից հեռանալու և իր երկիր վերադառնալու իրավունք»*** [8]:

Բնակչության միգրացիայի տեսական ուսումնասիրությունը սկսվել է դեռևս երկու դար առաջ, անգլիացի գիտնական Է. ***Ռավենշտայնի*** կողմից: ***Միգրացիա (լատիներեն migratio. բառացի՝ անցնել, վերաբնակվել)*** նշանակում է ***«տեղաշարժ», անգլերեն «ուղով ճանապարհորդել, շրջել»:*** Է. Ռավենշտայնն այդ գործընթացը դիտարկում էր որպես ***«մարդու բնակության***

վայրի մշտական կամ ժամանակավոր փոփոխություն», «անդադար գործընթաց», որը պայմանավորված է հետևյալ գործոնների հիմնական խմբերի փոխազդեցությամբ՝ միգրանտի բնակության երկիր, անձի նախասիրությունների համակարգ, ժողովրդագրական ցուցանիշներ և այլն [10]:

Ներկայումս գիտական գրականության մեջ չկա ***«աշխատուժի միջազգային միգրացիա»*** հասկացության միասնական սահմանում: Միջազգային միգրացիայի վերլուծության բարդությունը հիմնականում բացատրվում է դրա տեսակների և ձևերի մեծ առաձգականությամբ [7]:

Անցումային հասարակություններում շարժունության ռիսկերը, պատճառների բազմազանությունը, դրդապատճառները և ժողովրդագրական հետևանքները (որոնք հասնում են անվտանգային մակարդակի) նպաստում են ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային աշխատանքային միգրացիայի տարաբնույթ տեսությունների ձևավորմանը: Մեր կողմից քննության վերցված հոդվածի շրջանակներում ներկայացնենք հիմնահարցի արդի վերլուծության մեջ լայնորեն կիրառվող առանցքային դրույթները:

Խնդրո առարկայի շրջանակներում, ելնելով սոցիոլոգիական ընտրանքից, առանձնացրել ենք մի քանի գերակա ուսումնասիրություններ, որոնցից առաջինը փորձ ենք արել քննել ***Վ. Իոնցևի և Ի. Իվախնյուկի*** աշխատությունները, ովքեր 40 գիտական ուղղություններում ընդգծել են համաշխարհային սոցիալական գիտություններում հայտնի միգրացիայի ուսումնասիրության գիտատեսական հիմքերը, մասնավորապես առանձնացնելով այն, թե ինչ ուղիներով է համաշխարհային իմացությունը բացատրում միջազգային միգրացիոն տեղաշարժերի առաջացումը և զարգացումը: Ամեն դեպքում, հարկ ենք համարում ընդգծել, որ տեսաբանների կողմից արված յուրաքանչյուր դասակարգում, ըստ ամենայնի, պայմանականություն է, որովհետև հնարավոր չէ միանշանակորեն որոշ հայեցակարգեր դասել այս կամ այն մոտեցմանը [8]: Ըստ մեր կողմից առանձնացված սոցիոլոգիական հետազոտության ծրագրի, մասնավորապես ընտրանք բաժնի, արևմտյան տեսաբանների ուսումնասիրությունների շարքում քննության ենք վերցրել և սոցիոլոգիական վերլուծության ենթարկել տնտեսագիտական տեսություններ և հայեցակարգեր ***(Սմիթ. Ա., Ռիկարդո Դ. և այլք), նորդասական (Հարիս Ջ., Տորդարո Մ.)՝ մարդկային կապիտալի տեսություն (Սժաստադ Լ., Կլարկ Վ.), միգրացիայի նոր տեսություններ (Սթարք Օ., Թեյլոր Դ.), աշխատանքի հատվածավորված շուկայի հայեցակարգ (Սոլոու Դ., Պորտես Ա., Պիոր Մ.), համաշխարհային համակարգերի տեսություն***

(Սասեն Ս., Վալերշտեյն Ի.), արդի միջազգային կարգի հայեցակարգ (Բենինգ Վ., Բխագվաթի Ջ.) և այլն:

Խնդրո առարկա արդի տեսությունների առանցքային ու բնութագրիչ գիծը հիմնականում ըստ մեր կողմից արված վերլուծությունների այն է, որ միգրացիայի առավելությունները կամ ծախսերը չափվում են միայն անհատական մակարդակով, տնտեսական արդյունքների տեսանկյուններից, մոռանալով դրանց սոցիալ-մշակութային, սոցիալ-ժողովրդագրական, անվտանգային առանձնահատկությունները, որոնք միգրացիայի առանցքային հետևանքներն են համարվում: Մեր կարծիքով, նման մոտեցման սկզբունքային թերությունը պետության կարգավորիչ դերից վերացարկումն էր, այսինքն՝ միգրացիոն գործընթացների զարգացման հնարավորությունների վրա պետական ազդեցության (օրենսդրություն՝ հատկապես միգրացիոն քաղաքականության հետ կապված, կառավարչական որոշումներ) դերի թերագնահատումը: Մասնավորապես այս համատեքստում ընդգծենք ***Քելնսյան և նորդասական*** մոտեցումների յուրատիպ համեմատությունը, որը կարելի է համարել տնտեսական պարբերաշրջանների հակադարձ կապի տեսությունը (Թոմաս Բ.), որը իր ուշադրությունը կենտրոնացրել է մակրոմակարդակում [8] միջազգային աշխատանքային միգրացիայի վերլուծության վրա: Եթե հիմնվենք այդ տեսությանը, ուրեմն պետք է ընդգծենք, որ երկրից երկիր աշխատանքային միգրացիայի ուղղությունը որոշվում է տվյալ երկրների տնտեսական զարգացման պարբերաշրջանային փուլերի հակադարձ հերթականությամբ: Այսինքն՝ ըստ այդ տեսության, աշխատուժի միջազգային տեղաշարժը պայմանավորված է որոշակի երկրում տնտեսական բարենպաստ կամ անբարենպաստ պայմանների, մասնավորապես՝ աշխատավարձի տարբերությամբ:

Բ.Ս Խորևի կարծիքով՝ «Բնակչության միջազգային աշխատանքային միգրացիան արտաքին կամ միջպետական միգրացիան է, պետական սահմաններով մարդկանց տեղաշարժը, որն առավելապես կապված է նրանց բնակության մշտական վայրի փոփոխության հետ» [2]:

Ըստ ***Լ.Լ. Ռիբակովսկու***՝արտաքին աշխատանքային միգրացիան երկրի տարածքից մեկ այլ երկրում բնակչության ժամանակավոր վերաբնակեցումն է: Նման տեղաշարժն ի վերջո հանգում է քաղաքացիության փոփոխության: «Միգրացիան սոցիալական գործառույթի իրացման արդյունքում գաղթող բնակչության կենսամակարդակի բարձրացման ինտեգրացիոն գործընթաց է» [6]:

Վ.Մ. Մոիսենկոն համարում է, որ միգրացիան բնակչության շարժի ձևերից է, որի դեպքում բնակության վայրի փոփոխությունը՝ մեծ թե փոքր

հեռավորությամբ և ժամանակով, ուղեկցվում է հանրորեն նշանակալի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլ հետևանքներով՝ ***դրական և բացասական, ակնհայտ և թաքնված, ընթացիկ և երկարաժամկետ:*** Այսօր առավել տարածված է ***Վ. Ա. Իոնցևի*** սահմանումը, ով աշխատանքային միգրացիան դիտարկում է ըստ պետական սահմաններով բոլոր տեղաշարժերի, այդ թվում՝ զբոսաշրջային և սահմանամերձ բնակավայրերի աշխատողների ուղևորությունները [9]:

Մեր կարծիքով՝ Վ. Ա. Իոնցևի սահմանումը լիարժեք չի բացահայտում միգրացիայի էությունը, պատճառները և տեսակները. ***«Բնակչության միգրացիան մարդկանց տարածքային (տարածական) տեղաշարժներն են պետական սահմաններով, որոնք կապված են բնակության մշտական վայրի և քաղաքացիության փոփոխության հետ՝ պայմանավորված տարբեր (ընտանեկան, ազգային, քաղաքական և այլ) պատճառներով կամ կապված մուտքի երկրներում երկարաժամկետ (մեկ տարուց ավել) սեզոնային այցերի, ինչպես նաև աշխատանքի, հանգստի և այլ նպատակներով կանոնավոր այցելությունների հետ»*** [9]***:***

Ի. Վ. Իվանխնյուկի տեսանկյունից՝ նշված սահմանումը ճիշտ է բացահայտում աշխատանքային միգրացիայի հասկացությունը դրա ժամանակակից ընկալմամբ, սակայն նա առաջարկում է սահմանափակվել աշխատանքային միգրանտի ընդհանուր սահմանմամբ՝ չներառելով ո՛չ գործոնները, ո՛չ էլ մեկնելու տևողությունը [6]:

Այսպիսով՝ մեր կողմից քննված տեսություններում ընդգծվում էին աշխատանքային միգրացիան պայմանավորող բավականին տարբեր, անգամ իրար հակասող գործոններ, ինչը մեր կարծիքով պայմանավորված է այն իրականությունով, որ միգրացիան ինքնին բազմաձև երևույթ է և կարող ենք վերլուծել տարբեր դիտանկյուններից: Պարադիգմայի որոնումը այս դեպքում պետք է լինի բազմամակարդակ, համալիր և միջմասնագիտական: Կիրառելով միջազգային աշխատանքային միգրացիայի պատճառների և հետևանքների բացահայտման այս կամ այն գիտական մոտեցումը կամ էլ ստեղծելով ընդհանրացնող տեսություն՝ անհրաժեշտ է գիտակցել, որ միգրացիան համալիր երևույթ է և դժվարությամբ է պարփակվում որոշակի սահմաններում: Սակայն ակնհայտ է, որ մեր կողմից դիտարկված տեսությունների և հայեցակարգերի հիմնական առանցքն այն է, որ աշխատուժի միջազգային շարժունությունը զգալի ազդեցություն է ունենում տնտեսական աճի կամ նվազման տեմպերի վրա:Արդի փուլում միջազգային աշխատանքային միգրացիայի՝ պետական կարգավորումը գիտականորեն հիմնավորված դրույթների ամբողջություն է միգրացիայի որպես սոցիալական ֆենոմենի զարգացման օրինաչափությունների մասին, որոնք

հնարավորություն են տալիս կատարելու համաշխարհային, տարածաշրջանային և պետական մակարդակներով դրա զարգացման որոնողական և նորմատիվային կանխատեսումներ, մշակելու միգրացիոն ոլորտում բնակչության պահանջմունքների և շահերի հաշվառման սոցիալական չափորոշիչներ, համապատասխան խնդիրների լուծման պետական նախագծեր [3]:

Հոդվածի ***նպատակին*** և ***առաջադրված գիտական վարկածներին*** համապատասխան արված տեսական վերլուծությունների հիման վրա հանգեցինք այն եզրակացությանը, որ արտաքին աշխատանքային միգրացիայի կարգավորման հիմնական եղանակներ են համարվում վարչաիրավական, տնտեսական և գործառնական մեթոդները: Առաջինը ներառում է ազգային օրենսդրության միջոցները, որոնք սահմանում են տվյալ երկրում ներգաղթյալների իրավական, քաղաքական և մասնագիտական կարգավիճակը, միգրացիայի ազգային ծառայությունների գործունեությունը և արտաքին աշխատանքային միգրացիայի կարգավորման միջկառավարական համաձայնագրերի միջոցները:

Միևնույն ժամանակ, անցանկալի ներգաղթյալների «մաղումն» իրականացվում է որակավորմանը, կրթությանը, տարիքին, առողջական վիճակին ներկայացվող պահանջների, քանակական և աշխարհագրական քվոտավորման, մուտքի ուղղակի և անուղղակի արգելքների, ժամանակային և այլ սահմանափակումների հիման վրա: ***Ռեէմիգրացիայի*** պետական կարգավորման միջոցառումների շարքից են.

- ***ռեէմիգրացիան խթանող ծրագրերը,***
- ***ներգաղթածների մասնագիտական վերապատրաստման նախագծերը,***
- ***զանգվածային արտագաղթի երկրների տնտեսական աջակցության ծրագրերը:***

Ընդհանրացնելով աշխատանքային միգրացիոն հոսքերի կարգավորման ոլորտում միջազգային հանրության գործողությունների վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ առաջ քաշված ***երեք գիտական վարկածներն*** էլ հաստատվեցին: Միգրացիոն գործընթացները, որոնք ներգործում են ազգաբնակչության վիճակի և զարգացման վրա, դասվում են համաշխարհային խնդիրների շարքը, որոնք ներգործում են աշխարհում ընթացող առավել նշանակալի քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացների վրա և սերտորեն փոխկապակցված են կայուն զարգացման հետ: Միգրացիոն գործընթացների արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են կառավարությունների համակարգված տնտեսական և քաղաքական գործողությունները՝ միտված փոխընդունելի և փոխշահավետ արդյունքների ստացմանը:

Ընդհանուր առմամբ, հոդվածի շրջանակներում կատարված վերլուծությունները վկայում են, որ 21-րդ դարը առանձնացվել է միգրացիոն քաղաքականության մեխանիզմների տեղաշարժով: Ընդ որում, միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը դիտարկվում է որպես ընդհանուր միգրացիոն քաղաքականության գործառույթ, որը համարվում է սոցիալական քաղաքականության բաղկացուցիչ:

Ելնելով հոդվածում քննության ենթարկված տեսությունների վերաբերյալ եզրակացություններից, **առաջարկում ենք՝**

- կիրառել զբաղվածության նպատակաուղղված քաղաքականություն, նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով թուլացնել սոցիալական լարվածությունը, պայմաններ ստեղծել բնակչության արտագաղթը նվազեցնելու և արտասահմանյան երկրներում անլեգալ գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձն ապահովելու համար:
- Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիային վերաբերող օրենսդրությունը հիմնականում սահմանում է միգրացիոն գործընթացներում ուղղակի կամ անուղղակի ձևով ներգրավված բնակչության, նրանց տեղափոխման, աշխատանքի տեղավորման, կրթական, առողջապահական ծառայություններ մատուցող անձանց, վերահսկող պետական պաշտոնյաների իրավասությունների և պարտականությունների շրջանակները: Այս տեսանկյունից ՀՀ-ում միգրացիային առնչվող ընդհանուր օրենսդրությունը տարալուծված է տարբեր օրենսդրական ակտերում, իսկ միգրացիոն հարաբերությունները կարգավորող հատուկ օրենսդրությունը դեռևս բացակայում է: Այս բացը լրացնելու, Հայաստանի քաղաքացիների ազատ տեղաշարժը պետական մակարդակով կարգավորելու համար անհրաժեշտ է մշակել և ընդունել «ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից ելքի և ՀՀ մուտքի մասին» առանձին օրենք՝ լուծելով միջազգային շարժունության հետ կապված խոչընդոտները և անվտանգ տեղափոխությունների հարցերը:
- Ելնելով տեսություններում առկա միջազգային միգրացիոն գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունից, հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության համար փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացումը պետք է դիտարկել որպես գերակա խնդիր և ստեղծել բարենպաստ պայմաններ դրա զարգացման համար: ՓՄՁ-ն կարող է հանդես գալ նաև միգրացիոն հոսքերի անուղղակի կարգավորման հիմնական լծակի դերում: ՓՄՁ-ն, կանխարգելելով «ուղեղների արտահոսքը», նպաստելով տեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացին և աղքատության հաղթահարմանը, պետք է լինի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի

գերակա ուղղությունների շարքում: ՓՄՁ-ի զարգացման պետական աջակցությունը Հայաստանում պետք է ուղղված լինի ոլորտի կարգավորման օրենսդրաիրավական դաշտի կատարելագործմանը, կադրերի պատրաստման համակարգի զարգացմանը, ֆինանսավարկային համակարգի զարգացմանը, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, ոլորտի ինովացիոն զարգացմանն անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը նպատակ ունի ստեղծել նոր աշխատատեղեր, ինչպես նաև նպաստել միջին խավի ձևավորմանը, որն էական դերակատարություն կունենա քաղաքական և տնտեսական բարեփոխումների գործընթացներում:

Գրականություն

1. Ասատրյան Ն., Հայաստան վերադարձած անձանց վերաինտեգրման ուղեցույց: Միգրացիայի միջազգային կազմակերպություն: Եր., «ՄՄԿ Հայաստանի առաքելության», հր., 2020, 55 էջ:
2. Խանումյան Վ. Լ., Համաշխարհային տնտեսական համակարգին Հայաստանի ինտեգրման նախադրյալները:// Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Եր., 2006,էջ 157-169:
3. Հարությունյան Մ., Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, «Նաիրի» հրատ., 2014: 648 էջ:
4. ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թթ.-ի ռազմավարություն, Եր., ՄՄԿ հր., 2020, 32 էջ:
5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց, Եր., ՄԻՊ հր., 2018, 161 էջ:
6. Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն. Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, Եր., ԵՊՀ հր., 2016, 140 էջ:
7. Միգրացիայի տերմինների բառարան: Միգրացիայի միջազգային կազմակերպություն, խմբ.՝ Ռիշար

Պերուշո, Ջիլիան Ռեդփաթ-Քրոս (հայերեն տարբերակի խմբ.՝ Ք. Գալստյան, Ա. Մարգարյան): 2-րդ հրատարակություն: Ժնև: ՄՄԿ հր., 2013, N 30, 170 էջ:
8. Аукционек С.Н., Теоря перехода к рынку, М., Дело. 2016, 325с.
9. Добренков В.И, Волков Ю.Г., Социология молодежи. Учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2006, 250 с.
10. Ерицян Г., Все учтены! Пособие по вовлечению и участию молодых людей в странах Восточного партнерства. Армянская прогрессивная молодежь, Ер.: Зарт Принт, 2018, 120с.
11. Кожанов И. В., Сущность и структура этнокультурной социализации личности//Фундаментальные исследования, 2013, № 8 (часть 5). с. 1193-1197 URL: www.rae.ru/fs/?section=content&op=show_article&article_id=10001319

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 25.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը :

ՀՏԴ 316.346.32-053.6

Սոցիոլոգիա

Մարինա ԳԱԼՍՏՅԱՆ
Երևանի պետական համալսարան
Սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտող
Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի հայցորդ
E-mail: galstyanmarina@gmail.com

ԿՈՐՈՒՍՅԱ՞Լ, ԹԵ՞ ՈՒՍՅԱԼ ՍԵՐՈՒՆԴ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը անդրադառնում է հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ սոցիոլոգիական մտքի զարգացմանը՝ վերլուծելով կոնֆլիկտի տեսական մոտեցումների, ռազմական սոցիոլոգիայի առանձնահատկությունները: Հոդվածը ներկայացնում է հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ սոցիոլոգիական ուղենիշային աշխատությունները՝ ընդգծելով հետպատերազմյան իրականությունում երիտասարդների խնդիրների ուսումնասիրման փորձերը: Բոսնիա-Հերցեգովինայի, բրիտանական, խորհրդային, հայկական հետպատերազմյան հասարակությունների փորձի վերլուծության միջոցով հոդվածն առանձնացնում է հետպատերազմյան հասարակություններին բնութագրող կողմերը, որոնք են՝ նախկին արժեքների վերանայումը, ազատության, անձնական պատասխանատվության զգացման մեծացումը սեփական անձի և փոքր խմբի նկատմամբ, քննադատական մտածողության մակարդակի բարձրացումը, սոցիալական տարբեր շերտերի միջև հաղորդակցության հնարավորությունների և փորձառության մեծացումը, սոցիալ-տնտեսական խնդիրների սրումը՝ ժողովրդագրական խնդիրներ, պատերազմի մասնակիցների խնդիրներ՝

բնակարանային պայմաններ, գործազրկություն, առողջական խնդիրներ, երիտասարդների՝ «լռելու», «պատերազմող մեծահասակներից» տարանջատվելու միտումը և պրակտիկան։

Բանալի բառեր՝ *հետպատերազմյան հասարակություն, երիտասարդները հետպատերազմյան Հայաստանում, երիտասարդությունը և պատերազմը, երիտասարդությունը պատերազմից հետո, երիտասարդների սոցիալական հարմարումը հետպատերազմյան իրականություն,*

М. Галстян

ПОТЕРЯННОЕ ИЛИ НАЙДЕННОЕ ПОКОЛЕНИЕ? МОЛОДЕЖЬ В ПОСЛЕВОЕННОЙ РЕАЛЬНОСТИ

В статье рассматриваются развитие социологической подходы о послевоенных обществах, анализируются особенности теоретических подходов к конфликтологии и военной социологии. В статье представлены знаковые социологические работы о послевоенных обществах, сделан акцент на попытках изучения проблем молодежи в послевоенной действительности. Анализируя опыт послевоенных обществ Боснии и Герцеговины, Великобритании, Советского Союза и Армении, в статье выделяются аспекты, характеризующие послевоенные общества, а именно: пересмотр прежних ценностей, усиление чувства свободы, личная ответственность перед собственной личностью в малых группах, повышение уровня критического мышления, обострение демографических проблем, жилищных условий, безработицы, проблем со здоровьем, склонность и практика молодежи «молчать», отделяться от «воюющих взрослых».

Ключевые слова:*. послевоенная действительность, послевоенное общество, молодежь в послевоенной Армении, молодежь и война, молодежь после войны, социальная адаптация молодежи.*

M. Galstyan

LOST OR FOUND GENERATION? YOUNG PEOPLE IN THE POST-WAR REALITY

The article discusses the development of sociological thought about post-war societies, analyzing the features of theoretical approaches to conflict and military sociology. The article presents the landmark sociological works on post-war societies,

emphasizing the attempts to study the problems of young people in the post-war reality. By analyzing the experience of Bosnia Herzegovina, British, Soviet, and Armenian post-war societies, the article highlights the aspects that characterize post-war societies, which are: revision of previous values, increasing sense of freedom, personal responsibility towards a small group, increasing the level of critical thinking, demographic problems, housing conditions, unemployment, health problems, the tendency and practice of young people to "keep silent", to separate themselves from "adults". After the 2020 Artsakh war, the impact of the war's consequences on young people has not yet been fully and deeply studied. The article also provides empirical insights from nationwide survey among Armenian youth. The survey results showed that the goals of young people in particular have changed, the vast majority of young people who participated in the survey, stated that their aspirations and goals changed significantly after the war. Moreover, after the war, the majority of young people had to reduce their aspirations and goals and adapt to the post-war situation. It is also interesting that Armenian young people stated that in crisis and difficult situations they try to find new and interesting solutions to face problems. So in the post-war reality, we can define Armenian youth not as a "lost" but as a "found" generation.

Key words: *post-war reality, post-war society, young people in post-war Armenia, youth and war, youth after the war, social adaptation of young people*

Ներածություն

Կոնֆլիկտների և պատերազմների վերլուծությունները էական տեղ են զբաղեցնում սոցիոլոգիական գիտական գրականության մեջ: Սոցիոլոգիայի հիմնական տեսական ավանդույթներից են կոնֆլիկտի տեսությունները՝ Կ. Մարքս, Ռ. Դարենդորֆ, Գ. Զիմել, Լ. Կոզեր և այլն, չնայած որ այդ տեսությունները կենտրոնացած են հասարակությունների ներսում սոցիալական հակամարտությունների վրա, ինչպիսիք են՝ սոցիալական դասակարգերը, գենդերային հարաբերությունները և էթնիկ հակամարտությունները:

Մարքսը հասարակության կառուցվածքը դիտարկել է դինամիկայի մեջ, ենթադրելով, որ դասակարգերը սոցիալական կառուցվածքի պատմականորեն փոփոխվող բաղադրիչներն են: Արևմտյան սոցիոլոգիայում նա համարվում է կոնֆլիկտի դիալեկտիկական տեսության հիմնադիր, որում «սոցիալական հավասարակշռության» գաղափարին հակադրվում է «սոցիալական փոփոխության» գաղափարը և որը

գրականության մեջ հաճախ անվանվում է «կոնֆլիկտային մոդել» կամ «կոնֆլիկտի տեսություն»: Թեև սոցիալական համակարգերը բացահայտում են միավորների փոխկախվածությունը, այդ փոխհարաբերությունները միշտ բացահայտում են շահերի կոնֆլիկտը: Այս շահերի կոնֆլիկտը բոլոր սոցիալական համակարգերում սակավ ռեսուրսների անհավասար բաշխման արդյունք է[1]:

Եթե Մարքսը հասարակության կառուցվածքը ձևավորող գործոն դիտարկում էր նյութական ռեսուրսների բաշխումը, ապա Ռ. Դարենդորֆը քննարկում էր իշխանության բաշխման հարցը: Դարենդորֆը գրում է. «Կոնֆլիկտի հիմնախնդիրը պակաս բարդ չէ, որքան հասարակությունների ինտեգրացիան»[2]: Ըստ հեղինակի՝ ինտեգրացիան և կոնֆլիկտը, կայունությունը և փոփոխությունը, փոխհամաձայնությունը և հարկադրանքը ցանկացած հասարակության երկու հավասարապես կարևոր ասպեկտներն են:

Ռ. Դարենդորֆը պնդում էր, որ՝

1. հասարակության մեջ կոնֆլիկտի առաջացման հիմքը իշխանության բաշխման ձգտումն է,
2. հասարակության հիմնական բնութագրիչներն են գերիշխանությունը, կոնֆլիկտը և ճնշումը,
3. հասարակության մեջ կոնֆլիկտը հիմնված է հասարակության սոցիալական կառուցվածքի կարգավորումների վրա, քանի որ կառուցվածքը հիմնված է մի խմբի՝ մեկ այլ խմբի հանդեպ ունեցած իշխանության վրա,
4. այդ խմբերը ունեն ընդհանուր շահեր, իսկ երբ մարդիկ գիտակցում են իրենց ընդհանուր շահը, ձևավորում են հասարակական դասակարգ՝ կուսակցություն, արհմիութենական շարժում և այլն[3]:

Հետաքրքիր է նաև գերմանացի մեկ այլ հեղինակ Գ. Զիմելի՝ կոնֆլիկտի վերաբերյալ մոտեցումը: Ինչպես և Մարքսը, Զիմելը ևս կոնֆլիկտը համարում էր սոցիալական համակարգերի համար համատարած հատկանիշ: Սակայն ի տարբերություն Մարքսի, ըստ Զիմելի՝ համակարգերը չեն կարող բացառապես բնորոշվել տիրապետության և հպատակության հարաբերություններին հատուկ կոնֆլիկտային շահերով: Ավելի շուտ, սոցիալական համակարգերը կարելի է բնորոշել որպես

---

[1] ***Turner, J.*** *H. (1975). Marx and Simmel Revisited: Reassessing the Foundations of Conflict Theory. Social Forces, 53(4), 618–627.*

[2] ***Dahrendorf R.****, Toward a Theory of Social Conflict, The Journal of Conflict Resolution, Vol. 2, No. 2 (Jun., 1958), pp. 170-183,* https://web.ics.purdue.edu/~hoganr/SOC%20602/Spring%202014/Dahrendorf%201958b.pdf

[3] ***Dahrendorf R.****, Toward a Theory of Social Conflict, The Journal of Conflict Resolution, Vol. 2, No. 2 (Jun., 1958), pp. 170-183,* https://web.ics.purdue.edu/~hoganr/SOC%20602/Spring%202014/Dahrendorf%201958b.pdf

«ասոցիատիվ և դիսոցիատիվ գործընթացների» միախառնում, որոնք ավելի հեշտությամբ տարբերակված են վերացական վերլուծության, քան էմպիրիկ փաստի մեջ[1]:

Ըստ Զիմելի, թեև կոնֆլիկտները անխուսափելի են և համատարած, դրանք միշտ չէ, որ հանգեցնում են սոցիալական փոփոխության: Կոնֆլիկտը կարող է գործել, որպեսզի պահպանվի սոցիալական համակարգերում ինտեգրման հիմքը:

Ըստ Լ. Կոզերի՝ կոնֆլիկտի սոցիոլոգիայում անտեսված են կոնֆլիկտի գործառույթները, հետևաբար, ուսումնասիրելով և հիմնվելով Զիմելի մոտեցման վրա՝ Կոզերը վերլուծում է կոնֆլիկտը որպես ինտերակտիվ գործընթաց և պատկերում կոնֆլիկտը որպես «սոցիալականացման ձև»[2]: Ըստ Կոզերի՝ խմբի ձևավորումը ասոցիացիայի և դիսոցիացիայի արդյունք է, այնպես որ և՛ կոնֆլիկտը, և՛ համագործակցությունը կատարում են սոցիալական գործառույթ: Կոնֆլիկտի որոշակի աստիճանը խմբի ձևավորման կարևոր տարր է: Կոզերը տարբերակում է երկու տեսակի կոնֆլիկտ՝ այն, որի դեպքում նպատակը անձնական է և սուբյեկտիվ, և այն, որտեղ վիճելի հարցն ունի անանձնական, օբյեկտիվ կողմ: Նա նշում է Զիմելի այն պնդումը, որ օբյեկտիվացված պայքարները, որոնք դուրս են գալիս անձնական խնդիրների սահմաններից, հավանաբար ավելի դաժան և արմատական կլինեն: Սրանք այն կոնֆլիկտերն են, որոնցում կողմերն իրենց ընկալում են որպես կոլեկտիվների կամ խմբերի ներկայացուցիչներ, որոնք պայքարում են ոչ թե իրենց, այլ խմբի նպատակների և իդեալների համար: Անձնական պատճառների վերացումը հակված է ավելի սրելու հակամարտությունը: Մյուս կողմից, երբ կողմերը հետապնդում են ընդհանուր նպատակ, հակամարտության օբյեկտիվացումը կարող է ծառայել որպես միավորող տարր[3]:

Է. Գիդդենսը նշում է, որ սոցիոլոգիան պատերազմի ուսումնասիրությանը այնքան կարևորություն չի տվել, որքան կարող էր և պետք է ունենար՝ նախընտրելով այն թողնել ռազմական տեսաբաններին և ստրատեգներին, քանի որ լայնորեն տարածված տեսակետ գոյություն ունի, որ պատերազմը «նորմալ» իրավիճակ չէ և, հետևաբար, կենտրոնական չէ սոցիոլոգիական տեսությունների և ուսումնասիրությունների համար[4]:

---

[1] ***Hans A**. Illing (1956) Conflict and the Web of Group Affiliations by Georg Simmel, International Journal of Group Psychotherapy, 6:2, 219.*

[2] ***Coser L.**, The Functions of Social Conflict. New York: The Free Press, 1956., p. 31.*

[3] *Նույն աղբյուրը*

[4] ***Giddens A.**, Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 2009, 6th edition, Polity Press, p.1033.*

Պատերազմի՝ որպես կոնֆլիկտի դրսևորման վերաբերյալ սոցիոլոգիական տեսությունը և մոտեցումները ամփոփված են *ռազմական սոցիոլոգիա* գիտակարգում:

Իհարկե, պատերազմները հիմնականում քննարկվում են և ուսումնասիրվում պատմաբանների, քաղաքագետների կողմից՝ որպես դրամատիկ և աղետալի հետևանքներով իրադարձություններ, սակայն սոցիոլոգիայի համար պատերազմը միջխմբային կոնֆլիկտի ընդհանուր ձև է, որը կարող է ունենալ բազմաթիվ տարբերակներ[1]: Պատերազմի սոցիոլոգիական վերլուծությունը և իմաստավորումը հիմված է Մալինովսկու մարդաբանական մոտեցման, Ֆելդի պատմական և համեմատական հեռանկարի և Պարկի սոցիոլոգիական մոտեցման վրա: Պատերազմի սոցիոլոգիան հարուստ է սահմանումներով, տիպաբանություններով:

Մ. Շոն պատերազմը սահմանում է որպես «երկու կազմակերպված զինված ուժերի բախում, որոնք ձգտում են ոչնչացնել միմյանց իշխանությունը և հատկապես դիմադրելու կամքը, հիմնականում՝ սպանելով հակառակորդ ուժերի անդամներին»[2]: Բավականին տարածված է պատերազմի մեկ այլ սահմանում՝ «պատերազմը քաղաքական հարաբերությունների շարունակությունն է այլ միջոցներով»[3]:

Հետաքրքրական է մարդաբան Մ. Միդի ձևակերպումը պատերազմի մասին. «Պատերազմը միայն գյուտ է, ոչ թե կենսաբանական անհրաժեշտություն», պատերազմը «սոցիալական թերի ինստիտուտ» է, որի միակ նպատակը «հեղինակություն կուտակելն է, վրեժխնդիր լինելը, ավար ձեռք բերելը կամ հանդարտեցնել իր աստվածների կամ վերջերս մահացածների անհանգիստ հոգիների արյունաքամությունը»[4]:

Պատերազմի սոցիոլոգիան առանձնացնում է պատերազմի հետևյալ տիպերը՝ բացարձակ կամ ընդհանուր պատերազմ, ինստրումենտալ պատերազմ և ագոնիստական պայքար[5]:

Միևնույն ժամանակ կարևոր է առանձնացնել պատերազմը՝ ռազմական և զինվորական գործից, քանի սոցիոլոգիական տեսանկյունից դրանք իրարից տարբեր սոցիոլոգիական իմաստավորում և մոտեցում են պահանջում: Այս իմաստով հատկապես ամերիկյան սոցիոլոգիական միտքը բավականին

---

[1] ***Lang, K**. (1968), Military Sociology 1963-1969. Current Sociology, 16(3), 7–18.*

[2] ***Shaw, M**. (2003), Warand Genocide: Organized Killing in Modern Society (Cambridge: Polity)*

[3] ***Giddens A**., Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 2009, 6th edition, Polity Press*

[4] ***Lina Marcela Martínez Durango, John Campos Benavides, Guissepe D'Amato Castillo, Milton Arrieta-López,** Military Sociology: A Historical Perspective, Journal of Positive School Psychology http://journalppw.com 2022, Vol. 6, No. 6, pp.4489-4495.*

[5] *Նույն աղբյուրը:*

հարուստ է: Ուղենիշային է Ս.Հանթինգթոնի «Զինվորը և պետությունը» ուսումնասիրությունը, որը վերաբերում է զինվորական մասնագիտության էթոսին ու գաղափարախոսությանը՝ անդրադառնալով այդպես բռնության գործառույթին, ընդ որում, հեղինակը վերլուծում է ինչպես ամերիկյան, այնպես նաև Եվրոպայում զինվորական մասնագիտության զարգացումը[1]: Իսկ Յանովիցն առաջարկում է պրոֆեսիոնալ զինվորի մանրամասն սոցիալական նկարագրությունը՝ հիմնված ամերիկյան հասարակության փորձի վրա:

Հոդվածն անդրադառնում է հետպատերազմյան իրականության վերաբերյալ հասարակագիտական մտքի առանձնահատկություններին՝ հիմնված այդ թեմայով ուղենիշային աշխատությունների և ուսումնասիրությունների վերլուծության վրա, քանի որ հետպատերազմյան հասարակությունների ուսումնասիրությունը ևս սոցիոլոգիական մտքի նոր զարգացող ուղղություններից է:

Հետպատերազմյան իրականության ուսումնասիրության առանձնահատկությունները

Անցած տասնամյակների ընթացքում այն հարցը, թե ինչպես հասարակությունները կարող են վերականգնվել հակամարտություններից և պատերազմներից հետո, եղել է գլոբալ քաղաքականությունների գլխավոր մտահոգությունը՝ ի պատասխան այնպիսի իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել Կամբոջայում, Ռուանդայում, Աֆղանստանում, նախկին Հարավսլավիայում և այլն:

Սոցիոլոգիայի դասականները, իհարկե, անդրադարձել են պատերազմի սոցիալական հետևանքներին և ազդեցություններին: Այսպես, Հ.Սպենսերը պնդում էր, որ հասարակության էվոլյուցիան՝ պարզից մինչև բարդ ձևեր, խթանվում է հասարակությունների միջև հակամարտություններով և պատերազմներով. ավելի զարգացած և ավելի լավ կազմակերպված հասարակությունն ավելի հարմարեցված է և, հետևաբար, ավելի հավանական է հաղթել պատերազմում փոքր, տեխնոլոգիապես ավելի քիչ զարգացած և ավելի քիչ կազմակերպված հասարակությունների դեմ: Ըստ Սպենսերի՝ կազմակերպվածության և բարդության ընդհանուր մակարդակը կավելանա, քանի որ նվաճված հասարակությունները կա՛մ ոչնչացվում են, կա՛մ (ավելի հավանական է) ներառվում ավելի հարմար հասարակության սոցիալ-մշակութային դաշտում: Սպենսերը գտնում էր, որ երբ մի հասարակությունը հաղթում է մյուսին, գերիշխող հասարակության մշակույթի և նրա կազմակերպման ձևերից շատերը սկսում են տարածվել և

[1] ***Huntington S.P.***, *The Soldier and the State, The Theory and Politics of Civil–Military Relations, Cambridge: Harvard University Press, 1957.*

ներթափանցել նվաճված հասարակություն[1]: Այսինքն, «մշակույթը ճանապարհորդում է պատերազմի և նվաճումների հետ մեկտեղ՝ երբեմն ոչնչացնելով տեղական մշակույթները, բայց ավելի հաճախ միավորվելով նորերի մեջ»[2]:

«Առանձին պատճառներ, ինչպիսիք են սովը, բնակչության խտությունը, պատերազմը, պարբերաբար հանգեցրել են մարդկային ցեղի և ընտանի կենդանիների հետագա վերաբնակեցմանը, և յուրաքանչյուր նման վերաբնակեցում ծառայում է որպես նոր փոփոխությունների, նոր տեսակների սկիզբ»[3]:

Հետպատերազմյան իրականության մասին սոցիոլոգիական ամենաառաջին ուղենիշային աշխատություններից է նաև Պ. Սորոկինի 1944թ. հոդվածը՝ «Պատերազմը և հետպատերազմյան փոփոխությունները եվրո-ամերիկյան ժողովուրդների սոցիալական շերտավորման մեջ»[4]: Սորոկինը նշում է, որ հոդվածի նպատակն է ցույց տալ պատերազմի ընթացքում արևմտյան բնակչության **սոցիալական շերտավորման** մեջ ինչ փոփոխություններ են տեղի ունեցել, իսկ երկրորդ նպատակն է մատնանշել, թե այս փոփոխություններից որոնք կշարունակվեն հետպատերազմյան անցողիկ շրջանում և որոնք կավարտվեն[5]: Սորոկինը պնդում է, որ պատերազմից հետո կանանց ընդհանուր կարգավիճակն ավելի մոտեցավ տղամարդկանց կարգավիճակին, արդյունքում նվազեց միջսեռային անհավասարության անջրպետը: Պատերազմից հետո երիտասարդ տարիքային խմբերը, հատկապես տասնութից քսանմեկ տիրույթում, արագորեն բարձրացան տարիքային խմբի շերտավորման մեջ, և Սորոկինը նշում է, որ այս տենդենցը կպահպանվի հետպատերազմյան իրականությունում[6]:

Արևմտյան հետպատերազմյան իրականության մասին ևս կարևոր աշխատություններից է «Հետպատերազմյան բրիտանական հասարակության ըմբռնումը» գիրքը՝ տպագրված 1994թ., որը ներկայացնում է պատերազմի ազդեցությունը բրիտանական հասարակության տարբեր ոլորտների վրա, այդ թվում՝ ընտանիք, ժամանց, կրթություն, աղքատություն,

---

[1] ***Turner, J. H***., & Abrutyn, S. (2016). *Returning the "Social" to Evolutionary Sociology: Reconsidering Spencer, Durkheim, and Marx's Models of "Natural" Selection. Sociological Perspectives, 60(3), pp.529–556.*

[2] *Նույն աղբյուրը:*

[3] ***Spenser G***. *Essays: Scientific, Political, and Speculative. Trans. from Engl. by N. A. Rubakina. Vol. 1. Minsk, Sovremen. literator. 1999.*

[4]***Sorokin P. A***., *War and Post-War Changes in Social Stratifications of the Euro-American Population, American Sociological Review, Vol. 10, No. 2, 1944 Annual Meeting Papers (Apr., 1945), pp. 294-303*.

[5] *Նույն աղբյուրը :*

[6] *Նույն աղբյուրը, էջ 301:*

զբաղվածություն, արվեստ, մեդիա, կրոն, սնուցում և այլն՝ հիմնված սոցիոլոգիական մոտեցման վրա[1]:

Ռուսալեզու ակադեմիական գրականությունների շարքում հետպատերազմյան հասարակության մասին կարևոր պատմագիտական աշխատություն է Է. Զուբկովայի «Հետպատերազմյան խորհրդային հասարակություն. քաղաքականություն և առօրյա կյանք 1945-53թթ.» մենագրությունը[2]: Մենագրությունը՝ որպես հետազոտություն կենտրոնանում է խորհրդային քաղաքացիների գոյատևման ռազմավարության և հասարակության ու իշխանության միջև հաղորդակցության մեխանիզմների վրա, ներառյալ իշխանությունների արձագանքը հետպատերազմյան սպասումներին և պատերազմի փորձից ծնված մշակութային ազդակներին:

Հետաքրքրական է, որ ռուսալեզու գրականության մեջ Լ.Տոլստոյի՝ «Պատերազմ և խաղաղություն» աշխատությունն է համարվում պատերազմի սոցիոլոգիայի տիրույթում կարևոր գիրք, որտեղ քննարկվում է հասարակության կյանքը՝ պատերազմի ժամանակ: Գիրքը նաև հանդիսացել է բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտությունների հիմք, որոնք վերաբերել են հայրենասիրական դաստիարակությանը, հոգևոր և կրոնական կյանքին[3]:

Լ. Տոլստոյի աշխատությունը բարձր է գնահատել նաև ֆրանսիացի սոցիոլոգ Բ. Լատուրը, որը գրում է. «Միայն այն ժամանակ, երբ սոցիոլոգիան հասնի Տոլստոյին, մենք նորից կարող ենք հպարտանալ մեր արհեստով»:

Ռուսալեզու գրականությունը հարուստ է կոնֆլիկտի սոցիոլոգիայի վերաբերյալ գիտելիքի պաշարով: Մասնավորապես, Օբրասցովի և Զդրավամիսլովի աշխատությունները իրենց կարևոր ներդրումն ունեն կոնֆլիկտի վերաբերյալ ռուսական սոցիոլոգիական մտքի մեջ: Ա.Զդրավամիսլովը դիտարկում է շուկան և ժողովրդավարությունը՝ որպես ժամանակակից ռուսական հասարակության մեջ կոնֆլիկտի դրսևորման ոլորտներ, քանի որ շուկան ենթադրում է տնտեսական շահերի մրցակցություն, իսկ ժողովրդավարությունը քաղաքական հարաբերությունների ոլորտում մրցակցություն է ենթադրում[4]:

Ուշագրավ են նաև ռազմական սոցիոլոգիական մտքի էվոլյուցիայի վերաբերյալ Ի. Օբրասցովի ուսումնասիրությունները և վերլուծությունները:

---

[1] *Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, 1994 The Institute of Contemporary British History.*

[2] *Е. **Зубкова,** Послевоенное советское общество: политика и повседневность, 1945—1953 г., (Москва, 2000).*

[3] ***Лепешинская Т.Д.**, Патриотическое и воспитательное значение романа-эпопеи Л.Н. ТОЛСТОГО «Война и мир», 2006.*

[4] *Социология конфликта: Учебное пособие для студентов ВУЗов, (изд. в рамках программы обновления гум. образования), 3-изд. доп и пер. - М.: Аспект-Пресс, 1996. - 317 с.*

Ռազմական սոցիոլոգիական գիտական արդյունքների դինամիկայի ուսումնասիրության միջոցով հեղինակը նշում է, որ բավականին հիմնարար ուսումնասիրված են ռազմական ոլորտի կառավարման և կառուցվածքային կողմերը, իսկ տնտեսական ասպեկտը դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ[1]:

Հետպատերազմյան հայկական հասարակության մասին ևս կարևոր աշխատություններ և հետազոտություններ են մշակվել, որոնց շարքում պետք է առանձնացնել Հ. Քոթանջյանի մենագրությունը՝ հրատարակված 1992թ.՝ հիմնված նոր զարգացող՝ էթնոքաղաքագիտական մոտեցման վրա[2]: Հեղինակը առաջին արցախյան պատերազմը դիտարկում է 1980-ական սկզբնավորված հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ծիրում, որի առաջին արդյունքներից էր «ազգային և էթնիկ ինքնագիտակցության համատարած արագ աճը, տարբեր բնույթի և երանգների ազգային շարժումների զարգացումը, ազգամիջյան հակասությունների սրումը և երկիրը ցնցած սուր հակամարտությունները»[3]:

Հետպատերազմյան հայաստանյան հասարակության փորձառության վերաբերյալ ուսանելի աշխատություններից է «Կովկասյան երկիր: Կոնֆլիկտների բեռը և փոփոխությունների ժամանակը» կոլեկտիվ մենագրությունը[4] :

Հետպատերազմյան իրականության և հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ մեկ այլ ուղենիշային աշխատություն մշակվել է 2021թ. Զարգացման գերմանական ինստիտուտի կողմից՝ «Սոցիալական համախմբվածությունը զինված հակամարտությունից հետո» վերնագրով[5]: Աշխատությունը հիմնված է ներպետական հակամարտությունների, քաղաքացիական պատերազմների, ինչպես նաև պետությունների կամ խմբերի միջև զինված հակամարտությունների վերաբերյալ հրապարակված, գրախոսված, էմպիրիկ ուսումնասիրությունների վրա, որոնցից շատերը վերլուծում են կոնֆլիկտի հետևանքները՝ հիմնված 2000-ական թթ. իրականացված համապարփակ հետազոտության տվյալների կամ վարքագծային գիտափորձերի վրա: Աշխատությունը վերլուծում է, թե զինված հակամարտություններից հետո ինչպես են բնութագրվում սոցիալական համախմբվածության նշված երեք

---

[1] ***Образцов И.В.***, *Век российской военной социологии / И.В. Образцов, А.Г. Пилипонский, С.С. Соловьев. – М.: ВУ, 1997. – 69 с.*

[2] ***Котанджян Г.С.***, *1992, Этнополитология консенсуса – конфликта. Цивилизационный аспект национальной безопасности. М., “Луч”, 1992,* https://razmavaraget.files.wordpress.com/2020/02/dr._hayk_kotanjian_monograph_1992.pdf

[3] *Նույն աղբյուրը, էջ 22:*

[4] *Земля Кавказская: Бремя конфликтов и время перемен: Коллективная монография (Науч. ред. Л. Арутюнян, Авт. Л. Арутюнян, С. Аствацатуров и др.), Ереван, 2007.*

[5] ***Fiedler C., Rohles C***, *Social Cohesion After Armed Conflict a Literature Review, Bonn 2021.*

բաղադրիչները՝ **վստահությունը, ներառական ինքնությունը և համագործակցությունը հանուն ընդհանուր բարօրության**[1]: **Վստահությունը** վերաբերում է ինչպես սոցիալական, այնպես էլ քաղաքական վստահությանը: Հորիզոնական մակարդակում սոցիալական համախմբվածության համար հատկապես կարևոր է ընդհանրացված վստահությունը, որն իրենից ներկայացնում է «ծանոթ կամ ազգակցական շրջանակներից դուրս մարդկանց վստահելու ունակությունն է»: Փոխարենը ինստիտուցիոնալ վստահությունը վստահությունն է «կառավարության և պետության ֆորմալ, օրինական կազմակերպությունների նկատմամբ՝ ի տարբերություն այդ կազմակերպությունների ներկայիս գործող ղեկավարների», և, հետևաբար, վերաբերում է ուղղահայաց հարթությանը:

Սոցիալապես **համախմբված, ներառական հասարակությունն** այն հասարակությունն է, որտեղ տարբեր ինքնություններ ունեցող անհատները կարող են գոյակցել խաղաղ ճանապարհով, և երբ որոշ որոշակի ինքնություններ գերակշռող չեն ընդհանուր հավաքական ինքնության վրա: Հորիզոնական մակարդակում տարբեր խմբային ինքնություններ հանդուրժվում, ճանաչվում և պաշտպանվում են: Ուղղահայաց մակարդակում սա նշանակում է, որ մարդիկ իրենց առաջին հերթին զգում են ավելի լայն էության մաս (օրինակ՝ ազգ), որն ավելին է, քան անհատների հանրագումարը:

Համագործակցություն հանուն ընդհանուր բարօրության գոյություն ունի մի հասարակության մեջ, որտեղ շատ մարդիկ և խմբեր համագործակցում են «շահերի համար, որոնք գերազանցում են ներգրավված անհատների շահերը»:

Ըստ այս վերլուծության կոնֆլիկտները և հակամարտությունները հիմնականում վնասում են սոցիալական համախմբվածությանը, քաղաքական և սոցիալական վստահությանը: Կարելի է երկու հիմնական տեսական փաստարկներով բացատրել, թե ինչու են հակամարտությունները նվազեցնում քաղաքական վստահությունը: Բռնությունը ցույց է տալիս, որ պետությունն ի վիճակի չէ պաշտպանել իր քաղաքացիներին, իսկ մյուս կողմից տրավման և անվստահությունը կարող են ուղղակիորեն առաջանալ այն բանից, որ կառավարությունը բռնության հիմնական հեղինակն է, ինչն ունի և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ ազդեցություն վստահության վրա, հատկապես այն ինստիտուտների նկատմամբ, որոնք համարվում են բռնության համար հիմնական պատասխանատուն:

Ըստ այս աշխատության՝ հակամարտությունները և կոնֆլիկտները մեծացնում են էթնիկական ինքնությունը՝ համեմատած ազգային

[1] *Նույն աղբյուրը, էջ 3:*

ինքնության հետ: Եթե բռնությունը տեղի է ունենում ինքնության հիմքով, անհատները դիմում են իրենց սեփական խմբին աջակցության և պաշտպանության համար և ավելի քիչ են շփվում արտաքին խմբի հետ, որը դիտվում է որպես թշնամի: Սա բարձրացնում է նույնականացումը ներքին խմբի հետ ինչպես հակամարտության ընթացքում, այնպես էլ դրանից հետո, միևնույն ժամանակ նվազեցնելով արտաքին խմբի հետ կամրջումը և ընդհանուր առմամբ ազգային նույնականացումը: Արդյունքում նաև համագործակցությունը խմբերի միջև ևս նվազում է կոնֆլիկտներից հետո: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ աճում է միայն ներխմբային, այլ ոչ թե արտաքին խմբի հետ համագործակցությունը, ինչը դրականորեն չի ազդում հասարակության ընդհանուր սոցիալական համախմբվածության վրա:

Հետպատերազմյան իրականության հետազոտման փորձերը երիտասարդական ուսումնասիրություններում

Երիտասարդական ուսումնասիրությունների սկզբնավորումից մինչ մեր օրեր դեռևս վերջնական չեն սահմանազծվել թեմատիկ ուղղությունների ողջ շրջանակը: Մշտապես երիտասարդական ուսումնասիրություններում էական և մեծ տեղ են զբաղեցնում երեխաների, երիտասարդների կրթության, ուսուցման վերաբերյալ ուսումնասիրությունները: Ինչպես իրավացիորեն նկատել է կրթության սոցիոլոգ, երիտասարդական ուսումնասիրությունների գիտնական Ա. Ֆուռլոնգը, կոնֆլիկտները և անվտանգությունը երբեք մեծ խնդիր չեն եղել երիտասարդական ուսումնասիրությունների մեջ, սակայն դրանց կարևորությունն այժմ ակնհայտ է ավելի քան երբևէ[1]: Սրանք հարցեր են, որոնք, անշուշտ, արժանի են ավելի մեծ ուշադրության երիտասարդության սոցիոլոգիայում: Այս թեման արդիական է նաև հայկական իրականությունում:

Բազմաթիվ երիտասարդական ուսումնասիրություններ անդրադառնում են կոնֆլիկտային իրավիճակների, ազդեցությանը երեխաների և երիտասարդների կյանքի անվտանգության վրա[2]: Այս թեմայով բազմաթիվ զեկույցներ մշակվել են տարբեր երկրներում պատերազմների և զինված կոնֆլիկտների ժամանակ երեխաների և երիտասարդների իրավունքների ոտնահարման, դրանց իրացմանն ուղղված քայլերի առաջարկությունների կոնտեքստում: Երեխաների և երիտասարդների վրա պատերազմի և

---

[1] ***Furlong A.***, *University of Glasgow, Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, September 2011*.

[2] ***Boyden, Jo, Jo de Berry, Thomas Feeny and Jason Hart***. *January 2002. Children Affected by Armed Conflict in South Asia: A review of trends and issues identified through secondary research. RSC. Working Paper No. 7. Refugee Studies Center, University of Oxford, Oxford, UK*.

կոնֆլիկտների ազդեցության մասին փաստաթղթավորված առաջին զեկույցներից է Գրասա Մաչեի (Graça Mache) զեկույցը[1]:

Հետպատերազմյան երկներում երիտասարդության իրավիճակի վերաբերյալ ուղենիշային աշխատություններից է «Հետպատերազմյան բրիտանական հասարակության ըմբռնումը» գիրքը՝ տպագրված1994թ., որը ներկայացնում է պատերազմի ազդեցությունը բրիտանական հասարակության տարբեր ոլորտների վրա, այդ թվում ընտանիք, ժամանց, կրթություն, աղքատություն, զբաղվածություն, արվեստ, մեդիա, կրոն, սնուցում և այլն՝ հիմնված սոցիոլոգիական մոտեցման վրա[2]: Գրքում ներկայացվում են պատերազմի սոցիալական հատևանքները, որոնց շարքում են սպառողական վարքագծի աճը՝ պայմանավորված մարդկանց տնտեսական վիճակով: Հետաքրքրական է, որ գրքում հետպատերազմյան երիտասարդական հարցերը քննվում են սպառողական հասարակության աճման միտումի շրջանակներում[3]: Գրքում անդրադարձ կա նաև գործազրկության խնդրին, որն ունի տարիքային առանձնահատկություն և վերաբերում է երիտասարդներին: Հետպատերազմյան բրիտանական հասարակությունը բնութագրվում էր աճող գործազրկությամբ: Երիտասարդությանը առնչվող մյուս խնդիրը, որը վերլուծվում է աշխատության մեջ, վերաբերում է ֆիզիկական կրթության մեջ և սպորտում երիտասարդների, հատկապես երիտասարդ կանանց և աղջիկների ներգրավվածության ցածր մակարդակին:

Է. Զուբկովայի «Հետպատերազմյան խորհրդային հասարակություն» մենագրության մեջ հեղինակը անդրադառնում է **երիտասարդությանը**: Հետպատերազմյան երիտասարդների բնութագրական ասպեկտներից են՝

- երիտասարդների ինքնուրույնության և անկախության ձգտումները,
- երիտասարդների քիչ հետաքրքրվածությունը քաղաքական, կուսակցական գործունեությամբ,
- երիտասարդների երկակի կյանք վարելու միտումը՝ մեկը «ցուցադրական մյուսների համար, մյուսը՝ իրական, որը ցույց էին տալիս իրենց մտերիմ շրջանակին»[4],
- երիտասարդների ոչ ֆորմալ խմբերի ձևավորման միտումը:

---

[1] ***Graça Machel**, Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996.*

[2] *Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, 1994 The Institute of Contemporary British History.*

[3] *Abrams 1959b.*

[4] ***Е. Зубкова**, Послевоенное советское общество: политика и повседневность, 1945—1953 г., (М., 2000), էջ 137.*

Հետպատերազմյան իրականության և երիտասարդներին փոխառնչվող թեմաների վերաբերյալ ռուսալեզու ակադեմիական մյուս աշխատությունները հիմնականում ներկայացնում է պատերազմից հետո խոցելի երեխաների և երիտասարդների կենսափորձը՝ մանկատների երեխաներին և երիտասարդներին, «ազգի թշնամի» համարված մարդկանց երեխաների կամ «սոցիալապես վտանգավոր երեխաների» ճակատագիրը:

Անգլիալեզու ակադեմիական գրականությունն անդրադառնում է Սիերե Լեոնեի, Բոսնիա և Հերցեգովինայի դեպքերին, որտեղ վերլուծվում է երեխաների և երիտասարդների ամենօրյա կյանքը պատերազմից հետո՝ հիմնված սոցիալ մարդաբանական և ազգագրական մոտեցումների վրա[1]: Մարդաբանական և ազգագրական հետազոտությունների միջոցով Մ. Պալմբերգերը անդրադառնում է, թե ինչպիսին է Բոսնիա և Հերցեգովինայի պատերազմից միջսերնդային համերաշխությունը և կոնֆլիկտը. այն երիտասարդները, որոնց մանկությունն անցել է պատերազմից ավերված երկրում, քիչ նախապատերազմյան հիշողություններ ունեն, ինչի պատճառով ավագ սերունդների կողմից հաճախ ներկայացվում են որպես ամենաշատը էթնոազգային ատելության ազդեցության տակ գտնվող, հետևանքում մեծահասակները հաճախ այդ երիտասարդներին անվանում են «կորուսյալ սերունդ», որը չի կարող ապավինել ավելի լավ կյանքի հիշողությանը և, հետևաբար, ենթարկվել է ազգայնական քարոզչության մանիպուլյացիայի: Այս կարծրատիպային պատկերացումները, սակայն, կտրականապես մերժվում են երիտասարդության կողմից: Չհայտնվելու համար «կորուսյալ սերունդ» «թակարդում»՝ երիտասարդները պատերազմի ժառանգությունից «անջատվելու» ռազմավարություններ են գտնում: Երիտասարդները իրենց դիրքավորում են որպես պատերազմից քիչ տուժած՝ պայմանավորելով այն իրենց երիտասարդ տարիքով[2]: Հետաքրքրական է, որ Բոսնիա և Հերցեգովինայի դեպքի վերլուծությունները ցույց են տալիս, որ պատերազմի անցյալի իրադարձություններն այնքան ճնշող և սպառնալից են գնահատվում երիտասարդների կողմից, որ երիտասարդները նախընտրում են հեռու պահել իրենց անձնական պատմությունները ավելի լայն սոցիալական համատեքստից և միևնույն ժամանակ տարանջատել իրենց ներկա կյանքը քաղաքականացված հասարակությունից[3]:

---

[1] ***Palmberger M***., *Between Past and Future: Young People's Strategies for Living a "Normal Life" in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.), Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018, pp.107-116.*

[2] ***Palmberger M***., *Between Past and Future: Young People's Strategies for Living a "Normal Life" in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.), Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018, pp.107-116.*

[3] *Նույն աղբյուրը:*

Հետպատերազմյան հասարակության երիտասարդական ուսումնասիրությունների համար կարևոր աշխատություն է մարդաբան Ա. Հրոմաջիչի գիրքը՝ «Դատարկ ազգի քաղաքացիները. երիտասարդությունը և պետականաշինությունը հետպատերազմյան Բոսնիա և Հերցեգովինայում» [1]: Մինչ այս աշխատությունը մարդաբանը տարիներ շարունակ ազգագրական, մարդաբանական հետազոտություն է իրականացրել հետպատերազմյան Բոսնիա և Հերցեգովինայում, այդ թվում՝ երիտասարդների, միգրանտների, միջէթնիկ հարաբերությունների վերաբերյալ՝ ներկայացնելով ինչպես առօրյան հետպատերազմյան հասարակությունում, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող խաղաղաշինական միջամտությունների ազդեցությունը: «Դատարկ ազգի քաղաքացիները» ազգագրական հետազոտություն է մարդկանց, հատկապես Բոսնիա-Հերցեգովինայի երիտասարդության առօրյայի վրա՝ հետպատերազմյան խաղաղության կառուցման և պետականության ստեղծման ազդեցության մասին: Հեղինակը հետազոտությունը իրականացնելիս դատարկ տարածքների է հանդիպում փողոցներում, դպրոցներում և այլ հասարակական վայրերում, որոնք նախկինում՝ մինչ պատերազմը, ազգամիջյան միահյուսման և միախառնման վայրեր էին: Այժմ այս վայրերը դատարկ են որպես «ընդհանուր պատմության ուրվական մնացորդներ «շնորհիվ» էթնիկ ազգայնականությունների հետպատերազմյան ինստիտուցիոնալացման»[2]: Հեղինակը եզրակացնում է, որ երիտասարդությունը, «չունենալով համախմբված ազգի հետ նույնացում, օտարվեց պետությունից և նրա ինստիտուտներից…»[3]:

2020թ.Արցախյան պատերազմից հետո դեռևս ամբողջությամբ և խորությամբ ուսումնասիրված չեն երիտասարդների վրա պատերազմի հետևանքների ազդեցությունը: Երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հատկապես երիտասարդների նպատակադրումները փոխվել են. հետազոտության մասնակցած շուրջ 600 երիտասարդների ճնշող մեծամասնությունը՝ 85% -ը, նշել է, որ պատերազմից հետո զգալիորեն փոխվել է իր ձգտումներն ու նպատակները[4]: Ընդ որում, երիտասարդների շուրջ 70%-ը պատերազմից

---

[1] ***Hromadžić, A**. 2015. Citizens of an empty nation: youth and state-making in postwar Bosnia-Herzegovina. Philadelphia, PA: University of Pennsylvania Press. 239 pp*.

[2] *Նույն աղբյուրը, էջ 8*.

[3] **Hromadžić, A**. 2015. Citizens of an empty nation: youth and state-making in postwar Bosnia-Herzegovina. Philadelphia, PA: University of Pennsylvania Press. 239 pp.էջ 108

[4] *Հետազոտությունը իրականացվել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտական խմբի կողմից, 2022թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին՝ ՀՀ*

հետո ստիպված է եղել նվազեցնել իր ձգտումները և նպատակները և հարմարվել իրավիճակին: Երիտասարդների շուրջ 56% նշել է, որ պատերազմից հետո կորցրել է վստահությունը վաղվա օրվա նկատմամբ: Հետաքրքրական է, որ ըստ 72 % երիտասարդների՝ ՀՀ երիտասարդությունը կարող է ազդեցություն ունենալ պատերազմի հետևանքների հաղթահարման վրա, իսկ երիտասարդների 69 %-ը նշել է, որ ինքն անձամբ ևս կարող է ազդեցություն ունենալ պատերազմի հետևանքների հաղթահարման վրա: Անհատական մակարդակում վերաբերմունքի և վարքային փոփոխության առումով պատերազմի ազդեցությունը ևս հետաքրքիր է ուսումնասիրել, այսպես՝ երիտասարդների 62 %-ը նշել է, որ դարձել է նյարդային և գերզգայուն, իսկ 16,3 %՝ ավելի հոգատար: Երիտասարդների 67 %-ը նշել է, որ ճգնաժամային, բարդ իրավիճակներում փորձում է գտնել **նոր և հետաքրքիր** լուծումներ՝ խնդիրներին դիմակայելու համար, ինչի համար կարող ենք ՀՀ երիտասարդներին հետպատերազմյան իրականությունում սահմանել ոչ թե որպես «կորուսյալ», այլ «ուսյալ սերունդ»:

Եզրակացություններ

Հետպատերազմյան իրականության մասին սոցիոլոգիական միտքը կարելի է բնութագրել հետևյալ առաձնահատկություններով՝

- թեմատիկ բազմազանությամբ,
- աշխարհագրական կոնկրետությամբ,
- ժամանակային և տարածական կոնկրետությամբ,
- միջգիտակարգայնությամբ և միջոլորտայնությամբ,
- պատմագիտական հարացույցի ազդեցությամբ,
- երկրորդային աղբյուրների կիրառման դոմինանտությամբ:

Ընդհանրացնելով հետպատերազմյան իրականության վերաբերյալ հասարակագիտական միտքը՝ կարող ենք նշել, թե որոնք են հետպատերազմյան իրականության սոցիալ-հոգեբանական բնութագրիչները՝

- նախկին արժեքների վերանայումը,
- քննադատական մտածողության մակարդակի բարձրացումը,
- սոցիալական տարբեր շերտերի միջև հաղորդակցության հնարավորությունների և փորձառության մեծացումը,
- ժողովրդագրական խնդիրների սրումը,
- հանցավորության մակարդակի բարձրացումը,

Գիտության կոմիտեի «ՀՀ երիտասարդների հարմարվողականությունը հետպատերազմյան և հետհամավարակային պայմաններում» 20RF-172 ծրագրի շրջանակներում:

- ավանդական ընտանեկան ինստիտուտի ճգնաժամը, այդ թվում՝ միայնակ մայրերի, անօթևան երեխաների քանակի ավելացումը,
- հասարակական կառուցվածքի դիմագծի և բովանդակության փոփոխությունը,
- սոցիալ-տնտեսական խնդիրների սրումը՝ պատերազմի մասնակիցների խնդիրներ՝ բնակարանային պայմաններ, գործազրկություն, առողջական խնդիրներ,
- ազատության, անձնական պատասխանատվության զգացման մեծացումը սեփական անձի և փոքր խմբի նկատմամբ,
- երիտասարդների «լռելու», «պատերազմող մեծահասակներից» տարանջատվելու միտումը և պրակտիկա։

Գրականություն

1. Boyden, Jo, Jo de Berry, Thomas Feeny and Jason Hart. January 2002. Children Affected by Armed Conflict in South Asia: A review of trends and issues identified through secondary research. RSC Working Paper No. 7. Refugee Studies Center, University of Oxford, Oxford, UK.
2. Connerton, Paul. 2011. The Spirit of Mourning: History, Memory and the Body. Cambridge: Cambridge University Press, *p.* 53.
3. Coser L., *The Functions of Social Conflict*. New York: The Free Press, 1956.
4. Dahrendorf R., Toward a Theory of Social Conflict, The Journal of Conflict Resolution, Vol. 2, No. 2 (Jun., 1958), pp. 170-183.
5. Fanthorpe R. and Maconachie R., Beyond The ‘Crisis of Youth’? Mining, Farming, And Civil Society in Post-War Sierra Leone, 2010. Published by Oxford University Press.
6. Fiedler C., Rohles C, Social Cohesion After Armed Conflict a Literature Review, Bonn 2021.
7. Furlong A., University of Glasgow, Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, September 2011.
8. Giddens A., Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 2009, 6th edition, Polity Press.
9. Giddens A., Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 2009, 6th edition, Polity Press.
10. Graça Machel, Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996.
11. Hans A. Illing (1956) Conflict and the Web of Group Affiliations by Georg Simmel, International Journal of Group Psychotherapy, 6:2, 219.

12. Hromadžić, Azra. 2015. Citizens of an empty nation: youth and state-making in postwar Bosnia-Herzegovina. Philadelphia, PA: University of Pennsylvania Press. 239 pp.
13. Huntington S.P., The Soldier and the State, The Theory and Politics of Civil–Military Relations, Cambridge: Harvard University Press, 1957.
14. Jacob C. 2002. “Memories of the American Jewish Aliyah: Connecting Individual and Collective Experience.” In Social Memory and History: Anthropological Perspectives, edited by J. Climo and M.G. Cattell, 111–127. Lanham, MD: AltaMira Press.
15. Lang, K. (1968). Military Sociology 1963-1969. Current Sociology, 16(3), *pp.*7–18.
16. Mysak Y., (2021) Reclaiming Everyday Peace: Local Voices in Measurement and Evaluation after War, Nordic Journal of Human Rights, 39:1, *pp.*95-97.
17. Palmberger M., Between Past and Future: Young People’s Strategies for Living a “Normal Life” in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.), Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018, *pp.*107-116.
18. Post-War Demographic Problems in Britain Author(s): Enid Charles, American Sociological Review, Vol. 11, No. 5 (Oct., 1946), pp. 578-590
19. Shaw, M. (2003) Warand Genocide: Organized Killing in Modern Society (Cambridge: Polity)
20. Silence as Possibility in Postwar Everyday Life, Marita Eastmond, Johanna Mannergren Selimovicy, (2012). Published by Oxford University Press.
21. Sorokin P. A., War and Post-War Changes in Social Stratifications of the Euro-American Population, American Sociological Review, Vol. 10, No. 2, 1944 Annual Meeting Papers (Apr., 1945), pp. 294-303
22. Spenser G. Essays: Scientific, Political, and Speculative. Trans. from Engl. by N. A. Rubakina. Vol. 1. Minsk, Sovremen. literator. 1999.
23. Sultan Barakat (2021) Necessary conditions for integrated approaches to the post-conflict recovery of cultural heritage in the Arab World, International Journal of Heritage Studies, 27:5, *pp.*433-448,
24. Turner, J. H. (1975). Marx and Simmel Revisited: Reassessing the Foundations of Conflict Theory. Social Forces, 53(4), 618–627.

25. Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, 1994 The Institute of Contemporary British History.
26. Which? Craft in Post-War Britain: The Consumers' Association and the Politics of Affluence Author(s): Lawrence Black, A Quarterly Journal Concerned with British Studies, Vol. 36, No. 1 (Spring, 2004).
27. Зубкова Е., «Послевоенное советское общество: политика и повседневность, 1945—1953 г.» (Москва, 2000).
28. Котанджян Г.С., 1992, Этнополитология консенсуса – конфликта. Цивилизационный аспект национальной безопасности. М., “Луч”, 1992.
29. Социология конфликта: Учебное пособие для студентов ВУЗов, (изд. в рамках программы обновления гум. образования), 3-изд. доп и пер. - М.: Аспект-Пресс, 1996. - 317 с.

Նյութը ներկայացվել է 13.04. 2023,
գրախոսման է ուղարկվել 25.04.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը :

ՀՏԴ 94(479.243)

Պատմություն

Իսկուհի ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ.
E-mail: iskuhi82@mail.ru

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1995-2005ԹԹ.)

Հոդվածում քննվում է Արցախի Հանրապետության սոցիալական համակարգը, որը խոր ճգնաժամ էր ապրում Արցախյան առաջին պատերազմի հետևանքով: Ռազմագործողությունների շրջանում երկրամասի բնակչության մեծամասնությունը կրեց զգալի կորուստներ և զրկվեց սոցիալական պահանջները բավարարելու հնարավորություններից:

Խնդիրների լուծման, առհասարակ համակարգի վերափոխման մեկնարկը տրվեց հետպատերազմյան շրջանում, ինչը հնարավորություն տվեց հաղթահարել ճգնաժամը, մեղմել սոցիալական խնդիրները:

ԼՂ Հանրապետությունում սոցիալական պաշտպան-վածության և բնակչության կենսամակարդակի բարձրացման միջոցառումները իրականացվում էին օրենսդրական մակարդակով:

Սոցիալական ոլորտում առկա խնդիրները լուծելու նպատակով, ԼՂՀ –ում ընդունված մի շարք օրենքներ՝ սոցիալական ապահովագրության, սոցիալական աջակցության, կենսաթոշակային, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատանքի և աշխատավարձերի համակարգերի կատարելագործման վերաբերյալ, հնարավորություն տվեցին մեղմացնել

ստեղծվածը վիճակը, սակայն ԼՂՀ–ում իրականացվող սոցիալական բարեփոխումները դեռևս համարժեք չէին բնակչության կենսական հիմնախնդիրներին:

Պետական միջոցառումներից բացի, Արցախի սոցիալական ոլորտը մեծ աջակցություն ստացավ Սփյուռքից՝ հիմնադրամներից, բարեգործական կազմակերպություններից, առանձին անհատների ներդրումներից, որը հնարավորություն տվեց լուծելու ոլորտի մի շարք հրատապ խնդիրներ:

Ոլորտի հիմնական ճյուղերի բարելավումը պետության կողմից դիտարկվում էր որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն հարցերի լուծում:

Բանալի բառեր՝ սոցիալական պաշտպանվածություն , առողջապահություն, փախստականներ, վերաբնակեցում, հաշմանդամներ, թոշակառուներ, գործազրկություն, բարեփոխումներ, օրենքներ, ներդրումներ:

И.Аванесян

СОЦИАЛЬНЫЕ ПРЕОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД / 1995-2005 ГГ./

В статье обсуждается социальная система Республики Арцах, которая пережила глубокий кризис вследствие первой Арцахской войны.

Во время войны большая часть населения страны понесла значительные потери и лишилась возможностей для удовлетворения социальных требований.

Решение проблем, начало реформирования общей системы было дано в послевоенный период, что позволило преодолеть кризис, смягчить социальные проблемы.

Мероприятия по повышению социальной защищенности и уровня жизни населения НКР осуществлялись на законодательном уровне.

С целью решения существующих проблем в социальной сфере, ряд законов НКР о социальном страховании, социальном содействии, пенсионном обеспечении, обеспечении занятости населения, совершенствовании

систем труда и заработной платы, позволили смягчить создавшуюся ситуацию, однако осуществляемые в НКР социальные реформы еще не были адекватны жизненным проблемам населения.
Помимо государственных мероприятий, социальная сфера Арцаха получила большую поддержку от диаспоры-фондов, благотворительных организаций, вкладов отдельных лиц, что позволило решить ряд насущных проблем сферы.
Улучшение основных отраслей сферы рассматривалось государством решение важнейших вопросов обеспечения национальной безопасности.
Ключевые слова: социальная защита, здравоохранение, беженцы, переселение, инвалиды, пенсионеры, безработица, реформы, законы, инвестиции:.

I.Avanesyan

SOCIAL TRANSFORMATIONS IN THE REPUBLIC OF ARTSAKH IN THE POST-WAR PERIOD / 1995-2005/

The article discusses the social system of the Republic of Artsakh, which experienced a deep crisis as a result of the First Artsakh War.
During the war, most of the country's population suffered significant losses and lost opportunities to meet social demands.
The solution of problems, the beginning of the reform of the general system was given in the post-war period, which made it possible to overcome the crisis, mitigate social problems.
Measures to improve social security and living standards of the NKR population were carried out at the legislative level.
In order to solve the existing problems in the social sphere, a number of laws of the NKR on social insurance, social assistance, pension provision, employment provision, improvement of labor and wage systems made it possible to mitigate the situation, but the social reforms implemented in the NKR have not yet been adequate to the vital problems of the population.

In addition to state events, the social sphere of Artsakh received great support from the diaspora - foundations, charitable organizations, contributions of individuals, which allowed solving a number of pressing problems of the sphere. The improvement of the main branches of the sphere was considered by the state to solve the most important issues of ensuring national security.

Key words: *social protection, healthcare, refugees, resettlement, disabled people, pensioners, unemployment, reforms, laws, investments:*

Սոցիալական պաշտպանվածությունը հանդիսանում է պետության քաղաքականությունը՝ ուղղված մարդկանց սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ իրավունքների ազատությունների և շահերի ապահովմանը: Սոցիալական խնդիրները՝ աշխատանքի և հանգստի, ծերության, հաշմանդամության, առողջության պահպանման, գործազրկությունից պաշտպանվածության, կրթության, բնակարանի և մի շարք այլ հարցեր, իրագործվում են պետության կողմից ընդունված մի շարք օրենքների գերակայությամբ:

Պայմանավորված առաջին պատերազմով՝ Արցախի Հանրապետության բնակչությունը ոչ միայն կրեց զգալի կորուստներ, այլև զրկված էր սոցիալական պահանջները բավարարելու հնարավորություններից՝ սով, նկուղային կյանք, էներգիայի ճգնաժամ, ռմբակոծություններ, հրետակոծություններ, հազարավոր զոհեր, վիրավորներ, գերիներ, բռնագաղթ: Հրադադարի հաստատումից հետո Արցախում առաջնահերթ խնդիր դարձան նաև սոցիալական ոլորտի վերափոխումները:

Հարկ է նկատել, որ ԼՂՀ-ում սոցիալական պաշտպանվածության և բնակչության կենսամակարդակի բարձրացման միջոցառումներն իրականացվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» 1992թ. հունվարի 6-ին ընդունված Հռչակագրի[1] և 2006թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության սկզբունքներից ելնելով[2]:

---

[1] *«ԼՂ Հանրապետություն», թիվ 27, 12.03.1998:*

[2] *ԼՂՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ, 2007, հոդված 7, էջ 7: Արցախում, որտեղ «մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից», բնակչության սոցիալական խնդիրները և կենսամակարդակի հարցերը թե՛ պետության, թե՛ հասարակության ուշադրության կենտրոնում են:*

Սոցիալական ոլորտում առկա խնդիրները լուծելու նպատակով ԼՂՀ –ում ընդունվեցին մի շարք օրենքներ՝ սոցիալական ապահովագրության, սոցիալական աջակցության, կենսաթոշակային, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատանքի և աշխատավարձերի համակարգերի կատարելագործման վերաբերյալ: Այսպես, 1995թ. հունիսի 19-ի ԼՂՀ կառավարությունը ընդունեց որոշում՝ «ԼՂՀ աշխատանքի վարձատրության նվազագույն չափի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների չափերի բարձրացման մասին», նույն թվականի նոյեմբերի 21-ին՝ «Միայնակ մայրերի պետական նպաստի նշանակման և վճարման կարգի մասին», 1996թ. փետրվարի 6-ին՝ «ԼՂՀ աշխատանքային վարձատրության նվազագույն չափի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, նպաստների և կրթաթոշակների չափերի բարձրացման մասին» որոշումներ[1], որի արդյունքում բարձրացվեցին կենսաթոշակների, նպաստների, կրթաթոշակների և աշխատավարձերի չափերը:

1998թ. հանրապետությունում սկսեց գործել պետական նպաստների համակարգը, ըստ որի ամենամյա նպաստներ նշանակվեցին հաշմանդամ երեխաներին՝ 4000 դրամ, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին՝ 3000 դրամ, չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներին՝ 2000-ական դրամ[2]: Նպաստներ սահմանվեցին նաև միայնակ մայրերին և գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց: Մինչ այդ, 1996 թ. նոյեմբերի 6-ին ընդունվել էր «ԼՂՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքը, ըստ որի հինգ տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում , իսկ կանայք՝63 տարեկանը լրացած հիմնական կենսաթոշակային չափը սահմանվեց 2860 դրամ, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 30-60 դրամ: Արդեն 2001 թ. հանրապետությունում վճարվող կենսաթոշակները միջին չափով հավելավճարի հետ կազմեցին ավելի քան 9000 դրամ[3]:

Իրականացվող նախաձեռնությունները կարողացան մեղմացնել ստեղծվածը վիճակը, սակայն ԼՂՀ–ում իրականացվող սոցիալական բարեփոխումները դեռևս համարժեք չէին բնակչության կենսական հիմնախնդիրներին: Հետպատերազմյան շրջանում ԼՂՀ–ում ամսական կենսաթոշակը ցածր էր ոչ միայն սպառողական , այլ նաև պարենային

---

[1] ***Մինասյան Է.,*** *Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան , 2013, էջ 184:*

[2] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999, Ստեփանակերտ ,2002, էջ 45-50:*

[3] *Նույն տեղում:*

զամբյուղի նվազագույն մակարդակից[1]: Ստեղծված վիճակը թելադրում էր նախապայմաններ ստեղծել նոր կենսաթոշակային համակարգի ներդրման համար, որը հիմնված կլինի յուրաքանչյուր անհատի կողմից կատարված վճարումների և ստացվելիք կենսաթոշակի մեծության կապի վրա: Չնայած տարեցտարի նկատվում էր կենսաթոշակների չափերի ավելացում, այնուհանդերձ, կապված շուկայական գների զուգընթաց աճի հետ, թոշակառուն իր կարգավիճակում դրական փոփոխություններ քիչ էր նկատում: Կենսաթոշակառուների շարքում քիչ տեղ չէին զբաղեցնում հաշմանդամները: 2004թ. տվյալներով հաշմանդամները կազմում էին հանրապետության թոշակառուների 29.5 տոկոսը[2]: Հաշմանդամ դառնալու պատճառների՝ գնահատման ժամանակ՝ 50.6 տոկոսը պատերազմում վնասնելու հետևանք էր , իսկ երեխաների 88.9 տոկոսի հաշմանդամության պատճառը բնածին անկարողությունը [3]: Հաշմանդամության համար նախատեսվող թոշակները և օգնությունները չէին բավարարում հաշմանդամների պահանջները և չնայած ձեռնարկվում էին սոցիալական միջոցառումներ՝ աջակցություններ, այնուհանդերձ չէին բարելավվում նրանց կենսապայմանները: Դրա մասին են վկայում մամուլում հրապարակված բազմաթիվ նյութերը և հաշմանդամների կողմից պատկան մարմիններին ուղղված նամակ-դիմումները: Պետական միջոցառումներից զատ, նկատվում էր նաև բարեգործական կազմակերպությունների, առանձին անձանց կողմից աջակցությունները սոցիալական նշված խմբին, ինչը նպաստում էին առկա խնդիրների որոշակի չափով լուծմանը:

Հանրապետությունում սոցիալական խնդիրների լուծման գործընթացում կարևոր տեղ են զբաղեցնում աղքատության հաղթահարումն ու ապրելակերպի մակարդակի բարձրացման համար կազմակերպվող աշխատանքները: Սկսած 1995 թվականից ՝ ԼՂՀ-ում պահպանվում է մակրոտնտեսական կայունությունը , որը բնութագրվում է տնտեսական ցուցանիշների դրական տեղաշարժերով, ինչն էլ նպաստեց սոցիալական ոլորտներում մի շարք ծրագրերի իրագործմանը: Աղքատության նվազեցման հանգամանք հանդիսացավ հանրապետությունում տարեցտարի աշխատավարձի և կենսաթոշակի բարձրացումը: Սակայն աշխատատեղերի բացակայությունը նպաստում էր աղքատության մեծացմանը: Միաժամանակ աղքատությունը ոչ միայն աշխատատեղերի

---

[1] *Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն.Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը /2000-2008թթ/, Երևան, 2013, էջ 216: 2002թ. տվյալներով կենսաթոշակը կազմել է միջին ամսական աշխատավարձի 25.6 տոկոսը:*

[2] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006թթ., Ստեփանակերտ, 2007, էջ 75:*

[3] *«Ազատ Արցախ», թիվ 28, 05.06.2008:*

բացակայության արդյունք էր, այլև հետևանք արտադրության տեխնիկական հետամնացության ու աշխատանքի խիստ ցածր արտադրողականության: Աշխատատեղերի բացակայության պայմաններում մարդիկ փորձեցին աղքատությունը հաղթահարել արտագնա աշխատանքի հաշվին, ինչը հետագայում առաջ բերեց արտագաղթի: Արտագաղթը ծանր հետևանքներ էր թողնում հանրապետության ոչ միայն տնտեսության, այլև ռազմավարության վրա: ԼՂՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալներով՝ 2000թ. հանրապետությունից արտագաղթել են 720, 2001թ.՝ 857, 2002թ.՝ 511, 2003թ.՝ 694, 2004թ.՝1657 մարդ[1]: Բնակչության գործազրկության մեղմացման, արտագաղթի կանխման, սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարձրացման համար կարևոր է նոր աշխատատեղերի բացումը: Ստեղծված վիճակը ենթադրում էր պետության կողմից ակտիվ տնտեսական քաղաքականության մշակում:

1997թ. ընդունվեց օրենք՝ ԼՂՀ «Բնակչության զբաղվածության մասին»[2], որում դրվեցին աշխատանքի շուկայի ձևավորման իրավական հիմքերը: Իրականացվեց մի շարք աշխատանքներ, որի արդյունքում հանրապետությունում ստեղծվեցին մանր և միջին ձեռնարկություններ: Այսպես, լայն հնարավորություններ բացվեցին բնակչության մեծ խմբերին աշխատատեղերում ընդգրկելու համար, ինչը նպաստեց աշխատատեղերի ավելացմանը, արտադրության ծավալների մեծացմանը, ինչպես նաև սոցիալական մի շարք հիմնախնդիրների լուծմանը: Նոր աշխատատեղերի բացումն առաջին հերթին հնարավոր էր կապիտալ ծախսերի և անհատական ներդրումների հաշվին: Հատկապես 2000-ական թվականների սկզբներին աշխատատեղեր բացվեցին ալրաղացներում, թռչնաբուծական ֆաբրիկաներում, փայտի վերամշակման ձեռնարկություններում, գինու գործարաններում, սննդամթերքների արտադրության ձեռնարկություններում: Մանր և միջին ձեռնարկությունների բացումը որոշ չափով նվազեցրեց բնակչության արտագաղթը և նպաստեց սոցիալական պայմանների կարգավորմանը:

Սոցիալական ոլորտում կարևորագույն տեղ է զբաղեցնում փախստականների վերաբնակեցման հարցը, որը հանդիսանում է նաև ազգային անվտանգության խնդիր: 1992թ. հունիսի 16-ին ԼՂՀ նախարարների խորհրդի որոշմամբ ստեղծվեց բռնագաղթածների և փախստականների ընդունման ու տեղավորման հանրապետական հանձնաժողով, որը գործում էր շուրջօրյա[3]: Առաջին փախստականների

---

[1] *ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, Ստեփանակերտ, 2009, էջ18:*

[2] *ԼՂՀ գործող օրենքների ժողովածու 1994-2001թթ., մաս Ա, Ստեփանակերտ , 2001, էջ 29:*

[3] ***Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 229:*

մուտքը Լեռնային Ղարաբաղ տեղի ունեցավ դեռևս 1988թ. Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությունից հետո, ինչը շարունակվեց պատերազմի տարիներին: Հանձնաժողովի կողմից կազմակերպվեցին մի շարք աշխատանքներ՝ փախստականներին տեղավորելու, սննդամթերք տրամադրելու և այլ խնդիրներ լուծելու համար: Նկատենք, որ թե՛ պատերազմի օրերին և թե՛ հետպատերազմյան շրջանում, Արցախում ապաստանած փախստականների մի մասը բռնեց արտագաղթի ճանապարհը, որը պայմանավորված էր ինչպես պատերազմական վիճակով, այնպես էլ և սոցալական վիճակով[1]: Հետագա տարիներին կազմակերպվող աշխատանքները կարողացան որոշ չափով մեղմել փախստականների վիճակը, սակայն նրանց խնդիրները ամբողջական լուծում չստացան:

Հրատապ խնդիր է նաև հանրապետության վերաբնակեցման քաղաքականությունը: 2001թ. հունիսի 4-ին ընդունվեց ԼՂՀ Կառավարության «ԼՂՀ տարածքում վերաբնակեցվող ընտանիքներին տրամադրվող արտոնությունների մասին» թիվ 222 որոշումը, ըստ որի ԼՂՀ-ում վերաբնակվող անձանց և նրանց ընտանիքների համար սահմանվեցին մի շարք արտոնություններ, ինչը զգալիորեն նպաստեց վերաբնակեցման աշխուժացմանը[2]:

Այսպես , 2002թ. Արցախի Հանրապետությունում վերաբնակվեց 1186 մարդ, իսկ 511-ը՝ մեկնեց երկրից: Հարկ է նկատել, որ ներգաղթողների 80.2 տոկոսը՝ 1040 մարդ, տեղափոխվել է Հայաստանի Հանրապետությունից[3]: Արցախի կառավարությունը հանրապետությունում վերաբնակեցման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և առավելագույնս կանոնակարգելու նպատակով միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչությանը հանձնարարեց շահագրգիռ նախարարությունների, մյուս պատկան մարմինների հետ մեկամսյա ժամկետում լրամշակել, ԼՂՀ կառավարության քննարկմանը ներկայացնել վերաբնակեցման պետական ու մարդասիրական միջոցների հաշվին

---

[1] *«Ազատ Արցախ», թիվ 15, 21.12.2002: 1992թ. Արցախում բռնագաղթվածների և փախստականների թիվը հասնում էր 35 հազարի:*

[2] *ԼՂՀ Կառավարության ընթացիկ արխիվ, որոշում թիվ 122, 04.07.2001:Արտոնությունների մեջ մտնում էր վերաբնակիչներին բնակարանով ապահովելը , միանվագ օգնություն ցուցաբերելը, սոցիալ- կենցաղային կարիքների բավարարումը, գյուղատնտեսությամբ զբաղվողներին օգնության տրամադրումը և այլն:*

[3] *«Ազատ Արցախ», թիվ 8, 23.01.2003: 2003թ. հունվարի 1-ից ԼՂՀ կառավարությանն առընթերն գործող միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչության որոշմամբ նախատեսվեցին արտոնություններ, որոնք սահմանվել էին վերաբնակիչների համար, պետք է գործեն նաև փախստականների համար: Արցախ վերադարձող փախստականները հիմնականում գալիս էին Հրազդանից, Երևանից, Աբովյանից, Ստեփանավանից,Ռուսաստանի Դաշնությունից :*

իրականացվող ծրագրերի գործընթացում նոր բնակավայրերի ընտրության և շինարարության իրականացման կարգը՝ իր մանրամասնություններով, մշակել համապատասխան կարգ պաշտպանության բանակի՝ բնակարանից զուրկ սպաներին վերաբնակեցման ծրագրում ներառելու վերաբերյալ [1] : Հանրապետությունում, 2003 թվականից սկսած, յուրաքանչյուր տարում վերաբնակվողների համար նախատեսվում էին նոր արտոնություններ, որով հնարավորություններ էին ստեղծվում վերաբնակիչների աշխատանքի և կենցաղի հետ կապված հարցերը լուծելու: Արցախի վերաբնակեցման ծրագրի իրագործմանը նպաստում էին նաև տարբեր հիմնադրամներ, առանձին ներդրողներ: Ծրագրի իրագործմանը նպաստում էր «Հայաստան» համահայկական հիմնադրամը, «Թուֆենկյան» հիմնադրամը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, ինչպես նաև առանձին ներդրողներ: Հարկ է նկատել, որ վերաբնակեցումն հիմնականում կազմակերպվում էր Քարվաճառի, Քաշաթաղի, Մարտակերտի շրջաններում, Շուշի քաղաքում: Վերաբնակեցման ծրագրերը շարունակվեցին նաև հաջորդ տարիներին:

Սոցիալական ոլորտում առավել նշանակալի տեղ ունի բնակչության բուժօգնության և սպասարկման հարցը:

Արցախյան առաջին պատերազմի շրջանում ԼՂՀ-ում ոչնչացվել էր առողջապահական համակարգի գրեթե 80 տոկոսը[2]: Պետք է նկատենք, որ պատերազմը իր կնիքը թողեց նաև այդ ոլորտի վրա: Նշենք, որ առողջապահական համակարգում խնդիրը ոչ միայն կադրերի բացակայությունն էր, այլ նաև հիվանդանոցային հիմնարկների ոչ բարվոք վիճակը, գյուղերում բժշկական կետերի բացակայությունը: Հետպատերազմյան տարիներին բավականին ջանքեր գործադրվեցին վերականգնելու համակարգը: Աշխատանքներն իրականացվում էին կառավարության նախաձեռնությամբ՝ ինչպես պետական միջոցների, այնպես և Սփյուռքի մի շարք բարեգործական ընկերությունների հաշվին: Առողջապահության ոլորտի խնդիրները կարգավորելու ուղղությամբ կառավարության որոշակի միջոցառումները տվեցին իրենց արդյունքները: Կարևոր նախաձեռնություն էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Ստեփանակերտում 2004-2005թթ. համաբուժարանի նոր շենքի կառուցումը, որը իր բուժական ժամանակակից սարքավորումներով նմուշային օրինակ էր հանդիսանում: Մասնավոր բուժօգնության հետ

---

[1] *ԼՂՀ Կառավարությանն առընթեր արխիվ, որոշում թիվ 253, 26.08.2003:*

[2] *«Հայաստանի Հանրապետություն», թիվ 21, 06.02.2007:*

պետության աջակցությամբ իրականացվում էր նաև անվճար բուժօգնություն:

Արցախի առողջապահության հարցում թույլ օղակ էին հանդիսանում գյուղական բնակավայրերը: Այստեղ ժամանակակից բուժկետների բացակայությունից բացի, կար նաև կադրերի խնդիր, մի բան, որը հանդիսանում է գյուղի բնակչության արտագաղթի պատճառներից մեկը: Առողջապահության համակարգում իրականացվող փոփոխությունները ընթանում էին տարբեր ուղղություններով , որն էլ դրական տեղաշարժ բերեց ոլորտին: Սակայն համակարգում շարունակում էին գոյություն ունենալ մի շարք հրատապ խնդիրներ: Հանրապետությունում մեկ շնչի հաշվով կատարվող առողջապահական ծախսերը ցածր էին: Օրինակ, 2004թ. այն կազմում էր 7100 դրամ, 2005թ. ՝ 9894[1]: Ստեղծված վիճակը մեղմացվեց Հայաստանի և Սփյուռքի լայնածավալ օժանդակության շնորհիվ: Առանձնապես խոշոր ծրագրեր իրականացվեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամի, «Վաշինգտոնի հայ բժիշկներ», «Ձեռք ձեռքի» և այլ կազմակերպությունների կողմից: Ոլորտի փոփոխությունները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին, ինչը նպաստեց առողջապահական մի շարք հարցերի լուծմանը՝ նոր համալիրների կառուցում, ժամանակակից սարքավորումների ապահովում, կադրերի համալրում: ԼՂՀ առողջապահական պետական ծրագիրը, որն ուղղված է բնակչության առողջության բարելավմանը, պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիր:

Հետպատերազմյան շրջանում , առհասարակ անկախության տարիներին, ԼՂ կառավարության միջոցառումները, ինչպես նաև հիմնադրամների, բարեգործական ընկերությունների, առանձին անձանց ներդրումները նպաստեցին Արցախի սոցիալական համակարգում լուծել մի շարք խնդիրներ, սակայն ներդրված ջանքերը հարցին չտվեցին ամբողջական լուծում, ինչը նշանակում է բարեփոխումների գործընթացի շարունակականություն:

---

[1] *«Հայաստանի Հանրապետություն», թիվ 28, 16.11.2006:*

Գրականություն

Արխիվային նյութեր

1. ԼՂՀ Կառավարության ընթացիկ արխիվ, որոշում թիվ 122, 04.07.2001:
2. ԼՂՀ Կառավարությանն առընթեր արխիվ, որոշում թիվ 253, 26.08.2003:

Ժողովածուներ, հաշվետվություններ, օրենքներ

1. ԼՂՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ, 2007:
2. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999, Ստեփանակերտ , 2002:
3. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006, Ստեփանակերտ, 2007:
4. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, Ստեփանակերտ, 2009:
5. ԼՂՀ գործող օրենքների ժողովածու 1994-2001թթ., մաս Ա, Ստեփանակերտ , 2001:

Գրքեր

1. Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008թթ), Եր., 2013:
2. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան , 2013:

Պարբերական մամուլ

1. «Ազատ Արցախ», թիվ 15, 21.12.2002:
2. «Ազատ Արցախ», թիվ 8, 23.01.2003:
3. «Ազատ Արցախ», թիվ 28, 05.06.2008:
4. «ԼՂ Հանրապետություն», թիվ 27, 12.03.1998:
5. «Հայաստանի Հանրապետություն», թիվ 28, 16.11.2006:
6. «Հայաստանի Հանրապետություն», թիվ 21, 06.02.2007:

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 94(479.243)

Պատմություն

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.
E-mail: karineal@mail.ru

Արմեն ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ.
E-mail: armbad@mail.ru

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1920-1921 ԹԹ.

Խորհրդային իշխանության հաստատման գործընթացը կազմակերպող ու ղեկավարող ՀԿ(բ)Կ Կենտկոմը խորհրդային կարգերի հաստատումից հետո կազմավորված գավառներում ստեղծում է իշխանության նշանակովի մարմիններ՝ հեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանության հաստատումն էր: Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանություն հաստատվել էր ավելի վաղ՝ թուրքական բռնակալման շրջանում: Սակայն թուրք զավթիչների բռնությունները մեղմելու նպատակով ստեղծված հեղկոմը՝ չկարողանալով հասնել իր նպատակին, 1920թ. հունվարին թողնում է իշխանությունը:

Ալեքսանդրապոլի գավառում կոմունիստական կուսակցության քաղաքականությունն իրականացնում է կուսակցության գավառային կոմիտեն, որն իր հիմնական նպատակը համարում է թուրքերի հեռանալուց հետո խորհրդային իշխանության կազմակերպումը: Ապրիլի 23-ին ստեղծված հեղկոմի և գավկոմի միջև իրավասությունների սահմանների վերաբերյալ հակասությունները երկար ժամանակ չեն դադարում՝

խոչընդոտելով խորհրդային իշխանության հաստատման գործընթացը: Վերջինս, չունենալով սոցիալական լայն հենարան, սկսում է իրականացնել բռնությունների և բռնագրավումների քաղաքականություն, որը չի դադարում նաև ռազմական կոմունիզմից ՆԷՊ-ին (Նոր տնտեսական քաղաքականություն) անցման շրջանում:

Բռնագրավումները խիստ դժգոհություն էին առաջացնում բնակչության մոտ: Գավկոմը կուսակցության հեղինակությունը փրկելու համար մեղադրում է խորհրդային իշխանության մարմիններին՝ հեղկոմներին, որոնք իբր լավ չեն ընկալել կուսակցության քաղաքականությունը:

Բազմիցս իրականացող վերացուցակագրումների արդյունքում խորհրդային իշխանության մարմիններից հեռացվում են հատկապես մտավորականները:

Վերացուցակագրումները մի կողմից փրկում են կուսակցության հեղինակությունը, մյուս կողմից՝ հող նախապատրաստում հեղկոմներից խորհուրդների անցման և կուսակցության մենատիրության հաստատման համար:

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլի գավառ, խորհրդային իշխանություն, ռազմակալում, հեղկոմ, գավկոմ, քաղաքական բռնություններ, վերացուցակագրում, ռազմական կոմունիզմ, պարենհարկ:*

К. Алексанян, А. Бадалян

ПЕРВЫЕ ШАГИ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1920-1921 гг.

Коммунистическая партия большевиков, являющаяся организатором и руководителем процесса установления Советской власти, создала в губерниях, образовавшихся после установления Советской власти, назначаемые органы власти, целью которых было установление Советской власти на местах. В Александропольской губернии советская власть была установлена раньше, еще в период турецкой узурпации. Однако Ревком, созданный для смягчения насилия турецких захватчиков, не сумев добиться поставленной цели, в январе 1920 года оставил

власть. Затем политику Коммунистической партии в Александропольской губернии проводит Губком партии, считающий своей главной целью организацию советской власти после ухода турок.

Однако противоречия между созданными 23 апреля Ревкомом и Губком по поводу круга полномочий долго не прекращались, тормозя процесс установления Советской власти. Последняя, не имея широкой социальной поддержки, начинает проводить политику насилия и конфискаций, которая не прекращается даже при переходе от военного коммунизма к НЭП.

Конфискации вызывали у населения сильное недовольство. Чтобы спасти репутацию партии, Губком возлагает вину на органы советской власти: Ревкомы, которые якобы плохо понимали политику партии. В результате неоднократных изменений списков из органов советской власти выводятся прежде всего представители интеллигенции. С одной стороны, перерегистрация спасает репутацию партии, с другой - подготавливает почву для перехода из Ревкомов к Советам и установления монополии партии.

Ключевые слова: Александропольская губерния, советская власть, оккупация, Ревком, Губком, политическое насилие, военный коммунизм, продовольственный налог.

Ключевые слова:.

K. Aleksanyan, A. Badalyan

THE FIRST STEPS OF THE SOVIET POWER IN ALEXANDRAPOL PROVINCE 1920-1921

Organizing and leading the process of establishment of the Soviet power, the Central Committee of the Armenian Communist Party created significant bodies of power in the provinces formed after the establishment of the Soviet regime, whose purpose was to establish the Soviet power in the places. Soviet power was established in Alexandropol province earlier, during the period of Turkish occupation. However, the executive committee created to mitigate the violence of the Turkish invaders, being unable to achieve its goal, left power in

January 1920.Then the policy of the Communist Party in the province of Alexandropol is carried out by the provincial committee of the party, which considers its main goal to be the organization of the Soviet government after the departure of the Turks. However, the contradictions between the Executive Committee and the Governor's Committee, established on April 23, regarding the limits of jurisdiction did not stop for a long time, hindering the process of establishing Soviet power. The latter, not having a broad social support, began to implement a policy of violence and confiscations, which did not stop even during the transition from military communism to NEP /New Economic Policy/.

The confiscations caused strong dissatisfaction among the population. In order to save the party's reputation, the State Committee blamed the bodies of the Soviet government, the executive committees, which allegedly did not understand the party's policy well. As a result of repeated relistings, especially intellectuals were removed from the bodies of the Soviet government. On the one hand, re-enrollments saved the party's reputation, on the other hand, it prepared the ground for the transition of councils from power committees and establishment of the party's monopoly.

Key words: *Alexandropol province, Soviet authority, military occupation, executive committee, governor's committee, political violence, re-enlistment, military communism, food tax.*

Խորհրդային Հայաստանի բարձրագույն իշխանություն հանդիսացող Ռազմահեղափոխական կոմիտեն, նոյեմբերի 29-ին Խորհրդային Ադրբեջանից մտնելով Հայաստանի Հանրապետության տարածք, դեկտեմբերի 4-ին հասավ Երևան:

Նոյեմբերի 30-ին Հայհեղկոմը հայտնում էր, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմը հանձինս իրենց կազմել է Հայաստանի հեղափոխական կոմիտե՝ Հայաստանը հայտարարելով Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն[1]:

[1] ***Կարապետյան Մ., Գևորգյան Է.***, *Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007, էջ 13:*

Խորհրդային իշխանության հաստատման գործընթացը կազմակերպող ու ղեկավարող ՀԿ(բ)Կ Կենտկոմը խորհրդային կարգերի հաստատումից հետո կազմավորված 9 գավառներում ստեղծում է իշխանության նշանակովի մարմիններ՝ հեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանության հաստատումն էր[1]:

Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված, Ալեքսանդրապոլի գավհեղկոմը ստեղծվել էր 1920թ. նոյեմբերի 17-ին, երբ գավառը գտնվում էր թուրքական բանակի ռազմակալման ներքո[2]:

Թուրքական իշխանությունների համաձայնությամբ Ալեքսանդրապոլի գավառի նորաստեղծ հեղկոմը հույս ուներ մեղմացնելու թուրքական բանակի կողմից իրականացվող բռնությունները, տանելի պայմաններ ստեղծել բնակչության համար և ապահովել վերջինիս ֆիզիկական գոյությունը:[3] Սակայն, հայ բնակչությանը թալանելու և կոտորելու նպատակ ունեցող թուրքական իշխանությունների հետ համագործակցությունն ավելի շուտ վարկաբեկում էր խորհրդային իշխանության գաղափարը: ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ՝ 1921թ. հունվարի 25-ին հեղկոմն իր ամբողջ կազմով (նախագահ՝ Մ. Գրիգորյան, նախագահի փոխանորդ՝ Ն. Ստեփանյան, անդամներ՝ Ն. Կուրղինյան, Վ. Մխիթարյան, Ն. Զավարյան, Ա. Տեր-Մովսեսյան, Զ. Աշրաֆյան և անդամ-քարտուղար՝ Ա. Տեր-Մարտիրոսյան) հրաժարվում է իշխանությունից[4]: Հրաժարականում նշվում էր, որ «հեղկոմի իշխանությունը դարձել է ֆիկցիա, վարկաբեկում է խորհրդային իշխանության գաղափարը, ուստի որոշում է թողնել այն»[5] :

1921թ. հունվարի 27-ին Ալեքսանդրապոլի գավառի միլիցիայի պետ, անկուսակցական Սերգեյ Մատինյանի կողմից ձևավորվում է նոր՝ «Ժամանակավոր իշխանություն», որը գործում է մինչև թուրքական բանակի ռազմակալման ավարտը:

Ալեքսանդրապոլի գավառում կոմունիստական կուսակցության քաղաքականությունն իրականացնում էր դեռևս 1920թ. հունվարի սկզբներին կազմավորված ՀԿ(բ)Կ գավառային՝ յոթ հոգանոց (Ս. Արշարունի, Գ. Արեշյան, Գողթունի, Թ. Մանդալյան, Գասպարյան, Համբարձումյան) կոմիտեն[6]: Վերջինիս կից գործում էին տեղեկատվական-կազմակերպչական,

---

[1] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 336, թ. 1:*

[2] ***Ալեքսանյան Կ.**, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան հեղկոմի գործունեությունը 1920թ. նոյեմբեր-1921թ. հունվարին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., հ. 1, 1998, էջ 117-125:*

[3] *ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 12-15:*

[4] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 54-57:*

[5] *Տե՛ս Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 136:*

[6] *ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 14:*

հաշվառման և բաշխման, ագիտացիոն-պրոպագանդիստական, գյուղացիների և կանանց հետ աշխատելու ու մի քանի այլ բաժիններ, ինչպես նաև՝ քաղաքական և կազմակերպչական բյուրոներ[1]:

Ալեքսանդրապոլի գավկոմն իր հիմնական խնդիրներն է համարում կուսակցության հեղինակության բարձրացումը և կուսակցականների թվի ավելացումը: Ի դեպ, շատերը ստեղծված սոցիալ-տնտեսական անտանելի պայմաններում կուսակցական էին դառնում՝ իրենց գոյությունը մի կերպ պահպանելու համար: Գավկոմին ուղղված կուսակցականների դիմումներից երևում է, որ նրա հաշվառման և բաշխման բաժնի ձեռքում կենտրոնացված էին առաջին անհրաժեշտության իրեր և մթերքներ, որոնք բաշխվում էին միայն կուսակցության անդամներին: «Սրանով դիմում եմ և խոնարհաբար խնդրում Ձեզանից, - Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեին 1921թ. ապրիլի 10–ին խնդրանքում գրում է Թադևոս Խաչիկօղլյանը,- որ ի նկատի ունենալով իմ բոպիկ դրութիւնը և իմ կուսակցական աշխատանքը, որ ես կատարում եմ կոմմունիստական երիտասարդական միութեան Գաւառային կոմիտէի մեջ՝ ընդառաջ գաք իմ այս խնդրին և կարգադրէք բաց թողնել ինձ համար մի զոյգ կոշիկ» [2]:

Սոցիալական ծրագրերի իրականացմանը զուգահեռ, ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմը նախապատրաստում էր գավառի խորհրդայնացումը, որի նպատակով 1921թ. ապրիլի 5-16-ը հրավիրվեց գավկոմի առաջին կոնֆերանսը: Նշենք, որ վերջինս նաև դատապարտեց Ալեքսանդրապոլի նախկին հեղկոմի գործունեությունը՝ որակելով այն քաղաքականապես սխալ[3]: Կոնֆերանսի ընթացքում գավկոմը ենթարկվեց նաև կադրային ու կառուցվածքային որոշակի փոփոխությունների[4]:

Այսպիսին էր իրավիճակը Ալեքսանդրապոլի գավառում, երբ 1921թ. ապրիլի 22-ին, Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո, թուրքական բանակը հեռացավ Ալեքսանդրապոլի գավառից:

Հաջորդ օրը՝ 1921թ. ապրիլի 23-ին, ստեղծվեց Ալեքսանդրապոլի հեղկոմը, որի նախագահը դարձավ Լևոն Սարգսյանը: Հեղկոմի կառուցվածքային ստորաբաժանումներն էին՝ վարչական բաժինը (ղեկավար՝ Հ. Ամատունի), պարենավորման, ֆինանսական ու գյուղատնտեսական՝ (Լ. Սարգսյան), լուսավորության (Հ. Աբրահամյան), սոցիալական ապահովության և

---

[1] ՀԱԱ, ֆ. 3, ց.1, գ. 6, թ. 14:

[2] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 4:

[3] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 3, թ. 6: ***Վիրաբյան Ա., Ալեքսանյան Կ.****, Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի քաղաքային կազմակերպության կոնֆերանսի արձանագրությունները (1921թ. ապրիլ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր,, N , 2015, էջ 170-200:*

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 114, թ. 1-2:

աշխատանքի (Հանեսօղլյան), գյուղատնտեսության (Կուրղինյան), արդարադատության (Թ. Մանդալյան) և առողջապահության (Գողթունի): Հետագայում բաժինների թիվը ավելացավ[1]:

Գավառում, տարրական կարգուկանոն հաստատելու նպատակով, ստեղծվեցին արտակարգ հանձնաժողովը (համալրվում էր միայն ՀԿ(բ)Կ անդամներով) և ժողովրդական միլիցիան (կարող էին աշխատել նաև ՀԿ(բ)Կ անդամ չհանդիսացողները): Կազմավորվեց նաև գավառի ժողովրդական դատարանը[2]:

Հեղկոմը ձեռնամուխ եղավ գավառի սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխությանը, մասնավորապես՝ կատարվեցին տնտեսական որոշակի բարեփոխումներ: Առաջին հերթին կարգավորվեց դրամաշրջանառությունը և որպես հիմնական վճարամիջոց՝ ճանաչվում է Խորհրդային Ռուսաստանի ռուբլին: Գավհեղկոմի 1921թ. ապրիլի 25-ի որոշմամբ՝ պետականացվեցին գործարանները, տպարանները, ջուլհականոցները և արտադրական այլ ձեռնարկություններ: Եվ չնայած պետականացմանը, գավհեղկոմի ապրիլի 28-ի N 3 հրամանով վերոնշյալ ձեռնարկությունները վարձակալման հիմունքով շարունակելու էին կառավարել դրանց նախկին սեփականատերերը: Նույն օրը, մեկ այլ հրամանով, գավհեղկոմը կոչ արեց խանութների սեփականատերերին բացել խանութները և շարունակել առևտուրը, հակառակ դեպքում՝ խանութներում առկա գույքը ևս կպետականացվի[3]:

Ալեքսանդրապոլի գավհեղկոմը լուրջ քայլեր կատարեց նաև գավառի տարածքում ապաստանած գաղթականների վիճակի բարելավման ուղղությամբ[4]:

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ գավհեղկոմի նախագահ Լ. Սարգսյանը մեղմ և հանդուրժողական քաղաքականություն վարելու կողմնակից էր և հատկապես, դեմ էր քաղաքական բռնություններին:

Սակայն, գավհեղկոմի վերոնշյալ քաղաքականությանը խստորեն խանգարում էր այն հանգամանքը, որ դեռևս հստակեցված չէին ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի, գավհեղկոմի և ՀՍԽՀ կենտրոնական իշխանությունների փոխադարձ իրավասությունները: Նշյալի պատճառով լինում էին դեպքեր, երբ գավկոմի և գավհեղկոմի կողմից նույն պաշտոնին միաժամանակ տարբեր մարդիկ էին նշանակվում:

---

[1] *ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 99, թ. 1:*

[2] *ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա , գ. 99, թ. 2:*

[3] *ՀԱԱ, ֆ. 144, ց. 3 ա, գ. 99, թ. 2:*

[4] ***Ալեքսանյան Կ.**, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման շրջանում (1921թ. ապրիլ-դեկտեմբեր), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Գյումրի, 2010, էջ 140-143:*

Ալեքսանդրապոլի գավկոմի և գավհեղկոմի հակասություններն ավելի ակնառու էին տնտեսական քաղաքականությունը իրականացնելու հարցում, հատկապես, երբ հարցը վերաբերում էր պարենմթերքի բռնագրավման հարցին: Ալեքսանդրապոլի գավառը, երկար ժամանակ գտնվելով թուրքական զորքերի օկուպացիայի ներքո, բավականին տուժել էր նրանց կողմից իրականացված թալանից: Եվ չնայած սույն հանգամանքին, գավառի բնակչությունից, Ալեքսանդրապոլ քաղաքի բանվոր դասակարգին և Կարմիր բանակի զորամասերին պարենմթերքով ապահովելու նպատակով, գավառի բնակչությունից մեծ չափերով պարենհարկ էր գանձվում: Եվ, եթե գավհեղկոմը պարենհարկի գանձման ժամանակ ձգտում էր հնարավորինս մեղմ քաղաքականություն իրականացնել, ապա գավկոմը ավելի կոշտ քաղաքականության կողմնակիցն էր և շատ դեպքերում հաշվի չէր առնում հարկ մուծող գյուղացու սոցիալական վիճակը՝ աղքատ է, միջակ, թե հարուստ: Պարենհարկի գանձման, իսկ հաճախ նաև բռնագրավման ժամանակ գյուղացիներին տրվում էին անդորրագրեր, որոնց դիմաց վերջիններս պետական պահեստներից կարող էին ստանալ համապատասխան ապրանքներ: Սակայն, բազմաթիվ էին դեպքերը, երբ գյուղացիներից բռնագրավելով պարենհարկը՝ անգամ այդ անդորրագրերը չէին տրամադրում[1]: Բռնագրավումները բնակչության խիստ դժգոհությունն էին առաջացնում: Դժգոհությունը վարվող այդ քաղաքականության նկատմամբ այն աստիճանի էր հասել, որ գավկոմը ստիպված եղավ արձագանքել: Գավառի տարբեր մակարդակի հեղկոմներից սկսեցին հեռացվել ղեկավար գործիչներ, ովքեր, իբր աղավաղել են կուսակցության տնտեսական քաղաքականությունը: Հեռացման այդ գործընթացին նպաստում էր նշյալ ժամանակաշրջանում սկսված ՀԿ(բ)Կ վերացուցակագրումը: «Կուսակցութեան անձնական կազմը վերաքննելիս, - ասվում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության բոլոր կազմակերպություններին ուղղված հունիսմեկյան կոչում,- կրկնակի ուշադրութիւն պէտք է դարձնել այն անդամների վրա, որոնք դուրս են եկել ունևոր դասակարգի ծոցից: Նրանց նւիրւածութիւնը կուսակցութեան գաղափարներին պէտք է և հնարաւոր է փորձել ու ստուգել քաղաքացիական կռւի ընթացքում նրանց բռնած դիրքից: Վերացուցակագրողների, յանձնաժողովների և ամեն մի կուսակցական ընկերոջ կրկնակի քննութեան առարկա պիտի դառնան և մեր կուսակցութեան այն անդամները, որոնք պատկանելիս են եղել նորերս մեզ միացած ազգային մանր բուրժուական կուսակցութիւններին: Աւելի զգուշավոր վերաբերմունք պէտք է ցոյց տալ և ընդառաջ գնալ բանւորներին և գիւղացիներին՝ թեկուզ նրանք քաղաքականապէս պակաս պատրաստութիւն ունենան:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 20, ֆ. 144, ց. 3, գ. 2, թ. 44:

Կուսակցութիւնը կարճ ժամանակամիջոցում կկարողանա նրանց քաղաքականօրէն, կոմունիստօրէն մարզել, միայն թէ նրանք դասակարգայնօրէն լինեն մեր կուսակցութեան բարեկամները և նուիրուած բանուորա-գիւղացիական յեղափոխութեանը»:[1]

ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմի կողմից 1921թ. մայիսի 30-ին Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Լ. Սարգսյանը ազատվեց զբաղեցրած պաշտոնից: Վերջինիս փոխարինեց Ս. Մանուցյանը, ով դասակարգային պայքարի սրման և հարուստ գյուղացիների դեմ պայքարի ակտիվ կողմնակիցներից էր: Նա, առաջին իսկ հրամանով, գավառային և գյուղհեղկոմներին առաջարկում էր պաշտպանել աղքատ գյուղացիների շահերը հարուստներից՝ սպառնալով հակառակ դեպքում խիստ պատժել նրանց:

1921թ. հունիսի 1-ից 3-ը Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ գավառային կուսկազմակերպության անդամների վերացուցակագրում: Գավկոմի ղեկավարությունը, օգտվելով առիթից, կուսկազմակերպության շարքերից սկսեց հեռացնել առաջին հերթին այն մտավորականներին, որոնցից շատերը, նախկինում լինելով այլ կուսակցության անդամներ, ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կուսկազմակերպության անդամներ էին դարձել հենց գավկոմի խնդրանք-հորդորների արդյունքում[2]:

Գավառային կուսկազմակերպության վերացուցակագրման հանձնաժողովի նախագահ Աշոտ Հովհաննիսյանն Ալեքսանդրապոլի գավկոմի վերացուցակագրումն իրականացնող անդամներին ուղղված կոչում նշում էր, որ կուսակցության շարքերը մաքրելու է սոցիալական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիներից[3]: Միաժամանակ, դիմելով ՀԿ(բ)Կ վերացուցակագրման կենտրոնական հանձնաժողովին, Ա. Հովհաննիսյանը նշում էր. «Ալեքպոլի կազմակերպութիւնը, հակառակ կենտրոնում տիրող կարծիքի, աւելի քան թոյլ է, գեթ կազմակերպութեան մէջ մտնող անդամների զարգացման ընդհանուր մակարդակով: Ինտելիգենտ կուսակցութիւնների մեծ մասը բացարձակ արտահայտութեամբ ոչ մի հասկացութիւն չունի կոմունիստական աշխարհայացքի հիմնական գաղափարների մասին: Եվ որպէսզի կուսակցութիւնը, զերծ մնայ դրանց անխուսափելի վրիպումների պատասխանատուութիւնից, հանձնաժողովը անկետաներ ընդունելիս

[1] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 5:
[2] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 4, թ. 36:
[3] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 2:

հարցաքննում էր ընկերներից շատերին, հատկապէս կասկած հարուցող ինտելիգենտներին»[1]:

Ալեքսանդրապոլի գավառում տիրող կառավարման և կադրային անկայուն վիճակը շարունակում էր խաթարել գավիեղկոմի բնականոն աշխատանքը: Ավելին, օգտվելով ստեղծված այդ վիճակից, ղեկավար շատ գործիչներ միմյանց դեմ դավեր էին նյութում: Դրա լավագույն օրինակներից է Ալեքսանդրապոլի գավիեղկոմի ներքին գործերի բաժնի վարիչ Հ. Ամատունու և նրա ընկերների պատմությունը, որոնց գավկոմի ընդհանուր ժողովը 1921թ. հունիսի 23-ին հեռացրեց աշխատանքից: Նրանք մեղադրվում են պաշտոնները չարաշահելու և պաշտոնական պարտականությունները չկատարելու մեջ: Իր հերթին, Հ. Ամատունին, հուլիսի 4-ին բանտից դիմելով Պ. Մակինցյանին, հեղկոմի նախկին և ներկա ղեկավարներին մեղադրում էր՝ իր աշխատանքային գործունեության հետևանքով տուժելու պատճառով իր դեմ դավեր նյութելու մեջ: Բնականաբար, Հ. Ամատունու այս նամակը գնահատվեց որպես խորհրդային իշխանությունը վարկաբեկելու և գավիեղկոմի դեմ իրականացվող սադրանք, ինչն անհետևանք մնալ չէր կարող: 1921թ. օգոստոսի 8-ին գավիեղկոմը Ալեքսանդրապոլի գավիեղկոմի ներքին գործերի բաժնի վարիչին առաջարկեց Հ. Ամատունուն և նրա ընկերներին վտարել գավառից: Միաժամանակ, աշխատանքից հեռացվեց գավիեղկոմի նախագահ Ս. Մանուցյանը: Վերջինս էլ ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված իր բողոքում ներկայացրեց գավառում տիրող սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, բնակչության սոցիալական գերծանր դրությունը, խորհրդային և կուսակցական մարմինների ոչ հստակ լիազորությունների պատճառով գավառի բազմաթիվ ոլորտներում առկա խնդիրները և այլն[2]:

Չնայած ողջ երկիրը ռազմական կոմունիզմի քաղաքականության ժամանակ իրականացվող բռնագրավումներից անցել էր Նոր տնտեսական քաղաքականության ժամանակ կիրառվող պարենհարկին, այնուամենայնիվ, գավառի գյուղացիության նկատմամբ շարունակվում էր մասնակի բռնագրավումների քաղաքականությունը: 1921թ. սեպտեմբերի 15-ին գավկոմը և գավիեղկոմը պարենտուրքը հավաքելու կոչով դիմում են գյուղացիությանը: Միաժամանակ կրկին սպառնում, որ բերքի չափը թաքցնելու դեպքում նրանք կբանտարկվեն, և նրանց ունեցածը կբռնագրավվի, նույնիսկ կանգ չեն առնի գնդակահարության առաջ[3]: Սեպտեմբերի 19-ից 26-ը պարենտուրքը հավաքող գավառային հանձնաժողովը հայտարարում է ստուգման շաբաթ ու տեղեկացնում գյուղացիությանը, որ նրանք այդ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 158, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆ.1, ց.1, գ.114, թ.30-32:
[3] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 4:

շաբաթվա ընթացքում հնարավորություն ունեն ուղղելու իրենց սխալ տվյալները, այլապես իրենց փրկություն չկա[1]:

Բնակչության շրջանում լուրեր էին տարածվում խորհրդային իշխանության ժամանակավոր լինելու մասին: Գավառի արտակարգ հանձնաժողովը տեղյակ էր, որ բնակչության մեծամասնության, հատկապես՝ գաղթականության վերաբերմունքը խորհրդային իշխանության նկատմամբ թշնամական է[2]: Այդ իսկ պատճառով, գավկոմը ստիպված էր դիմել ազգաբնակչությանը՝ հորդորելով պահպանել հանգստությունը և խաղաղությունը[3]: Միաժամանակ, գավկոմը որոշ քայլեր է իրականացնում կուսակցության և խորհրդային իշխանության հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: 1921թ. նոյեմբերի 24-ի շրջաբերականով գավհեղկոմի նախագահն առաջարկում է. «….առանձին խնամքով ընդառաջ գնալ տեղական կարիքներին և բավարարել աշխատավոր տարրերի արդարացի խնդիրները, նպատակ ունենալով այն թերահավատության դեմն առնելու, որը հետևանք է նման անտարբերության և հետ է մղում խորհրդային իշխանությունից աշխատավորության լայն զանգվածներն ու նպաստավոր հող ստեղծում մեր թշնամիների պրովոկացիոն գործունեության մասին»[4]: Իր հերթին, գավհեղկոմն առաջարկում է գավառակային հեղկոմներին հրաժարվել դատական գործառույթներից և այն հանձնել դատական հիմնարկություններին[5]:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադյալը, նշենք, որ հատկապես Ալեքսանդրապոլի գավառում շատ մեծ դժվարությամբ էր կայանում խորհրդային իշխանությունը: Կատարվեցին բազմաթիվ սխալներ, տուժեցին շատերը, բայց ի վերջո խորհրդային իշխանությունը գավառում կայացավ, և Ալեքսանդրապոլի գավառն ու Ալեքսանդրապոլ քաղաքը (1924 թվականից հետո՝ Լենինական) հետագա տասնամյակներում դարձան Խորհրդային Հայաստանի զարգացած և ծաղկուն բնակավայրեր:

Նյութը ներկայացվել է 16.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 7:
[2] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 6, թ. 19 :
[3] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ 6:
[4] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ 6:
[5] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 18, թ 11:

ՀՏԴ 323.1

Պատմություն

Հարություն ՄԱՐՈՒԹՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, պ.գ.դ.
E-mail: agmidirector@genocide-museum.am., hmarutyan@yahoo.com

Լևոն ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ÃÕÃ³ ÏÇó³Ý¹³Ù

«ՂԱՐԱԲԱՂ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՄԱՆ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԸՍՏ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՑՈՒՅԱՊԱՍՏԱՌՆԵՐԻ)[1]

Հոդվածում փորձ է կատարվում ընդգծելու Ղարաբաղյան շարժման որպես համաժողովրդական ընդվզման դերն ու նշանակությունը Խորհրդային Միության տարբեր ծայրերում ծավալված զանգվածային ելույթների շարքում: Հատկապես ուշադրություն է դարձվում ազգային ինքնությանը, որի խոսուն դրսևորումներից են պատկերներն ու գրավոր բանաձևերն:

Ցույց է տրվում, որ Ղարաբաղյան շարժումը չունենալով նախադեպ իրեն բնորոշ առանձնահատկությունները մշակում էր տարերայնորեն, պետական հզոր մեքենայի դիմակայության պայմաններում:

Լուսաբանվում է, որ տարածաշրջանում արագ փոփոխվող իրադարձություններին զուգահեռ փոփոխություն էր կրում նաև ժողովրդի ինքնությունը, այսինքն՝ 1988 թվականից սկսված փետրվարյան

[1] Հոդվածը շարադրվել է "Memory Across Borders: Dealing with the Legacy of Disputed Territories." Marie Skłodowska-Curie Actions (MSCA) – Research and Innovation Staff Exchange (RISE) – Horizon 2020 – MSCA – RISE – 2018 – 823803 ծրագրի շրջանակներում:

հանրահավաքների մասնակիցը էապես տարբերվում էր 1990 թվականի ապրիլյան ցուցարարից:

Մեկնաբանվում է, որ ազգային ինքնության դրսևորումներից պատկերներն ու գրավոր բանաձևերը ի հայտ են գալիս հասարակության ճգնաժամային պահերին, որոնք Ղարաբաղյան շարժման պատկերագրության ուսումնասիրության շրջանակները ընդլանում են:

Պարզաբանվում է, որ Ղարաբաղյան շարժման ընթացքում ստեղծված ցուցապաստառները արտահայտում էին ժողովրդի մտահոգությունները, տրամադրությունները, ցանկությունները, այս կամ այն իրադարձության գնահատականը և այլն:

Ընդգծվում է, որ Ղարաբաղյան շարժման տարիներին ստեղծված ցուցապաստառները բազմաքանակությամբ, բովանդակային բազմազանությամբ, դրանցում արտահայտված ժողովրդական մտածողության հարստությամբ ուսումնասիրության հարուստ և ծավալուն նյութ են պարունակում:

Ցույց է տրվում, որ ուսումնասիրվող թեման, լայն առումով, արտացոլում է ժողովրդի պատկերացումն իր պատմության պատմական արդարության, ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ և փաստորեն սնում էր Շարժումը նրա գոյության ողջ ընթացքում:

Մանրազնին կերպով լուսաբանվում են մեջբերումների և «մեջբերումային մտածողությամբ» ստեղծված, «Միացում»-ն իբրև լուծում դիտարկվող խմբին պատկանող ցուցապաստառների, «Մայր ու զավակ» որպես «Միացումի»-ի գաղափարը հիմնավորող, «Ղարաբաղը մերն է», «Համերաշխություն» և այլ թեմաներով ցուցապաստառների բովանդակությունը:

Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան շարժում, ազգային ինքնություն, ցուցապաստառային լեզու, զանգվածային ժողովրդական ստեղծագործություն, պատժիչ զորքեր, Հայաստան, Արցախ:*

А. Марутян, Л. Абрамян

ТЕМА “КАРАБАХ-АРМЕНИЯ” В ИКОНОГРАФИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

(По плакатам и транспарантам Карабахского движения)

Образы и письменные формулы, изображенные на плакатах и транспарантах, являются ярким проявлением национальной идентичности и имеют тенденцию появляться в изобилии во времена общественных кризисов. В этом смысле иконография Карабахского движения представляет собой богатую и широкую область исследования. Отличительной особенностью плакатов, созданных во время Карабахского движения, является то, что подавляющее большинство из них не просто провозглашало программные идеи определенных партий или политических течений, а скорее выражало озабоченность, настроения и пожелания людей, их интерпретации событий по мере их развития. Плакаты и транспаранты Движения проявлялись в разных жанрах и отличались разнообразием содержания. Они были продуктом как советского, так и националистического менталитета.

Тема "Карабах-Армения" имела множество различных проявлений в иконографии Карабахского движения, таких как цитаты и создание плакатов с использованием или на основе "цитатного мышления"; объединение Карабаха с Арменией как решение карабахского вопроса; тема Матери-Армении и ребенка-Карабаха; "Карабах – наш"; проявления солидарности с карабахцами; Карабах и Армения как единое целое.

В данной статье представлены и проанализированы эти плакаты и транспаранты как проявления национальной идентичности.

Ключевые слова: *плакаты и транспаранты, иконография, Карабахское движение, национальная идентичность, Мать-Армения, ребенок-Карабах, "цитатное мышление".*

THE "KARABAGH-ARMENIA" THEME IN THE ICONOGRAPHY OF ARMENIAN IDENTITY (Based on posters and banners from the Karabagh Movement)

The images and written formulas depicted on banners and posters are a vivid manifestation of national identity and tend to appear and reappear in abundant quantities in times of societal crises. In this sense, the iconography of the Karabagh Movement represents a rich and broad field of study. What is distinctive about the posters created during the Karabagh Movement is that

a great majority did not simply proclaim the programmatic ideas of certain parties or political trends but rather expressed the people's concerns, moods and wishes and their interpretations of events as they unfolded. The posters and banners of the Movement manifested in varying genres and revealed diversity in their content. They were the product of both Soviet and nationalist mentality.

The theme "Karabagh-Armenia" had many different manifestations in the iconography of the Karabagh Movement, such as quotations and the creation of posters using or based on "quote thinking"; unification of Karabagh with Armenia as a solution for the Karabagh issue; the theme of Mother Armenia and child-Karabagh; "Karabagh is ours"; manifestations of solidarity with the people of Karabagh; Karabagh and Armenia as one entity.

This article presents and analyses those banners and posters as manifestations of national identity.

Key words: *posters and banners, iconography, Karabagh movement, national identity, Mother Armenia, child-Karabagh, "quote thinking".*

Ղարաբաղյան շարժումն (փետրվար 1988 – օգոստոս 1990) առաջին, իրոք, համաժողովրդական ընդվզումն էր Խորհրդային Միության տարբեր ծայրերում հաջորդած զանգվածային ելույթների շարքում: Այդ պատճառով էլ Ղարաբաղյան շարժումը, չունենալով նախադեպ, իրեն բնորոշ առանձնահատկությունները մշակում էր տարերայնորեն, պետական հզոր մեքենային դիմակայության պայմաններում: Արագ փոփոխվող իրադարձություններին զուգահեռ փոփոխություն էր կրում և ժողովրդի ինքնությունը. 1988 թ. փետրվարյան հանրահավաքների մասնակիցը էապես տարբերվում էր 1990 թ. ապրիլյան ցուցարարից:

Ազգային ինքնության խոսուն դրսևորումներից մեկը պատկերներն ու գրավոր բանաձևերն են, որոնք, որպես կանոն, մեծ թվով ի հայտ են գալիս հասարակության համար ճգնաժամային պահերին: Այս առումով Ղարաբաղյան շարժման պատկերագրությունը ուսումնասիրության հարուստ և մեծ դաշտ է ներկայացնում:

Ղարաբաղյան շարժման ընթացքում ստեղծված ցուցապաստառների յուրահատկություններից մեկն այն է, որ դրանց ճնշող մեծամասնությունը ոչ այնքան առանձին կուսակցությունների կամ քաղաքական հոսանքների ծրագրային դրույթներն էր արտահայտում, որքան հաղորդում էր ժողովրդի մտահոգությունները, տրամադրությունները, ցանկությունները, այս կամ այն իրադարձության գնահատականը և այլն: Շարժման ցուցապաստառները

ժանրային ամենատարբեր դրսևորումներ ունեին, աչքի էին ընկնում բովանդակային բազմազանությամբ, կառուցված էին ինչպես ազգայնական, նույնպես և խորհրդային մտածողության հենքի վրա, մի խոսքով՝ ժողովրդական, պատկերագրական բնույթ կրող ազատ մտածելակերպի չմիջնորդավորված ցուցիչներ էին: Ղարաբաղյան շարժման տարիներին *մարդ–իշխանություն, հասարակություն–պետություն* փոխհարաբերությունների մեջ ցուցապաստառներն այն միջնորդներն ու յուրատեսակ գործիքներն էին, որոնցով փոխանցվում էին մարդկանց–հասարակության մտածելակերպը, նաև դիմումներն իշխանություններին ու վերջիններիս տրվող գնահատականները: Ցուցապաստառներն ուղղված էին ոչ միայն իշխանություններին, այլև հենց հայ ժողովրդին, հայաստանցիներին, ադրբեջանցիներին, խորհրդային մեծ երկրի մյուս քաղաքացիներին, աշխարհին, մի խոսքով՝ բոլորին, ով հետաքրքրվում էր հայությանը հուզող հարցերով: Ցուցապաստառները յուրատեսակ մենախոսություն էին ժողովրդի կողմից՝ երկխոսության վերաճելու ակնկալիքով:

Ղարաբաղյան շարժման տարիներին ստեղծված ցուցապաստառները բազմաքանակությամբ (հաջողվել է արձանագրել, բանավոր և գրավոր աղբյուրներից հավաքել շուրջ 1000 միավոր), բովանդակային բազմազանությամբ (առանձնացվում է շուրջ 20 թեմատիկ խումբ), դրանցում արտահայտված ժողովրդական մտածողության հարստությամբ ուսումնասիրության առատ և ծավալուն նյութ են պարունակում[1]: Ստորև կանգ կառնենք միայն մեկ թեմայի վրա, որի պայմանական վերնագիրն է «Ղարաբաղ-Հայաստան»[2] :

Այդ թեման, լայն առումով, արտացոլում է ժողովրդի պատկերացումն իր պատմության, պատմական արդարության, ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ և փաստորեն սնում էր Շարժումը նրա գոյության ողջ ընթացքում: Միևնույն ժամանակ ակնառու է, որ բարդ հասարակական երևույթներին անդրադառնալիս ցուցապաստառների հեղինակները դրանք հաճախ բերում էին մարդկային հարաբերությունների (մայր ու զավակ, համերաշխություն, մաս և ամբողջ և այլն), քարտեզային մտածողության (Հայաստանի ու ԼՂԻՄ-ի քարտեզների ուրվապատկերներով) դաշտ, նաև յուրովի

---

[1] *Հարցի քննարկումը տես՝ Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Եր., «Գիտություն», 2009 (Հիշողության ազգագրություն. 2), էջ 18-23:*

[2] *Հարցը մասնակիորեն քննարկվել է հետևյալ աշխատանքում. Հ. Տ. Մարության, Լ. Հ. Աբրահամյան, Հայ ինքնության պատկերագրությունը. քննության փորձ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների մի խմբի նյութերով, Հայացք Երևանից. Հայագիտական, Եր., 1997, թիվ 4, էջ 55-68: Թեման իրականում ընդգրկում է ավելի բազմազան հարցադրումներ, որոնց ամբողջական ու հանգամանալի վերլուծությունը կիրականացվի առաջիկայում:*

«մարդկայնացնում» էին, և այդ կերպ թեման ավելի հասկանալի ու ընկալելի դարձնում:

Մեջբերումներ և «մեջբերումային մտածողությամբ» ստեղծված ցուցապաստառներ

Առօրյա կյանքում քիչ չի պատահում, երբ մարդիկ իրենց բանավոր կամ գրավոր խոսքն ավելի հիմնավոր դարձնելու համար մեջբերումներ են անում անցյալի մեծերի, հեղինակությունների ստեղծագործություններից ու մտքերից կամ պարզապես ժողովրդական իմաստախոսության շտեմարանից: Եվ դա պատահական չէ, առավել ևս բնորոշ չէ միայն հայերին. սեփական մտքի հիմնավորման և մատուցման նման սկզբունքին դիմել են հնագույն ժամանակներից ի վեր: Խորհրդային իշխանության տարիներին ևս հանրության կյանքը ներծծված էր գերազանցապես հասարակական-քաղաքական բնույթի, հաճախ պարտադրված «մեջբերումացավով»:

Սկզբում մեջբերումներ էին անում Մարքսի ու Էնգելսի, որոշ ժամանակ անց՝ նաև Լենինի աշխատություններից: 1930-50-ական թվականներին օգտագործվող մեջբերումների ճնշող մեծամասնությունը Ստալինի գրչի տակից դուրս եկած կամ ամբիոնից ասված մտքերից էր, ինչպես նաև՝ ավելի ցածրաստիճան ղեկավարների աշխատություններից: Այնուհետև հերթը հասավ կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության մյուս ղեկավարներին՝ Խրուշչովին, Բրեժնևին ու Գորբաչովին: Շուրջ յոթ տասնամյակ շարունակ մեջբերումների համար անհատակ կարասի դեր էր կատարում «Պրավդա» թերթը: Յուրաքանչյուր քիչ թե շատ լուրջ աշխատության գոնե ներածականում պետք է պարտադիր վկայակոչումներ կատարվեին առնվազն մարքսիզմի դասականների աշխատություններից և կամ ԽՄԿԿ համագումարի ու Կենտկոմի հերթական պլենումի նյութերից: Թերևս այդ գործը հեշտացնելու միտումով էին պայմանավորված «հուշող» բնույթի ժողովածուների հրատարակումները՝ բազմահազար տպաքանակներով[1]:

Ղարաբաղյան շարժման տարիներին ևս վերոհիշյալ սկզբունքը լայն կիրառություն գտավ՝ դրսևորվելով ոչ միայն բանավոր ելույթներում ու կոչերում, այլ նաև ցուցապաստառներում: Շարժման ժամանակ մեջբերումներին անդրադառնալը տեղ էր գտնում նաև այլ կերպ, ինչպես, օրինակ՝ մեկ

---

[1] *Տե՛ս, օրինակ Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Կրոնի մասին, Երևան, «Հայաստան» հրատ., 1977: Նույնի՝ Պրոլետարիատի դիկտատուրայի մասին, Երևան, «Հայաստան» հրատ., 1981: Նույնի՝ Կանանց հարցի մասին, Երևան, «Հայաստան» հրատ., 1983: Նույնի՝ Բարոյականության և բարոյական դաստիարակության մասին, Երևան, «Հայաստան» հրատ., 1989:*

ուրիշ նպատակով ասված խոսքից մեջբերում էին անում՝ շեշտելու լրիվ ուրիշ միտք, քիչ չէին նաև արհեստական «մեջբերումային» հորինվածքներ և այլն[1]:

Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերին Օպերայի հրապարակի հարթակում հայտնվեց մի տրանսպարանտ, որը ներկայացվում էր որպես մեջբերում Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի՝ Հայաստանի մաս կազմելու մասին Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի ղեկավար Նարիման Նարիմանովի ստորագրությամբ տեքստից: Տրանսպարանտին գրված էր. «*Карабах, Нахичевань и Зангезур были и остаются неотделимой частью Армении. Н. Нариманов. 2 декабря 1920, газ. "Бакинский рабочий"*» («Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը եղել են և մնում են Հայաստանի անբաժանելի մասը. Ն. Նարիմանով, 2 դեկտեմբերի 1920 թ., «Բակինսկի ռաբոչի») (լուս. 1)[2] :

Ի՞նչ ձևակերպմամբ, ինչպե՞ս և որտե՞ղ է շարադրված եղել նշված միտքը: Այս խնդիրը հայ և ադրբեջանական պատմագրության մեջ դիտարկվել է բազմիցս[3]: Հարցն ունի բազմաթիվ մասնագիտական ելևէջներ, ստորև փորձ

---

[1] *Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը, էջ 101:*

[2] *Հաշվի առնելով ամսագրային հոդվածի ծավալի համեմատաբար սահմանափակ լինելու գործոնը, ինչպես նաև այն, որ շուրջ վեց տասնյակ լուսանկարների բովանդակությունը որոշ չափով ներկայացված է հոդվածի տեքստային մասում, հոդվածի հեղինակները որոշեցին խուսափել լուսանկարների մանրամասն բացատրագրեր կազմելուց և սահմանափակվել միայն լուսանկարների հեղինակներին կամ նրանց հայտնի չլինելու պարագայում՝ առկա աղբյուրները նշելով: Թիվ 3-11, 13, 15, 16, 21-23, 31, 35-39, 42-44, 50, 51, 54, 55, 57 լուսանկարների հեղինակը Հարություն Մարությանն է, թիվ 2, 29, 49 – Լևոն Աբրահամյանը, թիվ 32-34, 40 – Մայիս Վարդանյանը, թիվ 14, 19, 20, 46 – Լյովա Համբարձումյանը, թիվ 24, 25, 45 – Վալերիկ Պետրոսյանը, թիվ 26, 27 – Ռուբեն Մանգասարյանը, թիվ 52 – Վռամ Հակոբյանը: Թիվ 1, 12, 41 լուսանկարները պահվում են Հայոց ցեղասպանության թանգարանի «Արցախյան շարժում» ֆոնդում (բաժին 1, թղթապանակ 103, լուսանկարների ֆոնդային համարներ 1003, 1020, 1048), թիվ 17, 18-ը՝ Գագիկ Սաֆարյանի հավաքածուի մաս են (բաժին 1, թղթապանակ 401, ֆոնդային համարներ 3107, 3097): Թիվ 30 լուսանկարը Արմեն Շ. Սարգսյանի հավաքածուից է, թիվ 47, 48, 53 լուսանկարները վերցված են «Մայր Հայաստան» թանգարանի ֆեյսբուքյան էջից, թիվ 28 և 56 լուսանկարների աղբյուրները նշված են համապատասխան ծանոթագրություններում:*

[3] *Հարցի աղբյուրագիտական հենքը տե՛ս. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы. Под ред. Д. П. Гулиева. Баку: Азернешр, 1989, с. 44-47; Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян. Ереван: Изд-во АН Армении, 1992, с. 600-608; Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии. Сост., отв. ред., автор вступ. статьи и коммент. Ю. Г. Барсегов. Т. 1, М.: Круг, 2008, с. 599-605. Հարցի քննարկումը տե՛ս. Нагорный Карабах. Историческая справка. Под. ред. Г. А. Галояна, К. С. Худавердяна, Изд-во АН Арм. ССР, 1988, с. 23-30; Джамиль Гасанлы. «Вопрос о Нагорном Карабахе на Кавказском бюро ЦК РКП(б) в 1920-1923 годах», Кавказ и глобализация, т. 5, вып. 1-2, 2011, с. 139-144.*

կարվի հնարավորինս համառոտ անդրադառնալ լոկ բուն ձևակերպման խնդրին։ Բանն այն է, որ նշված ձևակերպմամբ այս միտքը չի եղել։ Ըստ ադրբեջանական աղբյուրների, Ադրբեջանի ղեկավարությունը, 1920 թ. նոյեմբերի 29-ին տեղեկանալով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման մասին, գումարում է Կենտկոմի (Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի) նիստ, որտեղ ընդունված որոշման մեջ խոսք է եղել Հայաստանին Զանգեզուրի փոխանցման և Ղարաբաղի լեռնային մասին ինքնորոշման իրավունքի տրամադրման մասին, Նախիջևանի հարցը չի քննարկվել[1]։ Նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմի ղեկավար Նարիմանովը և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Հուսեյնովը ողջույնի հեռագիր են ուղարկում Հայհեղկոմին, որի բովանդակությունը տարբերվում էր Կենտկոմի նիստի ժամանակ ընդունված որոշումից։ Հեռագրում գրված էր. «С сегодняшнего дня объявляются ликвидированными споры о границах между Арменией и Азербайджаном. Нагорный Карабах, Зангезур и Нахичеван считаются частью Армянской Социалистической Республики» (հրապարակվել է Երևանում լույս տեսնող «Коммунист» թերթում դեկտեմբերի 7-ին)[2] : Հայաստանի խորհրդայնացման առթիվ դեկտեմբերի 1-ին գումարված Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում Նարիմանովի ելույթում ասվում է մասնավորապես հետևյալը. «[…] трудовому крестьянству Нагорного Карабаха предоставляется полное право самоопределения, все военные действия в пределах Зангезура приостанавливаются, а войска Советского Азербайджана выводятся» (հրապարակվել է Բաքվի «Коммунист» թերթում դեկտեմբերի 2-ին, ելույթում Նախիջևանի մասին խոսք չկա),[3] իսկ Ադրբեջանի հեղկոմի պաշտոնական Դեկլարացիայում նշված հարցն ունի հետևյալ ձևակերպումը. «[…] территории Зангезурского и Нахичеванского уездов являются нераздельной частью Советской Армении, а трудовому крестьянству Нагорного Карабаха предоставляется полное право самоопределиться, все военные действия в пределах Зангезура приостанавливаются, а войска Советского Азербайджана выводятся» (հրապարակվել է Բաքվի «Коммунист» թերթում դեկտեմբերի 2-ին)[4] : Այսինքն, (ա) տրանսպարանտի տեքստում առկա «были и остаются» ձևակերպումը պաշտոնական տեքստերում բացակայում է, (բ) հեռագրի տեքստը ստորագրել են երկու հոգի, և (գ) արխիվային ժողովածուներում

---

[1] *К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925, с. 44:*

[2] *Нагорный Карабах в 1918-1923 гг., փաստաթուղթ թիվ 420, էջ 602: Нагорный Карабах в международном праве и мировой политике, փաստաթուղթ թիվ 632, էջ 601:*

[3] *Нагорный Карабах в 1918-1923 гг., փաստաթուղթ թիվ 423, էջ 604:*

[4] *Нагорный Карабах в 1918-1923 гг., փաստաթուղթ թիվ 419, էջ 601: Нагорный Карабах в международном праве и мировой политике, փաստաթուղթ թիվ 630, էջ 599:*

դեկտեմբերի 2-ով թվագրվող հրապարակման տեղ նշվում է միայն Բաքվի «Կոմունիստ» թերթը, «Բակինսկի ռաբոչի» թերթում տվյալ հարցի շուրջ հրապարակում եղել է դեկտեմբերի 3-ին:

Նշված թեմայի շրջանակներում մեջբերումային սկզբունքով ստեղծված մյուս տրանսպարանտին (7 մայիսի 1988, հանրահավաք Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության բակում) գրված էր՝ «*Карабахский вопрос есть вопрос чести советских республик. Орджоникидзе*»: Ժամանակագրական առումով Սերգո (Գրիգորի) Օրջոնիկիձեի խոսքը վերաբերում է 1921 թ. հունիսին, երբ վճռվում էր Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելության հարցը. այն պետք է անցներ կամ Հայաստանին, կամ մնար Ադրբեջանի կազմում: Այդ ժամանակ Օրջոնիկիձեն 1920 թ. ապրիլին ստեղծված ՌԿ(բ)Կ ԿԿ-ի կովկասյան բյուրոյի նախագահն էր (նրա տեղակալը Սերգեյ Կիրովն էր): Նկատենք, որ Կովկասյան բյուրոն ոչ թե կովկասյան տարածաշրջանի կուսակցական կազմակերպությունները ղեկավարող ռեգիոնալ կառույց էր, այլ համառուսական կուսակցական կենտրոնի տարածքային պատասխանատու մարմին էր: Նրա գործունեությունը ղեկավարում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմը և անձամբ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ, երկրի փաստացի ղեկավար Վլադիմիր Լենինը:

Օրջոնիկիձեին վերագրվող խոսքը հնչել է 1921 թ. հունիսի 27-ին, Ադրբեջանի ժողկոմխորհի նախագահ Նարիմանովի և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Հուսեյնովի հեռախոսային (հեռատիպային) խոսակցության ժամանակ: Նարիմանովին փոխարինող անձնավորությունը (Շիրվանի) տեղյակ է պահել Հուսեյնովին, որ այդ օրը Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը՝ կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն, քննարկել է Ղարաբաղի հարցը և փաստորեն որոշել է չհամաձայնել նրա փոխանցմանը Հայաստանին, այլապես պատրաստ է հրաժարական տալու: Հուսեյնովը պետք է տեղեկացներ դրա մասին թերևս Օրջոնիկիձեին, և վստահ էր, որ այդ լուրը «շատ սառն է ընդունվելու»: Բանն այն է, որ նախորդ օրը Օրջոնիկիձեն Հուսեյնովին պարզորոշ ասել էր, որ «карабахский вопрос есть вопрос чести советских республик и его нужно решить именно в этом смысле, чтобы это было в последний раз, то есть в том виде, как я Вам передал вчера»[1] : Նկատենք, որ դրա նախորդ օրը Օրջոնիկիձեն և Կիրովը հեռագրով դիմել էին Նարիմանովին, կիսվելով իրենց հետևյալ կարծիքով. «В интересах окончательного разрешения всех трений и установления истинно дружественных отношений при решении вопроса о Нагорном Карабахе необходимо руководствоваться таким принципом: ни одно армянское село не должно быть присоединено к Азербайджану, равно как ни одно мусульманское село нельзя

[1] *Нагорный Карабах в 1918-1923 гг., փաստաթուղթ թիվ 447, էջ 647:*

присоединять к Армении»[1]: Ահա ա՛յդ սկզբունքին էր դեմ արտահայտվել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն և կազմբյուրոն[2]:

Ինչու՞ էին հենց այս բովանդակությամբ տրանսպարանտները հայտնվել փետրվարյան հանրահավաքներում՝ Օպերայի հարթակին և մայիսին՝ գիտությունների ակադեմիայի նախագահության մերձակայքում և մատուցվում էին հարյուր հազարավոր մարդկանց ուշադրությանը: Բանն այն է, որ Ղարաբաղյան շարժման այդ օրերի ղեկավարությունը, մասնավորապես Ի-գոր Մուրադյանը, այն կարծիքին էին, որ հնարավոր է համոզել ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը կամային որոշմամբ հարցը լուծել, մանավանդ որ իր ժամանակին անգամ Խորհրդային Ադրբեջանի կոմունիստ ղեկավարները հարցի շուրջ կայացրել էին արդարացի, կամային որոշում, և «ցանկանում էին» հարցը լուծել հենց այդ՝ կամային որոշման եղանակով: Մինչդեռ իրականում Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները 1920 թ. վիճարկվող տարածքների մասին երբեք չեն օգտագործել «были и остаются» ձևակերպումը (այսինքն՝ արդարամիտ չեն եղել, պատմական արդարության ու, մանավանդ, «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» հայտարարվող գաղափարներից շատ հեռու են եղել) և, ինչպես վկայում են փաստաթղթերը, ամեն ինչ անում էին խնդրի արմատական լուծումը խոչընդոտելու համար:

Հիշենք, որ Ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում չէր բարձրացվում անգամ «ազգերի ազատ ինքնորոշման» սկզբունքը. այն ունեցավ միայն մի քանի տրանսպարանտային արտահայտություն: ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի փետրվարի 20-ին կայացած 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի որոշման մեջ,[3] ինչ-ինչ հաշվարկներից ելնելով (թերևս, ենթադրելով, որ ավելի նպատակահարմար է հարցը ներկայացնել լոկ որպես սահմանադրության 78-րդ հոդվածով ենթադրվող տարածքային խնդիր, որպիսիք եղել են ԽՍՀՄ պատմության ընթացքում և լուծվել են կենտրոնական իշխանությունների կամային որոշ-

---

[1] *Նույն տեղում, փաստաթուղթ թիվ 445, էջ 645:*

[2] *Նույն տեղում, փաստաթուղթ թիվ 446, էջ 645:*

[3] *Նստաշրջանը որոշել է. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրձերի խոր ըմբռնման զգացում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցկացնելու մասին հարցը, միաժամանակ ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի առաջ միջնորդել ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցկացնելու հարցի դրական լուծման մասին»: Սովետական Ղարաբաղ, 21 փետրվարի 1988 թ., թիվ 43:*

մամբ[1]), ոչինչ չէր ասվում ազգերի ինքնորոշման իրավունքի մասին[2]: Սակայն աստիճանաբար հայաստանյան իրականության մեջ սկսեց առաջին պլան մղվել հենց ա՛յդ սկզբունքի կարևորությունը, ինչը նաև հնարավորություն էր ընձեռում հենվել երկրի սահմանադրության 70-րդ հոդվածին[3]: Ա՛յս կերպ էր, որ հարցը երկրի ղեկավարության «ուզել-չուզելու» ոլորտից տեղափոխվում էր այլ, սակայն կրկին սահմանադրական դաշտ:

---

[1] Ղարաբաղյան խնդրի ընկալումների՝ որպես իրավական-քաղաքական, պատմական իրավունքների կամ հողային պահանջատիրության և ինքնորոշման իրավունքի հարց, հանգամանալից վերլուծությունը տե՛ս Աշոտ Սարգսյան, Ղարաբաղյան շարժման պատմություն 1988-1989, Երևան, 2018, էջ 96-101:

[2] Դրա մասին խոսք չի եղել նաև 1988 թ. մարտի 17-ի «Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումի» որոշման մեջ, Ադրբեջանի, ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհուրդների նախագահությանը, պատգամավորներին Լեռնային Ղարաբաղի տարբեր մակարդակի 119 պատգամավորների 1988 թ. մայիսի 20-ի և ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյին ԼՂ մարզկոմի բյուրոյի և մարզի գործկոմի 1988 թ. մայիսի 27-ի դիմումների մեջ: Եվ միայն հունիսի 21-ին գումարված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 12-րդ գումարման արտահերթ նստաշրջանի ընդունված որոշման մեջ երկու անգամ շեշտվում է «ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքի» կարևորությունը: Մանրամասն տե՛ս В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе: Хроника. Часть I: Февраль 1988-январь 1989. Ереван, 1990, էջ 60-61, 85-101:

[3] Կարելի է ենթադրել, որ այն գիտակցումը, որ Լեռնային Ղարաբաղի հայությունն ինքնորոշվել է՝ առկա էր հանրահավաքների մասնակիցներից շատերի մեջ, սակայն այդ գիտակցումը իր հետևից չէր բերում սահմանադրական պայքարի շարունակությունը «ազգերի ազատ ինքնորոշման» իրավունքի սահմանադրական սկզբունքի առաջ քաշման և կենսագործման հետ փոխկապակցելուն: Հարցն առաջին անգամ նման տեսանկյունից բարձրաձայնվեց «Ղարաբաղ» շարժման կազմկոմիտեի (1988 թ. մայիսի վերջերից այն վերանվանվեց «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե» կամ կարճ՝ «Ղարաբաղ կոմիտե») 1988 թ. մարտի 19-ի թռուցիկում՝ վերնագրված «Մեր քաղաքական սկզբունքները» (հեղինակ՝ Վազգեն Մանուկյան): Այս ութ կետանոց փաստաթղթի երկրորդ կետում գրված էր. «Շարժման նպատակն է՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա և առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ, հասնել ԼՂԻՄ-ի բնակչության օրինական պահանջի բավարարմանը»: Տե՛ս. Վազգեն Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում: Ելույթների և հոդվածների ժողովածու, Երևան, «Վ. Ի. Վ. Այսօր և վաղը» հրատ., 2002, էջ 5: Հետագայում «ազգերի ազատ ինքնորոշման իրավունք» ձևակերպումը տեղ գտավ 1988 թ. հունիսի 7-ի հանրահավաքում՝ Լ. Տեր-Պետրոսյանի ներկայացրած ՀԽՍՀ ԳԽ-ի առաջարկվող որոշումների մասին խոսքում, հունիսի 12-ի հանրահավաքի որոշման մեջ («հարգել ամբողջ հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը և ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկ. ՍՍՀ կազմի մեջ»), ապա և հունիսի 14-ին հանրապետական մամուլում հրապարակված ՀԽՍՀ ԳԽ ընդունելիք որոշման նախագծի մեջ: Տե՛ս ИБ [Информационный бюллетень] N 3, էջ 7: Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Կարեն Խաչատրյան, Հրանտ Աբրահամյան), Եր., 2011, էջ 164: Աշոտ Սարգսյան, Ղարաբաղյան շարժման պատմություն 1988-1989, 2018, էջ 125-129:

Միևնույն ժամանակ պետք է նաև նկատել, որ Լեռնային Ղարաբաղի հայության՝ մինչև 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը՝ ձեռնարկած քայլերն (տասնյակ հազարավոր ստորագրություններով դիմումները երկրի կենտրոնական իշխանություններին, երեք պատգամավորությունների մեկնումը Մոսկվա, ԼՂԻՄ շրջանային խորհուրդների գործկոմների որոշումները) իրենց բնույթով արդեն իսկ ինքնորոշման իրավունքի կենսագործման դրսևորումներ էին՝ առանց սակայն այդ հիմնարար ձևակերպմանը հղում տալու[1]:

Հասկանալի է, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցով արտահայտված հեղինակությունների շարքում ամենաբարձրը պետք է համարվեր Լենինը: Սակայն քանի որ առ այսօր հայտնի չէ Լենինի վերաբերմունքն այս հարցին, ապա այն բխեցվում էր լենինյան ավելի ընդհանուր բնույթի արտահայտություններից: Օրինակ, 1988 թ. հունիսի առաջին կեսին՝ այն օրերին, երբ ժողովրդի պահանջով որոշված էր գումարել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան ԼՂԻՄ-ի՝ «Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ անցնելու» հարցով, երևան եկավ մի պլակատ Հայկական ԽՍՀ ու ԼՂԻՄ-ի քարտեզների ուրվանկարով, որը պնդում էր, որ «*Վերակառուցումը լիովին համապատասխանում է լենինյան ազգային քաղաքականությանը*» (լուս. 2), չնայած Լենինը գրել է միայն «ազգերի ինքնորոշման» մասին առանց որևէ կոնկրետ բացատրությունների, ինչն, ի միջի այլոց, առիթ էր հանդիսացել հայերի և ադրբեջանցիների կողմից լենինյան ազգային քաղաքականության տրամագծորեն հակառակ մեկնաբանումների: Բայցևայնպես Շարժման ակտիվիստները կարողացել էին գտնել մի մեջբերում, որը, նրանց պատկերացմամբ, ուղղակիորեն առնչվում էր ղարաբաղյան՝ որպես ինքնորոշման իրավունքի դրսևորման՝ հարցին (լուս. 3, 4). «*Право на самоопределение... означает решение вопроса именно* не *центральным,* [sic!] *парламентом, а парламентом, сеймом, референдумом* отделяющегося меньшинства. *Когда Норвегия отделялась в 1905 г. от Швеции, решала это одна Норвегия, которая вдвое меньше Швеции. В. И. Ленин, том 24, стр. 227*» («Ինքնորոշման *իրավունքը*... նշանակում է հարցի լուծումն հենց *ոչ* թե կենտրոնական պառլամենտի կողմից, այլ *անջատվող փոքրամասնության* պառլամենտի, սեյմի, ռեֆերենդումի միջոցով: Երբ Նորվեգիան անջատվում էր (1905 թ.) Շվեդիայից, հարցը լուծում

[1] *Հարություն Մարության, «Սահմանադրական պայքարը Հայաստանի անկախացման ճանապարհին. Սահմանադրության մասին պատկերացումները, ընկալումները, գնահատականները Ղարաբաղյան շարժման տարիներին», Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում (խմբ. Գագիկ Հարությունյան, Արտակ Մովսիսյան, Տեր Արարատ քահանա Պողոսյան), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 651:*

էր *մեն-միայն* Նորվեգիան (որը երկու անգամ փոքր է Շվեդիայից)։ Վ. Ի. Լենին, հ. 27, էջ 227»)[1]։

Ղարաբաղյան հարցի վերաբերյալ մի հետաքրքիր «լենինյան ասույթ» էր կառուցվել 1988 թ. նոյեմբերի 7-ի խորհրդային վերջին պաշտոնական տոնական ցույցի ժամանակ։ Լենինի մեծ դիմանկարը, որը տանում էր «Ակադեմիա» գրությունն ունեցող ավտոմեքենան, «լրացվել էր» «*Карабах-Армения. Один народ – одна республика*» («Ղարաբաղ-Հայաստան. մեկ ժողովուրդ՝ մեկ հանրապետություն») բովանդակությամբ տրանսպարանտով (լուս. 5)։ Այդպիսով Վ. Ի. Լենինը, որն այդ ժամանակ դեռևս մնում էր իբրև ամենախոշոր հեղինակություն (լուսանկարի ետին պլանում երևում է պաշտոնական տոնական տրանսպարանտ կլիշե-բանաձևով՝ «Փառք Լենինի մեծ գործին»), դառնում էր «հեղինակը» այդ արտահայտության, որն ավելի արժեք էր ստանում այն պատճառով, որ այն տանում էին Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտնականները։

Նույն նոյեմբերի 7-ի խորհրդային վերջին պաշտոնական տոնական ցույցի ժամանակ Լենինի հեղինակավոր խոսքն օգտագործվեց նման մեկ ուրիշ դեպքում, երբ Լենինի պատկերը և իր հայտնի բանաձևը «Есть такая партия!» («Կա՛ այդպիսի կուսակցություն») կրող մեքենայի վրա բարձրացավ մի պատանի և պարզեց եռագույն դրոշը՝ այդպիսով նորովի մեկնաբանելով լենինյան բանաձևը[2]։

---

[1] *Մեջբերումը Լենինի «О национальной программе РСДРП» («ՌՍԴԲՊ ազգային ծրագրի մասին») հոդվածից է, որը լույս է տեսել 1913 թ. դեկտեմբերին։ Այս հոդվածի հաջորդող երկու նախադասություններում ամրապնդվում է վերոբերյալ միտքը հետևյալ կերպ. ««Ինքնորոշման իրավունքը» … նշանակում է այնպիսի դեմոկրատիկ հասարակարգ, որտեղ ոչ միայն ընդհանրապես գոյություն ունենար դեմոկրատիա, այլ հատկապես չկարողանար լինել անջատման հարցի ո չ-դ ե մ ո կ ր ա տ ի կ լուծումն։ … Պրոլետարիատը պահանջում է այնպիսի դեմոկրատիա, որը բացառում է ազգերից մեկի բռնի պահպանումը պետության սահմաններում։ Այս պատճառով էլ, «որպեսզի չխախտենք ինքնորոշման իրավունքը», մենք պարտավոր ենք ոչ թե «քվեարկել հօգուտ անջատման», … այլ քվեարկել, որպեսզի անջատվող մարզին իրեն թողնվի այդ հարցի լուծումը»։ Տե՛ս Լենին Վ. Ի., Երկեր (թարգմանված է չորրորդ հրատարակությունից), հ. 19, Երևան, 1950, էջ 679։ Հոդվածի տեքստում մեջբերվող հատվածն օգտագործել է նաև Հայաստանի գրողների միության նախագահ, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր Վարդգես Պետրոսյանը ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի նիստի իր ելույթում։ Տե՛ս Արցախ. Нагорный Карабах. Информационные материалы. Заседание Президиума Верховного Совета СССР от 18.07.88, Вараракн-Ереван, 1988, էջ 11։ Հարցը՝ ավելի լայն համատեքստում, քննարկված է հետևյալ հրապարակման մեջ. Հարություն Մարության, Սահմանադրական պայքարը Հայաստանի անկախացման ճանապարհին, էջ 643-680։*

[2] *Լևոն Աբրահամյան, Հարություն Մարության, Քաղաքական ելույթների պատկերագրական լեզվի շուրջ (Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների օրինակով), Հայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Եր., 28–30 հոկտեմբերի 1997 թ. (էջ 5-6), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 6։*

Ղարաբաղյան հարցի մասին «մեջբերումային մտածողության» սկզբունքներով ստեղծված մեկ այլ հեղինակավոր արտահայտություն՝ իրար նման ձևակերպումներով, կարելի է տեսնել 1988 թ. փետրվարյան «*Մեր գործը արդար է Մենք կհաղթե՛նք*» տրանսպարանտում,[1] ինչպես նաև 1988 թ. նոյեմբերի 18-ին ֆիքսված Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի քարտեզների ուրվագծերով և «*Հավերժ միասին: Մեր գործն արդար է*» գրվածքով մի պլակատում (լուս. 6, 7) և «*Առաջ, հանուն արդար գործի*» տրանսպարանտում: Չնայած պլակատի տեքստի հեղինակը նշված չէ, սակայն նրա «հեղինակին» դժվար չէ որոշել: «Մեջբերման» առաջին մասը վերևից որպես օրենք իջեցված տխրահռչակ այն շտամպի տարբերակներից է, որով ԽՍՀՄ տարիներին հատկապես սիրում էին փաստել տարբեր ժողովուրդների բարեկամության անխախտելիությունը, ինչպես՝ ռուսների և ուկրաինացիների (դեռևս Բոգդան Խմելնիցկու ժամանակներից) կամ ռուսների և բուլղարների, վերջապես ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, որոնց, ինչպես ԽՍՀՄ օրհներգի խոսքերում էր ասվում, «*навеки сплотила великая Русь*» («հավիտյան համախմբել է մեծ Ռուսիան»): «Մեջբերման» երկրորդ մասը (ինչպես և փետրվարյան տրանսպարանտի տեքստը) ևս շատերին լավ ծանոթ է ԽՍՀՄ պատմությունից. դա ֆաշիստական Գերմանիայի հարձակման առիթով 1941 թ. հունիսի 22-ին ցերեկվա ժամը 12-ին ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ Վյաչեսլավ Մոլոտովի՝ ժողովրդին ուղղված դիմումի ավարտական խոսքերն են՝ «Наше дело правое, враг будет разбит, победа будет за нами!», որոնք հետագայում՝ հուլիսի 3-ին, մի փոքր ձևափոխված տարբերակով կրկնեց Իոսիֆ Ստալինը: Այս կոչը զանազան տարբերակներով բազմիցս կրկնվել է ինչպես մամուլի հրապարակումներում, այնպես էլ բանավոր խոսքում պատերազմի ողջ ընթացքում: Ինչպես հուշում է համացանցը, եռամաս կոչի առանձին մասերը մի փոքր այլ շարադրանքով հայտնի են եղել դեռևս Առաջին համաշխարհային և Քաղաքացիական պատերազմի տարիներին: «Наше дело правое» ձևակերպումն օգտագործել է անգամ Վլադիմիր Լենինը 1903 թ. իր աշխատանքներից մեկում: Այսինքն, 1940-ականներից սկսած այս ձևակերպումը դարձել էր թևավոր և գործածվում էր քարոզչության տարբեր մակարդակներում, ընդհուպ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի մեդալների վրա դրոշմելը՝ «*Наше дело правое. Мы победили*» («Մեր գործն արդար է: Մենք հաղթեցինք»): Այդպիսով, Ղարաբաղը Հայաստանին վերամիավորվելուն ուղղված պայքարը հավասարեցվում էր ֆաշիստական զավթիչների դեմ մղվող արդարացի՝ Հայրենական պատերազմին, իսկ «ստալինյան» արտահայ-

---

[1] *Տե՛ս «Մեր Մայր Հայաստանն ենք ուզում». հանրահավաքներ Ստեփանակերտում և Երևանում, 25-26.02.1988 թ., https://www.youtube.com/watch?v=WLT-Q3vT4aQ , 12.36 րոպե:*

տության վերջին մասը՝ «мы победим» («մենք կհաղթենք»)՝ ինքն իրեն, պլակատի «տողերի արանքում» կարդացվում է: Չնայած դիտարկվող կարգախոսը գրված է հայերեն, այն որոշակիորեն ռուսական/խորհրդային մտածողության արդյունք է: Հետաքրքիր է, որ ղարաբաղյան հարցի արդարացի լուծման համար որպես օժանդակություն բերվում են շտամպ-բառերը հենց այն մարդու, որը, ըստ հայ պատմագրության, ճակատագրական դեր էր խաղացել Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելու գործում:

Բնութագրական է, որ այս բառակապակցությունը չի կորցրել իր այժմեականությունը նաև 1990-ականներից ի վեր, սակայն դրա հայերեն թարգմանությունն օգտագործվում է բացառապես այլ առիթով. հայերենում «արդար» նշանակում է նաև «անխարդախ, անարատ»[1], ու այդ իմաստով կիրառական է «արդար յուղ» արտահայտությունը: Եվ «Մեր գործն արդար է» ձևակերպումը ավելի քան քառորդ դար օգտագործում է «Արզնիկաթ» կաթնավերամշակման գործարանն իր արտադրանքի գովազդման համար,[2] գրում պիտակների, իր ապրանքը տեղափոխող մեքենաների վրա:

«*Карабах должен быть в составе Арм.ССР*» («Ղարաբաղը պետք է լինի Հայկ. ԽՍՀ կազմում») կարգախոսով տրանսպարանտն (փետրվար 1988 թ.) արդեն արտահայտում է ղարաբաղյան հարցի ոչ թե աբստրահված արձանագրումը, այլ անմիջականորեն արտացոլում է 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի արտահերթ նստաշրջանի «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու համար Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին» որոշումը: Ըստ էության, հենց այդ որոշումն էր, որ մարդկանց դուրս բերեց Երևանի փողոցները՝ ի պաշտպանություն իրենց ղարաբաղցի հայրենակիցների, ինչն էլ նշանավորեց Ղարաբաղյան շարժման սկիզբը: «*Արցախը անհապաղ վերամիավորել Հայաստանին*»[3] (լուս. 8), «*Արցախը - Հայաստանին*» (լուս. 9) (երկուսն էլ՝ 7 նոյեմբերի 1988 թ.) տիպի ցուցապաստառներն իրենց տրամաբանությամբ, լեզվամտածողությամբ ծագում են վերոհիշյալ որոշման տեքստի ձևակերպումից և դրան շուրջ չորս ամիս անց հաջորդող՝ 1988 թ. հունիսի 15-ի Հայաստանի խորհրդարանի ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու մասին որոշումից: Դրոշի լեզվով 1988 թ. փետրվարին այդ գաղափարն

---

[1] *Տե՛ս. Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 257:*

[2] *Տե՛ս օրինակ https://www.instagram.com/arzni_kat/*

[3] *Այս նույն պահանջը քիչ այլ ձևակերպմամբ՝ «Անհապաղ Արցախը վերամիավորել Հայաստանին» առկա էր 1988 թ. հոկտեմբերի կեսերին սկսված հացադուլի պահանջների մեջ: Լուսանկարը տե՛ս. Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը, էջ 109, լուս. 57:*

արտահայտված էր «*Ղարաբաղ*» գրությամբ Հայկական ԽՍՀ դրոշակի միջին, կապույտ շերտի վրա (լուս. 10):

«Միացում»-ն իբրև լուծում

Հիշյալ խմբի պլակատների ևս մի հատված կարելի է առանձնացնել յուրահատուկ բանալի հանդիսացող «միացում» բառի առկայությամբ. «*Միացումը մեր գլխավոր խնդիրն է*» (18 սեպտեմբերի 1988 թ.), «*Հայաստան – Արցախ – միացում*» (1988 թ. առաջին կես) (լուս. 11, 12), «*Արցախ-միացում*» (7 նոյեմբերի 1988 թ.) (լուս. 13), «*Հայաստան / Միացում / Արցախ*» (7-8 նոյեմբերի 1988 թ.) (լուս. 14) և այլն: Այդ բառն ամենահանրաճանաչ և բազմիմաստ բառերից էր հանրահավաքների առաջին իսկ օրերից: Նախ և առաջ, այն ինքնին արդեն կարգախոս էր և հաճախ վանկարկվում էր Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելուն նվիրված ելույթներից հետո, ընդ որում, այդ բառն ավելի հաճախ օգտագործվում էր Ղարաբաղում, քան թե Հայաստանում: Այսպես, եթե Երևանում ժողովուրդը պարբերաբար լիցքավորում էր ինքն իրեն «Ղա-րա-բաղ» կարգախոսի վանկարկումով, ապա Ղարաբաղում՝ «մի-ա-ցում» կարգախոսով, չնայած այստեղ հաճախ հնչում էր և «Հա-յաստան» կարգախոսը: Ըստ երևույթին, «մեծ-փոքր» հարաբերակցությունն իր կնիքն էր դնում *Ղարաբաղ-Հայաստան* հարաբերության վրա. «փոքր»-ի համար միավորումը համապատասխանաբար ավելի նշանակալից հասկացություն է, քան «մեծ»-ի համար: «Միավորում» բառը հանդես է գալիս նույնիսկ ԼՂԻՄ-ի ընդունած պաշտոնական փաստաթղթերում, մինչդեռ Հայաստանի ընդունած նմանատիպ որոշումներում նախապատվությունը տրվում է «կազմի մեջ մտնել» արտահայտությանը: Հատկանշական է, որ Հայաստանում Շարժման ղեկավար կորիզը հանդիսացող ոչ ֆորմալ կազմակերպությունը կոչվում էր «Ղարաբաղ կոմիտե», մինչդեռ Շարժման ղարաբաղյան թևը ներկայացնող գլխավոր կազմակերպություններից մեկն իր համար ընդունեց «Միացում» անվանումը: Հետաքրքիր է հետևել, թե ինչպես էր փոխվում այն ենթատեքստը, որի միջով Շարժման տարիներին անցնում էր «միացման» գաղափարը: Սկզբում այն ընթանում էր, ինչպես արդեն նշվել է, որպես միջոց պատմական արդարությունը վերականգնելու համար, հետո այն դարձավ ժողովրդի ինքնորոշման իրավունքը կենսագործող մեխանիզմ: Սումգայիթյան ողբերգությունից հետո «միացում» գաղափարը դարձավ երաշխիք նոր եղեռններից, միակ պայման՝ մարդու իրավունքները պաշտպանելու համար, քանզի այդպիսիք (մարդու իրավունքները) հաշվվում էին սկզբունքորեն անիրագործելի՝ ԼՂԻՄ-ի՝՝ Ադրբեջանի կազմում մնալու դեպքում: Վերջապես, 1990 թ. ամռան կողմերը այդ գաղափարը սկսում է սնել թե՛ ա-

ռանձին կազմակերպությունների, թե՛ կուսակցությունների պահանջատիրական ծրագրերը. այդպիսիք են, օրինակ «*Արցախյան պահանջատիրությունը ազգի միասնության հիմքն է*», «*Արցախի պահանջատիրությունը հայ դատի անբաժանելի մասն է*», «*Ով Արցախի հետ չէ և պահանջատեր չէ՝ հայ չէ*» կարգախոսները:

Հետաքրքիր է, որ «միացում» կարգախոսը շատ արագ ձեռք բերեց բավականին ընդարձակ իմաստային սպեկտր: Այն սկսեցին վանկարկել յուրաքանչյուր այնպիսի ելույթից անմիջապես հետո, որտեղ շոշափվում էր ընդհանրապես միաբանության գաղափարի այս կամ այն տեսանկյուն: Այսպես, այդ կարգախոսով էին պսակվում աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի միաբանության մասին ելույթները: Դիտարկվող կարգախոսին են առնչվում նաև 1988 թ. հունիսյան «*Հայեր բոլոր երկրների, միացե՛ք*» պլակատը (7 հունիսի 1988 թ.) (լուս. 15), կառուցված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայտնի կոչի սկզբունքով, ինչպես նաև այն ելույթները, որոնք կոչ էին անում ժողովրդի և ղեկավարության միասնության (հմմտ. նույն թեմայով 1988 թ. փետրվարյան «*Հայաստանի կառավարություն, միացեք ժողովրդի ձայնին*» պլակատը[1]): 1988 թ. ամռանը և աշնանը Մերձբալթիկայից ժամանած հյուրերի ելույթները նույնպես ուղեկցվում էին «միացում» կարգախոսի վանկարկումով: «Միացում» բառի այս նոր ասպեկտը պլակատային լեզվով մարմնավորված էր մի գունագեղ ցուցապաստառի մեջ, որում միավորված էին երեք մերձբալթյան հանրապետությունների և Հայաստանի դրոշները: «Միացում» կարգախոսին արձանագրված վերջին դիմումը Ղարաբաղյան շարժման քառամյակին նվիրված 1992 թ. փետրվարյան հանրահավաքում էր: Այս անգամ «միացում»-ի կոչը ուղղված էր միմյանց դիմակայող կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին:

«Միացում» բառն արդեն 1988 թ. ծնունդ տվեց հայերի միավորմանը կոչող և մեծ ժողովրդականություն վայելող «Հայեր, միացեք» բանաձևին:[2] Այս կարգախոսը, որպես օրենք, հնչում էր բոլոր զանգվածային ցույցերի և երթերի ժամանակ և հանդես էր գալիս որպես յուրահատուկ կանչ, որը կոչ էր անում մարդկանց միանալ ցույցերին: Իր նեղ, սկզբնական (Արցախի միացումը Հայաստանին) և լայն (բոլոր հայերի միացում) իմաստով օգտագործվող «միացում» բառն իր տրամաբանական ավարտը գտավ 1988 թ. նոյեմբերյան «*Հայ ժողովրդի միասնությունը Արցախի հարցի լուծման գրավականն է*» պլակատում (լուս. 16):

---

[1] *Տե՛ս «Ժամանակագրության շարունակությունը», Հայաստան. Հայաստանի ազգային անկախություն կուսակցության պաշտոնաթերթ, 25 հոկտեմբերի 1989, թիվ 16, էջ 12:*

[2] *Տե՛ս, օրինակ, Լևոն Տեր-Պետրոսյան, «Ղարաբաղը մերն է և մերը կլինի», 15.06.1988 թ., https://www.youtube.com/watch?v=1puEEEjKDk4 , 0.001-0.020:*

Մայր ու զավակ

«Միացում»-ի գաղափարը՝ արդեն վերամիավորման երանգով՝ պատմական, քաղաքական, իրավական և այլ բնույթի հիմնավորումներից զատ, ուներ նաև «ժողովրդական ապացույցների» դաշտ: Այստեղ այն իր դրսևորումը գտավ բազմաթիվ այն ցուցապաստառներում, ուր խաղարկվում էր միմյանցից բռնի անջատված և միմյանց կրկին գտնել երազող մոր և զավակի մոտիվը: Այն հաճախ ուներ քարտեզային լուծումներ, «քարտեզային մտածողության» դրսևորումներ[1]:

Այդ գաղափարի առաջին դրսևորումները հանդիպում են արդեն իսկ 1988 թ. փետրվարյան հանրահավաքների օրերին (փետրվարի 20-26), Օպերայի հրապարակի հարթակում, իրար կողք-կողքի. «*Դու էլ դառած կռվածաղիկ իմ / բալիկն ես / ա՛յ Ղարաբաղ*» (լուս. 17), «*Մայր Հայաստանը տառապած / քեզ է սպասում գրկաբաց*» (լուս. 18):

Առաջին տրանսպարանտի բառերը Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության առաջին տողն է: Թերևս 1950-ական թթ. գրված ու հասկանալի պատճառներով չտպագրված այս ստեղծագործությունը, որտեղ բանաստեղծորեն բնութագրվում է Ղարաբաղ-Արցախի հայության ծանր վիճակը, երկար տարիներ անտիպ էր, սակայն ժողովրդի կողմից սիրված էր ու սերտված և, մասնավորապես, 1965 թ. ապրիլի 24-ի հանրահավաքի ժամանակ ամենահաճախ օգտագործվող բանաստեղծություններից մեկն էր:[2]

---

[1] *«Հայաստանի», «Մեծ Հայքի», «Կորուսյալ հայրենիքի», «Ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» տեսլականը միշտ էլ հուզել է դարեր շարունակ պետականությունից զրկված հայերին, եղել է նրանց մտքերում, հեռու ու մոտիկ, իրական ու անիրական երազանքներում: Հայերը, հատկապես խորհրդային տարիներին, գնահատում էին այն հին, նոր ու նորագույն հայերեն ու օտարալեզու քարտեզները, որոնք ներկայացնում էին պատմական Հայաստանը, կամ որոնց վրա, օրինակ, Օսմանյան կայսրության, ապա և Թուրքիայի տարածքում գրված էր լինում «Հայաստան» կամ «Հայկական լեռնաշխարհ»: Այսինքն, միշտ էլ գնահատվել է հայկական հողերը միացած, միասնական տեսնելու պատկերագրական լուծումը, ինչն էլ առաջարկում էին քարտեզները: Հարցը հանգամանորեն քննարկված է հետևյալ հրապարակումներում. Յարութիւն Մարութեան, «Քարտէզը որպէս ինքնութեան խորհրդանիշ», Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 2006, էջ 443-478: Арутюн Марутян, «Карты как символы национального движения в Армении», в сб.: Mythical Landscapes Then and Now: The Mystification of Landscapes in Search for National Identity. Edited by Ruth Buttner, Judith Peltz. Yerevan: «Antares» Publishing House, 2006, pp. 229-250, 279-285; Harutiun Marutian, «Mapy jako symbole ruchu narodowego w Armenii», in Armenia: kultura współczesna w ujęciu antropologicznym, ed. by Lewon Abrahamian, Konrad Siekierski, Warsaw: Wydawnictwo DiG, 2014, pp. 95-108:*

[2] *Տե՛ս Սամվել Մուրադյան, Հովհաննես Շիրազ. Բանաստեղծը, մարդը, Գիրք Բ, Երևան, ԵՊՀ, 2015, էջ 61: Ա. Ա. Տեր-Մինասյան, «Հովհաննես Շիրազի հայրենասիրական քնարի աշխարհայացքային շերտերը», Բանբեր Երևանի համալսարանի, 2000, թիվ 2, էջ 54: Տե՛ս նաև Միլվա Խաչատրյան, «Հովհաննես Շիրազի քնարը՝ Արցախի ազատագրական շարժման զանգահար», Արցախի պետական համալսարան, Գիտական ընթերցումներ (հոդվածների*

Այստեղ մի քանի անգամ կրկնվում է Ղարաբաղի՝ Հայաստանի զավակ (բալիկ) լինելու գաղափարը։ Շեշտվում էր, որ Ղարաբաղը «դեռ էն գլխից հայոց հող» է, որին «խլել են», հարցադրում էր արվում, թե «ե՞րբ պիտի լեռներիդ պես վեր բռունցքվեն ձեռքերն հայոց», վստահություն էր հայտնվում, որ «Մեզ չի կարող մահն էլ զատել, մի հոգի ենք ու մի մարմին», և ավարտվում էր կանխագուշակմամբ, որ Ղարաբաղը վերստին դառնալու է հայկական։[1] Ուստի պատահական չէ, որ 1988 թ. փետրվարյան օրերին հայտնվեց մի տրանսպարանտ «*Երազդ կիրականացնենք, Շիրազ*» գրությամբ և բանաստեղծի մեծադիր նկարով, այսկերպ անուղղակիորեն ակնարկելով «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության մեջ արտահայտված գաղափարը։ Երկրորդ պլակատում Հայաստանի խորհրդանիշ Արարատների հետնախորքին պատկերված է ձեռքերը լայն բացած և դեպի իրեն վազող մանկահասակ տղային իր գիրկն առնելու պատրաստ երիտասարդ մայր։ Պլակատի անմիջապես վերևում ամրացված է ԽՍՀՄ փաստացի ղեկավար Միխայիլ Գորբաչովի լուսանկարը (այդ առթիվ դիտարկումը տես ստորև)։

Այդ գաղափարը բավականին արտահայտիչ կերպով դրսևորվում է, օրինակ, նաև հետևյալ չորս պլակատներում։ Առաջինում պատկերված է Ռաֆայելի «Սիքստինյան մադոննա»-ի մի դրվագ՝ Աստվածամայրը մանկան հետ, իսկ դրա ներքո՝ Հայաստանի և Ղարաբաղի ուրվագծային քարտեզը։ Սև հաստոտ գիծը բաժանում է մորը և մանկանը և, շարունակվելով ներքև՝ Հայաստանը և Ղարաբաղը։ Պրոֆեսիոնալ նկարչի կողմից ստեղծված այս պլակատը ցուցադրվում էր Նկարչի տանը 1988 թ. մայիսյան ցուցահանդեսում։ Նմանատիպ լուծումներ ունեցող մեկ այլ պլակատում (թերևս նոյեմբերի 7, 1988 թ.) մի անձնավորություն թրով կտրում է դեպի Հայաստանի ուրվանկարային քարտեզի վրա կիսապառկած մայրը (Մայր Հայաստանը) ԼՂԻՄ-ի տարածքի կողմից շտապող փոքրահասակ երեխայի ճանապարհը (պատկերը հստակ չէ) (լուս. 19)։

Երրորդ պլակատը (լուս. 20) թերևս կարելի է համարել «մայր-զավակ» թեմայի ամենաբնութագրական պատկերը։ Պլակատը Օպերայի հրապարակում էր հայտնվել 1988 թ. ամռանը՝ հունիս-հուլիսին։ Պրիմիտիվիզմի կանոններով ստեղծված այս պլակատում Հայկական ՍՍՀ տարածքում, այնտեղ, որտեղ պետք է լինի Երևանը, պատկերված է հայկական ավանդական տարազով մայրը։ ԼՂԻՄ-ի տարածքը (մակագրված՝ Արցախ), սահմանային ուղեկալներով և դրանց միջև քաշված փշալարերով,

---

ժողովածու)։ Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2018, էջ 178-180։

[1] *Յովի. Շիրազ, «Ղարաբաղի ողբը», «Բագին» 9-12 (1990), էջ 26-27։*

անջատված է Հայաստանից և գտնվում է Ադրբեջանի կազմում (դա հասկացվում է մահմեդական կիսալուսնի և աստղի պատկերով՝ սահմանային ուղեկալի այուներից մեկի վերնամասում[1]): Արցախի տարածքում նստած է արական սեռի մանուկ, որն ուզում է գալ դեպի ձեռքերը բաց իրեն սպասող մայրը: Պլակատի վերնամասում իրավիճակի ողջ դրամատիզմն արտահայտող հետևյալ քառատողն է. «Մի՛ լար որդիս հասկանում եմ՝ մերկ ես, մենակ ու անտուն… / Ախ, ինչ անեմ, անխղճորեն քեզ գիրկս առնել չեն թողնում, / Քիչ էլ տոկա, հո մեր երկրում միայն անխիղճ չի ապրում, / Ժամն այդ կգա, հավատա ինձ՝ կհայտնվես իմ գրկում»:

Չորրորդ պլակատը, նկարված սիրող նկարչի կողմից, ժողովրդի ձեռքին էր 1990 թ. ապրիլի 24-ին, Եղեռնի զոհերի հիշատակի օրը (լուս. 21): Այս պլակատում միմյանցից անջատված մայրն ու զավակը ձգվում են դեպի ի-րար. մոր թևքերը պատկերված են հայկական ազգային եռագույն դրոշակի ձևով, մինչդեռ զավակը շղթայված է երկաթե կապանքների մեջ, որոնք փակ-ված են մահմեդական կիսալուսին և աստղ ունեցող կախովի կողպեքով: Ընդ որում, սա այն եզակի դեպքերից է, երբ պլակատն ուղեկցվում է առանձին տրանսպարանտով, ուր բառային մակարդակով բացատրված է այն, ինչ պատկերված է պլակատին՝ «*Շղթաներից ազատվելու համար հարկավոր է պայքարել*»: Եթե 1988 թ. վերը դիտարկված պլակատի վրա մոր և զավակի տարանջատվածության պահը միայն արձանագրված էր, ապա 1990 թ. պլա-կատին, ավելի շուտ նրան ուղեկցող տրանսպարանտի վրա, արդեն նշվում է անջատումը հաղթահարելու եղանակը: Այս պլակատում զավակը ինչպես որ մայրության ավանդական մյուս պատկերներում է, արական սեռի է: Բնորոշ

---

[1] *The star and crescent are sometimes presented as symbols of Islam. However, it is known that the star and crescent were used as symbols at least 3,000 years prior to the formation of Islam. According to certain sources, in the fourth century B.C. these signs had become the symbol of Byzantium (later Constantinople, now Istanbul). When the Turks conquered the capital of the Byzantine Empire in 1453, they appropriated the banner and the symbol of the city, too. Moreover, as the Ottoman Empire had for centuries ruled the Islamic world, and had led numerous wars against Christian Europe, many have come to perceive the star and crescent as specifically Islamic symbols. Meanwhile, it is known that Islam has no historically created symbols: there is no mention of them in the Koran and there is no evidence of their link to the Prophet Mohammed, not to mention that according to the Muslim religion to use anything as a symbol of Allah is considered a sin. Thus, the star and crescent were symbols of the Ottoman Empire, and are to the present, at least as perceived by Armenian society, considered symbols of Turkish identity. Since the Azerbaijanis have been perceived by Armenians as Caucasian Turks, it is but natural that people, wishing to point out the ethnic identity of Turks/Azerbaijanis, have made use of none other than the star and crescent, which is also a handy means for the iconographic solution of the problem. See in detail, for example:*
http://islam.about.com/library/weekly/aa060401a.htm;
http://islam.about.com/gi/dynamic/offsite.htm?site=http://www.fotw.net/flags/islam.html;
http://altreligion.about.com/library/glossary/symbols/bldefsstarcrescent.htm;
http://altreligion.about.com/library/texts/bl_2ancientpagan11.htm;
http://www.straightdope.com/mailbag/mcrescent.html .

է, որ նույնիսկ այն պլակատներում, որոնք անմիջականորեն չեն կապվում մայրության թեմայի հետ, Արցախը ներկայացվում է հալածված պատանու տեսքով:

Մեկ այլ պլակատում (7 հունիսի 1988 թ.) տարանջատված մոր և զավակի թեման («*Мать-Армения ждет свое дитя Арцах*» - «Մայր-Հայաստանը սպասում է իր զավակ Արցախին») (լուս. 22) ուղեկցվում է արդեն զուտ սիմվոլիկ պատկերով. Հայաստանը ներկայացված է համընդհանուր ճանաչում գտած իր սիմվոլով՝ Արարատ լեռով, իսկ Արցախը՝ ղարաբաղյան երկարակյացների «ամուսնական զույգի» արձանախմբով, որը, հատկապես Շարժման օրերին, դարձել էր նրա ամենաճանաչվող կերպարը:

Այս թեմային է ինչ-որ չափով առնչվում նաև «Գարուն» ամսագրի 1988 թ. հոկտեմբերյան համարի շապիկի նկարը. Հայաստանի ուրվագծային քարտեզի վրա մագնիս է տեղակայված, որն իրեն է ձգում ավելի փոքր չափի մագնիսը, դրված այնտեղ, ուր, եթե քարտեզը շարունակելու լինեին, պետք է գտնվեր ԼՂԻՄ-ը: Բացի բնական մագնիսային ձգողականության մոտիվից, մայրության թեման այստեղ կարելի է գտնել և Հայաստանի քարտեզում, որտեղ հաճախ տեսանելի է կիսադեմով, ձգված վիզ ունեցող կանացի գլխի ուրվապատկերը:

Հիշյալ մոտիվը հատկապես լավ է արտահայտված 1988 թ. ամառային մի «ֆոտոկրծքանշանի» վրա (լուս. 23)[1]: Լուսանկարչական եղանակով բազմացրած, 4x6.5 սմ չափերն ունեցող «կրծքանշանը» ներկայացնում է Հայաստանի մանրամասնորեն մարդակերպացված քարտեզը. կին-քարտեզի վրա նկարված են նույնիսկ աչքերն ու մազերը, Սևանա լիճը դարձել է հերակալ, իսկ Երևանը նշված է թանկարժեք քարից պատրաստված կլորավուն ականջողի ձևով: Կինը կարոտով նայում է ԼՂԻՄ-ի քարտեզին, որը, նկարված լինելով Հայկ. ԽՍՀ դրոշի ֆոնին, տեղադրված է օվալաձև շրջանակի մեջ: Կնոջ գլուխը նույնպես պատկերված է նման հիմնագույնի վրա, ընդ որում՝ վերին ձախ անկյունում նկարիչը՝ Ցեղրիկ Ասլանյանը, տեղադրել է նաև Հայկ. ԽՍՀ պետական դրոշի բանվորագյուղացիական խորհրդանիշը՝ մուրճ ու մանգաղը աստղի հետ: Ֆոտոկրծքանշանի վերին ու ստորին մասերում համապատասխանաբար գրված է «*Միայն այդպես ենք հաղորդակցվում... մինչև ե՞րբ...*» և «*Բանական մարդի՛կ, մի թույլ տվեք կորչի՛... Փրկե՛ք, վերադարձրե՛ք...*»: Սա մեզ հայտնի միակ դեպքն է, երբ պլակատում գիտակցաբար կատարված է տեղագրական վերադասավորում՝

[1] *«Ֆոտոկրծքանշանը» սիրալիր կերպով հեղինակներին է տրամադրել մեր գործընկեր Հռիփսիմե Պիկիչյանը:*

ԼՂԻՄ-ը տեղադրված է Հայաստանից ոչ թե աջ,[1] այլ ձախ, այնպես, որ կին-Հայաստանը կարողանա նրան տեսնել: Հետաքրքիր է, որ նկարիչը, ըստ երևույթին փորձելով հիմնավորել այս տեղագրական անճշտությունը, ԼՂԻՄ-ի քարտեզը զետեղել է ոսկեզօծ շրջանակի մեջ, այդ ձևով պարզաբանելով ուղեկցող գրությունը՝ «Միայն այդպես ենք հաղորդակցվում», այսինքն հաղորդակցվում ենք ինչպես ազգականի հետ (հմմտ. դրոշակի հիմնագույնը), որը գտնվում է օտարության մեջ և այդ պատճառով էլ հիշատակային բնույթի լուսանկարում է: Կրծքանշանի խորհրդային սիմվոլիկան ընդգծում է հայերի լոյալությունը, այսինքն բազմիցս շեշտվող այն հանգամանքը, որ հայերի պահանջները չեն կրում հակախորհրդային բնույթ:

Ֆոտոկրծքանշանի գրությունների սրտաճմլիկ պոետիկան զուգորդվում է այն բանաձևերի հետ, որոնցում նույնպես խաղարկվում էր տարանջատված մոր և մանկան թեման, որն ընդգծված շեշտադրում ուներ հատկապես 1988 թ. փետրվարյան հանրահավաքների առաջին օրերին. գրեթե յուրաքանչյուր ելույթ ունեցողը, որպես օրենք, խանդալիցորեն, այս կամ այն կերպ օգտագործում էր այդ կերպարը:[2] Տրանսպարանտային կատարմամբ այն հնչում էր հետևյալ ձևով. «*Мы ждем свое дитя Арцах*» («Մենք սպասում ենք մեր մանկանը՝ Արցախին»), «*Մայր Հայաստանը քեզ է կանչում, Ղարաբաղ*» կամ «*Մայր Հայաստանն է կանչում*»[3] (բոլորն էլ՝ փետրվար 1988 թ.): Վերջին կարգախոսը հետաքրքիր է այն առումով, որ փաստորեն պատճենահանված է Հայրենական մեծ պատերազմի սկզբից ի վեր հայտնի «*Родина-мать зовет*» («Մայր-հայրենիքն է կանչում») պլակատից: Բերված բոլոր բանաձևերն

---

[1] *Այլ ցուցապաստառների վրա հանդիպող ԼՂԻՄ-ի տեղադրումը մայր-Հայաստանի ուր-վագծային քարտեզ-կիսադեմի ծոծրակային մասից ներքև համադրվում է բառային հայտնի «Ղարաբաղը մայր-Հայաստանի մեջքն է» բանաձևի հետ, և այդ իսկ պատճառով այն՝ մեջքը, չի կարելի «կոտրել»: Այդ թեզը մեկ անգամ չէ, որ բերվում է ի պաշտպանություն այն բանի, որ Ղարաբաղը պետք է հայկական մնա:*

[2] *Հմմտ. ստեփանակերտյան հանրահավաքների մասնակիցներից բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի ձևակերպումը հարցազրույցի ժամանակ՝ 1988 թ. փետրվարի 25-ին. «Ժողովրդի պահանջը շատ արդար է, ազնիվ ու բարոյական պահանջ է: … Այս ժողովուրդը ցանկանում է ապրել իր ժողովրդի հետ, երբ որդին ուզում է ապրել իր մոր հետ և ուզում է, այսպես ասած, ժողովրդի լեզվով ասած, խորթ մորից ազատվել և ապրել իր հարազատ մոր հետ: Այստեղ ոչ մի վատ բան չկա, այստեղ ոչ մի չար բան չկա: Այստեղ ժողովուրդների հարաբերությունները խաթարելու ոչ մի միտում չկա»: Տե՛ս «Մեր Մայր Հայաստանն ենք ուզում». հանրահավաքներ Ստեփանակերտում և Երևանում, 25-26.02.1988 թ., https://www.youtube.com/watch?v=WLT-Q3vT4aQ , 0.22-1.32 րոպե: Գուրգեն Գաբրիելյանի մասին տե՛ս Գայանե Լալայան, «Գուրգեն Գաբրիելյանը և Արցախյան շարժումը», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար գիտություններ, 2015, թիվ 1, էջ 84-88:*

[3] *Տե՛ս Ժամանակագրության շարունակությունը:*

ուղղված են մոր կողմից զավակին, ինչը զարմանալի չէ, քանի որ դրանք ստեղծվում էին Երևանում: Մոտավորապես այդ նույն ժամանակ՝ 1988 թ. փետրվարին, մայիսին և սեպտեմբերին Ստեփանակերտում ևս հանդիպում էին նմանատիպ ցուցապաստառներ, սակայն դրանք արդեն ուղղված էին անապաստան զավակի կողմից մորը, ինչպես օրինակ. «*Ղարաբաղին՝ Մայր Հայաստան*» (լուս. 24), «*Որբ Ղարաբաղը մայր է ուզում*», «*Мечта карабахцев – воссоединение с матерью-Арменией*» («Ղարաբաղցիների երազանքն է՝ վերամիավորումը մայր-Հայաստանի հետ») և կամ դիտարկվող խմբին անուղղակիորեն առնչվող կարգախոսը՝ «*Гарантия счастья наших детей – воссоединение НКАО с Арменией*» («Մեր երեխաների երջանկության գրավականը ԼՂԻՄ-ի Հայաստանի հետ վերամիավորումն է»), չնայած այս վերջինում նախ և առաջ դիմվում է շատ ավելի կոնկրետ թեմայի՝ ծնողի հոգացողությունը իր երեխաների նկատմամբ, «*Наша цель – воссоединение с Матерью Арменией*» (Ասկերան, լուս. 25): Ճիշտ է, 1988 թ. փետրվարին Երևանում նույնպես արձանագրվեց Հայաստանի և ԼՂԻՄ-ի ուրվագծային քարտեզներով մի պլակատ, որը ևս սրտաճմլիկ եղանակով դիմում էր մայր-Հայաստանին զավակ-Ղարաբաղի անունից՝ «*Մայրիկ, օգնիր, դժբախտության մեջ եմ*» (լուս. 26, 27): Սակայն, դատելով բովանդակությունից, կարելի է ենթադրել, որ այն ստեղծված էր ղարաբաղյան ծագում ունեցող երևանցիների կողմից:[1] Իրավիճակն ասես կրկնվեց ավելի քան երեք տասնամյակ անց, երբ «Հայաստան» դաշինքի 2022 թ. նոյեմբերի 5-ի հանրահավաքի ժամանակ մի պատանի ձեռքին բռնել էր դրանից օրեր առաջ՝ հոկտեմբերի 30-ին, Ստեփանակերտում կայացած բազմահազար հանրահավաքի ժամանակ լուսանկարված մի աղջնակի պատկերը, ում ձեռքին էր զավակ-Արցախի դիմումը Մայր Հայաստանին՝ «*Ես քո՛ զավակն եմ, Հայաստան*» (լուս. 28):[2]

1988 թ. ամռանը ղարաբաղյան խնդրի առաջարկվող ժողովրդական լուծումների մեջ քննարկվում էր նաև մեկ այլ տարբերակ՝ որ Հայաստանը՛ միանա Արցախին: Ու անմիջապես ստեղծվեց այս գաղափարին համարժեք բովանդակությամբ ցուցապաստառը, որն արձանագրվել է 1988 թ. հուլիսին. «*Արցախ[,] Մայր Հայաստանի սիրտն ու ձեռքը քեզ*»:[3]

---

[1] *Կարգախոսների և պլակատային գաղափարների որպես կանոն Ղարաբաղից Հայաստան արտահանում դիտվում էր Շարժման ողջ ընթացքում: Թատերական հրապարակում առանձնանում էր նույնիսկ մի տարածք՝ վառ արտահայտված ղարաբաղյան կարգախոսներով. դա Հ. Թումանյանի հուշարձանի մոտակայքն էր, որտեղ սովորություն ունեին հանրահավաքների ժամանակ հավաքվելու երևանցի ղարաբաղցիները:*

[2] *«Մե՛նք ալ քո զավակն ենք, Հայաստա՛ն…», Հայրենիք (Բոստոն), 8 նոյեմբերի 2022 թ.:*

[3] *Տրանսպարանտը ֆիքսել ենք 2004 թ. աշնանը «Հեղափոխություն» հեռուստահաղորդման ժամանակ (վարող՝ Վահրամ Մարտիրոսյան):*

Իր երեխաների երջանկության մասին հոգացող մոր կերպարը, ինչպես պարզվեց, սնում էր ոչ միայն Ղարաբաղում և Հայաստանում ցուցապաստառներ կերտողների, այլև անձամբ Միխայիլ Գորբաչովի երևակայությունը, որն իր «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին» (26 փետրվարի 1988 թ.) դիմումի մեջ նույնպես անդրադառնում էր այս, գրեթե ամեն օր հիշատակվող կերպարին՝ «*Ни одна мать не согласится с тем, чтобы ее детям угрожали национальные распри*...» («Ոչ մի մայր չի համաձայնվի, որ իր զավակներին ազգային գժտություններ սպառնան...»):[1] Հետաքրքիր է, որ հայերի որոշ մասի շրջանում խոսքային այս շտամպը՝ զուգորդվելով վերոբերյալ պլակատներին, վարդագույն հույսեր առաջացրեց առ այն, որ հայերի նման Գորբաչովը ևս ղարաբաղյան պրոբլեմի մեջ հակված է տեսնելու տարանջատված մոր և զավակի կերպարը: Ըստ երևույթին ծնողական թեման այնքան էր հարազատ Գորբաչովին, որ նա հետագայում, 1988 թ. հուլիսին, կրկին դրան անդրադարձավ, այս անգամ ի պաշտպանություն պատժիչ զորքերի («*Это же наши дети…*» - «Չէ որ դա մեր երեխաներն են...»), որոնց հայերը փորձում էին դիմադրություն ցույց տալ: Թևավոր դարձած այս արտահայտությունը միանգամից խթան հանդիսացավ պլակատների մի նոր շարք ստեղծելուն:[2]

Մոր և որբ երեխայի մասին պաթետիկ, երբեմն և սրտաճմլիկ երանգ ունեցող պլակատները պահանջողական նրբերանգ են ձեռք բերում «*Ղարաբաղը մայր-Հայաստանին*» տրանսպարանտում:[3] Հարկ է նշել, որ վերջին կարգախոսը ժամանակագրական իմաստով վերոհիշյալ խմբի զարգացումը չէ, այլ հանդես է եկել խմբի մյուս ցուցապաստառների հետ միաժամանակ, 1988 թ. փետրվարյան հանրահավաքների ընթացքում: Սակայն այն փաստորեն դրանց տրամաբանական զարգացումն է, երբ անցում է կատարվում զգացմունքային արձանագրումից դեպի պահանջ: Ընդհանրապես, ինչպես ցույց է տալիս ցուցապաստառների բովանդակային վերլուծությունը, Շարժման յուրաքանչյուր էտապում միաժամանակ հանդես են գալիս տրանսպարանտներ ու պլակատներ, որոնք բնորոշ են ինչպես ապագա, այնպես էլ անցած ամենատարբեր փուլերին: Սակայն դրանք, որպես օրենք, եզակի են լինում (ինչպես օրինակ վերոհիշյալ տրանսպարանտը, որը փետրվարյան ցուցապաստառների զանգվածում միակն է), մինչդեռ հիմնական թեմատիկ ուղղվածությունը ստեղծում են հենց այն պաստառները, որոնք համահունչ են տվյալ էտապին և կազմում են գերակշռող մեծամասնություն: 1988 թ.

---

[1] *Գրական թերթ, 4 մարտի 1988 թ., թիվ 10 (2378):*

[2] *Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը, էջ 207-210, լուս. 142, 144, 145:*

[3] *Տե՛ս «Ժամանակագրության շարունակությունը»:*

հունիս-հուլիսին հայտնված նմանատիպ մի տրանսպարանտում նաև նշված էր պահանջը ներկայացնող տարածքի անվանումը. «*Ղարաբաղը՝ Մայր Հայաստանին – Քյավառ*» (լուս. 29):

«Ղարաբաղը՝ մայր-Հայաստանին» պահանջը՝ առանց մայրության թեմային հղելու, ձեռք է բերում «Արցախը-Հայաստանին» տեսք: Այս պահանջը փաստորեն արդեն դիտարկվել է, երբ խոսք էր գնում ցուցապաստառներում «միացումի» գաղափարի մասին: Քարտեզագրական լուծմամբ նման մի պլակատ առկա էր 1988 թ. փետրվարին (լուս. 30): Պլակատում Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի քարտեզների ուրվապատկերներն են, որոնց վրա գրված է «*Հայաստան*», իսկ վերնամասում՝ «*Ղարաբաղ-Արցախը՝ Հայաստանից անբաժան*»: Սխեմատիկորեն այս գաղափարը ձևակերպված է 1988 թ. հուլիսի սկզբի առաջին համազգային գործադուլի «*Միացնել Արցախը Հայաստանին*» պահանջում (լուս. 31):

1988 թ. հոկտեմբերի կեսերին, երբ դրամատիկ իրադարձություններ էին տեղի ունենում Ղարաբաղում, Հայաստանի ու Ղարաբաղի հոգևոր միասնության ցուցադրմանն էր ուղղված հետևյալ ակցիան. արդեն մի քանի օր դասադուլ անող Կոնսերվատորիայի ուսանողները մոմերով ստեղծել էին Հայկական ԽՍՀ ու ԼՂԻՄ ուրվաքարտեզները, մոմերով իսկ գրել «Արցախ» և ապա, ուշ երեկոյան, վառել էին մոմերը (լուս. 32, 33, 34, 35): Այդ կերպ ստեղծված պատկերն ասես համատեղ հայաստանյան-ղարաբաղյան աղոթասացություն լիներ առ Բարձրյալը վերամիավորման գործում օգնության խնդրանքով:

Պետք է նշել, որ ի թիվս նման լուրջ և կտրուկ պահանջների, միավորման թեման ձեռք է բերում և ուրախ, տոնահանդեսային երանգավորում, ինչը զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ զանգվածային հանրահավաքներն ու ցույցերը շատ ընդհանուր գծեր ունեին կառնավալային տիպի ժողովրդական տոնի հետ:[1] Ընդհանրապես, «բարձր մակարդակի» շատ կարգախոսներ ունեին իրենց «ցածր մակարդակի» նմանակները հանձինս անեկդոտների: Այսպես, 1988 թ. փետրվար-մարտին տարածված էին անեկդոտներ այն մասին, թե ինչպես Շարժումից դուրս կանգնած մարդիկ, օրինակ «ցեխավիկներ»-ը,[2] խորհուրդ էին տալիս, որ Ղարաբաղի փոխարեն կամ Ղարաբաղից բացի պահանջեին նաև մերձսևծովյան նշանավոր առողջարա-

---

[1] *Տես, օրինակ, Լ. Հ. Աբրահամյան, «Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում. Ղարաբաղյան շարժումը ազգագրագետի հայացքով», Մշակույթ, 1990, թիվ 2-3, էջ 14-21:*

[2] *«Ցեխավիկ» ռուսերենից թարգմանաբար բառացի նշանակում է արտադրամասի պետ: Խորհրդային շրջանում «ցեխավիկներ» կոչում էին անձանց, ովքեր ներգրավված լինելով արդյունաբերության ոլորտում՝ պետական արտադրությունից գոյացած շահույթի մի մասը, նաև կորզած հումքը ծառայեցնում էին սեփական՝ ընդհատակյա արտադրությանը:*

նային քաղաքները՝ Սոչին, Սուխումը: Իսկ մի ծեր կին խնդրում էր, որպեսզի ժողովուրդը պահանջի նաև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անին: Անեկդոտիկ լինելով հանդերձ, նման առաջարկները այնուամենայնիվ մատնանշում էին շատ մարդկանց իրավական գիտելիքների սկզբնական շրջանում բավականին ցածր մակարդակը, որն արագորեն, ուղղակի աչքերի առաջ, սկսեց աճել Շարժման զարգացմանը զուգընթաց:

«Ղարաբաղը մերն է»

«Ղարաբաղ-Հայաստան» թեմայում հետաքրքիր խումբ են կազմում այն ցուցապաստառները, որոնցում պնդվում է, թե «*Արցախ աշխարհը մերն է*», «*Ղարաբաղը մերն է*» (լուս. 18)[1]: Այս կարգախոսն այն աստիճան ժողովրդականություն վայելող էր, որ անմիջապես դարձավ առօրյա բանաձև՝ հիմք հանդիսանալով զանգվածային ժողովրդական ստեղծագործության ամենաանսպասելի դրսևորումների: Այսպես, 1988 թ. ամառային երթերի ժամանակ կարելի էր լսել հետևյալ զվարճալի բառախաղը. ցուցարարներից մեկը բարձրաձայն հարցնում էր՝ «*Ղարաբաղը ու՞մն ա*», իսկ բազմությունը պատասխանում էր՝ «*Մե՛ր*»: Հարցը կրկին էր տրվում և կրկին ստացվում էր բազմաձայն պատասխան: Երրորդ անգամ «երկխոսություն» վարողը հարցնում էր՝ «*Թուրքերի ի՞նչը*», - «*Մե՛ր*», կրկին ուրախ պատասխանում էր խումբը: Վերջին դեպքում «մերը» բառը հասկացվում էր որպես «մայր», այսինքն հարց ու պատասխանային բառախաղն ավարտվում էր թուրքերի մոր հասցեին ուղղված պարզորոշ ընկալվող բանաձևով: Այս նույն թեմայով ժողովրդական ստեղծագործության մեկ ուրիշ օրինակ է ցայտաղբյուրին ամրացված ինքնաշեն թիթեղյա սկավառակի (որի շնորհիվ ջուր կարող էին խմել միանգամից երեք մարդ) վրայի արձանագրությունը՝ «*Հայեր, դիմացե՛ք, Ղարաբաղը մերն է*» (26 սեպտեմբերի 1989 թ.) (լուս. 36, 37):

Ժողովրդական բանահյուսության մեկ այլ օրինակում, կառուցված մանկական համրանքով ոտանավորի ձևով, դրսևորվում են այդ, թվում է թե պարզունակ բանաձևի բոլոր հակասական կողմերը. «*Ղարաբաղը մերն ա,/ Բայց թուրքերի ձեռն ա,/ Պապան գնաց ցույցի,/ Որ ապացույցի*»: Ըստ այս ոտանավորի տրամաբանության, Ղարաբաղը մերն է, այսինքն պատկանում է հայերին (de facto, պատմականորեն, էթնիկորեն), բայց միաժամանակ և

---

[1] *Բնորոշ է, որ ստեփանակերտյան և երևանյան հանրահավաքներին ի պատասխան տեղի ունեցած Բաքվի հանրահավաքների լեյտմոտիվը Ղարաբաղի «մերոնքական» լինելու մասին նույն բանաձևն էր, ինչի մասին է վկայում օրինակ «Карабах был и будет нашим!» («Ղարաբաղը կար և կլինի մերը») տրանսպարանտը: Տես Трагедия длиною в 2 года. Фотохроника событий, Баку: Азернешр, 1990.*

մերը չէ (de jure՝ ըստ խորհրդային սահմանադրության) և դրա համար էլ հայերը դուրս են եկել ցույցի, որպեսզի լուծեն այդ հակասությունը: Այս համրանքախաղից կարելի է նաև իմանալ, որ հայերի կողմից կիրառվող «ապացուցման» միջոցը խաղաղ ցույցերն են՝ նպատակաուղղված Կենտրոնից սպասվող իմաստուն և արդարացի լուծման սպասմանը:

Ղարաբաղի «մերը լինելու» ապացուցման միջոցները տարբեր երանգավորում ունեին. համբերության կոչերից («*Հայեր, դիմացե՛ք...*») մինչև կտրական (թերևս Հովհաննես Շիրազի գրչին պատկանող)՝ «*Մի հող, որ թեկուզ երկինք համբառնա, / Հայոց եղել է, Հայոց կմնա*» (լուս. 38), «*Ղարաբաղը մերն է եղել, կա և կլինի*»[1] կամ էլ «*Ղարաբաղը միայն Հայաստանին*» (լուս. 39): Վերամիավորումն պատկերագրորեն «իրականացվել էր» դեռևս փետրվարյան մեկ այլ պլակատում (լուս. 40), սակայն եթե վերը հիշված պարագայում դա արվում էր պարզապես քարտեզները նույն գույնով ներկելու ճանապարհով, ապա այս դեպքում միավորման համար բառիս բուն իմաստով պայքարելու անհրաժեշտությունն անուղղակիորեն մատնացույց էր արվում դիտարկվող պլակատը կրողների ով լինելու հանգամանքով: «*Արցախ դու մերն ես*» գրությունով ուղեկցվող Հայաստանի ու Ղարաբաղի իրար միացած ուրվագծային բավականին անպաճույճ քարտեզով պլակատի կողքին պաստառի վրա ամրացված մարտական շքանշաններ էին, ու դրանցով պարգևատրվածները, այն է՝ Աֆղանստանում կռված, մարտական փորձ ունեցող հայ երիտասարդները: Նրանց ակտիվությունը կոչված էր ցուցելու, որ հայերը պատրաստ են զենքը ձեռքներին պայքարելու Արցախի ազատագրման համար: Սրա մասին ուղղակիորեն գրված էր մեկ այլ «բացատրական» բնույթ ունեցող տրանսպարանտում. «*Աֆղանստանում ինտերնացիոնալ պարտքը կատարած հայ զինվորները քեզ հետ են Ղարաբաղ*» (լուս. 41): Այդ պատրաստակամությունն ավելի էր ընդգծվում «աֆղանցիների» ձեռքին զորավար Անդրանիկի պատկերով պլակատի առկայությամբ: Անդրանիկը անվախ հայդուկ էր, ժողովրդական հերոս ու հայտնի զորահրամանատար, ում ղեկավարությամբ հայ մարտիկները մեկ անգամ չէ, որ հաջող մարտեր էին մղել թուրք կեղեքիչների դեմ:

Այստեղ արժե նշել ցուցապաստառային լեզվի մի հետաքրքիր յուրահատկություն. Շարժման տարբեր փուլերում օգտագործվող միևնույն պլակատ/տրանսպարանտը կամ կարգախոսը կարող է ձեռք բերել տարբեր իմաստային նրբերանգներ: Այսպես, վերջին (ինչպես և նախավերջին) կարգախոսը հայտնվել է 1988 թ. փետրվարին և այն օրերի ենթատեքստում նշանակում էր «Ղարաբաղը Հայաստանի մաս» ընդհանուր թեմայի կատեգորիկ պնդում: Սակայն այդ նույն կարգախոսը, արձանագրված մեր կողմից նույն

[1] *Տե՛ս Ժամանակագրության շարունակությունը:*

թվականի նոյեմբերին, արտահայտում է արդեն այդ ժամանակներում լայնորեն քննարկվող ԼՂԻՄ-ի ՌԽՖՍՀ-ին տարածքաադմինիստրատիվ վերաեռթարկման նկատմամբ անհամաձայնություն: Նոյեմբերին այդ կարգախոսն արտահայտում էր նաև Ղարաբաղի պրոբլեմի լուծման հարցում հրաժարում փոխզիջումների քաղաքականությունից, ինչին մեկ անգամ չէ, որ կոչ էր անում երկրի ղեկավարությունը, առանց, սակայն, առաջարկելու կոնկրետ կառուցողական դեղատոմսեր: Այդ կոչերին անմիջականորեն արձագանքեցին 1989 թ. աշնանը հայտնված ցուցապաստառները. «*Ոչ մի «կոմպրոմիս» Արցախի հարցում*» (լուս. 42), «*Կոմպրոմիսը» Արցախի նոր գերությունն է*» (լուս. 42): Փոխզիջումներին չհամաձայնելու մասնավոր օրինակ կարելի է տեսնել «*Шуши армянам или никому*» («Շուշին հայերին կամ ոչ մեկին») տրանսպարանտում (լուս. 43), որը հայտնվեց 1988 թ. նոյեմբերին ի պատասխան այդ օրերին հնչած այն լուրերի, թե իբր վերևներում պատրաստվում են դիտարկել Հայաստանին ԼՂԻՄ-ի միայն այն մասերը հանձնելու հարցը, որտեղ որ գերակշռում է հայ բնակչությունը և, հետևաբար, Շուշին, համաձայն այդ տարբերակի, մնալու էր Ադրբեջանի կազմում:

«Համերաշխության» ցուցապաստառներ

Ցուցապաստառներն ունեն ևս մի եզակի հատկություն: Նրանց միջոցով, չդիմելով բնույթով աշխատատար սոցիոլոգիական հետազոտությունների, սկզբունքորեն, բավարար վստահությամբ, կարելի է դատել բազմահազարանոց հանրահավաքների մասնակիցների ոչ միայն ցանկությունների ու պահանջների, այլ նաև սոցիալական կազմի մասին: Այսպես, սկսած 1988 թ. փետրվարից, ողջ տարվա ընթացքում, մեծ քանակությամբ «համերաշխության» տրանսպարանտներ էին հանդես գալիս, որոնցում, ամենատարբեր մակարդակներում, աջակցություն էր արտահայտվում Արցախի ժողովրդին. «*Արցախ, Արտաշատը միշտ քեզ հետ է*» (լուս. 44), «*Մեսրոպ Մաշտոցը և Օշականը ձեզ հետ են*», «*Բաղրամյանի անվան սովխոզը միանում է ձեզ Ղարաբաղի հայեր*», «*Արարատը քեզ հետ է, Ղարաբաղ*», «*Աբովյանցիները քեզ հետ են, Ղարաբաղ*» (լուս. 45), «*Արցախ՝ Էջմիածինը քեզ հետ է*» (լուս. 46) «*Կաբելագործները Արցախի հետ են*», «*Ռելեի աշխատողները ձեզ հետ են, ղարաբաղցիներ*», «*Արցախ, Հայաստանը քեզ հետ է. ԵրՊԻ*», «*Ղարաբաղ, համալսարանը քեզ հետ է*» (լուս. 47), «*Արցախ, Կոնսերվատորիան քեզ հետ է*» և նմանատիպ հավաստիացումներ առանձին ֆակուլտետների, ուսումնարանների, դպրոցների, զանազան հիմնարկությունների, Հայաստանի տարբեր շրջանների, քաղաքների ու գյուղերի և հայկական խորհրդային Սփյուռքի առանձին կենտրոնների կողմից, ինչպես՝ «*Ախալքալաքի 70 հազար*

հայերը քեզ հետ են, Ղարաբաղ»: Այդ տարիներին Երևանի տարբեր բուհերում սովորում էին ավելի քան մեկ հազար սփյուռքահայ ուսանողներ: Փետրվարի 23-ին Երևանի բժշկական ինստիտուտի շուրջ չորս տասնյակ սփյուռքահայ ուսանողներ «*Սփյուռքը ձեզ հետ [է]*» տրանսպարանտով միացան հանրահավաքի մասնակիցներին (լուս. 48)[1]: Մի խոսքով, առկա էր ամբողջական՝ ինչպես աշխարհագրական, այնպես էլ հասարակական և տարիքային ներկայացուցչություն. այստեղ և՛ բանվորներ էին, և՛ գյուղացիներ, և՛ ծառայողներ, և՛ դպրոցականներ, ընդհուպ մինչև նախադպրոցական Հակոբիկը, որ տանում էր «*Ղարաբա՛ղ, չվախենա՛ս, Հակոբիկը քեզ հետ է*» տրանսպարանտը[2]:

«Карабах-Армения. Один народ – одна республика»

Ցուցապաստառները թույլ են տալիս նաև հետևել, թե օրենսդրական բնույթի ինչպիսի սկզբունքներ է առաջարկում ժողովուրդը ղարաբաղյան պրոբլեմի լուծման նպատակով: Օրինակ, 1988 թ. նոյեմբերին, երբ լայնորեն քննարկվում էին ԽՍՀՄ Սահմանադրության լրացումներն ու փոփոխությունները, հանդես եկավ «*Карабах-Армения. Один народ – одна республика*» («*Ղարաբաղ-Հայաստան. մեկ ժողովուրդ՝ մեկ հանրապետություն*») տրանսպարանտը, որի մասին արդեն նշել ենք (լուս. 5): Այստեղ «օրինաստեղծության» լեզվով փաստորեն պնդվում է «Ղարաբաղ-Հայաստան» դիտարկվող ցուցապաստառների մեծ խմբի հիմնական միտքը:

Քանի որ, համաձայն այս խմբի պլակատների ու տրանսպարանտների տրամաբանության, Ղարաբաղը և Հայաստանը դիտվում են որպես բնական ամբողջություն, ապա ԼՂԻՄ-ը «բռնի կերպով անջատելու» ցանկացած փորձ ընկալվում է որպես բռնարարք: Օրինակ, 1988 թ. նոյեմբերի կեսերի պլակատում (լուս. 49) պատկերված են Հայաստանի և ԼՂԻՄ-ի քարտեզները՝ ներկված հայկական ազգային դրոշի երեք գույներով: Ղարաբաղը շղթայված է, և նրան Հայաստանից հեռու՝ դեպի Ադրբեջանի խորքերն է քարշ տալիս խորհրդային տանկը: Պլակատի և ուղեկցող հայրենասիրական բնույթի

---

[1] *Տեղեկությունը սիրահոժար տրամադրել է այդ ժամանակ ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող, ներկայումս պատմ. գիտ. թեկնածու Գևորգ Յազըճեանը: Նրա հաղորդմամբ՝ սփյուռքահայ ցուցարարները գերազանցապես Լիբանանից և Սիրիայից էին, նրանց կազմակերպողը լուսանկարի առջևի հատվածում պատկերված, ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող, «Հայ ժողովրդային շարժում» կազմակերպության անդամ, ծնունդով քեսապցի Մատթեոս Չոլաքյանն էր:*

[2] *Զավեն Խառատյան, «Արցախ, չվախենաս, Հակոբիկը քեզ հետ է», «Պիոներ կանչ», 25 հոկտեմբերի 1989 թ. (թիվ 84):*

բանաստեղծության հեղինակը VII դասարանի աշակերտ է, ծնունդով Արցախից:

Մեկ այլ պլակատում (1988 թ. հունիս) պատկերված էին «Հայաստան» և «Արցախ» մակագրությամբ Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի քարտեզների ուրվանկարները (լուս. 50): Արցախից սլաք էր ուղղված դեպի Հայաստան՝ թերևս ակնարկելով արցախահայության ձգտումը դեպի Մայր հայրենիք: Այդ ձգտման դեմ պայքարի է ելել յաթաղանը, այսինքն՝ յաթաղանի մշակույթը կրողները, որպիսիք տվյալ պարագայում հենց ադրբեջանցիներ/թուրքերն են: Նրանք պայքարում են այդ ձգտման դեմ սումգայիթյանին նման արյունոտ կոտորածներով: Յաթաղանին սակայն հակազդում է հայկական սուրը: Պլակատի եզրերին Պարույր Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմի մեծ ժողովրդականություն վայելող կրկնատողն է, որը պլակատի հեղինակին հիմք էր տվել ծավալվելու, ստեղծելու մի ամբողջ ծրագրային հայտարարություն՝ «*Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց: Ճշմարտության սուրն ենք բարձրացնում արյունակոլոլ յաթաղանի դեմ, ու թե աշխարհում կա արդարություն, թե կա պատմություն, ինտերնացիոնալ հավասարություն ու եղբայրություն, մենք պիտի հաղթենք…*»: Ինչպես հետևում է պլակատային տեքստից, այդ «ճշմարտության սուրն» անարյուն պայքարի խորհրդանիշ է: Հատկանշական է այս տեքստի պոետիկան. այն օգտագործում է ինչպես բանաստեղծական բնույթի տերմիններ, օրինակ՝ «արյունակոլոլ», այնպես էլ հեղափոխական տերմինաբանություն, ընդ որում՝ ողջ տեքստը, ներառյալ և մուտքի սևակյան մասը, հայրենասիրական ուժեղ պաթոս ունի: Պլակատային տեքստում օգտագործված «զենքերը»՝ «ճշմարտության սուր», «արդարություն», «պատմություն» ևս մեկ անգամ ցուցում են, որ ճշմարտության և արդարության համամարդկային գաղափարները՝ համեմված պատմության գործոնով, դառնալով պատմական ճշմարտություն, պատմական արդարություն ու պատմական հիշողություն, չնայած բազմաթիվ փորձություններին, եղել են և շարունակում են մնալ հայ ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչները[1]:

Պայմանականորեն ցուցապաստառների այս խմբին, որտեղ օգտագործվում է Ղարաբաղը Հայաստանից բռնի կերպով անջատելու գաղափարը, կարելի է դասել և 1988 թ. ամառվա մի պլակատ, որտեղ պատկերված է, թե ինչպես ձմերուկ-Հայաստանից հանվում է մեծ դանակի ծայրին խրված պատառ-Ղարաբաղը:

Ղարաբաղյան հիմնախնդրի և ընդհանրապես Հայկական հարցի «խոհարարական» լուծման եղանակին կարելի է դասել նաև այդ ժամանակների մեկ այլ պլակատ, որում պատկերված է արյունոտ յաթաղան և Հայաստանի

---

[1] *Տե՛ս Հարություն Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը, էջ 175-176:*

քարտեզին խրված եռաժանի-«պատառաքաղը»: Ուղեկցող գրությունը բացատրում է՝ «*Եթե Ղարաբաղը պարտվի, այս վերջին պատառը ևս կուլ կգնա*» (լուս. 51):

Մասի և ամբողջի նման հարաբերակցության ձևակերպումը լայն տարածում ունեցող արտահայտչամիջոցներից է, և պատահական չէ, որ այս նույն թեման, սակայն ադրբեջանական կողմի տեսակետը արտահայտող և արված ոչ թե պատկերային, այլ բառային մակարդակով, Ադրբեջանը ներկայացնում է կարկանդակի տեսքով, որից հայերը ուզում են համեղ պատառ-Ղարաբաղը կտրել-հանել: Այս համեմատությունն ադրբեջանցի գիտնականներն օգտագործել էին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին 1988 թ. փետրվարի 29-ին ուղղված իրենց հեռագրում:

Վերջաբանի փոխարեն

Ինչպես տեսանք, «Ղարաբաղը Հայաստանի մաս» բանաձևը ձևափոխվում է պատմական, բարոյական, իրավաբանական հիմնավորումներ ունեցող խնդրանք-պահանջից մինչև հաստատական պնդում, որ «*Ղարաբաղը մերն է եղել, կա և կլինի*»: Եվ եթե այս վերջին կարգախոսում Ղարաբաղի «մերը լինելը» հաստատագրելու համար դիմվում է հավերժության հայտնի, միֆոպոետիկ բանաձևին (հմմտ. «Ленин жил, Ленин жив, Ленин будет жить» - «Լենինն ապրել է, Լենինն ապրում է, Լենինը կշարունակի ապրել»), ապա մեկ այլ կարգախոսում՝ «*Ղարաբաղը մերն ա ու все*» [վերջ]»,[1] նույն միտքը արտահայտվում է կարծես թե ավելի կատեգորիկ և «վերջակետային» ձևով: Հաստատական պնդման գաղափարը պարունակող երկու այլ բանաձևեր մեզ հանդիպեցին հետևյալ տրանսպարանտային ձևակերպումներում. «*Ղարաբաղ / Հայաստան / Մի էություն է*» (փետրվար 1988 թ.) (լուս. 52) և «Арцах – неотъемлемая часть Армении» (հունիս 1988 թ. և 7 նոյեմբերի 1988 թ.) (լուս. 53, 54):

Եվ այնուամենայնիվ, շատ պլակատներ ղարաբաղյան պրոբլեմի լուծումը թե անցյալում և թե ներկայում կապում էին Կենտրոնի՝ Մոսկվայի հետ: Բավական է նշել Գորբաչովի կերպարի կամ նրա խոսքերի բազմաթիվ խաղարկումները, ինչպես օրինակ՝ 1988 թ. նոյեմբերի 24-ի[2] մի պլակատում,

---

[1] *Հմմտ. Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս Լեոնիդ Ազգալդյանի «Սա Հայաստան է և վերջ» և Նիկոլ Փաշինյանի «Արցախը Հայաստան է, և՝ վերջ» հայտնի բանաձևերի հետ:*

[2] *Այդ նույն գիշերը Երևանում մտցվեց պարետային ժամ, և բոլոր հանրահավաքներն արգելվեցին:*

որտեղ նա ուշադիր Ղուրան է կարդում, որպեսզի գտնի ղարաբաղյան հարցի լուծումը՝ «*Мы в ЦК внимательно ищем пути решения карабахской проблемы…*» («Մենք Կենտկոմում ուշադիր որոնում ենք ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ուղիները»), ընդ որում, նրա ճակատի խալի փոխարեն «*Карабах?*» («Ղարաբա՞ղ») մակագրությունն է (լուս. 55): Ինչպես նշված է պլակատում, այս խոսքերը մեջբերված են 1988 թ. հուլիսի 18-ին արտասանած նրա ճառից[1]: 1991 թ. Ֆրանսիայում ստեղծված մի պլակատում Լենին-Գորբաչով մարդը բրիչով քանդում է Հայաստանի ու Ղարաբաղի միջև եղած սահմանը (լուս. 56)՝ այն ավելի ընդլայնելու, հայության երկու հատվածների տարածքները միմյանցից հեռացնելու նպատակով[2]: Բանավոր ժողովրդական ստեղծագործությունն ևս կառուցվում էր այդ հիմքի վրա, այդ իսկ պատճառով էլ դրանում գերակշռում են «տալ» կամ «վերցնել, խլել» բառերը: Այսպես, երբ 1988 թ. մարտին Թատերական հրապարակը, որտեղ դրանից ընդամենը մեկ ամիս առաջ տեղի էին ունենում առաջին հանրահավաքները, շրջափակվեց խորհրդային զորքերով, որպեսզի թույլ չտրվի այդ օրերին նախատեսվող հանրահավաքի կայացումը, ծնվեց մի անեկդոտ, որտեղ ասվում էր, թե «*Ղարաբաղը ուզեցինք, հրապարակն էլ խլեցին*»: Մեկ այլ, կանխատեսային բնույթ ունեցող անեկդոտում պատմվում էր, թե ինչպես մեկն ընկնում է XXI դար, աշխարհագրության դպրոցական դասի: Նա տեսնում է մեկ գույնով ներկված ԽՍՀՄ քարտեզը: Այն հարցին, թե սա ի՞նչ է նշանակում, նրան պատասխանում են, որ դա Հայաստանի քարտեզն է: «Իսկ սա՞ ինչ է», - մատնացույց է անում այդ մարդը մեկ այլ գույնի փոքրիկ կետի: «Դա Ղարաբաղն է, - պատասխանում են նրան, - այն այնպես էլ մեզ չտվին»:

1989 թ. նոյեմբերին, Ղարաբաղյան շարժումն ուղղորդող Հայոց համազգային շարժման համագումարի օրերին գործող ցուցահանդեսում, ասես արձագանքելով հռետորների ելույթներին, թեման ստացավ տրամաբանական զարգացում. պլակատներից մեկին ուղղակիորեն ցուցվում էր, թե ինչ ուժեր են պահում Հայաստանը ԽՍՀՄ-ում. հայկական ազգային (դեռևս ոչ պետական) դրոշի եռագույնով՝ կապույտ հիմնագույնով, կարմիր ու նարնջագույն թևերով Հայաստանն ու Ղարաբաղը ցանկանում են դուրս թռչել ԽՍՀՄ կազմից, սակայն նրանց ուժով ետ է պահում ռուս մուժիկը (լուս. 57):

---

[1] *Այդ օրը տեղի էր ունեցել ղարաբաղյան հարցը քննարկող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը, որի որոշ մասը՝ Մ. Գորբաչովի ելույթով հանդերձ, հեռարձակվել էր հեռուստատեսությամբ:*

[2] *Տե՛ս. Azad magazine edité par le club des Arméniens de Grenoble, 2e trimestre, 1991, No 54, p. 11:*

КАРАБАХ, НАХИЧЕВАНЬ И ЗАНГЕЗУР БЫЛИ
И ОСТАЮТСЯ НЕОТДЕЛИМОЙ ЧАСТЬЮ АРМЕНИИ
2-го ДЕК. 1920 г. ГАЗ
АКИНСКИЙ РАБОЧИЙ" Н. НАРИМАНОВ

Լուս.1

ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ
ԼԻՈՎԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒՄ 5
ԼԵՆԻՆՅԱՆ
ԱՋԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Լուս.2



Լուս.3 Լուս.4

Լուս.5

Լուս.6

Լուս.7

Լուս.8

Լուս.9

Լուս.10

Լուս.11

Լուս.12



Լուս.13 Լուս.14

Լուս.15

Լուս.16

Լուս.17

Լուս.18

Լուս.19

Լուս.20 Լուս.21

Լուս.22

Լուս.23

Լուս.24

Լուս.25

Լուս.26

Լուս.27

Լուս.28

Լուս.29

Լուս.30



Լուս.31

Լուս.32

Լուս.33



Լուս.34

Լուս.35



Լուս.36

Լուս.37

Լուս.38

Լուս.39

Լուս.40

Լուս.41



Լուս.42



Լուս.43

Լուս.44

Լուս.45



Լուս.46

Լուս.47

Լուս.48



Լուս.49

Լուս.50

Լուս.51

Լուս.52

Լուս.53



Լուս.54

Լուս.55



Լուս.56

Լուս.57



Լուս.58

Նյութը ներկայացվել է 17.05. 2023,
գրախոսման է ուղարկվել 19.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

UDC 94(479.243)

Political Sciences

Stepan HASAN-JALALYAN
YSU, Faculty of International Relations, Master in Political Sciences
E-mail: Hasan-Jalal@yandex.com

DECLARATION OF INDEPENDENCE OF AZERBAIJAN AND ARTSAKH IN THE CONTEXT OF LEGAL ACTS OF USSR

Ս.Հասան-Ջալալյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԽՍՀՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածի նպատակն է, հիմնվելով հայրենի և օտար աղբյուրների վրա, պարզել, թե որքանով էին համապատասխանում Ադրբեջանի և Արցախի անկախության հռչակումը ԽՍՀՄ իրավական ակտերի պահանջներին:

Հոդվածը շարադրված է հարցին վերաբերող սկզբնաղբյուրների համադրման և համեմատական ուսումնասիրության, ինչպես նաև դրան վերաբերող գիտական աշխատանքների քննական վերլուծության միջոցով:

Հարցին վերաբերելի փաստերի ու փաստաթղթերի, ինչպես նաև պատմաքաղաքագիտական գրականության համադիր քննության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Ադրբեջանը հռչակել է իր անկախությունը ԽՍՀՄ իրավական ակտերի խախտմամբ, մինչդեռ նկատի ունենալով արցախահայության՝ Արցախի Հանրապետության անկախության հռչակման նպատակով իրականացրած քայլերի հաջորդականությունը՝ կարող ենք պնդել, որ 1991թ. սեպտեմբերի 2-ին Արցախը հանրապետություն հռչակելու, ինչպես նաև հռչակված հանրապետությունը

նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած համաժողովրդական հանրաքվեի միջոցով արցախահայության կամարտահայտության համաձայն անկախ հռչակելու իրավական գործընթացն իրականացվել է միջազգային ու ԽՍՀՄ օրենսդրության պահանջներին համապատասխան և դրանց բծախնդիր պահպանմամբ:

Բանալի բառեր՝ Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, Ազգերի լիգա, Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրո, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդ, Շահումյանի շրջանային խորհուրդ, Արցախի Հանրապետություն, հանրաքվե, Ալմա-Աթայի հռչակագիր:

С. Асан-Джалалян,

НЕЗАВИСИМОСТЬ АЗЕРБАЙДЖАНА И АРЦАХА В КОНТЕКСТЕ ПРАВОВЫХ АКТОВ СССР

Цель статьи на основе отечественных и зарубежных источников выяснить, насколько провозглашение независимости Азербайджана и Арцаха соответствовало требованиям правовых актов СССР. Статья написана путем сопоставления и сравнительного изучения первоисточников, относящихся к проблеме, а также экспертного анализа научных работ, связанных с ней.

В результате совместного изучения фактов и документов по данному вопросу, а также историко-политической литературы мы пришли к выводу, что Азербайджан провозгласил свою независимость, нарушив правовые акты СССР, при рассмотрении последовательности шагов предпринятые арцахскими армянами для провозглашения независимости Республики Арцах, мы можем утверждать, что в 1991 г. юридический процесс провозглашения Арцаха республикой 2 сентября, а также провозглашения независимости провозглашенной республики в соответствии с волей арцахских армян посредством всенародного референдума, проведенного 10 декабря того же года, осуществлялся в соответствии с требованиями международного законодательства и законодательства СССР и при их неукоснительном соблюдении.

Ключевые слова:. Верховный Совет Азербайджанской Республики, Лига Нации, Кавказский бюро центрального

комитета коммунистической партии Советской России, Нагорно-Карабахский областной совет, Шаумянский районный совет, Республика Арцах, референдум, Алма-Атинская декларация.

The purpose of the article, based on domestic and foreign sources, is to find out to what extent the declaration of independence of Azerbaijan and Artsakh corresponded to the requirements of legal acts of the USSR.
The article is written through a comparison and comparative study of the original sources related to the issue, as well as an examination analysis of the scientific works related to it.
As a result of joint examination of facts and documents related to the issue, as well as historical and political literature, we came to the conclusion that Azerbaijan declared its independence by violating the legal acts of the USSR, while considering the sequence of steps taken by the Armenians of Artsakh to declare the independence of the Artsakh Republic, we can assert that the legal process of declaring Artsakh a republic on September 2, 1991, as well as declaring the newly declared republic independent through a referendum held on December 10 of the same year according to the will of the Artsakh Armenians, was carried out in accordance with the requirements of the international and USSR legislation..
Key words: *Supreme Soviet of the Republic of Azerbaijan, League of Nations, Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia, Nagorno Karabakh regional council, Shahumyan regional council, Republic of Artsakh, referendum, Alma-Ata Declaration*

On August 30, 1991, the Supreme Soviet of the Republic of Azerbaijan adopted a Declaration “On the Restoration of the State Independence of the Republic of Azerbaijan”, thus announcing the withdrawal of Azerbaijan from the Soviet Union. By this declaration, Azerbaijan restored the independence of the Democratic Republic of Azerbaijan, which existed from May 28, 1918 to April 28, 1920, but was not internationally recognized. Here is a photocopy of that document:

Управление делами Президента Азербайджанской Республики
ПРЕЗИДЕНТСКАЯ БИБЛИОТЕКА

Декларация 1991 г.

ДЕКЛАРАЦИЯ ВЕРХОВНОГО СОВЕТА АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ О ВОССТАНОВЛЕНИИ ГОСУДАРСТВЕННОЙ НЕЗАВИСИМОСТИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

Верховный Совет Азербайджанской Республики,

- руководствуясь высшими государственными интересами народа Азербайджана и выражая его волю,
- отмечая, что с 1918 по 1920 год Азербайджанская Республика существовала как независимое, признанное со стороны, международного сообщества, государство,
- основываясь на Конституции Азербайджанской Республики, конституционных законах о суверенитете Азербайджанской Республики и об основах экономической самостоятельности Азербайджанской Республики;
- осознавая свою ответственность за судьбу и обеспечение свободного развития народа Азербайджана,
- гарантируя предусмотренные международными актами права и основные свободы человека всем гражданам Азербайджанской Республики независимо от национальной принадлежности и вероисповедания,
- стремясь предотвратить угрозу суверенитету и территориальной целостности Азербайджанской Республики,
- руководствуясь священным долгам обеспечить безопасность и неприкосновенность
- государственных границ Азербайджанской Республики,
- осознавая необходимость консолидации всех патриотических сил республики,
- признавая международные пакты, конвенции и другие документы, не противоречащие интересам Азербайджанской Республики и ее народа,
- желая поддерживать и впредь дружеские отношения со всеми входящими в Союз ССР республиками,
- выражая готовность установить равноправные отношения с государствами — членами международного сообщества,
- надеясь на признание государственной независимости Азербайджанской Республики государствами — членами международного сообщества и Организацией Объединенных Наций в соответствии с принципами, закрепленными в Уставе Организации Объединенных Наций, другими международно-правовыми пактами и конвенциями,

ПРОВОЗГЛАШАЕТ ВОССТАНОВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ НЕЗАВИСИМОСТИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ.

Декларация принята 30 августа 1991 года (на внеочередной сессии Верховного Совета Азербайджанской Республики).

[1]

[1] *Administration of the President of the Republic of Azerbaijan, Presidential Library, Constitution, p. 82, (in russian), https://files.preslib.az.*

It should be noted that the Supreme Council of the Republic of Azerbaijan in the above-mentioned declaration published obviously a false information that in 1918-1920 the existing Democratic Republic of Azerbaijan was an internationally recognized state.The point is that the League of Nations on December 1, 1920[1] formally rejected Azerbaijan's application for membership in the League of Nations, citing Azerbaijan's inability to become a state and to adopt the name of a neighboring Persian region as its own and to determine Azerbaijan's exact borders, due to border disputes with neighboring countries[2].The Supreme Council of the Republic of Azerbaijan, fixing false information in the declaration, did not hesitate to deceive both its own citizens and the world community.In fact, by enshrining in the Declaration “On the Restoration of the State Independence of the Republic of Azerbaijan” this false information about the internationally recognized Democratic Republic of Azerbaijan, the Supreme Soviet of Azerbaijan falsified the main document establishing the Republic of Azerbaijan. Given this fact, we can say that the Republic of Azerbaijan, the legal successor of the internationally unrecognized Democratic Republic of Azerbaijan, is a false “state”.On October 18, 1991 the Supreme Council of the Republic of Azerbaijan adopted the Constitutional Act of the Republic of Azerbaijan “On the Restoration of the State Independence of the Republic of Azerbaijan” in Article 2, which stipulated that the Republic of Azerbaijan is the legal successor of the Republic of Azerbaijan, which existed from May 28, 1918 to April 28, 1920.Here is a photocopy of that document:

---

[1] *League of Nations, The Records of the first Assembly, Meetings of the Committees, Minutes of the Fourth Committee, Geneva, December 1, 1920, p. 172; Journal of the First Assembly of the League of Nations, N 17, Geneva, December 3, 1920, p. 138.*

[2] *Admission of Azerbaidjan to the League of Nations, Memorandum by the Secretary-General, November 24, 1920, p. 2; League of Nations, The Records of the first Assembly, Meetings of the Committees, Minutes of the Fourth Committee, Geneva, December 1, 1920, p. 174; Journal of the First Assembly of the League of Nations, N 17, Geneva, December 3, 1920, p. 139.*

Управление делами Президента Азербайджанской Республики
ПРЕЗИДЕНТСКАЯ БИБЛИОТЕКА

Конституционный Акт 1991 г.

Конституционный Акт Азербайджанской Республики
О восстановлении государственной независимости Азербайджанской Республики

28 мая 1918 года Национальный Совет Азербайджана принял Декларацию о независимости, возобновив тем самым многовековые традиции государственности азербайджанского народа.

Азербайджанская Республика, обладая на своей территории всей полнотой государственной власти, проводила самостоятельную внешнюю и внутреннюю политику. Были созданы и функционировали присущие самостоятельному государству институты - парламент, правительство, армия, финансовая система Азербайджанской Республики. Азербайджанская Республика была признана многими иностранными государствами и установила с ними дипломатические отношения. Но 27-28 апреля 1920 года РСФСР, грубо поправ международные правовые нормы, без объявления войны ввела в Азербайджан части своих вооруженных Сил, оккупировала территорию суверенной Азербайджанской Республики, насильственно свергла законно избранные органы власти и положила конец независимости, достигнутой ценой огромных жертв азербайджанского народа.

Вслед за этим Азербайджан, так же как и в 1806-1828 годах, вновь аннексирован Россией.

Договор об образовании СССР от 30 декабря 1922 года был призван закрепить эту аннексию. В дальнейшем, на протяжении 70-ти лет против Азербайджанской Республики проводилась политика колониализма, беспощадно эксплуатировались природные ресурсы Азербайджана и растаскивались его национальные богатства, азербайджанский народ подвергался преследованиям и репрессиям, попиралось его национальное достоинство. Несмотря на это, азербайджанский народ продолжал свою борьбу за государственную независимость.

Ее итогом стало принятие Верховным Советом Азербайджанской Республики 30 августа 1991 года Декларации "О восстановлении государственной независимости Азербайджанской Республики".

Верховный Совет Азербайджанской Республики, основываясь на Декларации о независимости, принятой Национальным Советом Азербайджана 28 мая 1918 года, на преемственности демократических принципов и традиций Азербайджанской Республики и руководствуясь Декларацией Верховного Совета Азербайджанской Республики от 30 августа 1991 года "О восстановлении государственной независимости Азербайджанской Республики", принимает настоящий Конституционный Акт и учреждает основы государственного, политического и экономического устройства независимой Азербайджанской Республики.

1. Общие положения

Статья 1.

Вторжение 27-28 апреля 1920 года 11 армией РСФСР в Азербайджан, аннексия территории республики, свержение Азербайджанской Демократической Республики - субъекта международного права являются оккупацией Россией независимого Азербайджана.

Статья 2.

Азербайджанская Республика является преемницей существовавшей с 28 мая 1918 года по 28 апреля 1920 года Азербайджанской Республики.

Статья 3.

Договор об образовании СССР от 30 декабря 1922 г. является недействительным с момента подписания в части, относящиеся к Азербайджану.

Все вытекающие вопросы взаимоотношений с входившими в состав бывшего Союза ССР суверенными государствами подлежат урегулированию на основе договоров и соглашений.

Статья 4.

Конституция Азербайджанской Республики 1978 г. действует постольку, поскольку не противоречит положениям настоящего Конституционного Акта.

В Азербайджанской Республике сохраняют юридическую силу все акты Азербайджанской Республики, действовавшие до провозглашения Азербайджанской Республикой восстановления государственной независимости, которые не противоречат суверенитету Азербайджанской

Управление делами Президента Азербайджанской Республики
ПРЕЗИДЕНТСКАЯ БИБЛИОТЕКА

Право забастовок осуществляется трудящимися в рамках законов, регулирующих это право.

5. Политические отношения

Статья 26.

Избирательным правом пользуются граждане Азербайджанской Республики, достигшие совершеннолетия.

Голосование является личным, равным свободным и тайным.

Право на голосование не может быть ограничено иначе как в силу гражданской неправоспособности или вступившего в силу приговора суда.

Статья 27.

Все граждане Азербайджанской Республики имеют право свободно объединяться в политические партии и другие общественные объединения, чтобы демократическим путем содействовать определению политики Азербайджанской Республики.

Статья 28.

Политические партии в соответствии с принципами политического плюрализма участвуют в формировании и выражении общественного мнения и являются основным элементом политической деятельности. Их создание и деятельность являются свободными в рамках Конституции и законов Азербайджанской Республики.

Статья 29.

Защита Азербайджанской Республики - священный долг гражданина Азербайджанской Республики.

Военная служба обязательна в пределах и видах, установленных законом.

Статья 30.

Все граждане Азербайджанской Республики обязаны участвовать в государственных расходах сообразно своим доходам.

Налоговая система основывается на началах прогрессивности.

Статья 31.

Все граждане обязаны сохранять верность Азербайджанской Республике, должны соблюдать Конституцию и законы Азербайджанской Республики.

6. Заключительные положения

Статья 32.

Настоящий Конституционный Акт служит основой для разработки новой Конституции Азербайджанской Республики.

Президент Азербайджанской Республики.
г. Баку, 18 октября 1991г.
№ 222- XII

[1].

According to the Declaration “On the Restoration of the State Independence of the Republic of Azerbaijan”, adopted on August 30, 1991, and according to the Constitutional Act of the Republic of Azerbaijan “On the Restoration of the State Independence of the Republic of Azerbaijan”, adopted on October 18, 1991, Azerbaijan renounced its legal succession to Soviet Azerbaijan and declared its succession to a state called the Democratic Republic of Azerbaijan, which existed from May 28, 1918 to April 28, 1920 but was not recognized internationally, and of which Artsakh has never been a part.Both by a declaration and by a constitutional act, renouncing the legal succession to Soviet Azerbaijan and declaring itself to be the successor of the existing

[1] *Ibid, p. 84, 88, https://files.preslib.az.*

in 1918-1920 but internationally unrecognized Democratic Republic of Azerbaijan, the Republic of Azerbaijan has considered, in fact, all the legal acts adopted in the Soviet period concerning Azerbaijan as invalid.In fact, by adopting the above-mentioned documents, the Republic of Azerbaijan has invalidated the 1921 illegal, not discussed at the July 5 session, not put to a vote, but "adopted" decision of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia to annex Artsakh to Soviet Azerbaijan and in fact to seize it.

Based on the "Procedure for resolving issues related to the withdrawal from the USSR", which was the law of the USSR, and in particular on Article 3, adopted on April 3, 1990, which gave the peoples of autonomous formations the right to independently determine their state and legal status in the event of secession from the USSR, the Nagorno Karabakh regional council and the Shahumyan regional council during their joint session with the participation of the deputies of the Soviets at all levels, noting that Azerbaijan, leaving the USSR, declared its independence, restoring its republic of 1918-1920, on September 2, 1991 adopted the declaration on the proclamation of the Nagorno Karabakh Republic.

Here is the photocopy of Article 3 of the April 3, 1990 USSR law:

СОЮЗ СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК

ЗАКОН

О ПОРЯДКЕ РЕШЕНИЯ ВОПРОСОВ, СВЯЗАННЫХ С ВЫХОДОМ СОЮЗНОЙ РЕСПУБЛИКИ ИЗ СССР

3 апреля 1990 года

Статья 3.

В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и автономные округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных республик и автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе ССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе.

В союзной республике, на территории которой имеются места компактного проживания национальных групп, составляющих большинство населения данной местности, при определении итогов референдума результаты голосования по этим местностям учитываются отдельно.[1]

Here is the photocopy of the original declaration on the proclamation of the Nagorno Karabakh Republic:

[1] *Law on the procedure for resolving issues related to the secession of the union republic from the USSR, (in russian), http://www.libussr.ru/doc_ussr/usr_16379.htm:*

ДЕКЛАРАЦИЯ

о провозглашении Нагорно-Карабахской Республики

Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней, выражая волю народа, закрепленную фактически проведенным референдумом и в решениях органов власти НКАО и Шаумяновского района в 1988-1991 гг., его стремление к свободе, независимости, равноправию и добрососедству;

констатируя провозглашение Азербайджанской республикой " восстановления государственной независимости 1918-1920 гг.";

учитывая, что проводимая в Азербайджане политика апартеида и дискриминации создала в республике атмосферу ненависти и нетерпимости к армянскому народу, приведшую к вооруженным столкновениям, человеческим жертвам, массовой депортации жителей мирных армянских сел;

основываясь на действующей Конституции и законах Союза ССР, предоставляющих народам автономных образований и компактно проживающим национальным группам право на самостоятельное решение вопроса о своем государственно-правовом статусе в случае выхода союзной республики из СССР;

отмечая, что территория Шаумяновского района была насильственно отторгнута от Нагорного Карабаха и считая стремление армянского народа к воссоединению естественным и соответствующим нормам международного права;

стремясь к восстановлению добрососедских отношений между армянским и азербайджанским народами на основе взаимного уважения прав друг друга;

принимая во внимание сложность и противоречивость обстановки в стране, неопределенность судьбы будущего Союза, союзных структур власти и управления;

уважая и следуя принципам Всеобщей Декларации прав человека и Международного пакта об экономических, социальных и культурных правах, Международного пакта о гражданских, политических и культурных правах и рассчитывая на понимание и поддержку международного сообщества,

ПРОВОЗГЛАШАЕТ:

НАГОРНО-КАРАБАХСКУЮ РЕСПУБЛИКУ В ГРАНИЦАХ НЫНЕШНЕЙ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ И СОПРЕДЕЛЬНОГО ШАУМЯНОВСКОГО РАЙОНА. СОКРАЩЕННО НКР.

Нагорно-Карабахская Республика пользуется полномочиями, предоставленными республикам Коституцией и законодательством СССР и оставляет за собой право самостоятельно определять свой государственно-правовой статус на основе политических консультаций и переговоров с руководством страны и республик.

На территории Нагорно-Карабахской Республики до принятия Конституции и законов НКР действуют Коституция и законодательство СССР, а также другие ныне действующие законы, которые не противоречат целям и принципам настоящей Декларации и особенностям Республики.

Совместная сессия Нагорно-Карабахского
областного и Шаумяновского районного Советов
народных депутатов с участием депутатов всех уровней

2 сентября 1991 года

1

More than three months later a referendum on the independence of the Nagorno Karabakh Republic was held in Artsakh on December 10, 1991 in the presence of international observers, in which 82.2% of eligible voters took part. 99.89% of voters voted for the independence of the Republic of Artsakh[2].Considering the sequence of steps taken by the Armenians of Artsakh to declare the independence of the Republic of Artsakh, we can assert that the legal process of declaring Artsakh a republic on September 2, 1991, as well as declaring the newly declared republic independent through a referendum held on December 10 of the same year according to the will of the Artsakh Armenians, was carried out in accordance with the requirements of the international and USSR legislation.

In response to the independence of Artsakh, Azerbaijan started a war against the Republic of Artsakh.It should be noted that, unlike Artsakh, Azerbaijan held a referendum on secession from the USSR eight days after the dissolution of the USSR itself, on December 29, 1991[3].

---

[1] *Declaration on proclamation of the Nagorno Karabagh Republic, http://kachar.am/wp-content/uploads/2020/02/1991-սեպտեմբերի-2.pdf:*

[2] *The History of Formation of the Artsakh Republic, http://president.nkr.am/en/nkr/:*

[3] *Dieter Nohlen, Florian Grotz, and Christof Hartmann, Elections in Asia and the Pacific: A Data Handbook: Vol. I: Middle East, Central Asia, and South Asia, Oxford: Oxford University Press, 2001, p. 360.*

The leaders of 11 out of the 15 Soviet republics on December 21, 1991 signed in the capital of Kazakhstan, Alma-Ata, the Alma-Ata Declaration, announcing the dissolution of the USSR and the establishment of the Commonwealth of Independent States[1].

In fact, the independence referendum held by Azerbaijan was completely meaningless, as there was no other state from which it was possible to leave based on the USSR legislation.

Neither the people of the Republic of Artsakh nor the Armenians living on the territory of Azerbaijan took part in the independence referendum in Azerbaijan, as the people of the Republic of Artsakh had already held their independence referendum, and while some of the Armenians living in the territory of Azerbaijan were subjected to the genocide planned by the Azerbaijani authorities at the state level, the majority of them left their homes, escaping the genocide[2].

The fact that the Armenians of Artsakh did not participate in the senseless referendum on independence held in Azerbaijan on December 29, 1991, eight days after the dissolution of the USSR, is another proof of the indisputable fact that Artsakh has never been by any status a part of independent Azerbaijan.

Thus, Azerbaijan gained its de jure independence in 1991 as a result of the adoption of the Alma-Ata Declaration on December 21, 1991, whereas the Republic of Artsakh was an independent state for almost four months.

Նյութը ներկայացվել է 16.05. 2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

[1] *Alma-Ata Declaration, (in russian), http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=4:*

[2] *Official Journal of the European Communities C 106, vol. 34, European Parliament, April 22, 1991, p. 121, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:1991:106:FULL&from=EN:*

ՀՏԴ 94(5)

Քաղաքագիտություն

Աստղիկ ՊՈՂՈՍՅԱՆ
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ
E-mail: astghikpoghosyan96@gmail.com

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920ԹԹ.)

Ադրբեջանի Հանրապետության պետական գաղափարախոսությունը, հանդիսանալով ադրբեջանցի և թուրք պանթյուրքիստների ժառանգության կրողը, բյուրեղացրել է ադրբեջանցիների՝ «մեծ թյուրքական ընտանիքի մասը լինելու», «Օսմանյան պետության՝ իբրև մեծ եղբոր հովանավորությունը ստանձնելու» և «այդ փոխգործակցությամբ համընդհանուր թշնամիների դեմ պայքարելու» թեզերը: Ադրբեջանի Հանրապետության առաջին նախագահ Մեհմեդ Էմին Ռասուլզադեի ջանքերով պետության գաղափարական հիմքում է դրվել «թյուրքականացում, իսլամականացում, արևմտականացում» եռամիասնության գաղափարը: Նշված հիմնական դրույթները ակնհայտորեն արտացոլում և պայմանավորում են թուրք–ադրբեջանական համագործակցային հարաբերությունների արդի բնույթը՝ դրսևորվելով որակապես ավելի բարձր ռազմավարական մակարդակներում, ինչի ամենացայտուն օրինակը 2021թ. ԱՀ և ԹՀ ղեկավարների միջև ստորագրված «Շուշիի հռչակագիրն է»:

Բանալի բառեր՝ *պանթյուրքիզմ, Մեհմեդ Էմին Ռասուլզադե, Շուշիի հռչակագիր, թյուրքականացում, արդիականացում, իսլամականացում:*

А.Погосян

СУЩНОСТЬ ГОСУДАРСТВЕННОЙ ИДЕОЛОГИИ В АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКЕ (1918-1920)

Государственная идеология Азербайджанской Республики, несущая в себе идейное наследие азербайджано-турецких пантюркистов, кристаллизовала тезисы о «принадлежности азербайджанцев к большой тюркской семье», «предполагающих покровительство Османского государства как большой брат» и «борьба с общими врагами». Усилиями первого Президента Азербайджанской Республики Мемед Эмина Расулзаде идеологической основой государства стала идея троицы «тюркизация, исламизация, модернизация». Эти основные тезисы четко отражают нынешний характер турецко-азербайджанского сотрудничества, проявляющийся на качественно более высоких стратегических уровнях, наиболее очевидным примером которого является «Шушинская декларация», подписанная президентами Азербайджана и Турции в 2021 году.

Ключевые слова: *пантюркизм, Мемед Эмин Расулзаде, "Шушинская декларация", тюркизация, модернизация, исламизация.*

A. Poghosyan

THE NATURE OF THE STATE IDEOLOGY IN THE REPUBLIC OF AZERBAIJAN (1918-1920)

The ideology of the Republic of Azerbaijan influensed by the inheritance of azeri-turk Pan turkists have become the crystalization of such key ideas as "azerbaijanis are one part of the big turkic family", "The Ottoman state as elder brother will support Azerbaijan" and "they will struggle against the common enemies together". In the efforts of the first prezident of the Republic of Azerbaijan Mehmed Amin Rasulzade the trilogy of "turkification, modernization, islamization" has formed the ideological basis of the state. These key thesises revealed in higher stratejik levels obviosly reflect the nature of turk-azeri relationship today as well. "Shushi declaration" signed by the prezidents of Azerbaijan and Turkey in 2021 is bright example of this.

Key words: *Pan-Turkism, Mehmed Amin Rasulzade, "The Shushi declaration", turkification, modernization, islamization.*

1918թ. Ադրբեջանի Հանրապետության ստեղծմամբ ադրբեջանցի մտավորականների շրջանում արդեն իսկ ծայր առած թյուրքականության շարժումը արմատավորվում է պետական գաղափարախոսության մակարդակով՝ հող ստեղծելով հետագայում Հեյդար Ալիևի կողմից շրջանառության մեջ դրված «Մեկ ազգ երկու պետություն» կարգախոսի կայացման ու գործարկման համար: Օսմանյան կայսրության հովանու ներքո ստեղծված ադրբեջանական պետությունն ակնհայտորեն կրում էր ադրբեջանցի և թուրք պանթյուրքիստների գաղափարական փոխազդեցությունների կնիքը, որն իր արտացոլումն է գտնում պետության արտաքին քաղաքականության մեջ՝ ուղղվելով առաջին հերթին Հայաստանի Հանրապետության և Արցախի դեմ:

Օսմանյան կայսրության շուրջ տեղի ունեցող զարգացումները մշտապես իրենց արտացոլումն էին գտնում կովկասյան թյուրքերի՝ ներկայիս ադրբեջանցիների մոտ իշխող հասարակական–քաղաքական տրամադրություններում: Այս համատեքստում հատկապես մեծ ոգևորություն էր առաջացրել դեռևս 1908թ. երիտթուրքական հեղափոխությունը՝ ուղղորդելով ռուսական տիրապետության տակ ապրող ադրբեջանցիներին դեպի Օսմանյան կայսրությունը: Լեհ պատմաբան, հարավկովկասյան տարածաշրջանի ու Ադրբեջանի պատմության մասնագետ Թադեուշ Սվետախովսկիի հավաստմամբ թյուրքականության գաղափարներն այս փուլում չէին սահմանափակվում միայն մտավորականության նեղ շրջանակներով: Երիտթուրքերի առաջացրած ոգևորության ալիքը տարածվել էր նույնիսկ պահպանողական այն ադրբեջանցիների շրջանում, ովքեր շարունակաբար կասկածանքով էին վերաբերվել ցանկացած ազգայնական գաղափարի և բորբոքում էին շիական ծայրահեղականություն ընդդեմ Թուրքիայի: Նրանք ևս ազդվել էին քարոզվող իսլամական համերաշխության գաղափարներով՝ «համախմբվելու եվրոպական ագրեսիայից տառապող օսմանյան կայսրության շուրջը»[1]: Առաջին աշխարհամարտի ընթացքում ևս պրոօսմանյան տրամադրությունները պահպանվում են, և առաջ է մղվում «Թուրան» պետության ստեղծման գաղափարը: Օսմանյան կայսրության

[1] ***Swietochowski T.***, *National Consioussnes and Political Orientations in Azerbaijan, 1905-1920, Wilson Center, Kennan Institute for Advanced Russian Studies, , 1980, p.14.*

պարտությունից հետո ադրբեջանցիների որոշ հատվածների մոտ արձանագրվում է Թուրքիայից զգուշավոր հեռավորություն պահելու ձգտում: Մինչդեռ Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո քեմալական շարժման նախադրյալները նոր հույսեր են արթնացնում ադրբեջանցի պանթյուրքիստների մոտ, ինչը հոգեբանական ազդեցության առումով իր որոշակի նպաստն է ունենում ռուսական ցարիզմի անկման պայմաններում ձևավորված 1918թ. անկախ ադրբեջանական պետության ստեղծման գործում: Թեև ըստ էության ադրբեջանական պետության ստեղծումը այնքան էլ չէր համընկնում ավանդաբար թյուրքականության ռոմանտիզմի դպրոցի ներկայացուցիչներ համարվող Ալի բեյ Հուսեյնզադեի, Ահմեդ Աղաօղլուի, Մեհմեդ Էմին Ռասուլզադեի՝ ողջ թյուրքական աշխարհի միավորման տեսլականին, նրանց ժառանգությամբ ու գործուն ջանքերով նորաստեղծ պետությունը որդեգրում է նախ և առաջ համաթյուրքական ընտանիքի մասը լինելու գաղափարական գիծը:

Այսպես, Ադրբեջանի Հանրապետության հիմնադիր և առաջին նախագահ Մեհմեդ Էմին Ռասուլզադեն որպես ուղղորդող գաղափարախոսություն առաջ է բերում թյուրքականությունը՝ իբրև ձևավորման փուլ թևակոխած ադրբեջանականության գաղափարախոսության անկյունաքարային բաղադրիչ: Մ.Է.Ռասուլզադեն, նոր քաղաքական որակ հաղորդելով Ա.Հուսեյնզադեի, Ա.Աղաօղլուի ու Զ. Գյոքալփի գաղափարներին, դրանք դրել է Հարավկովկասյան տարածաշրջանի ադրբեջանցիների ինքնաճանաչողության, կրոնականից որպես աշխարհիկ հանրույթ դրսևորվելու մղումների հիմքում՝ արդեն պետական մակարդակով: Իր «Ադրբեջանի Հանրապետություն» գրքում Ռասուլզադեն գրում է. «Իր լեզվական առանձնահատկություններով Անատոլիայի թուրքերենին մոտ բարբառով խոսող ադրբեջանցի թյուրքը մեծ թյուրքական ծառի մի ճյուղն է, որ տարբեր բարբառներ ու անուններ ունի՝ կախված գտնվելու վայրից»[1]: Մ.Ռասուլզադեի անձնական հուշատետրերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում թուրք ազգայնամոլ բանաստեղծների գաղափարական ազդեցությունը: Դրանցից մեկում ամփոփվել են այն բանաստեղծությունները, որոնք հոգեհարազատ էին Ռասուլզադեին և դրանց շարքում են ազգայնամոլ այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Նամըք Քեմալը, Մեհեմեդ Էմին Յուրդաքուլը: Ռասուլզադեի օրագրում տեղ գտած Յուրդաքուլի «Ողջույն քեզ» բանաստեղծությունը ներկայացնում է թուրքերի պատմությունը, թուրքական «արդարությունն ու հերոսությունները».

«Ողջույն ձեզ յավուզների, սելիմների զավակներ

---

[1] ***Rəsulzade M.E.***, *Azərbaycan Cümhuriyəti, Baku, 1990, s. 11.*

Ողջույն ձեզ Բարբարոսի շեհիդ դարձած որդիներ...[1]»:

Ռասուլզադեի նշված գաղափարների բյուրեղացումն արձանագրվում է «Մուսավաթականության» գաղափարախոսության առանցքային թեզերի շուրջ: 1913 թվականից Մ. Է. Ռասուլզադեն Բաքվում ստանձնել է «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցության առաջնորդությունը՝ ուղղորդելով այն պանիսլամիզմից դեպի թյուրքականությունը: Այդ գործընթացն ուղեկցվում էր հանրության շրջանում ազգային զգացումների արթնացման հիմքերի ստեղծմամբ: «Dirilik» (ադրբ.՝ եռանդ) թերթում իր հոդվածներից մեկում Ռասուլզադեն այդ նպատակով հստակ տարանջատում է «ումմա» և «ազգ» հասկացությունները՝ ընդգծելով դրանց միջև առկա տարբերությունները: Ումման Ռասուլզադեն մեկնաբանում էր բացառապես կրոնական իմաստով, որը ենթադրում է բոլոր մահմեդականների կոլեկտիվ գիտակցություն, մինչդեռ ազգը սահմանվում էր որպես մի հանրություն, որ կիսում է ընդհանուր լեզու, մշակույթ, պատմություն, ինչպես նաև կրոն, վերջինը հանդես է գալիս որպես բաղադրատարր: Ազգը չի կարող նշանակել կրոնական խումբ, դրա իմաստը միայն աշխարհիկ է, իսկ դրա բաղադրիչները նույնն են ինչ ազգայնականությանը[2]: Ինչպես տեսնում ենք, Ռասուլզադեն հստակորեն հանդես է գալիս Զիյա Գյոքալփի՝ ազգի մշակութային սահմանման առաջմղմամբ, որտեղ խոսք չկա այնպիսի առանցքային տարրերի մասին, ինչպիսիներից է արյունակցական կապը:

Ազգի և ազգայնականության այս ձևակերպումները հետագայում դառնում են մուսավաթականության գաղափարախոսության հիմնաքարը: 1917թ. «Մուսավաթ» կուսակցությունը միանում է Գանձակում կենտրոնացված «Ապակենտրոնացման թուրքական կուսակցությանը» (նախահայրը «Difai» (ադրբ.՝ պաշտպանություն) կուսակցությունն էր)՝ վերանվանվելով «Ապակենտրոնացման թուրքական կուսակցություն, Մուսավաթ»: Կուսակցության ըստ էության գործող երկու՝ Բաքվի և Գանձակի թևերը միակարծիք էին հետևյալ սկզբունքային հարցերում. աշխարհիկ թուրքական ազգայնականություն և ապագա Ադրբեջանի տեսլականը որպես ինքնավար պետություն, ընդ որում, հանդես էին գալիս որպես տարածքային ինքնավարության կողմնակից: 1917թ. հոկտեմբերի կուսակցության հռչակագրում հստակ նշվում է. «Յուրաքանչյուր ազգ, որը տիրապետում է սահմանված տարածքի, կազմում է մեծամասնություն այդ տարածքում,

---

[1] *Հայրեդդին Բարբարոսը կամ Հըզըր Հայրեդդին փաշան (1475-1546) օսմանյան նավատորմի ծովակալ էր, ում հաղթանակները երկրի սահմանները հասցրել են Միջերկրական ծով:*

[2] ***Swietochowski T.,*** *National Consioussnes and Political Orientations in Azerbaijan, 1905-1920, Wilson Center, Kennan Institute for Advanced Russian Studies, , 1980, p.13.*

պետք է արժանանա տարածքային ինքանավարության իրավունքի: Մեր կուսակցության տեսանկյունից այս սկզբունքը պետք է կիրարկվի այնպիսի թյուրքական հողերի համար, ինչպիսիք են Ադրբեջանը, Թուրքեստանը, Ղրղզստանը և Բաշկիրստանը...Ազգությունները, որը չեն բնակվում իրենց համար սահմանված տարածքում, պետք է իրավունք ունենան ստեղծելու մշակութային ինքնավարություն»[1]: Ըստ էության, ադրբեջանցիներն առաջ էին քաշում ֆեդերալզիմի ծրագիր, որով էլ, ըստ Թ. Սվետախովսկիի, մտնում են իրենց պատմության ու ինքնաճանաչողության նոր փուլ՝ փոխակերպում դեպի ազգություն:

Ռասուլզադեի՝ որպես Կովկասում ժամանակի առանցքային իսլամական քաղաքական ուժի ղեկավարի կողմից առաջին անգամ քաղաքական ու պետական հիմքերի վրա է դրվում թուրանականության գաղափարը, ադրբեջանցիների՝ թյուրքական աշխարհի մասնիկը լինելու և հատկապես Օսմանյան թուրքերի հետ համագործակցությամբ մահմեդականներին շարունակաբար հալածող ուժերի՝ բոլշևիկների, այդ թվում՝ հայերի դեմ պայքարի թեզը: Որպես առաջնային քայլ Ռասուլզադեն դիտարկում էր ադրբեջանական ինքնավար պետության ստեղծումը՝ Դաշնային Ռուսաստանի կազմում: Այս համատեքստում Օսմանյան կայսրությունը Ռասուլզադեի հայացքներում ներկայանում է որպես փրկիչ ուժ՝ ընդդեմ ադրբեջանցիների թշնամի բոլշևիկների ու նրանց հետ համագործակցող հայերի՝ նախանշելով ստեղծվելիք հանրապետության քաղաքական ուղեգիծը: Ռասուլզադեի համոզմամբ՝ Բաքուն վերածվել էր «թյուրքական ազգասիրության (millətpərvərlik)» կենտրոնի՝ անցանկալի ռուսական բոլշևիկների համար, ովքեր այն ոչնչացնելու համար որպես ավանդական դաշնակից հայերին էին տեսնում: Իր «Ադրբեջանի Հանրապետություն» գրքում ներկայացնելով մահմեդականների նկատմամբ «հայերի հանցագործությունները՝ միավորված Բաքվի բոլշևիկների հետ»՝ Մ.Է.Ռասուլզադեն գրում է. «Այս արագությամբ կյանքին սպառնացող վտանգի նկատմամբ Թիֆլիսի կառավարության անտարբերությունը տեսնող Ադրբեջանի հանրության մոտ, որ ընդունել էր նրանց իշխանությունը, լիովին բնական մի հավատ է ծագում: Այս բարդ իրադրությունից ազգին փրկող միայն մի ելք էր կար՝ Թուրքիան: Ժողովրդին այլ հույս չէր մնացել քան՝ եղբայր ազգը կգա: Մեզ թշնամու ձեռքից կփրկի»[2]: Իբրև այս վտանգներին դիմակայելու միջոց առաջ է քաշվում թյուրքական աշխարհի հետ գործելու ճանապարհը՝ հստակ ուրվագծվելով թուրանականության մուտքը Ադրբեջանի քաղաքական կյանք: Հատկանշական է, որ «Մեր դարաշրջանի

---

[1] *Նույն տեղում՝ էջ 16:*

[2] ***Rəsulzade M.E.**, Azərbaycan Cümhuriyəti, Baku, 1990, s. 31.*

առաջնորդը» գրքում Ռասուլզադեն ոչ միայն շարունակաբար առաջ է մղում ադրբեջանցիների «թուրանցի», «թուրանի որդիներ» լինելու թեզը, այլև նախանշում է դրա ստեղծման հեռանկարը ակնհայտ հակառուսական տրամադրություններով՝ հղում անելով Զ.Գյոքալփի հետևյալ տողերին.

«Ռուսաստանը կքանդվի, ավերակ կդառնա,
Թուրքիան կաճի, Թուրան կդառնա»[1]:

Այս համատեքստում հարկ է նշել, որ դեռևս 1906 թվականից հենց այս խնդիրների չեզոքացմանն էր լծվել ծագումով ադրբեջանցի գրող, հրապարակախոս, հասարակական–քաղաքական գործիչ, թյուրքականության գաղափարախոսներից Ահմեդ Աղաօղլուի ջանքերով ստեղծված «Difai» կուսակցությունը՝ ի հակազդեցություն «Հայ հեղափոխական դաշնակցության»: Հայկական կողմին ահաբեկչության հետ աղերսների մեջ մեղադրելու ադրբեջանա–թուրքական ավանդական գործելակերպին համահունչ՝ նման կերպ է արտահայտվել Ա.Աղաօղլուն՝ խոսելով կուսակցության ստեղծման պատմական անհրաժեշտությունից. «Ինչ էլ որ լինի հայերը միայն Դաշնակցության մասին են մտածում, ակնհայտ է Դաշնակցության կապը ահաբեկչության հետ: ...Այժմ մենք էլ լավ զինված կուսակցություն պետք է ստեղծենք, մենք էլ մեր Դաշնակցությունը պիտի ունենանք»[2]: Ա.Աղաօղլուն անձամբ ներգրավված է եղել կուսակցության քարոզչական աշխատանքներում, շրջել է ամբողջ Ղարաբաղի տարածքում՝ աշխատելով ապահովել հնարավորինս շատ մահմեդականների անդամակցությունը նորաստեղծ կուսակցությանը[3]:

Այս առումով հստակորեն կարող ենք արձանագրել, որ ադրբեջանականությունն, իր ձևավորման վաղ շրջափուլերից սկսած, սնվում էր հայերի հետ մրցակցության ու թշնամանքի գաղափարներով՝ ուղենիշային դառնալով ոչ միայն վերացական հարթություններում, այլև իբրև պետական քաղաքականության բաղկացուցիչ, որը դրսևորվում է 1918-1920թթ. Հայաստանի և Արցախի նկատմամբ ռազմական ագրեսիայով: Ադրբեջանի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո՝ 1918թ. հունիսի 4-ին, «Օսմանյան կայսրության կառավարության ու Ադրբեջանի Հանրապետության կառավարության միջև բարեկամության պայմանագիր» է ստորագրվում (ադրբեջանական կողմից ստորագրում է Մ.Է. Ռասուլզադեն), որի 4-րդ կետով՝ երկրների անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ Օսմանյան կառավարությունն իր վրա է

---

[1] ***Resulzade M.E.***, *Asrımızın siyavuşu, Ankara, 1989, s.38.*

[2] ***Əzizov E.***, *DİFAİ-XX əsrin əvvəllərində erməni-azərbaycanlı münaqişəsinin ilkin tarixi şərtləri və səbəbləri, Baki, 2009, s. 84 URL: http://www.anl.az/el/alf7/ee_d.pdf (Accessed: 01.09.2021).*

[3] *Նույն տեղում, էջ 93:*

վերցնում Ադրբեջանի Հանրապետությանը ռազմական աջակցություն ցույց տալու գործը»[1]: Ռազմական ագրեսիան ընդդեմ Հայաստանի ու Արցախի չի ուշանում. արդեն սեպտեմբերին ադրբեջանա–թուրքական զորքերը Շուշին գրավելուց հետո շարժվում են Զանգեզուր: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, ամեն ջանք գործադրելով, Նախիջևանն ապստամբեցնում էր Հայաստանի Հանրապետության դեմ և Զաբրայիլում ու Զանգելանում մեծաքանակ զինյալ խմբեր կազմելով՝ սպառնում էր Կապանին ու Մեղրիին՝ այդ շրջանները մաքրելով՝ Նախիջևանին կապվելու նպատակով, - հետագայում գրում է Զանգեզուրի ինքնապաշտպանությունը ստանձնած Սպարապետ Գարեգին Նժդեհը[2]: Թշնամական ուժերի նպատակները Գ.Նժդեհը ձևակերպել է հետևյալ դիպուկ պատկերով. «Թշնամին նպատակադրել էր՝ մեր ժողովրդի մի խոշոր մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի և Ադրբեջանի միջև, և տեր դառնալով Սյունյաց աշխարհի ու Գողթանի բնական ամրություններին, մշտական սարսափի տակ պահել մեր մատաղ հանրապետությունը»[3]: Թյուրքական սպառնալիքը արտացոլված է նաև Վ.Գևորգյանի «Լեռնահայաստանի հերոսամարտը» գրքում. «Համադուրանական գաղափարը իր բոլոր ձևերուն մէջ մեծագոյն առիթը կ'ընծայէր Օսմանեան կառավարութեան դէպի իր միջնադարեան աշխարհակալութիւն մը ըլնելու: Հասկանալի էր ուրեմն խելահեղ այն արշավանքը, որուն ձեռնարկած էին թաթար Մուսավաթն ու թուրք Իթթիհատը-հաւատարիմ դրօշակիրները բանդուրանական գաղափարին»[4]: Գարեգին Նժդեհը 1920թ. փետրվարի 11-ին իր զորքին տված հրամանում նշում է. «Երկրորդ տարին է, ինչ թշնամին անվերջ կրկնում է իր յարձակումները Զանգեզուրի նախադուռը պաշտպանող մի բուռն ժողովրդի վրայ՝ այդ շրջանին տէր դառնալու ու այդպիսով միացնելու երկու մուսուլման երկիրները–Ադրբէջան ու Տաճկաստանը»: Չնայած որ պետական մտածողությամբ օժտված հայ նվիրյալների ջանքերով թշնամական ուժերին չհաջողվեց իրագործել իրենց նպատակները, Հայաստանի ու Արցախի տարածքով համաթուրանականության գաղափարի իրագործումը մնաց որպես ադրբեջանա–թուրքական պետական գաղափարախոսության ու գործելակերպի հիմնարար բաղկացուցիչը:

1918թ. Ադրբեջանի Հանրապետության ստեղծմամբ Մ. Է. Ռասուլզադեի ջանքերով թյուրքականության և թուրանականության գաղափարները

---

[1] ***Yaqublu N.***, *Cümhuriyet quruculari, Baki, 2018, s.17.*

[2] ***Նժդեհ Գ.,*** *Ազատ Սյունիք. Արևոտ գիրք, Երևան, «Հայրենիք» ակումբ, 2007, էջ 71:*

[3] ***Նժդեհ Գ.,*** *Հայ–բոլշևիկյան կռիվները, Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 41:*

[4] ***Գէորգեան Վ.***, *Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, «Հայրենիք» մատենաշար, թիվ 22, 2010, էջ՝17, URL: www.hhk.am/files/library_pdfs/4/pdf (հասանելի է՝ 15.02.2022):*

արտացոլվում են նաև հասարակական կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներում՝ սիմվոլիկա, կրթություն և այլն: Ադրբեջանի գաղափարական հիմքում դրվեց Ալի բեյ Հուսեյնզադեի «Թյուրքականացում, արդիականացում, իսլամ» եռամիասնությունը, որն իր արտացոլումը գտավ դրոշի երեք գույներում: Այս կապակցությամբ Մ. Է. Ռասուլզադեն իր «Մշակութային ավանդույթներ և ժամանակակից Ադրբեջանի գրականությունը» աշխատությունում, հիշատակելով Ա. Հուսեյնզադեին, գրել է. «Համաշխարհային ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված այս հանրապետության՝ կապույտ, կարմիր, կանաչ եռագույնը Ադրբեջանի մշակույթի ավանդույթների ամփոփումն է խորհրդանշում: Կապույտը թյուրքականության, կանաչը՝ իսլամի, կարմիրը արդիականության նշանն է: Ժամանակին «Ֆույուզաթ» թերթի բարեպաշտ խմբագիրն (Ա. Հուսեյնզադեն-խմբ.) ասել էր, որ թյուրքական արյունով, իսլամական հավատով ու ֆռանգի մտածելակերպով լինենք: Հետագայում թյուրքականության ամենամեծ փիլիսոփա Զիյա Գյոքալփը այդ եռագաղափարը ավելի գիտական ոճով օգտագործեց և նույն կարգախոսը «Բաց խոսք» թերթի վերնագրերում հայտնվեց»[1]:

Ռասուլզադեն Ադրբեջանի Հանրապետության ստեղծումը դիտարկվում էր համաթյուրքական շահերի տեսանկյունից՝ ընդգծելով Ադրբեջանի՝ առաջին անկախ թյուրքական պետություն լինելու գաղափարը, որի «ներկայացուցիչները մեծ ավանդ են ունեցել թյուրքական աշխարհում, այդ թվում՝ առաջին թյուրքական դրամայի հեղինակն ադրբեջանցիներն են, առաջին թյուրքական օպերան գրել է ադրբեջանցի: Ավելին, նրանք առաջինն էին Ռուսաստանի թյուրքերից, որ հրատարակեցին թերթ, ինչպես նաև առաջինն էին իսլամական աշխարհում, որ հռչակեցին անկախ հանրապետություն»[2]: Միաժամանակ, ամրագրվում է Ադրբեջանի մտերմությունը թյուրքական պետություններից Օսմանյան կայսրության հետ, Ադրբեջանն անվանելով «փոքր Թուրքիա՝ թուրքական կառավարությամբ»: «Մեծ Թուրքիայի ու Փոքր Թուրքիայի ժողովուրդների միջև կապը անկեղծ է, ինչպես երկու եղբոր միջև», - գրում է Մ. Է. Ռասուլզադեն[3]: 1918 թ. հունիսի 27-ին Ադրբեջանում թուրքերենը հռչակվեց պաշտոնական լեզու: Առաջին Հանրապետությունում ակտիվ քայլեր են կատարվել նաև կրթության թուրքականացման ուղղությամբ, այդ թվում եկել են մասնագետներ Թուրքիայից, դպրոցները թուրքականացնելու համար

---

[1] ***Turan A.***, *Əli bey Hüseynzadə, Moskva, Salam press, 2008, p.70:*

[2] ***İmanov V.***, *Ali Merdan Topçubaşı (1865-1934): Lider bir aydın Bağımsız Azerbaycan Cumhuriyetinin Temsili, İstanbul: Boğaziçi Üniversitesi Yayınevi, 2003, s. 9.*

[3] ***Rəsulzade M.E.***, *Azərbaycan Cümhuriyəti, Baku, 1990, s.9.*

հրատարակվել են համապատասխան դասագրքեր: Ռասուլզադեի բնորոշմամբ՝ Ադրբեջանի Հանրապետության իշխող ուժը՝ «Մուսավաթ» կուսակցությունը, գաղափարական տեսանկյունից «ազգասիրությունից (millətpərvərlik) ծնված թյուրքականությանը միտված կուսակցություն» է[1]:

Այս առումով պատահական չէ Մ. Է. Ռասուլզադեի բացասական վերաբերմունքը Ադրբեջանի խորհրդայնացման կապակցությամբ, ինչի մասին վերջինս խոսել է իր «Մեր դարի Սիյավուշը» գրքում: Մասնավորապես, գրական համեմատությունների ու զուգահեռների անցկացմամբ մտահոգություն է հնչում, որ Թուրքիայի թուրանականներին ստում են, թե «Ադրբեջանն այլ ուղիով է գնում, անգլիացիաների, Ֆրանսիայի ու Ամերիկայի հետ կապերի մեջ է: Թուրանի թշնամիների՝ հայերի հետ է հաշտվում: Իրանի հետ է պայմանավորվում»: Ըստ այդմ, Ռասուլզադեի պատկերացրած արտաքին քաղաքականությունն ուղղված է դեպի Թուրքիա՝ բացառելով ինչպես բոլշևիկների, այնպես էլ Արևմուտքի ու Իրանի հետ կապերի հաստատումը, թշնամական նետն ուղղվելով Հայաստան:

Ռասուլզադեն մեծ հիասթափությամբ է խոսում Ադրբեջանի խորհրդայնացման մասին՝ որպես Թուրքիայից հեռանալու վտանգավոր քայլ, այդ թվում՝ հայերի հետ կապված: Ադրբեջանցի բոլշևիկներին համարում է խաբված. «Կարծում էին, թե Ռուսաստանը գալու է, Հայաստանը արանքից հանի և բանակը ուղարկի Մուսթաֆա Քեմալին օգնության. Հայաստանի նկատմամբ ագրեսիայի փոխարեն բոլշևիկները Հայաստանի անկախությունը ճանաչեցին»[2]: Ռասուլզադեի խոսքով՝ Ադրբեջանը դարձավ Ռուսաստանի կատարյալ մի վիլայեթ: Ռասուլզադեն գրքի վերջում ընդգծում է գաղափարական ջրբաժանը իրենց ու բոլշևիկների միջև՝ պնդելով, որ «Մուսավաթի» շրջանը ժողովրդի մեջ մնացել է որպես Ադրբեջանի շրջան՝ ոչ թե որպես աշխարհագրական տարածք, այլ մտքի ու գործի ձևով: Խորհրդային շրջանը Ադրբեջանի համար Ռասուլզադեի կողմից նկարագրվում է բացասական երանգներով, և վերջինս հույս է տածում, որ Ադրբեջանի դրոշի գույներին համահունչ (ի նկատի ունենալով գյոքալփյան «թուրք ազգից եմ, իսլամական համայնքից եմ, արևմտյան մշակույթից եմ» կարգախոսին համապատասխանությունը) պետությունը կրկին կհանգի թուրք–իսլամական համերաշխության առաջնահերթությանը[3]: Դա կապում էր Թուրքիայի «ռուսական իմպերիալիզմի դեմ» հաղթանակի հետ՝ գալիք

---

[1] *Նույն տեղում, էջ 43:*

[2] ***Resulzade M.E.,*** *Asrımızın siyavuşu, Ankara, 1989, s.62.*

[3] ***Rəsulzade M.E.****, Azərbaycan Cümhuriyəti, Baku, 1990, s. 78.*

սերունդներին պատգամելով կրկին բարձրացնել Ադրբեջանի դրոշը՝ լինի դա «շեհիդ դառնալու» գնով[1]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 1918թ. հռչակված Ադրբեջանի Հանրապետության գաղափարական դարբինները, կրելով պանթյուրքիստների ակնհայտ ազդեցությունը, պետության գաղափարական հիմքում դրել էին հետևյալ հիմնական թեզերը՝ Ադրբեջանը «Թուրանի» մի մասնիկն է, «Ադրբեջանը փոքր Թուրքիա է», «իր ռազմավարական նպատակներին հասնելու համար պետք է պայքարի հայերի ու ռուսների դեմ, համախմբվի թյուրքական աշխարհի հետ»: Զուգահեռներ անցկացնելով մերօրյա իրականության հետ՝ հարկ է նշել, որ թուրք–ադրբեջանական փոխգործակցությունը ներկայումս էլ անշեղորեն ընթանում է հիշյալ հիմնական գաղափարական թեզերի ուղեգծով՝ պահին համահունչ մարտավարական մակարդակի որոշ խմբագրումներով ու մաններներով միայն: Դրա վառ օրինակն է 44-օրյա պատերազմից հետո ակտիվացած պանթյուրքիստական գաղափարախոսության տարատեսակ դրսևորումները, այդ թվում՝ թուրք–ադրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարության և քարոզչական օղակների կողմից շրջանառության մեջ մտցված դրույթը՝ «Ադրբեջանի բանակը դարձնել Թուրքիայի փոքր մոդելը, որն իր հերթին պետք է դառնա համաթյուրքական ուժի առաջին օղակը»: Եվ իհարկե պետք է նշել, որ թուրք–ադրբեջանական տանդեմի համար առանցքային դերակատարում է ունենալու Ադրբեջանի ու Թուրքիայի ղեկավարների կողմից ստորագրված «Շուշիի հռչակագիրը»[2], որը կարելի է դիտարկել իբրև երկու պետությունների հարաբերությունները միանգամայն նոր որակական՝ պաշտոնական դաշնակցային մակարդակի բարձրացնող ծանրակշիռ փաստաթուղթ:

Գրականություն

Գրքեր

1. Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., «Հայրենիք» մատենաշար, թիվ 22, 2010, էջ 17, URL: www.hhk.am/files/library_pdfs/4/pdf (հասանելի է՝ 15.02.2022):
2. Նժդեհ Գ., Հայ–բոլշևիկյան կռիվները, Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 41:

[1] ***Resulzade M.E.,*** *Asrımızın siyavuşu, Ankara, 1989, s.70.*

[2] *Azərbaycan Respublikası ilə Türkiyə Respublikası arasında müttəfiqlik münasibətləri haqqında Şuşa Bəyannaməsi, 16 iyun 2021, URL: president.az/articles/veiw/52122 (Accessed: 04.02.2022).*

3.Նժդեհ Գ., Ազատ Սյունիք. Արնոտ գիրք, Երևան, «Հայրենիք» ակումբ, 2007, էջ 71:
4.Swietochowski T., National Consioussnes and Political Orientations in Azerbaijan, 1905-1920, Wilson Center, Kennan Institute for Advanced Russian Studies, , 1980, p.14.
5.Əzizov E., DİFAİ-XX əsrin əvvəllərində ermənі-azərbaycanlı münaqişəsinin ilkin tarixi şərtləri və səbəbləri, Baki, 2009, s. 84 URL: http://www.anl.az/el/alf7/ee_d.pdf (Accessed: 01.09.2021).
6.İmanov V., Ali Merdan Topçubaşı (1865-1934): Lider bir aydın Bağımsız Azerbaycan Cumhuriyetinin Temsili, İstanbul: Boğazıçı Üniversitesi Yayınevi, 2003, s. 9.
7.Resulzade M.E., Asrımızın siyavuşu, Ankara, 1989, s.38.
8.Rəsulzade M.E., Azərbaycan Cümhuriyəti, Baku, 1990, s. 11.
9.Turan A., Əli bey Hüseynzadə, Moskva, Salam press, 2008, p.70.
10.Yaqublu N., Cümhuriyet quruculari, Baki, 2018, s.17.

Հոդվածներ

1.Azərbaycan Respublikası ilə Türkiyə Respublikası arasında müttəfiqlik münasibətləri haqqında Şuşa Bəyannaməsi, 16 iyun 2021, URL: president.az/articles/veiw/52122 (Accessed: 04.02.2022).
2.Türkmen F., M.Emin Rasulzadenin Özel defterindeki türk şarilerinden seçtiği şiirler, Türk dünyası Dil ve Edebiyat Dergisi, sayi 1, Bahar 1996y., s.70

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ.
E-mail:tvhakobyan1976@gmail.com, hakobyan76taron@gmail.com

Սույն գիտական ուսումնասիրությունը կատարվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության կողմից իրականացվող «Short Term Research Grant for the Study of NagornoKarabakh II» ծրագրի շրջանակներում

Данная научная работа проводится в рамках программы Фонда Галуста Гюльбенкяна «Краткосрочные научные гранты для изучения Нагорного Карабаха II»

This research was conducted in the framework of the «Short Term Reasearch Grant for the Study of Nagorno Karabakh II» program implemented by the Galouste Gulbenkian Foundation

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1993-1995 ԹԹ.)

Արտաքուստ թվում էր, թե Արցախյան շարժման նոր փուլը՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանում, թե Արցախում, ղեկավարվում է մեկ կենտրոնի կողմից, սակայն, վերլուծելով քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը, գալիս ենք այն համոզման, որ ինչքան էլ դա պարադոքս թվա, նրա ղեկավարման հիմքում կանգնած էին իրար հակոտնյա երկու քաղաքական ուժեր:

ԼՂՀ առաջին գումարման ԳԽ ընտրություններից հետո պարզ դարձավ, որ Արցախում հաղթանակ էին տարել ՀՀ ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Արցախի համար այդ դժվարին իրավիճակում ՀՀ

իշխանությունները բացահայտ քաղաքական առճակատման գնացին Ստեփանակերտի հետ:

Իսկ ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո պաշտոնական Երևանի միջամտությամբ ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ակնհայտ հարկադրական փոփոխություններ, որոնք, սակայն չվերացրեցին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի միջև առկա հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները պատճառ հանդիսացան, որպեսզի նորից լարվեն փոխհարաբերությունները ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության միջև: Ստեղծված իրավիճակն անրադարձավ նաև ԼՂՀ ներքին կայունության վրա՝ ստեղծելով ներքաղաքական ծայրաստիճան լարված դրություն: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա և կարողացավ իշխանափոխություն իրականացնել ԼՂՀ-ում՝ իշխանության բերելով իր համար ցանկալի ուժեր: Այդպիսով՝ ԼՂՀ կառավարման համակարգում տեղի ունեցան պարտադրված փոփոխություններ, որոնց արդյունքում երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի:

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, Պաշտպանության պետական կոմիտե, ԼՂՀ նախագահ, պաշտպանության խորհուրդ, Վարչապետ, Անվտանգության խորհուրդ:*

Т.Акопян

ВНУТРИПОЛИТИЧЕСКИЕ ИНТРИГИ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ (АРЦАХСКОЙ) РЕСПУБЛИКЕ (1993-1995)

Со стороны казалось, что новым этапом арцахского движения - национально-освободительной борьбой арцахских армян руководил один центр. Однако, анализируя последовательность политических событий, приходим к убеждению, что, как бы парадоксально не казалось, руководили ею две противоборствующие политические силы.

После выборов в ЦК Нагорно-Карабахской Республики первого созыва стало ясно, что в Арцахе одержали победу нежелательные для руководства Республики Армения силы. В этой сложной для Арцаха ситуации власти РА пошли на открытое политическое противостояние со Степанакертом.

А после трагической гибели председателя ЦК НКР Артура Мкртчяна при вмешательстве официального Еревана в систему управления НКР были внесены явные силовые изменения, которые, однако, не устранили существующих противоречий между официальным Ереваном и Степанакертом. Новые разногласия, возникшие в ходе мирного переговорного процесса, вновь привели к обострению напряженности между законодательным органом НКР и руководством РА. Эта ситуация отразилась и на внутренней стабильности НКР, создав крайне напряженную внутриполитическую обстановку. Воспользовавшись этим обстоятельством, Президент РА усилил давление на законодательный орган НКР и смог осуществить смену власти в НКР, приведя к власти нужные ему силы. Таким образом, в системе управления НКР произошли вынужденные изменения, в результате которых страна перешла от парламентской республики к президентской.

Ключевые слова:. *Нагорно-Карабахская Республика, Верховный Совет, Совет Министров, Государственный комитет обороны, Президент НКР, Совет обороны, премьер-министр, Совет безопасности.*

T.Hakobyan

INNER POLITICAL INTRIGUES IN THE NAGORNO KARABAKH (ARTSAKH) REPUBLIC (1993-1995)

Outwardly, it seemed that the new stage of the Artsakh movement - the national liberation struggle of the Armenians of Artsakh was controlled by one center. However, analyzing the sequence of political events, we come to the conclusion that, no matter how paradoxical it may seem, it was controlled by two opposing political forces.

After the elections of the Central Committee of the first convocation of the Nagorno-Karabakh Republic, it became clear that forces unwanted for the leadership of the Republic of Armenia had won in Artsakh. In that difficult situation for Artsakh, the RA authorities launched an open political confrontation with Stepanakert.

And after the tragic death of Chairman of the NKR Central Committee Artur Mkrtchyan, with the intervention of official Yerevan, obvious forcible changes were made in the NKR administration system, which, however, did not eliminate the existing contradictions between official Yerevan and Stepanakert. The new disagreements that arose during the peaceful negotiation process caused an intensification of tensions between the NKR legislative body and the RA leadership. The situation also affected the internal stability of NKR, creating an extremely tense internal political situation. Taking advantage of that circumstance, the President of RA intensified the pressure on the NKR legislative body and managed to execute a change of power in the NKR, bringing the forces he wanted. Thus, forced changes took place in the NKR administration system, as a result of which the country transitioned from a parliamentary republic to a presidential one.
Key words: *Nagorno-Karabakh Republic, Supreme Council, Council of Ministers, State Defense Committee, NKR President, Defense Council, Prime Minister, Security Council.*

1992 թ. ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո երկրում ստեղծված ներքաղաքական լուրջ ցնցումները չսասանեցին ԼՂ պետականության հիմքերը, ավելին ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը, որի վճռականության շնորհիվ կարողացան հարթել ստեղծված իրավիճակը:

Իսկ հետագայում՝ 1992 թ. մայիսյան հաղթանակներից հետո, հունիսի 2-6-ը շարունակված ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանում ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ կրկին զգալ տվեցին ներքին հակասությունները, որոնք ավելի սրվեցին Հայաստանի ղեկավարության ազդեցության հետևանքով: Այն ավելի խորացավ, երբ Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում բռնազավթվեցին Շահումյանի շրջանն ամբողջությամբ ու Մարտակերտի շրջանի մի մասը[1]:

Վերոնշյալ տարածքների բռնազավթումից հետո երկրում ստեղծվեց ծայրաստիճան լարված և քաոսային իրավիճակ: Իսկ Հայաստանի

---

[1]*Տես՝ Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 99-100:*

Հանրապետությունից (ՀՀ) ակնկալվող ռազմական օգնությունը դեռևս շոշափելի չէր:

Ստեղծված ծանր կացության պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը համառորեն ջանքեր էր գործադրում՝ ստեղծված ճգնաժամային իրավիճակից դուրս գալու շահեկան ուղիներ գտնելու համար: ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) ձեռքում, ինչը հնարավորություն կտար գտնել հնարավոր լուծումները[1]: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, որի մեծամասնությունը Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) անդամներ էին, չափազանց լավ էին գիտակցում, որ հանրապետության իշխանական մարմիններում, առանց արմատական փոփոխության, անհնարին էր շտկել իրավիճակը: ՀՀ-ից իրական օգնություն ստանալու համար անհրաժեշտ էր փաստացի իշխանությունը հանձնել պաշտոնական Երևանի համար ընդունելի անձանց[2]:

1992թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը[3]:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ԼՂՀ Նախարարների խորհրդի՝ «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ Նախարարների խորհրդի նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության զոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական մարմնի նորովի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ

---

[1] *ԱՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նախագահության և Նախարարների խորհրդի 1992թ. հունիսի 18-ի համատեղ նիստի արձանագրություն N 32:*

[2] *Տես՝ **Բալայան Վ.**,Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփ., 2012, էջ 230:*

[3] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 127:*

կենսական անհրաժեշտություն և առաջին հայացքից պատմականորեն արդարացվեց: Միաժամանակ հայկական երկու հանրապետությունների իշխանությունների միջև ստեղծվեց փոխըմբռնման մթնոլորտ:

Սակայն, պետական շինարարության և քաղաքական զարգացումների հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունը ակնբախ են դարձնում այդ գործում ի հայտ եկած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Պետականակերտման խրթին ճանապարհին խեղվեց ԼՂՀ բարձրագույն քաղաքական մարմնի՝ ԳԽ-ի դերակատարությունը, և նրա կարգավիճակը աստիճանաբար դարձավ ձևական: ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր, հիմնականում, ՀՀ իշխանությունների կողմից, և դա կատարվում էր որպես երկու հայկական հանրապետությունների իշխանությունների գործողությունները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն: Իհարկե, այդ անհրաժեշտությունը կար և այն նույնիսկ կենսական պահանջ էր, սակայն այն հանգեցրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում ԼՂՀ-ի պետական ինքնուրույնության որոշակի սահմանափակմանը: Իսկ ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը պատերազմական իրադրության թելադրանքով վերածվեց ավտորիտարի: Ցավոք, օգտվելով ժամանակի պարտադրած հանգամանքներից, իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛ ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Թվում էր, թե ՊՊԿ-ի ստեղծումով կհարթվեն ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992 թ. օգոստոսի 27-ի Ալմա-Աթայի և Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայնագրերը) առաջ եկած տարաձայնությունները վատթարացրին երկկողմ հարաբերությունները: Իսկ այդ տարաձայնությունների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԼՂ-ի շուրջ բանակցային գործընթացը տարվում էր առանց ԼՂՀ-ի մասնակցության: Բանակցային գործընթացում ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ նախագահի միջև առաջացած տարաձայնությունները նոր խթան հանդիսացան լարվածության ուժեղացման համար: Այնուամենայնիվ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը շարունակում էր ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունները բարելավելու համար ուղիներ որոնել, սակայն այդ որոնումներն ապարդյուն անցան:

Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը: Ուստի հակառակ թևը սկզբնական

շրջանում, այնուամենայնիվ, փորձում էր ուղիներ որոնել և բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ առնչությամբ 1992թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի գլխավորությամբ, այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ, ինչպես նշեցինք, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության[1]: Սակայն կարելի է եզրակացնել, որ բանակցություններն անցել են անարդյունք: Պատճառը երևի պարզ է. ՀՀ-ում Արցախյան հիմնախդիրը պետք է շահարկվեր ներքին կայունությունը պահպանելու համար:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքաղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից ԳԽ նախագահության անդամների, ԳԽ պատգամավորների և ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշումների գործադրման: Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԿ-ի լծակներով փորձում էր պատժել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհազանդ» անդամներին:

Այդ առնչությամբ նոյեմբերի 24-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հղեց հետևյալ նամակը. «Մեծարգո նախագահ. ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ժամանակի ընթացքում Երևանում սկսված բնական երկխոսությունների օգտակարությունը հուշում է գործընթացի շարունակման անհրաժեշտությունը: Վիճակի օրավուր սրման պայմաններում, պատիվ ունենք, մեծարգո նախագահ, հրավիրելու Ձեզ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ՝ արժեքավորելու և կոնկրետացնելու շահավետ երկխոսությունը: Համաձայնություն տալու դեպքում, խնդրում ենք մեզ տեղյակ պահել Արցախ գալու Ձեզ համար նպատակահարմար ժամանակի մասին:

Ընդունեք, պարոն նախագահ, Ձեր նկատմամբ տածած հարգանքների հավաստիացումը»[2]:

Պետք է նշել, որ այդպես էլ ՀՀ նախագահը չցանկացավ հանդիպել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ: Այդ իրադրությունից դրդված՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը վերստին նամակ հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-

---

[1]Տես՝ «Երկիր», 30.10.1992:

[2] ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 6, կապ 1, թերթ 22:

Պետրոսյանին: Նամակը, որը ներկայացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, ունի հետևյալ բնագիրը. «Մեծարգո նախագահ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը դեռևս ճանաչված չէ համաշխարհային ընկերակցությունների և Հայաստանի Հանրապետության կողմից, միշտ չէ, որ հնարավորություն ունի պաշտպանելու իր շահերը տարբեր բնույթի միջազգային կազմակերպությունների, այդ թվում նաև ՄԱԿ-ի և ԵԱՀԽ խորհրդակցություններում և նիստերում:

Նման պայմաններում Հայաստանի Հանրապետությունն իր վրա է վերցրել ԼՂՀ շահերի ձայնափողի և պաշտպանի դեր, ինչն, անտարակույս, հսկայական աջակցություն է մեր երիտասարդ հանրապետությանը:

Հայտնելով մեր երախտագիտությունը, միաժամանակ, հետագա անցանկալի բարդություններից խուսափելու նպատակով, կցանկանայինք ԼՂՀ-ին վերաբերող բանակցություններում առավել հաճախակի բարձրացվող մի շարք հարցերի շուրջ հայտնելու մեր կարծիքը: Անկեղծորեն շնորհակալ կլինեինք Ձեզ, եթե Հայաստանի Հանրապետության պետական պատվիրակությունները մեզ առնչվող հիմնահարցերի լուծման ժամանակ հետևեին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն տեսակետներին, որոնք տարբեր մակարդակների խորհրդակցություններում վաղուց ի վեր պաշտպանում են ԼՂՀ պատվիրակությունները: Նման փոխգործողությունն էապես կդյուրացներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ տարվելիք հետագա աշխատանքները:

Ընդհարման գոտի: Այդ հասկացության տակ պարտադիր պետք է ըմբռնել Ադրբեջանի, ինչպես նաև ԼՂՀ ամբողջ տարածքները. Ադրբեջան՝ որպես պետական մակարդակով ագրեսիա կատարող երկիր, ԼՂՀ՝ ուղղակի ագրեսիայից պետական մակարդակով պաշտպանվող երկիր: Դրանից հետևում է, որ ԼՂՀ-ին առնչվող, մասնավորապես, զինաթափման և ապառազմականացման բոլոր որոշումները պետք է տարածվեն նաև Ադրբեջանական Հանրապետության վրա:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը: Ազգային-ազատագրական պայքարի և Ադրբեջանի ուղղակի ագրեսիայից ԼՂՀ պաշտպանության գործընթացում ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինյալ ուժերը ունեն գոյատևման նույնքան իրավական հիմնավորում, որքան ցանկացած պետության զինյալ ուժերը:

ԼՂՀ–ն, որպես իրեն անկախ հռչակած պետություն, միջազգային իրավասուբյեկտ է և սեփական զինյալ ուժերի իրավունք ունի:

ԼՂՀ պատվիրակությունները միջազգային կազմակերպություններում: ԼՂՀ ղեկավարությունը, իրականացնելով պետական-քաղաքական-իրավական

վերահսկողություն ԼՂՀ տարածքի վրա, փոփոխման է ենթարկվել յոթանասուն տարիների ընթացքում ձևավորված տարածքի ստատուս-քվոն: Այսպիսով, ԼՂՀ անունից բանակցությունների վարման իրավունքը վերապահվում է բացառապես ԼՂՀ լիազոր պատվիրակությանը:

Ցանկալի կլիներ այդ դրույթը քննարկել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանի հաստատմանը:

Լաչին: Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի, ուղղակի ագրեսիայից անհատական ինքնապաշտպանական կարգի ռազմական գործողությունները կարող են լինել հարձակողական բնույթի և տարածվել ագրեսոր պետության տարածքում այն չափով, որ չափով այն անհրաժեշտ է զինված հարձակումը կասեցնելու և դրա վերսկսումը կանխելու համար: Դրանց վերջ են տրվում քաղաքական անկախության և տարածական անձեռնմխելիության վերականգնումով: Մինչև ընթացիկ դարի 20-ական թվականները լինելով Շուշիի գավառի մի մաս՝ Լեռնային Ղարաբաղի կազմը վերադարձած Լաչինի շրջանն անհրաժեշտ է մեր հանրապետության ինքնաբավ տնտեսական և քաղաքական կեսագործունեությունն ապահովելու համար:

Մեծարգո պարոն նախագահ. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը կրկին անգամ շնորհակալություն է հայտնում Ձեզ և հույս ունի, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ մեր ջանքերը հետայսու ևս կարժանան Հայաստանի Հանրապետության ղեկավարության լիակատար ըմբռնմանը»[1]:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքաղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից, ԳԽ նախագահության անդամների, ԳԽ պատգամավորների և ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշման գործադրման[2]: Այդ համատեքստում ձերբակալվեցին նաև քաղաքական ուժերի, այդ թվում՝ «Հայ ազգայնականության ճակատ» կազմակերպության, ինչպես նաև ՀՅԴ մի շարք անդամներ[3]:

1993թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները թևակոխեցին մի նոր շրջան: Փետրվարի 10-ին, Ադրբեջանի կողմից ուղղակի ԼՂՀ տարածքի զգալի մասի բռնազավթման

---

[1] Տես՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վլադիկ Հակոբյանի անձնական արխիվ:

*[2] Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 140-141:*

[3] Տես՝ Հակոբյան Տ., Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակումը որպես Արցախյան շարժման նոր փուլի ձեռքբերում, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, Ստեփ., 2022, պրակ 1(22), էջ 224:

կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով, մինչև 1993թ. մայիսի 12-ը, երկարաձգել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության ժամկետը: Նույն որոշմամբ, ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության և ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպման ժամանակ, որին մասնակցել է նաև ԼՂՀ ՊՊԿ-ի և ԻՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունները լրանալու և ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչև պատերազմի ավարտը երկարաձգելու և ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրին[1]:

Նման իրավիճակի պայմաններումԼՂՀ ԳԽ նախագահությունը փետրվարի 17-ին հետևյալ հերթական գաղտնի նամակը հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին. «Մեծարգո նախագահ. մեկ տարուց ավելի է, ինչ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնության կամքով Դուք ընտրվեցիք ՀՀ առաջին նախագահ: Իր պետականությունը կերտող արցախահայությունը, մեծ հույսեր տածելով Ձեր նախագահական գործունեության նկատմամբ, սպասում է, որ Հայաստանը կթոթափի տնտեսական ճգնաժամը, ժողովուրդը կձերբազատվի ընկերային քաոսից և սպառողական հոգեբանությունից, ազգը կրկին զարթոնք կապրի և կշարունակի Արցախի և Հայաստանի ազատագրման համար հինգ տարի առաջ սկսած, հիրավի, համաժողովրդական պայքարը:

Ցավոք, Հայաստանում նախագահական կառավարական ձև մտցնելուց հետո նկատելիորեն փոխվել է Հայաստան-Արցախ փոխհարաբերությունը: Ժողովրդի կողմից ընտրված ԼՂՀ իշխանությունը վստահության չի արժանանում Ձեր կողմից, որի մասին դեռևս 1992թ. հոկտեմբերին մենք ուղղակիորեն ասել ենք Երևանում՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հետ Ձեր ունեցած հանդիպման ժամանակ: Դուք, պարոն նախագահ, օգտագործելով տնտեսական և ռազմական գործոնները, Արցախում իրականացնում եք մի

[1] *Տես՝ «Երկիր», 17.02.1993:*

քաղաքականություն, որի հետևանքով քայքայվում են ԼՂՀ իշխանության կառույցները, ինչը կհանգեցնի Արցախի կորստյանը: Դիմելով Ձեզ, լիահույս ենք, որ Դուք կձեռնարկեք համապատասխան քայլեր նման գործելակերպը դադարեցնելու ուղղությամբ: Ներքաղաքական հակադրության շարունակումը կարող է լուրջ կերպով վատթարացնել առաջին հերթին ռազմական իրավիճակը, և դրա համար ամբողջ պատասխանատվությունը կընկնի նրանց վրա, ովքեր նպաստել են հակադրությանը ու միջոցներ չեն ձեռնարկել նման քայլերը կասեցնելու ուղղությամբ:

Պարոն նախագահ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք հանգամանքների բերումով ՀՀ ժողովուրդը հայտնվել է կարիքի և թշվառության մեջ, դարձել հեշտ կառավարելի: Նրան դժվար չէ հրամցնել այն անհեթեթությունը, թե իբր բոլոր չարիքների աղբյուրը Արցախի հիմնահարցն է, և բավական է թոթափել այդ «բեռը», և հայությունը կհայտնվի դրախտի մեջ: Հարցը ո՞րն է: Կարելի է զոհաբերել Ղարաբաղը, և հազարամյա պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ Արցախը հանուն մեծ նպատակի դիմել է ինքնազոհաբերման: Սակայն կոնկրետ պարագայում դա կլինի միայն համազգային մեծ պարտությունների սկիզբը: Չպետք է մոռանալ, որ ներկայումս, ուզում ենք դա, թե ոչ, Ղարաբաղը ստանձնել է հայության բարգավաճման կամ կործանման դերը: Մեր ժողովուրդը, իրեն չկտրելով ազգից, ընտրել է ազատության և անկախության ուղին ու պատրաստ է հավատարիմ մնալ դրան: Ուստի, մեր խորին համոզմամբ, Հայաստանն ու Արցախը պետք է ունենան և կենսագործեն համաձայնեցված տնտեսական, ռազմական և քաղաքական ռազմավարություն, որի անհրաժեշտության մասին մենք բազմիցս խոսել ենք Ձեզ հետ:

Ինչ խոսք, դյուրին չէ խուլ շրջափակման մեջ հայտնված Հայաստանի և Արցախի դրությունը: Գտնվելով անհարմար տարածաշրջանում՝ մեզ ստիպում են համաձայնվել ստեղծված իրավիճակին, կրավորական կեցվածք ընդունել՝ հաց, եռանդուժ, գազ ձեռք բերելու համար: Այդ ամենը հրամայական են դարձնում փութացնել համազգային ոգու ստեղծագործման գործընթացը, կանոնավոր ազգային բանակի անհետաձգելի շինարարությունը: Զգալով դրա բացակայությունը՝ Ադրբեջանն ամեն կերպ փորձում է Հայաստանին պաշտոնապես ներքաշել լայնածավալ պատերազմի մեջ և զենքի ուժով լուծել Ղարաբաղի հիմնահարցը, իսկ վաղը՝ հավանաբար, նաև Զանգեզուրի, Սևանի չհիմնավորված պահանջները:

Հարգելի նախագահ. ժամանակին ՀՀ ԳԽ-ի որոշմամբ պարտավորեցվեց գործադիր իշխանություններին ԼՂՀ-ի անունից և վերջինիս փոխարեն չստորագրել որևէ պետական պաշտոնական փաստաթուղթ: Այդ որոշմամբ Հայաստանի իշխանությունները Արցախին ինչ-որ չափով քաղաքական

երաշխիք են տվել, ինչը չի կարելի ասել ռազմականի մասին: Սոչիի «զուտ» ռազմատեխնիկական պայմանագիրը, Ալմա-Աթայի հուշագիրը, ինչպես նաև առանց Արցախի մասնակցության ձեռք բերված մյուս պայմանավորվածությունները հակասում են ոչ միայն Արցախի, այլև ողջ հայ ժողովրդի շահերին: Փաստորեն, այդ որոշումների իրականացումը կլիներ Արցախի միակողմանի զինաթափում և հանձնում: Հասկանում ենք, որ իր լավ օրից չէ, որ ՀՀ-ն ստորագրել է այդպիսի փաստաթղթեր: Սակայն իրերին նայենք օբյեկտիվորեն և ասենք, որ Հայաստանը չի օգտագործում իր բոլոր հնարավորությունները Ղարաբաղի հիմնահարցի լուծման գործում: Մեր խորին համոզմամբ, Հայաստանի հետ հաշիվ կնստեն, եթե նրանում տեսնեն ուժ: Իսկ Հայաստանը դրան կարող է հասնել միայն Ղարաբաղի միջոցով և Ղարաբաղում: Պետք է ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի Ղարաբաղում մինչեւ 1993թ. ամառը Ադրբեջանին հասցվի լուրջ պարտություն, որպեսզի Ղարաբաղի, իսկ վերջին հաշվով Հայաստանի ազատության համար պայքարի ոչ միայն դարաբաղցին: Այո, նա ունի հաստատակամություն, մարտական ոգի, պապենական հողերը ազատագրելու անկոտրում կամք, սակայն մի՞թե Ադրբեջանը, որը մեր դեմ է կռվում այլազգիների միջոցով, պետք է հուշի համազգային բռունցք ստեղծելու գաղափարը:

Ադրբեջանի լրատվությունը համայն աշխարհին ազդարարել է Հայաստանի «էքսպեդիցիոն կորպուսի» Արցախում գտնվելու մասին: Դա Ադրբեջանի քարոզչության հաղթանակներից է, որ, ցավոք, շատ հեռու է իրականությունից: Սակայն կարծում ենք, որ Դուք պետք է օգտվեք «ընձեռնված» հնարավորությունից՝ Արցախ ուղարկեք մի քանի հազար ազատամարտիկներ, որոնք կհամալրեն Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շարքերը: Հակառակ դեպքում, եթե շարունակվի միայն Ղարաբաղ-Ադրբեջան առճակատումը, ապա հեռու չէ այն ժամանակը, երբ կսպառվեն մեր վերջին ուժերը և կկատարվի անխուսափելին: Դրա համար արդեն պատասխան կտան շատերը և առաջին հերթին՝ մենք Ձեզ հետ, պարոն նախագահ:

Այսօր հաջողությունը մեզ բոլորիս է անհրաժեշտ, նախ և առաջ ծանր դրության մեջ հայտնված ԼՂՀ-ին, և որ քիչ կարևոր չէ՝ Հայաստանի բնակչության բարոյական ոգու բարձրացման համար: Ձեռք բերած հաջողությունները, անտարակույս, և միջազգային ասպարեզում կնպաստեն խաղաղություն հաստատելու ուղղությամբ մեզ համար ձեռնտու պայմաններով անցկացվելիք բանակցությունների գործընթացին: Ավելորդ չենք համարում նշել, որ դա կունենա լուրջ հետևանքներ Ադրբեջանի ներքաղաքական դրության վրա՝ հօգուտ Ղարաբաղի և Հայաստանի:

Հապաղելով կտանք շատ զոհեր և մեզ համար կստեղծենք առավել բարդ հիմնահարցեր»[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ընդլայնված նիստին, ուր պետք է լսվեր ՊՊԿ-ի 6 ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակցող ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին՝ պահանջելով առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է հայտարարվի մինչև պատերազմի վերջը:

Նիստում նաև առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն՝ նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ-ի նախագահությունը մերժեց ընդունել որոշումներ, որոնք կարող են հանգեցնել «բռնատիրության» հաստատմանը: Ի վերջո, երկար քննարկումներից և բանավեճերից հետո գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնել ողջամիտ միակ տարբերակին՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի և ԳԽ-ի նախագահության զեկուցումները և որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ-կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում, նստաշրջանի հարցերից մեկն էլ պետք լինեին նաև ԼՂՀ ԳԽ-ի ղեկավարության թափուր պաշտոնների համար ընտրությունները[2]:

Այս իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԽ մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայտարարություն, որով արտահայտեցին իրենց մտահոգությունը ցավալի միջադեպի առթիվ՝ կատարվածը համարելով Հայաստանի ղեկավարության կոպիտ միջամտության արդյունք, պահանջելով վերջ տալ ժողովրդավարական եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործողություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո[3]:

Ինչպես տեսնում ենք, ներքաղաքական իրադրության սրումը հետևանք է այն հանգամանքի, որ օրենսդիր և գործադիր մարմինները, որոնք առաջին հայացքից, թվում է, յուրովի իրավացի են գործում, չունեին համատեղ և

---

[1] *Տես՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վլադիկ Հակոբյանի անձնական արխիվ:*

[2] *Տես՝ Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 151:*

[3] *Տես՝ «Երկիր», 19.02.1993:*

ներդաշնակ գործունեության մշակված ծրագիր, ինչի պատճառով նրանց կողմից մեկը մյուսին ներկայացվող մեղադրանքները, փաստորեն, վերաբերում էին երկուսին էլ: Պարզ է, որ ժողովրդի կողմից օրինական կերպով ընտրված օրենսդիր մարմնի և պատերազմական շրջանի թելադրանքով ստեղծված գործադիր մարմնի միջև համերաշխության առկայության, երկուստեք քաղաքական պատվախնդրությունների բացակայության դեպքում նրանց երկուսի ջանքերը լիովին կնպատակամղվեին ընդհանուր շահին՝ ադրբեջանական ագրեսիայի դեմ հաղթանակի հասնելու գործին, այլ ոչ թե ներքին հակասությունների հաղթահարմանը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայության հասնելուն: Չի կարելի ժխտել, որ ՊՊԿ-ն, որպես պատերազմական շրջանի ռազմաքաղաքական մարմին, պարտավոր էր հանրապետության գերագույն ղեկավար մարմնի առաջ իր պատասխանատվության և իրավունքների շրջանակներում լուծել ոչ միայն ռազմական խնդիրները, այլև դրանցից բխող, դրանցով պայմանավորված և դրանց հետ առնչվող՝ ներքին կյանքի հարցերը: Հենց այդ շրջանակներից դուրս գալը, ԼՂՀ ԳԽ-ի ու նրա նախագահության գործունեությունը սահմանափակելու ձգտումը, ինչը պարզորոշ կերպով նկատելի է ստեղծված իրադրության ֆոնի վրա, հանդիսացել է ներքաղաքական կյանքի լարվածության գլխավոր պատճառը:

1993թ. մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Օրակարգում էին հետևյալ հարցերը՝ ԼՂՀ ՊՊԿ-ի հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ ժամանակավոր կանոնակարգում և ԼՂՀ ԳԽ մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրերի և օրենսդրական ակտերի ուղղությամբ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանը: ԼՂՀ ԳԽ նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը: Նա անդրադարձավ պետականության ձևավորման խնդիրներին, ինչպես նաև նշեց օրենսդիր և գործադիր մարմինների միջև առկա տարաձայնությունների առարկայական և ենթակայական պատճառները[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուներից ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ-ի նստաշրջանը որոշեց Գ. Պետրոսյանին թողնել ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար մինչև ապրիլի վերջը, այնուհետև կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով (պատգամավորների մի զգալի մասը

[1] *Տես՝ «Երկիր», 23.03.1993:*

գտնվում էր առաջնագծում) այն չկայացավ. որոշում կայացվեց նիստն անցկացնել ԳԽ կրկնական և նոր ընտրությունների անցկացումից հետո[1]:

Այսպիսով, ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի միջև եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները և որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգության համար: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա, որի արդյունքում հրաժարական տվեց ԼՂՀ ԳԽ պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, իսկ ԳԽ նախագահի պարտականությունները դրվեցին պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ, ԳԽ նախագահության անդամ Կարեն Բաբուրյանի վրա[2]:

Թվում էր, թե ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի հրաժարականով պետք է հանդարտվեր ներքաղաքական լարվածությունը հանրապետությունում, սակայն 1994թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց հակառակը: Իսկ դա վառ կերպով դրսևորվեց դեկտեմբերի 21-23-ին վերսկսված ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որի աշխատանքը անհրաժեշտ ենք համարում մասնակի լուսաբանել, քանզի այդ նստաշրջանը նաև ուղենիշային և բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ քաղաքական կյանքում:

Մինչդեռ 1994թ նոյեմբերի 9-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ որոշում էր կայացվել նստաշրջանը հրավիրել 1994թ. նոյեմբերի 23-ին: Օրակարգում ներկայացված էին մի շարք հարցեր, այդ թվում՝ ԼՂՀ ռազմական դրության ժամկետը երկարաձգելու և ԼՂՀ կառավարման համակարգի կատարելագործման մասին: Սակայն անհայտ պատճառներով նստաշրջանը տեղի չունեցավ:

Նստաշրջանը կայացավ դեկտեմբերի 21-ին: Ցանկանում ենք նշել նաև, որ այն սկսվեց առանց օրակարգի, ինչը ձևավորվեց նստաշրջանի ընթացքում:

Ուսումնասիրելով դեկտեմբերի 21-23-ին վերսկսված ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի սղագրությունը, ինչպես նաև

---

[1] *Տես՝ Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 155:*

[2] *Տես՝ «Արցախ»,17.06.1993:*

մասնակի պահպանված տեսաձայնագրությունը* պարզ է դառնում, որ ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող քաղաքական գործիչների և ԼՂՀ ՊԲ հրամանատարության՝ մասնավորապես ՊԲ հրամանատար Ս. Բաբայանի կողմից ճնշումներ են գործադրվել ԼՂՀ ԳԽ որոշ պատգամավորների վրա: ԳԽ նախագահությունը մեղադրվեց անգործության մեջ: Հնչեցին կտրական հայտարարություններ ԼՂՀ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու, իսկ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանին նախագահ չընտրելու դեպքում 10 օրվա ընթացքում ԳԽ-ն ընդհանրապես ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու անհրաժեշտության մասին, ընդ որում՝ կառավարման պետական համակարգում ռազմական հեղաշրջում կատարելու անթաքույց սպառնալիքով:

1994թ. դեկտեմբերի 21-ին ԳԽ-ի նիստում որոշում կայացվեց ԼՂՀ-ում հիմնել նախագահական կառավարման ինստիտուտ, ընդունվեց «ԼՂՀ Նախագահի մասին» օրենքը, ըստ որի՝ հանրապետության նախագահը պիտի ընտրվեր 5 տարի ժամկետով՝ ուղղակի փակ գաղտնի ընտրությամբ: Սակայն, հաշվի առնելով ռազմական դրության պահանջները, ԳԽ-ն որոշեց ԼՂՀ առաջին նախագահին ընտրել երկու տարի անցումային ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի մասին» օրենքը, համաձայն որի՝ Գերագույն խորհուրդը նախատեսվում էր վերանվանել ԼՂՀ Խորհրդարան: Ապա հաջորդեց «ԼՂՀ կառավարության մասին» օրենքի ընդունումը: Այնուհետև Խորհրդարանն անցավ օրակարգի հաջորդ հարցին՝ ԼՂՀ նախագահի ընտրություններին: Առաջադրվեցին 2 թեկնածու՝ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ԼՂՀ ԳԽ պատգամավոր Մուրադ Պետրոսյանը, ով, սակայն, ինքնաբացարկ հայտարարեց՝ հանելով իր թեկնածությունը: «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռ. Քոչարյանը

Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը, այնուհետև, շարունակելով նիստը, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքը:

---

* *Թեմայի ուսումնասիրության ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ, ցավոք, ԱՀ պետական և ԱԺ ընթացիկ արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրություններից բացակայում են մի շարք ռազմական և քաղաքական գործիչների աղմկահարույց ելույթներ, ինչպես նաև պետական շինարարությանը վերաբերող որոշ կարևոր արխիվային նյութեր: Ուստի առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել անձնական արխիվներ:*

ԼՂՀ նախագահի 1994թ. դեկտեմբերի 27-ի հրամանագրով ԼՂՀ վարչապետ նշանակվեց Լեոնարդ Պետրոսյանը, իսկ հունվարի 10-ին հաստատվեցին ԼՂՀ կառավարության նոր կազմը և կառուցվածքը: Մեկ այլ հրամանագրով ձևավորվեց կառավարության նախագահությունը:

Երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու նպատակով 1995թ. փետրվարի 7-ին ստեղծվեց ԼՂՀ նախագահին կից Անվտանգության խորհուրդ: Նրա կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ նախագահը, ԼՂՀ ԳԽ նախագահը, ԼՂՀ վարչապետը, ԼՂՀ պաշտպանության նախարարը, ԼՂՀ արտաքին գործերի նախարարը, ԼՂՀ ներքին գործերի նախարարը և ազգային անվտանգության պետական վարչության պետը[1]:

Անվտանգության խորհրդի քարտուղարի պարտականությունները դրվեցին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արարատ Դանիելյանի վրա:

Այսպիսով, պաշտոնական Երևանի միջամտության արդյունքում ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին հարկադրական փոփոխություններ, որոնց հետևանքով երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի: Ստեղծված արտառոց իրավիճակում, երբ մթնոլորտում երևակվում էր քաղաքացիական պատերազմի հավանականության ուրվականը, ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղացին օրենսդիր մարմնի դրսևորած ողջամիտ շրջահայացությունն ու քաղաքական կամքը, պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու ժողովրդի ապագայի հանդեպ:

Որպես հիշատակված քաղաքական և պետաշինարարական գործընթացների շարունակություն՝ 1995թ. փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ն ընդունեց Խորհրդարանի ժողովրդական պատգամավորների վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու մասին որոշում[2]: Հանրապետության տարածքում կազմավորվեց 33 ընտրատարածք՝ նախկին 81-ի փոխարեն. համապատասխան փոփոխության ենթարկվեց նաև պատգամավորական տեղերի քանակը:

1995թ. ապրիլի 30-ին անցկացվեցին Խորհրդարանի վաղաժամկետ ընտրություններ, որոնք կազմակերպվեցին մեծամասնական ընտրակարգով[3]: Ընտրությունները տեղի ունեցան 33 ընտրատարածքից 31-ում, իսկ 2-ում՝

---

[1] Տես՝ ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. փետրվարի 7-ի հրամանագիր՝ N УП-22:

[2] Տես՝ ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանին 1995թ. փետրվարի 14-ի նիստի սղագրություն:

*[3] Տես՝ **Օհանջանյան Մ.,** Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփ., 1998, էջ16 :*

պատգամավորության մեկական թեկնածուների ինքնաբացարկի պատճառով չկայացան: ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 1995թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ՝ գրանցվեց 23 պատգամավոր: 1995թ. հունիսի 30-ին 5 ընտրատարածքում կայացան նոր ընտրություններ:

ԼՂՀ Խորհրդարանի արտահերթ ընտրությունների ընթացքին հետևեցին միջազգային անկախ դիտորդներ, մասնավորապես՝ Գերմանիայի Բունդեստանգի, ՌԴ Պետական դումայի, Մոսկվայում գործող Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի, Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ[1]:

ԼՂՀ Խորհրդարանն ունեցավ հետևյալ մարմինները՝ Խորհրդարանի նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար, 6 մշտական հանձնաժողով: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված էր 5 պատգամավոր:

ԼՂՀ Խորհրդարանի 1995թ. հունիսի 23-ի առաջին նիստում Խորհրդարանի նախագահ ընտրվեց պատգամավոր Կարեն Բաբուրյանը, նախագահի տեղակալ՝ Լավրենտ Գաբրիելյանը, քարտուղար՝ Էմմա Գաբրիելյանը[2]:

Միաժամանակ փաստենք, որ նոր Խորհրդարանում քաղաքական ուժերի բացակայության պայմաններում, վերջինս այդպես էլ չկարողացավ կատարել իր պատմական առաքելությունը:

Որպես վերը շարադրվածի հետևանք՝ ժողովրդավարական հիմունքներով ստեղծված պետությունը աստիճանաբար վերածվեց բռնատիրականի, որտեղ անձի իշխանությունը գերակայեց օրենքի իշխանությանը:

Նյութը ներկայացվել է 23.03.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

[1] *Տես՝ ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընթացիկ արխիվ:*
[2] *Տես՝ http://www.nankr.am/hy/32*

ՀՏԴ 336.714

Տնտեսագիտություն

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱրՊՀ, ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.
E-mail: aleksanyanarevik16@asu.am

Վարդուհի ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՇՏՀ, ինժեներական էկոնոմիկայի և կառավարման ամբիոնի ավագ դասախոս
E-mail: gvarduhi1986@mail.ru

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱԳՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հիփոթեքը քաղաքացիական իրավունքի հնագույն ինստիտուտներից է, որը, վերափոխվելով և կատարելագործվելով պատմական զարգացման երկարատև ժամանակահատվածում, ներկայումս հասել է իր զարգացման գագաթնակետին՝ լինելով գրավի ապահովման ամենաապահով ձևերից մեկը: Այն ծագել է Հին Հունաստանում, այնուհետև տարածվել Հռոմեական կայսրությունում. հռոմեական իրավունքի վրա հիմնված և ունեցվածքով գրավադրված վարկերը հետագայում տարածվեցին նաև եվրոպական երկրներում, որտեղ ընդունվել էին մինչև օրս գործող հիփոթեքային վարկավորման մի շարք կանոններ և ստանդարտներ: Որպես համակարգ, հիփոթեքային վարկավորումը սկսել է ձևավորվել միջնադարի ավարտին՝ առաջին հիփոթեքային հաստատությունների ստեղծման զուգահեռ: Հիփոթեքային հաստատությունների օրինական գործունեության իրականացման համար մի

շարք եվրոպական երկրներ ընդունեցին համապատասխան ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր: Բնակարանային երկարաժամկետ հիփոթեքային վարկավորումը առանցքային տեղ ունի բնակարանային ֆինանսավորման ընդհանուր համակարգում, հանգեցնում է ֆինանսական համակարգի, բնակարանաշինության, հետևաբար նաև՝ ընդհանուր տնտեսության զարգացմանը: Հոդվածում ներկայացված են հիփոթեքի ծագման և զարգացման պատմությունը, հռոմեական քաղաքացիական իրավունքի հիմունքներում զետեղված գրավի տեսակները, հիփոթեքային վարկավորման հարաբերությունների առաջին պետական կարգավորումները եվրոպական և մյուս երկրներում, ինչպես նաև տրված են հիփոթեքային վարկավորման օտարերկրյա և հայրենական հեղինակների մի շարք սահմանումներ: Հոդվածում ներկայացված են նաև հիփոթեքային վարկավորման համակարգի պետական կարգավորման ընդհանուր և հատուկ մեթոդները և հիմնավորված է պետական հաշվեկշռված քաղաքականության կարևորությունը այդ բնագավառում:

Բանալի բառեր՝ *Հռոմեական քաղաքացիական իրավունք, գրավ, հիփոթեք, ֆիդուցիա, պիգնուս, հիփոթեքային վարկավորում*

А.Алексанян, В. Хачатурян

ТЕОРЕТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ВОЗНИКНОВЕНИЯ, РАЗВИТИЯ И ГОСУДАРСТВЕННЫЕ МЕХАНИЗМЫ РЕГУЛИРОВАНИЯ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ

Ипотека - один из старейших институтов гражданского права, который за длительный период исторического развития трансформировался и совершенствовался, в настоящее время достиг пика своего развития, являясь одной из наиболее надежных форм залогового обеспечения. Он возник в Древней Греции, а затем распространился на Римскую империю. Ссуды, основанные на римском праве и обеспеченные имуществом, позже распространились на европейские страны, где был принят ряд правил и стандартов ипотечного кредитования, которые действуют до сих пор. Как система ипотечное

кредитование начало формироваться в конце средневековья, параллельно с созданием первых ипотечных учреждений. Для осуществления правовой деятельности ипотечных учреждений в ряде европейских стран приняты нормативно-правовые акты, регламентирующие соответствующую сферу. Жилищное долгосрочное ипотечное кредитование занимает ключевое место в общей системе финансирования жилищного строительства, ведет к развитию финансовой системы жилищного строительства, а значит, и экономики в целом. В статье представлена история возникновения и развития ипотеки, виды залога, входившие в основы римского гражданского права, первые государственные регламенты ипотечных кредитных отношений в европейских и других странах, а также ряд определений ипотечного кредитования зарубежных и отечественных авторов. Также в статье представлены общие и специальные методы государственного регулирования системы ипотечного кредитования и обоснована важность взвешенной государственной политики в этой сфере.

***Ключевые слова:**. римское гражданское право, залог, ипотека, фидуция, пигнус, ипотека*

A.Aleksanyan, V.Khachaturyan

THEORETICAL ASPECTS OF THE ORIGIN, DEVELOPMENT AND STATE REGULATORY MECHANISMS OF MORTGAGE LENDING

A mortgage is one of the oldest institutions of civil law, which has transformed and improved over a long period of historical development, and has now reached the peak of its development, being one of the most reliable forms of collateral security. It originated in Ancient Greece and then spread to the Roman Empire. Loans based on Roman law and secured by property later spread to European countries, where a number of mortgage lending rules and standards were adopted that are still in effect. How the system of mortgage lending began to form at the end of the Middle Ages, parallel to the creation of the first mortgage institutions. For the implementation of the legal activity of mortgage institutions in a number of European countries, normative and legal acts regulating the relevant sphere have been adopted. Housing long-term mortgage lending occupies a key place in the general system of financing housing construction, leads to the development of the financial system of housing

construction, and therefore the economy as a whole. The article presents the history of the origin and development of mortgages, the types of pledges that were included in the foundations of Roman civil law, the first state regulations of mortgage credit relations in European and other countries, as well as a number of definitions of mortgage lending by foreign and domestic authors. General and special methods of state regulation of the mortgage credit system are also presented in the article and the importance of balanced state policy in this sphere is justified.

Key words: *roman civil law, pledge, mortgage, fiducia, pygnus, mortgage*

Սատանան գիտի՝ ինչ էր կատարվում մեր տանը,
խոսում էին միայն պարտքերի և հիփոթեքի մասին:
Դու չգիտես՝ ի՞նչ է հիփոթեքը:
Երևի սարսափելի մի բան, քանի որ պառավս
ամեն անգամ պոկում էր իր մազերը,
երբ ծերուկս խոսում էր հիփոթեքի մասին,
և բանը միշտ ավարտվում էր ծեծկռտուքով:
Հուլիո Կորտասար, արգենտինացի գրող, հրապարակախոս

Հիփոթեք բառն առաջացել է հունարեն ***«hypoteca»*** բառից, որը թարգմանաբար նշանակում է **հենապյուն**: Այն առաջին անգամ կիրառվել է մ.թ.ա. 6-րդ դարում, Աթենքի արքոնտ[1] Սոլոնի օրենքներում[2]: Հիփոթեքը քաղաքացիական իրավունքի հնագույն ինստիտուտներից է, որը վերափոխվել և կատարելագործվել է պատմական զարգացման երկարատև ժամանակահատվածում: Այն կապված էր վարկատուի առջև պարտատուի պատասխանատվության ապահովմամբ՝ որոշակի հողային ունեցվածքով (սկզբնական շրջանում Աթենքում որպես գրավային երաշխիք հանդես էր գալիս հենց ինքը՝ պարտատուն, որին պարտավորությունը չտալու դեպքում ստրկություն էր սպառնում)[3] : Հիփոթեքի և հիփոթեքային իրավունքի ոլորտում առանցքային մշակումների հիմնադիրներ էին Աթենքի հայտնի քաղաքական գործիչներ և իրավագետներ Սոլոնը և Դրակոնը, իսկ հիփոթեքի ինստիտուտի իրավական և տնտեսական հիմքերը ձևակերպված

---

[1] *Հին Հունաստանի Աթենք քաղաքի պետական գործիչ, մի շարք օրենքների հեղինակ, բանաստեղծ, յոթ իմաստուններից մեկը:*

[2] ***Симакова Е.***, *Ипотечное кредитование: история развития в России и за рубежом, Вестник Государственного и муниципального управления, № 3 (22) 2016 г, с.139-143.*

[3] ***Стратийчук В.***, *Возникновение и развитие ипотеки, Научный вестник Омской академии МВД России № 1(56), 2015, стр 51-55.*

են հռոմեական իրավունքի դասական ներկայացման մեջ՝ իրավագետ Գայի կողմից մ.թ. 2-րդ դարում:

Հին Հունաստանում **հիփոթեք** էր կոչվում հողամասի վրա ամրացված այն սյունը, որով նշվում էր պարտատուի հողամասի սահմանները: Այդ սյան վրա նշվում էին վարկառուի և վարկատուի անունները, պարտքի չափը և վերադարձման ժամկետը, ինչպես նաև արգելվում էր սյունապատված տարածքից որևէ իրի դուրս հանումը[1]:

Հիփոթեքը որպես ինստիտուտ նոր զարգացում է ստացել հռոմեական կայսրության տարիներին: Այդ ժամանակ առկա էր գրավի երեք տեսակ՝ fiducia, pignus և hypotheca[2]: Առաջին դեպքում գրավի առարկան անցնում էր վարկատուի սեփականության տակ, որը իրավունք ուներ վարկի պայմանագրի ավարտին վերադարձնել վարկառուին անշարժ գույքը կամ վաճառել այն՝ հրաժարվելով դրամական միջոցների պահանջից: Երկրորդ դեպքում վարկատուին էր անցնում ոչ թե անշարժ գույքի սեփականության, այլ ժամանակավոր օգտագործման իրավունքը, ընդ որում վարկառուն՝ վարկատուի համաձայնությամբ, ևս կարող էր օգտվել իր անշարժ գույքից կամ վարձակալել: Անշարժ գույքի գրավի վերոնշյալ երկու տեսակները խոչընդոտում էին վարկառուի պարտականությունների կատարմանը, քանի որ վերջինս չէր կարողանում ապահովել եկամտի համապատասխան մակարդակ: Առևտրի հետագա զարգացումները ցույց տվեցին, որ վարկատուների համար նախընտրելի է թողնել գրավադրված անշարժ գույքը վարկառուի տնօրինության տակ՝ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման համար պայմաններ ստեղծելու նպատակով. այդ հանգամանքը մեծ խթան հանդիսացավ հիփոթեքի հետագա զարգացման համար[3]:

Հռոմեական իրավունքի վրա հիմնված և ունեցվածքով գրավադրված վարկերը հետագայում տարածվեցին նաև եվրոպական երկրներում. հիփոթեքը առավել բարձր զարգացվածության մակարդակի էր հասել Գերմանիայում, որտեղ ընդունվել էին մինչև օրս գործող հիփոթեքային վարկավորման մի շարք կանոններ և ստանդարտներ: 13-րդ դարում գերմանական խոշոր քաղաքներում ձևավորվեց հիփոթեքային վարկավորման այն ստանդարտը, համաձայն որի գրավադրված անշարժ

---

[1] *Арт Я., Ипотека. Руководство к действию: АСТ; М.; 2013, с тр .11 http://www.litres.ru/pages/biblio_book/?art=5814798.*

[2] ***Подопригора А.**, Основы римского гражданского права: Учеб. пособие для студентов юрид. вузов и факультетов, — 2-е изд., перераб. — К.: Вентури, 1995. 166, -электронный ресурс, https://www.studmed.ru/podoprigora-aa-osnovy-rimskogo-grazhdanskogo-prava_e19ca31e842.html*

[3] *Пучковская И. И., Ипотека: залог недвижимости. —Харьков: «КОНСУМ». 1998 - 220 с. 6, http://www.lib.ua-ru.net/content/53 с 2.html*

գույքը շարունակում էր մնալ վարկառուի տնօրինության տակ, սակայն վերջինս զրկվում էր սեփականության օտարման և երկրորդական գրավի իրավունքներից:

Հիփոթեքային վարկավորումը՝ որպես համակարգ, սկսել է ձևավորվել 17-րդ դարի վերջից՝ առաջին հիփոթեքային հաստատությունների ստեղծման զուգահեռ: Այդ ժամանակ յուրաքանչյուր անշարժ գույքի համար վարվում էր հատուկ գիրք, որտեղ գրանցվում էր ամեն ինչ՝ սեփականատիրոջ անունը, սեփականության իրավունքի փոխանցումը, ինչպես նաև տվյալ գույքի գրավով պարտավորությունների գումարը: Այդ գրքերում ներկայացված տվյալներն ունեին իրավաբանական ուժ[1]:

Հիփոթեքային հաստատությունների օրինական գործունեության իրականացման համար 18-19-րդ դարերում մի շարք եվրոպական երկրներ ընդունեցին համապատասխան ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր: Դրանց թվին կարելի է դասել 1783 թ. Պրուսիայում ընդունված հիփոթեքի մասին օրենքը, 1811 թ.՝ Ավստրիական կայսրության քաղաքացիական օրենսգիրքը, 1822 թ.՝ Բավարիայի հիփոթեքի մասին օրենքը, 1843 թ.՝ Սաքսոնիայի կանոնադրությունը:

Եվրոպայի առաջին հիփոթեքային հաստատությունը պետական էր, որը ստեղծվել է Սիլեզիայում, 1770 թ. (տարբեր ժամանակաշրջաններում եղել է Ավստրիայի, Պրուսիայի, Լեհաստանի տիրապետության տակ):

Առաջին բաժնետիրական հիփոթեքային բանկը ստեղծվել է Ֆրանսիայում, 1852 թ., որն ուներ «Crédit Foncier de France» անվանումը, որը հետագայում թողարկեց առաջին հիփոթեքային պարտատոմսերը՝ «obligations foncières»[2] :

Ռուսական կայսրությունում հիփոթեքի ձևավորման հիմք էր հանդիսացել 1754թ. Պետական բանկի ստեղծումը, որը ազնվականներին վարկ էր տրամադրում անշարժ կամ շարժական գույքի գրավադրմամբ: Բանկի կանոնադրությունում առկա էին պարտադիր կետեր, համաձայն որոնց վերջինս իրավունք էր ստանում գրավադրված գույքը վաճառել վարկառուի անվճարունակության դեպքում. բացի այդ նախատեսված էր երաշխավորի առկայություն:

Ներկայումս հիփոթեքը հասել է զարգացվածության առավել բարձր աստիճանի՝ պահպանելով իր սկզբնական կոչումը, այսինքն՝ լինելով վարկի երաշխավորման ամենաապահով ձևերից մեկը:

---

[1]***Новакова С.Ю***. *Краткая история развития ипотеки: зарубежный опыт // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки. – 2009. – №1. с. 5–12.*

[2]***Симакова Е***., *указ.соч., № 3 (22) 2016 г, с.139-143*.

Հիփոթեքային վարկավորումը մի շարք երկրներում համարվում է բնակչության բնակարանային պայմանների ապահովման հիմնական գործիքը: Բնակարանային երկարաժամկետ հիփոթեքային վարկավորումը առանցքային տեղ ունի բնակարանային ֆինանսավորման ընդհանուր համակարգում, հանգեցնում է ֆինանսական համակարգի, բնակարանաշինության, հետևաբար նաև՝ ընդհանուր տնտեսության զարգացմանը: Այդ գործիքը կապող օղակ է բանկային համակարգի և տնտեսության իրական հատվածի, ֆինանսական և անշարժ գույքի շուկաների, ներդրողների և վարկառուների միջև: Նշենք նաև, որ հենց հիփոթեքային վարկավորման համակարգի զարգացումն է հանդիսացել մի շարք երկրների տնտեսական զարգացման հիմնական խթանը, մասնավորապես՝ ԱՄՆ-ում Ռուզվելտի Նոր կուրսը, Գերմանիայում՝ Էրխարդի հետպատերազմյան բարեփոխումները, Արգենտինայում՝ Կովալյոյի պլանը, Չիլիում՝ Պինոչետի բարեփոխումները:

Բնակարանային հիփոթեքային վարկավորումը եղել և շարունակում է մնալ հայ և արտասահմանյան մասնագետների, վերլուծաբանների և գիտական աշխարհի ուշադրության կենտրոնում:

Ըստ Ի. Ռազումովայի՝ հիփոթեքը պարտապանի անշարժ գույքի գրավադրման տեսակ է, որի դեպքում գրավադրվող գույքը մնում է վարկառուի մոտ, իսկ վերջինիս կողմից պարտավորությունների չկատարման դեպքում վարկատու կազմակերպությունը իրավունք է ստանում իրացնել այն[1]:

Ըստ Ն. Կոսարյովայի՝ հիփոթեքը վարկատուի նկատմամբ վարկառուի՝ անշարժ գույքի գրավի տեսքով պարտավորությունների ապահովման միջոց է, երբ վարկատուն գրավադրված անշարժ գույքի գրավից ստանում է իր դրամական պահանջների ապահովումը[2]:

Ըստ Յա. Ա. Արտի՝ հիփոթեքը անշարժ գույքի գրավադրմամբ տրվող փոխատվություն է, եղանակ, որի շնորհիվ կարելի է լուծել «տխրահռչակ բնակարանային հիմնահարցը»[3]:

Ըստ Միգազգային ֆինանսական կորպորացիայի (IFC-International Finance Corporation) մասնագետների կողմից հրապարակված զեկույցի՝ հիփոթեքային վարկը անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, վերակառուցման կամ կառուցման նպատակով տրամադրվող վարկն է, որը տրամադրվել է հետևյալ պայմաններով.

---

[1] ***Разумова И.А.,*** *Ипотечное кредитование:Учебное пособие, СПб.: Питер. 2005 г.,стр. 9.*

[2] ***Косарева Н.Б.****, Основы ипотечного кредитования, Фонд «Институт экономики города», М., 2006 г.,стр.5.*

[3]***Арт Я.****, Ипотека. Руководство к действию: АСТ; М.; 2013, стр.11 http://www.litres.ru/pages/biblio_book/?art=5814798.*

Ü վարկի նպատակն է անշարժ գույքի ձեռքբերումը, վերանորոգումը, վերակառուցումը կամ կառուցումը,

Ü վարկը ապահովված է անշարժ գույքի գրավով,

Ü վարկը տրամադրվել է որոշակի տոկոսադրույքով,

Ü հիփոթեքի առարկա է հանդիսանում բնակարանը, սեփական տունը, հողամասը, առևտրային տարածքը և անշարժ գույքի այլ տեսակներ[1]:

Ըստ Բ. Ասատրյանի և ուրիշների՝ հիփոթեքային վարկերը երկարաժամկետ փոխատվություններ են, որոնք սովորաբար տրամադրվում են անշարժ գույքի՝ հողի և արտադրական ու բնակարանային նշանակության կառույցների գրավադրման դիմաց[2]:

ՀՀ օրենսդրության մեջ ևս տրված են *հիփոթեքային* վարկի որոշ սահմանումներ: Այսպես, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ հիփոթեք է համարվում անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի գրավը[3]:

Համաձայն Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին ՀՀ օրենքի՝ հիփոթեքային վարկը հիփոթեքով ապահովված վարկն է[4]:

Ժամանակակից գիտության շրջանակներում ընդունված է համարել, որ զարգացած հիփոթեքային վարկավորման շուկայի առկայությունը դրական ազդեցություն է ունենում տնտեսության իրական հատվածի վրա, քանի որ այն խթանում է անշարժ գույքի շուկայի զարգացմանը, ինչը հանգեցնում է շինարարության ոլորտի զարգացմանը: Իսկ հիփոթեքային վարկերով ապահովված արժեթղթերը իրենցից ներկայացնում են ֆինանսական միջոցների ներգրավման ժամանակակից գործիքներ և թույլ են տալիս ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ վարկերի ֆինանսավորման նպատակով:[5]

Զարգացած հիփոթեքային վարկավորման համակարգ ունենալու համար անհրաժեշտ է, որ պետությունը իրականացնի հաշվեկշռված և հետևողական քաղաքականություն այս ոլորտում: Պետք է սահմանափակ միջամտության միջոցով, համապատասխան նորմատիվ-իրավական ակտեր ընդունելով, ապահովվի առողջ մրցակցային պայմաններ

---

[1] *International Finance Corporation-ի զեկույց, էլեկտրոնային ռեսուրս, «Հիփոթեքային վարկեր, 20 հարց և պատասխան», էջ 3.*

[2] ***Ասատրյան Բ.*** *և ուրիշներ, Բանկային գործ, երկրորդ հատոր, Եր., 2013 թ., էջ 301:*

[3] *ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998 թ., ՀՍՍՀԳՍ 1964/17, հոդված 260:*

[4] *Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին ՀՀ օրենք, ՀՕ-97-Ն, ՀՀՊՏ 2008.07.02/41 26.05.2008թ., հոդված 3:*

[5] ***Тепман Л.Н., Доронин Г.В.****, Ипотечный кредит: Функции, использование в качестве инструмента преодоления кризисных ситуаций в экономике, Вестник Московского университета МВД России, М. N 11/2015, стр 243*

հիփոթեքային վարկի շուկայի զարգացման համար: Հիփոթեքային շուկայի բոլոր մասնակիցների գործունեությունը պետք է իրականացվեն միասնական սկզբունքերով և հիմնվեն առևտրային նպատակներին և պահպանեն բիզնեսի իրականացման հիմնական օրենքները: Պետությունը ամբողջ ֆինանսական համակարգի, այդ թվում հիփոթեքային վարկավորման համակարգի կարգավորումը պետք է իրականացնի առավելապես անուղղակի մեթոդների կիրառմամբ հետևյալ սկզբունքներով.[1]

1. չմիջամտել վարկավորող կազմակերպությունների ընթացիկ գործառնական գործունեությանը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
2. նախապատվություն չտալ որևէ վարկավորող կազմակերպության կամ նրանց հաճախորդներին,
3. հակամենաշնորհային օրենսդրության շնորհիվ ապահովել առողջ մրցակցային պայմաններ հիփոթեքային վարկավորման համակարգի բոլոր մասնակիցների նկատմամբ,
4. ապահովել վարկավորող կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության և կարգավորման համապատասխան օրենսդրական հիմքեր:

Տարբերում են երկու հիմնական մեթոդներ՝ պետության կողմից հիփոթեքային վարկավորման շուկայի կարգավորման և օժանդակության ոլորտում: Դրանք ներկայացված են գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Հիփոթեքային վարկավորման պետական աջակցության մեթոդները[2]

---

[1] ***Разумова И.А.,*** *"Ипотечное кредитование:Учебное пособие", СПб.: Питер. 2005 г., стр 63.*

[2] ***Алексанян А.А.****, Роль государства в развитии системы ипотечного кредитования, Переясляв-Хмельницкий, //Сборник научных трудов,Выпуск 10(18), 2016, стр.32*

Ընդհանուր մեթոդները երկուսն են՝ դրամավարկային և հարկաբյուջետային: Դրամավարկային քաղաքականության մեթոդները նպատակաուղղված են փողի առաջարկի փոփոխության միջոցով կարգավորելու արտադրության ընդհանուր ծավալները, զբաղվածության և գնաճի մակարդակները: Օրինակ, վերաֆինանսավորման, լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքների փոփոխության միջոցով կենտրոնական բանկերը կարողանում են ազդել ընդհանուր վարկավորման, հետևաբար նաև՝ հիփոթեքային վարկավորման առաջարկի վրա, բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխության միջոցով՝ վարկերի տոկոսադրույքի վրա, և այլն:

Հարկաբյուջետային քաղաքականության մեթոդները ուղղված են շահադրդելու վարկառուներին, վարկատուներին և ներդրողներին՝ իրականացնելու գործարքներ հիփոթեքային պարտատոմսերով՝ հարկերից որոշակի չափով ազատվելու պայմանով: Հատուկ մեթոդների շարքին են դասվում՝[1]

- մասնագիտացված կազմակերպությունների ստեղծման նախաձեռնում. դրանք երկրորդային շուկայի օպերատորներ են, որոնց հիմնական ակտիվները այն բանկերի արժեթղթերն են, որոնք տրամադրում են հիփոթեքային վարկեր (ԱՄՆ, Կանադա). նման կազմակերպությունների ձևավորման որոշակի մակարդակը լրիվությամբ արդարացված է, քանի որ այդ կազմակերպությունները օգտագործում են ավելի էժան ֆինանսական ռեսուրսներ հիփոթեքային վարկերի ֆինանսավորման համար, որոշ դեպքերում օգտագործելով նաև բյուջետային միջոցներ՝ գանձապետարանի վարկային գծի տեսքով,
- հիփոթեքային բանկերի ստեղծման խթանում. օրենքների մշակում և ընդունում, որոնք կարգավորում են հիփոթեքային բանկերի գործունեությունը (Գերմանիա, Դանիա, Ֆրանսիա և այլն),
- հիփոթեքային վարկերի պետական ստանդարտացում, որը նպատակաուղղված է հիփոթեքային պարտատոմսերի նկատմամբ վստահության բարձրացմանը,
- հիփոթեքային վարկավորման համակարգի գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում, այսինքն՝ հիփոթեքային վարկավորման շուկայի ենթակառուցվածքի ստեղծում,
- հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների ուղղակի կարգավորում. Մեծ Բրիտանիայում հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքի

[1] ***Поляковский Г.***, *"Жилищная экономика",английский перевод, //Академия народного хозяйства при Правительстве РФ. Москва, Дело 1996, , стр 154.*

սահմանումը պետական քաղաքականության հիմնական կետերից մեկն է,

- վարկառուների շահագրգռվածության բարձրացման համար միջոցառումների իրականացում՝ տոկոսադրույքների սուբսիդավորում, կանխավճարի մուծման համար սուբսիդիաների տրամադրում, կուտակային միջոցների դիմաց պարգևավճարների տրամադրում (Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա և այլն),
- պարտատոմսերի թողարկում, որոնք ապահովված են անշարժ գույքի արժեթղթերով՝ բնակարանաշինության սուբսիդավորման նպատակով:

Բնակչության բնակարանային հիփոթեքային վարկավորման պետական կարգավորման մեխանիզմը ներկայացված է գծապատկեր 2-ի տեսքով:



Գծապատկեր 2 Բնակչության բնակարանային հիփոթեքային վարկավորման պետական կարգավորման մեխանիզմը[1]

Ինչպես ցույց է տալիս 2-րդ գծապատկերը, պետությունը հիփոթեքային վարկի շուկայի գործունեության կարգավորման, հիփոթեքային վարկի շուկայի բոլոր մասնակիցների համար ապահովում է նորմատիվ-իրավական, տեղեկատվական և ինստիտուցիոնալ համակարգ և սահմանում վարկավորման միասնական սկզբունքներ:

[1] ***Артемкина Е.В.***, *Государственная поддержка ипотечного жилищного кредитования в контексте решения социально-экономических проблем российского общества,Мир науки,культуры,образования, Горно-Алтайск № 4 (35) 2012,стр 331.*

Այսպիսով, հիփոթեքը հռոմեական քաղաքացիական իրավունքի գրավի տեսակներից է, որը հետագայում տարածվել և իր զարգացվածության գագաթնակետին է հասել եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում, որտեղ ընդունվել են մինչև օրս գործող հիփոթեքային վարկավորման ստանդարտներ: Հիփոթեքային վարկավորումը բնակչության բնակարանային պայմանների ապահովման և բարելավման ամենից կատարելագործված և ապահով տեսակներից մեկն է, որի դեպքում գրավադրվող անշարժ գույքը մնում է վարկառուի տրամադրության տակ, որի արդյունավետ կառավարումը նպաստում է բոլոր մասնակիցների բարեկեցության աճին:

Գրականություն

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998 թ., ՀՍՍՀԳՍՏ 1964/17,
2. Ասատրյան Բ. և ուրիշներ, Բանկային գործ, Երկրորդ հատոր, Երևան 2013 թ.,
3. Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին ՀՀ օրենք, ՀՕ-97-Ն, ՀՀՊՏ 2008.07.02/41 26.05.2008թ.,
4. Пучковская И. И. Ипотека: залог недвижимости. — Харьков: «КОНСУМ». 1998
5. Артемкина Е.В., Государственная поддержка ипотечного жилищного кредитования в контексте решения социально-экономических проблем российского общества,Мир науки,культуры,образования, Горно-Алтайск № 4 (35) 2012,
6. Алексанян А.А., Роль государства в развитии системы ипотечного кредитования, Переясляв-Хмельницкий, //Сборник научных трудов,Выпуск 10(18), 2016,
7. Арт, Я. Ипотека. Руководство к действию: АСТ; Москва; 2013,
8. Разумова И.А., "Ипотечное кредитование:Учебное пособие", СПб.: Питер. 2005 г.,
9. Косарева Н.Б. "Основы ипотечного кредитования", Фонд «Институт экономики города», Москва 2006 г.,
10. Симакова Е., Ипотечное кредитование: история развития в России и за рубежом, Вестник Государственного и муниципального управления, № 3 (22) 2016 г,

11. Стратийчук В., Возникновение и развитие ипотеки, Научный вестник Омской академии МВД России № 1(56), 2015,
12. Подопригора А., Основы римского гражданского права: Учеб. пособие для студентов юрид. вузов и факультетов, — 2-е изд., перераб. — К.: Вентури, 1995.
13. Поляковский Г., "Жилищная экономика",английский перевод, //Академия народного хозяйства при Правительстве РФ. Москва, Дело 1996
14. Новакова С.Ю. Краткая история развития ипотеки: зарубежный опыт // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки. – 2009. – №1.
15. Тепман Л.Н., Доронин Г.В., Ипотечный кредит: Функции, использование в качестве инструмента преодоления кризисных ситуаций в экономике, Вестник Московского университета МВД России, М. N 11/2015
16. International Finance Corporation-ի զեկույց, էլեկտրոնային ռեսուրս, «Հիփոթեքային վարկեր, 20 հարց և պատասխան»:

Նյութը ներկայացվել է 19.05. 2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 336.77 (479.243)

Տնտեսագիտություն

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱրՊՀ, Ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ
E-mail: aleksanyanarevik16@asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ֆինանսները յուրաքանչյուր երկրի ֆինանսական համակարգի կարևոր հատվածներից է, որի արդյունավետ կառավարումը հանգեցնում է երկրի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացմանը: Հանրային ֆինանսները այնպիսի տնտեսական հարաբերություններ են, որոնք ծագում են պետության և կորպորատիվ հատվածի, այդ թվում տնային տնտեսությունների միջև ՀՆԱ-ի և ազգային եկամտի ձևավորման, բաշխման, վերաբաշխման, ինչպես նաև վերահսկողության ողջ գործընթացում: Դրանք ներառում են պետական և տեղական ֆինանսները, որոնք իրենց հերթին բաղկացած են առանձին տարրերից՝ պետական և համայնքների բյուջեներ, արտաբյուջետային հիմնադրամներ, պետական և մունիցիպալ վարկ: Հոդվածում ներկայացված են հանրային ֆինանսների վերաբերյալ տարբեր հեղինակների սահմանումները, աշխարհի տարբեր երկրներում ***պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ*** *հարաբերակցության արժեքները, ԱՀ հանրային ֆինանսական համակարգի կառուցվածքը, վերջինիս կազմի մեջ մտնող առանձին բաղադրիչների վերլուծությունը: Հոդվածում մանրամասն վերլուծվել են ԱՀ համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները, համախմբված բյուջեի և ՀՆԱ-ի հարաբերությունը, պետական բյուջեի եկամտային և ծախսային բաժինների կառուցվածքը, ՀՀ-ից ստացված բյուջետային վարկի դինամիկան: Հոդվածում տրվել են նաև ԱՀ-ում հանրային*

ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման որոշ ուղիներ, մասնավորապես՝ բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորում պետական գանձապետական պարտատոմսերի միջոցով, ինչպես նաև ավանդական բյուջետավորումից ամբողջական անցում ծրագրային բյուջետավորման:

Բանալի բառեր՝ Հանրային ֆինանսներ, համախմբված բյուջե, պետական բյուջե, համայնքների բյուջեներ, բյուջետային վարկ, ծրագրային բյուջետավորում:

А.Алексанян

СТРУКТУРНЫЙ АНАЛИЗ ГОСУДАРСТВЕННОЙ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Публичные финансы являются одной из важных частей финансовой системы каждой страны, эффективное управление которой ведет к развитию социально-экономической системы страны. Публичные финансы – это экономические отношения, возникающие между государством и корпоративным сектором, в том числе домашними хозяйствами, во всем процессе формирования, распределения, перераспределения и контроля над ВВП и национальным доходом. К ним относятся государственные и местные финансы, которые в свою очередь состоят из отдельных элементов: государственного и муниципального бюджетов, внебюджетных фондов, государственного и муниципального кредита. В статье представлены определения публичных финансов разными авторами, значения отношения расходов государственного бюджета к ВВП в разных странах мира, структура государственной финансовой системы Арцаха, анализ ее отдельных компонентов. Подробно проанализированы сводные показатели консолидированного бюджета Республики Арцах, взаимосвязь консолидированного бюджета и ВВП, структура доходной и расходной частей государственного бюджета, динамика бюджетного кредита, полученного от Республика Армения. Также приведены некоторые пути повышения эффективности управления государственными финансами в Арцахе, в частности, финансирование дефицита бюджета за счет государственных казначейских

облигаций, а также полный переход от традиционного бюджетирования к программному бюджетированию.

Ключевые слова:. *государственные финансы, консолидированный бюджет, государственный бюджет, бюджеты общин, бюджетный кредит, программное бюджетирование.*

A.Aleksanyan

STRUCTURAL ANALYSIS OF THE PUBLIC FINANCIAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARTSAKH

Public finances are one of the important parts of the financial system of each country, the effective management of which leads to the development of the country's social and economic system. Public finances are the economic relations that arise between the state and the corporate sector, including households, in the entire process of formation, distribution, redistribution and control over GDP and national income. These include state and local finances, which in turn consist of separate elements. state and municipal budgets, extrabudgetary funds, state and municipal credit. The article presents the definitions of public finances by different authors, the importance of the ratio of state budget expenditures to GDP in different countries of the world, the structure of the state financial system of Artsakh, the analysis of its individual components. Summary indicators of the consolidated budget of the Republic of Artsakh, the relationship between the consolidated budget and GDP, the structure of the revenue and expenditure parts of the state budget, the dynamics of the budget credit received from the Republic of Armenia are analyzed in detail in the article. The article also includes some ways to increase the efficiency of state finance management in Artsakh, in particular, financing the budget deficit through state treasury bonds, as well as a complete transition from traditional budgeting to program budgeting.

Key words: *public finances, consolidated budget, state budget, municipal budgets, budget credit, program budgeting.*

Հանրային ֆինանսները յուրաքանչյուր պետության ֆինանսական համակարգի առավել կարևոր տարրերից են, քանի որ հիմք են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ապահովման համար: Հանրային ֆինանսների առաջին ներկայացուցիչները

կամերալիսներն էին, որոնք համարվում էին մերկանտիլիստների ներկայացուցիչները Գերմանիայում և Շվեդիայում [1]:

Հանրային ֆինանսները կենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման, բաշխման և օգտագործման ընթացքում առաջացած ֆինանսական հարաբերությունների ամբողջությունն են[2]:

Մեկ այլ սահմանման համաձայն, հանրային ֆինանսները տնտեսական հարաբերություններ են, որոնք ծագում են պետության և կորպորատիվ հատվածի, այդ թվում՝ տնային տնտեսությունների միջև ՀՆԱ-ի և ազգային եկամտի ձևավորման, բաշխման, վերաբաշխման, ինչպես նաև վերահսկողության ընթացքում[3]:

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ ԱՀ հանրային ֆինանսական համակարգը ֆինանսական համակարգի կարևոր տարր է, որի կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1: ԱՀ հանրային ֆինանսական համակարգի կառուցվածքը[4]

---

[1] *Handbook of Public Finance, Editors JUrgen G., Backhaus and Richard E. Wagner, Print ©2004 Kluwer Academic Publishers, Boston, p. 8.*

[2] ***Глотова И.И., Томилина ЕЛ., Углицких О.Н., Клишина Ю.Е.**, Финансы, учебник, Ставрополь, АГРУС Ставропольского гос. аграрного ун-та, 2013, с. 184.*

[3] ***Ракитина И.С, Березина Н.Н.**, Государственные и муниципальные финансы, учебник и практикум для академического бакалавриата, М., "Юрайт", 2019, с. 12.*

[4] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից*

Հարկ է ընդգծել, որ հանրային ֆինանսական համակարգի տարր են հանդիսանում նաև արտաբյուջետային ֆոնդերը, որոնք ԱՀ-ում բացակայում են:

Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ԱՀ օրենքի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները կազմում են ԱՀ համախմբված բյուջեն[1]: Հայտնի է, որ հանրային ֆինանսների կարևորությունը պայմանավորված է ոչ միայն պետության դերի, այլ նաև տնտեսության կարգավորման մեջ վերջինիս ներգրավվածության աննախադեպ մեծացմամբ[2]: Դրա վերաբերյալ պատկերացում կազմելու համար հաշվարկվում է **պետական ծախսեր/ՀՆԱ** հարաբերակցությունը: ԱՀ-ում **համախմված բյուջեի ծախսեր/ՀՆԱ** հարաբերակցությունը 2010-2022թթ. ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2: ԱՀ համախմբված բյուջեի ծախսերի, ՀՆԱ-ի և վերջիններիս հարաբերության դինամիկան 2010-2022թթ.[3]

---

[1] *«Բյուջետային համակարգի մասին» ԱՀ օրենք, հոդված 4, 10.02.2004թ., http://arlexis.am/*

[2] ***Մչանյան Ա.Վ, Հովականյան Լ.Յու, Սուրյան Ն.Ռ**, Հանրային ֆինանսներ, ՀՊՏՀ, Եր., Տնտեսագետ, 2020թ., էջ 25:*

[3] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքերը՝ ԱՀ պետական բյուջեի մասին 2010-2022թթ. օրենքներ https://minfin-nkr.am/?section=resources/index&type=4&subtype=83, ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող ամփոփ ցուցանիշներ http://stat-nkr.am/hy/component/content/article/757-2017-10-24-08-37-23*

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 2-ը, ԱՀ-ում **համախմբված բյուջեի ծախսեր/ՀՆԱ** հարաբերությունը մինչև 2019թ. նվազման միտում է ունեցել, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցել է համախմբված բյուջեի ծախսերի աճի տեմպին: Այդ ցուցանիշը աճել է 2020թ-ից հետո, որը սակայն պայմանավորված է Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ՀՆԱ-ի աճի տեմպի նվազմամբ: Այս ցուցանիշի գնահատման համար ներկայացնենք նաև տարբեր **երկրների համախմբված բյուջեի ծախսեր/ՀՆԱ** հարաբերությունը գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3-ից հետևում է, որ ցուցանիշի առավելագույն արդյունքներն 2022թ-ին արձանագրվել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իսրայելում և Ֆրանսիայում, նվազագույնը՝ Իրանում և Ինդոնեզիայում, ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմել է 31,2 տոկոս, Ադրբեջանում՝ 40,36 տոկոս:



Գծապատկեր 3: Տարբեր երկրների համախմբված բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2021-2022թթ.[1]

[1] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ https://www.theglobaleconomy.com/rankings/government_size/*

ԱՀ համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները 2016-2022թթ. ներկայացված են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, **ԱՀ պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ** հարաբերակցությունը, ինչպես նաև **պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ** հարաբերակցությունը, դիտարկվող ժամանակահատվածում աճման դինամիկա է դրսևորել: Բացառություն է կազմել 2021թ., երբ պատերազմից հետո պետական բյուջեի եկամուտները, ինչպես նաև ՀՆԱ-ն նվազել են, ինչի արդյունքում այդ ցուցանիշների հարաբերակցությունը նվազել է:

Ցուցանիշները	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Պետական բյուջեի եկամուտներ	85,2	88,7	96,4	112,5	120,9	84,2	184,3
Համայնքների բյուջեների եկամուտներ	3,8	3,9	3,6	3,7	4,3	3,9	4,1
Պետական բյուջեի ծախսեր	87,9	94,4	101,5	111,4	120,8	132,3	215,8
Համայնքների բյուջեների ծախսեր	3,8	3,9	3,6	3,7	4,3	3,9	4,1
%՝ ՀՆԱ-ի նկատմամբ							
Պետական բյուջեի եկամուտներ	31,3	32,6	31,1	32,9	44,6	33,8	63,8
Համայնքների բյուջեների եկամուտներ	1,7	1,4	1,2	1,1	1,6	1,6	1,4
Պետական բյուջեի ծախսեր	38,3	34,7	32,7	32,5	44,6	53,1	74,7
Համայնքների բյուջեների ծասխեր	1,7	1,4	1,2	1,1	1,6	1,6	1,4

Աղյուսակ 1: ԱՀ համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները 2016-2022 թթ.[1]

Անկախությունից հետո ԱՀ պետական բյուջեն հիմնականում դեֆիցիտային էր, իսկ դեֆիցիտը ֆինանսավորվում էր հիմնականում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներգրավված փոխառու միջոցների հաշվին: Սակայն փոխառու միջոցների ներգրավման աղբյուրները պաշտոնապես չեն հրապարակվում պետական բյուջեի կատարման հաշվետվություններում, ինչպես նաև այլ իրավական ակտերում: ԱՀ պետական բյուջեի դեֆիցիտի դինամիկան ներկայացված է գծապատկեր 4-ում:

[1] *ԱՀ պետական բյուջեի մասին 2016-2022թթ. օրենքներ, https://minfin-nkr.am/?section=resources/index&type=4&subtype=83*

Գծապատկերից երևում է, որ ԱՀ պետական բյուջեն պրոֆիցիտային էր միայն 2019թ., իսկ 2020թ. պլանավորված պրոֆիցիտային բյուջեն այդպես էլ իրականություն չդարձավ՝ պատերազմական գործողությունների պատճառով:



Գծապատկեր 4. ԱՀ պետական բյուջեի դեֆիցիտի դինամիկան և վերջինիս գծային տրենդը 2016-2022թթ.[1]

[1] *Պետական բյուջեի մասին 2016-2022 թթ. օրենքներ*

ԱՀ հանրային ֆինանսների առաջավոր օղակի՝ պետական բյուջեի մուտքերի կառուցվածքը ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի տեսքով։



Գծապատկեր 5: ԱՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը[1]

Համաձայն բյուջետային համակարգի մասին ԱՀ օրենքի՝ ԱՀ պետական բյուջեի սեփական եկամուտներն են՝ հարկային եկամուտները, պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները։

Պետական բյուջեի եկամուտների կազմի մեջ է մտնում նաև ՀՀ-ից ստացված բյուջետային վարկը։ Այդ վարկը (նախկինում կոչվում էր **միջպետական վարկ**) ՀՀ Կառավարությունը տրամադրում էր ԱՀ-ին սկզբում ԽՍՀՄ ռուբլով, այնուհետև ՀՀ դրամով։ Բյուջետային վարկը տրամադրվում է տարեկան 0,01 տոկոս տոկոսադրույքով, սակայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում չի իրականացվում։ Տրամադրված բյուջետային վարկի, ինչպես նաև վերջինիս և պետական բյուջեի հարաբերակցությունը ներկայացված է գծապատկեր 6-ում։

[1] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ անձնական հետազոտությունների և ուսումնասիրությունների հիման վրա։*



Գծապատկեր 6: ԱՀ պետական բյուջեի եկամուտները, բյուջետային վարկը և վերջիններիս հարաբերակցությունը 2016-2022թթ.[1]

Ինչպես ցույց է տալիս 6-րդ գծապատկերը, նախքան պատերազմը ԱՀ-ում այս հարաբերակցությունը մոտ էր 50 տոկոսին, ինչը նշանակում է, որ ԱՀ պետական բյուջեի եկամուտների մոտավորապես 50 տոկոսը սեփական եկամուտների հաշվին էր համալրվում: Սակայն սեպտեմբերյան պատերազմից հետո նկատվեց այս ցուցանիշի կտրուկ աճ: Նշենք, որ պատերազմից հետո ԱՀ-ում գործում են մի շարք հարկատեսակների գծով արտոնություններ: Այսպես հարկ վճարողները երեք տարի ժամկետով ազատված են շահութահարկ, ֆիզիկական անձանց եկամտային հարկ արտոնագրային վճար վճարելու պարտավորություններից, իսկ որոշ հարկատեսակների դրույքաչափեր էականորեն կրճատվել են՝ առևտրի հարկ, եկամտային հարկ, հաստատագրված վճար և այլն:

ԱՀ-ում հանրային ֆինանսական համակարգի կառուցվածքային բարելավման նպատակով առաջարկում ենք իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով փոխառու միջոցներ ներգրավել ոչ թե առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից, այլ պետական գանձապետական

---

[1] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ԱՀ պետական բյուջեի 2016-2022թթ. մասին օրենքներ:*

պարտատոմսերի թողարկումից: Պետք է գործի **մեկ պատուհանի տեսքով տեղեկատվության ներկայացման սկզբունքը, առնվազն եռամսյակային կտրվածքով թարմ և ամբողջական տեղեկատվության հրապարակում հայերեն և անգլերեն լեզուներով: Բացի այդ պետք է գործարկվեն զանգվածային լրատվական միջոցներով տեղկությունների տրամադրման գործընթացը: Նշված մեխանիզմի կիրառումը կհանգեցնի «պետություն հասարակություն» կապի բարելավմանը, հասարակության ներգրավվածությանը պետական խնդիրների լուծման գործընթացում, ինչպես նաև խոշոր ֆինանսական ինստիտուտներից կախվածության նվազմանը: Այդ պարտատոմսերը պետք է թողարկվեն ՀՀ դրամով, միջին տոկոսադրույքը պետք է փոքր-ինչ մեծ լինի ավանդների միջին տոկոսադրույքից բացի այդ պետք է պետական պարտատոմսերից ստացվող եկամուտները չհարկվեն եկամտային հարկով: Սկզբնական շրջանում, ներդրողների լայն շրջանակ ապահովելու նպատակով, պետությունը կարող է թողարկել մեծ քանակությամբ պետական պարտատոմսեր՝ փոքր անվանական արժեքներով:**

2. Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով անցում կատարել ծրագրային բյուջետավորմանը: Նշենք, որ ՀՀ-ն 2018 թ. հունվարի 1-ից ամբողջությամբ անցում է կատարել ծրագրային բյուջատավորմանը: Ծրագրային բյուջետավորման վերջնական անցման նպատակով ԱՀ Կառավարությունը 2008 թ-ից սկսել է կազմել եռամյա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր: 2019 թ-ից Արցախում գյուղատնտեսության և առողջապահության ոլորտներում փորձնական ծրագրեր կազմվեցին, սակայն պատերազմի արդյունքում ստացված արդյունքները չեն ամփոփվել, և ներկայումս այդ գործընթացը դադարեցված է:

Այսպիսով, ԱՀ հանրային ֆինանսական համակարգը բաղկացած է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներից: ԱՀ-ում հանրային ֆինանսական համակարգի առաջավոր օղակը պետական բյուջեն է: Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագիծը քննարկվում է Ազգային ժողովում, իսկ հաստատվելուց հետո ստանում օրենքի ուժ: Պետական բյուջեի եկամուտների զգալի մասը կազմում են ՀՀ-ից ստացված բյուջետային վարկը և սեփական հարկային եկամուտները: Նախքան պատերազմը այս եկամտի երկու աղբյուրները գրեթե իրար հավասար էին, սակայն ներկայումս զգալիորեն աճել է ՀՀ-ից ստացված բյուջետային վարկի տեսակարար կշիռը եկամուտների ընդհանուր կառուցվածքում:

Գրականություն

1. Սչանյան Ա.Վ., Հովականյան Լ.Յու, Սուղյան Ն.Ռ, Հանրային ֆինանսներ, ՀՊՏՀ, Եր., Տնտեսագետ, 2020թ.:
2. Глотова И.И., Томилина Е.Л., Углицких О.Н., Клишина Ю.Е., Финансы, учебник, Ставрополь, АГРУС Ставропольского гос. аграрного ун-та, 2013.
1. Ракитина И.С., Березина Н.Н., Государственные и муниципальные финансы, учебник и практикум для академического бакалавриата, М., "Юрайт", 2019.
2. Handbook of PuЫic Finance, Editors JUrgen G., Backhaus and Richard E. Wagner, Print ©2004 Kluwer Academic PuЫishers, Boston.
3. «Բյուջետային համակարգի մասին» ԱՀ օրենք, 10.02.2004թ., http://arlexis.am/
4. ԱՀ պետական բյուջեի՝ 2010-2022թթ. մասին օրենքներ
5. ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող ամփոփ ցուցանիշներ http://stat-nkr.am
6. ԱՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ՝ https://minfin-nkr.am/?section=resources/index&type=4&subtype=83
7. https://www.theglobaleconomy.

Նյութը ներկայացվել է 17.04. 2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն Մանասերյանը :

ՀՏԴ 336.2

Տնտեսագիտություն

Մերի ԶԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ
e-mail: merizakarian@rambler.ru

Ժասմեն ԶԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի ավագ դասախոս
e-mail: O-Zhasmen@yandex.ru

ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում ներկայացված են տարբեր երկրներում պետական գրանցման և հարկային հաշվառման կանգնելու ընթացակարգերի նկարագրությունները և առանձնահատկությունները, տարբեր երկրների կողմից հարկային հաշվառման տվյալների օգտագործման կարևորությունը ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային նպատակներով օգտագործվելու համար, պետական գրանցման և հարկային հաշվառման կանգնելու հնարավոր տարբերակների առկայությունը և դրանց կիրառումը տարբեր երկրների կողմից: Տարբեր երկրներում հարկ վճարողների հաշվառման համար կատարվում են տարբեր ընթացակարգեր, որոնք, սակայն, հանգեցնում են միևնույն արդյունքին՝ հարկ վճարողների հարկային հաշվառման կանգնելուն: Ընդ որում, տարբեր երկրներում հարկ վճարողներին շնորհվող նույնականացման համարները օգտագործվում են ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային նպատակներով, ինչը մի անգամ ևս ընդգծում է հարկային

վարչարարության կարևորությունը: Հարկ վճարողների հաշվառման ընթացակարգերում կարևորվում է, թե ինչ եղանակներ են առաջարկվում ընկերությանը՝ հաշվառման կանգնելու համար, և քանի օր է պահանջվում ընդհանուր գործընթացը ավարտելու համար:

Հաշվի առնելով հարկ վճարողների հաշվառման կարևորությունը՝ բիզնեսի վարման դյուրինության վրա ընկերության պետական գրանցման և հարկ վճարողի հաշվառման ընթացակարգերի ազդեցությունը բացահայտելու նպատակով կատարվել է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, որի արդյունքները փաստել են գործոնի և արդյունքային ցուցանիշի միջև ուղիղ և նկատելի կապի մասին:

Բանալի բառեր՝ *հարկ վճարող, նույնականացման համար, գրանցում, հաշվառում, առցանց, վճար, հարկային մարմին:*

М. Захарян, Ж. Захарян

РОЛЬ ОСОБЕННОСТЕЙ ПОСТАНОВКИ НА НАЛОГОВЫЙ УЧЕТ НАЛОГОПЛАТЕЛЬЩИКОВ В ПРОЦЕССЕ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В РАЗНЫХ СТРАНАХ

В статье представлены описание и особенности порядка государственной регистрации и постановки на налоговый учет в разных странах, важность использования данных налогового учета как для налоговых, так и неналоговых целей, наличие возможных вариантов государственной регистрации и постановки на налоговый учет и их применение. Во многих странах применяются разные процедуры регистрации налогоплательщиков, которые, однако, приводят к одному и тому же результату: постановки на налоговый учет налогоплательщиков. Причем идентификационные номера, присвоенные налогоплательщикам, в разных странах используются как в налоговых, так и в неналоговых целях, что еще раз подчеркивает важность налогового администрирования. В процедурах регистрации налогоплательщиков важное место занимает то, как компания может подать заявку на регистрацию и сколько дней требуется для завершения всего процесса.

Принимая во внимание важность постановки на учет налогоплательщика, был проведен корреляционно-регрессионный анализ с целью выявления влияния процедур государственной регистрации компании и постановки на учет налогоплательщика на легкость ведения бизнеса, результаты которого зафиксировали прямую и заметную связь между фактором и результативным индикатором.

Ключевые слова: *. налогоплательщик, идентификационный номер, регистрация, учет, онлайн, оплата, налоговый орган.*

M. Zakaryan, Zh. Zakaryan

THE ROLE OF PECULIARITIES OF TAX REGISTRATION IN THE PROCESS OF TAX ADMINISTRATION IN DIFFERENT COUNTRIES

The article presents descriptions and features of the procedure for state registration and tax registration in different countries, the importance of using tax registration data by different countries for both tax and non-tax purposes, the availability of possible options for state registration and tax registration and their application by different countries. Different countries apply different procedures for registering taxpayers, which, however, lead to the same result: tax registration of taxpayers. Moreover, identification numbers assigned to taxpayers are used in different countries for both tax and non-tax purposes, which once again underlines the importance of tax administration. An important consideration in taxpayer registration procedures is how a company can apply for registration and how many days it takes to complete the entire process.

Taking into account the importance of taxpayer registration, a correlation-regression analysis was carried out to identify the impact of state registration of a company and taxpayer registration procedures on the ease of doing business, the results of which recorded a direct and noticeable relationship between the factor and the outcome indicator.

Key words: *taxpayer, identification number, registration, online, payment, tax authority.*

Զարգացման ժամանակակից պայմաններում պետության ֆինանսական քաղաքականության կարևորագույն տարր է հարկային քաղաքականությունը, որը կարգավորում է տնտեսական գործընթացները հասարակությունում: Հարկային քաղաքականությունը հարկման ոլորտում միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված որոշակի նպատակների

իրացմանը, որի հիմնական լծակը հարկային վարչարարությունն է, որը շուկայական տնտեսության պայմաններում հարկային հարաբերությունները կառավարող և կարգավորող դինամիկ համակարգ է՝ հարկային մարմինների աշխատանքը կոորդինացնելու համար:

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ԷՂՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ հարկային վարչարարությունը հարկային մարմնի՝ նույն օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողություններ են՝ ուղղված հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը: Հարկային վարչարարության կարևոր բաղկացուցիչ տարր է հանդիսանում հարկ վճարողների հաշվառումը:

Հարկ վճարողների հաշվառումը ենթադրում է հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների շտեմարանի վարում: Երկրներից մեծամասնությունում այդ աշխատանքն իրականացվում է հարկային մարմնի կողմից ինքնուրույն հավաքագրված կամ այլ մարմինների հետ տեղեկատվական փոխանակման շրջանակներում ստացված, ինչպես նաև հարկ վճարողի կամ երրորդ անձանց կողմից նրանց վրա համապատասխան պարտականություններ դնելու դեպքում ներկայացված տարբեր տեղեկատվության հիման վրա (օրինակ՝ բանկերի վրա ավանդաբար պարտականություն է դրվում հաշիվ բացելու մասին հայտնել հարկ վճարողներին):

Որպես կանոն, հարկային հաշվառման շրջանակներում ֆիքսվում են այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նույնականացնել հարկ վճարողին, օրինակ՝ ֆիզիկական անձի դեպքում՝ լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը և բնակության վայրի հասցեն, կազմակերպությունների դեպքում՝ լրիվ անվանումը և փոստային հասցեն: Բացի այդ, արտացոլման են ենթակա այն տեղեկությունները, որոնք իրավաբանական նշանակություն ունեն հարկ վճարողի կարգավիճակի և հարկման օբյեկտների ձևավորման համար՝ կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման փաստերը, բանկային հաշիվների բացումը և փակումը, գույքի ձեռքբերումն ու վաճառքը, մասնակցությունը այլ կազմակերպություններում:

Հարկ վճարողների հաշվառման ընթացակարգը ենթադրում է նրան յուրահատուկ համարի շնորհում: Հարկ վճարողների գրանցման և նրանց նույնականացման համարների շնորհման ժամանակակից համակարգերը օտարերկրյա պետություններում հարկային վարչարարության կարևոր տարր են: Հարկ վճարողների նույնականացման համարները կիրառվում են հարկային ընթացակարգերի մեծ մասում, մասնավորապես՝ հարկային

հայտարարագրման, հարկերի հաշվարկման և վճարման ժամանակ: Հենց այս համարի օգնությամբ է հնարավոր դառնում անսխալ նույնականացնել հարկ վճարողներին երրորդ անձանցից ստացված տեղեկության հիման վրա, օրինակ՝ գործատուից՝ վճարված աշխատավարձի, պետական իշխանության մարմիններից՝ վճարված կենսաթոշակների և նպաստների, ֆինանսական կազմակերպություններից՝ տոկոսների վճարման վերաբերյալ:

Օտարերկրյա պետություններում տարածված են հարկ վճարողներին նույնականացման համար շնորհելու երկու հիմնական մոտեցումներ: Առաջին մոտեցումը ենթադրում է հարկային մարմինների կողմից հարկային վարչարարության նպատակով այն համարների օգտագործումը, որոնք ֆիզիկական անձանց և կազմակերպություններին տրամադրվում են ոչ հարկային նպատակներով: Օրինակ՝ Դանիայում, Կորեայում, Նորվեգիայում, Ռումինիայում, Չիլիում և Մալթայում հարկային վարչարարության նպատակներով օգտագործվում է քաղաքացու նույնականացման համարը, իսկ Կանադայում և ԱՄՆ-ում՝ սոցիալական ապահովության համարը: Ֆինլանդիայում ոչ հարկային համարները օգտագործվում են հարկային վարչարարության մեջ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կազմակերպությունների նկատմամբ. ֆիզիկական անձանց համար որպես իդենտիֆիկատոր հանդես է գալիս սոցիալական ապահովության համարը, իսկ կազմակերպությունների համար՝ ընկերության գրանցման համարը:

Երկրորդ մոտեցման շրջանակներում հարկ վճարողին շնորհվում է հարկ վճարողի անհատական համարը (taxpayer identification number-TIN), որն առաջին հերթին օգտագործվում է հարկային վարչարարության նպատակով և կարող է շնորհվել անձին այլ նույնականացման համարի հետ մեկտեղ, օրինակ՝ սոցիալական ապահովության համարին զուգահեռ:

Որպես կանոն, հարկ վճարողի նույնականացման համարը կամ հարկային ընթացակարգերի շրջանակներում հարկ վճարողին նույնականացնելու համար օգտագործվող այլ համարը որոշակի թվային հաջորդականություն է, որը չի արտացոլում հարկ վճարողի մասին որևէ տեղեկատվություն: Սակայն առանձին երկրներում նույնականացման համարները ներառում են ոչ միայն թվեր, այլ նաև տառեր, օրինակ՝ Հոնկոնգում, Հնդկաստանում, Իռլանդիայում, Իսպանիայում, Իտալիայում, Չինաստանում, Կոլումբիայում, Մալայզիայում, Մեքսիկայում, Սինգապուրում, Չեխիայում, Ֆինլանդիայում, Կիպրոսում և Մալթայում: Առանձին երկրներ (օրինակ՝ Կանադա), որոնք եկամտային հարկով հարկման շրջանակներում օգտագործում են բացառապես թվային համարներ ֆիզիկական անձանց նույնականացման համար,

կազմակերպությունների նկատմամբ օգտագործում են խառը (թվերից և տառերից բաղկացած) համարներ: Միաժամանակ, հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ եկամտային հարկով հարկման շրջանակներում ֆիզիկական անձանց նույնականացման համար օգտագործվում են խառը համարներ, իսկ կազմակերպություններին տրվում են բացառապես թվային նույնացուցիչներ, օրինակ՝ Հոնկոնգում, Իտալիայում, Ֆինլանդիայում և Մալթայում:

Նույնականացման համարը կազմող նշանների (թվերի և (կամ) տառերի) քանակը տարբեր երկրներում տարբերվում է՝ 8-15, ընդ որում՝ առավել հաճախ օգտագործվում են 9-11-նիշանոց համարները:

«Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հարկ վճարողի հաշվառման համարը կազմված է ութանիշ թվից: Առաջին յոթ նիշը հանդիսանում է հերթական համար, ութերորդ նիշը ստուգիչ է և հաշվառվում է նախորդ յոթ նիշերի հիման վրա: Հարկ վճարողների հաշվառման համարների ստուգիչ նիշի հաշվառման բանաձևը սահմանում է հարկային մարմինը»:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է տեղեկատվություն բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գրանցված հարկատու-ֆիզիկական անձանց թվաքանակի տեսակարար կշիռների մասով: Այս ցուցանիշը, ըստ էության, ամենաբարձրն է այն երկրներում, որտեղ հարկային համակարգը օգտագործվում է հարկային վարչարարության նպատակներից տարբերվող նպատակների համար, որը ներառում է սոցիալական ծրագրերի կառավարումը:

Գրաֆիկ 1. Եկամտային հարկ վճարողների տեսակարար կշիռը բնակչության թվաքանակում, 2020թ.[1]



Միաժամանակ, հարկ է խոստովանել, որ ամբողջ աշխատունակ բնակչության՝ որպես հարկ վճարողի գրանցումը նույնպես տարածված

[1] *www.oecd.org*

երևույթ չէ: Մասնավորապես, այդպիսիք են Արգենտինան, Բուլղարիան, Մեծ Բրիտանիան, Հունգարիան, Գերմանիան, Հոնկոնգը, Իսրայելը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Իսպանիան, Կիպրոսը, Կոլումբիան, Կորեան, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մեքսիկան, Նիդեռլանդները, Լեհաստանը, Սլովակիան, Սլովենիան, Մալայզիան, Ռումինիան, Սաուդյան Արաբիան, Սինգապուրը, Թուրքիան, Չեխիան, Շվեյցարիան, Էստոնիան, Հարավային Աֆրիկան, Ճապոնիան: Այդ երկրներում ֆիզիկական անձանց գրանցման ցածր մակարդակը (հատկապես 60%-ից պակաս կազմող այնպիսի երկրներում, ինչպիսիք են Արգենտինան, Բուլղարիան, Իսրայելը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Կոլումբիան, Ռումինիան, Սլովակիան, Թուրքիան, Չեխիան, Ճապոնիան) նաև բացատրվում է նրանով, որ շատերի մոտ անհատական եկամտային հարկով հարկումը կազմակերպված է աղբյուրից գանձման կուտակային համակարգի հիման վրա, որը չի ենթադրում հարկ վճարողի կողմից հարկային հայտարարագրի ներկայացում:

Երկրներից մեծամասնությունում ֆիզիկական անձանց՝ հարկման նպատակով նույնականացումը նույնպես համընդհանուր բնույթ չի կրում: Առավել բարձր ցուցանիշները, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ համապատասխան նույնականացման համարները շնորհվել են պետության գրեթե ողջ բնակչությանը, պատկանում են Ֆինլանդիային (98,8%), Ռուսաստանին (97,25%), Բրազիլիային (94,32%), Նորվեգիային (90,0%), Կանադային (88%), ԱՄՆ-ին (87,5%), Ավստրալիային (85,3%), Դանիային (84,8%), Նոր Զելանդիային (82,8%), Իսլանդիային (81,8%), Շվեդիային (80%): Ավստրիայում, Բելգիայում, Հունաստանում, Իտալիայում, Նիդեռլանդներում, Մալթայում, Պորտուգալիայում, Սլովենիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում հարկատուների նույնականացման համարների շնորհման բավականին բարձր ցուցանիշներ են գրանցվել: Դրա հետ մեկտեղ պետությունների զգալի մասում գրանցված է բնակչության միայն 20-30%, իսկ գրանցման նվազագույն ցուցանիշները նկատվում են Սաուդյան Արաբիայում (1,51%), Ռումինիայում (2,11%), Թուրքիայում (2,3%), Հնդկաստանում (2,57%) և Արգենտինայում (2,89%):

Առանձին պետություններում հնարավոր է իրականացնել հարկ վճարողի լրացուցիչ գրանցում և նույնականացման համարի շնորհում՝ ըստ առանձին հարկերի: Այսպես. առանձին գրանցում հաճախ իրականացվում է ԱԱՀ վճարողների նկատմամբ:

Հարկ վճարողների գրանցման և նույնականացման համապարփակ համակարգի առկայությունը կարևոր նշանակություն ունի հարկային համակարգի արդյունավետ գործունեության համար:

Չի կարելի թերագնահատել արդյունավետ հարկային հաշվառման համակարգի ֆունդամենտալ կարևորությունը: Հարկային վարչարարությանը անհրաժեշտ են արդյունավետ գործընթացներ ինչպես այն հարկատուների կառավարման համար, որոնք «համակարգի մաս» են կազմում, այնպես էլ օգնելու նրանց բացահայտել այն անձանց, ովքեր դեռ պետք է գրանցվեն: Բացի այդ, նրանք պետք է հնարավորություն ունենան հետևելու և որոշելու ցանկացած հարկային պատասխանատվության նշանակման գործողությունները և միջոցները ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ, նույնիսկ այն համակարգերում, որտեղ հաշվարկ-հաշվետվությունների ներկայացումը պարտադիր չէ:

Մինչ շատ վարչարարություններ կրում են միանձնյա պատասխանատվություն հարկման նպատակով գրանցման համակարգի համար, վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ երկրներում հաշվառման գործընթացները կարող են նաև նախաձեռնվել հարկային վարչարարությունից դուրս՝ այլ պետական մարմինների միջոցով:

Քննարկելով այն հարցը, թե ինչ եղանակներ են առաջարկվում հարկ վճարողներին գրանցվելու համար, գալիս ենք այն եզրակացության, որ OECD-ի գրեթե բոլոր երկրներում առկա են մեկից ավելի տարբերակներ, և երկրներից 93%-ում հնարավոր է գրանցվել առցանց: 2017 թվականի տվյալների համեմատ գրանցվել է 23%-ային կետով աճ: Փաստորեն, առցանց տարբերակը առավել լայնորեն առաջարկվող գրանցման տարբերակ է (Գրաֆիկ 2), իսկ Սաուդյան Արաբիայում հարկ վճարողները կարող են գրանցվել միայն առցանց:

Գրաֆիկ 2. Գրանցման տարբերակների մատչելիությունը հարկ վճարողների համար, 2020թ.[1]



Չնայած ստացված արդյունքները թույլ չեն տալիս որոշել, թե արդյոք առցանց գրանցման տարբերակը հասանելի է հարկերի բոլոր տեսակների

[1] *www.oecd.org*

կամ բոլոր հարկ վճարողների համար, այնուամենայնիվ, դրանք ցույց են տալիս թվայնացման շարունակական ազդեցությունը հարկային վարչարարության գործընթացների վրա: Առցանց գրանցումը նաև թույլ է տալիս ոչ ռեզիդենտներին գրանցվել արտասահմանից:

Հաշվի առնելով, որ հարկ վճարողների հաշվառումը հարկային վարչարարության տարրերից է, և այն հանգամանքը, որ հարկային հաշվառման մի մասն է կազմում նաև պետական գրանցումը, անհրաժեշտ է վերլուծել բիզնեսի վարման վրա դրա ազդեցությունը: Համաշխարհային բանկի խմբի կողմից «Doing Business»-ի շրջանակում տարեկան կտրվածքով 190 երկրների համար հաշվարկվում է բիզնեսի վարման դյուրինության աստիճանը. «Starting a business»-ը 10 ցուցանիշներից մեկն է: Այդ ցուցանիշով առաջին հնգյակը կազմում են Նոր Զելանդիան, Վրաստանը, Կանադան, Սինգապուրը և Հոնկոնգը: Բիզնեսի սկսման համար կատարվող ընթացակարգերի քանակով լավագույնը 1 պրոցեդուրան է՝ Նոր Զելանդիայում և Վրաստանում, վատագույնը՝ 20՝ Վենեսուելայում, ըստ դրանց կատարման ժամանակի՝ լավագույնը՝ կես օր՝ Նոր Զելանդիայում, վատագույնը՝ 230 օր՝ Վենեսուելայում, ըստ 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ ծախսերի՝ լավագույնը՝ 0%՝ Մեծ Բրիտանիայում, Ռուանդայում և Սլովենիայում, վատագույնը՝ 211.8%՝ Վենեսուելայում, ըստ 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ նվազագույն կապիտալի՝ լավագույնը՝ 0%, որը դիտվում է շատ երկրներում, մասնավորապես՝ առաջին հնգյակում, իսկ վատագույնը՝ 179.6%՝ Սան Տոմե և Պրինսիպի Հանրապետությունում:

Դիտարկենք առաջին հնգյակի որոշ երկրներում, ՀՀ-ում և ԱՀ-ում ընկերությունների պետական գրանցման և հարկային հաշվառման ընթացակարգերը:

Նոր Զելանդիայում ընկերության գրանցումը կատարվում է New Zealand Company Register՝ ընկերությունների ռեգիստրի միջոցով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Նոր Զելանդիայում և Կանադայում ընկերության գրանցման ընթացակարգը:[1]

Ընթացակարգ	Նոր Զելանդիա	Կանադա
Անհրաժեշտ փաստաթղթեր		
բոլոր անդամների նույնականացման փաստաթղթեր	+	+
ընկերության անվանում	2-3 անվանում	2-3 անվանում

[1] *Տվյալները մշակվել են www.gflolaw.com և www.doingbusiness.org կայքերից ստացված տվյալների հիման վրա:*

ընկերության կառուցվածքը (տնօրեն, բաժնետեր, շահառու)	+	+
ընկերության գործունեության տեսակը	+	+
Գրանցման գործընթաց		
1. ընկերության անվանումների ստուգում և մեկի ընտրություն	1 օրից ոչ ավել	1-2 օր
2. գրանցման փաստաթղթերի հանձնում ռեգիստր	Ավտոմատ: Ընկերությունը պետք է ունենա բիզնեսի հատուկ համար՝ New Zealand Business Number (NZBN): Դիմումի գրանցում և Certificate of Incorporation տրամադրում՝ 7-10 օր	Ընկերության գրանցումը կարող է կատարվել դաշնային կամ մարզային մակարդակով: Դաշնային ինկորպորացիա Դաշնային գրանցումը թույլ է տալիս բիզնես վարել բոլոր մարզերում և տարածքներում նույն անվանմամբ: Հարկ է նշել, որ այս ընթացակարգը առավել աշխատատար է: Մարզային ինկորպորացիա Մարզային գրանցումը առավել ընդունելի է, քանի որ ընկերության հիմնական գործունեությունը նախատեսվում է իրականացնել Կանադայից դուրս: Ընկերության գրանցման համարի ստացում (BN/NEQ). BN – ընկերության 9 նիշանոց համար է, որը նույնացնում է նրան դաշնային և մարզային կառավարման մարմիններում NEQ – ընկերության համարն է, որը գրանցված է

		Քվեբեկում. այն տվյալ մարզի առանձին հատկանիշն է:
3. կանոնադրական փաստաթղթերի և կնիքի պատրաստում	«Ընկերությունների մասին» Նոր Զելանդիայի օրենքում նշվում է, որ ընկերությունը պարտավոր չէ ունենալ կանոնադրություն, որի չունենալու դեպքում ընկերության իրավունքները և պարտականությունները կարգավորվում են վերոնշյալ օրենքով:	Փաստաթղթերի պատրաստում՝ 1-2 օր
4. փաստաթղթերի վավերացում	Վավերացում՝ 1-2 օր, ապոստիլ (անհրաժեշտության դեպքում)՝ 6-8 օր: Նոր Զելանդիան 1961թ. Հաագայի կոնվենցիայի անդամ է, ուստի ապոստիլը մեծ պահանջարկ է վայելում:	Վավերացում՝ 2-3 օր, օրինականացում (անհրաժեշտության դեպքում)՝ 7-10 օր: Կանադան չի ստորագրել 1961թ. Հաագայի կոնվենցիան, ուստի ապոստիլը հնարավոր չէ, սակայն անհրաժեշտ է հյուպատոսական վավերացում դեսպանատան միջոցով:

Ընկերության գրանցումից և փաստաթղթերի վավերացումից հետո ընկերությունը կարող է առցանց դիմել IRD (Inland Revenue Department number) համար ստանալու համար և գրանցվել GST (Goods & Sales Tax Number) համար ստանալու համար (եթե նրա տարեկան եկամուտը գերազանցում է 60 000 նորզելանդական $): Դա կատարվում է անվճար՝ ընկերության գրանցմանը զուգընթաց: IRD և GST ստանալու համար անհրաժեշտ են՝

1) կոնտակտային տվյալներ,

2) ընկերության կողմից աշխատանքի ընդունման սկսման ամսաթիվը,

3) աշխատողների և կապալառուների քանակը,

4) IRD համարը (տնօրենի և առանձին բաժնետերերի), գործունեության հիմնական տեսակը, գտնվելու վայրը և փոստային հասցեն, ընկերության առևտրային անվանումը (եթե տարբերվում է ձեռնարկատիրականից), ընկերության կոնտակտային տվյալները, բիզնես ոլորտի նկարագրությունը

և ծածկագիրը, ինչպես նաև աշխատողների համար լրացուցիչ նպաստների հարկի կիրառելիությունը,

5) GST համարը - դրա հաշվառման մեթոդը, հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը, բիզնես գործունեության ծածկագիրը, փոխհատուցումների ստացման եղանակը, արտահանում-ներմուծում կատարելու վերաբերյալ տեղեկություններ:

Ընկերության գրանցումը Կանադայում ինքնին պարզ և հարմար գործընթաց է, որի իրականացման համար պահանջվում է փաստաթղթերի ստանդարտ փաթեթ (Աղյուսակ 1): Էլեկտրոնային եղանակով գրանցումը 200 կանադական $ է: Օնտարիո նահանգում գրանցման համար վճար չի գանձվում: Էլեկտրոնային գրանցումը կատարվում է մեկ օրվա ընթացքում, իսկ բիզնես-համարը ուղարկվում է ընկերություն հինգ օրվա ընթացքում:

Ընկերություն գրանցելուց հետո կարևոր քայլ է ապրանքային նշանի գրանցումը:

Ընկերության անվանման տրամադրման 4 տարբերակ գոյություն ունի.

1. համարակալված անվանմամբ ընկերության ստեղծում, օրինակ՝ 123 Canada Inc: Եթե ընկերությունը գրանցվում է ոչ թե թվի, այլ անվան տակ, ապա անվանման որոնման հաշվետվությունը ձեռք է բերվում 13.8 կանադական $-ով,

2. Կանադայի կորպորացիաների կողմից նախապես հաստատված անվանմամբ ընկերության ստեղծում,

3. ընկերության ստեղծում, երբ պահանջվում է անվանման հաստատում,

4. համարակալված անվանմամբ ընկերության գրանցում, որը պետք է նախապես պահեստավորված լինի:

Ընկերության ստեղծումից հետո նրա մասին տեղեկությունները փոխանցվում են Կանադայի հարկային գործակալություն (CRA), որը այսուհետ վերադարձնում է նրա բիզնես-համարը ընկերության շահութահարկի հաշվեհամարով: Այն հնարավոր է ստանալ Կանադայի արդյունաբերության նախարարության կայքէջից դաշնային կորպորացիաների օնլայն տվյալների բազայից՝ մեկ օրվա ընթացքում:

Բոլոր մասնավոր ընկերությունները, որոնց հարկվող մատակարարումների շրջանառությունը եռամսյակային կտրվածքով գերազանցում է 30 000 կանադական $, պետք է գրանցվեն ԱԱՀ-ի վճարման նպատակով (ապրանքների և ծառայություններ հարկ (GST) ու առևտրի ներդաշնակեցված հարկ (HST)) CRA-ում: Ընկերությունը՝ որպես փոքր մատակարար, պետք է գրանցվի վաճառքից հետո՝ 29 օրվա ընթացքում: CRA-ում գրանցվելու համար ընկերությունը պետք է նշի իր լրիվ անվանումը, հեռախոսահամարը, առնվազն մեկ սեփականատիրոջ սոցիալական

ապահովության համարը (SIN), իրավաբանական հասցեն և գործունեության տեսակը: Գրանցումը կատարվում է մեկ օրվա ընթացքում:

Վրաստանում ընկերության գրանցումը շահավետ լուծում է: Վրաստանը կարող է օֆշորային գոտուն գրեթե նույնական այլընտրանք տրամադրել՝ չճանաչելով ընկերությունը որպես օֆշոր: Ընկերության պաշտոնական օֆշորային կարգավիճակի բացակայությունը բարձրացնում է նրա հեղինակությունը: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է նույն փաստաթղթերը, որոնք ներկայացվում են նաև Կանադայում և Նոր Զելանդիայում:

Գրանցման գործընթացը ներառում է ընկերության անվանման ստուգում, գրանցման վճարի վճարում, ընկերության գրանցումը ձեռնարկատիրական ռեգիստրում, նույնականացման համարի և պետական ու հարկային գրանցման վկայականի ձեռքբերում և ԱԱՀ հաշվառման կանգնում: Գրանցման համար ներկայացվում են գրանցման համար վավերացված դիմում, հիմնադրման վավերացված պայմանագիր, տարածքի սեփականատիրոջ համաձայնությունը՝ հասցեն որպես իրավաբանական հասցե օգտագործելու համար: Գրանցման հայտը քննարկվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ընկերության հարկային հաշվառման կանգնումը կատարվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերության գրանցումն ավարտելիս Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունը (NAPR) Եկամուտների ծառայությանն ուղարկում է ընկերությունը որպես ԱԱՀ վճարող գրանցելու հարցում (դիմում): Ընկերության գրանցումը NAPR-ի կողմից պետք է ավարտվի մեկ աշխատանքային օրվա ընթացքում (սովորական ընթացակարգի դեպքում) կամ նույն օրը (արագացված ընթացակարգի դեպքում): Գրանցման համար վճարվում է 100 լարի՝ սովորական գրանցման դեպքում, կամ 200 լարի՝ արագացված գրանցման դեպքում, բանկային վճարների համար՝ 1 լարի, և 5 լարի՝ յուրաքանչյուր փաստաթղթի վավերացման համար: NAPR-ն պարտավոր է ԱԱՀ-ի գրանցման վերաբերյալ դիմողի հայտը փոխանցել Եկամուտների ծառայություն՝ դիմումն ստանալուց անմիջապես հետո: Եկամուտների ծառայությունը ընկերությունը գրանցում է որպես ԱԱՀ վճարող տեղեկատվությունն ստանալուց անմիջապես հետո, այսինքն՝ նույն օրը, որի հաստատումը կամ գրանցման վկայականը կարելի է ձեռք բերել առցանց:

Ընկերության գրանցումը ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, պահանջում է 3 գործողությունների կատարում, որը միջինում կատարվում է չորս օրվա ընթացքում, ծախսը բնակչության 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ կազմում է 0.8%, իսկ բնակչության 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ

նվազագույն կապիտալը՝ 0%: Դիտարկված ցուցանիշներով ՀՀ-ն գտնվում է համեմատաբար լավ դիրքում Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և բարձր եկամուտ ունեցող OECD-ի երկրների (միջին ցուցանիշներ) համեմատ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Starting a business ցուցանիշի միջին տվյալներ[1]

Ցուցանիշ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա	Բարձր եկամուտ ունեցող OECD-ի երկրներ	Լավագույն արդյունք
Ընթացակարգերի քանակ	5.2	4.9	1 (2 երկիր)
Պահանջվող ժամանակ (օր)	11.9	9.2	0.5 (Նոր Զելանդիա)
Բնակչության 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ ծախս (%)	4.0	3.0	0.0 (2 երկիր)
Բնակչության 1 շնչին ընկնող եկամտի նկատմամբ նվազագույն կապիտալ (%)	0.7	7.6	0.0 (120 երկիր)

ՀՀ-ում ընկերության գրանցման համար կատարվող ընթացակարգերն են (Գրաֆիկ 3).

1. արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցում: Անհրաժեշտ փաստաթղթերն են.

ա) ընկերության կանոնադրությունը,

բ) նոր ընկերություն բացելու մասին հիմնադիրների/սեփականատերերի որոշումը:

2011թ-ից արդարադատության նախարարությանը կից գործում է «Բիզնեսի սկսման մեկ պատուհան»-ը: Ընկերությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են ամրագրել անվանումը, գրանցել բիզնեսը և ստանալ հարկ վճարողի հաշվառման համարը միաժամանակ: 2019թ-ից ավելացված արժեքի հարկ վճարողի գրանցումը կատարվում է այն դեպքում, երբ նրա շեմը գերազանցում է 58.35 մլն դրամը: 2018թ-ից ընկերությունները կարող են ընկերության գրանցման դիմումում կամավոր ընտրել որպես

[1] *Տվյալները մշակվել են www.doingbusiness.org կայքից ստացված տվյալների հիման վրա:*

ավելացված արժեքի հարկ վճարողի գրանցումը: Այս դեպքում որևէ լրացուցիչ գործողություն չի պահանջվում, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ՝ վերջում հավելյալ «1» նիշի նշումով) կներառվի գրանցման վկայականում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկու աշխատանքային օր է, բայց դիմումը կարող է քննարկվել մեկ օրվա ընթացքում, եթե ընկերությունները օգտվեն արդարադատության նախարարության կողմից տրամադրվող հիմնադիր փաստաթղթերի օրինակելի ձևերից: Սակայն դրանք սահմանափակ են և նախատեսված են պարզ դեպքերի համար, ուստի 5 և ավելի հիմնադիրներ ունեցող ընկերությունների մեծ մասը նախընտրում են մշակել իրենց սեփական հիմնադիր փաստաթղթերը: Գրանցման էլեկտրոնային տարբերակը հասանելի է պետական ռեգիստրի գործակալության կայքէջում, սակայն գործնականում այն սովորաբար չի օգտագործվում էլեկտրոնային ստորագրության պարտադիր լինելու պատճառով, ինչը պահանջում է լրացուցիչ ծախսեր և ժամանակ: Գրանցումը առցանց իրականացնելիս հիմնադիրը, միևնույն է, այցելում է ռեգիստր՝ հիմնադիր փաստաթղթերի թղթային պատճենը ստանալու համար:

2. ընկերության կնիքի պատվիրում: ՀՀ օրենսդրությամբ կնիքի առկայությունը պարտադիր չէ, սակայն այն կարող է պահանջվել գործունեության ընթացքում: Օրինակ, որոշ բանկեր պահանջում են այն բանկային հաշիվ բացելու ժամանակ, ինչպես նաև նոտարական գրասենյակները: Կնիքի պատրաստման վճարը կախված է այն պատրաստելու ժամանակից. նույն օրը պատրաստելու դեպքում՝ միջինում 15 500 դրամ, 30 օրվա ընթացքում՝ 2 800 դրամ: Անհրաժեշտ փաստաթղթերն են.

ա) ընկերության պետական գրանցման վկայականի պատճեն,

բ) հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք՝ ՀՎՀՀ ստանալու համար,

գ) ընկերության կանոնադրության պատճեն,

դ) կնիքի ուրվագիծը,

ե) լիցենզիայի պատճենը (առկայության դեպքում),

զ) ապրանքային նշանի գրանցման վկայականի պատճեն, եթե այդպիսին կա, և որը ցանկանում են ունենալ կնիքի վրա:

3. աշխատողների գրանցում: ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ ընկերությունը պարտավոր է գրանցել բոլոր աշխատողներին հարկային մարմիններում ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00: Գրանցումը կատարվում է օնլայն

տարբերակով, գրանցման հատուկ ձևի միջոցով: Ձևաթղթի լրացման համար անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային ստորագրություն, որը հնարավոր է ստանալ Ekeng մասնավոր ընկերության միջոցով: Այն տևում է մի քանի օր և պահանջում է տարեկան վճար՝ 3 000 դրամի չափով: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ստորագրման համար պահանջվում է նաև քարտը ընթերցող սարքի առկայությունը: Ուստի էլեկտրոնային ստորագրության բացակայության դեպքում ընկերությունները նախընտրում են գրանցել իրենց աշխատողներին հաշվապահի միջոցով, ով արդեն ունի էլեկտրոնային ստորագրություն: Ընկերության ղեկավարը հաշվապահին է տրամադրում ընկերության ներկայացման լիազորագիր, իսկ հաշվապահը առցանց գրանցում է աշխատողներին:

Գրաֆիկ 3. ՀՀ-ում ընկերության գրանցման համար կատարվող ընթացակարգերը[1]:



Այս նշանը ցուցադրվում է նախորդ ընթացակարգի հետ միաժամանակ կատարված ընթացակարգերի թվերի կողքին:

ԱՀ-ում ընկերության պետական գրանցման և հարկային հաշվառման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ու «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» օրենքներով: ԱՀ-ում ընկերության պետական գրանցման և հարկային հաշվառման համար կատարվում են գրեթե նույն ընթացակարգերը, որոնք առկա են ՀՀ-ում: Դրանք են՝

[1] *Տվյալները մշակվել են www.doingbusiness.org կայքից ստացված տվյալների հիման վրա:*

1. նախապատրաստական փուլ (Աղյուսակ 3)։ Այս փուլի ընթացքում կատարվում են ընկերության հիմնադրման հետ կապված հիմնական ներածական գործողությունները։

Աղյուսակ 3. Նախապատրաստական փուլի գործողությունները

Հ/Հ	Գործողության անվանումը
1.	որոշել ընկերության կողմից իրականացվելիք գործունեության տեսակը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի
2.	որոշել հիմնադիրներին. բոլոր որոշումները ընդունվում են միանձնյա կամ մի քանի հիմնադիրների կողմից
3.	որոշել ընկերության ֆիրմային անվանումը, որը հաստատվում է ընկերության պետական գրանցման ժամանակ
4.	որոշել ընկերության իրավաբանական հասցեն՝ հիմնականում որպես ընկերության գործադիր մարմնի գտնվելու վայրի հասցե
5.	ընտրել ընկերության գործադիր մարմնի ղեկավարին
6.	որոշել կանոնադրական կապիտալի չափը և մասնաբաժինները
7.	մշակել ընկերության կանոնադրությունը
8.	ընդունել ընկերություն հիմնադրելու մասին հիմնադիրների որոշումը կամ հիմնադրման միանձնյա որոշումը

2. հիմնական փուլ։ Այս փուլում անհրաժեշտ է ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել ընկերության գրանցման համար փաստաթղթերի փաթեթը՝

- դիմում,
- ընկերություն հիմնադրելու մասին հիմնադիրների որոշում կամ հիմնադիր ժողովի արձանագրություն կամ միանձնյա որոշում,
- ընկերության կանոնադրություն,
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (17 000 ՀՀ դրամ)[1] ,
- տեղեկություններ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի մասին (անձնագրային տվյալներ, հանրային ծառայությունների համարանիշի

[1] *«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենք, 14.04.2004թ. ՀՕ-104, հ.15։*

(ՀԾՀ) կամ ՀԾՀ չստանալու դեպքում՝ տեղեկանքի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն)[1] ։

Փաստաթղթերը ուսումնասիրվում են առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում, իսկ եթե դրանք կազմված են նմուշային ձևերով, ապա պետական գրանցումը կատարվում է անմիջապես։ Այսուհետ պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի միջոցով կատարվում է գրանցում պետական միասնական գրանցամատյանում. տեղեկատվական համակարգը շնորհում է նրան գրանցման համարը և հարկային մարմնի տրամադրած՝ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)։ Եթե մինչև 01.01.2016թ. ընկերությունը ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր էր հաշվառման կանգնել հարկային մարմնում[2], ապա կատարված փոփոխությամբ սկսել է գործել մեկ պատուհանի սկզբունքը. մշակվել է ծրագրային մոդուլ, որը թույլ է տալիս ընկերություններին գրանցման ժամանակ նրանց շնորհել ՀՎՀՀ։ Այսպես՝ հարկային մարմնում հաշվառվելու և ՀՎՀՀ ստանալու համար պետական գրանցում ստացած ընկերությունը պետք է հարկային մարմին ներկայացներ պետական գրանցման վկայականի պատճենը, կանոնադրության մեկ օրինակը և տնօրենի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմում, մինչդեռ հիմա փաստաթղթաշրջանառությունը կատարվում է պետական ռեգիստրի և հարկային մարմնի միջև՝ առցանց ռեժիմով տեղեկությունների փոխանցման և անմիջականորեն ՀՎՀՀ-ի շնորհման միջոցով[3]։

3. ավարտական փուլ։ Այս փուլի ընթացքում անհրաժեշտ է՝

ա) պատվիրել կնիք, ինչի նպատակով կնիք պատրաստող կազմակերպություն են ներկայացվում դիմում, ՀՎՀՀ տրամադրելու մասին հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք, պետական գրանցման վկայականի, կանոնադրության, լիցենզիայի ու ապրանքային նշանի գրանցման վկայականի (առկայության դեպքում) պատճենները և կնիքի ուրվագիծը, կնիքը պատվիրող անձի անձնագիրը։[4] ԱՀ-ում կնիքի պատվիրումը միջինում կազմում է 15 000 ՀՀ դրամ,

---

[1] *«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ԼՂՀ օրենք, 20.04.2015թ. ՀՕ-30-Ն, հ. 34, մ.1:*

[2] *«Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ԼՂՀ օրենք, 27.12.2011թ. ՀՕ-92-Ն, հ. 7, մ.1, մայր փաստաթուղթ*

[3] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 17.05.2016թ. N 238-Ն որոշում*

[4] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 23.08.2011թ. N 597-Ն որոշում*

բ) բանկում բացել ընկերության անվանմամբ բանկային հաշիվը, ինչի համար բանկ պետք է ներկայացնել պետական գրանցման վկայականի պատճենը: Բանկային հաշվի բացումը պարտադիր պայման չէ: Բանկային հաշվի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին են տրամադրվում էլեկտրոնային եղանակով[1],

գ) անհրաժեշտության դեպքում ստանալ գործունեության իրականացման համար լիցենզիա տվյալ գործունեության ոլորտը լիցենզավորող մարմնի կողմից, որի համար վճարվող պետական տուրքը տարբերվում է ըստ գործունեության տեսակների[2],

դ) ձեռք բերել նույնականացման քարտը, որի համար անհրաժեշտ է ոստիկանություն ներկայացնել դիմումը, անձը հաստատող փաստաթուղթը, պետական տուրքի վճարման անդորրագիրը (3 000 ՀՀ դրամ[3]), լուսանկարվել ոստիկանությունում: Այն տրամադրվում է դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրը[4],

ե) ձեռք բերել քարտը ընթերցող սարքը:

Ավարտական փուլի գործողությունները անհրաժեշտ է կատարել գործունեության սկսմանը արդեն իսկ պատրաստված լինելու համար, որպեսզի դրանց իրականացման ժամկետները չխանգարեն գործունեության ժամանակին սկսմանը: Սակայն անկախ ավարտական փուլի գործողությունները կատարելուց՝ ընկերությունը համարվում է գրացնված և հաշվառված հարկային մարմնում՝ միասնական պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից[5]:

Բիզնեսի վարման դյուրինության վրա ընկերության պետական գրանցման և հարկային հաշվառման ընթացակարգերի ազդեցության կապը բացահայտելու նպատակով կատարենք կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում: Վերլուծությունը կատարվել է Համաշխարհային բանկի խմբի կողմից ամենամյա կտրվածքով, 190 երկրներում բիզնեսի վարման դյուրինության հաշվարկված տվյալների հիման վրա: Վերլուծության արդյունքները

---

[1] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 27.09.2011թ. N 718-Ն որոշում*

[2] «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենք, 28.03.2002թ. ՀՕ-202:

[3] «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենք, 14.04.2004թ. ՀՕ-104, հ. 13:

[4] «Նույնականացման քարտերի մասին» ԱՀ օրենք, 22.04.2021թ. ՀՕ-64-Ն, հ. 4:

[5] «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ԼՂՀ օրենք, 20.04.2015թ. ՀՕ-30-Ն, հ. 35, մ.7, «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» ԼՂՀ օրենք, 27.12.2011թ. ՀՕ-92-Ն, հ. 7, մ.8:

ներկայացված են 2020 թվականի տվյալներով, սակայն նմանատիպ պատկեր է ստացվել նաև այլ թվականների տվյալներով կատարված վերլուծության արդյունքում:

Աղյուսակ 4. Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Կոռելյացիայի գործակիցը (r)	0.633
Հատկանիշների միջև կապը	ուղիղ
Կապի խտությունը (ուժը) ըստ Չեդոկի սանդղակի	նկատելի
Անկախության աստիճանների քանակը (f)	211
Ստյուդենտի t-չափանիշը	11.885
Ստյուդենտի t-չափանիշը անկախության աստիճանների տվյալ քանակի դեպքում	1.972
Հատկանիշների կախվածությունը	Վիճակագրորեն նշանակալի
Գծային ռեգրեսիայի հավասարումը	$y = -3.70520 + 0,79809 * x$
Ռեգրեսիայի էմպիրիկ հավասարումը	$y = 17.44341e^{0.01497x}$
Դետերմինացիայի գործակիցը (r2)	0.401
Էլաստիկության գործակիցը	1.266
Ապրոքսիմացիայի միջին սխալը	15.44%

Ինչպես երևում է աղյուսակ 4-ի տվյալներից, կոռելյացիայի գործակիցը կազմել է 63.3%, դետերմինացիայի գործակիցը՝ 40,1%: Տվյալները վկայում են այն, որ բիզնեսի վարման դյուրինության վրա պետական գրանցման և հարկային հաշվառման ազդեցությունը նկատելի է, ուղիղ և վիճակագրորեն նշանակալի, կապի խտությունը՝ բարձր, և որ գրանցման և հաշվառման պարզեցման և կատարելագործման արդյունքում բիզնեսի վարումը կդառնա ավելի դյուրին. Ստյուդենտի t-չափանիշը ավելի մեծ է, քան անկախության աստիճանների տվյալ քանակի դեպքում Ստյուդենտի t-չափանիշը: Միաժամանակ, էլաստիկության աստիճանը մեծ է 1-ից՝ 1.266, ինչը նշանակում է, որ պետական գրանցման և հարկային հաշվառման ընթացակարգերը բնութագրող ամփոփ ցուցանիշի փոփոխությունը 1%-ով հանգեցնելու է բիզնեսի վարման դյուրինության մակարդակը բնութագրող ամփոփ ցուցանիշի փոփոխությանը 1%-ից ավելիի չափով: Այսինքն՝ պետական գրանցման և հարկային հաշվառման ընթացակարգերը նշանակալիորեն ազդում են բիզնեսի վարման դյուրինության վրա:

Սակայն պետք է նկատենք, որ տվյալ մոդելում ապրոքսիմացիայի միջին սխալը բարձր է սահմանված նորմից (15.44% > 7%), ինչը վկայում է այն, որ մոդելը պետք է օգտագործել որոշակի զգուշությամբ կանխատեսումներ անելու ժամանակ:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը՝ եզրակացնում ենք, որ հարկային վարչարարության անբաժանելի մաս կազմող հարկային հաշվառման անընդհատ կատարելագործումը իր դրական ազդեցությունն է ունենում թե բիզնեսի վարման դյուրինության մակարդակի բարձրացման, թե հարկային վարչարարության արդյունավետ իրացման վրա: Հարկային հաշվառման տվյալների օգտագործումը ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային նպատակներով դրա վառ ապացույցն են: Տվյալ կապի մասին են վկայում են նաև կատարված կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության արդյունքները:

Գրականություն

1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ԼՂՀ օրենք, 20.04.2015թ. ՀՕ-30-Ն:
2. «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենք, 28.03.2002թ. ՀՕ-202
3. «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» ԼՂՀ օրենք, 27.12.2011թ. ՀՕ-92-Ն:
4. «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենք, 14.09.2002թ., ՀՕ-5:
5. «Նույնականացման քարտերի մասին» ԱՀ օրենք, 22.04.2021թ. ՀՕ-64-Ն:
6. «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենք, 14.04.2004թ. ՀՕ-104:
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 23.08.2011թ. «Կնիքներ պատվիրելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 13-ի N 39 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 597-Ն որոշում:
8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 27.09.2011թ. «Հաճախորդի բացած բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները առևտրային բանկերի

կողմից հարկային մարմին ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 718-Ն որոշում:
9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 17.05.2016թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական գրանցման (հաշվառման) մասին տեղեկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրելու կարգը և այդ տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 238-Ն որոշում:
10. www.doingbusiness.org
11. www.gflolaw.com
12. www.oecd.org

Նյութը ներկայացվել է 17.05.2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 330.1

Տնտեսագիտություն

Միսակ ԱՎԱԳՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Եվրոպական համալսարան, կառավարման ամբիոնի դասախոս
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ , Ռիսկերի կառավարման և հսկողության դեպարտամենտի ներքին հսկողության վարչության գործառնական ռիսկերի բաժնի պետ
E-mail: misakav@rambler.ru

ՕՊՏԻՄԱԼ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակներում պարբերաբար բռնկվող ֆինանսատնտեսական ճգնաժամերը, որոնք դարձել են համաշխարհային տնտեսության զարգացման արդի առանձնահատկություններից մեկը, ստիպում են միջազգային արժութաֆինանսական համակարգում իրականացնել որոշակի վերաձևափոխումներ՝ այդ ոլորտը կայունացնելու և հետագա ճգնաժամային իրավիճակներից հնարավորինս զերծ պահելու համար: Այդ առումով, հատկապես արժութային կարգապահության ապահովման հնարավոր ուղիներից մեկը արժութային ինտեգրումն է՝ որպես տնտեսական ինտեգրման կարևոր, սակայն ոչ պարտադիր գործընթաց, որի դրսևորման ձևերից է արժութային գոտիների ձևավորումը: Չնայած դրան՝ ներկայումս աշխարհում գործող ոչ բոլոր տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներն են անցում կատարել արժութային ինտեգրման փուլին, քանի որ այն պահանջում է անդամ երկրների կողմից տնտեսական մի շարք նախադրյալների և պայմանների ապահովում, արժութաֆինանսական ինքնիշխանության մասնակի

հրաժարում: Հաշվի առնելով արժութային գոտիների դերը նշված համատեքստում՝ հոդվածում անդրադարձ է կատարվել օպտիմալ արժութային գոտիների ձևավորման առանձնահատկություններին, ինչպես նաև երկրների՝ դրանց միանալու դրդապատճառներին և առաջնահերթություններին:

Բանալի բառեր՝ արժութային գոտի, օպտիմալություն, միասնական արժույթ, արժութային քաղաքականություն, ընդհանուր արժութային տարածք, համաշխարհային արժութային համակարգ:

М.Авагян

ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ФОРМИРОВАНИЯ ОПТИМАЛЬНЫХ ВАЛЮТНЫХ ЗОН

Периодически вспыхивающие в последние десятилетия финансово-экономические кризисы, ставшие одной из современных особенностей развития мировой экономики, вынуждают проводить определенные реформы в международной валютно-финансовой системе с целью стабилизации этой сферы и максимального недопущения в будущем кризисные ситуации, насколько это возможно. В этом смысле одним из возможных способов обеспечения валютной дисциплины является валютная интеграция как важный, но не обязательный процесс экономической интеграции, одной из форм которого является формирование валютных зон. Несмотря на это, не все региональные экономические интеграционные группировки, действующие в настоящее время в мире, перешли к стадии валютной интеграции, так как она требует обеспечения ряда экономических предпосылок и условий со стороны стран-участниц, частичного отказа от валютно-финансового суверенитета. Принимая во внимание роль валютных зон в указанном контексте, в статье рассматриваются особенности формирования оптимальных валютных зон, а также мотивы и приоритеты стран по присоединению к ним.

Ключевые слова:. *валютная зона, оптимальность, единая валюта, валютная политика, единая валютная зона, мировая валютная система.*

M.Avagyan

EXPEDIENCY OF FORMING OPTIMAL CURRENCY AREAS

The financial and economic crises having been periodically erupted in recent decades, which have become one of the modern features of the development of the world economy, force the implementation of certain reforms in the international monetary and financial system in order to stabilize that field and avoid future crisis situations as much as possible. In that sense, one of the possible ways to ensure currency discipline is monetary integration, as an important but not mandatory process of economic integration, one of the forms of which is the formation of currency areas. Despite this, not all regional economic integration groups currently operating in the world have transitioned to the currency integration stage, as it requires the provision of a number of economic prerequisites and conditions by the member countries, partial renunciation of monetary and financial sovereignty. Taking into account the role of currency areas in the mentioned context, the article refers to the features of the formation of optimum currency areas, as well as the motivations and priorities of countries to join them.

Key words: *currency area, optimality, single currency, monetary policy, common monetary area, world monetary system.*

Ներկայումս աշխարհում գործում են մի շարք արժութային ինտեգրացիոն խմբավորումներ, որոնց փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել վերջիններիս օգուտներն ու վնասները այլ երկրների հնարավոր արժութային ինտեգրման նպատակահարմարությունը դիտարկելու նպատակով: Ընդհանուր տնտեսական ինտեգրման գործընթացների զարգացմանը զուգընթաց՝ արժութաֆինանսական ինտեգրման ձևերն ու մեթոդներն աստիճանաբար դառնում են առավել խթրին և բազմազան, որոնց շրջանակներում արժութային ինտեգրման ճիշտ

և արդյունավետ ձևի ընտրությունը պահանջում է դրանց խորը վերլուծություն: Հաշվի առնելով, որ ցանկացած արժութային ինտեգրման հիմքում ընկած է դրա օպտիմալության ապահովման անհրաժեշտությունը, որը լավագույնս արտահայտվում է օպտիմալ արժութային գոտիների մեջ՝ ներկայացնենք վերջիններիս էությունը և ձևավորման հիմնական անհրաժեշտ պայմանները:

Արժութային գոտու սահմանումների բազմազանության հիմքում ընկած են դրա օպտիմալության վերաբերյալ բազմաթիվ գիտնականների կողմից ներկայացված չափանիշները, որոնք միմյանց թե՛ լրացնում և թե՛ երբեմն հակասում են: Համաձայն Մ. Քավայիի՝ «օպտիմալություն» ասելով՝ նկատի է առնվում ներքին հավասարակշռության (գնաճի և գործազրկության օպտիմալ հարաբերակցություն) և արտաքին հավասարակշռության (վճարային հաշվեկշռի հավասարակշռում) ապահովում[1], ինչը նշանակում է, որ օպտիմալության ապահովման շնորհիվ ներքին և արտաքին շոկերի առկայության դեպքում երկրների դրամական իշխանությունների կողմից արժութային շուկայում միջամտություն իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանում: Ըստ Փ. Քենենի՝ եթե փոխարժեքի ընտրված ռեժիմը (ֆիքսված կամ լողացող) նպաստում է արտաքին հավասարակշռության ապահովմանը՝ չառաջացնելով գործազրկություն, ապա այդ ռեժիմը համարվում է օպտիմալ[2]: Ի դեպ, Ա. Քոլմենը գտնում է, որ արժութային ճկունությունը օգտակար է այնպիսի իրավիճակներում, երբ շոկերը կրում են տարածաշրջանային բնույթ, դրանց հարմարվելու այլընտրանքային մեխանիզմները թույլ են, և փոխարժեքային փոփոխությունները հանդիսանում են յուրահատուկ շոկերը մեղմելու արդյունավետ միջոց[3]:

«Օպտիմալ արժութային գոտի» հասկացությունն առաջինն առաջ քաշեց Ռ. Մանդելը՝ այն ներկայացնելով որպես միասնական արժույթի օգտագործմամբ կամ ազգային արժույթների միջև ֆիքսված պարիտետի և փոխարժեքի ռեժիմի պայմաններին առավելապես հարմարեցված երկրների միավորում: Նա արժութային տարածքը բնորոշում է որպես տիրույթ (դոմեն), որի շրջանակներում փոխարժեքները միմյանց նկատմամբ ֆիքսված են, իսկ դոմենից դուրս գտնվող արժույթների նկատմամբ ներքին արժույթները

---

[1] *Տե՛ս՝* ***Kawai M.,*** *"Optimum Currency Areas." In Eatwell, J./Milgate, M./Newman, P. (Hg.): The World of Economics. London: Macmillan, S., 1991, p. 526.*

[2] *Տե՛ս՝* ***Kenen P.B.,*** *The Theory of Optimum Currency Areas: Area: An Eclectic View // Monetary Problems of the International Economy / ed. by R.A. Mundell, A.K. Swoboda. Chicago: University of Chicago Press, 1969, p. 41.*

[3] *Տե՛ս՝* ***Coleman A.,*** *"Economic Integration and Monetary Union". New Zealand Treasury Working Paper, No. 99/06, 1999, p. 18.*

պահպանում են ճկուն փոխարժեքի ռեժիմ՝ միաժամանակ եզրակացնելով, որ գների և աշխատավարձերի ճկուն մակարդակները կարող են ապահովել արժութային գոտիների հաջող գործունեությունը որպես ֆիքսված ներքին փոխարժեքներով գործող տարածք[1]: Ըստ Ռ. Մանդելի՝ արժութային գոտին համարվում է օպտիմալ, եթե բաց տնտեսությունում գոտու անդամ յուրաքանչյուր երկրում պահպանվում է ներքին և արտաքին մակրոտնտեսական հավասարակշռություն:

Օպտիմալ արժութային գոտիների վերաբերյալ այլ հեղինակների կողմից ներկայացված մեկնաբանությունները հիմնականում հիմնվում են դրանց կիրառական առանձնահատկությունների վրա: Այսպես, ըստ Փ. Կրուգմանի և Մ. Օբստֆելդի՝ օպտիմալ արժութային գոտին իրենից ներկայացնում է տարածաշրջանի տնտեսությունների խումբ, որոնք միմյանց հետ կապված են՝ շնորհիվ ապրանքների և ծառայությունների առևտրի, ինչպես նաև արտադրության գործոնների տեղաշարժի[2]:

Ա. Կիրեևը օպտիմալ արժութային տարածքը սահմանում է որպես սահմանափակ թվով երկրների կողմից միմյանց նկատմամբ ֆիքսված արժութային փոխարժեքի ամրակցում՝ մնացած երկրների հետ լողացող փոխարժեքի պահպանման պայմաններում: Համարվում է, որ որքան ավելի ամուր է տնտեսական ինտեգրումը, այնքան բարձր պետք է լինի արժութային փոխարժեքների ֆիքսման աստիճանը[3]:

Ըստ Վ.Գ. Չապլիգինի՝ «արժութային գոտի» հասկացության ներքո պետք է նկատի ունենալ որևէ արժույթի տիրապետման գոտի, որն ի վիճակի է տվյալ գոտու ամբողջ տարածքում կատարել փողի բոլոր գործառույթները[4]:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ օպտիմալ արժութային գոտին աշխարհագրական տարածք է, որի շրջանակներում վճարման ընդհանուր միջոցը հանդիսանում է միասնական արժույթ կամ արժույթների խումբ, որոնց փոխարժեքները մշտապես կապակցված են միմյանց հետ և հետևողականորեն փոփոխվում են երրորդ երկրների արժույթների նկատմամբ: Աշխարհագրական տարածքի սահմանները որոշվում են արժութային միությանը մասնակցող պետությունների սահմաններով[5]:

---

[1] *Տե՛ս՝* ***Mundell R.A.,*** *A Theory of Optimum Currency Areas // American Economic Review. Vol. 51, Issue 4, 1961, p. 657.*

[2] *Տե՛ս՝ Кругман П.Р., Обстфельд М., «Международная экономика. Теория и политика». Учебник. 5-е изд. СПб.: Питер, Изд-во: «Экономический факультет МГУ, ЮНИТИ», 2004, с. 694.*

[3] *Տե՛ս՝* ***Киреев А.,*** *Международна экономика. Часть 2-я: Международная макроэкономика: открытая экономика и макроэкономическое программирование. М.: «Международные отношения», 2003, с. 53.*

[4] *Տե՛ս՝* ***Чаплыгин В.Г.,*** *Генезис валютно-финансовой интеграции // Вестник Оренбургского государственного университета, 2003, N 6. с. 132.*

[5] *Տե՛ս՝* ***Сибирская А.,*** *Методологические аспекты валютной интеграции // Беларуская думка, 2014, N 10, с. 72.*

Ըստ Ա.Վ. Զախարովի՝ «օպտիմալ արժութային տարածք» ասելով՝ հասկացվում է պետությունների խումբ, որոնք պայմանավորվել են վարել համաձայնեցված փոխարժեքային քաղաքականություն՝ ազգային արժույթների փոխարժեքների փոխադարձ տատանումները սահմանափակելու նպատակով: Այս քաղաքականությունն ուղղված է փոխադարձ առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացմանը, երկրների միջև կապիտալի շարժի խթանմանը, տնտեսական զարգացման ապահովմանը: Նրա կարծիքով, միասնական արժութային տարածքը զգալիորեն տարբերվում է միասնական արժույթ ունեցող արժութային միությունից: Ըստ նրա՝ արժութային միության համեմատ՝ միասնական արժութային տարածքը շատ ավելի ճկուն է, ավելի հեշտ է դրա ձևավորումը, որի համար պահանջում են ավելի քիչ նախապայմաններ: Միասնական արժութային տարածքի շրջանակներում, նախևառաջ, միաժամանակ գործում են մի քանի ուժեղ արժութային կենտրոններ, որոնք իրենց գործունեությունը կոորդինացնում են միմյանց հետ, և, երկրորդ, մշակվում են ճգնաժամային երևույթների վերացմանն ուղղված համատեղ մեխանիզմներ և ծրագրեր, որոնք ընդհանուր են այդ տարածքում ընդգրկված բոլոր երկրների համար: Այդ մեխանիզմի շնորհիվ մասնակից պետությունները հնարավորություն են ստանում միասնաբար դիմակայել արտաքին պատճառներով առաջացած ֆինանսական ճգնաժամերին: Եվ երրորդ, միասնական արժութային տարածքի շրջանակներում տեղի է ունենում արժույթի առևտրային համակարգերի մոտարկում, ինչը թույլ է տալիս զգալիորեն բարելավել փոխադարձ առևտրի զարգացման պայմանները[1]:

Օպտիմալ արժութային գոտու վերաբերյալ ևս մեկ սահմանման համաձայն՝ այն տարածք է՝ կազմված մի քանի երկրներից կամ դրանց առանձին մասերից, որի համար ազգային արժույթների կոշտ ֆիքսված փոխարժեքների կիրառումը կամ միասնական հավաքական արժույթի օգտագործումը համարվում է տնտեսապես արդյունավետ (օպտիմալ)[2]:

Ըստ Ռ. Մակքիննոնի՝ «օպտիմալ արժութային գոտի» հասկացության ներքո նկատի է առնվում միասնական արժույթ ունեցող գոտի, որի տարածքում իրականացվող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը և արտաքին (երրորդ երկրի) արժույթի նկատմամբ

---

[1] *Տե՛ս՝* ***Захаров А.В.,*** *О концепции единого валютного пространства СНГ. М.: ЗАО «Юридический Дом «Юстицинформ»», 2002, сс. 13-15.*

[2] *Տե՛ս՝* ***Ляменков А.К., Ляменков Е.А.,*** *Теория оптимальных валютных зон как основа анализа современных экономических проблем периферийных стран Евросоюза // Международный научный журнал «Символ науки», 2015, N 12/2015, с. 130.*

լողացող փոխարժեքը թույլ են տալիս լավագույնս հասնել հետևյալ երեք (հնարավոր է՝ նույնիսկ միմյանց հակասող) նպատակներին.

1.լրիվ զբաղվածության պահպանում,

2.վճարային հաշվեկշռի հավասարակշռության պահպանում,

3.ներքին գների կայուն մակարդակների պահպանում[1]:

Այսպիսով, տարբեր հեղինակների կողմից «օպտիմալ արժութային գոտի» հասկացության վերաբերյալ տրված սահմանումներում առկա է այն ընդհանրական մոտեցումը, ըստ որի՝ այն տարածք է, որտեղ օգտագործվող վճարային միջոցը միասնական արժույթն է կամ տվյալ տարածքում գործող ազգային արժույթների խումբը, որի շրջանակներում վերջիններիս փոխարժեքները միմյանց նկատմամբ փոխադարձաբար ֆիքսված են, իսկ երրորդ երկրների նկատմամբ՝ լողացող:

Ջ. Ֆրանկելի համոզմամբ, օպտիմալ արժութային գոտի ձևավորելու հավանականությունը մեծ է այն երկրների միջև, որոնք առևտրի և տնտեսական այլ հարաբերությունների առումով ունեն միմյանց հետ ինտեգրման բարձր մակարդակ: Ըստ նրա՝ օպտիմալ արժութային գոտին այն տարածքն է, որտեղ սեփական արժույթ և արժութային քաղաքականություն ունենալը համարվում է օպտիմալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքր միավորները (երկրները) իրենց հարևանների հետ հակված են լինել ավելի բաց և ինտեգրված՝ տնտեսագետն առաջարկում է օպտիմալ արժութային գոտին սահմանել որպես տարածաշրջան, որն այդքան էլ փոքր և բաց չէ, որպեսզի վերջինիս համար ավելի նախընտրելի լինի սեփական արժույթի կապակցումը հարևան միավորի (երկրի) արժույթի հետ, ոչ էլ այնքան մեծ, որպեսզի նախընտրելի լինի գոտու մասնատումը տարբեր արժույթներ ունեցող առանձին ենթատարածաշրջանների միջև: Վերջինս նա հիմնավորում է կատարված գրավիտացիոն գնահատումներով, որոնց արդյունքները ցույց են տալիս, որ երկրի տնտեսության չափի յուրաքանչյուր մեկ տոկոս աճը հանգեցնում է ՀՆԱ-ի նկատմամբ առևտրի հարաբերակցության մոտ երեք տոկոսով նվազմանը[2]:

Համաշխարհային փորձը թույլ է տալիս առանձնացնել արժութային գոտիների հետևյալ հիմնական հինգ ձևերը.

1.անկախ պետությունների միջև փոխադարձ համաձայնություն՝ այդ պետություններից յուրաքանչյուրի տարածքում ազգային դրամական միավորները որպես զուգահեռ վճարային միջոցներ օգտագործելու վերաբերյալ,

---

[1] *Տե՛ս՝* ***McKinnon R.I.,*** *Optimum Currency Areas // American Economic Review. 1963, Vol. 53, p. 717.*

[2] *Տե՛ս՝* ***Frankel J.A.,*** *"No Single Currency Regime is Right for All Countries or at All Times", NBER working paper series, Cambridge, Working Paper 7338, September 1999, p. 14.*

2.անկախ պետությունների միջև փոխադարձ համաձայնություն՝ վերջիններից որևէ մեկի դրամական միավորին անցում կատարելու վերաբերյալ,

3.հավաքական հաշվարկային միավորի ներդրում, որը գործում է անդամ պետությունների ազգային արժույթներին զուգահեռ,

4.տնտեսական և արժութային միության ձևավորում՝ միասնական արժույթով, որը փոխարինում է անդամ պետությունների ազգային դրամական միավորներին,

5.պետությունների միակողմանի որոշում՝ ազգային դրամական միավորը այլ պետության արժույթով փոխարինելու վերաբերյալ[1]:

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում արժութային գոտու ստեղծումը կարող է նպատակահարմար լինել, եթե երկրներն իրենց առջև դնում են հետևյալ նպատակները.

· ազգային արժույթի թողարկման և պահպանման հետ կապված ծախսերի կրճատում,

· արժութային գոտու շրջանակներում սահմանված գնաճի մակարդակի ապահովում,

· դրամավարկային և հարկաբյուջետային կարգապահության աջակցման ավտոմատ մեխանիզմի զարգացում,

· գործընկեր երկրների հետ առևտրում տրանսակցիոն ծախքերի կրճատում,

· արժութաֆինանսական ճգնաժամերի բացասական հետևանքների նվազեցում՝ գոտու մասնակից երկրների միջև ռիսկերի բաշխման միջոցով,

· արժութային գոտու ֆինանսական շուկայում առավել ակտիվ և իրավահավասար մասնակցություն ունենալու հնարավորության ստացում,

· արժութային գոտու անդամ երկրների միջև ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացում:

Ըստ Վ. Չապլիգինի՝ միասնական արժույթի գործողության մեխանիզմների կիրառման հնարավորության մասին խոսելիս նկատի է առնվում հենց օպտիմալ արժութային գոտու ստեղծումը, որը նախատեսում է դրա մասնակիցների կողմից մի շարք հիմնարար կոնվերգենցիոն սկզբունքների պահպանում: Այդ է պատճառը, որ ի սկզբանե գիտնականների ուշադրությունը կենտրոնացած էր տնտեսական կոնվերգենցիաների պարամետրերի կարգավորման և կառավարման մեթոդաբանության մշակման վրա, ինչը հետագայում արտացոլվել է տնտեսական կոնվերգենցիայի կոնկրետ մեծություններն ու ապահովման ժամկետներն

---

[1] Տե՛ս՝ **Буторина О.В.,** *Закономерности валютно-финансовой интеграции: мировой опыт и СНГ // Деньги и кредит, 2005, N 8, с. 45.*

ամրագրող մի շարք հիմնարար փաստաթղթերում (ԳԴՀ և ԳՖՀ դրամական համակարգերի միավորման մասին պայմանագիր, Մաաստրիխտյան պայմանագիր, Արժութային կայունության գոտու ստեղծման մասին Կարիբյան պետությունների պայմանագիր, Ռուսաստանի և Բելառուսի դրամական համակարգերի միավորման մասին պայմանագիր և այլն)[1]:

Ընդհանրացնելով օպտիմալ արժութային գոտիների տեսությունների վերջին ձեռքբերումները և կիրառելով դրանց հիմնական չափանիշներն ու այլ բնութագրիչները՝ Ռ. Մանդելը 1996թ. մատնանշել է օպտիմալ արժութային գոտիներին կամ արժութային միությանը երկրների անդամակցության «կողմ» և «դեմ» երկու խումբ փաստարկներ, որոնք գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում տնտեսական և արժութային ինտեգրման գործընթացներին համահունչ քաղաքականություն վարող պետությունների համար: Ըստ նրա՝ արժութային միությանն անդամակցող թեկնածու երկրի համար շահավետ կլինի կայացնել օպտիմալ արժութային գոտուն միանալու որոշում, եթե վերջինս ցանկանում է.

· հասնել գոտու գնաճային մակարդակին,

· կրճատել հիմնական գործընկեր երկրների հետ առևտրի տրանսակցիոն ծախսերը,

· բացառել ազգային արժույթի պահպանման և դրա թողարկման հետ կապված ծախսերը,

· մասնակցել գոտում գնողունակության պարիտետին,

· վերացնել ազգային դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության շրջանակներում իրականացվող կամայականությունները,

· ստեղծել դրամավարկային և հարկաբյուջետային կարգապահության ավտոմատ մեխանիզմ,

· ձևավորել քաղաքական «խարիսխ» բարեպաստ սպասումների համար,

· պաշտպանել փոխարժեքը կողմնակի ազդեցություններից,

· միավորել միջազգային պահուստները ճգնաժամային իրավիճակների դեպքում,

· հասնել հավասարության միության ֆինանսական կենտրոնի և կապիտալի շուկայի գործունեության շրջանակներում,

· ձեռք բերել ինտեգրման կատալիզատոր,

· ստեղծել գերտերությունների գերակայությունները հավասարակշռող դաշինք,

---

[1] *Տե՛ս՝* ***Чаплыгин В.Г.,*** *Общетеоретические аспекты валютно-финансовой интеграции // Экономическая наука современной России, 2004, N 1, с. 62.*

· ազդեցություն ունենալ արժութային գոտում գնաճի մակարդակի որոշման վրա,

· մասնակցություն ունենալ նոր համաշխարհային ռեզերվային արժույթի ձևավորման գործընթացին,

· անդամակցել առևտրի պայմանների վրա ազդող տնտեսական դաշինքներին,

· մասնակցել բարեփոխված համաշխարհային արժութային համակարգի վերականգնմանը:

Ըստ Ռ. Մանդելի՝ պայմանները, որոնց դեպքում երկրները պետք է հրաժարվեն ֆիքսված փոխարժեքի ռեժիմով գործող արժութային գոտուն անդամակցելուց, բխում են այդ երկրների հետևյալ ցանկություններից.

· ունենալ արժութային գոտում գործող գնաճի մակարդակից տարբերվող գնաճի մակարդակ,

· փոխարժեքն օգտագործել որպես զբաղվածության քաղաքականության գործիք՝ աշխատավարձի մակարդակը մանիպուլյացիայի ենթարկելու համար,

· օգտագործել իրենց առավել կայուն ազգային արժույթը՝ այլ երկրներից մտավոր և աշխատանքային ռեսուրսների ներգրավման համար,

· թույլ չտալ ազգային մակրոտնտեսական քաղաքականության պայմանների վատթարացում՝ թույլ արժույթ ունեցող երկրների հաշվին արժութային գոտու ընդլայնման պատճառով,

· օգտագործել դրամական էքսպանսիան և գնաճային հարկը՝ պետական ծախսերը ֆինանսավորելու համար,

· օգտագործել ներքին սենյորաժը՝ իրական պետական ծախսերի ծածկման և ծախսերի արտաբյուջետային ֆինանսավորման համար,

· չզոհաբերել սեփական արժույթը՝ որպես համաշխարհային կամ տարածաշրջանային ռեզերվային արժույթ օգտագործելու արտաքին սենյորաժ,

· պահպանել դրամավարկային քաղաքականության ոլորտի ազգային ինքնիշխանությունը,

· պահպանել ազգային արժույթի արժեքը՝ բնակչության մեկ շնչին ընկնող իրական եկամտի մակարդակին համապատասխան,

· չանդամակցել անկայուն գործընկերներ ունեցող միությանը,

· խուսափել միության առավել աղքատ գործընկեր երկրների օգտին իրականացվող համահարթեցման վճարումների անհրաժեշտությունից[1]:

---

[1] *Տե՛ս՝* ***Каллаур П.В.,*** *Оптимальные валютные зоны: теоретический аспект // Веснік Беларускага дзяржаунага эканамічнага універсітэта, 2001, N 2, сс. 10-11.*

Այսպիսով, արժութային գոտիների ձևավորումը երկարատև և բարդ գործընթաց է՝ պայմանավորված ինտեգրվող երկրների օպտիմալության չափանիշների ապահովման անհրաժեշտությամբ: Այն, ընդհանուր առմամբ, նպաստում է արժութային գոտու մասնակից երկրների զարգացմանը, սակայն չի հանդիսանում վերջիններիս երկարաժամկետ տնտեսական կայունության երաշխիք՝ կապված երկրների՝ արժութային ինտեգրումից ակնկալվող հետաքրքրությունների և շահերի միջև տարբերությունների առկայության, ոչ արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականության իրականացման, արտաքին տնտեսական և քաղաքական անբարենպաստ գործոնների հնարավոր առաջացման հետ: Միաժամանակ արդյունավետ գործող արժութային միավորումները կարող են հիմնաքար հանդիսանալ նոր արժութաֆինանսական համակարգի ստեղծման գործում՝ հանգեցնելով միջազգային մասշտաբով ֆինանսական անհաշվեկշռվածությունների վերացմանը և գլոբալ տնտեսական կայունության ապահովմանը:

Նյութը ներկայացվել է 12.05.2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 303

Տնտեսագիտություն

Յանա ԼԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի հայցորդ
E-mail: yanul-1983@mail.ru

2020 Թ. ԱՀ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են 2020թ. Արցախի 44-օրյա պատերազմի ընթացքում հայ բնակչության դեմ գործած աղրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիայի հետևանքով առաջացած վնասներն ու կորուստները: Ուսումնասիրվել և վեր են լուծվել տարհանված ընտանիքների բնակության վայրը, կենսամակարդակը, կրթական մակարդակը, եկամտի աղբյուրները: Տարհանված բնակչության բարեկեցության հիմնախնդիրներին զուգահեռ, ուսումնասիրվել են նաև Արցախի Հանրապետության առաջ ծառացած նոր լրջագույն խնդիրները և ավելացած սոցիալական բեռը, որը կապված է Արցախի շրջափակման հետ: Արցախի ճանապարհների արգելափակումը իր բացասական ազդեցությունն է թողել շինարարության, տարբեր ոլորտների բիզնեսների, հազարավոր քաղաքացիների գործազրկության վրա: Հոդվածի վերջում տրվել են առաջարկություններ՝ առկա իրավիճակի բարելավման, տեղահանված ընտանիքների և անհատների անմիջական կարիքների բավարարման, սննդի, հագուստի և ապաստանի տրամադրման, մասնագիտական վերապատրաստման, աշխատանքի տեղավորման և երեխաներին աջակցություն տրամադրելու, իրավական պաշտպանության և տեղահանման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման ուղղությամբ:

Բանալի բառեր՝ *տարհանված ընտանիքներ, սոցիալական խնդիրներ, բնակության վայր, կենսամակարդակ, եկամտի*

աղբյուր, աջակցություն, վնասների փոխհատուցում, իրավական պաշտպանություն:

В статье представлен 2020 год. Во время 44-дневной войны в Арцахе азербайджано-турецкая военная агрессия против армянского населения и связанные с этим разрушения и потери. Были изучены и проанализированы место жительства, уровень жизни, уровень образования, источники дохода эвакуированных семей. Наряду с вопросами благосостояния эвакуированного населения были изучены также новые серьезнейшие проблемы, стоящие перед Республикой Арцах, и возросшее социальное бремя, связанное с блокадой Арцаха. Блокирование арцахских дорог негативно сказалось на строительстве, бизнесе в различных сферах, безработице тысяч граждан. В конце статьи были даны рекомендации по улучшению сложившейся ситуации, удовлетворению насущных потребностей перемещенных семей и отдельных лиц, обеспечению продовольствием, одеждой и жильем, профессиональной подготовке, трудоустройству и поддержке детей, правовой защите и возмещению ущерба. ***Ключевые слова:*** *азербайджано-турецкая военная агрессия, эвакуированные семьи, место жительства, уровень жизни, источник дохода, поддержка, возмещение ущерба, правовая защита.*

In the article presented in 2020. During the 44-day war in Artsakh, the Azerbaijani-Turkish military aggression against the Armenian population and related destruction and losses. Place of residence, level of life, level of education, sources of income of evacuated families were studied and analyzed. Along with the issues of the well-being of the evacuated population, the most serious new problems facing the Republic of Artsakh and the increased social burden associated with the blockade of Artsakh were also studied. The blocking of Artsakh roads had a negative impact on construction, business in various fields, and the unemployment of thousands of citizens. At the end of the article, recommendations were made to improve the current situation, meet the urgent needs of displaced families and individuals, provide food, clothing and housing, vocational training, employment and support for children, legal protection and redress.

Key words: *Azerbaijani-Turkish military aggression, evacuated families, place of residence, standard of living, source of income, support, compensation for damage, legal protection.*

2020 թ. ադրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիան և Հայաստանի իշխանությունների կապիտուլյացիան Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության համար ունեցան աղետալի հետևանքներ՝ հազարավոր զոհեր ու գերիներ, տասնյակ հազարավոր վիրավորներ, նյութական ու բարոյահոգեբանական ահռելի կորուստներ, «Լեռնային Ղարաբաղի հարակից» բոլոր տարածքների կորուստ, Լեռնային Ղարաբաղի Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի շրջանների հատվածների, Շուշի և Հադրութ քաղաքների կորուստ, հայկական բանակի ջախջախում, Հայաստանի Հանրապետության մի շարք սահմանամերձ տարածքների վերաձևում՝ ի նպաստ Ադրբեջանի, դաշնակից պետությունների հետ հարաբերությունների կտրուկ վատթարացում և անհուսալի ու անպատասխանատու գործընկերոջ համբավի վաստակում:

Տարածքի բնակչության ավելի քան 60%-ը՝ տասնյակ հազարավոր մարդիկ, տարհանվել էին իրենց տներից:

Արցախում մեծաթիվ քաղաքացիական ենթակառուցվածքներ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, բնակելի շենքեր, էլեկտրակայաններ և կապի ցանցեր, ենթարկվել էին բազմաթիվ հարվածների: Հազարավոր տներ վնասված կամ ավերված էին, բնակչությունը գտնվում էր ապաստարաններում:

Ակնհայտ է, որ թեև նման ահռելի կորուստների դեպքում դժվար է միմյանցից տարանջատել ներքին և արտաքին գործոնները, այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության առանցքային տեղը ծավալված իրադարձություններում առաջնային է դարձնում արտաքին հարաբերությունների ուսումնասիրությունը՝ հատկապես 2018 թվականի իշխանափոխությունից հետո, քանի որ այդ պատերազմից առաջ արդեն պարզ էր, որ կուտակվում են բազմաթիվ մարտահրավերներ, և թույլ են տրվում սկզբունքային սխալներ, որոնք վտանգում են հակամարտության կարգավորման գործընթացը: Սակայն ձախողումները չսահմանափակվեցին կարգավորման գործընթացով և անգամ պատերազմով: Պատերազմի արդյունքում կրած աղետալի կորուստները, որոնք ահագնանում են նաև հրադադարի հաստատումից հետո, հետագա զարգացումների հետ կապված անորոշություններն ու չարագուշակ ենթադրությունները պահանջում են գնահատել 2018թ. իշխանափոխությունից հետո Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու դրանց ազդեցությունն այդ պատերազմի արդյունքների և Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման վրա՝ խորացող աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում:

Ադրբեջանաթուրքական ագրեսիան կտրուկ մեծացրել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության սպառնալիքները, հայության առջև ծառացել են վերջին հարյուրամյակի համար աննախադեպ մարտահրավերներ: Կործանումից խուսափելու և չափազանց բարդ մարտահրավերները հաղթահարելու համար պահանջվում է վերարժևորել երեք տասնամյակի անկախության ընթացքում արձանագրված ձեռքբերումները, հաջողությունները, ձախողումներն ու սխալները, բացահայտել դրանց հիմքերն ու պատճառները[1]:

2020 թ. նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց Արցախում պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքների բնակիչներին աջակցություն տրամադրելու մասին:

Ադրբեջանական վերահսկողության տակ անցած համայնքների թիվը 121 է, որոնցից 52-ը Քաշաթաղի շրջանում են, 29-ը՝ Հադրութի շրջանում, 16-ը՝ Շահումյանի (Քարվաճառի) շրջանում, 8-ական Մարտակերտի և Ասկերանի շրջանում, 6-ը՝ Մարտունու շրջանում և 2-ը՝ Շուշիի շրջանում:

Այժմ Արցախում իր ուսումն է շարունակում 18 հազարից ավելի աշակերտ և 2 հազար նախադպրոցական տարիքի երեխա:

Վերլուծենք բնակչության զբաղվածության կարգավիճակը նախապատերազմական ու հետպատերազմական ժամանակաշրջանում:

Տարհանված ընտանիքների անդամների ներկայիս վիճակը գնահատելու համար, անհրաժեշտ է վերլուծել հետևյալ տվյալները.

1.Տարհանված ընտանիքների տնային տնտեսությունների անդամները՝ ըստ զբաղվածության կարգավիճակի և կրթական մակարդակի,

2.Տարհանված ընտանիքների տնային տնտեսությունների կենսամակարդակն ու եկամտի աղբյուրները,

3.Տարհանված ընտանիքների տնային տնտեսությունների բնակության վայրն ու բնակարանային պայմանները:

Տարհանված բնակչության գերակշիռ մասը վարձու աշխատողներ են, համապատասխանաբար, 48.1% և 35.6%, ընդ որում, այդ առումով ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Շահումյանի շրջանում՝ համապատասխանաբար՝ 57.8% և 43.4%, ամենացածր ցուցանիշը պատերազմից առաջ եղել է Մարտունու շրջանում՝ 34.8%, պատերազմից հետո՝ Ասկերանի շրջանում՝ 28.9%: Հարկ է նշել, որ տարհանված բնակչության միայն 4.75% էր մինչև պատերազմը գործազուրկ, պատերազմից հետո այդ ցուցանիշը ավելացել է 2.8 տոկոսային կետով (դիագրամ 1)[2] :

---

[1] Alfred de ZayaS, *թվիթերյան գրառում, հոկտեմբերի 3, 2020թ., https://twitter.com/alfreddezayas/status/13124005060699 62754?lang=en.*

[2] *https://www.luys.am ›*



Դիագր.1 Տարհանված ընտանիքների տնային տնտեսությունների անդամների բաշխվածությունը պատերազմից հետո՝ ըստ զբաղվածության կարգավիճակի՝ շրջաններով (%)[1]

Եթե համեմատելու լինենք տնային տնտեսությունների անդամների զբաղվածությունն ըստ տարեթվերի, ապա կարող ենք տեսնել, որ 2020 թ-ին զբաղվածների թիվը 2018թ-ի համեմատ նվազել է 10.6%-ով, իսկ 2019թ. համեմատ՝13.8%-ով (դիագրամ 2):



Դիագր.2 Տնային տնտեսությունների անդամների զբաղվածների թիվը մինչև հետպատերազմյան շրջանում

[1] *Զեկույց, տարհանված ընտանիքների կենսապայմանների հետազոտություն, էջ 9-11:*

ԱՎԾ-ի ընտրանքային հետազոտության արդյունքները փաստում են, որ հարցվողների 66.9 տոկոսը իր կենսամակարդակը գնահատում է միջին, 27,0 տոկոսը՝ ցածր, 3.4 տոկոսը՝ շատ ցածր և միայն 1.1 տոկոսն է համարում, որ իր կենսամակարդակը բարձր է: Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում ժամանակավոր բնակվող ընտանիքի 48.0 տոկոսն է իր կենսամակարդակը գնահատում ցածր և շատ ցածր (դիագրամ 3):[1]



Դիագր. 3 Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը ըստ բնակավայրի (%)

Ընդ որում, տարհանվածների 58.3 տոկոսի եկամուտները բավարարում են միայն սննդի համար, 31.7 տոկոսի եկամուտները՝ սննդի և այլ կարիքների համար, 9.5 տոկոսը հիմնական սնունդ գնելու համար պարտք են վերցնում, 0.4 տոկոսի եկամուտները լրիվ բավարարում են իրենց կարիքները հոգալու համար: Ընդ որում, գյուղաբնակ տնային տնտեսությունների 68.1 տոկոսի

[1] *ԱՀ վիճակագրության ծառայություն: Զեկույց 2022 թ. (էջ 25-26):*

եկամուտները բավարարում են միայն սննդի համար, իսկ 17.1 տոկոսի եկամուտները՝ սննդի և այլ կարիքների համար (դիագրամ 4):



Դիագր. 4 Տարհանված ընտանիքների ֆինանսական դրությունն ըստ բնակավայրի (%)

Ք. Ստեփանակերտում տարհանված ընտանիքների 98.7 տոկոսը ստացել է դրամական օգնություն, 47.9 տոկոսը՝ սնունդ, 28.8 տոկոսը՝ բնակարանի վարձավճարի փոխհատուցում, 6.9 տոկոսը՝ կենցաղային իրեր, 7.5 տոկոսը՝ կահույք:

Ասկերանի շրջան տարհանված ընտանիքների 94.1 տոկոսը ստացել է դրամական օգնություն, 61.2 տոկոսը՝ սնունդ, 53.8 տոկոսը՝ բնակարանի վարձավճարի փոխհատուցում, 72.5 տոկոսը՝ կենցաղային իրեր, 76.6 տոկոսը՝ կահույք:

Մարտակերտի շրջան տարհանված ընտանիքների 65.5 տոկոսը ստացել է դրամական օգնություն, 84.7 տոկոսը՝ սնունդ, 70.7 տոկոսը՝ բնակարանի վարձավճարի փոխհատուցում, 40.4 տոկոսը՝ կենցաղային իրեր, 30.2 տոկոսը՝ կահույք:

Մարտունու շրջան տարհանված ընտանիքների 87.1 տոկոսը ստացել է դրամական օգնություն, 88.6 տոկոսը՝ սնունդ, 56.4 տոկոսը՝ բնակարանի վարձավճարի փոխհատուցում, 56.5 տոկոսը՝ կենցաղային իրեր, 47.9 տոկոսը՝ կահույք (դիագրամ 5):



Դիագր.5 Տարհանված ընտանիքներն ըստ ստացած օգնության ձևի, շրջաններով (%)

Դրամական օգնություն ստացած տնային տնտեսությունների 85.7 տոկոսը պետության ուշադրությունը գնահատել է բավարար, 12.7 տոկոսը՝ անբավարար:

Հետազոտությունում ընդգրկված տնային տնտեսությունների անդամների 35.2% ունի միջնակարգ, 19.1 տոկոսը՝բարձրագույն, 12.2 տոկոսը՝ միջին մասնագիտական, 10.3 տոկոսը՝ հիմնական կրթություն (դիագրամ 6):



Դիագր.6 Տարհանված տնային տնտեսությունների անդամների բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի՝ շրջաններով (%)

Տարհանված տնային տնտեսությունների 56,0 տոկոսը մնացել է Արցախում, 44,0 տոկոսը տեղափոխվել է ՀՀ, ընդ որում, եթե Արցախում

մնացած տնտեսությունների կեսից ավելին տեղակայվել են գյուղական բնակավայրերում, ապա ՀՀ-ում տնային տնտեսությունները գլխավորապես տեղակայվել են քաղաքային բնակավայրերում (79,6 տոկոսը): Ասկերանի և Մարտունու շրջանի տարհանված ընտանիքները լրիվությամբ, Մարտակերտի և Շուշիի շրջանները՝ մեծամասնությամբ մնացել են Արցախում, պատկերը լրիվ հակառակն է Քաշաթաղի շրջանում (դիագրամ 7):



Դիագր.7 Տարհանված ընտանիքները ըստ ներկա բնակության վայրի(%)

Ներկա ժամանակաշրջանում լուրջ խնդիր է նաև բնակարանային ֆոնդի հարցը: Այժմ շինարարական մեծ աշխատանքներ են տարվում արտագաղթած ընտանիքներին բնակարանով ապահովման համար:

Ստորև ներկայացված է 2016-2021թթ. կառուցված բնակարանների թիվ (դիագրամ 8):



Դիագր. 8 2016-2021թթ. կառուցված բնակարանների թիվը

Տարհանված բնակչության բարեկեցության հիմնախնդիրներին զուգահեռ, Արցախի շրջափակումը լրջագույն նոր խնդիրների առաջ կանգնեցրեց Արցախի Հանրապետությանը, և ավելացավ սոցիալական բեռը: Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին ու աշխարհին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքն արգելափակելու հետևանքով 100 օրվա հաշվարկով՝ Հանրապետության ընդհանուր ֆինանսատնտեսական կորուստները կազմում են օրական նվազագույնը 651 մլն դրամ կամ 1.6 մլն դոլար՝ առանց բարեկեցության կորստի, զուտ միայն սոցիալ-տնտեսական կորուստների գնահատականն է՝ մեկ օրվա համար, որի մեջ մտնում է հարկերի կորուստը՝ շուրջ 81 մլն դրամի չափով, և առաջնային սոցիալական ծախսերը՝ 36.3 մլն դրամով: Եթե բարեկեցությունն էլ հաշվի ենք առնում, ապա ստացվում է 1.9 մլն դոլար յուրաքանչյուր օր՝ առանց գնահատելու պոտենցիալի կորուստը, բուֆերների համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման մեծությունը:

Ընդհանուր առմամբ, շրջափակման հետևանքով 100 օրվա հաշվարկով Արցախին պատճառվել է շուրջ 165 մլն դոլարի չափով տնտեսական վնաս, երբ գնահատվում են սոցիալ-տնտեսական կորուստները, և շուրջ 190 մլն-ի չափով, երբ գնահատվում է նաև բարեկեցության կորուստը[1]:

Նշենք նաև, որ եթե շրջափակումը շարունակվի, ապա անվերադարձ կխաթարվի գործարար միջավայրի գործունեությունը, իսկ միջինում կարող է առաջանալ շուրջ 16.2 հազար գործազուրկների առկայություն: Կառավարության համար առաջանում է ևս մեկ բեռ: Քանի որ 1 գործազուրկի համար 68 հազար դրամ նպաստ տրամադրելու դեպքում պետական բյուջեի համար առաջանում է օրական շուրջ 36.3 մլն դրամի կամ 92 հազար դոլարի լրացուցիչ ծախս: Միայն հանքարդյունաբերության ոլորտում Կաշենի հանքավայրի շահագործման դադարեցումը, հանգեցրել է ավելի քան 1800 աշխատողների գործազրկությանը: Այս ամենը համադրելով երկրում գրանցված ինֆլյացիայի մակարդակի հետ՝ առաջ է մղվում բնակչության կենսամակարդակի վատթարացման գրանցում: ՀՀ-ից ապրանքների ներմուծման դադարեցմամբ պայմանավորված՝ հարյուրավոր ձեռնարկատերեր դադարեցրել են իրականացվող գործունեությունը և զրկվել եկամտի աղբյուրից: Արցախի ճանապարհների արգելափակումը հանգեցրել է դրսից ժամանող զբոսաշրջիկների բացակայությանը, ինչն էլ նպաստեց հյուրանոցային բիզնեսի տապալմանը: Պակաս վնասներ չի կրում նաև ռեստորանային բիզնեսը՝ պայմանավորված սննդի բացակայությամբ: Ինչ վերաբերում է շինարարությանը, ապա ոլորտում աշխատանքների

---

[1] *Արամյան Վ., Շրջափակման հետևանքով Արցախի տնտեսության կորուստները գնահատման զեկույց:*

դադարեցման պատճառով գործազուրկ են դարձել հազարավոր քաղաքացիներ:

Հաշվի առնելով վերոնշյալը, կառավարությունը պետք է ավելի հետամուտ լինի՝ բնակչության վիճակը առավելագույն կայուն վիճակի հասցնելու նպատակին, ինչի համար առաջարկում ենք.

1.համագործակցելով և համակարգելով միջազգային գործընկերների և դոնորների հետ՝ ապահովել տեղահանված ընտանիքների և անհատների անմիջական կարիքների բավարարումը, այդ թվում՝ սննդի, հագուստի և ապաստանի տրամադրումը, մշակել և իրականացնել վերաբնակեցման և ինտեգրման սոցիալական ծրագրեր, որոնք ընդգրկում են մասնագիտական վերապատրաստում, աշխատանքի տեղավորում և աջակցություն երեխաներին:

2.աջակցելով տեղահանված անձանց՝ նրանց հասանելի դարձնել միջազգային և տարածաշրջանային իրավական մեխանիզմները, ինչպես օրինակ՝ ՄԻԵԴ-ը, իրավական պաշտպանության և տեղահանման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման նպատակով:

Գրականություն

1. ԱՀ վիճակագրության ծառայություն: Զեկույց 2022թ.:
2. Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում /փաստահավաք զեկույց/ Եր., 2022:
3. https://www.luys.am ›
4. Արամյան Վ., Շրջափակման հետևանքով Արցախի տնտեսության կորուստները գնահատման զեկույց:

Նյութը ներկայացվել է 27.04.2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 311

Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.
E-mail: sargsyangohar16@asu.am

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԹՎԻ ԴԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1990 թվականին ՄԱԿ-ը սոցիալական գործընթացներն ուսումնասիրելու, տարբեր երկրների մարդկային զարգացման ճշգրիտ պատկերը ստանալու համար առաջարկեց նոր ցուցանիշ՝ Մարդկային զարգացման համաթիվ: Մարդկային ներուժի զարգացման մասին առաջին զեկույցը 1990 թ. սկսվեց մի պարզ նախադրյալով, որով առաջնորդվեցին հետագա բոլոր զեկույցները. «Ազգի իրական հարստությունը մարդիկ են»: Հոդվածում ուսումնասիրվում է մարդկային զարգացման համաթվի դերը մարդկային զարգացման հայեցակարգում: Մարդկային զարգացման համաթիվն այս կամ այն երկրում մարդու կենսամակարդակը բնութագրող համապարփակ ցուցանիշ է, որով չափում են երկրի ձեռքբերումները առողջության, կրթության և նրա քաղաքացիների իրական եկամտի տեսանկյունից՝ երեք հիմնական ոլորտներում, որոնց համար գնահատվում են առանձին համաթվեր՝ կյանքի տևողության համաթիվ, կրթության համաթիվ, համախառն ազգային եկամտի համաթիվ: Հոդվածում ներկայացված է ցուցանիշի և դրա բաղադրիչ-համաթվերի հաշվարկման մեթոդաբանությունը, տրված են վերջիններիս նվազագույն և առավելագույն արժեքները, ինչպես նաև Մարդկային զարգացման համաթվի արժեքի մեկնաբանումը, ըստ որի՝ վերջնական վարկանիշում բոլոր երկրները

դասակարգվում են ՄԶՀ արժեքների հիման վրա և բաժանվում են չորս կատեգորիաների՝ ըստ ընդունված սանդղակի: Որքան մոտ է մարդկային զարգացման համաթվի արժեքը մեկին, այնքան բարձր է երկրում մարդկային զարգացման մակարդակը:

Բանալի բառեր՝ *մարդկային զարգացում, մարդկային զարգացման համաթիվ, կյանքի սպասվող տևողության համաթիվ, ուսման միջին տևողություն, ուսման սպասվող տևողություն, կրթության համաթիվ, համախառն ազգային եկամտի համաթիվ:*

Г. Саркисян

РОЛЬ ИНДЕКСА ЧЕЛОВЕЧЕСКОГО РАЗВИТИЯ В КОНЦЕПЦИИ РАЗВИТИЯ ЧЕЛОВЕКА И МЕТОДИКА ЕГО РАСЧЕТА

В 1990г. Организация Объединённых Наций для изучения социальных процессов и получения точной картины человеческого развития разных стран предложила новый показатель - индекс человеческого развития. Первый доклад о развитии человеческого потенциала в 1990 году начинался с простой предпосылки, которой руководствовались все последующие доклады: «Истинное богатство нации – это люди». В статье рассматривается роль индекса в концепции человеческого развития. Индекс человеческого развития измеряет достижения страны с точки зрения здоровья, образования и реального дохода ее граждан в трех основных областях, по которым оцениваются отдельные индексы: индекс ожидаемой продолжительности жизни, индекс образования, индекс валового национального дохода. В статье представлена методика расчета показателя и его составляющих индексов, даны минимальные и максимальные значения последних, а также интерпретация значений Индекса человеческого развития, согласно которой в окончательном рейтинге все страны ранжируются на основе значений ИЧР и подразделяются на четыре категории в соответствии с принятой шкалой. Чем ближе значение Индекса человеческого развития к единице, тем выше уровень человеческого развития в стране.

Ключевые слова: *человеческое развитие, индекс человеческого развития, индекс ожидаемой продолжительности жизни, средняя продолжительность обучения, ожидаемая продолжительность обучения, индекс образования, индекс валового национального дохода.*

G. Sargsyan

THE ROLE OF THE HUMAN DEVELOPMENT INDEX IN THE CONCEPT OF HUMAN DEVELOPMENT AND ITS CALCULATION METHODOLOGY

In 1990, the UN proposed a new indicator, the Human Development Index, to study social processes and obtain an accurate picture of human development in different countries . The first Human Development Report in 1990 began with a simple premise that guided all subsequent reports: "The true wealth of the nation is people". The article examines the role of the Index in the concept of human development. The Human Development Index measures a country's achievements in terms of health, education and the real income of its citizens in three main areas by which individual indexes are evaluated: the Life Expectancy Index, the Education Index, and the Gross National Income Index. The article presents a methodology for calculating the Human Development Index and its index components, gives the minimum and maximum values of the index components, and provides an interpretation of the value of the Human Development Index, according to which in the final ranking all countries are ranked based on HDI values and are divided into four categories according to the adopted scale. The closer the value of the Human Development Index is to one, the higher the level of human development in the country.

Key words: *human development, human development index, life expectancy index, average duration of education, expected duration of education, education index, gross national income index.*

Մարդկային ներուժը, դրա արդյունավետ օգտագործման և զարգացման դեպքում, նորարարական աճի հիմնական գործոնն է: Նորարարական

տնտեսության մեջ տեղի է ունենում անհատականության հասարակական կառուցվածքի և որակի արմատական վերափոխում: Մարդու դերի փոփոխությունը, այն ծախսային գործոնից վերածելը հիմնական արտադրողական և սոցիալական գործոնի, հանգեցրեց նոր պարադիգմի ձևավորմանը՝ հիմնված մարդկային ներուժի ձևավորման և զարգացման տեսությունների վրա:

Մարդկային ներուժի ուսումնասիրության մոտեցումներն արտացոլվել են մի շարք հայեցակարգերում, մասնավորապես՝ Ա.Սենի «մարդկային զարգացման» հայեցակարգում[1], որը տնտեսական զարգացումը դիտարկում է մարդու գործառույթների և կարողությունների ընդլայնման, մարդկային ներուժի կուտակման և ընդլայնված սոցիալական վերարտադրության մեջ դրա օգտագործման միջոցով՝ ի շահ հասարակության յուրաքանչյուր անդամի: Տնտեսական աճը կարող է նպաստել մարդկային զարգացմանը՝ տնտեսության մեջ ռեսուրսների արդար բաշխման պայմաններում (առաջին հերթին կրթության, առողջապահության, անվտանգության, քաղաքական և քաղաքացիական իրավունքների ոլորտում), այսինքն՝ ոչ միայն պաշտպանական արդյունաբերության ոլորտներում և վարչական ապարատի պահպանմանն ուղղված, այլև սոցիալական ոլորտում բավարար և արդյունավետ պետական ներդրումներով:

Մարդկային զարգացման հայեցակարգի մշակմանը զուգահեռ (20-րդ դարի վերջին տասնամյակներ) խնդիր առաջացավ քանակապես գնահատել բնակչության կենսամակարդակը ամբողջ աշխարհում: Քանի որ «մարդկային զարգացումը» վերացական հասկացություն է, այն գնահատելու (փոփոխությունների մակարդակը, դինամիկան և ուղղությունը որոշելու) համար անհրաժեշտ է ինտեգրալ ցուցիչ, որը բնութագրում է մարդկային զարգացման հիմնական ասպեկտները:

20-րդ դարի ընթացքում համարվում էր, որ արտադրության ծավալների ավելացումը նպաստում է աղքատության նվազեցմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը, այսինքն՝ տնտեսական աճը հանդես էր գալիս որպես կյանքի որակի միասնական ցուցանիշ: Տասնամյակներ շարունակ յուրաքանչյուր երկրի զարգացման աստիճանը բնութագրվել է մեկ շնչին ընկնող համախառն ազգային արդյունքով (ՀԱԱ): Բավականին արագ պարզ դարձավ, որ այս ցուցանիշը չի տալիս կենսամակարդակի ամբողջական գնահատական և հաշվի չի առնում ոչ տնտեսական գործոնները, ինչպես, օրինակ, երկրների սոցիալական զարգացման մակարդակը:

---

[1] ***Сен А.*** *Развитие как расширение человеческого выбора /Пер. с англ. М.: Новое издательство, 1989.*

Բացառապես «տնտեսական» մոտեցումը կարելի է սխալ համարել երկու հիմնական պատճառով: Նախ, մարդու ոչ բոլոր կարիքներն են բավարարվում նյութական միջոցների կուտակման միջոցով: Օրինակ՝ հոգևոր և մշակութային ժառանգությունը զարգացնելու համար հասարակությանը պետք չէ հարուստ լինել: Երկրորդը, մարդիկ իրենց ողջ կյանքի ընթացքում կարող են ձգտել ոչ թե նյութական բարիքների, այլ երկար և առողջ կյանք ապրելուն, իրենց գիտության և մշակույթի մեջ գտնելուն, պահպանելուն բնությունը և սոցիալապես ակտիվ լինելուն :

60-ական թվականներին զարգացման ամփոփ բնութագրիչ ընտրվեց բնակչության կյանքի միջին տևողությունը:

Իհարկե, լիովին տնտեսական բաղադրիչը չի կարելի դեն նետել: Երկրների տնտեսության զարգացումը և եկամուտը բնակչության զարգացման կարևոր բաղադրիչ է, բայց այն ուղիղ համեմատական չէ կենսամակարդակին: Մարդկային զարգացման համար առավել կարևոր է այն, թե ինչպես է օգտագործվում երկրների տնտեսական վիճակը՝ սննդամթերքի արտադրությունից մինչև զենքի նոր տեսակների մշակումը, բնակչությանը մաքուր ջրով կամ մատչելի բնակարաններով ապահովելը և այլն:

Ա. Սենի հայեցակարգային մշակումները շարունակվեցին «ՄԱԿ-ի զարգացման ծրագիր» (ՄԱԶԾ կամ UNDP) միջազգային կազմակերպության «Մարդկության զարգացման հաշվետվություն» ամենամյա զեկույցներում:

Մարդկային զարգացման հայեցակարգը ՄԱԶԾ-ի կողմից մշակված առավել հայտնի ինտելեկտուալ արտադրանքներից մեկն է: Նախագծի հիմնական ծրագրային տարրերն են՝ մարդկային ներուժի զարգացման հայեցակարգը որպես այդպիսին, ինչպես նաև այդ թեմայով գլոբալ, ազգային և տարածաշրջանային զեկույցները: 1990 թվականին ՄԱԶԾ-ն հրապարակեց առաջին զեկույցը՝ գնահատելով աշխարհի երկրների տնտեսական և սոցիալական առաջընթացը, որում ձևակերպվեց *մարդկային զարգացման հասկացությունը*. «Մարդու զարգացումը ընտրության սպեկտրի ընդլայնման գործընթաց է: Ընտրության ամենակարևոր տարրերն են երկար և առողջ կյանք վարելը, կրթություն ստանալը և արժանապատիվ կենսամակարդակ ունենալը: Ընտրության լրացուցիչ տարրերը ներառում են քաղաքական ազատությունը, երաշխավորված մարդու իրավունքները և ինքնահարգանքը»[1]: Տեսակետների այս համակարգը կենտրոնացած է մարդու կյանքի որակի բարելավման, բոլոր ոլորտներում նրա

[1] *UNDP (United Nations Development Programme). 1990. Human Development Report 1990: Concept and Measurement of Human Development. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-1990*

հնարավորությունների ընդլայնման և կատարելագործման վրա: Մարդկային զարգացման հայեցակարգը փոխարինեց տնտեսական զարգացման այսպես կոչված «դասական» տեսություններին, որոնք հիմնված էին համախառն ազգային արդյունքի ցուցանիշի վրա, մարդուն դիտարկում էին միայն որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ և տնտեսական աճը հռչակում էին սոցիալական առաջընթացի հիմնական նպատակը:

Այսպիսով, 1990 թ. ՄԱԿ-ը սոցիալական գործընթացներն ուսումնասիրելու, տարբեր երկրների մարդկային զարգացման ճշգրիտ պատկերը ստանալու համար առաջարկեց նոր ցուցանիշ՝ *Մարդկային զարգացման ինդեքս* (ՄԶԻ, անգլ.՝ The Human Development Index – HDI): Ցուցանիշը ստեղծվել է մի խումբ տնտեսագետների կողմից՝ պակիստանցի Մահբուբ-ուլ-Հաքի[1] գլխավորությամբ: Դրա հայեցակարգային կառուցվածքը ստեղծվել է Ա.Սենի[2] աշխատանքի շնորհիվ: Ուսումնասիրության սկզբնական գաղափարը բավականին պարզ էր. սոցիալական զարգացումը պետք է գնահատվի ոչ միայն ազգային եկամուտով, ինչպես երկար ժամանակ է կիրառվել, այլ նաև առողջության և կրթության առաջընթացով, որոնք չափելի են շատ երկրներում:

Մարդկային ներուժի զարգացման մասին առաջին զեկույցը 1990 թվականին սկսվեց մի պարզ նախադրյալով, որով առաջնորդվեցին հետագա բոլոր զեկույցները. «Ազգի իրական հարստությունը մարդիկ են»: Ամրապնդելով այս հայտարարությունը էմպիրիկ ապացույցների առատությամբ և զարգացման մտածողության և չափման նոր ձևով՝ մարդկային զարգացման զեկույցը մեծ ազդեցություն ունեցավ ամբողջ աշխարհի քաղաքականության վրա:

---

[1]*«Զարգացման հիմնական նպատակը մարդկանց ընտրության ընդլայնումն է: Սկզբունքորեն, այս ընտրությունը կարող է անվերջ լինել և կարող է փոխվել ժամանակի ընթացքում: Մարդիկ հաճախ գնահատում են ձեռքբերումները, որոնք ընդհանրապես չեն հայտնվում կամ անմիջապես չեն հայտնվում եկամտի կամ աճի թվերով. գիտելիքների, ավելի լավ սննդի և առողջապահության, ավելի անվտանգ ապրուստի, հանցագործությունից և ֆիզիկական բռնությունից պաշտպանության, հանգստի բավարար ժամերի, քաղաքական և մշակութային ազատությունների և հասարակական կյանքին մասնակցության զգացման ավելի մեծ հասանելիություն: Զարգացման նպատակն է ստեղծել բարենպաստ պայմաններ մարդկանց համար, որպեսզի նրանք կարողանան վայելել երկար, առողջ և ստեղծագործ կյանք», - Մահբուբ-ուլ-Հաք (1934-1998), Մարդկային զարգացման զեկույցի հիմնադիր:*

[2]*«Մարդկային զարգացումը, որպես մոտեցում, կապված է այն բանի հետ, ինչը ես համարում եմ զարգացման հիմնական գաղափարը. այն է՝ մարդկային կյանքի հարստության առաջխաղացումը, այլ ոչ թե տնտեսության հարստությունը, որտեղ մարդիկ ապրում են, որը միայն դրա մի մասն է», - Ամարտիա Սեն, Հարվարդի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր, տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակի դափնեկիր, 1998թ.:*

2010 թ. «Մարդկային զարգացման մասին» զեկույցում զգալիորեն լրացվեց «մարդու զարգացում» հասկացության սահմանումը: Նախագծի հեղինակների կարծիքով՝ մարդու զարգացման սահմանումը որպես մարդկային ընտրության հնարավորությունների ընդլայնում հիմնարար է, բայց ոչ բավարար: Մարդու զարգացումը ենթադրում է դրական արդյունքների երկարատև պահպանում և մարդկանց ճնշմանն ու կառուցվածքային անարդարությունների ուժեղացմանը տանող գործընթացների հակազդում: Հետևաբար, առանցքային են նաև այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են սոցիալական արդարությունը, կայունությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Ելնելով դրանից՝ կազմակերպության փորձագետներն առաջարկել են նոր, ճշտված սահմանում, որը համապատասխանում է մարդկային զարգացման խնդիրների վերաբերյալ պրակտիկային և գիտական հետազոտություններին. «Մարդկային զարգացումն իրենից ներկայացնում է մարդկանց ազատության ընդլայնման գործընթաց՝ երկար, առողջ և ստեղծագործ կյանք վարելու, այլ նպատակների իրականացման համար, որոնք, իրենց կարծիքով, ունեն արժեք, ակտիվորեն մասնակցելու երկիր-մոլորակում արդարության և զարգացման կայունության ապահովմանը»[1]:

Այս սահմանման ներքո մարդու զարգացումն ունի երեք բաղադրիչ.

1.***Բարեկեցություն.*** մարդու իրական ազատությունների ընդլայնումն այնպես, որ մարդիկ և հասարակությունը, որպես ամբողջություն, կարողանան բարգավաճել:

2.***Իրավունքներ, հնարավորություններ.*** մարդկանց և նրանց խմբերի կարողությունը գործել և ստանալ արժեքավոր արդյունքներ:

3.***Արդարություն.*** սոցիալական արդարության բարձրացումը և մարդու իրավունքները հարգելը, ինչպես նաև ձեռքբերված արդյունքների կայունության ապահովում:

Մարդկային զարգացման հայեցակարգի հիմնական ռազմավարական գործիքը մարդկային զարգացման ինդեքսն է (նախկինում՝ Մարդկային զարգացման ներուժի ինդեքս):

Մարդկային զարգացման ինդեքսն այս կամ այն երկրում մարդու կենսամակարդակը բնութագրող համապարփակ ցուցանիշ է, ուստի այն երբեմն օգտագործվում է որպես «կյանքի որակ» կամ «կենսամակարդակ» հասկացությունների հոմանիշ: Ցուցանիշը չափում է երկրի ձեռքբերումները առողջության, կրթության և նրա քաղաքացիների իրական եկամտի

[1] *UNDP (United Nations Development Programme). 2010. Human Development Report 2010: The Real Wealth of Nations: Pathways to Human Development. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-2010*

տեսանկյունից՝ երեք հիմնական ոլորտներում, որոնց համար գնահատվում են առանձին ինդեքսներ.

1. ***Կյանքի սպասվող տևողության ինդեքս (LEI).*** առողջություն և երկարակեցություն, որոնք չափվում են ծննդյան ժամանակ կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշով:

2. ***Կրթության ինդեքս (EI).*** կրթության մատչելիություն, որը չափվում է դպրոցական տարիքի երեխաների կրթության միջին սպասվող տևողությամբ և չափահաս բնակչության կրթության միջին տևողությամբ:

3. ***Համախառն ազգային եկամտի ինդեքս (II).*** արժանապատիվ կենսամակարդակ, որը չափվում է մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի չափով ԱՄՆ դոլարով՝ ըստ գնողունակության հավասարության (պարիտետի):

Ծննդյան ժամանակ կյանքի սպասվող տևողության մասին տվյալների առանցքային աղբյուրը ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտն է, ուսման միջին տևողության մասին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտը, բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի մասին՝ Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը:

Մարդկային զարգացման ինդեքսը (HDI) հաշվարկվում է որպես երեք ցուցանիշների միջին երկրաչափականը՝

$$HDI = \sqrt[3]{LEI \cdot EI \cdot II}:$$

Մարդկային զարգացման ինդեքսի յուրաքանչյուր բաղադրիչ-ինդեքսի համար սահմանված են առավելագույն և նվազագույն արժեքներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Մարդկային զարգացման ինդեքսի բաղադրիչների նվազագույն և առավելագույն արժեքները[1]

Ցուցանիշը	Նվազագույն արժեքը	Առավելագույն արժեքը
Կյանքի տևողությունը ծնվելու ժամանակ, տարի	20	85
Ուսման միջին տևողությունը, տարի	0	15
Ուսման սպասվող տևողությունը, տարի	0	18
Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտը, ԱՄՆ դոլլ.	100	75000

[1] ***Шаныгин, С. И.***, *Социально-экономическая статистика : примеры, задачи, тесты : учебное пособие / С. И. Шаныгин. - Москва : Проспект, 2021, с. 37.*

Ծնվելու պահին սպասվող կյանքի տևողության համար նվազագույն արժեքը սահմանվում է 20 տարի, այն հիմքով, որ չկա ոչ մի երկիր, որտեղ այն 20 տարուց քիչ լինի[1]: Իսկ ուսման սպասվող տևողության համար առավելագույն արժեքը՝ 18 տարի համապատասխանում է շատ երկրներում մագիստրոսի աստիճան ստանալու ժամկետին[2]: Բնակչության մեկ շնչին ընկնող առավելագույն համախառն ազգային եկամուտը (ըստ գնողունակության պարիտետի) ընդունվում է 75000 ԱՄՆ դոլար, քանի որ հետազոտողներ Դ. Կանեմանը և Ա. Դիտոնը ապացուցել են, որ այս ցուցանիշը նշված արժեքից դուրս գործնականում չի ազդում մարդկային զարգացման մակարդակի վրա[3]:

Յուրաքանչյուր բաղադրիչ-ինդեքս հաշվարկվում է հետևյալ ելակետային բանաձևով.

$$I_i = \frac{x_i - x_{i\,min}}{x_{i\,max} - x_{i\,min}},$$

որտեղ՝ x_i-ն՝ i-րդ բաղադրիչի փաստացի արժեքն է, $x_{i\,min}$, $x_{i\,max}$-ը՝ համապատասխանաբար i-րդ բաղադրիչի նվազագույն և առավելագույն արժեքները:

Կյանքի սպասվող տևողության ինդեքսը (LEI) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$LEI = \frac{LE - 20}{85 - 20},$$

որտեղ՝ LE - կյանքի սպասվող տևողությունն է:

Կրթական մակարդակը բնութագրող չափիշները երկուսն են. ուսման միջին տևողությունը և ուսման սպասվող տևողությունը: ***Ուսման միջին տևողությունը (MYS)*** 25 տարեկան և բարձր տարիքի բնակչության կյանքի ողջ ընթացքում կրթություն ստանալու տարիների միջին թիվն է, այսինքն՝ ստացած կրթության յուրաքանչյուր մակարդակի տեսական տևողության հիման վրա վերահաշվարկած ուսման տարիների միջին թիվը:

Ուսման սպասվող տևողությունը (EYS) տվյալ երկում դպրոց ընդունվելու պաշտոնապես սահմանված տարիքի երեխայի կրթություն ստանալու ակնկալվող տարիների թիվն է՝ պայմանով, որ նրա կյանքում պահպանվեն կրթության բնագավառում բնակչության ընդգրկվածության ներկա ցուցանիշների միտումները:

Կրթության ամփոփ ինդեքսը (EI) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

---

[1] *UNDP (United Nations Development Programme). 2014. Human Development Report 2014: Sustaining Human Progress: Reducing Vulnerabilities and Building Resilience. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-2014*

[2] *Տե՛ս նույն տեղը:*

[3] *Տե՛ս նույն տեղը:*

$$EI = \frac{MYSI + EYSI}{2},$$

որտեղ՝ MYSI-ն՝ ուսման միջին տևողության ինդեքսն է.

$$MYSI = \frac{MYS - 0}{15 - 0},$$

EYSI-ն՝ ուսման սպասվող տևողության ինդեքսն է.

$$EYSI = \frac{EYS - 0}{18 - 0}:$$

Եկամտի ինդեքսը (II) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$II = \frac{\ln(GNI_{pc}) - \ln 100}{\ln 75000 - \ln 100},$$

որտեղ՝GNEpc-ն՝ մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտն է ԱՄՆ դոլարով՝ ըստ գնողունակության պարիտետի:

Չնայած ՄԶԻ-ն մշակվել է՝ հաշվի առնելով այլ գործոններ՝ հարստությունից բացի, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն ուսումնասիրել գլոբալ բարգավաճումը և զարգացող շուկաներով երկրները, քիչ չեն նաև դրա քննադատությունները: Մասնավորապես, ցուցանիշի հաշվարկման որոշ թերություններ, օրինակ, դրա ինդեքս-բաղադրիչների միջև կոռելյացիայի մեծ աստիճանը, ստիպում են որոշ քննադատներին վիճարկել ցուցանիշի գործնականությունը՝ արտաքին քաղաքականություն հաստատելու ժամանակ օգտագործելու համար: ՄԶԻ-ն նաև հաշվի չի առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են անհավասարությունը, աղքատությունը և գենդերային անհավասարությունը:

2010 թ.[1] Մարդկային զարգացման ինդեքսը չափող ցուցանիշների համակարգն ընդլայնվեց, իսկ ինդեքսը ենթարկվեց էական ճշգրտման: Ի լրումն օգտագործվող ՄԶԻ-ի, որը հիմնված է միջին պետական վիճակագրական տվյալների վրա և հաշվի չի առնում ներքին անհավասարությունները, ներդրվել են երեք նոր ցուցանիշներ՝ Սոցիալ-տնտեսական անհավասարությունով ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսը, Գենդերային անհավասարության ինդեքսը և Բազմաչափ աղքատության ինդեքսը:

Մարդկային զարգացման ուսումնասիրության նախապատրաստման ընթացքում հաշվի են առնվում նաև ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրներում և տարածաշրջաններում քաղաքական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակը բնութագրող բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների և քաղաքացիական

[1] *UNDP (United Nations Development Programme). 2010. Human Development Report 2010: The Real Wealth of Nations: Pathways to Human Development. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-2010*

ազատությունների վիճակը, հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությունը, սոցիալական պաշտպանվածությունը, բնակչության տարածքային և սոցիալական շարժունակության աստիճանը, մշակութային զարգացման մակարդակի, տեղեկատվության մատչելիության, առողջության, գործազրկության մակարդակի, հանցավորության վիճակի, շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության բեռի ցուցանիշները և այլն: Վերջնական վարկանիշում բոլոր պետությունները ռանգավորվում են ՄԶԻ-ի հիման վրա և դասակարգվում չորս կատեգորիաների՝ համաձայն ընդունված սանդղակի: Որքան մոտ է մարդկային զարգացման ինդեքսի արժեքը մեկին, այնքան բարձր է մարդկային զարգացման մակարդակը երկրում (աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

Մարդկային զարգացման ինդեքսի մեկնաբանումը[1]

Մարդկային զարգացման ինդեքսի արժեքը	Կյանքի մակարդակը
0,800-1,000	Շատ բարձր
0,700-0,800	Բարձր
0,550-0,700	Միջին
0,550-ից ցածր	Ցածր

Այսպիսով, Մարդկային զարգացման ինդեքսը մարդկային զարգացման հայեցակարգի հիմնական ռազմավարական գործիքն է, որը թույլ է տալիս իրականացնել միջպետական համեմատություններ: ՄԶԻ-ն ագրեգատային ցուցանիշ է, որը գնահատում է կյանքի մակարդակը երեք առանցքային բաղադրիչներով՝ երկար և առողջ կյանքի, կրթության և արժանավայել կենսամակարդակի:

Գրականություն

1. Сен А., Развитие как расширение человеческого выбора /Пер. с англ. М.: Новое издательство, 1989.
2. Шаныгин С. И., Социально-экономическая статистика : примеры, задачи, тесты : учебное пособие / С. И. Шаныгин. - М: Проспект, 2021. - 320 с.
3. Доклад о развитии человека за 1990 г. Нью-Йорк: Оксфорд Юниверсити пресс, 1990. UNDP (United Nations Development

[1] ***Шаныгин, С. И.***, *указ. соч. с. 38.*

Programme). 1990. Human Development Report 1990: Concept and Measurement of Human Development. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-1990
4. Доклад о развитии человека за 2010 г. UNDP (United Nations Development Programme). 2010. Human Development Report 2010: The Real Wealth of Nations: Pathways to Human Development. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-2010
5. Доклад о развитии человека за 2014 г. UNDP (United Nations Development Programme). 2014. Human Development Report 2014: Sustaining Human Progress: Reducing Vulnerabilities and Building Resilience. New York. https://hdr.undp.org/content/human-development-report-2014
6. https://nesrakonk.ru/are-there-critics-human-development-index-hdi/

Նյութը ներկայացվել է 11.05. 2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 311

Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.
E-mail: sargsyangohar16@asu.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԹՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդվածում ներկայացված է աշխարհի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և տարածաշրջանի մի շարք պետությունների՝ ներառյալ Վրաստանը, Ադրբեջանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Թուրքիան և Ռուսաստանի Դաշնությունը (որպես ՀՀ տնտեսության մեջ ինտեգրված ամենախոշոր պետություն), Մարդկային զարգացման համաթվի դինամիկան 1990-2021թթ.: Հայաստանը համաթիվը հաշվարկելու ողջ ժամանակաշրջանում հանդիսանում է մարդկանց միջին զարգացման մակարդակով պետություն, և այդ ողջ ընթացքում երկրի ՄԶՀ-ի անհատական մակարդակը գերազանցում էր աշխարհի միջին մակարդակը: Հոդվածում բացահայտվել են Հայաստանի Հանրապետության ցուցանիշի և դրա բաղադրիչ-համաթվերի փոփոխության վրա ազդող գործոնները: Կատարվել է նաև համեմատական վերլուծություն: Հայաստանը երկրների ընդհանուր վարկանիշում զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը՝ տարածաշրջանում զիջելով Թուրքիային, Վրաստանին, Իրանին և առաջ անցնելով Ադրբեջանից: Հայաստանի Հանրապետությունը Մարդկային զարգացման համաթվի առանձին բաղադրիչներից կրթության ցուցանիշի մակարդակով առավել է տարածաշրջանում Ադրբեջանից և ԻԻՀ-ից, իսկ կյանքի սպասվող տևողության մակարդակով՝ Ադրբեջանից, Վրաստանից և

Ռուսաստանի Դաշնությունից: Արցախի Հանրապետության Մարդկային զարգացման համաթիվ չի հաշվարկվում մի շարք պատճառներով, որոնցից հիմնականը ՄԱԿ-ի անդամ-պետությունների կողմից չճանաչված լինելն է: Հոդվածում մեր կողմից իրականացվել է Արցախի Հանրապետության Մարդկային զարգացման համաթվի հաշվարկ:

Բանալի բառեր՝ Մարդկային զարգացման համաթիվ, ՄԱԿ անդամ-երկրներ, Հայաստանի Հանրապետության ՄԶՀ, կյանքի սպասվող տևողության համաթիվ, կրթության համաթիվ, համախառն ազգային եկամտի համաթիվ:

Г. Саркисян

АНАЛИЗ И ОЦЕНКА ИНДЕКСА ЧЕЛОВЕЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В статье представлена динамика мирового индекса человеческого развития за 1990-2021гг., а также динамика индекса Республики Армения и ряда стран региона за весь период расчета показателя, включая Грузию, Азербайджан, Иран, Турцию и Россию, как основного экономического партнера Армении. На протяжении всего периода расчета индекса человеческого развития Армения являлась государством со средним уровнем развития людей, и за все это время индивидуальный уровень ИЧР страны превышал средний уровень по миру. В статье выявлены факторы, влияющие на изменение значения показателя и его составляющих-индексов в РА. Также проведен межстрановый сравнительный анализ. В мировом рейтинге ИЧР Армения занимает 85-е место, уступая в регионе Турции, Грузии, ИРИ и опережая Азербайджан. По отдельным компонентам индекса человеческого развития Республика Армения по уровню образования превосходит в регионе Азербайджан и ИРИ, а по уровню ожидаемой продолжительности жизни – Азербайджан, Грузию, а также и Российскую Федерацию. Индекс человеческого развития Республики Арцах не рассчитывается по ряду причин, основной из которых

является ее непризнанность государствами-членами ООН. В статье нами произведен расчет данного показателя для Арцаха.

Ключевые слова: *Индекс человеческого развития, страны-члены ООН, ИЧР Республики Армения, индекс ожидаемой продолжительности жизни, индекс образования, индекс валового национального дохода.*

G. Sargsyan

THE ANALYSIS AND EVALUATION OF THE HUMAN DEVELOPMENT INDEX OF THE REPUBLIC OF ARMENIA

The article presents the dynamics of the World Human Development Index for 1990-2021, the HDI of the Republic of Armenia and a number of countries in the region for the entire period of calculation of the indicator, including Georgia, Azerbaijan, the Islamic Republic of Iran, Turkey and the Russian Federation (as the largest state integrated into the economy of the Republic of Armenia). Throughout the entire period of calculating the human development index, Armenia has been a state with a Medium level of human development, and during all this time the individual level of the country's HDI has exceeded the world average. The article identifies the factors influencing the change in the value of the indicator in RA. A cross-country comparative analysis was carried out. Armenia ranks 85th in the world Human Development Index ranking, behind Turkey, Georgia, Iran in the region and ahead of Azerbaijan. The Human Development Index of the Republic of Artsakh is not calculated for a number of reasons, the main of which is its non-recognition by the UN member states. In the article we have calculated the Human Development Index for Artsakh Republic.

Key words: *Human Development Index, UN member states, HDI of the Republic of Armenia, life expectancy index, education index, gross national income index.*

Մարդկային զարգացման համաթիվը երկրում մարդու կենսամակարդակը բնութագրող համապարփակ ցուցանիշ է: Այն առաջարկվել և հաշվարկվում է Միացյալ ազգերի կազմակերպության

կողմից 1990 թվականից: Համաթիվը հաշվարկելու ամենամեծ դժվարությունները կապված են համադրելի ցուցանիշներ ձեռք բերելու անհրաժեշտության հետ՝ որոշ երկրներում բավարար սոցիալական վիճակագրության բացակայության պայմաններում: Հարկ է նաև նշել, որ տվյալների այն մասը, որը տրամադրվում է ազգային վիճակագրական մարմինների կողմից, միշտ չէ, որ հավաստի է, քանի որ որոշ կառավարություններ գիտակցաբար «գեղեցկացնում» են իրենց երկրներում տիրող իրավիճակը:

Ներկայումս համաթիվն ընդգրկում է ՄԱԿ-ի անդամ երկրները, ինչպես նաև հատուկ կարգավիճակ ունեցող մի շարք վարչական տարածքներ, մինչդեռ այս կամ այն ցուցանիշների վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալների բացակայության պատճառով վարկանիշային աղյուսակը հաճախ ներառում է ավելի փոքր թվով պետություններ: Այն երկրները, որոնք չեն ցանկանում կամ չեն կարող վիճակագրություն տրամադրել ՄԶՀ բաղադրիչների վերաբերյալ, չեն ընդգրկվում վարկանիշում, այլ դիտարկվում են առանձին: Մարդու զարգացման վերաբերյալ ՄԱԿ-ի տվյալների հաշվետվությունները, որպես կանոն, հետաձգվում են մեկ-երկու տարով, քանի որ ազգային վիճակագրական ծառայությունների կողմից տվյալների հրապարակումից հետո դրանք պահանջում են միջազգային համադրում:

Երկրների ցուցակն ըստ Մարդկային զարգացման համաթվի ներառված է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Մարդկային զարգացման 2021-2022 թթ. զեկույցում, որը կազմվել է 2020 և 2021 թվականների գնահատման տվյալների հիման վրա և հրապարակվել 2022 թվականի սեպտեմբերի 8-ին: Ցուցակը ներառում է ՄԱԿ-ի 193 անդամ-պետություններից 189-ը, ինչպես նաև Հոնկոնգը (Չինաստանի հատուկ վարչական շրջան) և Պաղեստինը: ՄԱԿ-ի 4 անդամ պետություններ (ԿԺԴՀ, Մոնակո, Նաուրու և Սոմալի) ներառված չեն տվյալների բացակայության պատճառով:

Մարդկային զարգացման համաթիվը արտացոլում է վերջին տարիներին ձեռքբերված առաջընթացը և թույլ է տալիս տեսնել առանձին պետություններում առկա միտումները: ՄԶՀ-ի վարկանիշի վերջին տարբերակը թողարկվել է 2022 թվականին (ցուցադրում է 2021 թվականի արդյունքները)[1]:

Մինչև 2020թ. ՄԶՀ ցուցանիշը աշխարհի մակարդակով ցուցաբերում էր կայուն աճի միտում (տե՛ս գծապատկեր 1):

[1] http://hdr.undp.org //UNDP. 2022. Human Development Report 2021/2022. NewYork.



Գծապատկեր 1. Աշխարհի Մարդկային զարգացման համաթվի դինամիկան 1990-2021թթ.: [1]

Աճի տեմպը դանդաղել էր 2008-2009 թթ.՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսական ճգնաժամով: 2020-2021 թթ. Աշխարհի ՄԶՀ-ն առաջին անգամ ապրել է անկում՝ չեզոքացնելով նախորդ տարիների առաջընթացը, հիմնականում պայմանավորված Covid-19 համաճարակով: Նշենք, որ 2021-2022 թթ. «Մարդկային զարգացման մասին զեկույց»-ը լույս է տեսել «Անորոշ ժամանակներ, չկարգավորված կյանքեր. Ստեղծելով ապագան՝ փոփոխվող աշխարհում» խորագրով: Այսօր աշխարհում տեղի ունեցող ոչ ցանկալի, աղետալի իրադարձություններից յուրաքանչյուրը (պատերազմները, համաճարակները, գլոբալ տաքացումը) բացահայտում է ներկայիս գլոբալ աշխարհակարգի սահմանափակումներն ու բացերը: Կուտակվել են համաշխարհային ճգնաժամերը՝ 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, կլիմայի փոփոխության հետ կապված շարունակվող գլոբալ ճգնաժամը, Covid-19 համաճարակը և մոտալուտ համաշխարհային պարենային ճգնաժամը: Աշխարհի բնակչությունը հատել է «8 մլրդ. մարդ» կետը, և միլիարդավոր մարդիկ արդեն ստիպված են պայքարել պարենային անապահովության դեմ: Համաշխարհային պարենային ճգնաժամն ամենաուժեղը կհարվածի նրանց:

Ստորև (տե՛ս գծապատկեր 2) ներկայացված է՝ ըստ տարիների պետությունների տեսակարար կշիռը, որոնց համար հաշվարկված էր ՄԶՀ ցուցանիշը, և որոնցում այն համապատասխան նախորդ տարվա համար նվազել է: Գծապատկերը վառ ցուցադրում է ուսումնասիրվող վերջին երկու տարիներին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքները՝ միայն

[1] http://hdr.undp.org //UNDP. 2022. Human Development Report 2021/2022. NewYork, p. 4

2020թ. 2019թ. համեմատ 87 տոկոս պետություններում արձանագրվել է ՄԶՀ ցուցանիշի մակարդակի նվազում:



Գծապատկեր 2. Երկրների մասնաբաժինը, որոնց համար եղել է հաշվարկված ՄԶՀ արժեքը, և որոնցում ՄԶՀ-ի անկում է տեղի ունեցել նույն տարի, %:[1]

Վերջին տարիներին այս ցուցանիշով երկրների վարկանիշը գլխավորում էր հիմնականում Նորվեգիան: Աղյուսակ 3-ում ներկայացված են մի շարք երկրների մարդկային զարգացման համաթվի արժեքը և համապատասխան վարկանիշը 2021թ.: Առաջատար դիրքը զբաղեցնում է Շվեյցարիան, իսկ եզրափակում է ցուցակը Հարավային Սուդանը: Հայաստանը զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը՝ զիջելով տարածաշրջանում Թուրքիային, Վրաստանին, Իրանին և առաջ անցնելով Ադրբեջանից:

Աղյուսակ 3.

Մարդկային զարգացման համաթիվ, 2021թ.[2]

ՄԶՀ վարկանիշ	Պետություն	ՄԶՀ	ՄԶՀ վարկանիշ	Պետություն	ՄԶՀ
ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ		**0,732**			
Մարդկային զարգացման շատ բարձր մակարդակ		***0,896***	***Մարդկային զարգացման բարձր մակարդակ***		***0,754***
1	Շվեյցարիա	0,962	**76**	Իրանի ԻՀ	0,774
2	Նորվեգիա	0,961	**77**	Ուկրաինա	0,773
3	Իսլանդիա	0,959	**79**	Չինաստան	0,768
4	Հոնկոնգ	0,952	**85**	***Հայաստան***	0,759
5	Ավստրալիա	0,951	**91**	Ադրբեջան	0,745
6	Դանիա	0,948	***Մարդկային զարգացման միջին մակարդակ***		***0,636***

[1] http://hdr.undp.org //UNDP. 2022. Human Development Report 2021/2022. NewYork, p. 12.
[2] http://hdr.undp.org //UNDP. 2022. Human Development Report 2021/2022. NewYork, p. 284-287.

7	Շվեդիա	0,947	118	Ղրղզստան	0,692
8	Իռլանդիա	0,945	122	Տաջիկստան	0,685
9	Գերմանիա	0,942	132	Հնդկաստան	0,633
10	Նիդեռլանդներ	0,941	***Մարդկային զարգացման ցածր մակարդակ***		***0,518***
48	Թուրքիա	0,838	**187**	Բուրունդի	0,426
52	Ռուսաստանի Դաշնություն	0,822	**188**	ԿԱՀ	0,404
56	Ղազախստան	0,811	**189**	Նիգեր	0,400
60	Բելառուս	0,808	**190**	Չադ	0,394
63	Վրաստան	0,802	**191**	Հարավային Սուդան	0,385

Ինչպես տեսնում ենք (գծապատկեր 3), Հայաստանը համաթիվը հաշվարկելու ողջ ժամանակաշրջանում հանդիսանում է մարդկանց միջին զարգացման մակարդակով պետություն, և այդ ողջ ընթացքում երկրի ՄԶՀ անհատական մակարդակը գերազանցում էր աշխարհի միջին մակարդակը:



Գծապատկեր 3. Հայաստանի Հանրապետության և Աշխարհի ՄԶՀ-ի դինամիկան 1990-2021թթ.: [1]

1990թ. առաջին անգամ հաշվարկված ցուցանիշի մակարդակը ՀՀ-ում կազմել է 0,656 միավոր, աշխարհում՝ 0,600 միավոր:

1991-1992թթ. (տե՛ս գծապատկեր 4) ցուցանիշի արժեքը ՀՀ-ում կտրուկ նվազել էր՝ պայմանավորված ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամով, բնակչության միգրացիայով և Արցախյան առաջին պատերազմով: Նորաստեղծ պետության հետագա կայունացման հետ ցուցանիշի կայուն աճ է տեղի ունեցել, բացառությամբ 2009թ.՝ 2008թ. Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներով, և 2016 թ.:

[1] https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM

2020թ.-ին այն նորից կտրուկ նվազել է՝ պայմանավորված Covid-19 համաճարակով և Ադրբեջանի կողմից սանձազերծված Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքներով:



Գծապատկեր 4. ՀՀ ՄԶՀ փոփոխությունը՝ նախորդ տարվա համեմատ.[1]

Ընդհանուր առմամբ, 1990-2021թթ. ՀՀ ՄԶՀ-ն աճել է 15,7%-ով (տարեկան միջին աճը կազմել է 0,5%), ցուցաբերելով նվազագույն՝ 0,616 արժեքը 1993թ., իսկ առավելագույն՝ 0,778 արժեքը՝ 2019թ.:

ՄԶՀ բոլոր բաղադրիչ-համաթվերը նույնպես աճել են (տե՛ս գծապատկեր 5):



Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետության ՄԶՀ բաղադրիչ-համաթվերի դինամիկան 1990-2021թթ.:[2]

[1] https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM
[2] https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM

Մասնավորապես, կյանքի սպասվող միջին տևողության համաթիվն ավելացել է 6,6%-ով (տարեկան 0,2%), ցուցաբերելով նվազագույն՝ 0,748 արժեքը 1992թ., իսկ առավելագույնը՝ 0,853՝ 2019թ.:

Կրթության մակարդակի համաթիվն աճել է 17,9%-ով (տարեկան 0,5%): Նվազագույն արժեքը՝ 0,623՝ 1996թ., առավելագույնը՝ 0,747՝ 2014թ.: Ցուցանիշի աճի վրա ամենամեծ ազդեցությունն է ունեցել դպրոցներում 10-ամյա միջնակարգ կրթությունից անցումը 12-ամյայի, իսկ բուհերում՝ 5-ամյա կրթությունից անցումը 4-ամյա բակալավրի և 2-ամյա մագիստրոսական կրթական համակարգին:

Ամենամեծ հավելաճը գրանցվել է բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի համաթվում՝ 23,4% (տարեկան 0,7%), նվազագույն արժեքը՝ 0,490՝ արձանագրելով 1993թ., նվազելով 1992թ. համեմատ 13,7%-ով, ինչն էլ իր հերթին մեծ ազդեցություն է ունեցել ՄԶՀ արժեքի վրա: Առավելագույն արժեքը՝ 0,745՝ գրանցվել է 2019թ.:

Աղյուսակ 4-ում ներկայացված են ՀՀ Մարդկային զարգացման համաթիվը, դրա բաղադրիչ-համաթվերը և համապատասխան ելակետային տվյալները:

Աղյուսակ 4.

ՀՀ Մարդկային զարգացման համաթիվը և դրա բաղադրիչները 1990-2021թթ.[1]

Տարի	LE (years)	MYS (years)	EYS (years)	GNIPC (2017 PPP$)	LEI	MYSI	EYSI	EI	II	HDI
1990	68,8	9,8	10,9	5210,2	0,751	0,652	0,607	0,630	0,597	**0,656**
2000	70,6	10,5	11,2	4178,4	0,779	0,699	0,622	0,660	0,564	**0,662**
2010	73,2	11,1	13,1	9745,4	0,818	0,742	0,727	0,734	0,692	**0,746**
2012	73,5	11,3	13,1	10830,6	0,822	0,753	0,729	0,741	0,708	**0,755**
2013	73,7	11,4	13,1	11351,5	0,826	0,759	0,728	0,744	0,715	**0,760**
2014	74,1	11,5	13,1	11518,6	0,832	0,765	0,728	0,747	0,717	**0,764**
2015	74,4	11,6	13,0	11774,3	0,837	0,771	0,720	0,746	0,720	**0,766**
2016	74,7	11,4	13,0	11570,5	0,841	0,759	0,722	0,740	0,718	**0,765**
2017	74,9	11,2	13,0	12541,2	0,845	0,746	0,724	0,735	0,730	**0,768**
2018	75,1	11,2	13,1	12933,8	0,847	0,749	0,726	0,738	0,734	**0,771**
2019	75,4	11,3	13,1	13847,9	0,853	0,752	0,728	0,740	0,745	**0,778**
2020	72,2	11,3	13,1	12454,1	0,803	0,755	0,729	0,742	0,729	**0,757**

[1] https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM

2021	72,0	11,3	13,1	13158,0	0,801	0,755	0,729	0,742	0,737	**0,759**

Գծապատկեր 6-ում ներկայացված է տարածաշրջանի մի շարք պետությունների և Ռուսաստանի Դաշնության ՄԶՀ ցուցանիշի դինամիկան:



Գծապատկեր 6. Որոշ պետությունների ՄԶՀ դինամիկան 1990-2021թթ.: [1]

Վրաստանի համար Մարդկային զարգացման համաթիվը հաշվարկվում է 2000թ.: Ցուցանիշի հաշվարկման ողջ ժամանակաշրջանում այն գերազանցում էր ՀՀ ՄԶՀ-ին: 2021թ. այն կազմել է 0,802, ինչը 5,6%-ով բարձր է ՀՀ ցուցանիշի արժեքից: Նշենք, որ միայն կրթության համաթվի գծով Վրաստանը առաջ է անցել Հայաստանին 15,9%-ով: Եկամտի համաթվով գերազանցում է 2,2%-ով, իսկ կյանքի սպասվող տևողության համաթվի գծով զիջում է 0,7%-ով:

Տարածաշրջանի մյուս պետության՝ Ադրբեջանի համար համաթիվը հաշվարկվում է 1995թ. և այն միշտ զիջում էր Հայաստանի ցուցանիշին: 2021թ. այն ցածր է 1,9%-ով և կազմել է 0,745 (նախկինում տարբերությունն ավելի մեծ էր): Ընդ որում՝ կյանքի սպասվող տևողության համաթվի գծով Ադրբեջանը զիջում է 5,1%-ով, կրթության համաթվի գծով՝ 2,1%-ով, իսկ եկամտի համաթվի գծով (սկսած 2008թ.) գերազանցում է 1,6%-ով:

Թուրքիայի ՄԶՀ-ն 10,8%-ով գերազանցում է Հայաստանի ցուցանիշին՝ կազմելով 2021թ. 0,841: Թուրքիայում բավականին մեծ (գրեթե երկու անգամ)

[1] https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM
https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/AZE
https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/GEO
https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/IRN
https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/RUS
https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/TUR

տարբերություն է արձանագրվել միջին և սպասվող ուսման տևողության միջև: Արդյունքում առաջին ցուցանիշով այն զիջում է ՀՀ-ին 23,8%-ով, իսկ երկրորդ ցուցանիշով գերազանցում 39,8%-ով: Ընդհանուր առմամբ, կրթության համաթվի գծով գերազանցումը կազմում է 7,4%: Կյանքի սպասվող տևողության համաթվի գծով գերազանցում է 7,7%-ով, իսկ եկամտի համաթվի գծով՝ 17,6%-ով:

Իրանի Իսլամական Հանրապետության ՄԶՀ-ն գերազանցում է ՀՀ ՄԶՀ-ն 1,9%-ով՝ կազմելով 0,774, ընդ որում, կյանքի սպասվող տևողության համաթվի գծով՝ 3,5%-ով, եկամտի համաթվի գծով՝ 2,5%-ով, իսկ կրթության համաթվի գծով զիջում է 0,2%-ով:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը մարդկային զարգացման համաթվի բաղադրիչներից կրթության ցուցանիշով առավել է տարածաշրջանում Ադրբեջանից և ԻԻՀ-ից, և կյանքի սպասվող տևողությունով՝ Ադրբեջանից ու Վրաստանից:

Որպես ՀՀ տնտեսության մեջ ընդգրկված ամենախոշոր պետություն, համեմատենք նաև Ռուսաստանի Դաշնության հետ: 2021թ. ՌԴ-ում ցուցանիշի արժեքը կազմել է 0,822՝ գերազանցելով ՀՀ ՄԶՀ-ն 8,2%-ով, ընդ որում՝ կրթության համաթվի գծով՝ 16,4%-ով, եկամտի համաթվի գծով՝ 14,9%-ով, իսկ կյանքի սպասվող տևողության համաթվի գծով զիջում է 5,0%-ով:

Արցախի Հանրապետության Մարդկային զարգացման համաթիվ չի հաշվարկվում մի շարք պատճառներով, որոնցից հիմնականը ՄԱԿ-ի անդամ-պետությունների կողմից չճանաչված լինելն է:

Հաշվարկման հաջորդ խոչընդոտները կապված են ներկայումս ԱՀ-ում ՄԶՀ-ի բաղադրիչ-համաթվերի համար որոշ վիճակագրական տվյալների բացակայության հետ: Մասնավորապես, հանրապետությունում չի հաշվարկվում համախառն ազգային եկամուտը, հասանելի չէ 2020-2021թթ. բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, չի հաշվարկվում ուսման միջին և սպասվող տևողությունը:

Այնուամենայնիվ, մեր կողմից փորձ է կատարվել իրականացնել ԱՀ ՄԶՀ-ի հաշվարկ՝ որոշ չափով շեղվելով ընդունված մեթոդաբանությունից: Այսպիսով.

1. Համախառն ազգային եկամտի (GNI) փոխարեն մեր կողմից վերցվել է Համախառն ներքին արդյունքը (GDP) ԱՄՆ դոլարով՝ առանց վերահաշվարկելու այն գնողունակության պարիտետով:

2. Բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը հաշվարկելիս՝ 2020-2021թթ. համար բնակչության միջին թվաքանակը հաշվարկվել է մոտավոր:

3. Հաշվի առնելով ԱՀ և ՀՀ կրթական համակարգերի նմանությունները՝ օգտագործվեցին կրթության ինեքսի վերաբերյալ ՀՀ տվյալները:

Ծննդյան պահից կյանքի սպասվող տևողության մասին տեղեկատվությունն առկա է:

Այսպիսով, ԱՀ 2017-2021թթ. համար հաշվարկված ՄԶՀ ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 5): Համեմատության համար ներկայացված են նաև ՀՀ տվյալները:

Աղյուսակ 5.

ԱՀ Մարդկային զարգացման համաթիվը 2017-2021թթ.[1]

Տարի	Արցախի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն	
	ՄԶՀ	Աճի տեմպ, %-ով՝ նախորդ տարվա համեմատ	ՄԶՀ	Աճի տեմպ, %-ով՝ նախորդ տարվա համեմատ
2017	0,701	-	0,768	-
2018	0,712	101,6	0,771	100,4
2019	0,718	100,9	0,778	100,9
2020	0,683	95,1	0,757	97,3
2021	0,696	101,9	0,759	100,3

ԱՀ ՄԶՀ ցուցանիշները զիջում են ՀՀ ցուցանիշներին: 2017-2019 թթ. Համար հաշվարկված ցուցանիշները վկայում են ԱՀ-ում մարդկային զարգացման բարձր մակարդակի մասին: 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքով պետությունը մեծ կորուստներ է ունեցել՝ թե՛ մարդկային, թե՛ տնտեսական, թե՛ տարածքային: Երկրում նվազել է կյանքի սպասվող միջին մակարդակը, կրճատվել է բնակչության թվաքանակը, տնտեսությունը անկում է ապրել, ինչի արդյունքում 2020-2021թթ. համար հաշվարկված տվյալները նվազել են և վկայում են մարդկային զարգացման միջին մակարդակի մասին:

Այսպիսով, 1990թ. ի վեր ՄԶՀ ցուցանիշը աշխարհի մակարդակով ցուցաբերել է կայուն աճի միտում՝ ապրելով առաջին անգամ անկում 2020-2021թթ.: Հայաստանի Հանրապետությունը 2021թ. վարկանիշում զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը՝ զիջելով տարածաշրջանում Թուրքիային, Վրաստանին, Իրանին և առաջ անցնելով Ադրբեջանից: Արցախի համար ցուցանիշը պաշտոնապես չի հաշվարկվում:

[1] *Հաշվարկները մոտավոր են:*

Գրականություն

1. UNDP (United Nations Development Programme). 2022. Human Development Report 2021/2022: Uncertain Times, Unsettled Lives: Shaping our Future in a Transforming World. NewYork. // https://hdr.undp.org/content/human-development-report-2021-22
2. https://gtmarket.ru/ratings/human-development-index
3. https://hdr.undp.org/data-center/country-insights#/ranks
4. https://hdr.undp.org/data-center/documentation-and-downloads
5. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/ARM
6. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/AZE
7. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/GEO
8. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/IRN
9. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/RUS
10. https://hdr.undp.org/data-center/specific-country-data#/countries/TUR
11. https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2021-22pdf_1.pdf
12. https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2021-22overviewrupdf.pdf
13. https://web.archive.org/web/20120415134936/http://hdr.undp.org/en/humandev/

Նյութը ներկայացվել է 11.05.2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը :

ՀՏԴ 336.7

Տնտեսագիտություն

Arash Jahan BIGLARI
Ph.D. student at the European University, Yerevan

WCDM METHOD ASSIGN WEIGHTS OF CRITERIA BY DECISION MATRIX: EVIDENCE OF TEHRAN STOCK EXCHANGE

Ա. Ջ. Բիգլարի

ՆՇԱՆԱԿԵՔ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԿՇԻՌՆԵՐԸ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՏՐԻՑՈՎ (WCDM). ԹԵՀՐԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻ ԱՊԱՑՈՒՅՑ

MCDM խնդիրը մի շարք այլընտրանքներ է, որոնք գնահատվում են մի քանի չափանիշների համաձայն՝ լավագույն այլընտրանք(ներ)ը ընտրելու համար. Այդ նպատակով չափանիշների կշիռը որոշելը MCDM մեթոդների կիրառման կարևոր նյութերից մեկն է. Նախևառաջ, չափանիշները բացահայտվում են որոշում կայացնողի կողմից, այնուհետև զույգ-զույգ համեմատությունները չափորոշիչների և այլընտրանքների միջև են, որոնք կառուցում են որոշումների մատրիցը. Տարբեր չափանիշների նկատմամբ այլընտրանքների կշիռները ստացվում են MCDM մեթոդներից մեկի կիրառմամբ. TOPSIS-ը զույգ համեմատության վրա հիմնված մեթոդ է այլընտրանքներին կշիռը բաշխելու համար. Համաձայն TOPSIS մեթոդի, լավագույն այլընտրանքն է՝ ելնելով դրանց քաշից.

Այս հետազոտությունն առաջարկում է WCDM մեթոդը որպես նոր մեթոդ՝ MCDM խնդիրներում օգտագործվող չափանիշներին կշիռ տալու համար. Արդյունքները ստացվել են Թեհրանի ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների իրական նմուշից. Այս հետազոտության որոշման մատրիցը բաղկացած էր տարբեր ոլորտների քսան ընկերություններից և երեք չափանիշներից՝ վերադարձը, հուսալիությունը և ռիսկը. TOPSIS-ը որպես MCDM մեթոդ ընտրված է WCDM-ի Shannon-ի հետ համեմատելու համար. երկարաժամկետ հեռանկարում այն ավելի լավ է գործում.

Բանալի բառեր՝ *Պորտֆոլիո, MCDM, չափանիշներ, Shannon, TOPSIS, որոշումների մատրիցա*

А.Д. Биглари

ПРИСВОЕНИЕ ВЕСОВ КРИТЕРИЯМ ПО МАТРИЦЕ РЕШЕНИЙ (WCDM): ДАННЫЕ ТЕГЕРАНСКОЙ ФОНДОВОЙ БИРЖИ

Проблема MCDM представляет собой ряд альтернатив, которые оцениваются по нескольким критериям для выбора наилучшей альтернативы (альтернатив). С этой целью определение веса критериев является одним из важных материалов для использования методов MCDM. Прежде всего, лицо, принимающее решение, определяет критерии, а затем проводится парное сравнение между критериями и альтернативами, которые составляют матрицу решений. Веса альтернатив по разным критериям получаются с помощью одного из методов MCDM. TOPSIS — это основанный на парных сравнениях метод присвоения веса альтернативам. По методу TOPSIS выделяется лучшая альтернатива на основе их веса.

Это исследование предлагает метод WCDM в качестве нового метода для придания веса критериям, используемым в задачах MCDM. Результаты получены из реальной выборки компаний, котирующихся на Тегеранской фондовой бирже. Матрица решений в этом исследовании состояла из двадцати компаний из разных отраслей и трех критериев доходности, надежности и риска. TOPSIS в качестве метода MCDM выбран для сравнения WCDM с Shannon. Эффективность WCDM на Тегеранской фондовой бирже такая же, как у Entropy Shannon при тех же условиях; он работает еще лучше в долгосрочной перспективе.

Ключевые слова: *Портфолио, MCDM, Критерии, Шеннон, TOPSIS, Матрица решений.*

An MCDM problem is a number of alternatives that are evaluated with respect to several criteria to select the best alternative(s). For this purpose, determining the weight of criteria is one of the important materials for using MCDM methods. First of all, criteria are identified by the decision-maker then pairwise comparisons are between criteria and alternatives that construct the decision matrix. The weights of the alternatives with respect to different criteria are obtained by using one of the MCDM methods. TOPSIS is a pairwise comparison-based method for allocating weight to alternatives. According to the TOPSIS method, the best alternative based on their weight is allocated.

This research proposes the WCDM method as a new method to give weight to criteria used in MCDM problems. The results are obtained from a real-world sample from companies listed on Tehran Stock Exchange. The decision matrix in this study consisted of twenty companies from different industries and three criteria Return, Reliability, and Risk. TOPSIS as an MCDM method is selected to compare WCDM with Shannon The efficiency of the WCDM in the Tehran Stock Exchange is the same as Entropy Shannon under the same conditions; it performs even better in the long term.

Key words: *Portfolio, MCDM, Criteria, Shannon, TOPSIS, Decision Matrix*

1. Introduction

The relative weights of the criteria are necessary for the issue solution process when dealing with multi-criteria decision-making challenges. The methods LINMAP, least squares, specific vector techniques, Shannon entropy, CRITIC method, and others can be mentioned as the techniques for figuring out the weights of the criterion.

Making decisions usually involves some factors and possibilities. In making decisions, all factors are not equally important. In these situations, it is vital to determine the weight or coefficient of the relevance of each factor in the decision-making process. Each criterion's relative weight is determined by how it is important to other criteria. Reaching the targeted objective will be greatly aided by the thoughtful and appropriate selection of weights of criteria. For this purpose, it will be useful to utilize WCDM for weighing criteria. The following three techniques each have a different way of weighing the criteria [Odu 1449]:

1.Applying specialist knowledge

The right criteria are identified and weighed using this technique, which also considers the features of the research area and the expertise and knowledge of subject-matter specialists. This method's simplicity and documentation are two benefits. However, this approach has drawbacks, including the risk of the expert estimating the weight incorrectly and the challenge of harmonizing their mental units of measurement. By using a range or percentage, professionals may gauge the significance of several aspects.

2.Making use of data expertise

Data knowledge depends on the information that may be used to solve the issue. The weight of each element may be calculated using this technique by taking the answers to the issue and estimating the degree to which each factor depends on the solution. The likelihood of error is lower when using the data knowledge approach, but the quality of the initial replies determines how well it performs.

3.Combining data and professional knowledge

Weight is assigned to each criterion in this technique by the findings of the expertise and experience of specialists and the usage of the available information. In this manner, the weights are first individually computed using expertise and expert data, and the

desired weight is decided by comparing the results. As a result, there is a lower chance of error, and the weights are more accurate.

A crucial area of decision-making theory is multi-criteria decision-making (MCDM). Regarding the problem's solution space, MCDM issues are often split into two categories: Multi-Attribute Decision Making (MADM) and Multi-Objective Decision Making (MODM). The typical matrix representation of an MCDM issue is as follows:

$$DM = \begin{array}{c} A_i \\ A1 \\ \vdots \\ Am \end{array} \begin{array}{c} \begin{array}{ccc} C1 & \dots & Cn \end{array} \\ \begin{pmatrix} a_{11} & \dots & a_{1n} \\ \vdots & \ddots & \vdots \\ a_{m1} & \dots & a_{mn} \end{pmatrix} \end{array} \qquad (1)$$

Aij is the score of alternative ***i*** in relation to criterion ***j***, where ***A1, A2,..., Am*** is a collection of workable alternatives, ***C1, C2,..., Cn*** is a set of decision-making criteria. The objective is to choose the best overall value alternative, such as the most desired or significant alternative.

There are several ways to determine the total worth of the alternative ***i***. The basic model for the majority of MCDM approaches, the simple additive weighted value function [Keeney et al. 403], may be used to calculate ***Vi*** in a general form as follows:

$$V_i = \sum_{j=1}^{n} w_j \, a_{ij} \qquad (2)$$

How the weights of the criteria or vectors ***w = w1, w2,..., wn*** are produced is crucial and has served as the inspiration for the launch of numerous MCDM systems over the past several decades. Several MCDM techniques have been put out in recent years, with AHP being the most well-liked (Analytic Hierarchy Process, ANP(Analytic Network Process), TOPSIS(Technique for Order of Preference by Similarity to Ideal Solution), ELECTRE (Elimination Et Choix Traduisant la REalité), VlseKriterijumska Optimizacija I Kompromisno Resenje (VIKOR), and PROMETHEE (Preference Ranking Organization Method for Enrichment Evaluations), also can cite to some recent developments in the study and comparison of different MCDM methods like the SIR method (superiority and inferiority ranking), SWARA (step-wise weight assessment ratio analysis), multi-attribute evaluation using imprecise weight estimates (IMP), and subjective weighting method using continuous interval scale [Hasan et al. 15-29]. Some methods like TOPSIS need the weight of criteria. For this purpose, some methods like SWARA, SHANNON, BWM, and AHP can compute the weight of the criteria.

This paper proposes a new method called WCDM for computing the weight of criteria. The remainder of this paper is organized as follows. Section two is methodology. In section three, a new method (WCDM) is proposed, the WCDM is applied to a real-world problem, and it is comprehensively compared to the ENTROPY

SHANNON considering several evaluation criteria. Section four explains the scientific novelty of the research. Section five illustrates the result of the real-world problem and compares WCDM and SHANNON and uses weights of criteria obtained from them in the TOPSIS method to find the weight of alternatives and the result of portfolios. The conclusions and suggestions for future research are represented in section six.

2. Methodology

This section includes of Research type, Sources, Variables, Tools and Assumptions .

2.1 Type of research

The current study is a hybrid of the two types of research Basic and Applied because its goal is to develop knowledge and apply it in the present.

2.2 Statistical population

The statistical population of this research is all companies listed on the Tehran Stock Exchange. Because it is very difficult to conduct a study on all companies, even though the results are more realistic, some companies working in different industries have been selected as a sample.

2.3 Sources of data collection

All information in this study is obtained through the financial journals and sites of the Tehran Stock Exchange .

2.4 Variables

The independent variables of the study consist of the return, reliability and risk of companies. These are the criteria of the decision matrix that are used in the WCDM, Shannon and TOPSIS methods.

2.5 Tools

Microsoft Excel is used as the software.

2.6 Assumptions

· Buy stocks of each company on the first of the year and sell them at the end of the year.

· The daily stock price of companies that are used to calculate criteria include capital increment, DPS and transaction commission.

· The beginning of the year in the solar calendar is from March 21. For example, the solar year 1395 is equivalent to March 21, 2016

· Annual interest on bank deposits is assumed 20 percent.

3. Literature review

In today's corporate activity, decision-making is crucial. Making a choice requires taking into account a variety of factors, many of which may be at odds with one another.

The Entropy Shannon was selected to compare with the WCDM method. Step-by-step of the WCDM process is covered in the first section. This study uses some strategies and techniques to weight criteria in WCDM. The three basic techniques used for calculating the weight of criteria and alternatives in this research are WCDM, Shannon, and TOPSIS.

3.1 Criteria

This section describes the criteria utilized in this study. Return, Reliability, and Risk are the criterion employed.

Return

The return is the most significant idea in investment decision-making. Each share or portfolio of shares provides a particular return to the holder if purchased, held, and sold at a specified distance from the moment of acquisition. This return reflects price fluctuations as well as ownership advantages.

We need a metric of the return on investment to evaluate investments effectively. Most financial studies utilize asset returns rather than prices [Beattie 1].

$$Percentage\ of\ \ Stock\ Return = \frac{last\ trading\ day\ \ -\ \ first\ trading\ day\ of\ the\ year}{Share\ price\ on\ the\ first\ trading\ day\ of\ the\ year} \times 100 \qquad (3)$$

Reliability

Reliability engineering is a branch of systems engineering that focuses on the capacity of the equipment to operate without failure. The capacity of a system or component to work under defined conditions for a certain amount of time is referred to as reliability. The capacity of a component or system to work at a specific moment or interval of time is commonly referred to as reliability.

The Reliability function, abbreviated R, is theoretically defined as the likelihood of success at time ***t***. This likelihood is evaluated using comprehensive analysis, past data sets, or reliability testing and modelling. In reliability projects, availability, testability, maintainability, and maintenance are frequently characterized as components of "reliability engineering." The cost-effectiveness of systems is frequently determined by reliability.

The majority of the methodologies used to determine dependability criteria are employed in a variety of sciences. This study employs the following methodology [Jahan Biglari 282]:

$$MDF = \frac{\sum(Fail\ days)}{total\ number\ of\ trading\ days} \qquad (4)$$

Risk

Risk denotes future uncertainty regarding earnings or results deviating from expectations. Risk quantifies the degree of uncertainty an investor is willing to accept to profit from an investment. Risks come in many forms and occur in various settings.

The beta (or market beta or beta coefficient) in finance is a measure of how an individual asset moves (on average) when the entire stock market rises or falls. As a result, beta is also known as an asset's systematic risk or market risk. Beta is not a measure of individual risk. The beta equation is as follows:

$$\beta = \frac{Cov(r_p, r_b)}{Var(r_b)} \qquad (5)$$

$\boldsymbol{r_b}$ is the return of the market and $\boldsymbol{r_p}$ is the company's return [Kenton 1].

3.2 Shannon Entropy

One of the multi-criteria decision-making strategies for estimating the weight of criterion is the entropy method. A criterion-option matrix is required for this approach. Shannon and Weaver suggested this approach in 1974. The level of uncertainty in a continuous probability distribution is expressed by entropy. The primary assumption behind this strategy is that the greater the spread in the values of a criterion, the more significant the criterion [Hosseinzadeh Lotfi , F and Fallahnejad 55].

Shannon demonstrated that high-probability occurrences yield less information, but low-probability events provide more information. Uncertainties are decreased when new information is acquired, and the value of new knowledge is proportional to the degree of uncertainty eliminated. As a result, uncertainty and information are inextricably linked characteristics [Azar 8].

3.3 TOPSIS

The TOPSIS technique rates alternatives using a multi-criteria decision-making (MADM) process. The terms "perfect solution" and "near to ideal solution" are employed in this procedure. The best possible answer in every aspect seldom exists in practice; thus, the ideal solution strives to get as near as possible. The distance of an alternative (or choice) between a positive ideal and a negative ideal solution is assessed to assess how similar they are to one another. The alternatives are then weighed and ranked according to the negative ideal solution's distance to the overall distance between the positive ideal and negative ideal solutions.

TOPSIS sees a MADM issue with m alternatives as a geometric system with m points in the next n spaces. The approach is based on the assumption that the alternative should be closest to the perfect solution in terms of distance, and the furthest from the worst ideal solution in terms of distance. Similarity with a positive-ideal solution and avoidance of a negative-ideal solution are indicators according to TOPSIS. The alternative approach with the greatest resemblance to the perfect solution is then chosen [Pavić and Novoselac 5-12].

The alternative receives a better score if it resembles the perfect answer. We attempt to approach the ideal answer, which is virtually perfect in all respects but does not exist. We take into account the distance of an alternative from the ideal and non-ideal solution to gauge how comparable an alternative is to an ideal and non-ideal level. The method's fundamental presumptions are:

· Every criterion should be equally desirable, either more or less desirable. In other words, increasing the value of a criterion always makes it more desirable, whether qualitative or quantitative. The best value that is now accessible must be evenly declining or growing for the greatest value to be deemed ideal and the worst value to be deemed anti-ideal.

· The criteria should be created such that they are distinct from one another (being independent means the absence of internal relations).

· The alternatives' distances from the ideal and anti-ideal solutions are measured using the Euclidean distance formula since the exchange rate between the criteria is often a number other than one.

3.4 Assigning weights of criteria by decision matrix (WCDM)

Suppose we have *n* criteria and *m* alternatives. We want to construct a decision matrix of these criteria and alternatives. If $\boldsymbol{a_{ij}}$ is quantity, use numbers without any changes. The resulting matrix would be:

$$A = \begin{pmatrix} a_{11} & \dots & a_{1n} \\ \vdots & \ddots & \vdots \\ a_{m1} & \dots & a_{mn} \end{pmatrix} \qquad (6)$$

Where $\boldsymbol{a_{ij}}$ is a relative preference of alternative with criterion $\boldsymbol{j}^{th}$

The figure below shows companies as a vector in three dimensions *Return*, *Reliability*, and *Risk*. These dimensions are the criteria used in the research.



FIGURE 1. SHOWS COMPANIES AS A VECTOR IN THREE DIMENSIONS (RETURN, RELIABILITY, AND RISK)

This part explains the process of the WCDM method in seven steps as follows:

Step1. Normalize decision matrix with Rumina method

There are several positive (benefit) and negative (loss) criteria. Rumina approach is a normalization technique that has been suggested in this sector. Divide each criterion's value for positive criteria by the greatest value for that criterion. In negative direction criteria, the values of each criterion are divided by the least value of the criterion [Habibi 1].

$$n_{ij} = \begin{cases} \dfrac{a_{ij}}{max\ a_{ij}}, & C_j > 0 \\ \dfrac{min\ a_{ij}}{a_{ij}}, & C_j < 0 \end{cases} \qquad (7)$$

Step2. Construct a non-scale matrix with the linear sum method

The computation of eigenvectors is a straightforward Saaty normalization technique. In this strategy, dividing each integer in a set by the total number of its components suffices. After normalization, the total number of elements in this scenario will equal one [Vafaei, Nazanin and Ribeiro, Rita A. and Camarinha-Matos 264-265].

$$n_{ij} = \frac{x_{ij}}{\sum_{i=1}^{m} x_{ij}} \qquad (8)$$

Step3. Find the maximum and minimum rows value of the matrix

This step computes the maximum and minimum of the matrix obtained from the previous step.

Step4. Give a score to columns: Count the number of ones on each column

To give grades to criteria, find the number of times each criterion has the best value (number one is the best value) for alternatives. In a simple word, count the number of ***1*** for each column. The sum of number ***1*** of each column is equal to the number of alternatives. The same way must be done for the worst value.

MAXIMUM			***MINIMUM***		
C1 Sum of One	*C2 Sum of One*	*C3 Sum of One*	*C1 Sum of One*	*C2 Sum of One*	*C3 Sum of One*

Step5. Calculate coefficient

Calculate the distance between the best and the worst for each column.

n_j = (Number of best -Number of worst)		
$n_1 = C1_{best} - C1_{worst}$	$n_2 = C2_{best} - C2_{worst}$	$n_3 = C3_{best} - C3_{worst}$

Step6. ***Find the unit of weight***

First, compute the minimum distance between the best and worst that was obtained in the previous step, then calculate the distance between them with minimum call it d_j. Now must find the unit weight for criteria ***w*** by equation $w = 100/\sum_{j=1}^{n} a_j$ where ***n*** is number of criteria.

Tip. If $d_j = d_{min}$ then the coefficient of the weakest criteria is zero it will be removed.

Min n_j	n_{min}		
d_j = Distance n_{min} to other	$n_1 - n_{min}$	$n_2 - n_{min}$	$n_3 - n_{min}$
Coefficient	$a_1 = d_{min=0}$	$a_2 = d_2$	$a_3 = d_3$
w is the unit weight of criteria	$w = 100/\sum_{j=1}^{n} a_j$		

Step7. ***Weight of criteria:*** Multiple units of weight to the coefficient

Coefficient	a_1	a_2	a_3
w is unit of weight	w		
Weight of criteria	$C_1 = a_1 \times w$	$C_2 = a_2 \times w$	$C_2 = a_3 \times w$

3.5. Compute return of a portfolio

The return of a portfolio is defined by the formula (9) in the table below:

$$Portfolio\ return = \sum_{i=1}^{m} w_i r_i \qquad (9)$$

The return of each alternative is r_i, the weight of each alternative in the portfolio is w_i, and the number of alternatives is ***m*** [Esajian 1].

3.6 A real-world example

This section demonstrates WCDM through a real-world example. This paper uses an example to demonstrate the process in the real world. We applied this approach on the Tehran Stock Exchange for twenty businesses to determine the true price of each trading day with capital augmentation, DPS, and trading fees. The choice matrix contained twenty firms as options, as well as three criteria consisting of return, reliability, and risk.

As an example, this decision matrix was made from values from earlier portions for the year 1397. The table below pertains to 1397 (2018 to 2019), and it is used to explain the WCDM method.

TABLE 1. THE SAMPLE OF A DECISION MATRIX

DECISION MATRIX							
1397	***Return***	***Reliability***	***RISK***	***Company***	***Return***	***Reliability***	***RISK***
Iran Mineral P.	*55.86*	*0.39*	*-0.68*	*Sobhan Pharm.*	*-4.78*	*1.00*	*1.07*
Behbahan Cement	*-12.66*	*0.97*	*-0.61*	*Iran Mobil Tele*	*30.11*	*0.50*	*0.57*
Dadeh pardazi Iran co	*15.86*	*0.24*	*1.28*	*Chadormalu*	*31.69*	*0.71*	*1.08*
Fanavaran Petr.	*54.68*	*0.59*	*0.07*	*Iran Khodro*	*0.75*	*1.00*	*1.56*
*S*North Drilling*	*-48.54*	*1.00*	*0.18*	*Khouz. Steel*	*57.45*	*0.31*	*1.14*
*S*IRI Marine Co.*	*-1.46*	*1.00*	*0.60*	*S*I. N. C. Ind.*	*65.43*	*0.50*	*0.76*
Butane Group	*49.16*	*0.81*	*0.77*	*Azar Refract.*	*-39.06*	*0.84*	*-0.41*
Shahroud Sugar	*5.87*	*0.13*	*2.08*	*S*Tehran Const.*	*-26.38*	*1.00*	*-1.26*
Yazd Jooshkab	*6.66*	*0.31*	*0.80*	*MAPNA*	*-11.28*	*1.00*	*0.84*
Sahand Rubber	*7.72*	*0.29*	*1.02*	*S*Mellat Bank*	*-10.53*	*1.00*	*0.39*

1397	***Return***	***Reliability***	***RISK***
Max Or Min of Criteria	*65.43*	*0.13*	*2.08*

In this stage, the WCDM method is used. First, construct a normalized decision matrix using three criteria explained in the previous section and the Rumina and Linear normalizing techniques for this aim.

Table 2. Normalized Decision Matrix

Rumina				***Normalizing (Linear)***		
1397	*Return*	*Reliability*	*RISK*	*Return*	*Reliability*	*RISK*
Iran Mineral P.	*0.85*	*0.34*	*-0.32*	*0.25*	*0.06*	*-0.06*
Behbahan Cement	*-0.19*	*0.13*	*-0.29*	*-0.06*	*0.02*	*-0.05*
Dadeh pardazi Iran co	*0.24*	*0.55*	*0.62*	*0.07*	*0.10*	*0.11*
Fanavaran Petr.	*0.84*	*0.22*	*0.03*	*0.24*	*0.04*	*0.01*
*S*North Drilling*	*-0.74*	*0.13*	*0.09*	*-0.21*	*0.02*	*0.02*
*S*IRI Marine Co.*	*-0.02*	*0.13*	*0.29*	*-0.01*	*0.02*	*0.05*
Butane Group	*0.75*	*0.16*	*0.37*	*0.22*	*0.03*	*0.07*
Shahroud Sugar	*0.09*	*1.00*	*1.00*	*0.03*	*0.18*	*0.19*
Yazd Jooshkab	*0.10*	*0.42*	*0.38*	*0.03*	*0.08*	*0.07*
Sahand Rubber	*0.12*	*0.45*	*0.49*	*0.03*	*0.08*	*0.09*

Sobhan Pharm.	*-0.07*	*0.13*	*0.51*	*-0.02*	*0.02*	*0.09*
Iran Mobil Tele	*0.46*	*0.26*	*0.28*	*0.13*	*0.05*	*0.05*
Chadormalu	*0.48*	*0.18*	*0.52*	*0.14*	*0.03*	*0.10*
Iran Khodro	*0.01*	*0.13*	*0.75*	*0.00*	*0.02*	*0.14*
Khouz. Steel	*0.88*	*0.42*	*0.55*	*0.25*	*0.08*	*0.10*
*S*I. N. C. Ind.*	*1.00*	*0.26*	*0.36*	*0.29*	*0.05*	*0.07*
Azar Refract.	*-0.60*	*0.16*	*-0.20*	*-0.17*	*0.03*	*-0.04*
*S*Tehran Const.*	*-0.40*	*0.13*	*-0.60*	*-0.12*	*0.02*	*-0.11*
MAPNA	*-0.17*	*0.13*	*0.40*	*-0.05*	*0.02*	*0.07*
*S*Mellat Bank*	*-0.16*	*0.13*	*0.19*	*-0.05*	*0.02*	*0.03*
SUM	*3.46*	*5.47*	*5.40*			

RUMINA'S NORMALIZATION CAN MITIGATE THE NEGATIVE EFFECT OF THE RELIABILITY CRITERION. IN THE TABLE BELOW, WE APPLIED THE LINEAR TECHNIQUE TO OBTAIN EACH ROW'S MAXIMUM AND LOWEST VALUE. THESE NUMBERS CAN ASSIST IN DETERMINING THE NUMBER ***'1'***.

TABLE 3. COMPUTING NUMBER OF ONES

1397	***Best***			***Worst***			
Max of Linear	***Return***	***Reliability***	***RISK***	***Return***	***Reliability***	***RISK***	***Min of Linear***
0.25	1.00	0.25	-0.24	-4.10	-1.02	1.00	-0.060
0.02	-2.27	1.00	-2.22	1.00	-0.44	0.98	-0.056
0.11	0.61	0.89	1.00	1.00	1.44	1.63	0.070
0.24	1.00	0.17	0.03	39.21	6.61	1.00	0.006
0.02	-8.95	1.00	0.67	1.00	-0.11	-0.08	-0.214
0.05	-0.12	0.45	1.00	1.00	-3.72	-8.23	-0.006
0.22	1.00	0.14	0.32	7.37	1.00	2.32	0.029
0.19	0.14	0.99	1.00	1.00	7.05	7.14	0.026
0.08	0.39	1.00	0.93	1.00	2.59	2.41	0.029
0.09	0.38	0.90	1.00	1.00	2.41	2.66	0.034
0.09	-0.22	0.25	1.00	1.00	-1.13	-4.49	-0.021
0.13	1.00	0.36	0.38	2.80	1.00	1.08	0.047
0.14	1.00	0.24	0.69	4.16	1.00	2.86	0.034
0.14	0.02	0.17	1.00	1.00	7.19	41.68	0.003
0.25	1.00	0.30	0.40	3.28	1.00	1.31	0.077
0.29	1.00	0.17	0.23	6.03	1.00	1.41	0.048
0.03	-6.08	1.00	-1.29	1.00	-0.16	0.21	-0.172
0.02	-4.86	1.00	-4.67	1.00	-0.21	0.96	-0.116
0.07	-0.67	0.32	1.00	1.00	-0.48	-1.50	-0.050
0.03	-1.33	0.69	1.00	1.00	-0.52	-0.75	-0.046

Number of 1 Best	*7*	*5*	*8*	*13*	*5*	*2*	***Number of 1 Worst***

The table above demonstrates how each alternative (companies) has performed in relation to each criterion. Compute the number of the best and worst (numbers ***'1'***) for each criterion at the end of the table. For example, the criteria ***Return*** contains eight greatest and ten lowest values.

Table 4. Process of assigning the weight to criteria after normalizing the decision matrix

Criteria	***Return***	***Reliability***	***Risk***
n_j = (Number of '1' for Beat - Number of '1' for Worst)	*7 – 13 = -6*	*5 - 5 = 0*	*8 – 2 = 6*
Min n_j	*-6*		
d_j = Distance d_{min} to other	*0*	*6*	*12*
The sum of d_i + 1	*18*		
Coefficient a_i	*0*	*6*	*12*
w is the unit weight of criteria	*5.556*		
Weight of criteria	*0*	*33.33*	*66.67*

n_j is the difference between the number of the best and worst

d_j is a vector and shows the distance between n_{min} with other n_j from itself.

In the example above the distance between n_1 and $n_{min} = 0$ then a_1 is zero and the weight of Return will be zero, too. Actually two criteria have weight, some times happen that there is only one criterion that has weight.

$n_1 = n_{min} = -2$ $n_2 = 0$ $n_3 = 2$



4. Scientific novelty

This study introduces and evaluates a new method with high efficiency called WCDM for computing the rank of criteria and weighting. The WCDM method helps construct profitable portfolios with returns more than interest banks and stock market indexes by TOPSIS as the MCDM method for ranking alternatives. This method works as well as other methods like Shannon. In the long term, WCDM's performance is better than Shannon's.

5. Analysis

This section compares the results of giving weight by WCDM to criteria for six years with Shannon and further uses TOSIS techniques for calculating the return of each portfolio. The charts illustrate portfolio outcomes, and aid in determining which strategy performs best.



FIGURE 2. CRITERIA'S WEIGHT BY WCDM METHOD FOR SIX YEARS

Figure 2 depicts the weight of three criteria estimated with WCDM for each year from 2016 to 2021.



FIGURE 3. CRITERIA'S WEIGHT BY SHANNON FOR SIX YEARS

Figure 3 depicts the weight of three criteria determined with Shannon for each year from 2016 to 2021. Figure 4 depicts the weight of the criteria using two approaches, WCDM and Shannon.



FIGURE 4. COMPARING THE ANNUAL RETURN OF WCDM AND SHANNON WITH TOPSIS

Figure 4 depicts TOPSIS outcomes as portfolio returns from 1395 to the end of 1399. When the findings are examined more closely, the yearly returns of each approach after one, two, three, four, and five years are fairly close by two WCDM and Shannon.



FIGURE 5. COMPARING THE RETURN OF WCDM AND SHANNON WITH TOPSIS AFTER N YEARS

Figure 5 depicts the performance of two approaches, WCDM and Shannon, for assigning weights to criteria and calculating each portfolio's return. TOPSIS is the approach used to weigh the alternatives. As a result, the data reveal that WCDM outperforms Shannon in the same circumstance five years.

6. Conclusions

This study attempts to create a novel strategy for ranking criteria and then assigns weight to them for use in the well-known method TOPSIS. TOPSIS is one of the most well-known MCDM strategies for ranking options. The findings are based on a real-world sample of firms registered on the Tehran Stock Exchange. The choice matrix included twenty companies from various industries as well as three criteria: return, reliability, and risk.

Figure 5 shows the return of each portfolio where WCDM and Shannon assigned the weight to criteria, and TOPSIS has computed the weight of alternatives and portfolio returns. The results indicate the performance of WCDM and Shannon. The performance of each approach is extremely near to each other. In the same circumstance, WCDM performs better than Shannon after five years. So WCDM performance is comparable to the well-known Shannon technique, which assigns a rank and weight to criteria.

Future studies can compare this WCDM approach to other methods such as BWM and LINMAP, as well as other ways that can weigh alternatives in different real-world scenarios.

References

1. Azar, A. “Extending and Developing the Shannon Entropy for Data Process in Content Analysis.” *JOURNAL OF HUMANITIES*, vol. 11, no. 37–38, 2001, pp. 1–18, https://www.sid.ir/en/journal/ViewPaper.aspx?id=21699.
2. Beattie, Andrew. “A Guide to Calculating Return on Investment (ROI).” *Investpedia*, 2022, https://www.investopedia.com/articles/basics/10/guide-to-calculating-roi.asp.
3. Esajian, JD. “How To Calculate Portfolio Return: An Investor’s Guide.” *Fortunebuilders*, https://www.fortunebuilders.com/how-to-calculate-portfolio-return/.
4. Habibi, Arash. *Data Normalization (Normalization Methods)*. 2018, https://parsmodir.com/mcdm/normalization.php.
5. Hasan, Mohammad, et al. “Selection of Portfolio by Using Multi Attributed Decision Making (Tehran Stock Exchange).” *American Journal of Scientific Research*, vol. 44, 2012, pp. 15–29.
6. Hosseinzadeh Lotfi , F and Fallahnejad, R. “Imprecise Shannon’s Entropy and Multi Attribute Decision Making.” *Department of Mathematics, Science & Research Branch, Islamic Azad University (IAU)*, 2010, pp. 53–62, https://doi.org/doi:10.3390/e12010053.
7. Jahan Biglari, Arash. “RELIABLE RISK OF RETUN (RRR) CRITERION: EVIDENCE OF TEHRAN STOCK EXCHANGE.” *Alternative*, 2021, p. 12, http://alternative.am/wp-content/uploads/2021/12/Arash-Jahan-BIGLARI-Reliable-Risk-of-Return-Criterion.-Evidence-of-Tehran-Stock-Exchange.pdf.
8. Keeney, Ralph, et al. “Decisions with Multiple Objectives: Preferences and Value Trade-Offs.” *Systems, Man and Cybernetics, IEEE Transactions On*, vol. 9, 1979, p. 403, https://doi.org/10.1109/TSMC.1979.4310245.
9. Kenton, Will. “What Is Beta?” *Investpedia*, 2021, https://www.investopedia.com/terms/b/beta.asp.
10. Odu, Godwin. “Weighting Methods for Multi-Criteria Decision Making Technique.” *Journal of Applied Sciences and Environmental Management*, vol. 23, 2019, p. 1449, https://doi.org/10.4314/jasem.v23i8.7.
11. Pavić, Zlatko, and Vedran Novoselac. “Notes on TOPSIS Method.” *International Journal of Research in Engineering and Science*, vol. 1, Jan. 2013, pp. 5–12.

12. Vafaei, Nazanin and Ribeiro, Rita A. and Camarinha-Matos, Luis M. “Normalization Techniques for Multi-Criteria Decision Making: Analytical Hierarchy Process Case Study.” *7th Doctoral Conference on Computing, Electrical and Industrial Systems (DoCEIS)*, edited by Luis M. Camarinha-Matos and Ant{\’o}nio J. Falc{\~a}o and Nazanin Vafaei and Shirin Najdi, v1 ed., Springer, 2016, pp. 261–269, https://doi.org/10.1007/978-3-319-31165-4_26.

Նյութը ներկայացվել է 16.06.2023,
գրախոսման է ուղարկվել 16.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ. Ն. Մանասերյանը :

ՀՏԴ 730

Արվեստագիտություն

Անահիտ ՕՀԱՆՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարան
Ճարտարապետաշինարարական ֆակուլտետ
Դիզայնի և հագուստի մոդելավորման դեպարտամենտի հայցորդ
E-mail: anahitohanyan999@gmail.com

ՔԱՐԵՂԵՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԽՈՐՀՈՒՐԴ ԱԿՈՐԴՆԵՐԸ

Քանդակը տեսողական արվեստի մի ձև է, որը հետագայում անվանվեց արվեստ։Այն հիմնականում կապված է եղել ծեսերի կամ պաշտամունքների հետ։ Որպես առանձին մշակույթ՝ այն առնչվում է աշխարհաքաղաքական պայմաններին հետ։ Քրիստոնության ընդունման հետ կապված՝ մեծ զարգացում է ապրել հարթաքանդակային արվեստը, և որպես եզակի քանդակային ձև՝ խաչքարային արվեստը։ Վաղնջական ժամանակներից մինչև հիմա Արցախում զարգացման ընթացք է ունեցել քանդակագործությունը։ Այդ են վկայում եկեղեցիները՝ իրենց սրբատաշ խաչքարերով։ Արցախյան քանդակագործության ծիրում անգնահատելի վաստակ ունի հայտնի քանդակագործ Յու. Հովհաննիսյանը։ «Քարեղեն երաժշտության բազմախորհուրդ ակորդները» հոդվածը ընդհանրացնում է Արցախի նշանավոր քանդակագործ, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի հիմնադիր, մանկավարժական հարուստ փորձ ու ակտիվ կենսադիրք ունեցող մտավորական Յու. Հովհաննիսյանի արվեստագիտական վաստակը։

Տաղանդավոր արվեստագետի աշխարհը բացահայտվում է նրա ստեղծագործություններում՝

դիմաքանդակ, կոմպոզիցիա, մոնումենտալ դեկորատիվ աշխատանքներ…

Հարթ ու միատարր չի եղել Յու. Հովհաննիսյանի ստեղծագործական ուղին: Նա իր ստեղծագործական քանքարով պատերազմական դաժան առօրյայից վեր հանեց գեղեցկությունը, սովորեցրեց պահպանել հնագույն մշակույթը և առայսօր այն բարձրացնում է նոր՝ աշխարհին տեսանելի մակարդակի. վկան՝ հայ քանդակագործության արդիական խնդիրներին համահունչ նրա ստեղծագործությունները, տարիների հունձքը, մնայուն ու մշտահունչ վաստակը:

Բանալի բառեր՝ Ապրած տարիներ, քանդակագործություն, «Արցախ» հայրենակցական միություն, մնայուն արժեքներ, տաղանդավոր արվեստագետ, արհեստավարժ պրոֆեսիոնալիզմ , Արցախի մշակույթ, ոգևորության աղբյուր, ավանդույթներ, «Որդիները չվերադարձան», «Տրտմություն», «Պարող բաքոսուհին», ոճական բազմազանություն, արդիական խնդիրներ, պատկերագիրք:

А.Оганян

МНОГОГРАННЫЕ АККОРДЫ МУЗЫКИ В КАМНЕ

Скульптура – вид визуального искусства, которая в основном связана с обрядами и поклонениями и как самостоятельная культура зависит от геополитических условий. С принятием христианства большого развития достигла платформенная скульптура, и в качестве уникального скульптурного вида – хачкаровое искусство. С незапамятных времен и до сих пор в Арцахе скульптура находится в процессе развития. Об этом свидетельствуют церкви, с их святовысяченными хачкарами. Неоценимый вклад в становление арцахской скульптуры внес Ю. Ованнесян. Статья “Многогранные аккорды каменной музыки” обобщает искусствоведческие достяжения знаменитого скульптора, заслуженного деятеля искусства, профессора, основателя института прикладного искусства “ Гюрджян”, интеллигента, ведущего активный образ

жизни с богатым педагогическим опытом. Мировоззрение талантливого искусствоведа раскрывают его произведения, портреты, композиция, монументальные декоративные работы... Творческий путь Ю. Ованнесяна не был гладким и однообразным. Он своим творческим талантом из жестоких военных будней поднял красоту, научил сохранять древнюю культуру и до сих пор поднимает ее на видимый для нового мира уровень в соответствии с актуальными проблемами армянской культуры, его творчество остается неизменной заслугой на протяжении многих лет.

Ключевые слова: *Прожитые годы, скульптура, патриотический союз «Арцах», извечные ценности, талантливый художник, профессионализм, культура Арцаха, источник вдохновения, традиции, «Сыновья не вернулись», «Грусть», «Танцующая ведьма», стилистическое многообразие, насущные проблемы, книга иллюстраций.*

A.Ohanyan

POLYPHONIC CHORDS OF MUSIC IN STONE

Sculpture is a form of visual art, which later became known as art. It has mostly been associated with rituals or cults. As a separate culture, it was connected with geopolitical conditions. In connection with the adoption of Christianity, the flat sculpture art experienced a great development, and as a unique form of sculpture, the khachkar art. Sculpture has been developing in Artsakh since ancient times until now. This is evidenced by the churches with their sacred khachkars. Famous sculptor Yu. Hovhannisyan has an invaluable contribution to the history of Artsakh sculpture.The article "Polyphonic chords of music in stone" presents a summary of the creative merits of the prominent sculptor of Artsakh, honored artist, professor, founder of the Gyurjyan Institute of Applied Arts, an intellectual with rich teaching experience and an active life position, Yu. Hovhannisyan.

His works - busts, compositions, monumental and decorative works - reflect the world of a talented artist.

The creative path of Yu. Hovhannisyan was not easy. With his artistic talent, he brought out the beauty in the brutal days of the war, taught to preserve the ancient culture and to this day raises it to a new level visible to the World. The evidence is his creation in line with the current problems of Armenian sculpture, rich long-term experience, enduring and actual merit.

Key words: *Lived years, sculpture, Artsakh patriotic union, eternal values, talented artist, professionalism, culture of Artsakh, source of inspiration, traditions, "Sons did not return", "Sadness", "Dancing Witch", stylistic diversity, pressing problems, book of illustrations .*

Քանդակը վաղնջական ժամանակներից տեսողական մտածողության մի ձև է, որը հետագայում անվանվեց արվեստ ու ներառում է եռաչափ առարկաների ստեղծում՝ փորագրելով կամ ձուլելով քարի, փայտի ու մետաղի մեջ: Այն կարող է լինել ճանաչողական՝ իրական աշխարհից, կամ աբստրակտ՝ առնչվելով մտքերի ու գաղափարների հետ՝ այս կամ այն համայնքի աշխարհընկալման համապատասխան:

Այն հիմնականում կապված է եղել ծեսերի կամ պաշտամունքների հետ: Հետագայում ավելի առարկայական է դարձել՝ կապված քաղաքակրթության զարգացմանը, ինչպես նաև կյանքի տարբեր ոլորտների մեկնաբանմանը ու գովերգմաը՝ հանդես գալով թե՛ առանձին, թե՛ համատեղ՝ ճարտարապետաշինարարության հետ: Որպես առանձին վիզուալ (տեսողական) մտածողության ձև՝ այն կոչվել է *հաստոցային*: Հայ ժողովրդի պատմության մեջ կլոր քանդակ ունեցել ենք Վանի թագավորության ժամանակ. պաշտամունքային նշանակության հսկա դիմաքանդակներ էին դրանք: Արտաշեսյան դինաստիայի ժամանակ՝ հելլենիստական շրջանում, քանդակագործությունը կրել է հունա-հռոմեական արվեստի ազդեցությունը: Որպես առանձին մշակույթ, կապված մեր աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմանների հետ, այն զարգացում չի ապրել: Հետագա դարերում՝ քրիստոնեության ընդունմամբ պայմանավորված, մեծ զարգացում է ապրել ճարտարապետական պաշտամունքային կոթողների հարթաքանդակային արվեստը, և որպես եզակի քանդակային ձև՝ խաչքարային արվեստը: Այստեղ արդեն հայ մարդու քանքարի ուժը հրաշքներ է գործել, հատկապես վերածննդի ժամանակաշրջանում: Հայաստանում վերածննդի սկիզբը համարվում է IX դարը: Հայ իրականության մեջ հաստոցային քանդակը սկզբնավորվեց 18-19-րդ

դարերում և զարգացում ապրեց 20-21-րդ դարերում: Ունեցանք փայլուն անուններ՝ Հակոբ Գյուրջյան (ծնունդով շուշեցի), Արա Սարգսյան, Երվանդ Քոչար, Ղուկաս Չուբարյան, Արտաշես Հովսեփյան, Սուրեն Նազարյան և ուրիշներ:

Վաղնջական ժամանակներից մինչև հիմա Արցախում զարգացման ընթացք է ունեցել քանդակագործությունը: Այդ են վկայում եկեղեցիները՝ իրենց սրբատաշ խաչքարերով: Արցախյան քանդակագործության ծիրում անգնահատելի վաստակ ունի հայտնի քանդակագործ Յու. Հովհաննիսյանը:

Մարդու ապրած տարիներն անիմաստ են, եթե չեն իմաստավորվում արած-թողածով: Եթե դրանք գեղեցիկ ներկա ու անցյալ չեն, ապա կորցրած տարիների ցավ ու մորմոք են...

Սիրով ու հիացմունքով ենք թերթում Յու. Հովհաննիսյանի՝ գործի հանդեպ անմնացորդ նվիրումով արվեստագետի կյանքի էջերը: Գնալ դեպի արվեստի բարձունքները՝ միշտ հավատարիմ մնալով արմատներին. ահա ճշմարիտ արվեստի ճանապարհը, ազգայինով շնչող, ազգայինը շեշտող ու հաստատող արվեստագետի ուղենիշը:

Արցախի ճակատագրով ապրող արվեստագետ-քանդակագործն ամբողջ կյանքում եղել է ինքնահաստատման պայծառ ուղիներ փնտրող թե՛ փոքրածավալ և թե՛ մոնումենտալ ստեղծագործություններում: Արվեստի մեջ կատարյալ է այն ստեղծագործությունը, որը զգացումի ու խոհի միասնություն է: Փորձենք տարանջատել դրանք, մերկը կվերածվի մերկապարանոց և անդուր կոթողի: Ահա Յու.Հովհաննիսյան քանդակագործի առաջին կարևորագույն հատկանիշը: Ասելիքը բխում է սրտից և անցնում մտքի քուրայով: Թերևս այդ է պատճառը, որ արվեստագետի բազմաթիվ քանդակները հոգու տագնապ ու ճիչ լինելով՝ նաև խրոխտ ու հաստատուն բանականություն են: Բազմաբովանդակ ու իմաստալից ասելիքը խոսուն է ու բնութագրող, իսկ արվեստը մնայուն է, երբ խոսելու ընդունակություն ունի: Դրա համար պետք է սյուժետային հենքը խորքից ուղեկցի դիտողին, ընկալողին և կենդանի ձայներով զրուցի նրա զգացմունքների հետ: Ոչինչ է արվեստը, եթե նրա տպավորությունը խամրող է կամ կարճատև, իսկ ընկալողի հիշողության մեջ երկար մնալով՝ այն վերածվում է մարդկայնորեն գեղեցիկ ու մնայուն, կյանքոտ ստեղծագործության:

Յու. Հովհաննիսյանը յուրացրել է դասական արվեստի առանձնահատկությունները: Թերևս դրանից են նրա խիստ արդիական ստեղծագործությունները դառնում մնայուն արժեքներ, որոնք այսօր յուրօրինակ հույս ու հավատ են, մարդկային խռովք, անանց կարոտ ու վիշտ՝ միշտ առինքնող, հավաստի ու ինքնօրինակ ակորդներով:

Տաղանդավոր արվեստագետի կյանքի ուղին բազմաբովանդակ ու հետաքրքիր ստեղծագործություն է՝ ապրած իմաստալից տարիներով:

Ծնվել է 1948թ. մայիսի 12-ին Շոշ գյուղում: 1974թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինը: 1979-ից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների, 1981-89թթ. զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1979թ-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: Արցախյան պատերազամի ծանր օրերին նա իր ժողովրդի ցավի հետ էր՝ Արցախի ճակատագրով ապրող անհատ: Երևանում արցախահայության «Արցախ» հայրենակցական միության անդամ էր, իսկ 1991- 1996թթ.՝ նրա ղեկավարը: 1996թ. Յու. Հովհաննիսյանը մեկընդմիշտ տեղափոխվում է Արցախ և հիմնադրում «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը՝ իր ստեղծագործական ունակությունները հայ երիտասարդությանը փոխանցելու սրբազան նպատակով: Մի առիթով Յու. Հովհաննիսյանը ասել է. «հայրենիքը ստեղծում են այնտեղ ապրելով, մեռնելով ու կորցնելով, հեռվից կարոտելով հայրենիք չեն ստեղծում»:

Հովհաննիսյան քանդակագործի աշխարհը բացահայտվում է նրա ստեղծագործություններում, որոնք խոհ են, զգացմունք: Սրանք գիրկընդխառն հանդես են գալիս ժանրային լայն ընդգրկում ունեցող ստեղծագործություններում՝ դիմաքանդակ, կոմպոզիցիա, մոնումենտալ դեկորատիվ աշխատանքներ: Միանգամայն ճիշտ է Նունե Հայրապետյանը. «Առարկայական աշխարհի պարզ մոդելը քանդակագործի ձեռագրով փոխակերպվում է իդեալի, առարկան դառնում է կավեղեն ու քարեղեն մեղեդի»[1]: Սա հենց հեղինակի արվեստի այբուբենն է, որի վրա հյուսվում է արվեստի մնայուն կոթողը՝ հեղինակի գեղարվեստական մտածողության ու սուր դիտողականության արդյունքը: «Պատերազմից թուլացած ժողովրդին հոգեպես սատարելու համար, պետք է ստեղծել բարձր արվեստ»,- զրույցներից մեկի ժամանակ ասել է արվեստագետը:

Յու. Հովհաննիսյանի ստեղծագործական ուղին դժվար և մաքառումներով լի էր: Ծանր տարիներ էին, պատերազմական տարիներ, իսկ արվեստը գրեթե մոռացված էր (երբ արկերն են ոռնում, մշակույթը լռում է): Յու. Հովհաննիսյանն իր ստեղծագործական քանքարով պատերազմական դաժան առօրյայից վեր հանեց գեղեցկությունը, սովորեցրեց երիտասարդությանը պահպանել հնագույն մշակույթը, այն բարձրացնել նոր՝ աշխարհին տեսանելի մակարդակի: Բազմաթիվ օրինակները վկայում են, որ Յու. Հովհաննիսյանի կատարողական տեխնիկան առավել արտահայտիչ դրսևորվում է դեկորատիվ-սիմվոլիստական ձևամտածողություններով:

[1] *«ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 16 մայիսի, 1998:*

Արվեստի հետաքրքիր և յուրահատուկ դրսևորումներ ունի նրա քանդակագործությունը: Նկատելի է, որ չափազանց գերզգայուն արվեստագիտական ընկալումը երբեմն լարվածությունը վերածում է պոռթկման, զգացմունքների գերխտացման: Այդ գերխտացումը երկար ժամանակ մնում է դիտողի հիշողության մեջ, մտապատկերներում. վկան՝ «Յոթ բռունցք-Ըմբոստացած Արցախ» քանդակները: Յուրի Հովհաննիսյանի արվեստի աշխարհը բազմաթիվ առանձնահատկություններ ունի: Ոճական բազմազանությունը դիտողի մոտ ձևավորում է բարձր ճաշակ, նուրբ ու ինքնատիպ ընկալում. վկան՝ «Երաժշտություն», «Պոեզիա», «Տրտմություն», «Զրույց», «Պարող բաքոսուհին», «Պատանեկություն» գործերը: Այս կոթողներում ակամայից զգում ենք գրականության, պոեզիայի և քանդակագործության աղերսները՝ կենդանի, խոսուն, բազմազգացում, ինքնատիպ: Պոեզիայի նման թախծոտ ելևէջներից են հյուսված արցախցու առօրյայի, կյանքի զանազան դրվագներին վերաբերող քանդակները: Արցախցի Մուխան դայու քանդակը մարդկային հոգս ու տառապանք է արտահայտում, խռովք ու անանց կարոտ, վիշտ: Եվ ինչպես պոեզիայում վեհ է տառապանքը, մարդկայնորեն գեղեցիկ ու խոսուն, այդպես և քանդակագործության մեջ. Հովհաննիսյանի «Որդիները չվերադարձան» քանդակը թախծաշաղախ տրամադրության, տառապանքի ու ցավի հետ նաև հավատի անսքող ակորդներ է «նոտավորում»:

Յու. Հովհաննիսյանի քանդակի աշխարհը ունի մի կարևոր առանձնահատկություն ևս. այն առաջին տպավորությամբ փոթորկահույզ է, բայց խորքում հոգեպարար հանգստություն է անկնալում: Այն հարցին, թե ինչպես է քանդակագործին հաջողվում ստեղծածին շունչ ու կենդանություն տալ, Յու. Հովհաննիսյանը պատասխանում է. «Ամբողջ գաղտնիքը և վարպետությունը հենց դրանում է, որ կարողանաս այդ անշունչը դարձնել շնչավոր: Հրաշք է, թե ինչ՝ չգիտեմ: Գիտեմ միայն, որ պետք է շատ ջանք թափել, պետք է շատ սիրել-փայփայել: Մեծ ու անասելի նվիրումով պետք է կավի հոգին մտնել: Կավի և քանդակագործի երկխոսությունն էլ սեր է, քանդակագործի սիրող մատների ջերմությանը, եթե կավը տրվեց… ծնվում է քանդակը, սրանում է քանդակագործի մեծությունը, վարպետությունը: Կարող է քարաժայռի չափ մեծ քանդակ լինել, բայց անշունչ, մեռած մնալ, իսկ փոքրիկ մի գործ կարող է խոսել քեզ հետ, սա է գաղտնիքը»[1]:

Արվեստի մյուս տեսակներից քանդակագործությունը տարբերվում է նրանով, որ սուղ միջոցներով շատ բան է ասում: Լայն մտահորիզոնի տեր արվեստագետի հետ հաճելի է զրուցել քանդակագործության անցած

[1] *«Լուսարար» (ներդիր) , Ստեփանակերտ, 2007, թիվ 14-15, էջ 3:*

ճանապարհի, արցախյան քանդակագործության առանձնահատկությունների շուրջ: Հովհաննիսյանի ստեղծագործության յուրատիպությունը **միօրինակության հաղթահարումն** է: Թեմատիկ բազմազանությունը կյանքի տարբեր բնագավառներ է խորհրդանշում: Ոչ մի ցուցադրական, ոչ բնական շտրիխ չենք տեսնում նրա քանդակներում: Շատ քանդակներում էլ տեսնում ենք բնության հրաշակերտումի և քանդակային կերպարի միահյուսումը («Գայանեի քանդակը», «Բարբարայի քանդակը»): Յուրաքանչյուրն առանձնանում է իր հոգեկան կերտվածքով, տրամադրությամբ, կենդանի գծերով: Հայրենասիրության և վրիժառության զգացումների խտացում է Սողոմոն Թեհլերյանի դիմաքանդակը: Հովհաննիսյանի քանդակագործության առանձնահատկություններից է նաև **գեղագիտականի և խոհականի միահյուսումը**: Փայլուն պրոֆեսիոնալիզմ ենք տեսնում «Անդրանիկ Զորավար», «Յոթ բռունցք», «Հրեշտակը գրքով», «Քրիստոնեության վերադարձը», «Շարժում», քանդակներում: Կենսահաստատ տրամադրություն է ծորում Աշան գյուղի ազատամարտիկներին նվիրված երկաստիճան կոմպոզիցիան: Այն դեկորատիվ լուծումներով արտացոլում է ծնկաչոք կնոջը՝ լուռ, որդեկորույս մոր կերպարը: Երկրորդ աստիճանում տեսնում ենք ազգային ազատագրական պայքարի հերոսներին: «Մոնումենտալ-դեկորատիվ քանդակը միշտ էլ գրավել է ինձ», - խոստովանում է քանդակագործը և առաջինը մտաբերում Չարենցավանի հաստոցաշինական գործարանի ցուցադրական դահլիճը զարդարող 12 մետրանոց «Վերածնունդը»: Հետաքրքիր բարձրաքանդակներ են «Պեգասներ», «Անդրանիկ և սեբաստացի Մուրադ» , «Արցախ...Պայքար» աշխատանքները:

Գեղագետ, արվեստաբան Լևոն Լաճիկյանը արվետագետ Յու.Հովհաննիսյանի գործն արժևորող «Խոհական զգացմունքի վարպետ կերպավորողը» հոդվածում նկատում է. «Գիրքը հատուկ դերակատարություն ունի Յու. Հովհաննսիյանի ստեղծագործության մեջ: Այն խորհրդանշում է ընդհանրապես հոգևոր մշակույթ, իմացական ժառանգություն» [1]:

Հիրավի, ճշմարիտ արվեստագետը չի կարող կապ չունենալ արվեստի մյուս տեսակների հետ: Հովհաննիսյանի շատ քանդակներ վկայում են գրականության, պոեզիայի և քանդակագործության հոգևոր կապը: Հրաշալի կոթող է «Արվեստի վերադարձը» քանդակը, ուր քայլող հրեշտակը գիրք ունի ձեռքին պարզած, իսկ 2007-ին ստեղծված պատանեկություն քանդակի հերոսուհին, կարծես հմայված արձանացած է պոեզիայի գիրք ընթերցելիս: Հայոց գրերի 1600-ամյակին է նվիրվել Մաշտոցի կերպարը բնութագրող

[1] *«Հայաստանի Հանրապետություն», Եր., 2008, 14 հունիսի, թիվ 115, էջ 5:*

քանդակը: Այն հայոց գրերի պատմությունն է, միաժամանակ հայ ժողովրդի հարատևության խորհրդանիշը: Քարե այս խորաքանդակն այսօր էլ իր մնայուն տեղն ունի Արտաշատում: Ահա թե ինչու Հովհաննիսյան արվեստագետի համար քանդակը ավելի շատ ներդաշնակության հասնելու ազնիվ տենչ է: Գեղեցիկ է կյանքը, եթե այն ներդաշնակ է, անբիծ, մաքուր, երաժշտության նման հոգեպարար, պոեզիայի նման զգացումնալից: Հովհաննիսյան արվեստագետը երբեք ստվերում չի եղել: Ակտիվ, ազնիվ, արժանապատիվ կենսադիրքը, մասնագիտական բարձր պատրաստվածությունը, նաև՝ մանկավարժական հարուստ փորձը սերունդներ կրթելու գրավականներ են: Նրա հարուստ կենսագրության շուրջ գրվել են բազմաթիվ հոդվածներ, որոնք դեռևս ըստ էության չեն բացահայտում արվեստագետի աշխարհը: Այն սպասում է իր հետազոտողին, որովհետև Արցախը կիրառական արվեստի բնօրրանն է, նրա ուսումնասիրությունը հրատապ խնդիր է: Հովհաննիսյան արվեստագետի վաստակը անուրանալի է Արցախի մշակույթի պատմության մեջ:

Արվեստագետն ամբողջ կյանքում իր մանկավարժական գործունեությունը միահյուսել է արվեստի խորախորհուրդ, դժվար, բայց և հոգեպարար բնագավառի հետ: Բազմաթիվ առանձնահատկություններից թերևս կարևոր է Յու. Հովհաննիսյանի ինքնատիպ արվեստի **բազմազգացումայնությունը**: Զգացմունքը ծնում է բանականություն և հակառակը: Յուրի Հովհաննիսյանը գիտի քանդակի նյութի լեզուն. «Քարի հմայքն ուրիշ է, բազալտի հմայքը շատ հայկական է՝ կապտավուն, նուրբ երանգ ու գեղեցիկ ձևեր, այստեղ խաբել չի լինի, բազալտը սիրում է զրնգացող, լիքը ծավալաձևեր... Քանդակի մեջ ծավալը և ձևը միշտ էլ առաջին տեղում են»[1]:

Շատ հաճախ Յու. Հովհաննիսյանն անկեղծորեն ափսոսում է, որ ամբողջ կյանքը քանդակին չի նվիրել. «Ես չպիտի շատ զգացմունքային լինեի, պիտի ավելի հաստատակամ բռնեի քանդակն ու բաց չթողնեի»: Մեր համոզմամբ, հենց զգացմունքայնությունն է ծնել ու սնել քանդակագործի երևակայությունը, ստեղծագործական աշխարհը, խթան հանդիսացել մնայուն կոթողների ստեղծման: Իսկ մանկավարժական աշխատանքը նպաստել է արվեստագետի մարդաճանաչողությանն ու աշխարհաճանաչողությանը: Մանկավարժ-քանդակագործ. մեկը մյուսին լրացնող երևույթներ: Երկու դեպքում էլ արվեստագետը գործ ունի մարդու հետ, գործում է նրա հետ, նրա համար: Իսկ դա օգնում է թումանյանական «արևի նման նայեք աշխարհին» տեսության կիրառմանը աշխատանքում և ամբողջ կյանքում: Հատկանշական է, որ 2014թ. լույս տեսավ «Յու.

---

[1] *«Լուսարար», Ստեփանակերտ, «Զրույցներ քանդակագործի հետ», 2007, համար 14,15:*

Հովհաննիսյան» պատկերագիրքը, որը ներկայացնում է քանդակագործի ստեղծագործությունների ընտրանին: Գիրքը արվեստաբան Լուսինե Գասպարյանի «Երբ ձուլվում են աշխարհն ու քանդակ» առաջաբանով ընդգրկում է հեղինակի շուրջ 63 աշխատանք: Գրքի վերջում «Տարեգրություն» հավելվածն է, որն ամբողջացնում է հեղինակի վաստակը՝ ապրած ու արդյունավետ տարիների սեղմ բնութագրմամբ:

Յու. Հովհաննիսյանի վաստակը դրանով չի սպառվում: Կան բազում փակ էջեր, որոնք հայ քանդակագործության արդիական խնդիրներին համահունչ ստեղծագործություններ են և բացահայտում են հեղինակի ստեղծագործական աշխարհը: Արցախ աշխարհի արվեստը սպասում է իր հետազոտողներին, իսկ Հովհաննիսյանին նվիրված գիրքը շարունակելու կարիք ունի, քանի որ հեղինակի ոգևորության աղբյուրը հայրենի եզերքն է՝ իր ավանդապաշտ աշխատասեր մարդկանցով: Հովհաննիսյանի արվեստը սնվում է մեր դասական արվեստի լավագույն ավանդույթներից: Իսկ արմատներ ունեցող արվեստը երբեք չի հնանում:

Նուրբ ու խորիմաստ դիտողականություն, հոգեվիճակի նրբահյուս բացահայտում, կերպարի արտահայտչականություն, նյութի և տեխնիկայի համադրման կարողություն, ձևի և բովանդակության միասնություն, կուռ և հստակ հորինվածք, հետաքրքրիր լուծումներ, դասական արվեստի ավանդույթների կիրառում, նյութի մշակման կարողություն... բազմաթիվ առանձնահատկությունները Յու.Հովհաննիսյանի արվեստը դարձնում են մնայուն ու մշտահունչ:

Գրականություն

1. «Լուսարար», Ստեփանակերտ, «Զրույցներ քանդակագործի հետ», 2007, համար 14,15:
2. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2008, 14 հունիսի, թիվ 115, էջ 5:
3. «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 16 մայիսի, 1998:

Նյութը ներկայացվել 22.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դ. Է. Մուրադյանը:

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Արմինե ԱՎԱՆԵՍՅԱՆ
Արցախի պետական համալսարան
E-mail: armine.aloyan.82@mail.ru

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀՈԳԵՇՏԿՈՂ ԵՎ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՈՎ ՍՀԹ-Ի ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԹՐԵՅՆԻՆԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են ավագ դպրոցականների շրջանում հոգեշտկող և հոգեկարգավորող գործառույթներով սոցիալ-հոգեբանական թրեյնինգի անցկացման արդյունավետության գնահատման ուղիները, ինչպես նաև թրեյնինգի մասնակից ավագ դպրոցականների անհատական հոգեբանական ձեռքբերումները, որոնք արձանագրվել են թրեյնինգային աշխատանքի արդյունքում թիմի ձևափոխված խմբի ազդեցության շնորհիվ և նպաստել են ավագ դպրոցականների հոգեշտկմանը, հոգեկարգավորմանը: Պարզվել են թիմակազմավորող թրեյնինգի արդյունքում ավագ դպրոցականների հոգեբանական ձեռքբերումների մակարդակները:

Առանձնացվել են հուզական, վարքային, իմացական մակարդակները: Իմացական ոլորտում պատասխանների մեծ մասը վերաբերում է ուրիշների մասին նոր գիտելիքներ ստանալուն և թիմային աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների ավելացմանը: Վարքային բաղադրատարրերը բխում են իմացականից: Բնական է, որ ավագ դպրոցականներից

կազմված թրեյնինգային խմբում յուրաքանչյուր մասնակից ձեռք է բերում նոր ծանոթություններ, որոնք հնարավոր է վերափոխվեն նաև մտերմության և ընկերության: Հուզական բաղադրատարրերն արտացոլում են վերոնշյալի շարունակությունը՝ արտահայտվելով թիմային աշխատանքի արժեորության, դիմացինին ապրումակցելու կարողության մեջ: Կարևոր ձեռքբերում է հատկապես այն, որ թրեյնինգային խումբը մասնակիցների համար ինքնազարգացման խթան է:

Հավաստող գիտափորձերում օգտագործված մեթոդիկաների շրջանակում ստանդարտացվել են այն տվյալները, որոնք իրականացնում են հուզական, վարքային, իմացական գործընթացները: Պարզվել է թրեյնինգի արդյունքների համապատասխան բաղադրիչների միջև կապերը՝ բացահայտելու համար, թե որ բաղադրիչներն են առավելապես ազդում միմյանց վրա:

Բանալի բառեր՝ *արդյունավետություն, գնահատում, թիմակազմավորում, գործառույթ, գործընթաց, սոցիալ-հոգեբանական թրեյնինգ, իմացական մակարդակ, հուզական մակարդակ, վարքային մակարդակ:*

А. Аванесян

ПУТИ ОЦЕНИВАНИЯ ЭФФЕКТИВНОСТИ СОЦИАЛЬНОПСИХОЛОГИЧЕСКИХ ТРЕНИНГОВ С ПСИХОКОРРЕКЦИОННЫМИ И ПСИХОРЕГУЛЯЦИОННЫМИ ФУНКЦИЯМ У СТАРШИХ ШКОЛЬНИКОВ И ИНДИВИДУАЛЬНЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ДОСТИЖЕНИЯ УЧАСТНИКОВ ТРЕНИНГА

В статье обсуждаются пути оценки эффективности проведения социально-психологического тренинга с психокоррекционными и психорегуляционными функциями среди старших школьников. Также обсуждаются индивидуальные психологические достижения старших школьников, участвовавших в тренинге, которые были зафиксированы благодаря влиянию группы, превратившейся в команду в результате тренинговой работы и способствовали психокоррекции и психокоррекции старших школьников. Выявлены уровни психологических достижений старших школьников в результате тренинга по

формированию команды. Выявлены эмоциональный, поведенческий, когнитивный уровни. Большинство ответов в когнитивной сфере связаны с получением новых знаний о других и повышением интереса к командной работе. Поведенческие компоненты проистекают из когнитивных. Естественно, что в тренинговой группе, состоящей из старшеклассников, каждый участник приобретает новые знакомства, которые, возможно, перерастут в близость и дружбу. Эмоциональные компоненты отражают продолжение вышесказанного, выражаясь в ценности командной работы, способности сопереживать другому человеку. Важным достижением является, в частности, то, что тренинговая группа является стимулом для саморазвития участников. В рамках методики, использованной в подтверждающих научных экспериментах, стандартизированы данные, которые осуществляют эмоциональные, поведенческие, когнитивные процессы. Выявлены связи между соответствующими компонентами результатов тренинга, чтобы выделить, какие компоненты больше всего влияют друг на друга.

***Ключевые слова**: эффективность, оценка, тимбилдинг, функция, процесс, социально-психологический тренинг, когнитивный уровень, эмоциональный уровень, поведенческий уровень**Ключевые слова**:.*

A.Avanesyan

WAYS TO EVALUATE THE EFFECTIVENESS OF PSYCHIATRY AMONG HIGH SCHOOL STUDENTS WITH PSYCHO-REGULATORY FUNCTIONS INDIVIDUAL PSYCHOLOGICAL ACHIEVEMENTS OF THE TRAINING PARTICIPANTS

The article discusses the ways of evaluating the effectiveness of conducting social-psychological training among high school students with psycho-regulatory functions, as well as the individual psychological achievements of the high school students participating in the training, which were recorded due to the influence of the group transformed into a team as a result of the training work, contributed to the mentoring of high school students. The levels of psychological achievements of high school students as a result of team building training were found out. Emotional,behavioral,cognitive levels were distinguished. In the cognitive domain, most of the responses relate to gaining new knowledge about others and increasing interests in team work. Behavioral components derive from cognitive ones.It is natural

that in a training group of hight school students,each participant makes new acquaintanees, which can also friendship. Emotional components reflect the continuation of the above,expressing the value of teamwok, the ability to empathize with others. An important achievement is especially that the training group is a stimulus for self-development for the partivipants. Whith in the framework of the methodologies used in the confirmatory scientific experiments, the data that implement the emotional,behavioral and cognitive processes were standardized.

Correlations between relevant components of training outcomes were identified to reveal which components most influence each other.

Key words: *efficiency, evaluate, teambuilding, a function, a process, social-psychological training, cognitive level, emotional level, behavioral level.*

Ավագ դպրոցականների շրջանում հոգեշտկող և հոգեկարգավորող գործառույթներով թրեյնինգի կիրառման ընթացքում կարևորվում է արդյունավետության գնահատման հարցը: Այն հնարավոր է իրագործել երկու ճանապարհով: Առաջինը գնահատումն է, որն իրականացվել է յուրաքանչյուր պարապմունքից հետո՝ որպես օրվա տպավորությունների, վարժանքների վերաբերյալ մասնակիցների կարծիքների քննարկում, ինչպես նաև պարապմունքից առաջ դրված խնդրի իրագործման մակարդակի գնահատում (նկար 1):



Նկար 1.Գնահատողական հարցերի բովանդակությունը

Այս հարցերի պատասխաններն արտացոլում են յուրաքանչյուր օրվա համար մասնակիցների ինչպես հուզական, այնպես էլ գործելու պատրաստականությունը (նկար 2):

Նկար 2. Գնահատման մակարդակներ

Ավագ դպրոցականներից կազմված 12 հոգանոց թրեյնինգային խմբում մասնակիցներից յուրաքանչյուրը պարապմունքը գնահատել է 0-10 բալով:

Թրեյնինգի արդյունավետության գնահատման երկրորդ ձևը իրագործվել է թրեյնինգի ավարտից հետո: Գնահատման այս փուլի հիմնական հարցն էր, թե ինչքանով է թրեյնինգն արդյունավետ: Այս հարցի պատասխանները թերևս արտացոլել են հարցարանի և մեթոդիկայի վերջնական կիրառման արդյունքները:

Բացի այդ՝ կարևոր է պարզել, թե ինչ է տվել թրեյնինգը խմբի մասնակիցներին նաև առանձին-առանձին՝ յուրաքանչյուրի համար: Թրեյնինգի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի ունեցած նոր ձեռքբերումների բացահայտման համար ողջ թրեյնինգի վերջում նրանցից յուրաքանչյուրին առաջարկվել է ազատ կերպով թերթիկների մեջ նշել, թե ինչ փոփոխություններ են կատարվել նրանց մեջ: Ընդ որում՝ նշումների թվաքանակը չի սահմանափակվում: Յուրաքանչյուր

մասնակից կարող էր նշել մեկից ավելի նոր ձեռքբերումներ: Մասնակիցների պատասխանները խմբավորվել են (գծապատ. 1).



Գծապատկեր 1. Հոգեբանական ձեռքբերումների մակարդակները

Իմացական մակարդակի ներքո դիտարկվել են այնպիսի պատասխանները, ինչպիսիք են՝

- <<իմ մասին նոր բան իմացա>>,
- <<իմացա, որ ուրիշները ևս ունեն խնդիրներ>>,
- <<իմացա, որ թիմային աշխատանքը կարևոր է>> և այլն:

Վարքային մակարդակի ներքո դիտարկվել են այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են՝

- <<ես դարձա առավել շփվող>>,
- <<ծանոթացա նոր մարդկանց հետ>> և այլն:

Հուզական մակարդակի ներքո դիտարկել ենք հետևյալ պատասխանները.

- <<ինձ դուր եկավ թիմով աշխատելը>>,
- <<զգացի, որ պետք է աշխատեմ իմ խնդիրների վրա>>,
- <<սկսել եմ ավելի լավ հասկանալ ուրիշներին>> և այլն:

Թրեյնինգի մասնակիցների հոգեբանական ձեռքբերումների մակարդակներն են (աղ. 1):

Աղյուսակ 1. Հոգեբանական նոր ձեռքբերումների մակարդակները թրեյնինգից հետո

Նոր ձեռքբերումներ	***Մասնակիցների ընտրությունները***
Իմացական տարրեր Ստացա գիտելիքներ իմ մասին	13
Ստացա կարևոր տեղեկություններ շփման մասին	9
Ստացա գիտելիքներ ուրիշների մասին	24
Թիմային աշխատանքի հանդեպ հետաքրքրություն առաջացավ	22
Վարքային տարրեր Նոր ծանոթություններ ունեցա	23

Լուծեցի շփման խնդիրներ	15
Դարձա առավել մատչելի և հասանելի շփման գործընթացում	12
Դարձա առավել թիմային	20
Հուզական տարրեր Ունեցա ուժեղ ապրումներ	0
Ապրեցի շփման նոր փորձ	0
Զգացի թիմային աշխատանքի գործնական արժեքը	23
Ստացա ինքնազարգացման խթան	11
Մեծացավ ինքնաընկալումս	3
Մեծացավ ապրումակցելու և ուրիշներին հասկանալու կարողությունս	24

Անդրադառնալով վերոնշյալ աղյուսակային տվյալներին՝ կարող ենք փաստել, որ իմացական ոլորտում պատասխանների մեծ մասը վերաբերում է ուրիշների մասին նոր գիտելիքներ ստանալուն և թիմային աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների ավելացմանը: Թեև պետք է կարևորել նաև այն պատասխանները, որոնք ցույց են տալիս, որ ընդլայնվել է նաև մասնակիցների ինքնաիմացությունը:

Անկասկած, այս երեք գործոնները կարելի է միմյանց հետ համադրել այն առումով, որ սեփական անձի բացահայտումը տեղի է ունենում նաև ուրիշներին ճանաչելու, ուրիշների մեջ սեփական «ես»-ը տեսնելու և նրանց հետ համեմատելու ընթացքում: Իսկ դա բացահայտում է նաև համագործակցության ընդհանուր եզրեր, ընդհանուր հետաքրքրություններ, դիրքորոշումներ, աշխարհայացք և այս ճանապարհով բացահայտվում է նաև թիմակազմավորման արդյունավետ գործընթացի կազմակերպման ներուժը և հնարավորությունները:

Վարքային բաղադրատարրերը բխում են իմացականից: Բնական է, որ ավագ դպրոցականներից կազմված թրեյնինգային խմբում յուրաքանչյուր մասնակից ձեռք է բերում նոր ծանոթություններ, որոնք հնարավոր է վերափոխվեն նաև մտերմության և ընկերության: Թիմային աշխատանքի կարևորության գիտակցումը և կատարած աշխատանքը, վերագնահատումը հանգեցնում են նաև նմանատիպ աշխատանք կատարելու պատրաստվածության:

Հուզական բաղադրատարրերն արտացոլում են վերոնշյալի շարունակությունը՝ արտահայտվելով թիմային աշխատանքի արժեքորության, դիմացինին ապրումակցելու կարողության մեջ: Կարևոր ձեռքբերում է հատկապես այն, որ թրեյնինգային խումբը մասնակիցների համար ինքնազարգացման խթան է: Սա խոսում է այն մասին, որ մասնակիցը տեսել է սեփական թերացումները, շտկման ենթակա կողմերը, ինչպես նաև սեփական այն հնարավորությունները, որոնք մինչ այդ չէին դրսևորվել. << Անձի ձևավորման, կայուն «ես» կերպարի ստեղծման համար կարևորագույն պայման է ինքնագիտակցության, ինքնագնահատականի և ինքնահարգանքի համապատասխան զարգացումը, իսկ պատանեկան տարիքում դրանց ձևավորման և զարգացման հարցում կարևորագույն նշանակություն ունեն պատանուն շրջապատող անձանց համազոր գնահատականներն ու դրական վերաբերմունքը>> [1, էջ 30]: Վերջին հանգամանքը նաև կարելի է վերլուծել որպես ինքնավստահության բարձրացման հիմք: *Փաստորեն, խումբը ոչ թե ճնշեց մասնակցի «ես»-ը, այլ ընդհակառակը, նրա առջև բացեց ինքնակատարելագործման անհրաժեշտության գիտակցումը:* Սա, ինչպես նաև մյուս ձեռքբերումները, անչափ կարևոր են ավագ դպրոցականի համար, ով արդեն իսկ սկսում է նախանշել իր կենսական ծրագրերը, քանի որ նախ նա տեսնում իր շտկման ենթակա կողմերը, տեսնում է նաև, որ ուրիշները ևս կատարյալ չեն, հետևաբար պետք չէ թերությունները թաքցնել կամ ժխտել, այլ պետք է աշխատել դրանց շտկման ուղղությամբ: Սա անձնային զարգացման կարևոր քայլ է: Բացի այդ՝ թերությունների հետ մեկտեղ բացահայտվում են նաև գործնական հնարավորությունները, որոնք կողմնորոշում են ավագ դպրոցականին իրեն տեսնել այնպիսի ոլորտներում, որտեղ մինչ այդ նա համարում էր, որ ինքը պարզապես տեղ չունի:

Հավաստող գիտափորձերում օգտագործված մեթոդիկաների շրջանակում ստանդարտացվել են այն տվյալները, որոնք իրականացնում են հուզական, վարքային, իմացական գործընթացները: Պարզվել են թրեյնինգի արդյունքների համապատասխան բաղադրիչների միջև կապերը՝ բացահայտելու համար, թե որ բաղադրիչներն են առավելապես ազդում միմյանց վրա:

Կոգնիտիվ, հուզական և վարքային բաղադրիչների միջև համահարաբերակցային կապերը բացահայտելու համար օգտվել ենք Սպիրմենի համահարաբերակցային գործակցից՝ r: Վերլուծությունները կատարվել են Excel-T.Test ծրագրով, որի արդյունքում բացահայտվել է $p < 0.05$ նշանակալիության տիրույթում ուժեղ դրական համահարաբերակցային կապ վարքային և իմացական բաղադրիչների

միջև՝ r = 0,9244: Սա բացատրվում է նրանով, որ թրեյնինգային ծրագրում ընդգրկված վարժանքները՝ դերային խաղեր, մարմնային վարժություններ և այլն, նախևառաջ ուղղված են վարքային դրսևորումների վրա: Մասնակիցը դրանք կատարում է սկզբնական փուլում, որպես <<հանձնարարություն>> թրեյնինգավարի կողմից: Միայն քննարկումների արդյունքում, որն ավարտական փուլերից է, ըմբռնվում է վարքային դրսևորումների կոգնիտիվ կողմը: Այս փաստարկի հետ ուղղակիորեն կապված է այն, որ արձանագրվել է նաև ուժեղ դրական համահարաբերակցային կապ հուզական և իմացական բաղադրիչների միջև՝ r=0,8105: Այն, ինչը հուզականորեն հագեցված է, առավել շատ է հետաքրքրում, լավ է ամրապնդվում հիշողության մեջ, իմաստավորվում և մասնակիցն առավել հակված է այդ երևույթների և գործընթացների իմացությանը:

Համահարաբերակցային կապ է արձանագրվել նաև վարքային և հուզական բաղադրիչներում՝ r =0,9553: Սա բացատրվում է նրանով, որ ոչ միայն հույզերը կարող են առաջացնել համապատասխան վարքային դրսևորումներ, այլև վարքային դրսևորումների միջոցով կարելի է հասնել հուզական վիճակի փոփոխության: Սոցիալ- հոգեբանական թրենինգային ծրագրի սկզբում մասնակիցների հիմնական մասը, օրինակ, դերային վարժանքներին սկզբնապես ընդգրկվում էր նույնիսկ չկամությամբ, բայց ընթացքում նկատվում է ակտիվացում, հետաքրքրության աճ և այլն: Հակառակ պարագայում՝ հուզական բաղադրիչը վարքայինի հետ համեմատելու դեպքում, արձանագրվել է միջին ուժգնությամբ կապ՝ r =0,4775:

ՍՀԹ-ի արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է նրանով, թե դրա ընթացքում ինչքանով են բավարարվում մասնակիցների պահանջմունքները, որոնք էլ պայմանավորում են գործունեությունն ակտիվացնող ներքին գործոնները՝ մոտիվները: Թրեյնինգի ընթացքում արձանագրված ձեռքբերումների երեք ասպեկտներն առնչվում են շփման մոտիվների 3 հիմնական խմբերի հետ առաջացումը: Դրանք են՝ ճանաչողական, գործնական, անձնային [3, էջ 270-271]: Այդ կապը կարող ենք պատկերել հետևյալ կերպ (նկ. 3).



Նկար 3. Թրեյնինգի ձեռքբերումների և շփման մոտիվների կապը

Սոցիալ- հոգեբանական թրեյնինգային ծրագրի մասնակցության ընթացքում ձեռք բերված միջանձնային հարաբերությունների փորձը, ավագ դպրոցականի ձեռք բերած գիտելիքները կօգնեն նրան ադապտացվել կյանքի հաջորդ փուլերում, հասկանալ մարդկանց, ստեղծել նոր միջանձնային կապեր, կառուցել նոր ու առողջ հարաբերություններ առավել մեծ սոցիալական միջավայրում, քան, օրինակ, դասարանն է: Այն ձեռքբերումները, որոնք ունեցավ ավագ դպրոցականը թրեյնինգային աշխատանքի արդյունքում թիմի վերածված խմբի ազդեցության շնորհիվ կնպաստեն ավագ դպրոցականին ապագան առավել ամուր հոգեբանական հիմքերի վրա կառուցելու գործընթացում: Քանի որ ավագ դպրոցականների հոգեկարգավորման և հոգեշտկման աշխատանքներում կարևորվում

են թիմի ունեցած ազդեցությունը, ուստի թիմի անդամների շրջանում թիմային աշխատանքի ժամանակ առաջ եկող հոգեբանական փոփոխություններն էլ կարող են ծառայեցվել ավագ դպրոցականների հոգեշտկմանը, հոգեկարգավորմանը և թիմը տեսնել որպես հոգեշտկող ու հոգեկարգավորող գործոն (նկար 4):



Նկար 4. Թրեյնինգային աշխատանքների կազմակերպման ընթացքի բաղադրիչներ

Գրականություն

1. ԵՐԵԽԱՆԵՐ. ՍՈՑԻԱԼ– ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ (Մեթոդական ձեռնարկ): Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն, Եր., 2012 թ., 120 էջ
2. Կարապետյան Վ., Վարդազարյան Վ., Քանակական մեթոդները հոգեբանության և մանկավարժության մեջ: Ուս. ձեռնարկ: Եր.-Զանգակ-97, 2012-270 էջ
3. Психология мотивации и эмоций/под ред. Ю. Б. Гиппенрей, М. В. Фаликман.-М.:АСТ:Астрель, 2009.-704 с .

Նյութը ներկայացվել է 20.06.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

Արցախի պետական համալսարանի

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

1/2023

Ð³ÝÓÝí³Í¿ï å³·ñáõÃÛ³Ý՝ 11.04.2023 Ã.:
êïáñ³·ñí³Í¿ï å³·ñáõÃÛ³Ý՝ 22.06.2023 Ã.:
Ì³í³ÉÁ՝ 34.7 ï å. Ù³ÙáõÉ: î å³ù³Ý³Ï՝ 100:

Հիմնադիր՝ ²ñó³ËÇ å»ï³Ï³ÝÑ³Ù³Éë³ñ³Ý,
êï»÷³Ý³Ï»ñï, Ø. ¶áßÇ ÷. 5
Ñ»é. (0749) 4-04-91, ý³ùë (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am– Գիտական հրապարակումներ–
Գիտական տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am– Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University,
5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house,
e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am– Scientific publications – Proceedings.